ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԳԱԱ ՇԻՐԱԿԻ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

*ԱՐՄԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ*

# ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՆ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԳԱՎԱՌՈՒՄ (XX Դ. ԱՌԱՋԻՆ ՔՍԱՆԱՄՅԱԿ)

## հոդվածների և նյութերի ժողովածու

Երևան
ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2020

ՀՏԴ 94(479.25)
ԳՄԴ 63.3(5Հ)
Հ 300

Հրատարակության է երաշխավորվել ՀՀ ԳԱԱ Շիրակի
հայագիտական հետազոտությունների կենտրոնի
գիտական խորհրդի 2020թ. մայիսի 5-ի նիստի որոշմամբ

Գիտական խմբագիր՝ պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր,
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս **Ա.Ա. Մելքոնյան**.

Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՄՄՆ գիտության կոմիտեի տրամադրած
ֆինանսավորմամբ՝ **18SH-6A007** ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:

Հայրապետյան Արմեն Սերգոյի
Հ 300 Ժողովրդագրական գործընթացներն Ալեքսանդրապոլի գավառում (**XX** դ. առաջին քսանամյակ): Հոդվածների և նյութերի ժողովածու/ Ա. Հայրապետյան; ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կոնտրոն.- Եր.: «Գիտություն» հրատ., 2020.- 244 էջ:

Ներկայացվող ժողովածուն Ալեքսանդրապոլի գավառի պատմությանը, ժողովրդագրությանը և այլ հիմնահարցերի վերաբերող գիտական հոդվածների և նորահայտ փաստաթղթերի հավաքածու է, որում տեղ են գտել պ.գ.թ., դոցենտ Ա.Ս. Հայրապետյանի կողմից ՀՀ և արտերկրի տարբեր տարիների գիտական հանդեսներում հայերեն և անգլերեն լեզուներով հրատարակած 11 հոդվածներ և արխիվային 43 վավերագրեր:

Ժողովածուն նախատեսված է բուհերի մասնագիտական բաժինների ուսանողների, մասնագետ-պատմաբանների և ընթերցող լայն հասարակության համար:

ՀՏԴ 94(479.25)
ԳՄԴ 63.3(5Հ)

ISBN 978-5-8080-1417-6
© Հայրապետյան Ա.Ս., 2020
© ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2020

## *ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ*

Սիրելի ընթերցող՝

Ժամանակակից հայ պատմագրությունը զգալի հետաքրքրություն է հանդես բերում էթնոժողովրդագրության նկատմամբ՝ պայմանավորված այն ժողովրդագրական ակտիվ գործընթացներով, որոնք ներկայումս տեղի են ունենում տարածաշրջանում: Ալեքսանդրապոլի գավառի XIXդ. երկրորդ կեսի էթնոժողովրդագրական իրավիճակի, բնակավայրերի և ազգաբնակչության տեղաբաշխման, հասարակական-քաղաքական ու սոցիալ-տնտեսական կյանքի հիմնահարցերի ուսումնասիրությունը մեր կողմից հիմնականում ավարտվել է. 2005 թ. հրատարակել ենք ***«Արևելյան Շիրակը XIXդ. առաջին կեսին (պատմաժողովրդագրական ուսումնասիրություն)»*** աշխատությունը (206 էջ), իսկ 2011 թ.՝ ***«Ալեքսանդրապոլի գավառը վիճակագրական նյութերում (XIX դ.-XX դ. սկիզբ)»***, փաստաթղթերի և նյութերի ժողովածուն (271 էջ):

Կատարված աշխատանքը հնարավոր է դարձնում ձեռք բերված արդյունքների հիման վրա առաջիկայում ծավալել ավելի լայն և ամբողջական ուսումնասիրություն, որն իրենից կներկայացնի գավառի 1840-1920թթ. Հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական ու մշակութային կյանքի, ինչպես նաև էթնոժողովրդագրական իրավիճակի գիտական համակողմանի վերլուծություն: Ձեր դատին ներկայացվող ժողովածուն այս առումով կարելի է համարել մեր հերթական քայլը: Ժամանակագրական առումով այն ընդգրկում է հայ ազգաբնակչության լուրջ տեղաշարժերով և էթնոժողովրդագրական բուռն գործընթացներով աչքի ընկնող մի կարևորագույն պատմական ժամանակահատված՝ XX դարի առաջին երկու տասնամյակները, գործընթացներ, որոնց հիմքում ընկած են տնտեսական և հատկապես քաղաքական մի շարք շարժառիթներ:

Ժողովածուի նպատակն է ի մի բերել Ռուսական տիրապետության վերջին շրջանի գավառի պատմությանը վերաբերող պատմագիտական և ժողովրդագրական փաստերն ու տեղեկությունները՝ համակարգելու և ուրվագծելու համար գավառի տվյալ ժամանակաշրջանի սոցիալ-քաղաքական, ինչպես նաև էթնոժողովրդագրական հնարավորին չափ ամբողջական պատկերը: Այն նվիրված է Ալեքսանդրապոլի գավառի բնակավայրերի ու ազգաբնակչության տեղաբաշխման, Ռուսական կայսրության կողմից վարվող ժողովրդագրական քաղաքականության, էթնիկ տեղաշարժերի, դրանց պատճառների և դրսևորման առանձնահատկությունների ըստ ամենայնի պարզաբանմանը:

Ժողովածուի մեջ մեծ տեղ ենք հատկացրել նաև 1918 և 1920 թթ. Թուրքա-

կան զինագրավումների ժամանակաշրջանում Ալեքսանդրապոլի գավառում իրականացված ցեղասպանական քաղաքականության ուսումնասիրությանը: Թուրքական զորքերի կողմից 1918 թ. մայիսին և 1920 թ. նոյեմբերին Ալեքսանդրապոլի գավառի գրավումը, տեղի ազգաբնակչության հանդեպ ցեղասպանության իրագործումը դիմախեղեց այժմյան Շիրակի և Լոռու մարզերի ազգաբնակչության էթնիկ պատկերը: Ալեքսանդրապոլի գավառին, ինչու չէ, նաև Հայաստանի առաջին և խորհրդային հանրապետությունների տնտեսությանը հասցվեցին ահռելի նյութական վնասներ, որոնք առայսօր կարոտ են լրջագույն քննության:

Ժողովածուն բաղկացած է երկու մասից: Առաջինում ներառել ենք մեր կողմից տարբեր տարիների ՀՀ և արտերկրի գիտական հանդեսներում հայերեն և անգլերեն լեզուներով հրատարակած 11 հոդվածներ, որոնցում հաջորդաբար քննվում են Ալեքսանդրապոլի գավառին առնչվող մի շարք հիմնախնդիրներ՝ սկսած գավառի ռուսականացման ցարական ծրագրերից ու դարասկզբին մոլեգնած տարափոխիկ հիվանդությունների պատմությունից մինչև 1918-1920թթ. հայտնի դեպքերը:

Ժողովածուի երկրորդ մասը արխիվային 43 նորահայտ փաստաթղթերի հավաքածու է և իրենից ներկայացնում է Առաջին աշխարհամարտի տարիներին սկսված արևմտահայերի գաղթերի, ըստ բնակության նոր վայրերի գաղթականների տեղաբաշխման, գավառի բնակչության էթնոկոնֆեսիոնալ պատկերի վրա գաղթերի թողած ազդեցության, ինչպես նաև 1918-1920թթ. նախ երիտթուրքական, ապա նաև քեմալական իշխանությունների կողմից արդեն արևելահայության հանդեպ իրագործված ցեղասպանական քաղաքականության մանրակրկիտ ուսումնասիրություն:

*պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ*
*Արմեն Սերգոյի Հայրապետյան*

# ՀՈԴՎԱԾՆԵՐ

# ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՏԵՂԱՇԱՐԺԻ ՀԱՐՑԸ XIXԴ. ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻ ԵՎ XXԴ. ՍԿԶԲԻ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՑԱՐԻԶՄԻ ՎԱՐԱԾ ԳԱՂՈՒԹԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

## (Ալեքսանդրապոլի գավառի օրինակով)

Պատմագիտական գրականության մեջ XIXդ. և XXդ. սկզբի արևմտահայության պարբերաբար կրկնվող վերաբնակեցումների, ըստ բնակության նոր վայրերի նորեկների տեղաբաշխման, Արևելյան Հայաստանի բնակչության էթնոկրոնական պատկերի վրա դրանց թողած ազդեցության, ինչպես նաև այս հարցում ռուսական իշխանությունների ունեցած դերակատարության խիստ կարևոր հարցերն առայսօր լուրջ ուսումնասիրության ենթարկված չեն: Մինչդեռ արևմտահայության այդ տեղաշարժերը ոչ միայն վերականգնեցին Հայաստանի արևելյան հատվածի բնակչության ժողովրդագրական նախկին հայեցի պատկերը, այլև իրենց կազմակերպման ու իրականացման լուրջ թերություններով հանդերձ, օբյեկտիվորեն նպաստեցին տարածաշրջանի բնակչության մեջ հայ տարրի զգալի ավելացմանը, ազգային կազմի քանակական աճին ու որակական փոփոխմանը:

Առայսօր համեմատաբար լրջորեն ուսումնասիրվել է միայն XIXդ. առաջին կեսի ընթացքում տեղի ունեցած արևմտահայության վերաբնակեցման հարցը. մինչխորհրդային շրջանում այդ խնդրին անդրադարձել են Գ.Աղանյանցը, Ալ.Երիցյանը, Ե.Գեղամյանցը, Եփրեմ Սեթը, Ս.Գլինկան, Ն.Ֆլորովսկին, Վ. Պոտտոն, Կ. Բորոզդինը, Ա. Գրիբոյեդովը[1], խորհրդային և արդի շրջաններում՝ Մ.Դարբինյանը, Ե. Մանուկյանը, Ա. Մելքոնյանը, Հ. Մուրադյանը, Հ. Ամիրջանյանը և այլք[2]: Վերջին տարիներին խնդրո առարկայի վերաբերյալ առանձին հոդվածնե-

---

[1] **Աղանեանց Գ.,** Կարնո գաղթը (1829-1830), Թիֆլիս, 1891: **Երիցեան Ալ.,** Ամենայն հայոց կաթողիկոսութիւնը և Կովկասի Հայք XIX դարում, հ. Ա, Թիֆլիս, 1894: **Գեղամյանց Ե.,** Պատմական քաղվածքներ, պրակ 3, մաս 1, Բաքու, 1909; **Կարապետյան Կ.,** Եփրեմ Սեթը արևմտահայության 1829-1830թթ. գաղթի մասին,//Պատմա-բանասիրական հանդես (այսուհետև՝ ՊԲՀ), Եր, 1974, N 2: **Глинка С.,** Описание переселения армян аддербиджанских в пределах России, М., 1831; Обозрение российских владений за Кавказом, в статистическом, этнографическом и финансовом отношениях, ч. 2, СПб., 1836; **Потто В.,** Кавказская война в отдельных очерках, эпизодах и биографиях, т. 3, выпуск 4, СПб., 1887; **Бороздин К.,** Переселенцы в Закавказье, СПб., 1891; **Грибоедов А.,** Полное собрание сочинений, т. 3, СПб., 1917.

[2] **Դարբինյան Մ.,** Արևմտահայերի 1829-1830թթ. գաղթը Հայկական մարզ և հարակից շրջաններ, ՊԲՀ, Եր., 1975, N 4: **Նույնի,** Էջեր Ախալցխայի և Ախալքալաքի հայերի 1829-1830 թթ. գաղթի պատմությունից,//Բանբեր Երևանի համալսարանի (այսուհետև՝ ԲԵՀ), Եր, 1973, N 2: **Նույնի,** Նոր վավերագրեր պարսկահայերի և արևմտահայերի 1828-1830թթ. գաղթի վերաբերյալ, Բանբեր Հայաստանի արխիվների (այսուհետև՝ ԲՀԱ), Եր., 1973, N 2: **Նույնի,** Новые документы о переселении персидских и западных армян в 1828-1830 гг.,//ԲՀԱ, Եր.,1977, N 3: **Մանուկյան Ե.,** Հայ

րով հանդես ենք եկել նաև մենք՝ հանգելով հետևյալ եզրակացության.[1] ոչ լրիվ հինգ տասնամյակների ընթացքում Արևմտյան Հայաստանի տարբեր փաշայություններից երեք փուլերով տեղափոխվեցին և այժմյան Շիրակի և Լոռու մարզերի տարածքում հաստատվեցին արևմտահայերի ավելի քան 8700 ընտանիքներ:

Առաջին փուլում, որն ընդգրկեց XIXդ. առաջին քառորդը, ռուս-թուրքական սահմանն անցան ու Փամբակ-Շորագյալի ուղեմասում հաստատվեցին ավելի քան 3500 ընտանիքներ, ինչը հնարավորություն տվեց անընդմեջ շարունակվող պատերազմների, ավերածության, սովի ու արտագաղթի պայմաններում հետ պահել ուղեմասը վերջնական ամայացումից:

Երկրորդ փուլը կյանքի կոչվեց 1829 թ. սեպտեմբերի 2-ի Ադրիանապոլսի ռուս-թուրքական պայմանագրով և շարունակվեց մինչև 1830-ական թվականների վերջերը: Մոտ մեկ տասնամյակի ընթացքում Փամբակ-Շորագյալի ուղեմասում վերաբնակվեցին շուրջ 5000 ընտանիքներ: Ի տարբերություն նախորդի՝ զանգվածային այս տեղաշարժը հիմնովին վերականգնեց ուղեմասի բնակչության ժողովրդագրական պատկերը՝ նպաստելով Արևելյան Հայաստանի հյուսիսային այդ հատվածում հայահավաքման գործընթացին: 1842 թ. «Կամերալ ցուցակագրման վերստուգում» ձեռագրերի հաղորդած վիճակագրական տվյալների համաձայն՝ XIX դ. 30-ական թվականների վերջին ուղեմասն ուներ արդեն էթնոկրոնական հետևյալ պատկերը. բնակչության ընդհանուր թիվը 6353 ընտանիք էր, որի 95%-ը հայեր էին:

Երրորդ՝ վերջին փուլն ընթացավ 1840-ական թվականներին, և Ալեքսանդրապոլի գավառ բերեց միայն 218 արևմտահայ ընտանիք (Նույն ժամանակահատվածում բնական վերարտադրության և Ռուսաստանի ներքին նահանգներից սլավոնական տարրի վերաբնակեցման շնորհիվ բնակչության թիվը 1454-ով

---

ժողովրդի ազգահավաքման գործընթացն Արևելյան Հայաստանում XIX դարի 20-ական թվականների վերջերին-30-ական թվականների սկզբներին,/Ատեն, պատմ գիտ. թեկն., Եր, 1991: **Մեքոնյան Ա.,** Էրզրում, Էրզրումի նահանգի հայ ազգաբնակչությունը 19-րդ դարի առաջին երեսնամյակին (պատմաժողովրդագրական ուսումնասիրություն), Եր, 1994: **Նույնի,** Ջավախքը XIX դարում և XX դարի առաջին քառորդին, Եր., 2003: **Մուրադյան Հ.,** Կարսի նահանգի վարչաժողովրդագրական նկարագիրը 19-րդ դարի առաջին երեսնամյակին, Եր., 2006: **Ամիրջանյան Հ.,** Լոռին XVIII դարի վերջին և XIX դարի առաջին երեսնամյակին, Եր., 2010:

[1] **Հայրապետյան Ա.,** Արևմտահայ գաղթականության տեղաբաշխումը Շորագյալի գավառում /Արևելյան Շիրակ/ 1829-1831թթ,//ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 5, Գյումրի, 2002, էջ 153-168: **Նույնի,** Ժողովրդագրական գործընթացներն Արևելյան Շիրակում XIXդ. առաջին քառորդին,//Հայոց գրերի գյուտի 1600-ամյակին նվիրված հանրապետական գիտական նստաշրջանի նյութեր, Գյումրի, 2005, էջ 75-82: **Նույնի,** Արևմտահայ գաղթականության տեղաբաշխումը Փամբակի գավառում 1829-1831թթ.,//ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 13, Գյումրի, 2010, էջ 125-134:

աճեց՝ հասնելով 7807 ընտանիքի), ուստի և նախորդների համեմատ ունեցած իր համեստ ծավալների պատճառով գավառի էթնոկրոնական պատկերի վրա այլևս էական ազդեցություն ունենալ չկարողացավ[1]: Սակայն, արևմտահայության ներհոսքը Ռուսահայաստան այսքանով ոչ միայն չավարտվեց, այլև շարունակվեց հաջորդ տարիների ընթացքում և իր գագաթնակետին հասավ Առաջին աշխարհամարտի տարիներին:

Դեռևս XIX դ. 40-ական թվականներին Երուսաղեմի սրբավայրերի համար եվրոպական տերությունների միջև սկսված սուր վեճը, որ, «Արևելյան հարց» անվանումը ստանալով, վերածվեց Օսմանյան Թուրքիայից զանազան զիջումներ կորզելու նպատակ հետապնդող միջազգային պայքարի, 1853թ. աշնանը հանգեցրեց ռուս-թուրքական նոր պատերազմի[2]:

Առաջին ընդհարումը Կովկասյան ռազմաճակատում տեղի ունեցավ արդեն նոյեմբերի 2-ին, երբ գեներալ Օրբելիանիի 7000-ոց զորաջոկատը Բայանդուր գյուղի մոտ պարտության մատնեց Ալեքսանդրապոլի ուղղությամբ շարժվող թուրքական 40000-ոց բանակին: Այնուհետև ռուսական բանակը հայազգի տաղանդավոր գեներալ Վ.Բեհբութովի գլխավորությամբ նոյեմբերի 19-ին թուրքերին պարտության մատնեց Բաշքադըկլարի, իսկ 1854թ. հուլիսի 17-ին նաև Կարսից ոչ հեռու՝ Քյուրուկդարայի ճակատամարտերում: Պատերազմի եզրափակիչ շրջափուլի ամենանշանավոր իրադարձությունն այս ռազմաճակատում եղավ 1855թ. նոյեմբերի 12-ին ռուսական զորքերի կողմից Կարսի գրավումը:

Հայ ժողովուրդը, ոգեշնչված ռուսական բանակում մեծ թվով հայազգի բարձրաստիճան զինվորականների ներկայությամբ (գեներալ-համհարզ իշխան Մ.Արղության-Երկայնաբազուկ, գեներալ-համհարզ Ի.Դ. Լազարև, գեներալ-մայոր Հ.Ս. Վարշամով, հեծելազորի գեներալ Մ.Տ. Լորիս-Մելիքով, գեներալ-մայոր Ա.Պ. Մադաթով և ուրիշներ) և ռուսական զենքի օգնությամբ թուրքական տիրապետությունից ազատության հասնելու երազանքի իրականացման հեռանկարով՝ իր գործուն աջակցությունը ցուցաբերեց ռուսական զորքերին՝ զինվորագրվելով ու պարեն մատակարարելով, հետախուզական աշխատանքներ

---

[1] Մանրամասն տե՛ս **Հայրապետյան Ա.,** Ալեքսանդրապոլի գավառը XIXդ. առաջին կեսի Արևմտյան Հայաստանի ժողովրդագրական գործընթացների համատեքստում,//ՊԲՀ, հ. 2, Եր., 2011, էջ 192-199:

[2] 1853 թ. հոկտեմբերի 4-ին սկսված Ղրիմի կամ Արևելյան ռուս-թուրքական պատերազմի և մասնավորապես՝ Կովկասյան ռազմաճակատում ընթացած ռազմական գործողությունների մասին մանրամասն տե՛ս **Тарле Е.,** Крымская война, т. 1-2, М., 1942; Восточная война 1853-1856 годов, сочинение генерал-лейтенанта **М.И. Богдановича**, т. 1-4, СПб., 1876; **Лихутин М.,** Русские в Азиятской Турции в 1854 и 1855 годах, Из записок о военных действиях Эриванского отряда, СПб., 1863.

իրականացնելով ու հանգանակություններ կատարելով[1]:

1856թ. մարտի 30-ին Փարիզում կնքված հաշտության պայմանագրով պատերազմն ավարտվեց: Եվրոպական միջամտության արդյունքում կորցնելով Սև ծովում ռազմական նավատորմ ունենալու իրավունքը և ճանաչելով Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականությունը՝ Ռուսաստանը պարտավորվեց Ղրիմում կորցրած իր տիրույթները հետ ստանալու դիմաց Թուրքիային վերադարձնել Կարսը և Արևմտյան Հայաստանում գրավված մյուս հողերը: Ավելին, ճանաչելով եվրոպական տերությունների կոլեկտիվ հովանավորությունը թուրքահպատակ քրիստոնյաների հանդեպ, նա բավարարվեց միայն բարենորոգումներ անցկացնելու և ռազմական գործողությունների ընթացքում ռուսական զորքերին օգնած քրիստոնյաներին չհալածելու թուրքական կողմի սին խոստումներով: Ցարական դիվանագիտությունը չփորձեց կամ ավելի ճիշտ կլիներ ասել չցանկացավ փաստաթղթի մեջ մտցնել հոդված, որը կթույլատրեր 1829թ. սեպտեմբերի 2-ի Ադրիանապոլսի պայմանագրի օրինակով սահմանափակ ժամկետում երկուստեք քաղաքացիներին և մասնավորապես արևմտահայությանը, որ նպաստել էր ռուսական զենքի հաջողությանն ու այժմ հայտնվել թուրքական վերեժինդրության վտանգի առջև, իրենց ընտանիքներով ու շարժական գույքով մի կողմից մյուսն անցնել[2]: Դրա համար իշխանություններն ունեին օբյեկտիվ պատճառներ. Տարածաշրջանում իր տիրապետությունն ամրապնդելու համար ցարիզմը մի քանի հետաձգումներից հետո՝ XIX դ. 40-ական թվականների սկզբներից, կյանքի էր կոչել Արևելյան Հայաստանը ռուս էթնիկ տարրով վերաբնակեցնելու վաղօրոք մշակած ծրագիրը[3], որն իրագործելու համար Սևանա լճի ավազանում, Լոռվա դաշտում, Ալեքսանդրապոլի գավառում ու այլուր հայկական գյուղական համայնքներից նույնիսկ առանձնացրել էր ընդարձակ հողակտորներ՝ վերաբնակների համար ստեղծելով «հատուկ ֆոնդ»: Սակայն, գործադրած բոլոր ջանքերը զուր անցան, և կառավարության սպասելիքներն Արևելյան Հայաստանի գաղութացման ծրագրի գոնե այս փուլում տապալվեցին: Զախողվեց նաև մեր ուսումնասիրության առարկա Ալեքսանդրա-

---

[1] Կովկասյան ռազմաճակատում հայերի մասնակցության մասին մանրամասն տե՛ս **Պողոսյան Ա.Մ.,** Ղրիմի պատերազմի Կովկասյան ռազմաճակատը և հայերի մասնակցությունը, Եր., 1958:

[2] **Розен Д.,** История Турции от победы реформы в 1826 году до Парижского трактата в 1856 году, ч. 1, 0т истребления янычар до смерти Махмеда II, СПб., 1872, стр. 118-120. հմմտ. Сборник договоров России с другими государствами, 1852-1917, М., 1952, стр 44-46.

[3] Ռուս աղանդավորներով Անդրկովկասյան երկրամասը վերաբնակեցնելու ցարական կառավարության վերոհիշյալ քաղաքականության մասին մանրամասն տե՛ս **Հայթյան Ա.,** Հայաստանի ռուս վերաբնակները 1830-1920թթ., Եր., 1989: **Հայրապետյան Ա.,** Ռուս վերաբնակները Ալեքսանդրապոլի գավառում,//ՇՊՄԺ միջազգային գիտական նստաշրջանի նյութեր, Գյումրի, 2010, էջ 86-97:

պոլի գավառի ռուսականացման ծրագիրը (1842-1852 թթ. ընկած ժամանակահատվածում գավառում հաստատվեց ընդամենը 383 ընտանիք)[1], բայց և արևմտահայության մեծամասշտաբ վերաբնակեցում ևս չթույլատրվեց: Թե իշխանությունների մեծապետական այս քաղաքականության արդյունքում որքան արևմտահայերի հաջողվեց 1850-ական թվականներին անցնել ռուս-թուրքական սահմանն ու հաստատվել Արևելյան Հայաստանի ռուսահպատակ հատվածում, արխիվային նյութի սակավության պատճառով ստույգ նշելն անհնարին է: Եվ հետո մեր խնդիրն է պարզել միայն Ալեքսանդրապոլի գավառում հաստատվածների թիվը: Հայաստանի ազգային արխիվում այս ուղղությամբ մեր ուսումնասիրությունները տվեցին հետևյալ արդյունքները. ոչ լրիվ մեկ տասնամյակի ընթացքում, ռուսական իշխանությունների արգելքների ու հարուցած խոչընդոտների պատճառով Արևմտյան Հայաստանի տարբեր փաշայություններից Ալեքսանդրապոլի գավառ տեղափոխվեց ընդամենը 248 ընտանիք (1569 մարդ), որից 205 ընտանիքը գավառի տարածքում հաստատվեց հենց 1853-1856թթ. Պատերազմի տարիներին՝ ռազմական գործողությունների հիմնական թատերաբեմ հանդիսացող Կարսի փաշայության գյուղերից: Նորեկներից 116 ընտանիքը (697 մարդ) հաստատվեց Ալեքսանդրապոլ քաղաքում[2], իսկ 132- ը՝ (872 մարդ) գավառի 48 գյուղերում[3]:

**1852-1860թթ. ընթացքում Թուրքիայից Ալեքսանդրապոլի գավառ վերաբնակվածներն ըստ տարեթվերի**

| տարեթիվը | ընտանիք | Արական | իգական | ընդամենը | % |
|---|---|---|---|---|---|
| 1852թ. | 2 | 7 | 3 | 10 | 0.8 |
| 1853թ. | 42 | 144 | 117 | 261 | 17 |
| 1854թ. | 60 | 191 | 173 | 364 | 24.2 |
| 1855թ. | 52 | 182 | 151 | 333 | 21 |
| 1856թ. | 51 | 204 | 170 | 374 | 20.6 |
| 1857թ. | 25 | 84 | 65 | 149 | 10 |
| 1858թ. | 10 | 26 | 18 | 44 | 4 |
| 1859թ. | 6 | 16 | 18 | 34 | 2.4 |
| **ԸՆԴԱՄԵՆԸ** | **248** | **854** | **715** | **1569** | **100** |

Հիմնականում Կարսի փաշայության գյուղերից դեպի Ալեքսանդրապոլի գավառ փոքր խմբերով արևմտահայության ներհոսքը շարունակվեց նաև հաջորդ տասնամյակի ընթացքում: Համաձայն 1873թ. անցկացված կամերալ ցու-

[1] ՀԱԱ, ֆոնդ 93, ցուցակ 1, գործ 109, 110:
[2] ՀԱԱ, ֆոնդ 93, ցուցակ 1, գործ 120, թթ. 1-520:
[3] Նույն տեղում, գործ 123, 124, 125:

ցակագրման ձեռագիր մատյանների հաղորդած վիճակագրական տվյալների՝ 1862-1873թթ. ընթացքում այդպիսիք գավառում կազմեցին 184 ընտանիք (958 մարդ), որից 108 ընտանիքը (500 մարդ)՝ գավառակենտրոն Ալեքսանդրապոլում, իսկ 76-ը (458 մարդ)՝ գավառի 30 գյուղերում[1]:

**1862-1873թթ. ընթացքում Թուրքիայից Ալեքսանդրապոլի գավառ վերաբնակվածներն ըստ տարեթվերի**

| տարեթիվը | ընտանիք | Արական | իգական | ընդամենը | % |
|---|---|---|---|---|---|
| 1862թ. | 5 | 7 | 10 | 17 | 2.7 |
| 1863թ. | 12 | 37 | 28 | 65 | 6.5 |
| 1864թ. | 11 | 25 | 30 | 55 | 6 |
| 1865թ. | 10 | 27 | 23 | 50 | 5.5 |
| 1866թ. | 9 | 22 | 27 | 49 | 4.9 |
| 1867թ. | 9 | 23 | 21 | 44 | 4.8 |
| 1868թ. | 24 | 53 | 44 | 97 | 13 |
| 1869թ. | 54 | 159 | 136 | 295 | 29.4 |
| 1870թ. | 17 | 49 | 38 | 87 | 9.2 |
| 1871թ. | 22 | 78 | 62 | 140 | 12 |
| 1872թ. | 8 | 12 | 10 | 22 | 1.6 |
| 1873թ. | 3 | 12 | 10 | 22 | 1.6 |
| **ԸՆԴԱՄԵՆԸ** | **184** | **512** | **446** | **958** | **100** |

1877թ. ապրիլի 12-ին՝ միջազգային լարված իրադրության պայմաններում, սկսվեց ռուս-թուրքական նոր պատերազմ, որում Ռուսական կայսրությունը նպատակ ուներ վերականգնել Եվրոպայում և Բալկաններում Ղրիմի պատերազմից հետո կորցրած իր հեղինակությունն ու ազդեցությունը: Պատերազմը սկսվեց երկու՝ Բալկանյան (գլխավոր) և Կովկասյան ռազմաճակատներում միաժամանակ: Չնայած ունեցած երկրորդական բնույթին՝ Կովկասյան ռազմաճակատում ռուսական զորքերի մղած հաղթական կռիվները մեծ դեր ունեցան պատերազմը հաղթանակով ավարտելու գործում[2]: Արդեն ապրիլի 30-ին ռուսական բանակի ձախ թևը գեներալ-լեյտենանտ Ա. Տեր-Ղուկասովի գլխավորությամբ գրավեց Բայազետը,այնուհետև Դիադինը, Ալաշկերտը, հունիսի 16-ին թուրքերին հաղթեց Դրամդաղի լեռներում, իսկ հինգ օր անց՝ նաև Դահարի ճակատամարտում: Նույն ժամանակահատվածում կենտրոնից և աջ թևից հարձակման անցած ռուսական զորքերը կորպուսի հարամանատար, հեծելազորի գեներալ Մ. Լոռիս-Մելիքովի ղեկավարությամբ մայիսի 5-ին գրավեցին Ար-

[1] Նույն տեղում, գործ 183, 184, 185, 186, 187:

[2] Կովկասյան ռազմաճակատում ընթացող ռազմական գործողությունների մասին մանրամասն տե՛ս Русско-турецкая война 1877-1878гг. на Кавказе и в Малой Азии, составил генерал-майор **Колубякин Б.,** ч. 1, СПб., 1906.

դահանի բերդը, իսկ հոկտեմբերի 15-ին Ալաջայի (Արջո Առիճ) բարձունքներում ջախջախեցին Մուխթար փաշայի թուրքական բանակը: Վերջապես նոյեմբերի 18-ին՝ գեներալ-լեյտենանտ Հ. Լազարևի գլխավորությամբ համառ ու արյունահեղ մարտերից հետո ռուսական զորքերը գրավեցին Կարսը:

1877-1878թթ. ռուս-թուրքական պատերազմը նորից ոգևորություն և հույսեր առաջացրեց հայության երկու հատվածներում: Հայ ժողովուրդն իր ուժերի ներածի չափով օգնություն ցույց տվեց ռուսական բանակին և որոշակի մասնակցություն ունեցավ ռազմական գործողություններին: Միայն Կովկասյան ճակատում ռազմական գործողություններին մասնակցեցին 7 հայ գեներալներ և շուրջ 500 սպաներ: Կանոնավոր զորքերի կողքին թուրքերի դեմ կռվեցին նաև արևելահայերից կազմված կամավորական ջոկատները: Երևանի նահանգում այդպիսիք ձևավորվեցին Զանգեզուրում, Էջմիածնում, Երևանում, Լոռի-Փամբակում և այլուր: Ռազմական գործողությունների ընթացքում իր քաջությամբ հատկապես աչքի ընկավ Ալեքսանդրապոլի հեծյալ «իռեգուլյար» (ոչ կանոնավոր) գունդը[1]: Ի դեպ, ալեքսանդրապոլցիները ռուսական զորքերին մեծապես օգնեցին նաև շինարարական աշխատանքներով: Օրինակ՝ երբ պատերազմի առաջին օրերին անհրաժեշտ էր Ախուրյանի վրա կամուրջ կառուցել դեպի Կարս շարժվելու համար, ալեքսանդրապոլցիներն այն ոչ միայն կարճ ժամանակահատվածում կառուցեցին, այլև փորձարկեցին[2]:

Կարսի անկումից հետո թուրքական հրամանատարությունն այլևս լուրջ դիմադրություն ցույց չտվեց, իսկ փետրվարի 19-ին Սան-Ստեֆանոյում կնքված ռուս-թուրքական խաղաղության պայմանագրով ի թիվս այլոց հօգուտ Ռուսաստանի հրաժարվեց Կարսի, Կաղզվանի, Օլթիի, Արդահանի, Ալաշկերտի, Բայազետի և Բաթումի շրջաններից:

Հայ պատմագրությունն առանձին ուսումնասիրություններով բազմիցս անդրադարձել է Սան-Ստեֆանոյի պայմանագրին և Հայկական հարցի միջազգայնացմանը[3]: Մինչդեռ պայմանագրի XXI և XXVII հոդվածները, որ չափազանց կարևոր նշանակություն ունեն Արևելյան Հայաստանում ցարիզմի հետապնդած

---

[1] **Ներսիսյան Ա.Մ.,** Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ, Եր., 2002, էջ 143-144:

[2] Այս և նմանատիպ այլ դրվագների մասին մանրամասն տե՛ս Отчет о военно-инженерной деятельности в Восточную войну 1877 года, в районе действий и расположения кавказской армии, печатано по распоряжению испр. должн. Начальника Инженеров Кавказской армии, выпуск 2, Тифлис, 1878, стр. 65-98.

[3] **Բաղալյան Խ.,** Հայկական հարցը Սան-Ստեֆանոյի պայմանագրում և Բեռլինի կոնգրեսում 1878թ., Եր, 1955: **Կիրակոսյան Զ.,** Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը (XIXդ. 70-ական թթ.), Եր., 1978: **Սերոբեան Մ.,** Հայկական հարցը և անոր փուլերը, Պեյրութ, 1937:

գաղութային քաղաքականության ուսումնասիրության տեսանկյունից, մեր կարծիքով, առ այսօր լուրջ քննության չեն ենթարկվել: Դրանցից առաջինով Ռուսաստանին անցած վայրերի բնակիչներին եռամյա ժամկետում թույլատրվում էր հեռանալ Թուրքիա, իսկ երկրորդը հնարավորություն էր տալիս միայն խիստ սահմանափակ թվով թուրքահպատակների, որ պատերազմի ժամանակ կապեր էին ունեցել ռուսական բանակի հետ, հեռանալ նրանց հետևից[1]: Այսինքն՝ ցարական իշխանությունները, հիմք ընդունելով Սան-Ստեֆանոյի պայմանագրով Արևմտյան Հայաստանում ռուսական զորքերի հսկողության ներքո անհապաղ բարեփոխումներ անցկացնելու մասին հոդվածները (XVI և XXV-Ա.Հ.), ոչ միայն պաշտոնապես հրաժարվում էին քրիստոնյաների և մասնավորապես արևմտահայության՝ անհրաժեշտությունից դրդված վերաբնակեցում կազմակերպելուց, այլև հնարավոր բոլոր միջոցներով փորձում էին նաև մաքրել նորանվաճ տարածքները մահմեդական տարրից: Ցարական դիվանագիտության նմանօրինակ գործելակերպն ուներ իր բացատրությունը: Բանն այն է, որ 1877-1878թթ. ռուս-թուրքական պատերազմի հաղթական ավարտից անմիջապես հետո իշխանությունները կյանքի կոչեցին Արևելյան Հայաստանի ռուսականացման երրորդ՝ լրամշակված ծրագիրը՝ որոշելով նորանվաճ Կարսի մարզը բնակեցնել բացառապես ռուսներով[2]: Ուստի և արևմտահայությունը, որ պատերազմական գործողությունների ընթացքում նպաստել էր ռուսական զենքի հաջողությանը,ցարիզմի մոտավոր նպատակների համար այլևս անպետք էր: Կովկասյան բանակի հրամանատար իշխան Սվյատոպոլկ-Միրսկին 1879թ. փետրվարի 4-ի իր «ամենահպատակ զեկուցագրում» այդ մասին ուղղակի գրում էր. «... մեր գլխավոր նպատակը պետք է լինի հնարավորին չափ մեծ թվով ռուսներ բնակեցնել Կարսի մարզում:. Այժմ արդեն չի կարելի չցավել, որ 1829թ. Ախալքալաքի և Ալեքսանդրապոլի գավառների հարուստ վայրերը ռուսների փոխարեն հայերով ու հույներով բնակեցվեցին: Այդպիսի սխալի կրկնությունը, համարձակվում եմ ասել, աններելի կլինի»[3]: Չգիտես ինչու իշխանություններին թվում էր, թե Կովկասը կյանք կստանա միայն ռուսներով բնակեցվելու դեպքում[4]: Թե ինչքանով էր ցարիզմը համոզված այս սին գաղափարի իրավացիու-

---

[1] Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), խմբ. **Ջ. Կիրակոսյան,** Եր., 1972, էջ 95, 97:

[2] ՀԱԱ, ֆոնդ 269, ցուցակ 1, գործ 2326, թթ. 14-15:

[3] ՀԱԱ, ֆոնդ 14, ցուցակ 1, գործ 506, թթ. 75-78: Նույնաբովանդակ մեկ այլ զեկուցագիր 1883թ. Դեկտեմբերի 16-ին Կովկասի կառավարչապետ Դոնդուկով-Կորսակովի կողմից ներկայացվել է Ռազմական նախարար Պ.Ս. Վանկովսկուն (Մանրամասն տե՛ս ՀԱԱ, ֆոնդ 14, ցուցակ 1, գործ 519, թթ. 24-25):

[4] **Бороздин К.,** Переселенцы в Закавказье, СПб., 1891, стр. 158.

թյան մեջ և ինչ հետևողականությամբ էր այն գործնականում կիրառում, կարելի է պատկերացում կազմել XIXդ. վերջին քառորդի վիճակագրական նյութերին ծանոթանալով: Այսպես՝ Կարսի մարզի ստեղծման առաջին տասնամյակում այստեղ հիմնվել է ռուսական ավելի քան 20 գյուղ[1], մինչդեռ նույն ժամանակահատվածում հարևան Ալեքսանդրապոլի գավառում հաստատվելու իրավունք է ստացել թուրքահպատակ միայն 61 ընտանիք (358 մարդ), որից 9 ընտանիքը (33 մարդ) գավառակենտրոնում[2], իսկ 52-ը (325 մարդ)՝ գավառի 9 գյուղերում[3]:

**1873-1886թթ. ընթացքում Թուրքիայից Ալեքսանդրապոլի գավառ վերաբնակվածներն ըստ տարեթվերի**

| տարեթիվը | ընտանիք | արական | իգական | ընդամենը | % |
|---|---|---|---|---|---|
| 1874թ. | 2 | 5 | 3 | 8 | 3.3 |
| 1875թ. | 1 | 2 | 3 | 5 | 1.6 |
| 1878թ. | 3 | 10 | 8 | 18 | 4.9 |
| 1881թ. | 6 | 15 | 11 | 26 | 9.8 |
| 1882թ. | 43 | 139 | 142 | 281 | 70.6 |
| 1883թ. | 2 | 2 | 1 | 3 | 3.3 |
| 1884թ. | 2 | 5 | 5 | 10 | 3.3 |
| 1885թ. | 1 | 1 | 1 | 2 | 1.6 |
| 1886թ. | 1 | 3 | 2 | 5 | 1.6 |
| **ԸՆԴԱՄԵՆԸ** | **61** | **182** | **176** | **358** | **100** |

Ընդ որում, հայերը նորեկների մեջ կազմում էին միայն 29.5% կամ 18 ընտանիք (75 մարդ): Մնացած 43 ընտանիքներից 40-ը (268 մարդ) կամ 65.6%-ը եզդիներ էին, իսկ 3 ընտանիքը (15 մարդ) կամ 4.9%-ը՝ հույներ[4]:

Արևմտահայության ներհոսքի ծավալներն անհամեմատ աճեցին XIXդ. 90-ական թվականների կեսերին, ընդ որում՝ ռուսական իշխանությունների կամքից անկախ:

Փորձելով նվազագույնի հասցնել Եվրոպական տերությունների՝ Թուրքիայի ներքին գործերին միջամտելու և նրանից զիջումներ կորզելու հնարավորությունը՝ XIXդ. 80-ական թվականներից աբդուլհամիդյան վարչակարգն սկսեց ուղիներ փնտրել Հայկական հարցից ազատվելու համար[5]: Սուլթան Համիդն

---

[1] Первая всеобщая перепись населения Российской империи, 1897г. Карсская область, тетрадь 2, издание Центрального статистического комитета Министерства Внутренних Дел, под редакцией **Н.А. Тройницкого**, СПб, 1904, стр. 106-107.

[2] ՀԱԱ, ֆոնդ 93, ցուցակ 1, գործ 241:

[3] Նույն տեղում, գործ 194, 218, 219, 220, 238:

[4] ՀԱԱ, ֆոնդ 93, ցուցակ 1, գործ 194, 218, 219, 220, 238:

[5] Մանրամասն տե՛ս **Лазарев Я.,** Причины бедствий армян в Турции и ответсвенность за разорения

առաջարկեց Հայկական հարցի լուծման ուրույն ճանապարհ՝ քրդերի միջոցով հայերի ֆիզիկական բնաջնջում[1]: Այսինքն՝ Օսմանյան կայսրության պատմության ընթացքում հայ ժողովրդի պարբերաբար կրկնվող կոտորածների դարավոր քաղաքականությունը XIXդ. վերջին տասնամյակում բարձրացվեց պետական մակարդակի: 1890-ական թվականների սկզբներից սուլթանական վարչակարգը ձեռնամուխ եղավ այդ քաղաքականության կենսագործմանը: Սկզբում հայկական կոտորածները կրեցին տեղային բնույթ, ապա ընդգրկեցին ամբողջ Արևմտահայաստանն ու կայսրության տարածքը: Այս ոճրագործությանը զոհ գնացին մոտ 300000 հայեր[2], նույնքան էլ բռնեցին գաղթի ճամփան, որից մոտ 100000-ը՝ դեպի Ռուսաստան:

Անշուշտ, նորեկների իր բաժինը ստացել է նաև մեր ուսումնասիրության առարկա Ալեքսանդրապոլի գավառը, սակայն XIX դարավերջի վիճակագրական ժողովածուները այդ մասին ուղղակի լռում են: 1897թ. անցկացված Համառուսաստանյան առաջին մարդահամարը, որ կոչված էր սպառիչ տեղեկություններ հաղորդելու կայսրության ազգաբնակչության տեղաբաշխման, քանակի, էթնոկրոնական վիճակի, զբաղմունքի, գրագիտության մակարդակի, ինչպես նաև բնիկ և նորեկ (այդ թվում նաև ժամանակավոր) ազգաբնակչության թվային հարաբերակցության մասին, կազմակերպվել ու անցկացվել է բազմաթիվ թերացումներով: Օրինակ՝ գյուղական բնակավայրերը՝ որպես առանձին վարչամիավորներ, մարդահամարի նյութերում ներկայացված չեն: Վիճակագիրներն ուղղակիորեն շրջանցել են նաև համիդյան կոտորածներից մազապուրծ բազմահազար գաղթականության թվաքանակի և Անդրկովկասի ու մասնավորապես Երևանի նահանգի տարածքում տեղաբաշխման հարցը: Այնուամենայնիվ ժողովածուի՝ Երևանի նահանգին վերաբերող հատվածի վիճակագրական նյութերի մեր կողմից անցկացված մանրակրկիտ ուսումնասիրությունը որոշ արդյունքներ տվեց: Այսպես, համաձայն մարդահամարի «Բնակչության տեղաբաշխումն ըստ խավերի և ծննդավայրերի» բաժնի՝ 1897թ. դրությամբ Ալեքսան-

---

Сасуна, Тифлис, 1895, стр. 27.

[1] Արևմտահայության ջարդերը կազմակերպելու համար քրդերից ստեղծված հեծելազնդերը սուլթանի անունով կոչվեցին համիդիե: Համաձայն 1892թ. դեկտեմբերին բրիտանական զինվորական կցորդի Լոնդոն ներկայացրած զեկուցագրի՝ մեկ տարվա ընթացքում սուլթանական կառավարության կողմից ստեղծվել էր նմանատիպ 33 գունդ, յուրաքանչյուրը բաղկացած 500 հեծյալից, ևս 13 գունդ գտնվում էր կազմավորման փուլում (Մանրամասն տե՛ս **Sarkissian A.**, Studies in Diplomatic History in Honour of G. P. Gooch, New York, 1961, p. 59.)

[2] Ի դեպ, 1894-1896թթ. աբդուլհամիդյան կոտորածների զոհերի թվաքանակը վերջնականապես ճշտված չէ, և նշված 300.000-ը կարելի է միայն նվազագույնը համարել: Ըստ ֆրանսիացի Վիկտոր Բերարի հաշվումների՝ այն կազմում է 500.000 մարդ (Մանրամասն տե՛ս Братская помощ пострадавшим в Турции армянам, М., 1898, стр XXIII, LVII):

դրապոլի գավառում ապրում էր ծնունդով արտասահմանցի մոտ 793 ընտանիք (1 ընտանիքը 5 մարդ հաշվով) կամ 3968 մարդ[1]: Նույն մարդահամարի «Ոչ բնիկ ազգաբնակչության տեղաբաշխումն ըստ ծննդավայրերի» բաժնի համաձայն՝ սրանցից 684 ընտանիքը (3421 մարդ) ծնվել էր Թուրքիայում, իսկ հետո տարբեր պատճառներով ընդունել ռուսական հպատակություն: Սրանցից 538 ընտանիքը (2692 մարդ) հաստատվել էր Ալեքսանդրապոլ քաղաքում, իսկ մնացած 146 ընտանիքը (729 մարդ)՝ գավառի գյուղերում[2]: Ցավոք, սկզբնաղբյուրը նորեկների մասին այլ տեղեկություններ՝ մասնավորապես՝ էթնոկրոնական բնույթի, չի հայտնում:

Արևմտահայության աբդուլհամիդյան «զուլումը» շարունակվեց նաև XXդ. առաջին տասնամյակին, շարունակվեց նաև հայության զանգվածային արտագաղթը Արևմտյան Հայաստանից և Օսմանյան կայսրության այլ շրջաններից: Կոտորածների ու բռնի մահմեդականացման քաղաքականությունը 1902-1910 թթ. ընթացքում հինգ առանձին խմբերով Ալեքսանդրապոլի գավառ բերեց փախստականների ևս 698 ընտանիքներ (3487 մարդ):Նորեկների ամենամեծ խմբաքանակը գրանցվեց 1902թ.՝ 568 ընտանիք (2872 մարդ), որից 406-ը (2030 մարդ) հաստատվեց Ալեքսանդրապոլում[3], իսկ 162-ը (842 մարդ)՝ գավառի 50 գյուղերում[4]: Մնացած 130 ընտանիքները (615 մարդ) ռուս-թուրքական սահմանն անցան ու Ալեքսանդրապոլի գավառում հաստատվեցին 1903-1910թթ. ընթացքում. 93 ընտանիքը (397 մարդ)՝ գավառակենտրոնում, իսկ 37-ը (218 մարդ)՝ գավառի 23 գյուղերում[5]:

Ամփոփելով XIXդ. երկրորդ կեսին և XX դարասկզբին արևմտահայության պարբերաբար կրկնվող վերաբնակեցումների, Արևելյան Հայաստանի հյուսիսային հատվածի բնակչության էթնոկրոնական պատկերի վրա այս տեղաշար-

---

[1] Первая всеобщая перепись населения Российской империи, 1897г. LXXI Эриванская губерния, издание Центрального статистического комитета Министерства Внутренних Дел, под редакцией **Н.А. Тройницкого,** СПб, 1905, стр. 24.

[2] Первая всеобщая перепись населения Российской империи..., стр. 28.

[3] Памятная книжка Эриванской губернии на 1904 год, под редакцией секретаря Эриванского губернского статистического комитета, правителя канцелярии губернатора **А.И. Марченко**, издание Эриванского губернского статистического комитета, Эривань, 1903, отд. III, стр. 44-45.

[4] 1902թ. ընթացքում արևմտահայերի ընդունման և Ալեքսանդրապոլի գավառում տեղավորման ժամանակ տեղի ունեցան նաև արտառոց դեպքեր: Օրինակ՝ փետրվարի 5-ից Ղզլլքիլիսայում հաստատված Բաղդասար Մանուկյանի ընտանիքը մարտի 27-ի երդման արարողության ժամանակ հրաժարվեց ընդունել ռուսական քաղաքացիություն, հավանաբար մտածելով, թե մոտ ապագայում կկարողանա վերադառնալ իր նախկին բնակության վայրը: (Մանրամասն տե՛ս Ալեքսանդրապոլի գավառը վիճակագրական նյութերում (XIXդ.-XXդ. սկիզբ), փաստաթղթերի և նյութերի ժողովածու, աշխատասիրությամբ՝ **Ա. Հայրապետյանի,** Եր., 2011, էջ 199-200):

[5] ՀԱԱ, ֆոնդ 105, ցուցակ 1, գործ 609, թթ. 1-653:

ժերի թողած ազդեցության, ինչպես նաև արևմտահայության ներհոսքի և դրա մասշտաբների հարցում ցարական իշխանությունների ունեցած դերակատարության համառոտ քննությունը՝ նշենք հետևյալը. Շուրջ վեց տասնամյակների ընթացքում Արևմտյան Հայաստանի տարբեր փաշայություններից երկու որակապես տարբեր փուլերով (բաժանումը պայմանական է և կատարվել է մեր կողմից-Ա.Հ.) այժմյան Շիրակի և Լոռու մարզերի տարածքներ տեղափոխվեցին ավելի քան 1875 ընտանիքներ:

Առաջին փուլում, որ ընդգրկեց XIXդ. 50-80-ական թվականները, ցարական կառավարության ընդգծված գաղութատիրական քաղաքականության պայմաններում, երբ Արևելյան Հայաստանի տնտեսական վերակենդանացումը բացառապես կապվում էր այստեղ ռուս էթնիկ տարրի վերաբնակեցման հետ, ռուս-թուրքական սահմանն անցան և Ալեքսանդրապոլի գավառում հաստատվեցին ընդամենը 493 ընտանիքներ (2885 մարդ), որից 419-ը (85%)՝ հայեր: Իրենց ավելի քան համեստ թվաքանակի պատճառով վերաբնակիչներն այս փուլում գավառի ժողովրդագրական պատկերի վրա որևէ էական ազդեցություն ունենալ չկարողացան: Ըստ «Ընտանեկան ցուցակագրման» հաղորդած վիճակագրական տեղեկությունների՝ գերազանցապես շնորհիվ բնական վերարտադրության (նշված ժամանակահատվածում խիստ փոքր թիվ կազմեցին նաև կայսրության այլ նահանգներից գավառ տեղափոխվածները՝ ընդամենը 294 ընտանիք)[1], գավառի բնակչության թիվը 1886թ. կազմեց 15888 ընտանիք (130346 մարդ)[2], ինչը գերազանցում էր 1860թ. ցուցանիշը (10134 ընտանիք) 5754 ընտանիքով (53179 մարդ): Վերաբնակիչները էական ազդեցություն չունեցան նաև գավառի էթնոկրոնական պատկերի վրա: Ինչպես XIX դարակեսին, այնպես էլ դարավերջին Ալեքսանդրապոլի գավառը՝ 91.6% հայ ազգաբնակչությամբ, շարունակում էր մնալ ամենահայեցին ու միատարրն ամբողջ Անդրկովկասում[3]:

Ալեքսանդրապոլի գավառի տարածքում արևմտահայության վերաբնակեցման երկրորդ փուլը սկսվեց XIXդ. 90-ական թվականների սկզբներից և որոշ ընդմիջումներով շարունակվեց մինչև 1910թ.: Երկու ոչ լրիվ տասնամյակների ընթացքում, հակառակ ցարական իշխանությունների կամքին ու ծրագրերին, Արևմտյան Հայաստանից և Օսմանյան կայսրության այլ շրջաններից փախան և այստեղ հաստատվեցին 1382 ընտանիքներ (6908 մարդ): Չնայած նախորդի համեմատ ունեցած ավելի մեծ ծավալներին, այս անգամ ևս արևմտահայությունը

[1] Ալեքսանդրապոլի գավառը վիճակագրական նյութերում.., էջ 82-83, 121-124, 151-152:
[2] ՀԱԱ, ֆոնդ 93, ցուցակ 1, գործ 241, թթ. 1-1668, ֆոնդ 125, ցուցակ 1, գործ 26, թթ. 56-75:
[3] Данные о пространстве и населении Закавказья, Кавказский Календарь на 1896 год, отд. III, Тифлис, 1895, стр. 32-33.

էական ազդեցություն գավառի ժողովրդագրական պատկերի վրա չունեցավ: Համաձայն Երևանի նահանգային վիճակագրական կոմիտեի հաղորդած տվյալների՝ 1906թ. դրությամբ Ալեքսանդրապոլի գավառն ուներ արդեն 25230 ընտանիք (186934 մարդ)[1], ինչը գերազանցում էր 1886թ. ցուցանիշը 9342 ընտանիքով (56588 մարդ): Լուրջ փոփոխություններ չնկատվեցին նաև էթնոկրոնական պատկերի մեջ[2]: XX դարասկզբին ևս գավառի ազգաբնակչության ճնշող մեծամասնությունը հայերն էին՝ 92.5%:

Ելնելով վերոբերյալ վիճակագրական տվյալներից՝ կարելի է նշել հետևյալը. 1852-1910 թթ. ընթացքում Ալեքսանդրապոլի գավառի բնակչության թիվն աճել է 4.8 անգամ կամ 147980 մարդով (17423 ընտանիք)՝ 1852թ. գրանցված 38954-ից 1906թ. հասնելով 186934-ի: Եվ բնակչության թվի աճը տեղի է ունեցել գերազանցապես շնորհիվ բնական վերարտադրության (80/20 տոկոսային հարաբերակցությամբ)[3]:

**1852-1910թթ. ընթացքում Թուրքիայից Ալեքսանդրապոլ քաղաք և համանուն գավառ վերաբնակվածներ**

| ուր են եկել | Երբ | Ընտ. | Ար. | Իգ. | Ընդ. | % |
|---|---|---|---|---|---|---|
| Ալեքսանդրապոլ քաղաք | 1852-1860թթ. | 116 | 385 | 312 | 697 | 13.1 |
| Ալեքսանդրապոլի գավառ | | 132 | 469 | 403 | 872 | |
| Ալեքսանդրապոլ քաղաք | 1863-1873թթ. | 108 | 266 | 234 | 500 | 9.7 |
| Ալեքսանդրապոլի գավառ | | 76 | 246 | 212 | 458 | |
| Ալեքսանդրապոլ քաղաք | 1873-1886թթ. | 9 | 19 | 14 | 33 | 3.3 |
| Ալեքսանդրապոլի գավառ | | 52 | 163 | 162 | 325 | |
| Ալեքսանդրապոլ քաղաք | 1886-1897թթ. | 538 | 1955 | 737 | 2692 | 36.4 |
| Ալեքսանդրապոլի գավառ | | 146 | 437 | 292 | 729 | |
| Ալեքսանդրապոլ քաղաք | 1902թ. | 406 | 1121 | 909 | 2030 | 30.3 |
| Ալեքսանդրապոլի գավառ | | 162 | 460 | 382 | 842 | |
| Ալեքսանդրապոլ քաղաք | 1903-1904թթ. | 65 | 154 | 145 | 299 | 4.5 |

[1] Памятная книжка Эриванской губернии на 1908 год, под редакцией секретаря Эриванского губернского статистического комитета, Члена Губернского по поселянским делам присутствия **В.Е. Василева**, издание Эриванского губернского статистического комитета, Эривань, 1908, отд. III, стр. 2-3, 8-9, 22-23, 46, 100-117.

[2] Եթե 1894-1897թթ. ընթացքում Ալեքսանդրապոլի գավառ եկած 648 ընտանիքների էթնոկրոնական վիճակի մասին, ինչպես արդեն նշել ենք, որևէ տեղեկություն չանենք և միայն ենթադրում ենք, որ հանգամանքներից ելնելով՝ պիտի գերազանցապես հայեր լինեին, ապա հաջորդ փուլում՝ 1902-1910թթ. եկած 698 ընտանիքի մասին գիտենք հետևյալը՝ բացառությամբ հունական 1 ընտանիքի (2 մարդ), մնացածները առաքելական հայեր էին:

[3] XIXդ. երկրորդ կեսին և XX դարասկզբին Ալեքսանդրապոլի գավառում ընթացող ժողովրդագրական գործընթացների մասին մանրամասն տե՛ս «Ալեքսանդրապոլի գավառը վիճակագրական նյութերում...», էջ 69-223:

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Ալեքսանդրապոլի գավառ | | 19 | 70 | 58 | 128 | |
| Ալեքսանդրապոլ քաղաք | 1906թ. | — | — | — | — | 0.7 |
| Ալեքսանդրապոլի գավառ | | 13 | 35 | 23 | 58 | |
| Ալեքսանդրապոլ քաղաք | 1907թ. | 22 | 39 | 34 | 73 | 1.4 |
| Ալեքսանդրապոլի գավառ | | 5 | 18 | 14 | 32 | |
| Ալեքսանդրապոլ քաղաք | 1910թ. | 6 | 18 | 7 | 25 | 0.6 |
| Ալեքսանդրապոլի գավառ | | — | — | — | — | |
| **ԸՆԴԱՄԵՆԸ** | | **1875** | **5855** | **3938** | **9793** | **100** |

*ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ»,*
*Գյումրի, 2011, հ. 14, էջ 40-50*

# RUSSIAN IMMIGRANTS IN THE PROVINCE OF ALEXANDRAPOL: EPISODES FROM THE POLICY OF RUSSIANIZATION OF THE EASTERN ARMENIA / FROM THE SECOND HALF OF THE XIX CENTURY TO THE XX CENTURIES/

**Introduction.** The Tsarist administration began the resettlement of the Transcaucasia starting from 1819 when German 500 families from Virtemberg were resettled in the territories of no1wadays Georgia and Azerbaijan. But the resettlement of the Germans was of no expected benefit: Though they swiftly improved their socio-economic situation the resettlers lived an isolated life and had no impact on the overall development of the region. Therefore for the territory as well as the strengthening of the Russian-Persian frontier, in the mid-20s' of the XIX century, the governor of Caucasus Ivan Paskevitch elaborated the plan to resettle 80000 malorussian (Ukrainian) Cossacks in the border regions of Eastern Armenia.

So as to accept the resettlers, resettle them in the border regions and form 10 cossack regions even a special committee was formed headed by count Piotr Tolstoy [30, 104-105]. yet the aforementioned plan was fulfilled in that time period mainly because of being time-consuming and costly.

Instead, the Tsar government found the solution of securing and settling the border regions with reliable ethnic elements in the organization of immigration of almost 8249 Armenian families from Persia [3, 114]. The second and third plans of Paskevitch to resettle Eastern Armenia with malorussian Cossacks that were introduced to the Tsar administration in 1829-1830, were not fulfilled due to the aforementioned reasons. Instead, the immigration of almost 12357 Armenian families from the Ottoman Empire was organized [10, 85].

**Research results**. The Russianization policy of the Transcaucasia renewed in a much more rigorous manner beginning from the 40s of the XIX century when to secure its positions in the Easter Armenia the Tsar government decided to resettle the region with Russian sectarians.

The first flan to realize the above-mentioned was set forth by the head of the Yerevan province Balavarski. As a result of the resettlement plan envisaged for the provinces of Yerevan and Nor Bayazet travelers would think that Yerevan-Darachichag-Dilijan-Shorzha-Nor Bayazet rout is thoroughly inhabited by Russians and this state remained till the WWI.

The author of the second plan of the resettlement of Russian sects in Eastern Armenia was the chairman of the Transcaucasian Resettlement Contemporary Com-

mittee Fadeev and the Board member of the Transcaucasian General Department Fadeyev due to whose "efforts" starting from the mid-40's of the XIX century, began the Russianization of the Alexandropol province-the subject of our study [22].

The first Russian village in Alexandrapol province was Vorontsovka which was founded on the Tiflis-Alexandrapol route, in the Orbelyan terraced land belonging to Lori region's Great Gharakilisa village, famous for its healthy climate and suitable land lots for cattle-breeding and farming [16]. The population of the latter were the molocans mainly from the provinces of Orenburg and Saratov that came to the Transcaucasia in 1834 and after a decade of roaming, they founded Vorontsovka. In 1849 the village had a population of 141 families, it a year it became 143, 122 out of which came to Eastern Armenia in 1834-1836 [13, 48].

From the archival materials, it is clear that the artificial growth of the population number continued in Vorancovka conditioned with new immigrants. Thus, in order to resettle here in 1846, at the beginning of the year, the resettlers of Gandzak and Shamakhi provinces addressed the head of the Pambak district, who unable to bear the local climate and the people's unloving attitude and asked to get the permission to move to Alexandrapol province.

Having informed the Caucasus viceroy on this, the Governor of Alexandrapol province mentioned at the same time that the entire Russian population of the village of Topchi, Shamakhi province, with a minor exception (two families in Elenovka and five families in Novo-Saratovskaya), had already resettled in Vorontsovka [21]. The influence of the Russian government's biased policy on the population growth in this village is evident from the 19th century the census data. So, if in 1852, according to the cameral listing the population in Vorontsovka was of 170 (926 people), in 15 years, in 1867, it already reached 422 families (2284 people) [1, 3]. In the year of the foundation of Vorontsovka, two other Russian villages-Nikitino and Voskresenko were founded on Alexandropol-Dilijan rout adjunct to Hamzachiman.In 1852 the population of Nikitino was 56 families /388 people/ and in Voskresenko 61 families /375 people/ [22].

The next phase of the Russianization process in the Eastern Armenia started from the 40s of the XIX century when the Tsar government without taking into account the lack of land lots among the Armenian villagers allocated vast territories adjacent to the Lake Sevan, the province of Alexandrapol and Lori region for creating "special funds" for Russian sectarian resettlers.

This stage of resettlement was also implemented by the joint Balavatsky and Fadeev joint programs. In his report to the mayor of Yerevan on May 13, 1849, Fadeev wrote that he had found two suitable sites in Alexandrapol province to be resettled

with Russian sectarians. One of them is the place called " Elydar of Shoragyal", where there are about 6928 destinations of useful land lots, and therefore, for each family 30 dessiatins could be allocated ensuring the resettlement of up to 230 families" [7, 219-220]. Located on the Alexandrapol-Akhaltskha highway, the precinct was not far from the already existing Russian villages, so Fadeyev believed that there was no obstacle to occupying Russian populations. Being on the route Alexandrapol-Akhaltsikhe the region was not far from already existing Russian villages and as for Fadeyev and the head of the province, there would not be an obstacle to have those regions resettled with Russians. The second place envisaged to be resettled by Russians was the city of Alexandrapol where it was suggested to settles 20 families from the beginning.

The primary task of his plan was to resettle the left wing of the Alexandrapol plain and Akhuryan with Russians. He was thinking of founding Russian villages along the entire length of Alexandrapol Dilijan route pointing out the importance of inhabiting Lori region with Russians since it would be a kind of stronghold on the way uniting the provinces of Yerevan and Tiflis [7, 222].

The Tsarist government seriously touched upon this project of Fadeev beginning from 1850. When according to the archival data in the province of Yerevan nearly 500 families of Russian sects had already settled [22, 10]. After the official resettlement permission (March 28, 1850) another 500 families were moved and settled in Eastern Armenia and on 15080 dessiatins and 3574 sazhen (including, in the district of Alexandrapol, in Elidar 6928 dessiatins and 1574 sazhens, near Alexandrapol 60 dessiatins, in the district of Miskhana 1906 dessiatins). Every newcomer family were given by the government in accordance with the decree of December 9, 1848, an 8-year tax privilege and an average of 6-7 dessiatins of land per person (also, the decree related to those who voluntarily settled in the Transcaucasia and converted to orthodoxy once again getting rid of taxes during 25 years) [11, 92]. And this is in the case, when according to Atrpet for per resettler the locals have only 1-3 dessiatins amount of land (most Armenian villages had no pastures), Tatars (Turks, Persians)– 4-5 dessiatins and Orthodox Greeks 5-6 dessiatins [8, 36] .

Because of the absence of archival data, it is impossible to mention the exact number of the Russian families out of the overall 500 resettled families relocated in the Alexandrapol province.

Nevertheless, summing up our data on the Russian sectants who had resettled in the province it is possible to assert the following. In the result of the Transcaucasia Russianization policy, which became much more active beginning from the XIX century only in the districts of Pambak and Lori 383 families of resettlers (2232 people)

founded four villages.

Moreover, if Voskresenovka and Nikitino villages founded in the Pambak region were inhabited only with the Russian sectarians (117 families) two villages founded in the Lori district (Privolnoye and Vorontsovka) only the second one was inhabited with the sectarians, meanwhile, Privolnoye was founded along with 96 orthodox Russian families resettled in the uyzed [16, 563585].

Regarding the relocation and resettlement of 20 Russian sectarians in Alexandrapol, this process, according to our data, was relatively slow at its initial stage. In the mid-50s, the tsar's government succeeded in accommodating only three families in the city-predominantly Orthodox Russians [5, 334].

And in the late '50s, that number dropped dramatically and according to a report by the governor of Alexandropol uyzed sent to the governor of Yerevan province, the number increased to 23 families (124 people) [5, 334-351].

In accordance with the Fadeyev plan, the last two villages founded in the province of Alexandropol by the orthodox were Nikolayevka and Novo-Alexandrovka. The first one was founded on the base of the villages of Tsikhisdvari /26 families/ and Bakuriani /16 families/ of the Borzhomi province [9], and Novo-Alexandrovka in accordance with the report N 481sent by the Governor of the Yerevan province to the Caucasus viceroy /March 4, 1862/ from the village of Kormovskoy of the province of Chernoyari /10 families who had resettled in the uyzed of Alexandrapol/ [23].

The third plan of the resettlement of the Russian element was elaborated and implemented in 1877-1878 right after the victorious outcome of the Russian-turkish war when the authorities decided to settle the newly conquered Kars region with Russians and Greeks [25].

As for the thousands of Armenian immigrants, they had played their role during the war and seemed to be a short-term useful instrument in the hands of tsarism.

The commander of the Caucasian army Svyatopolk-Mirskin in his report (February 4, 1879) wrote, “Our main goal should be to resettle a large number of Russians in Kars. Otherwise, we will have to get out of the thought of creating a Russian population in Transcaucasia ... Now we regret that in 1829 the wealthy regions of Akhalkalaki and Alexandrapol were inhabited by Armenians and Greeks instead of Russians. Repetition of such an error, I dare say, will be unforgivable” [15].

This and suchlike other reports were ground for the Russian authorities to assume that only in the case of being resettled by the Russians the Caucasus can survive and develop [2, 158].

The contemporary press shows how rapidly and in what way the plans to

implement those new ideas were carried out.

In a letter written on January 2, 1879, a local provincial correspondent innocently recorded the historical fact. "Today, the first Russian families have crossed the border of Russia through Jalaloghli to Kars" [12]. Over the next two decades, thanks to the consistent policy of the authorities, more than 20 colonial villages were founded in the province. By the way, in the first years of the conquest, when the process of resettlement of Russian elements from the interior of the country was relatively slow, it was decided to set up a small-scale migration at the expense of the already established immigrants in Transcaucasia. The Movement embraced almost all Russian and Greek settlements in the Alexandrapol province.

According to the archival documents in only 1879-1885 under the permission of the governor-general of Kars region almost 144 families /633 people/ including 45 Greek families from Alexandropol city and the villages of Bayandur, Sisimadan, Alahkilisa, Nikitino and Voskresennko of the namesake province migrated and resettled in the region. From only Voskresenko 53 families /371 people/ moved to Kars 28 families /201 people/ out of which settled in the Village of Romanovo /Zarishat district/, and 25 families /170 people/ out of which in the village of Novo- Mikhaylovsk [17].

Another 46 families (102 people) in 1881were entitled the right to migrate from the Village of Nikitino [29].

Carrying out the colonialization policy of the Easter Armenia in a persistent manner tsar administration was quite far-sighted to understand that only that major state colonies are not enough to ensure the secure defense. It was a necessity to have proponents of the tsar government in the local population. Here the policy of proselytism emerged.

Because of the lack of the archival data, we cannot say what impact it had on the local Muslims. The only legislative document we have met was the Imperial Order dated back to March 30, 1848 which reads, "Those Muslims who live in the Transcaucasus or those who have there to live, in case of receiving holy baptism, will be enrolled in rural societies rich in huge amounts of land lots of high quality, they and their children will be free from taxes imposed on individuals and families and they will be exempt from all taxes and duties for 6 years, as well as each of them will receive 15-30 silver roubles from the state treasury for building houses and for resettlement" [6].

Especially proactive attempts of proselytism were made among the Armenians though suchlike privileges were not envisaged for the Armenians having converted to orthodoxy.

Tsarist authorities were well aware of the pure state of the Armenian villagers

especially in terms of a small amount of land lots and did know the places where the state was extremely heavy. In those regions, the movement among the villagers to convert to orthodoxy took large-scales. In the Province of Yerevan, the number of such villages by the end of the XX century was 16 with the population of 157 families, three out of which were in the province of Alexandrapol – the subject of this study [24].

In 1841 The State Property Inspector of the Alexandrapol province, in his report to the Chamber of Tiflis regarding the land use in Shirak villages, wrote: "The state farmers in the surrounding villages are complaining to me that there is a lack of arable land ... In order to check whether this complaint is valid, I traveled around almost all the villages adjacent to the city and saw that these state-owned farmers have very little arable land. That is why many of them have gone abroad with their families, and some have voluntarily migrated to Georgia ... " [20]. In another case the inhabitants of Small Gharakilisa - the most populated villages lacking the appropriate amount of land in their complaints sent to the province administration described their land conditions in this way, “Our ancestors immigrated to Russia a hundred year ago. At the time of their arrival, they were only 30-35 families, now we are 172 families, but we have not received any additional land lots during this time. This has led us to extreme poverty ... our youth has been forced to go to Russia to earn on a piece of bread with blackish hard work to feed their parents and their families” [28].

Rising out of the above-mentioned, we can conclude that in the Armenian villages the main motives of conversion to the Orthodoxy were of economic nature.

The territorial division was beneficial for those who had converted to the Orthodoxy. For instance, from the village of Small Gharakilisa they cut off the territory of Akhuryan bank rich in water, which was a huge water source and a supply for the community of more than 4000 people and allocated the land to a new village, founded the village of Alexandrovka for the Armenians who had adopted orthodoxy. Then in order to deepen the roots of orthodoxy in accordance with the N 422 letter of the spiritual agent of the Orthodox community of the Alexandrapol province dated back to May 19, 1903, the Tsar Nikolay II decided to transmit for building orthodox churches in Alexandrovka and Aghin 5000 roubles each [26].

Besides getting land lots of higher quality the Armenians having converted to the orthodoxy they were provided with higher norms and criteria. For example, the newly converted settled in Alexandrovka had one hectare per person and 0.71 hectares per person in Small Gharakilisa.

But it is not everywhere the authorities managed to carry out land division without any obstacles. For examples in the same Small Gharakilisa, the land division

process was delayed and was fulfilled with extreme difficulties. In other places such as Bughdanesh, the resistance of the community remained insurmountable. Sometimes it was physically impossible to carry out land division because of the lack of land sources.

This plan for internal division and clashes among the Armenian villagers was unsuccessful. The Orthodox Movement not only didn't receive large volumes in the province of Yerevan and particularly in the province of Alexandrapol, but also failed thoroughly since first the authorities did not provide new "believers" with a large amount of land having no intention to indulge in such a luxury at all, as it would mean the Improvement Armenian farmer's land conditions, and, besides, the new confession was being adopted by the Armenian villagers only in order to meet their needs.

In the report N 217 sent to the Department of Agriculture and Land Management dated to January 15, 1908, the governor of the province of Yerevan Tissenhausen wrote, "The true motivation of Armenians to accept orthodoxy is to create the best conditions of land provision, and after reaching the goal, they are returning again to the Illuminator (Apostolic - A.H.) Church embraces" [27].

It was well-known for the authorities that, for example, in the village of Alexandrovka that was dramatically separated from Small Gharakilisa almost all families left part of them in the main community, they didn't cut family and economic ties and the division was artificial and on purpose.

Moreover, in accordance with the list on the village population it was obvious that the 20 families settlers in the village of Alexandrovka was not even fully converted to orthodoxy' 79 out of 119 were orthodox, 40-Armenian apostolic.

For example, Hovsep Ghazaryan /number 1 in the list/ converted to orthodoxy with one of his sons but his wife, 3 sons, and daughter-in-law remained followers of the Armenian Apostolic church.

The second son of Manuk Poghosyan with his wife and a year old child /number 10 and 3 in the list/ converted to orthodoxy, but he along with his wife and other sons remained apostolic.

Egor Mikayelyan with his 2 small children was the follower of new confession while his wife was Armenian apostolic, etc [24]. From this aspect Bughdashen people were ahead of Gharakilise people: 10 out of 11 families converted to orthodoxy after improving their territorial requirements returned their former confession, and one family presented a motion to give the opportunity to settle in one of the orthodox villages of the Kars region as well as be provided with land.

**Conclusions.** Summing up the brief history of the Tsarist colonization plans and their implementation in Eastern Armenia we can underline that despite all the efforts made

the expectation of the government mainly did not come into reality. In the wake of continuing aggressive resettlement of more than 7 decades, the number of the Russians as of 1915 was 16161, which was only 1.5% of the entire population of the Yerevan province [4].

Compared with the locals the resettlers who were provided with much better conditions not only were dissatisfied with their new conditions but also lived an isolated life and at the beginning of the XX century when they got the opportunity they moved to the inner provinces of Russia and then to the USA.

With regard to the province of Alexandrapol, the last plan to Russianization failed in the 5060s of the XIX century. Despite all the efforts made, the Tsar Government failed to resettle the left bank of the Akhuryan river middle stream with Russians. The restoration of the water canal from the foot of Aragats was delayed, and after a while, the ruins of local villages were inhabited with the Western Armenian refugees. Then, thanks to the strong resistance of the locals, the plan to build colonial points on Alexandrapol-Gharakilisa-Jalaloghli-Dilijan route remained unfulfilled. The Tsar government failed the policy to persistently convert the Armenian rural population to the orthodoxy. Moreover, in the result of the administrative-territorial divisions, the region of Lori was separated from the province of Alexadrapol and attached to the province of Tiflis. Four out of Six Russian villages as part of the above--mentioned region were separated from the Alexandrapol province and attached to the Tiflis province.

The number of the resettlers increased only at the beginning of the XX century reaching 7574 people (3.4% of the population): Inter alia, it happened at the expense of predominantly military class representatives (that is to say at the expense of the Orthodox Russians) [4].

## REFERENCES

1. Алфавитный список населенных мест Кавказскаго края, “Кавказский календарь на 1899 год”, Тифлис, типография М. Шарадзе и К°, 1898, отд. III, стр. 3-21.
2. Бороздин К., Переселенцы в Закавказье, СПб., 1891, стр. 216.
3. Глинка С., Описание переселения армян аддербиджанских в пределах России, М., тип. Лазаревых, 1831, приложение IV, стр. 147.
4. Данные о пространстве и населении Эриванской губернии, “Кавказский календарь на 1916 год”, отд. III, Тифлис, тип. концелярии Наместника Е.И.В.

на Кавказе, казенный дом, 1915, стр. 37.
5. Стратегическия сведения по Тифлисской и Эриванской губерниям, “Кавказский календарь на 1855 год”, Тифлис, тип. концелярии Наместника Е.И.В. на Кавказе, казенный дом, 1854, отд. III, стр. 334-351.
6. Полное собрание законов Российской империи, собрание 2, отд. первое, т. XXIII, СПб, 1849, N 22149, срт. 222-223.
7. Avdalbekyan Kh., Land issue in the Eastern Armenia, Yerevan, Haypethrat, 1959, p. 444. (in arm.)
8. Atrpet, Landowning in Caucasus, Alexandropol, 1906, p 36. (in arm.)
9. Central State Archive of Georgia History (CSAGH), fund 240, list 2, work 28, p. 37). (in russ.)
10. Hayrapetyan A., Eastern Shirak in the first half of XIX century (Historical Demographic Review), Gyumri, Dpir, 2005, p. 205. (in arm.)
11. Haytyan A., the Russian resettlers of Armenia in 1830-1920, Yerevan, YSU, 1989, p 164. (in arm.)
12. Internal theory, "Mshak" weekly, Tiflis, 1872, N 3, 20 January, p.2. (in arm.)
13. Khojabekyan V., The population of Armenia and its occupation, Yerevan, ASSR IE,1979, p. 394. (in arm.)
14. National Archive of Armenia (NAA), fund 14, list 1, work 506, pp. 75-78. (in arm.)
15. NAA, fund 14, list 1, work 519, p. 24-55). (in russ.)
16. NAA, fund 93, list 1,work 110, pp.. 754-769. (in arm.)
17. NAA fund 93, list 1, work 217, pp. 246-287. (in arm.)
18. NAA, fund 125, list 1, work 14-I part, p. 63. (in arm.)
19. NAA, fund 151, list 1, work 25, p. 4.
20. NAA, fund 269, list 1, work 166, p. 1. (in arm.)
21. NAA fund 269, list 1, work 329, p. 361. (in arm.)
22. NAA fund 269, list 1, work 359, p. 6. (in arm.)
23. NAA, fund 269, list 2, work 501, p. 19. (in arm.)
24. NAA, fund 269, list 1, work 1989, (in arm.)
25. NAA, fund 269, list 1, work 2326, p. 14-15. (in arm.)
26. NAA, fund 269, list 1, work 2448, p. 2. (in arm.)
27. NAA, fund 269, list 1, work 2653, p. 3. (in arm.)
28. NAA, fund 269, list 1, work 2932, p. 48. (in arm.)
29. NAA fund 269, list 1, work 3047, pp. 10. (in arm.)
30. Parsamyan V., Griboyedov and Armenian-russian relations, Yerevan, ASSR IH, 1947, p. 280. (in arm.)

*Sub-department of Ministry of Education, Culture and Sport*
*of Ajara Autonomous Republic-Archives Administration,*
*“Archeion”, Tbilisi, 2019, N XVIII, pp. 38-44*

# ԴՐՎԱԳՆԵՐ XXԴ. ՍԿԶԲԻՆ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԳԱՎԱՌՈՒՄ ՄՈԼԵԳՆԱԾ ՏԱՐԱՓՈԽԻԿ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

***ՆԱԽԱԲԱՆ:*** Բնական վերարտադրությամբ բնակչության թվի համաչափ աճն Ալեքսանդրապոլի գավառում սկսվեց XIXդ. 50-ական թվականների կեսերից: Հաջորդ դարասկզբին շարունակվող այդ գործընթացը պարբերաբար խաթարվեց բնական աղետներով, մեծ մասշտաբներ ընդունած աշխատանքային միգրացիայով, անընդմեջ հայտնվող տարափոխիկ հիվանդություններով, պատերազմով և այլ գործոններով: Թվարկված խնդիրների քննությունը հնարավորինս մանրազնին կատարելու համար ուսումնասիրվող ժամանակահատվածը պայմանականորեն բաժանել ենք երկու շրջափուլերի 1903-1910թթ. և 1914-1916թթ.:

***ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԱՌԿԱ ԽՆԴԻՐՆԵՐՆ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԳԱՎԱՌՈՒՄ 1903 - 1916 ԹԹ:*** Դարասկզբին Ալեքսանդրապոլի գավառը թատերաբեմ էր դարձել միյանց հաջորդող ծաղկի, քոթեշի, մալարիայի, տիֆի, խոլերայի և այլ տարափոխիկ հիվանդությունների համար: Հայտնվելով գավառի այս ու այն հատվածում դրանք անմիջապես մեծ տարածում էին ստանում պատճառելով մարդկային զգալի կորուստներ:

Սուր վարակիչ հիվանդությունների շարքից առաջինը գավառում մեծ տարածում ստացավ բնական ծաղիկը: Հիվանդությունը հայտնվեց 1903թ. հունվարի սկզբներին գավառի Մեծ Արբխվալի և Ղոնդաղսազ գյուղերում: Համաճարակի տարածման առաջին երկու շաբաթների ընթացքում գրանցվեց վարակվելու 11 և մահվան 5 դեպք[1]: Հաջորդ մեկ ամսվա ընթացքում մահվան ելքով ևս 6 դեպք գրանցվեց գավառակենտրոնում[2]: Գավառի գյուղական բանակավայրերում ծաղկի վարակը մոլեգնեց մինչև ուշ աշուն, սակայն մահվան դեպքեր այլևս չարձանագրվեցին: Զանգվածային վարակման վերջին դեպքը գրանցվեց նոյեմբերի 18-ին Սարալում 41 հիվանդ[3]:

Քառամյա դադարից հետո 1907թ. աշնանը, ծաղկի վարակը կրկին հայտնվեց այս անգամ Ղազանչիում և շրջակա գյուղերում: Տարածվելով մանկահասակ երեխաների շրջանում հիվանդությունը, ըստ «Ժայռ» պարբերականի, հոկտեմբերի կեսերից մինչև դեկտեմբերն ընկած ժամանակահատվածում մոտ 150 մանուկների մահվան պատճառ դարձավ[4]: Ծաղկի երրորդ վերջին զանգվածային բռնկումը

---

[1] Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆոնդ 102, ցուցակ 2, գործ 866, թ. 11:
[2] Նույն տեղում, թ. 54:
[3] ՀԱԱ, ֆոնդ 102, ցուցակ 2, գործ 866, թ. 178:
[4] **Մոծակ**, Մանուկների կոտորած,//«Ժայռ», Ալէքսանդրապօլ, 1907, N 6, 27 դեկտեմբերի, էջ 2:

տեղի ունեցավ 1910թ. սկզբներին: «Ախուրեան»-ի հավաստմամբ հունվարի կեսերին հայտնվելով Նորաշենում և հարակից գյուղերում, հիվանդությունը կրկին տարածվեց դեռահասների շրջանում պատճառելով մարդկային կորուստներ[1]:

Նույն տարիներին գավառի գյուղերում մեծ տարածում ստացավ նաև անհայտ տիպի խիստ մահաբեր մի հիվանդություն, որի տեսակը մեզ ճշտել չհաջողվեց: Ժամանակի պարբերական մամուլում այդ մասին տեղեկություններ հայտնվեցին միայն 1908թ. սկզբներին, երբ վարակն արդեն հասցրել էր մարդկային զգալի կորուստներ պատճառել: «Ժայռ» պարբերականին թղթակցած Գ. Ղազարյանի հավաստմամբ, «հիւանդութիւնը սկսւում էր ոտքերից, ապա անցնում ստամոքսը, յետոյ գլուխը, որի ընթացքում սևանում էին բերանը, ատամները, լեզուն, այնուհետև առաջ էր գալիս մահը»: Ախտահարման ողջ ընթացքը շարունակվում էր 4-5օր, և միայն շատ քչերին էր հաջողվում ապաքինվել: Անհայտ տեսակի այդ հիվանդությունից միայն Մահմուդջուղ գյուղում 1908թ. հունվար-մարտ ամիսներին մահացել է 30 մարդ, իսկ թե ողջ գավառում քանի մարդ է մահացել հայտնի չէ: Փաստ է միայն այն, որ ընտանիքի անդամներից մեկի ախտահարվելու դեպքում ողջ ընտանիքը դատապարտվում էր մահվան: Օրինակ, Դավիթ Սիմոնյանի ընտանիքից մահացել էր 5 մարդ, Հերթեցյաններից 4 մարդ և այլն[2]:

Ի տարբերություն նախորդների գավառի ազգաբնակչությանը համեմատաբար փոքր վնաս հասցրեց քոթեշը: Դարասկզբի պարբերական մամուլում մեզ հաջողվեց գտնել սուր ստրեպտոկոկային այս վարակի զանգվածային բռնկման միայն մեկ հիշատակություն: Ըստ «Ախուրեան» օրաթերթի հիվանդությունը գավառի Բայանդուր գյուղում հայտնվել էր 1909թ. սեպտեմբերի կեսերին Կարսի մարզի Բաշ Շորագյալ գյուղից[3]: Մեկ-երկու շաբաթ անց այն անցել էր Ալեքսանդրապոլ, ապա Օրթաքիլիսա: Չնայած քոթեշի ընդունած մեծ մասշտաբներին առաջին երկու բնակավայրերում մահվան ելքով դեպքեր չէին արձանագրվել և միայն Օրթաքիլիսայում ախտահարված 100 հիվանդներից մահացել էր 30-ը[4]:

1910թ. սկզբներին մամուլում տեղեկություններ հայտնվեցին բծավոր տիֆի համաճարակի բռնկման մասին: Հիվանդության առաջին նշանները երևացին 1909թ. դեկտեմբերին, իսկ արդեն հունվարի վերջերին տիֆը տարածվեց գավառի գյուղերում: «Այնպիսի տներ կան, որ ամբողջ գերդաստանով տիֆով վարակված

---

[1] **Գաւառի տեղեկատու**. Նորաշէն,//«Ախուրեան» օրաթերթ, Ալէքսանդրապոլ, 1910, 25 ապրիլի, N 26, էջ 3:

[2] **Ղազարեան Գ.**, Մահմուդջուղ, «Ժայռ», Ալէքսանդրապոլ, 1908, N 32, 4 ապրիլի, էջ 3:

[3] **Կ. Ա.**, Համաճարակ հիւանդութիւններ,//«Ախուրեան» օրաթերթ, Ալեքսանդրապոլ, 1909, N 78, 5 նոյեմբերի, էջ 1:

[4] **Թ.Գ.**, Օրթաքիլիսա, //«Ժայռ», Ալէքսանդրապոլ, 1910, N 23, 23 մարտի, էջ 3:

են, հիւանդ ու անօգնական»,-գրում է «Ախուրեան»-ը[1]: Փետրվարին տիֆով վարակվելու դեպքեր գրանցվեցին նաև Ալեքսանդրապոլի քաղաքային բանտում և երկաթուղու բանվորների շրջանում[2]: Համաճարակը մոլեգնեց մինչև մարտի կեսերը, ապա սկսեց նահանջել, այնպես որ արդեն ապրիլի առաջին օրերին գավառում հիվանդներ այլևս չկային:

Ոչ արխիվային վավերագրերում և ոչ էլ ժամանակի պարբերական մամուլում տիֆի հասցրած մարդկային վնասների մասին տեղեկություններ չկան, ինչը թույլ է տալիս եզրակացնել, որ չնայած հիվանդության տարածման մասշտաբներին այն, այնուամենայնիվ, մարդկային մեծ զոհերի չի հանգեցրել:

Տիֆի հարվածից չապաքինված 1910թ. հուլիսին գավառը հայտնվեց մալարիայի համաճարակի ճիրաններում: Աֆրիկյան ծագում ունեցող այս հիվանդության տարածման հիմնական արեալը տափաստանային գերազանցապես ճահճոտ շրջաններն են: Երևանի նահանգում մալարիան տարածված էր Երևանի, Սուրմալուի, Էջմիածնի և Շարուր Դարալագյազի գավառներում, բայց ոչ երբեք լեռնային ու նախալեռնային շրջաններում: Սակայն, 1910-1912թթ., պայմանավորված նորմայից շոգ ամառային ամիսներով, հիվանդությունն ընդգրկեց ողջ նահանգի տարածքը ախտահարելով բնակչության ընդհանուր թվի 19%-ը: Ըստ պաշտոնական վիճակագրության նահանգի 906000 բնակիչներից ճահճային տենդով վարակվեց 172515-ը: «Կարելի էր առանց չափազանցութեան ասել,-գրում է բժիշկ Ա. Մելիքյանը,-որ 1912թ. յետո Հայաստանում չկայ մէկը, որ երբևիցէ հիւանդացած չլինի մալարիայով»[3]:

Այս համատեքստում մեր ուսումնասիրության առարկա Ալեքսանդրապոլի գավառին մալարիայի հասցրած վնասը կարելի է համարել չնչին: 187500 բնակիչ ունեցող գավառում սուր վարակիչ հիվանդությամբ ախտահարվեց 8887 մարդ կամ բնակչության ընդհանուր թվի միայն 4.7%-ը (1910թ. 4006 մարդ, 1911թ. 2595 մարդ, 1912 թ. 2286 մարդ): Համեմատության համար նշենք, որ նույն տարիներին Երևանի գավառում ճահճային տենդը տարածվեց բնակչության 34.2%-ի մոտ (142000 բնակիչ, որից 48592-ը ախտահարված):

XX դարասկզբին Ալեքսանդրապոլի գավառում մոլեգնած տարափոխիկ հիվանդությունների շարքում իր մահաբերությամբ հատկապես աչքի ընկավ խոլերան:

---

[1] **Ս.Մ**., Թօփառլի,// «Ախուրեան» օրաթերթ, Ալէքսանդրապօլ, 1910, 24 յունուարի, N 6, էջ 3:

[2] Տիֆի դեմ պայքարում 1910թ. փետրվարի 18-ին մահացավ քաղաքում մեծ հեղինակություն վայելող ազգությամբ վրացի բժիշկ Ս.Հ. Մեսխին (Մանրամասն տե՛ս **Շ.Ի.**, Բժիշկ Ս.Հ. Մէսխի,//«Ախուրեան» օրաթերթ, Ալէքսանդրապօլ, 1910, 18 փետրուարի, N 13, էջ 2):

[3] **Մելիքեան Ա.**, Մալարիան Հայաստանում,//«Մալարիա» գիտահասարակական հանդէս, Եր., 1920, N 1, յուլիս, էջ 25:

Սուր աղիքային ինֆեկցիոն այս հիվանդությունն առաջին անգամ հայտնվեց 1904թ. աշնանը: Բայազետում ռուսական փոխիոյպատոսի հավաստմամբ, խոլերան Երևանի նահանգ ներթափանցեց Օսմանյան կայսրության Ալաշկերտի կազայից: Վարակի առաջին նշանները երևան եկան հոկտեմբերի 7-ին, երբ, ըստ բժիշկ Խունդաձեի, Էջմիածնի գավառի Մարկարա գյուղում գրանցվեց մահվան 2 դեպք խոլերային շատ նման հիվանդությունից: Չորս օր անց խոլերայով հիվանդներ հայտնաբերվեցին նաև Նախիջևանի գավառում, երկաթուղու շինարարների հիմնականում թուրքահպատակ հույների ու հայերի մեջ: Չնայած նահանգային իշխանությունների գործադրած միջոցառումներին հաջորդ երկու շաբաթների ընթացքում հիվանդությունն ընդունեց ահռելի մասշտաբներ ընդգրկելով Երևանի նահանգի 196 բնակավայր: Ըստ պաշտոնական տեղեկատվության 1904թ. հոկտեմբերի 25-ից մինչև 1905թ. հունվարի 3-ն ընկած ժամանակահատվածում նահանգի տարածքում երկու սեռերից խոլերայով հիվանդացավ 8295 մարդ, որից 3679-ը մահացավ[1]:

Նույն տեղեկատվության համաձայն համաճարակը մարդկային և նյութական ամենամեծ վնասը հասցրեց Երևանի գավառին՝ 2099 հիվանդ ու 1735 մահացած, իսկ ամենաքիչը տուժեց Ալեքսանդրապոլի գավառը: Այստեղ հիվանդության առաջին դեպքը գրանցվեց 1904թ. նոյեմբերի 15-ին քաղաքի երկաթուղային կայարանում: Հաջորդ մեկ ամսվա ընթացքում գրանցվեց խոլերայով հիվանդանալու ևս վեց դեպք 3 մարդ Ալեքսանդրապոլում, 1-ը Մեծ Ղարաքիլիսայում, և 2-ը Վոսկրեսենովկայում: Ախտահարվածներից 5-ը 1904թ. դեկտեմբերի 20-ի դրությամբ մահացան: Անցկացված քննության արդյունքում պարզվեց, որ հիվանդացածներից 5-ը եղել են ճանապարհորդներ, այդ թվում 4-ի մոտ հիվանդության ախտանիշները հայտնաբերվել էին Ալեքսանդրապոլի երկաթուղային կայարանում[2]:

1905թ. գարնանը հիվանդությունն անցավ Թիֆլիսի նահանգ, այնուհետև մոլեգնեց Անդրկովկասի հյուսիսային շրջաններում և նորից հայտնվեց միայն երեք տարի անց: Խոլերայի առաջին նշանները երևան եկան 1908թ. հոկտեմբերի 15-ին:Թե նահանգի տարածքում համաճարակն ինչ մասշտաբներ ընդունեց, արխիվային փաստաթղթերի բացակայության պատճառով ստույգ նշելն անհնար է: Հայտնի է միայն, որ տարածման առաջին շաբաթվա ընթացքում, այսինքն հոկ-

[1] Подробное описание эпидемии холеры в Эриванской губернии за 1904 год, Памятная книжка Эриванской губернии на 1906 год, Под ред. К.А. Волчанина, Эривань, «Тип. Ованисянца и К°», 1905, с. 93-98.

[2] Подробное описание эпидемии холеры в Эриванской губернии за 1904 год, Памятная книжка Эриванской губернии на 1906 год, с. 101-108.

տեմբերի 15-22-ն ընկած ժամանակահատվածում Երևան քաղաքում, համանուն գավառի Թազաքենդ և Ալեքսանդրապոլի գավառի Մեծ Քեթի գյուղերում խոլերայով հիվանդացավ 18 մարդ, որից 11-ը մահացավ: Հաջորդ երկու շաբաթների ընթացքում նահանգի տարածքում հայտնաբերվեց խոլերայի ևս 2 օջախ Ալեքսանդրապոլի գավառի Յաղուբլի գյուղում և Էջմիածնի գավառում:

Ընդամենը երկու տարի անց Անդրկովկասը կրկին հայտնվեց խոլերայի ճիրաններում: Հիվանդությունն այս անգամ սկսվեց Բաքվից, անցավ Թիֆլիս, ապա երկաթուղու երկարությամբ իջավ Ղարաքիլիսա, Ալեքսանդրապոլ ու Կարս:

Քաղաքի սանիտարահիգիենիկ վիճակը բարելավելու և խոլերայի հասցնելիք հարվածը հնարավորինս մեղմելու նպատակով Ալեքսանդրապոլի քաղաքային վարչությունը ստեղծեց սանիտար-կատարողական մասնաժողով, իսկ քաղաքը բաժանեց սանիտարական 12 շրջանների: Վարչության հաջորդ որոշումներով քաղաքային հիվանդանոցն ու բժշկի բնակարանն ապահովվեցին հեռախոսակապով[1],աղբյուրներից վերցված խմելու ջրի նմուշներն ուղարկվեցին Թիֆլիս փորձաքննության, իսկ թեյարաններն ու սրճարաններն անորոշ ժամանակով փակվեցին[2]: Քաղաքային վարչությունն իր վրա վերցրեց նաև ունեզուրկ քաղաքացիներին դեղորայքով ապահովելու և խոլերայից մահացածներին թաղելու ծախսերը[3]:

Չնայած ձեռնարկված նախազգուշական միջոցառումներին վարակի տարածումից խուսափել այնուամենայնիվ չհաջողվեց: Խոլերայի հայտնվելու առաջին 5 օրերի ընթացքում Ալեքսանդրապոլում գրանցվեց մահվան 7 դեպք[4]: Հաջորդ երկու ամիսների ընթացքում (մինչև օգոստոսի 31-ը), ըստ ոստիկանական տեղեկագրերի, ախտահարվածների թիվը գավառակենտրոնում հասավ 178-ի, իսկ մահացածներինը 82-ի[5]: «Ժայռ» պարբերականի հավաստմամբ, նույն ժամանակահատվածում նահանգային կենտրոն Երևանում խոլերայով ախտահարվեց 298 մարդ, որից 198-ը մահացավ[6]:

---

[1] **Լրատու**, Ալէքսանդրապոլ,//«Ախուրեան» օրաթերթ, Ալէքսանդրապոլ, 1910, 30 յուլիսի, N 51, էջ 4:
[2] Ալէքսանդրապոլ,//«Ժայռ», Ալէքսանդրապոլ, 1910, N 58, 29 յուլիսի, էջ 3:
[3] Խոլերան Ալէքսանդրապոլում,//«Ժայռ», Ալէքսանդրապոլ, 1910, N 57, 24 յուլիսի, էջ 1:
[4] Խոլերան Ալէքսանդրապոլում,//«Ժայռ», Ալէքսանդրապոլ, 1910, N 57, 24 յուլիսի, էջ 3:
[5] **Տեղեկագիր**, «Ժայռ», Ալէքսանդրապոլ, 1910, N 60, 6 օգոստոսի, էջ 4: Խոլերայով հիւանդացածների եւ մեռածների մասին,//«Ախուրեան» օրաթերթ, Ալէքսանդրապոլ, 1910, 12 օգոստոսի, N 54, էջ 3: Խոլերայով հիւանդացածների եւ մեռածների մասին,//«Ախուրեան» օրաթերթ, Ալէքսանդրապոլ, 1910, 20 օգոստոսի, N 56, էջ 3: Խոլերայով հիւանդացածների եւ մեռածների մասին,// «Ախուրեան» օրաթերթ, Ալէքսանդրապոլ, 1910, 24 օգոստոսի, N 57, էջ 3-4: Խոլերայով հիւանդացածների եւ մեռածների մասին,//«Ախուրեան» օրաթերթ, Ալէքսանդրապոլ, 1910, 29 օգոստոսի, N 58, էջ 2: Խոլերայով հիւանդացածների եւ մեռածների մասին,//«Ախուրեան» օրաթերթ, Ալէքսանդրապոլ, 1910, 3 սեպտեմբերի, N 59, էջ 2:
[6] **Պապիկեան Ս.,** Խոլերան Երեւանում, // «Ժայռ», Ալէքսանդրապոլ, 1910, N 70, 12 սեպտեմբերի, էջ 4:

Գյուղերում համաճարակի առաջին զոհերը հայտնվեցին հուլիսի 15-ին Արթիկում, Բաշգյուղում և Խաչաքիլիսայում[1]: Թե հաջորդ շաբաթների ընթացքում խոլերայից մահվան ելքով քանի դեպք գրանցվեց, մեզ պարզել չհաջողվեց: Ըստ «Ախուրեան» օրաթերթի հիվանդությունը հատկապես մեծ տարածում ստացավ Հոռոմում, Թոմարտաշում, Մեջիտլիում, Ղութնիղշլաղում, Փոքր Պարնիում, Իմրխանում, Թալիբօղլիում, Ճլովխանում և Փոքր Ղարաքիլիսայում, որովհետև ամառային շոգերի պատճառով հոսող գետակներն ու ջրհորներն այս գյուղերում ցամաքել էին, և իբրև ջրի աղբյուր մնացել էին նեխված լճակները[2]: Համաճարակը նահանջեց միայն սեպտեմբերի սկզբներին, երբ մի քանի շաբաթ շարունակվող անտանելի շոգերը հանկարծակի փոխվեցին վաղաժամ ցրտերով:

Առաջին աշխարհամարտի նախօրեին Ալեքսանդրապոլի գավառի հատկապես գյուղական ավանդապահ ազգաբնակչության համար ուղղակի չարիք դարձան վեներական հիվանդությունները: Դրանք ոչ միայն վտանգեցին սերունդների գոյությունը, այլև հանգեցրին լուրջ բարոյահոգեբանական ճգնաժամի: Ժամանակակիցների հավաստմամբ սեռավարակների տարածման հիմնական պատճառը պանդխտությունն էր: Դարասկզբին Շիրակի գյուղերում մեծ տարածում էր ստացել աշխատանքային միգրացիան դեպի ԱՄՆ:Արտագնա աշխատանքի մեկնում էին հիմնականում երիտասարդ տղամարդիկ: Օտարության մեջ փող վաստակելուց հետո սրանց զգալի մասը վերադառնում էր իր հետ բերելով հիվանդությունների մի մեծ փունջ: Ըստ «Գաւառի ձայն»-ին թղթակցած Ջ. Մեջլումյանի «ցաւը այնքան մեծ չէր լինի, եթէ այդ ախտերը մնային միայն գաղթականի մէջ, սակայն այդպէս չէր»[3]: Սեռավարակները տարածվում էին հետևյալ կերպ. մինչ պատանու վերադառնալը նրա ծնողները գյուղում ընտրում էին հարսնացու: Պանդխտությունից վերադարձած երիտասարդը «առանց բժշկական քննութեան», ամուսնանում էր սեռական ճանապարհով հիվանդությունը փոխանցելով կնոջը, իսկ սրանից էլ այն անցնում էր երեխաներին:

Ահավասիկ տարափոխիկ այն հիվանդությունները, որոնք 1903-1910թթ. ընկած ժամանակահատվածում հաջորդաբար ներթափանցեցին Ալեքսանդրապոլի գավառ: «Ախուրեան», «Գաւառի ձայն» և «Ժայռ» պարբերականները հետևեցին դրանց հայտնվելու հաճախականությանը, լուսաբանեցին տարածման պատճառները, հնարավորության սահմաններում ներկայացրին գավառին հաս-

---

[1] Ալէքսանդրապոլ,//«Ժայռ», Ալէքսանդրապոլ, 1910, N 58, 29 յուլիսի, էջ 3:

[2] **Տէր-Արիստակէսեան Բ.**, Գաւառի տեղեկատու,//«Ախուրեան» օրաթերթ, Ալէքսանդրապոլ, 1910, 12 օգոստոսի, N 54, էջ 3:

[3] **Մէջլումեան Ջ.,** Փոքր Պարնի գիւղ,//«Գաւառի ձայն» լրագիր, Ալէքսանդրապոլ, 1914, N 18, 16 փետրուարի, էջ 3:

ցրված նյութական ու մարդկային վնասների մասշտաբները, ինչպես նաև մատնանշեցին առողջապահության ոլորտում առկա խնդիրներն ու առաջարկեցին դրանց լուծման ճանապարհներ:

Այսպես, ըստ «Ժայռ» պարբերականի, ծաղիկը, կարմրուկը, քոթեշն ու տիֆը գավառում մեծ տարածում ստացան, որովհետև գյուղական բնակավայրերը զուրկ էին բժշկական հաստատություններից: Ավելի քան 180.000 բնակիչ ունեցող գավառում XXդ. սկզբին կար մեկ գյուղական բժիշկ Մեծ Ղարաքիլիսայում և մեկ բուժակ Հոռոմում: Արհեստավարժ բժիշկների սակավությունը ճանապարհ էր հարթում գյուղական հեքիմների, դալլաքների ու տարբեր արկածախնդիրների համար[1]: Իրավիճակը շտկելու նպատակով 1910 թ. հունվարի 1-ին Քյավթառլիում բացվեց 6 մահճակալով հիվանդանոց[2]: Սակայն, դա հարցին լուծում չտվեց, որովհետև գյուղացիությունը բժշկին դիմելու և դրամ ծախսելու փոխարեն «հաւատացած էր, որ հիւանդի... առողջանալը կախում ունի ճակատագրից, իսկ բժշկի... հոգ տանելը աւելորդ բան է»[3]:

Վարակիչ հիվանդությունների տարածման ևս երկու պատճառ մատնանշում է «Ախուրեան»-ը: Դրանք են գյուղական ազգաբնակչության ժլատությունն ու տգիտությունը: «Երբ նորանցից մինը մեռնում է-գրում է Ա.Միքայելյանցը,-ազգականները մեռածին տալիս են վերջին համբոյրը, իսկ հետոյ համբոյր են տալիս տան առողջ երեխաներին, ապա մեռածի հագուստները բաժանում նրա ազգականներին»[4]:

Ի դեպ, տգիտություն կոչվածը, ըստ օրաթերթի, հաճախ հասնում էր զավեշտի: Այսպես, Մեծ Քյափանակ գյուղի բնակիչներ Խաչո և Սահակ Մինասյան եղբայրները 1907թ. մարտին հիվանդանում են տիֆով: Այն բանից հետո, երբ Խաչոն մահանում է, տնեցիները վերջապես որոշում են դիմել հեքիմի օգնությանը: Վերջինս խորհուրդ է տալիս հիվանդին «նավթի սպիրտ» խմեցնել: Սահակի հարազատները դեղատանը «նավթի սպիրտի» փոխարեն գնում են «անուշադրի սպիրտ» և օգտագործում ողջ ընտանիքով: Հաշված րոպեների ընթացքում «փրկիչ» դեղամիջոցն ընդունած հիվանդը, նրա ընտանիքի անդամներն ու տեսակցության եկած ազգականները մահանում են[5]:

Մեկ այլ զավեշտալի պատմության, որ տեղի էր ունեցել Փոքր Պարնի գյու-

---

[1] **Մոծակ**, Մանուկների կոտորած,//«Ժայռ», Ալէքսանդրապոլ, 1907, N 6, 27 դեկտեմբերի, էջ 2:

[2] **Լրատու**,Ալէքսանդրապոլ,//«Ախուրեան» օրաթերթ,Ալէքսանդրապոլ,1910, 4 փետրուարի, N 9, էջ 4:

[3] **Գաւառի տեղեկատու**.Նորաշէն,//«Ախուրեան» օրաթերթ, Ալէքսանդրապոլ, 1910, 25 ապրիլի, N 26, էջ 3:

[4] **Միքայէլեանց Ա.**, Նամակ Բայինդուրից,//«Ախուրեան» օրաթերթ, Ալեքսանդրապոլ,1909,N 69, 27 սեպտեմբերի, էջ 3:

[5] **Պուրակ**, Նամակ Մեծ Քեափանակից,//«Ախուրեան» օրաթերթ, Ալեքսանդրապոլ, 1907, N 26, 4 մայիսի, էջ 3:

ղում, «Ժայռ» պարբերականի էջերում անդրադարձել է Գ. Մաջլումյանը: «Տիֆը մեր գիւղերում շատ զոհեր տարաւ,-գրում է հոդվածագիրը,-մեռանք սրբերին մատաղ խոստանալով, խունկ ու մոմ վառելով, բայց ոչ մէկը չօգնեց»: Եվ այդ ժամ հուսահատ պարնեցիները գյուղի քահանայի գլխավորությամբ որոշում են հիվանդությանը հաղթել «խորամանկությամբ»: Համագյուղացիներից մեկին բարձրացնում են գյուղի եկեղեցու կտուրը, իսկ մյուսին ուղարկում գերեզմանատուն: Առաջինը կտուրից պիտի հարցներ «այ մարդ, տեղ կայ գերեզմաններում», իսկ երկրորդը պիտի պատասխաներ «տեղ չկայ»: Պարնեցիների տրամաբանությամբ տիֆն այսքանից հետո պիտի թողներ գյուղը: «Բայց արի ու տես, որ այդ աւանակը թարս պատասխան տւեց ու բոռաց «Արէք, արէք, սաղ գիւղն էլ որ գաք, տեղ կայ»: Եվ հիւանդութիւնը մնաց գիւղում»-ամփոփում է Գ. Մաջլումյանը[1]:

Եթե ծաղիկը, քոթեշը, մալարիան, տիֆը կամ սեռավարակները տարածվում էին կլիմայական անբարենպաստ պայմանների, բժշկական հիմնարկությունների սակավության, գյուղական վայ-հեքիմների կամ խավարամտության պատճառով, ապա խոլերայի տարածման հիմնական պատճառն ազգաբնակչության առասպելական փնթիությունն էր:

Անդրկովկասի սանիտարահիգիենիկ վիճակը բարելավելու նպատակով դեռևս XIX դարավերջին կառավարության հատուկ հանձնարարականով երկրամասի բոլոր քաղաքներն ընդունեցին «Սանիտարական պարտադիր կանոններ» խորագրով հատուկ կանոնադրություններ, որոնց կատարումը պարտադիր էր քաղաքացիների համար: Ալեքսանդրապոլի քաղաքային վարչությունը 36 կետերից բաղկացած նմանատիպ կանոնադրություն ընդունեց 1894թ.[2]: Սակայն հաջորդ երկու տասնամյակների ընթացքում քաղաքի առողջապահական վիճակն ավելի վատթարացավ: Հասարակական արտաքնոցներից զուրկ քաղաքի փողոցները վերածվեցին մեկ ընդհանուր արտաքնոցի, գետակները ստացան «մուռդառ չայ» անունը, որովհետև աղբանոցներ էին հիշեցնում, իսկ մայթերն ու բակերը ծածկվեցին գոմաղբի հաստ շերտով: «Անմաքրութիւնը դարձել է կենցաղավարութեան եղանակ,-գրել է Գեղամ Արմենը,-այսօր վախ կայ, աչալուրջ լինենք, վաղը վերացաւ վախը նշանակում է պիտի դադարենք զգուշաւոր լինելուց, այսօր համաճարակ հիւանդութիւն կայ մաքրենք քաղաքը, իսկ վաղը վերանալու լինի համաճարակը ձեռքերնիս ծալած նստենք»[3]:

---

[1] **Մաջլումեան Գ.**, Փոքր Պարնի գիւղ. Թալիսման խօլերայի դէմ,//«Ժայռ», Ալէքսանդրապօլ,1910, N 78, 14 հոկտեմբերի, էջ 3:

[2] VOX, Մեր քաղաքի առողջապահական դրութիւնը,//«Գաւառի ձայն» լրագիր, Ալէքսանդրապօլ, 1914, N 32, 6 ապրիլի, էջ 2:

[3] **Գեղամ Արմէն**, Անճարի զգուշութիւն,//«Ախուրեան» օրաթերթ, Ալէքսանդրապօլ, 1910, 10 սեպտեմբերի, N 61, էջ 1:

Խոլերայի վերջին համաճարակի ժամանակ փնթիությանը գումարվեց նաև տեղացիների անասելի անփութությունը: Ականատեսների հավաստմամբ սովորական կառքով դիակը տեղափոխում էին գերեզմանատուն, իսկ հետո առանց այն ախտահանելու սպասարկում էին առողջներին:Կամ թե խոլերայով հիվանդների համար բարաք էին կառուցել, բայց դիակները պահելու համար սենյակ չէին նախատեսել, այնպես որ եթե բարաքում օրվա երկրորդ կեսին մեկը մահանար, ապա դիակը մինչև հաջորդ առավոտ մնալու էր առողջների կողքին[1]:

1914թ. օգոստոսին սանձազերծվեց Առաջին աշխարհամարտը: Ռազմական գործողությունները Կովկասյան ճակատում սկսվեցին 1914թ. նոյեմբերի սկզբներին: Գրեթե միաժամանակ հայտնվեցին նաև առաջին գաղթականները: Նրանց ընդունման ու տարրական կենսապայմանների ապահովման դժվարին գործն իրենց ուսերին վերցրին Անդրկովկասի հայաշատ նահանգներում ու գավառներում գործող հասարակական կազմակերպությունները: Գաղթականների առաջին խմբերն Ալեքսանդրապոլի գավառ հասան 1914թ. նոյեմբերի կեսերին, իսկ արդեն 1915թ. հունվարի վերջին նրանց թիվը հասավ 6909-ի[2]: Չնայած գործադրված ջանքերին պատերազմը, գաղթականության օրըստօրե աճող թիվը, սովն ու ցածր կենսամակարդակը էական նախապայմաններ հանդիսացան գավառում համաճարակային հիվանդությունների տարածման համար: Մամուլում հայտնըված առաջին հաղորդումները տարափոխիկ հիվանդություններից տիֆի մասին էին: Ըստ «Մշակ»-ին թղթակցած Գևորգ ք. Մկրտումյանի վարակն Ալեքսանդրապոլ էին բերել Երևանից եկած փախստականները 1915թ. ապրիլի սկզբներին: Սակայն հիվանդությունն առանձնապես մեծ մասշտաբներ չէր ընդունել: Ապրիլի 24-ի դրությամբ հիվանդների ճնշող մեծամասնությունն արդեն ապաքինվել էր, մահացել էր 4 մարդ[3]:

Ալեքսանդրապոլի գաղթականների շրջանում տիֆը նորից հայտնվել էր 1915թ. սեպտեմբերի երրորդ տասնօրյակում, սակայն այս անգամ ևս զանգվածային բնույթ չէր կրել: Ըստ Ատրպետի սեպտեմբերի 19-ից 22-ն ընկած ժամանակահատվածում «Պօղոսեան» հանրակացարանից «Քաղաքների միության» հի-

---

[1] Խոլերան սաստկանում է Ալէքսանդրապօլում,//«Ժայռ», Ալէքսանդրապօլ, 1910, N 61, 10 օգոստոսի, էջ 1:

[2] Однодневная перепись беженцев из Турции, Персии и из мест, пограничных с Турцией (армян, айсоров, греков и пр.)1914-1915гг, Перепись произведена 30-го января 1915г, Эриваньская. стат. Комиссия, Эривань, «Тип. «Луйс», 1915, стр. 26-31: Ալեքսանդրապոլի գավառը վիճակագրական նյութերում (XIXդ.-XXդ. սկիզբ), Փաստաթղթերի և նյութերի ժողովածու աշխատասիրությամբ **Ա. Հայրապետյանի,** Եր., «Գիտություն» հրատ., 2011, էջ 232-235:

[3] **Մկրտումեան Գէորգ ք**., Փախստականների մօտ, //«Մշակ» օրաթերթ, Թիֆլիս, 1915, N 100, 13 մայիսի, էջ 3:

վանդանոց էր տեղափոխվել 3 օլթեցի[1]:

Առավել զանգվածային ու կորստաբեր էր տիֆի երրորդ բռնկումը: «Գաւառի ձայն» օրաթերթի հաղորդած տվյալների համաձայն համաճարակը սկսվել էր 1915թ. դեկտեմբերին, Փոքր Ղարաքիլիսա գյուղում, ապա անցել Արթիկ, Իլխիաբի և տարածվել գավառի մյուս բնակավայրերում[2]: Գավառում բժշկական շրջայց կատարած Ա. Տեր-Հովհաննիսյանի հավաստմամբ համաճարակի տարածման հիմնական պատճառը կենցաղային անբարենպաստ պայմաններն էին, որոնցում հայտնվել էին գաղթականները: «Եթե բծաւոր տիֆով հիւանդներին ուղարկում ես հիւանդանոց, հարկ եղած դէպքում ոստիկանութեան միջոցով,-գրում է բժիշկը «Հորիզոն»-ի էջերում,-ապա ինչպէս ախտահարել այն ահագին օդաները իրենց ծակ ու ծուկերով, ուր փախստականներից զատ կան ձիեր, եզներ, կովեր, ընտանի աղաւնիներ, շատ անգամ և հաւեր»[3]:

Ընդհանուր առմամբ 1915թ. դեկտեմբերին Կարսի մարզում ու Ալեքսանդրապոլի գավառում մոլեգնած բծավոր ու աղիքային տիֆից օրական 3-5 մարդ էր մահացել, ինչն ըստ «Համբաւաբեր»-ի թղթակցի բավականին համեստ թիվ էր, որովհետև Էջմիածնի, Իգդիրի և Երևանի գավառներում նույն հիվանդություններին օրական զոհ էր գնում 30-300 գաղթական[4]:

Տիֆի բռնկման վերջին դեպքը մամուլն արձանագրել էր 1916թ. աշնանը: «Համբաւաբեր»-ի թղթակից Տ. Շահբազյանի հաշվումներով հոկտեմբերի 20-ից Աղքիլիսա և Սարիար գյուղերում մոլեգնած համաճարակին օրական զոհ էր գնում մինչև 5 մարդ[5]:

1915թ. ամռան վերջերին մամուլում տեղեկություններ հայտնվեցին գավառում աղիքային սուր վարակիչ հիվանդությունների, հատկապես դիզինտերիայի տարածման մասին: «Մշակ»-ին թղթակցած Սարգիս Բոյրազյանի հաշվումներով օգոստոսի 1-8-ն ընկած ժամանակահատվածում միայն Նալբանդ գյուղում հիվանդությանը զոհ էր գնացել 20 մարդ[6]: Եվս 20-ը, ըստ Ատրպետի, մահացել էր սեպտեմբերի 3-ին քաղաքի հիվանդանոցում[7]: Իսկ ընդհանուր առմամբ 1915թ.

---

[1] **Ատրպետ**, Փախստականների վիճակը,//«Մշակ» օրաթերթ, Թիֆլիս,1915, N 212,27 սեպտեմբերի, էջ 3:
[2] **Սեւակ Ց.**, Խլի-Ղարաքիլիսէ,//«Գաւառի ձայն» լրագիր, Ալէքսանդրապոլ, 1916, N 1,17 յունուարի, էջ 4:
[3] **Տեր-Յովհաննիսեան Ա.**, Ալէքսանդրապոլ,//«Հորիզոն» օրաթերթ, Թիֆլիս, 1916, N 5, 10 յունուարի, էջ 5:
[4] **Շարաֆեանց Ա.**, Համառօտ տեսութիւն գաղթականութեան, ծագման, արդի կացութեան, Կ.Հ.Բ. Ը.-թեան եւ նրան կից Հայկ. Կենտ. Կոմիտէի գործունեութեան,//«Համբաւաբեր» շաբաթաթերթ, Թիֆլիս, 1916, N 4, 17 յունուարի, էջ 102:
[5] **Շահբազեան Տ.**, Աղքիլիսա և Սարիար,//«Համբաւաբեր» շաբաթաթերթ, Թիֆլիս, 1916, N 47, 20 նոյեմբերի, էջ 1487:
[6] **Ականատես**, Փախստականների վիճակը,//«Մշակ» օրաթերթ, Թիֆլիս,1915, N 177,13 օգոստոսի, էջ 2:
[7] **Ատրպետ**, Փախստականների վիճակը,//«Մշակ» օրաթերթ, Թիֆլիս, 1915, N 198, 8 սեպտեմբերի, էջ 2: 2:

օգոստոսի 27-ից մինչև նոյեմբերի 1-ը «Քաղաքների միության» Ալեքսանդրապոլի հիվանդանոցներն ընդունել էին աղիքային հիվանդություններով ախտահարված 518 գաղթականների: Հաջորդ երկու ամիսների ընթացքում սրանցից 397-ը ապաքինվել էին, իսկ 121-ը մահացել (90-ը սեպտեմբերին, 31-ը՝ հոկտեմբերին)[1]:

Գաղթականների շրջանում տարածված տարափոխիկ հիվանդություններից մահացության բարձր ցուցանիշներով առանձնացավ նաև ծաղիկը: «Համբաւաբեր»-ի պնդմամբ 1915թ. դեկտեմբերի կեսերին գավառի մի քանի գյուղերում հայտնված հիվանդությունը, չնայած իր տեղային (լոկալ) բնույթին, 1-10 տարեկան երեխաների շրջանում օրական 7-8 կյանք խլեց[2]: Օրինակ, ըստ «Հորիզոն» օրաթերթի միայն Սոնգյուռլի գյուղի եկեղեցում 1916թ. հունվարի 5-ի դրությամբ երեխայի 7 դի կար[3]: Նույն պարբերականի այլ հաղորդագրությունների համաձայն 1915թ. դեկտեմբերից մինչև 1916թ. հունվարի առաջին շաբաթն ընկած ժամանակահատվածում 35 երեխա ծաղկի համաճարակին զոհ էր դարձել Ջաջուռում[4], 3-ն էլ Ձիթհանքովում[5]:

Տարափոխիկ հիվանդությունների դեմ պայքարելու համար Ալեքսանդրապոլի գավառում առաջին հիվանդանոցն ու դեղատունը, ըստ «Հորիզոն» օրաթերթի, բացվեցին 1914թ. դեկտեմբերի 27-ին «Եղբայրական օգնության» տեղի կոմիտեի, «Երիտասարդական Միութեան» և «Ալագեազի Զաւակունք» ընկերությունների համատեղ ջանքերով[6]: Թիֆլիսի «Հայկական կենտրոնական Կոմիտէ»-ի կողմից քաղաքլում բացված երկրորդ հիվանդանոցի մասին ազդարարեց «Գաւառի ձայն»-ը[7]: «Քաղաքների Միության» կոմիտեի կողմից 1915 թ. հոկտեմբերին Մեծ Ղարաքիլիսայում հիմնված հիվանդանոցի մասին էլ հայտնեց «Մշակ»-ը[8]:

Սակայն համաճարակային հիվանդություններն այս փոքրաթիվ ուժերով արմատախիլ անելն անհնար էր, և 1915թ. հունվարին արևելահայ մամուլն ահազանգեց գոյություն ունեցող հիվանդանոցային ցանցն անհապաղ ընդլայնելու անհրաժեշտության մասին: Օրինակ, «Գաւառի ձայն»-ն այդ տարվա իր անդրա-

---

[1] **Ատրպետ**, Փախստականների հիւանդանոց,//«Մշակ» օրաթերթ, Թիֆլիս, 1915, N 249, 10 նոյեմբերի, էջ 3:

[2] Գաւառ, «Համբաւաբեր» շաբաթաթերթ, Թիֆլիս, 1916, N 3, 10 յունուարի, էջ 77:

[3] **Մեպուռ**, Հետեւանքները և կարծիքների փոխանակութիւնը,//«Հորիզոն» օրաթերթ, Թիֆլիս,1916, N 3, 6յունուարի,էջ2:

[4] Գաւառական կեանք,// «Հորիզոն» օրաթերթ, Թիֆլիս, 1916, N 4, 9 յունուարի, էջ 3:

[5] **Տեր-Յովհաննիսեան** Ա., Ալէքսանդրապոլ,//«Հորիզոն» օրաթերթ, Թիֆլիս, 1916, N 5, 10 յունուարի, էջ 4: 4:

[6] Ալէքսանդրապոլի «Եղբայրական օգնութեան» կոմիտէ,//«Հորիզոն» օրաթերթ, Թիֆլիս, 1916, N 8, 14 14 յունուարի, էջ 5:

[7] Նոր հիւանդանոց,//«Գաւառի ձայն» լրագիր, Ալէքսանդրապօլ, 1915, N 4, 18 յունուարի, էջ 2:

[8] Իշխան Ա.Մ. Արղութեան-Երկայնաբազուկի զեկուցումը փախստականների մասին,//«Մշակ» օրաթերթ, Թիֆլիս, 1915, N 271, 8 դեկտեմբերի, էջ 3:

նիկ համարում գրում էր, թե գավառում «տարածված են տիֆ, սկարլատինա, դիֆտերիդ..., և գաղթականները ներկայումս ունին բացառապես բժշկի, ֆելտշերի (բուժակ) և դեղօրայքի կարիք»[1]:Ցավոք, առաջին քայլերից հետո արևելահայ մամուլը մեզ համար անհայտ պատճառներով այլևս անհրաժեշտ հետևողականություն չցուցաբերեց առողջապահության ոլորտի հիմնախնդիրների նկատմամբ: Մինչդեռ 1915թ. ամռանն այս բնագավառում լրջագույն տեղաշարժեր կատարվեցին. օգոստոսի 27-ին «Եղբայրական օգնության» կոմիտեի հիվանդանոցներն անցան «Քաղաքների Միության» ենթակայության տակ: Ողջ բժշկասանիտարական գործը իր հսկողության տակ վերցրած կոմիտեն մինչև տարեվերջ միայն Ալեքսանդրապոլի գավառում 5 հիվանդանոց հիմնեց, այդ թվում 200 մահճակալով մեկը գավառակենտրոնում, ինչի շնորհիվ գաղթականների շրջանում համաճարակային բռնկումները նվազեցին, իսկ մահացության դեպքերը դարձան հազվադեպ[2]:

Ընդհանուր առմամբ հարկ է նշել, որ Ալեքսանդրապոլի գավառում, շնորհիվ հասարարական կազմակերպությունների և հատկապես «Քաղաքների միության» կոմիտեի անձնուրաց աշխատանքի, մահացության մակարդակն ընդհանուրի համեմատ խիստ ցածր էր: Համաձայն Ալեքսանդրապոլի փոխանորդ Արտակ վարդապետի 1916թ. հունիսի 16-ին Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Ե-ին ներկայացրած տեղեկագրի ցրտից, սովից ու հիվանդություններից 1915թ. ընթացքում գավառում մահացել էր ընդամենը 1164 գաղթական (331-ը Ալեքսանդրապոլում, 833-ը գավառի գյուղերում)[3]: Համեմատության համար նշենք, որ Բ.Իշ-Բ.Իշխանյանի հաշվումներով Էջմիածնում միայն 1915թ. օգոստոսի վերջին տասնօրյակում սովի և համաճարակի զոհ էր դարձել 2135 մարդ, օրական միջին թվով 236 մարդ[4]:

---

[1] **Մոճոռեան Պ.**, Համառօտ տեղեկագիր Աղեքսանդրապօլի ազգային կենտրոնական յանձնաժողովի գաղթականական սեկցիայի,//«Գաւառի ձայն» լրագիր, Ալէքսանդրապօլ, 1915, N 1, 11 յունուարի, էջ 3:

[2] Ալեքսանդրապոլ քաղաքի և համանուն գավառի տարածքում «Քաղաքների միության» կոմիտեի ծավալած հիվանդախնամ գործունեության մասին մանրամասն տե ս Положение беженцев в Александропольском районе (Доклад уполномоч. бакин. Ком-та помощи беженцам без различия национальности А.Г. Иоаннисяна, сделанный им на заседании Комитета 3 окт. 1915 г.), Баку, Тип. Первого Типогр. Т-ва, 1915; Краткие сведения о волне беженцев из Турецкой Армении в июле 1915г. и о мерах, принятых Кавказским Комитетом Союза городов для борьбы с эпидемией среди них, Тифлис, типография И. А. Мартиросянца, 1915; Краткие сведения о положении беженцев на Кавказе и оказанной им Союзом городов помощи за время с 20-го сентября по 1-ое ноября 1915г., вып. 2, Тифлис, Типография «Либерман и К°», 1915.

[3] ՀԱԱ, ֆոնդ 57, ցուցակ 2, գործ 1306, թ. 3-7:

[4] **Իշխանեան Բ.**, Աղէտի եւ տառապանքի աշխարհից,//«Մշակ» օրաթերթ, Թիֆլիս, 1915, N 203, 17 սեպտեմբերի, էջ 2: Ի դեպ, 1915թ. օգոստոսի վերջին տասնօրյակում Էջմիածնում մահացածների թիվը հաշվելիս Ա-Դոն նշում է 2613 մարդ (Տե՛ս Ա-Դօ, Մեծ դեպքերը Վասպուրականում

***Եզրահանգում.*** Ամփոփելով XXդ. սկզբին Ալեքսանդրապոլի գավառում առկա առողջապահական խնդիրների համառոտ քննությունը նշենք հետևյալը. 1903-1916թթ. ընկած ժամանակահատվածում գավառը թատերաբեմ դարձավ միմյանց հաջորդող տարափոխիկ հիվանդությունների համար: Դրանց պատմությունը մենք պայմանականորեն բաժանեցինք երկու շրջափուլերի: Առաջին փուլում 1903-1910թթ., մեր կողմից արձանագրվեցին ծաղկի, քոթեշի, մալարիայի, տիֆի, խոլերայի և սեռավարակային հիվանդությունների բռնկման դեպքեր: Ժամանակի պարբերական մամուլը լուսաբանեց դրանց տարածման պատճառները, հնարավորինս ներկայացրեց հասցված վնասների մասշտաբները, իսկ առողջապահության ոլորտի հիմնական խնդիրը համարեց հիվանդանոցների ծայրահեղ սակավությունը: «Ախուրեան», «Գաւառի ձայն» և «Ժայռ» պարբերականների հավաստմամբ բժիշկների բացակայությունը ճանապարհ հարթեց գյուղական հեքիմների, դալլաքների ու այլ արկածախնդիրների համար, իսկ տեղական ազգաբնակչության առասպելական փնթիությունն ու տգիտությունը պատճառ դարձան, որպեսզի գավառ ներթափանցած յուրաքանչյուր հիվանդություն անմիջապես մեծ տարածում ստանա պատճառելով մարդկային զգալի կորուստներ:

Ինչ վերաբերում է ուսումնասիրության այս փուլում գավառի ժողովրդագրական պատկերի վրա տարափոխիկ հիվանդությունների թողած ազդեցությանը, ապա նշենք, որ աղբյուրների միակողմանիության, իսկ ավելի հաճախ բացակայության պայմաններում այդ հարցին պատասխանելը գրեթե անհնար է: Ձեռքի տակ եղած սակավաթիվ վիճակագրական տեղեկությունները հիմնականում վերաբերում են Ալեքսանդրապոլ քաղաքին: Անցկացվել է արդյոք հիվանդների ու զոհերի վիճակագրություն գավառի' հիվանդանոցներից զուրկ գյուղերում հայտնի չէ: Ստորև ներկայացված վիճակագրական տեղեկություններն այնուամենայնիվ հիմք են տալիս պնդելու, որ տարափոխիկ հիվանդություններն այս փուլում գավառի ժողովրդագրական պատկերի վրա էական ազդեցություն չեն թողել:

**Վիճակագրական տեղեկություններ Ալեքսանդրապոլի գավառի 1897-1914թթ. ժողովրդագրական դրության մասին[1]**

| Վայրը | 1897թ./հազ.մ./ | 1902թ./հազ.մ./ | 1908թ./հազ.մ./ | 1914թ./հազ.մ./ |
|---|---|---|---|---|
| Ալեքսանդրապոլ քաղաքում | 30.616 | 33.723 | 33.879 | 51.316 |
| Գավառի գյուղերում | 134.887 | 147.731 | 153.055 | 171.849 |

1914-1915թթ., Եր., Տպարան «Լոյս» 1917, էջ 485):

[1] **Հայրապետյան Ա.Ս.**, Ալեքսանդրապոլի գավառը վիճակագրական նյութերում /XIXդ.-XXդ. սկիզբ/, փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Երևան, «Գիտություն» հրատ., 2011, էջեր 189-191, 197-204, 207-214, 247-248:

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ընդհանուր | 165.503 | 181.454 | 186.934 | 223.165 |

Համաճարակային հիվանդությունների տարածման երկրորդ փուլում 1914-1916թթ., մեր կողմից արձանագրվեցին բծավոր և աղիքային տիֆի, ծաղկի ու դիզիտերիայի բռնկման դեպքեր: Պարբերական մամուլն այս անգամ ևս լայնորեն լուսաբանեց բոլոր դեպքերը: «Մշակ», «Գաւառի ձայն», «Հորիզոն», «Համբաւաբեր» պարբերականների հավաստմամբ շարունակվող պատերազմի ու հսկայական մասշտաբներ ընդունած ներգաղթի պայմաններում հասարակական կազմակերպություններին հաջողվեց անձնուրաց աշխատանքի շնորհիվ կանխել հիվանդությունների տարածումը տեղական ազգաբնակչության շրջանում, ապա ճիշտ ընտրված քաղաքականության արդյունքում հասնել գաղթականության շրջանում մահացության դեպքերի նվազմանը:Օրինակ, 1915թ. ընթացքում Ալեքսանդրապոլի ողջ գավառում ցրտից, սովից ու հիվանդություններից մահացավ 1164 գաղթական, այն դեպքում, երբ Էջմիածնում միայն օգոստոսի վերջին տասնօրյակում սովին ու համաճարակին զոհ գնաց 2135 մարդ:

Ցավոք, աշխարհամարտի առաջին երեք տարիներին ավելի քան 95000 գաղթական ընդունած գավառը 1918թ. մայիսին զինագրավվեց թուրքերի կողմից: Թուրքական վեցամսյա տիրապետությունն ուղղակի դիմախեղեց գավառի ազգաբնակչության էթնիկ պատկերը: Տարբեր հաշվումներով այս նոր եղեռնագործությանը զոհ գնաց մինչև 40000 մարդ[1]: Ստեղծված իրավիճակում պարզել, թե գավառի ժողովրդագրական պատկերի վրա ինչ ազդեցություն կարող էին թողնել 1914-1916թթ. տարածված համաճարակային հիվանդությունները մեր կարծիքով, անիմաստ է:

*ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ»,*
*Գյումրի, 2019, h. 22, պրակ 1-2, էջ 52-71*

[1] **Hayrapetyan A.S.**, The Social Situation of Migrants in the Province of Alexandrapol in 1914-1920, //Rreview of Armenian studies, Yerevan, 2019, N 2 (20), p 22; **Հայրապետյան Ա.Ս.**, Ժողովրդագրական գործընթացներն Ալեքսանդրապոլի գավառում 1918թ. մայիս-նոյեմբեր ամիսներին,//ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», h. 21, Գյումրի, 2018, էջ 126:

# ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԸ ԵՒ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԳԱՒԱՌ ՀԱՍՏԱՏՈՒԱԾ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԹՈՒԱՔԱՆԱԿԸ

***ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ.***

Հայոց Ցեղասպանութեան պատմութիւնը հայ պատմագիտութեան թերեւս ամենաուսումնասիրուած շրջաններից մէկն է: Թէ՛ հայրենիքում եւ թէ՛ Սփիւռքում հրատարակուել են հարիւրաւոր յուշագրութիւններ եւ մենագրութիւններ: Հրապարակի վրայ է փաստավաւերագրական բնոյթի հսկայական տպագիր նիւթ (Եւրոպայի, Ամերիկայի եւ Մերձաւոր Արեւելքի երկրների արտաքին գերատեսչութիւնների արխիւներից հանուած փաստաթղթերի եւ նիւթերի ժողովածուներ): Այդուհանդերձ որոշ խիստ կարեւոր հարցերի-ինչպիսիք են օրինակ Արեւելեան Հայաստանի տարածքում հաստատուած հարիւր հազարաւոր փախստական-գաղթականների թուի, էթնօկրօնական կազմի, ըստ բնակութեան նոր վայրերի տեղաբաշխման, տեղի բնակչութեան վիճակագրական պատկերի, ընկերային-տնտեսական դրութեան վրայ թողած ազդեցութեան-ուսումնասիրութեանը անցած հարիւրամեակի ընթացքում հայ պատմագրութիւնն ինչ-ինչ պատճառներով յաւուր պատշաճի չի անդրադարձել: Չի փորձել նոյնիսկ տարանջատել գաղթականութեանն ըստ խմբատեսակների արեւմտահայ, արեւելահայ եւ պարսկահայ, կամ փախստականներ ու գաղթականներ: Մինչդեռ 1914 - 1915ին մենք գործ ունենք միանգամից երեք խմբատեսակների հետ, 1916 - 1917ին՝ միայն պարսկահայերի եւ արեւմտահայերի հետ, իսկ 1918ին՝ գերազանցապէս արեւելահայերի հետ:

Արխիւային նորայայտ վաւերագրերի եւ ժամանակի մամուլի *Գաւառի Ձայն, Մշակ, Աշխատանք, Հորիզոն, Համբաւաբեր* եւն. հաղորդումների համադրմամբ մենք կը փորձենք այստեղ, ընթերցողի դատին յանձնել վիճակագրական բնոյթի հնարաւորինս սպառիչ տեղեկութիւններ Պարսկաստանից, ռուսական սահմանամերձ Կարսի, Սարիղամիշի, Կաղզուանի, Օլթիի, Արդահանի տիրոյթներից եւ Թուրքիայից 1914-1918ին Ալեքսանդրապոլի Գաւառ անցած փախստական-գաղթականների թուաքանակի մասին: Այս հարցերի ուսումնասիրութիւնը յատկապէս բարդանում է այն պարզ պատճառով, որ գաղթականութիւնն իր էութեամբ չափազանց հոսուն, անընդհատ տեղաշարժի մեջ գտնուող դժուար հաշուելի զանգուած էր:

***ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԳԱՒԱՌ ՀԱՍՏԱՏՈՒԱԾ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԹՈՒԱՔԱՆԱԿԻ ՇՈՒՐՋ.***

Առաջին Աշխարհամարտի Կովկասեան ճակատում ռազմական գործողու-

թիւնները սկսուեցին 1914 Նոյեմբերի 2ից: Յարձակման անցած ռուսական զօրքերը մէկը միւսի ետեւից գրաւեցին Խոյը, Թաւրիզը, Զեւինը, Ղարաքիլիսան, Խորասանը, Բայազէտը, Դիադինն ու Ալաշկերտը: Սակայն կարճատեւ այս յաջողութեանը յաջորդած ռուսական զօրքերի 1914 նոյեմբերեան եւ դեկտեմբերեան նահանջները մեծ խուճապ առաջացրին Ատրպատականի եւ Արեւմտեան Հայաստանի նուաճուած շրջանների քրիստոնեայ ազգաբնակչութեան շրջանում, ստիպելով տասնեակ հազարաւոր մարդկանց թողնել իրենց բնակավայրերը եւ շարժուել դէպի Արեւելեան Հայաստան:

Գաղթականութեան շարժը դէպի ռուսական տիրոյթներ սկսուեց 1914 Նոյեմբերի կէսերին: Առաջինը գաղթի ճամփան բռնեցին պարսկահայերը, ապա սահմանամերձ շրջանների Կարսի, Սարիղամիշի, Օլթիի եւ Արդահանի ռուսահպատակ քրիստոնեաները, իսկ այնուհետեւ՝ արեւմտահայերը:

Պատերազմի արհաւիրքներից մազապուրծ բազմահազար գաղթականներին ընդունելու, տեղաւորելու, սնունդով ու հագուստով ապահովելու նպատակով Ամենայն Հայոց Կաթողիկոս Գէորգ Ե.ի կարգադրութեամբ Անդրկովկասի հայաշատ նահանգներում, գաւառներում ու մեծ բնակավայրերում ստեղծուեցին «Եղբայրական Օգնութեան» կոմիտէներ:

1914 Հոկտեմբերի 31 ին Ալեքսանդրապոլի թեմական առաջնորդ Արտակ Վարդապետի գլխաւորութեամբ «Եղբայրական Օգնութեան» կոմիտէ ստեղծուեց նաեւ Ալեքսանդրապոլում[1]: Նոյեմբերի 2ից իր աշխատանքները սկսեց նաեւ Ազգային Կենտրոնական Յանձնաժողովը՝ վիրաւորներին, կամաւորներին, ինքնապաշտպանութեան, գաղթականներին օգնող եւ վիճակագրական տեղեկութիւններ հաւաքող բաժիններով[2]: Հաշուած օրերի ընթացքում յանձնաժողովը միայն Ալեքսանդրապոլ քաղաքում 100-250 հոգանոց 18 բնակարան (հանրակացարան) կահաւորեց փախստական-գաղթականների առաջին խմբերն ընդունելու համար: Նորեկները տեղաբաշխուելու էին գիւղից գիւղ, քաղաքից քաղաք տարբերակով եւ առայժմ միայն Ալեքսանդրապոլ քաղաքում ու Արեւելեան Շիրակի գիւղերում (գաղթականութեան զանգուածային ներհոսքը դէպի Փամբակի տեղամաս սկսուեց միայն 1915 Յուլիսին) [3]:

Յետագայում, գաղթականների թուի աճին զուգահեռ, երեւան եկան նաեւ հասարակական այլ կազմակերպութիւններ «Պատերազմից Տուժածների Օգնութեան Կովկասեան Կենտրոնական Կոմիտէ», «Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութիւն», «Մոսկուայի Հայկական Կոմիտէ», «Պետրոգրադի Հայկական Կոմիտէ», «Հայուհեաց Ընկերութիւն», «Երիտասարդական Միութիւն» եւն.), որոնք եւս մեծ ներդրում ունեցան հիւանդանոցներ, դպրոցներ ու որբանոցներ բացելու գործում:

Առաջին 45 ընտանիք (281 մարդ) պարսկահայերը Ալեքսանդրապոլի Գաւառում յայտնուեցին 1914 Նոյեմբերի կէսերին[4]: Պարսկահայերի հետ միաժամանակ Ալեքսանդրապոլ քաղաքում եւ Արեւելեան Շիրակի գիւղերում հաստատուեցին նաեւ առաջին 100 ընտանիք (587 մարդ) կարսեցիները[5]: Յաջորդ երկու շաբաթների ընթացքում Կաղզուանից եւ Կարսի Խոշգելդի ու Կալկոս գիւղերից Ալեքսանդրապոլի Գաւառ տեղափոխուեցին եւս 88 ընտանիք (792 մարդ) հայեր[6]: Կարսեցիների հետ միաժամանակ Ալեքսանդրապոլի շրջակայ գիւղերում հաստատուեցին նաեւ առաջին սարիղամիշցիները 101 ընտանիք (603 մարդ)[7]:

Ռազմական գործողութիւնների թատերաբեմից փախստականների հոսքն աւելի մեծ չափսեր ընդունեց ռուսական զօրքերի դեկտեմբերեան նահանջից յետոյ: Այսպէս, Արդահանի եւ համանուն գաւառի քրիստոնեայ ազգաբնակչութիւնը թուով 314 ընտանիք (2021 մարդ) տեղաւորուեց Ալեքսանդրապոլ, Կարս եւ Ախալքալաք քաղաքներում: Նոյնկերպ վարուեցին նաեւ օլթեցի 499 ընտանիքներ (3221 մարդ): Օրինակ Թամրութ աւանի ողջ քրիստոնեայ ազգաբնակչութիւնը հաստատուեց Ալեքսանդրապոլի Գաւառի Շորագեալի տեղամասում: Հիմնականում Ալեքսանդրապոլ, մասամբ նաեւ Կարս եւ Ախալքալաք քաղաքներում հաստատուեցին Արդուինից փախած 121 (649 մարդ)[8] ու Բաթումից փախած 62 ընտանիքներ (404 մարդ)[9]:

1915 Յունուարի առաջին օրերին Երեւանից Ալեքսանդրապոլ հասան եւս 400 պարսկահայեր[10] եւ նաեւ առաջին 360 ընտանիք արեւմտահայ գաղթականները (մօտ 2000 մարդ)[11]: Եւս 800 կիսամերկ ու ոտաբոբիկ փախստականներ Արեւելեան Շիրակի գիւղերում հաստատուեցին Ծննդեան Տօներից անմիջապէս յետոյ Օլթիից եւ Կարսի Թախտա գիւղից[12]: Այս նոր ժամանումներից յետոյ ըստ Արեքսանդրապոլի Ազգային Կենտրոնական Յանձնաժողովի Գաղթականական Բաժնի հաշուումների, միայն քաղաքում եւ շրջակայ միքանի գիւղերում 1915 Յունուարի 8ի դրութեամբ փախստական-գաղթականների թիւը հասաւ 3250ի (հայեր 2310, յոյներ 900, ասորիներ 20 եւ ռուսներ 20)[13]:

Արխիւային վաւերագրերի եւ ժամանակի մամուլի հաղորդումների համաձայն հայերի հետ Պարսկաստանից, ռուսական սահմանամերձ տիրոյթներից եւ Թուրքիայից Երեւանի Նահանգ, ապա նաեւ Անդրկովկասի այլ շրջաններ անցան նաեւ մեծ թուով յոյներ ու ասորիներ: Ընդ որում, եթէ առաջինները հիմնականում Կարսի մարզից էին, ապա ասորիները գաղթում էին Պարսկաստանից եւ մասամբ նաեւ Թուրքիայից:

Ալեքսանդրապոլի Գաւառում հաստատուած փախստական - գաղթականների մէջ հայերից յետոյ թուով երկրորդը յոյներն էին: Ընդ որում սրանք, ի տարբերութիւն հայերի, ռուսական հրամանատարութեան կողմից նախապէս տեղե-

կացում էին զօրքերի տեղաշարժերի մասին, այնպէս որ գաղթում էին իրենց իսկ սայլերով եւ ունեցուածքով: Կովկասեան Ռազմաճակատում ռազմական գործողութիւնների առաջին երկու ամիսների ընթացքում միայն Արդահանի Գաւառից Ալեքսանդրապոլի Գաւառ էր տեղափոխուել 1030 յոյն, որից 186ը հաստատուել էր Ալեքսանդրապոլում, իսկ 48ը Մեծ Ղարաքիլիսայում (Ալեքսանդրապոլ էր տեղափոխուել նաեւ 6 ռուս, 6 լեհ եւ 5 վրացի, եւս 17 ռուս հաստատուել էր Մեծ Ղարաքիլիսայում): Նոյն ժամանակահատուածում Սարիղամիշի Գաւառից Շորագեալի շրջան էր տեղափոխուել 500 ընտանիք (մօտ 2500 մարդ) յոյն, որից 200ը հաստատուել էր Բայանդուր գիւղում[14]: Մինչեւ 1914 Դեկտեմբերի վերջ եւս 4000 յոյներ (մօտ 650 ընտանիք) Արեւելեան Շիրակ էին տեղափոխուել Օլթիի շրջանի եօթ յունական գիւղերից[15]: Սրանցից 234ը հաստատուել էր Ալեքսանդրապոլում[16]:

Արդիւնքում միայն Ալեքսանդրապոլ քաղաքում 1915 Յունուարի 3ի դրութեամբ տեղաւորուել էր 600 յոյն փախստական[17]:

Ասորիներն անհամեմատ աւելի քիչ էին: Մինչեւ 1914 Դեկտեմբեր Ալեքսանդրապոլի Գաւառ հաստատուել էր 13 ընտանիք (64 մարդ) մի մասը Սալմաստի Գաւառի Խոսրովա, Փաթաուուր եւ Վլա գիւղերից էր, իսկ միւս մասը Վանի Նահանգի Բաշկալէի Գաւառի Արջ եւ Սաբա գիւղերից[18]: Յունուար 1915ի ընթացքում Արդահանի Գաւառից Արեւելեան Շիրակի եւ Ջաւախքի գիւղեր տեղափոխուեց եւս ասորի 60 ընտանիք (360 մարդ)[19]:

1914 Նոյեմբերի-1915 Յունուարի վերջ ժամանակահատուածում Թուրքիայից, Պարսկաստանից եւ սահմանամերձ շրջաններից գաղթածների թուաքանակի մասին սպառիչ տեղեկութիւններ հաւաքելու համար Երեւանի Վիճակագրական Յանձնախումբը «Եղբայրական Օգնութեան» տեղի Հայկական կոմիտէի յանձնարարութեամբ Յունուարի 30ին Երեւանի Նահանգի եօթ գաւառներում, Կարսի Մարզի չորս շրջաններում եւ Թիֆլիսի Նահանգի Ախալքալաքի Գաւառում անցկացրեց գաղթականութեան մէկօրեայ ցուցակագրում: Սա միակ հնարաւոր միջոցն էր անընդհատ շարժման մէջ գտնուող գաղթականների բազմահազարանոց զանգուածի մասին փոքրիշատէ ստոյգ վիճակագրական տուեալներ հաւաքելու:

Ալեքսանդրապոլի Գաւառում գաղթականութեան ցուցակագրումն անցկացրած «Եղբայրական Օգնութեան» տեղի կոմիտէն[20] արձանագրեց հետեւեալ տուեալները. ոչ-լրիւ երեք ամիսների ընթացքում Ալեքսանդրապոլ քաղաքում եւ համանուն գաւառի 63 գիւղերում հաստատուել էր 1027 ընտանիք (6909 մարդ), որից 688 ընտանիքը (4468 մարդ) հայ, 310ը (2270 մարդ) յոյն, 18ը (109 մարդ) ասորի, իսկ մնացած 11ը (62 մարդ) ռուս, վրացի, լեհ, հրեայ ու օս: Նոյն ցուցակագրման համաձայն միայն Ալեքսանդրապոլ քաղաքում փախստական-գաղթականների թիւը կազմում էր 589 ընտանիք (3652 մարդ), որից 387 ընտանիքը (2262

մարդ) հայ, 177ը (1243 մարդ) յոյն, իսկ 14ը (85 մարդ) ասորի: Գաւառի գիւղերում նորեկներն անհամեմատ աւելի քիչ էին. ընդամէնը 438 ընտանիք (3257 մարդ), որից 301 ընտանիքը (2206 մարդ) հայ էին, 133ը (1027 մարդ)՝ յոյն, իսկ 4ը (24 մարդ)՝ ասորի[21]:

Ցուցակագրման արդիւնքներն ամփոփող ձեռագիր մատեաններից երկուսն այսօր պահւում են Հայաստանի Ազգային Արխիւում[22]: Կազմուելուց միայն մէկ դար անց ընթերցողի դատին ներկայացուած այս փաստաթղթերը, իրենց թերութիւններով հանդերձ, թուային տուեալներից զատ անգնահատելի տեղեկութիւններ են հաղորդում աշխարհամարտի առաջին ամիսների ընթացքում Արեւելեան Հայաստանում եւ մասնաւորապէս Ալեքսանդրապոլի Գաւառում հաստատուածների բնակութեան նախկին եւ նոր վայրերի մասին, եւս մէկ անգամ ապացուցելով, որ նշուած ժամանակահատուածում Երեւանի Նահանգի տարածքում ապաստանածների մեծ մասը ռազմական գործողութիւնների թատերաբեմ դարձած սահմանամերձ շրջաններից փախած ռուսահպատակներ էին, եւ ոչ թէ պարսկահայեր կամ արեւմտահայեր: Օրինակ 1914 Նոյեմբերից մինչեւ 1915 Յունուարի վերջն ընկած ժամանակահատուածում Ալեքսանդրապոլի Գաւառում հաստատուած 1027 ընտանիքներից (6909 մարդ) ձեռագրերը յստակ տեղեկութիւններ են հաղորդում 878-ի (5784 մարդու) մասին: Սրանցից 820 ընտանիքը (5426 մարդ) Կարսի Մարզից էին, 34ը (195 մարդ) Բաթումի Մարզից, 6ը (37 մարդ) Ռուսաստանի ներքին նահանգներից, եւ միայն 18ը (126 մարդ) Թուրքիայից եւ Պարսկաստանից: Նոյն սկզբունքով, Ալեքսանդրապոլ քաղաքում հաստատուած 589 ընտանիքներից ձեռագրերը յստակ տեղեկութիւններ են հաղորդում 559ի մասին (անյայտ են 30 ընտանիքների 169 մարդու, նախկին բնակութեան վայրերը). սրանցից 524 ընտանիքը (3272 մարդ) Կարսի Մարզից էին, 20ը (119 մարդ) Բաթումի Մարզից, 6ը (37 մարդ) Ռուսաստանի ներքին նահանգներից եւ միայն 9ը (55 մարդ) Թուրքիայից եւ Պարսկաստանից (տե՛ս աղիւսակ 1): Գաւառի գիւղական բնակավայրերում դրութիւնն անհամեմատ աւելի բարդ է: Յայտնի են միայն 52 գիւղերում հաստատուածների բնակութեան նախկին վայրերը (319 ընտանիք կամ 2301 մարդ): Սրանցից 296 ընտանիքը (2154 մարդ) Կարսի Մարզից էին, 14ը (76 մարդ) Բաթումի Մարզից, իսկ 9ը (71 մարդ) Թուրքիայից եւ Պարսկաստանից (տե՛ս աղիւսակ 2): Գաւառի եւս 11 գիւղերում հաստատուած 119ընտանիքների (956 մարդ) որտեղից լինելու մասին տեղեկութիւններ չունենք:

**Աղիւսակ 1.**

**1915 Յունուարի 30ի դրութեամբ Թուրքիայից, Պարսկաստանից եւ սահմանամերձ շրջաններից Ալեքսանդրապոլ Քաղաք գաղթածների ցուցակ**

| նահանգ, մարզ | գավառ | նախկին բնակավայրը | ընտ. | ար. | իգ. | ընդ. | բա-ցակա | ազգ. | դավա-նանք |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Կարսի մարզ | Կարս | Կարս քաղաք | 870 | 245 | 226 | 471 | 60 | հայ | առաքելական |
| | | Սարիղամիշ քաղաք | 83 | 228 | 247 | 475 | 89 | -//- | --//-- |
| | | Ղարաղալա | 4 | 9 | 12 | 21 | 3 | -//- | --//-- |
| | | Զարիշատ | 1 | 4 | 4 | 8 | ---- | -//- | --//-- |
| | Օլթի | Թամրութ | 7 | 19 | 19 | 38 | 1 | հայ | առաքելական |
| | | Կուբաթ-Էրիվկ | 2 | 10 | 8 | 18 | ---- | -//- | --//-- |
| | | Ագրակ | 2 | 7 | 7 | 14 | ---- | -//- | --//-- |
| | | Զարդանես | 2 | 4 | 4 | 8 | ---- | -//- | --//-- |
| | | Ղարաուրղան | 1 | 6 | 4 | 10 | ---- | -//- | --//-- |
| | | Փանակաձոր | 1 | 5 | 5 | 10 | ---- | -//- | --//-- |
| | | Զեոհրապ | 1 | 3 | 4 | 7 | ---- | -//- | --//-- |
| | | Դևիկ | 1 | 5 | 10 | 15 | 1 | -//- | --//-- |
| | | Բանջուրատ | 1 | 2 | 2 | 4 | ---- | -//- | --//-- |
| | | Մեթինես | 7 | 28 | 37 | 65 | 1 | հույն | ուղղափառ |
| | | Բարդուս | 1 | 1 | 1 | 2 | 1 | -//- | --//-- |
| | | Նարիման | 23 | 87 | 80 | 167 | 15 | -//- | --//-- |
| | Արդահան | Արդահան քաղաք | 58 | 158 | 164 | 322 | 26 | Հայ | առաքելական |
| | | --//-- | 2 | 1 | 9 | 10 | ---- | հայ | կաթոլիկ |
| | | --//-- | 3 | 14 | 4 | 18 | 2 | ռուս | ուղղափառ |
| | | --//-- | 1 | 2 | 1 | 3 | ---- | օս | ուղղափառ |
| | | --//-- | 1 | 3 | 3 | 6 | ---- | հրեա | մովսիսական |
| | | --//-- | 24 | 1 | 80 | 161 | 12 | հույն | ուղղափառ |
| | | Միրդինեկ | 3 | 8 | 11 | 19 | 1 | հայ | առաքելական |
| | | --//-- | 1 | 4 | 4 | 8 | 1 | ռուս | ուղղափառ |
| | | --//-- | 1 | 3 | 3 | 6 | ---- | հույն | ուղղափառ |
| | | Բիգթախաթուն | 1 | 2 | 2 | 4 | ---- | հայ | առաքելական |
| | | Ֆախրիզ | 5 | 16 | 14 | 30 | ---- | հույն | ուղղափառ |
| | | Խանախ Ներքին | 14 | 54 | 53 | 107 | 10 | -//- | --//-- |
| | | Սինդիսզոմ | 37 | 115 | 104 | 219 | 6 | -//- | --//-- |
| | | Գյուլաբերդ | 7 | 24 | 25 | 49 | ---- | -//- | --//-- |
| | | Թորասխև | 2 | 13 | 9 | 22 | 1 | -//- | --//-- |
| | | Բեբեթիկ | 55 | 202 | 212 | 414 | 1 | -//- | --//-- |
| | | Բիգրախաթուն | 2 | 2 | 3 | 5 | ---- | ասորի | կաթոլիկ |
| | | Պարկաու | 4 | 12 | 14 | 26 | 3 | ասորի | կաթոլիկ |
| | Կաղզվան | Կաղզվան քաղաք | 11 | 30 | 35 | 65 | 7 | հայ | առաքելական |
| Ռումիա | Էրզրում | Արտանուջ | 6 | 13 | 17 | 30 | 7 | հայ | առաքելական |
| | | Տանձուտ | 4 | 11 | 13 | 24 | ---- | -//- | --//-- |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Ենիթաբատ | 3 | 12 | 11 | 23 | 2 | -//- | --//-- |
| | | Սաթիլ | 1 | 2 | 1 | 3 | ---- | -//- | --//-- |
| | | Սաբաթ | 4 | 9 | 11 | 20 | ---- | -//- | --//-- |
| | Արդանուշ | Նորաշեն | 1 | 4 | 5 | 9 | ---- | հայ | առաքելական |
| | | Շավշեթ | 1 | 4 | 6 | 10 | 1 | -//- | --//-- |
| Ռուսաստանի ներքին նահանգներ | | | 4 | 12 | 15 | 27 | 4 | հայ | առաքելական |
| | | | 2 | 4 | 6 | 10 | ---- | ռուս | ուղղափառ |
| Վան | Բաշկալէ | Արջի | 8 | 27 | 27 | 54 | 8 | ասորի | նեստորական |
| Պարսկաստան | | Թավրիզ քաղաք | 1 | 1 | ---- | 1 | ---- | հայ | առաքելական |
| **ԸՆԴԱՄԵՆԸ** | | | **559** | **1736** | **1747** | **3483** | **295** | | |

**Աղիւսակ 2.**

**1915թ. Յունուարի 30ի դրութեամբ Թուրքիայից, Պարսկաստանից եւ սահմանամերձ շրջաններից Ալեքսանդրապոլի Գաւառի գիւղեր գաղթածների ցուցակ**

| նահանգ, մարզ | գավառ | նախկին բնակավայրը | ընտ. | արբ. | իգ. | ընդ. | բացակա | ազգ. | դավանանք |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **ՄԵԾ ՂԱՐԱՔԻԼԻՍԱ** | | | | | | | | | |
| Կարս | Արդահան | Արդահան քաղաք | 1 | 4 | 1 | 5 | ---- | հույն | ուղղափառ |
| Բաթում | Արդվին | Ենգիքյոյ | 1 | 3 | 2 | 5 | ---- | --//-- | --//-- |
| Պարսկաստան | | Թավրիզ քաղաք | 6 | 24 | 28 | 52 | 1 | հայ | առաքելա-կան |
| **ՓՈՔՐ ՂԱՐԱՔԻԼԻՍԱ** | | | | | | | | | |
| Կարս | Արդահան | Սասադի | 4 | 17 | 14 | 31 | 2 | հայ | կաթոլիկ |
| | Օլթի | Օլթի քաղաք | 2 | 3 | 6 | 9 | ---- | հայ | առաքելա-կան |
| | Կարս | Սարիղամիշ քաղաք | 2 | 12 | 4 | 16 | 1 | --//-- | --//-- |
| **ԲՈՂԱԶՔԵՍԱՆ** | | | | | | | | | |
| Կարս | Կարս | Կարս քաղաք | 1 | 2 | 6 | 8 | 1 | հայ | առաքելա-կան |
| | --//-- | Սարիղամիշ քաղաք | 2 | 5 | 7 | 12 | 2 | --//-- | --//-- |
| | Օլթի | Օլթի քաղաք | 1 | 3 | 3 | 6 | ---- | --//-- | --//-- |
| | --//-- | Զարդանես | 1 | 3 | 2 | 5 | ---- | --//-- | --//-- |
| **ՄԵԾ ՍԱՐԻԱՐ** | | | | | | | | | |
| Կարս | Կարս | Կարս քաղաք | 1 | 2 | 1 | 3 | 1 | հայ | առաքելա-կան |
| | Օլթի | Օլթի քաղաք | 3 | 11 | 13 | 24 | 3 | --//-- | --//-- |
| **ՔՅԱՖԹԱՌԼԻ** | | | | | | | | | |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Կարս | Կարս | Կարս քաղաք | 3 | 6 | 5 | 11 | ---- | հայ | կաթոլիկ |
| | Արդահան | Սասաղի | 4 | 13 | 8 | 21 | ---- | --//-- | --//-- |
| ՂԶԸԼՔԻԼԻՍԱ | | | | | | | | | |
| Կարս | Կարս | Կարս քաղաք | 2 | 7 | 5 | 12 | 1 | հայ | առաքելա-կան |
| ՉԻՐՊԻԼԻ | | | | | | | | | |
| Կարս | Կարս | Կարս քաղաք | 4 | 10 | 14 | 24 | 2 | հայ | առաքելա-կան |
| | Արդահան | Արդահան քաղաք | 3 | 17 | 6 | 23 | ---- | հայ | առաքելա-կան |
| ՂԱԼԹԱԽՉԻ | | | | | | | | | |
| Կարս | Կարս | Կարս քաղաք | 1 | 5 | 5 | 10 | ---- | հայ | առաքելա-կան |
| ՄԵԾ ԲԵՔԱՆԴ | | | | | | | | | |
| Կարս | Կարս | Կարս քաղաք | 1 | 5 | 6 | 11 | ---- | հայ | առաքելա-կան |
| ՓՈՔՐ ԲԵՔԱՆԴ | | | | | | | | | |
| Կարս | Օլթի | Ճուճուրիս | 1 | 2 | 5 | 7 | ---- | հայ | առաքելա-կան |
| ԳՅՈՒՂՅՈԽՈՒՇ | | | | | | | | | |
| Կարս | Կարս | Կարս քաղաք | 7 | 14 | 23 | 37 | 1 | հայ | առաքելա-կան |
| ԻԼԽԻԱԲԻ | | | | | | | | | |
| Կարս | Կարս | Սարիղամիշ քաղաք | 2 | 6 | 7 | 13 | ---- | հայ | առաքելա-կան |
| ՂՓՉԱՂ | | | | | | | | | |
| Կարս | Կարս | Սարիղամիշ քաղաք | 3 | 10 | 8 | 18 | 6 | հայ | առաքելա-կան |
| ՂԱՍՄԱԼԻ | | | | | | | | | |
| Կարս | Կարս | Սարիղամիշ քաղաք | 1 | 6 | 3 | 9 | ---- | հայ | առաքելա-կան |
| ԱՐԹԻԿ | | | | | | | | | |
| Կարս | Կարս | Սարիղամիշ քաղաք | 3 | 8 | 6 | 14 | ---- | հայ | առաքելա-կան |
| | Օլթի | Թամրութ | 1 | 9 | 9 | 18 | ---- | --//-- | --//-- |
| ՂՌՆԱԽՂՌԱՆ | | | | | | | | | |
| Կարս | Կարս | Սարիղամիշ քաղաք | 2 | 8 | 7 | 15 | ---- | հայ | առաքելա-կան |
| ԱՂԲՈՒԼԱՂ | | | | | | | | | |
| Կարս | Կարս | Սարիղամիշ քաղաք | 2 | 7 | 8 | 15 | 1 | հայ | առաքելա-կան |
| ՄՈԼԼԱ ԳՅՈԿՉԱ | | | | | | | | | |
| Կարս | Կարս | Սարիղամիշ | 1 | 4 | 4 | 8 | ---- | հայ | առաքելա- |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | քաղաք | | | | | | | կան |
| | Օլթի | Օլթի քաղաք | 1 | 4 | 2 | 6 | 2 | --//-- | --//-- |
| | | Թամրութ | 1 | 6 | 3 | 9 | ---- | --//-- | --//-- |
| Պարսկաստան | Սալմաստ | Խոսրովա | 1 | 3 | ---- | 3 | 1 | ասորի | կաթոլիկ |
| | ՈՒրմիա | Մավանա | 2 | 9 | 7 | 16 | ---- | --//-- | --//-- |
| **ԴԱՀԱՐԼԻ** | | | | | | | | | |
| Կարս | Արդահան | Արդահան քաղաք | 3 | 9 | 11 | 20 | ---- | հայ | առաքելա-կան |
| | | ՈՒչքիլիսա | 10 | 39 | 32 | 71 | ---- | հույն | ուղղափառ |
| | | Կոնկ | 12 | 53 | 42 | 95 | ---- | --//-- | --//-- |
| | | Վարգենիս | 9 | 34 | 34 | 68 | ---- | --//-- | --//-- |
| Բաթում | Արդանուշ | Շավշեթ | 1 | 2 | 2 | 4 | ---- | հայ | առաքելա-կան |
| **ԹԱԼԻԲՕՂԼԻ** | | | | | | | | | |
| Կարս | Արդահան | Արդահան քաղաք | 1 | 7 | 1 | 8 | ---- | հայ | առաքելա-կան |
| | | Սասադի | 1 | 7 | 5 | 12 | ---- | հայ | կաթոլիկ |
| | Օլթի | Օլոր | 1 | 4 | 2 | 6 | ---- | հայ | առաքելա-կան |
| **ՄԵԾ ԴՈՒԶՔԵՆԴ** | | | | | | | | | |
| ¤ | Արդահան | Արդահան քաղաք | 7 | 26 | 19 | 45 | 3 | հայ | առաքելա-կան |
| | Օլթի | Օլթի քաղաք | 1 | 2 | 1 | 3 | ---- | --//-- | --//-- |
| | | Թամրութ | 6 | 26 | 33 | 59 | ---- | --//-- | --//-- |
| | | Զարդանես | 3 | 8 | 14 | 22 | 1 | --//-- | --//-- |
| **ԴԻՐԱՔԼԱՐ** | | | | | | | | | |
| Կարս | Արդահան | Արդահան քաղաք | 1 | 2 | 1 | 3 | ---- | հայ | առաքելա-կան |
| | Օլթի | Օլթի քաղաք | 3 | 5 | 7 | 12 | ---- | --//-- | --//-- |
| **ՂՈՒԼԻՋԱՆ** | | | | | | | | | |
| Կարս | Արդահան | Արդահան քաղաք | 2 | 3 | 3 | 6 | ---- | հայ | առաքելա-կան |
| **ՆԱԼԲԱՆԴ** | | | | | | | | | |
| Կարս | Արդահան | Արդահան քաղաք | 4 | 17 | 19 | 36 | 1 | հայ | առաքելա-կան |
| **ՂՈԼՂԱԹ** | | | | | | | | | |
| Կարս | Արդահան | Բիգթախաթուն | 4 | 13 | 17 | 30 | ---- | հայ | առաքելա-կան |
| **ՂԱՐԱՔԻԼԻՍԱ 2–ՐԴ** | | | | | | | | | |
| Կարս | Օլթի | Օլթի քաղաք | 2 | 3 | 6 | 9 | ---- | հայ | առաքելա-կան |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Արդահան | Սասաղի | 1 | 2 | 5 | 7 | 1 | հայ | կաթոլիկ |
| **ՆՈՐԱՇԵՆ** | | | | | | | | | |
| Կարս | Օլթի | Օլթի քաղաք | 2 | 4 | 3 | 7 | ---- | հայ | առաքելա-կան |
| | | Օլոր | 3 | 11 | 9 | 20 | ---- | --//-- | --//-- |
| **ՔՅԱՓԱՆԱԿ ՓՈՔՐ** | | | | | | | | | |
| Կարս | Կարս | Կալեքյոյ | 3 | 8 | 11 | 19 | 1 | հայ | առաքելա-կան |
| Բաթում | Արդվին | Ենիթաբատ | 2 | 8 | 5 | 13 | ---- | --//-- | --//-- |
| **ՔՅԱՓԱՆԱԿ ՄԵԾ** | | | | | | | | | |
| Կարս | Օլթի | Օլթի քաղաք | 5 | 17 | 12 | 29 | ---- | հայ | առաքելա-կան |
| Բաթում | Արդվին | Սաբաթ | 3 | 9 | 9 | 18 | ---- | --//-- | --//-- |
| **ՀՈՌՈՄ** | | | | | | | | | |
| Կարս | Արդահան | Արդահան քաղաք | 2 | 9 | 13 | 22 | 1 | հայ | առաքելա-կան |
| | | Սասաղի | 3 | 9 | 11 | 20 | ---- | հայ | կաթոլիկ |
| | | Բեբեթիկ | 9 | 27 | 30 | 57 | 3 | հույն | ուղղափառ |
| **ԲԱՅԱՆԴՈՒՐ** | | | | | | | | | |
| Կարս | Արդահան | ՈՒռուտ | 1 | 2 | 1 | 3 | ---- | հայ | առաքելա-կան |
| | | Արդահան քաղաք | 1 | 1 | 2 | 3 | ---- | հույն | ուղղափառ |
| | | Ֆախրիլ | 1 | 1 | 1 | 2 | ---- | --//-- | --//-- |
| | | Թուրքաշեն | 41 | 177 | 165 | 342 | ---- | --//-- | --//-- |
| | | Միրդինեկ | 1 | 2 | 3 | 5 | ---- | --//-- | --//-- |
| | | Դեմուրկապի | 1 | 5 | 3 | 8 | ---- | --//-- | --//-- |
| | | ՈՒչքիլիսա | 28 | 122 | 107 | 229 | ---- | --//-- | --//-- |
| | | Թախտա | 1 | 1 | 3 | 4 | ---- | --//-- | --//-- |
| | | Կոնկ | 1 | 9 | 7 | 16 | ---- | --//-- | --//-- |
| | | Վարգենիս | 9 | 34 | 34 | 68 | ---- | --//-- | --//-- |
| | Օլթի | Նարման | 5 | 17 | 20 | 37 | ---- | --//-- | --//-- |
| **ՃԼՈՎԽԱՆԼԻ** | | | | | | | | | |
| Կարս | Արդահան | Սասաղի | 3 | 17 | 19 | 36 | ---- | հայ | կաթոլիկ |
| | Օլթի | Օլոր | 1 | 1 | 1 | 2 | ---- | հայ | առաքելա-կան |
| **ԻՄԻՐԽԱՆԼԻ** | | | | | | | | | |
| Կարս | Արդահան | Սասաղի | 4 | 15 | 16 | 31 | ---- | հայ | կաթոլիկ |
| Բաթում | Արդվին | Ենիթաբատ | 1 | 5 | 4 | 9 | ---- | հայ | առաքելա-կան |
| **ՂՈՒԹՆԻՂՇԼԱՂ** | | | | | | | | | |
| Կարս | Արդահան | Սասաղի | 2 | 10 | 11 | 21 | ---- | հայ | կաթոլիկ |
| **ՄՈՆԳՈՒՌԼԻ** | | | | | | | | | |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Կարս | Արդահան | Սասաղի | 2 | 8 | 6 | 14 | ---- | հայ | կաթոլիկ |
| **ԹԱՓԱԴՈԼԼԱԿ** | | | | | | | | | |
| Կարս | Արդահան | Սասաղի | 2 | 15 | 11 | 26 | ---- | հայ | կաթոլիկ |
| | Օլթի | Թամրութ | 1 | 5 | 11 | 16 | ---- | հայ | առաքելա-կան |
| **ՂԱՑՂՈՒԼԻ–ՂԱԶԱՆՉԻ** | | | | | | | | | |
| Կարս | Արդահան | Սասաղի | 1 | 5 | 3 | 8 | ---- | հայ | կաթոլիկ |
| | Օլթի | Օլթի քաղաք | 1 | 2 | 4 | 6 | ---- | --//-- | --//-- |
| **ՏԻՏՈՑ ԽԱՐԱԲԱ** | | | | | | | | | |
| Կարս | Արդահան | Սասաղի | 1 | 4 | 3 | 7 | ---- | հայ | կաթոլիկ |
| **ՔՈՌԱՂԲՑՈՒՐ** | | | | | | | | | |
| Կարս | Արդահան | Սասաղի | 1 | 4 | 3 | 7 | ---- | հայ | կաթոլիկ |
| **ԵԳԱՆԼԱՐ** | | | | | | | | | |
| Կարս | Օլթի | Օլթի քաղաք | 1 | 2 | 1 | 3 | ---- | հայ | առաքելա-կան |
| **ԱՐԸԽՎԱԼԻ ՄԵԾ** | | | | | | | | | |
| Կարս | Օլթի | Օլթի քաղաք | 1 | 3 | 4 | 7 | ---- | հայ | առաքելա-կան |
| | | Ճուճուրիս | 1 | 7 | 3 | 10 | ---- | --//-- | --//-- |
| **ԱՐԸԽՎԱԼԻ ՓՈՔՐ** | | | | | | | | | |
| Բաթում | Արդանուշ | Նորաշեն | 2 | 3 | 5 | 8 | ---- | հայ | առաքելա-կան |
| **ՋԱՋՈՒՌ** | | | | | | | | | |
| Կարս | Օլթի | Օլթի քաղաք | 2 | 5 | 10 | 15 | ---- | հայ | առաքելա-կան |
| | | Զարդանես | 2 | 5 | 5 | 10 | ---- | --//-- | --//-- |
| Բաթում | Արդվին | Արտանուջ | 2 | 2 | 3 | 5 | ---- | --//-- | --//-- |
| | | Սաբաթ | 1 | 2 | 2 | 4 | ---- | --//-- | --//-- |
| **ՀԱՋԻՆԱԶԱՐ–ՂՈՒԼԻ** | | | | | | | | | |
| Կարս | Օլթի | Օլթի քաղաք | 2 | 4 | 6 | 10 | ---- | հայ | առաքելա-կան |
| **ՀԱՄԱՄԼՈՒ** | | | | | | | | | |
| Կարս | Արդահան | Միրդինեկ | 1 | 3 | 3 | 6 | ---- | հայ | առաքելա-կան |
| | | | 1 | 2 | 1 | 3 | ---- | հույն | ուղղափառ |
| **ՂԱԶԱՆՉԻ** | | | | | | | | | |
| Կարս | Օլթի | Օլթի քաղաք | 2 | 9 | 7 | 16 | ---- | հայ | առաքելա-կան |
| **ՉՐԱԽԼԻ** | | | | | | | | | |
| Կարս | Օլթի | Թամրութ | 2 | 7 | 9 | 16 | ---- | հայ | առաքելա- |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | կան |
| | | Ճուճուրիս | 1 | 4 | 6 | 10 | ---- | --//-- | --//-- |
| **ՏԱՎՇԱՆՂՇԼԱՂ** | | | | | | | | | |
| Կարս | Օլթի | Ագրակ | 1 | 3 | 1 | 4 | ---- | հայ | առաքելա-կան |
| | Արդահան | Դեմուրկապի | 2 | 8 | 13 | 21 | ---- | հույն | ուղղափառ |
| | | Կոնկ | 3 | 5 | 8 | 13 | ---- | --//-- | --//-- |
| | | Բեբեթիկ | 1 | 1 | 2 | 3 | ---- | --//-- | --//-- |
| **ԹՈՄԱՐՏԱՇ** | | | | | | | | | |
| Կարս | Օլթի | Փանակ | 1 | 6 | 2 | 8 | 1 | հայ | առաքելա-կան |
| **ՉՈՏՈՒՐ** | | | | | | | | | |
| Կարս | Արդահան | Միրդինեկ | 1 | 2 | 1 | 3 | ---- | հույն | ուղղափառ |
| Բաթում | Արդվին | Սաբաթ | 1 | 4 | 6 | 10 | 1 | հայ | առաքելա-կան |
| **ՂԱՓԼԸԻ** | | | | | | | | | |
| Կարս | Օլթի | Նարիման | 2 | 6 | 7 | 13 | ---- | հույն | ուղղափառ |
| **ՀԱՅԿԱԿԱՆ ԳՅՈՂԱԼԴԱՐԱ** | | | | | | | | | |
| Կարս | Արդահան | Բիգրախաթուն | 1 | 1 | 5 | 6 | ---- | ասորի | կաթոլիկ |
| **ԸՆԴԱՄԵՆԸ** | | | **319** | **1168** | **1133** | **2301** | **38** | | |

1915ի գարնանը փախստական-գաղթականների թիւն Ալեքսանդրապոլի Գաւառում հասաւ 8000ի (1142 ընտանիք), որից 6000ը (857 ընտանիք) հայ, 1400ը (200 ընտանիք) յոյն, 570ը (81 ընտանիք) ասորի, իսկ 30ը (4 ընտանիք) ռուսներ: Համաձայն *Մշակի* թղթակից Գէորգ Ք. Մկրտումեանի հաշուումների 1915 Ապրիլի 24ի դրութեամբ նրանցից 3300ը (550 ընտանիք) տեղաւորուել էր Ալեքսանդրապոլի 15 հանրակացարաններում եւ 200 մասնաւոր տներում, իսկ 4700 ը (783 ընտանիք) Արեւելեան Շիրակի 80 գիւղերում[23]:

Գաղթականութեան երրորդ մեծ շարժը սկսուեց 1915 Յուլիսին: Սարիղամիշի տակ թուրքերին ծանր պարտութեան մատնած ռուսական զօրքերը մինչեւ 1915 Մայիս գրաւեցին Թաւրիզը, Ուրմիան, ապա նաեւ Ալաշկերտը, Բաշկալէն, Մանազկերտը, Շատախը, Արճէշը եւ Վանը: Ռուսական զօրքերի այս յաղթարշաւը հնարաւորութիւն տուեց տասնեակ հազարաւոր գաղթականների վերադառնալ հայրենի բնակավայրերը: Սակայն 1915 Յուլիսի 13ին ռուսները միքանի օրում անակնկալ նահանջեցին թուրքերին թողնելով գրաւուած շրջանները:

Ռուսական զօրքերի երրորդ «խորհրդաւոր» նահանջը մեծ խուճապ առաջացրեց Վանի, Բիթլիսի եւ Էրզրումի վիլայէթների քրիստոնեայ բնակչութեան շրջանում՝ առիթ տալով անկազմակերպ ու քաոսային նոր գաղթի: Հաշուած օրերի ընթացքում Արեւելեան Հայաստան փախածների թիւն անցաւ 200.000ը:

Միայն Յուլիսի վերջին տասնօրեակում Վանից, Մանազկերտից, Մուշից եւ Բուլանըղի Համզաշէխ, Կողակ ու Փկաշէն գիւղերից Ալեքսանդրապոլի Գաւառ գաղթեց շուրջ 5653 մարդ: Սրանցից 1688ը, ըստ Բախշի Իշխանեանի, հաստատուեց Ալեքսանդրապոլ քաղաքում եւ Արեւելեան Շիրակի գիւղերում[24], իսկ մնացած 3965ը «Եղբայրական Օգնութեան» Մեծ Ղարաքիլիսայի կոմիտէի հաղորդած տուեալների համաձայն Փամբակի տեղամասի 23 գիւղերում[25]: Արեւմտահայութեան ներհոսքը դէպի Ալեքսանդրապոլի Գաւառ իր բարձրակէտին հասաւ Օգոստոսի վերջին: Համաձայն Ալեքսանդր Խատիսեանի Համառուսաստանեան Քաղաքների Միութեան (Քաղաքների Միութիւն) Կովկասեան Բաժանմունք ներկայացրած զեկուցագրի գաղթականների թիւը գաւառում հասաւ 31,000ի (7000ը գաւառակենտրոնում, իսկ 24,000ը գիւղերում)[26]:

Գաղթականների աճին զուգահեռ գաւառում մեծապէս աւելացան համաճարակային հիւանդութիւնները դիզինտերիան, բծաւոր տիֆը եւ խոլերան, որ այստեղ էին յայտնուել Երեւանից ու Էջմիածնից եկած արեւմտահայերի միջոցով: Ըստ Ատրպետի Օգոստոսի 27ից մինչեւ Նոյեմբերի 1ը Քաղաքների Միութեան Ալեքսանդրապոլի հիւանդանոցն այս ախշտանիշերով ընդունել էր 518 հիւանդ: Յաջորդ երկու ամիսների ընթացքում սրանցից 121ը մահացել էր, այդ թւում 90ը Սեպտեմբերին, 31ը Հոկտեմբերին[27]: Հարկ է նշել, որ Ալեքսանդրապոլի Գաւառում, շնորհիւ հասարարական կազմակերպութիւնների եւ յատկապէս Քաղաքների Միութեան Կոմիտէի կողմից բացուած հիւանդանոցներէ մահացութեան մակարդակը ընդհանուրի համեմատ խիստ ցածր էր: Համաձայն Ալեքսանդրապոլի փոխանորդ Արտակ Վարդապետի 1916 Յունիսի 16ին Ամենայն Հայոց Կաթողիկոս Գէորգ Ե.ին ներկայացրած տեղեկագրի ցրտից, սովից ու համաճարակային հիւանդութիւններից Ալեքսանդրապոլի Գաւառում 1915ի ընթացքում մահացել էր ընդամէնը 1164 գաղթական (այդ թւում 331ը Ալեքսանդրապոլում, իսկ 833ը գաւառի գիւղերում)[28]: Համեմատութեան համար նշենք, որ Էջմիածնում հաստատուած 32,000 գաղթականներից ըստ Իշխանեանի հաշուումների միայն 1915 Օգոստոսի վերջին տասնօրեակում սովի եւ համաճարակի զոհ էր դարձել 2135 մարդ, օրական միջին թուով 236 մարդ[29]:

Բացասական իրադարձութիւններից զատ, 1915ի ամառը նշանաւորուեց նաեւ գաղթականութեան շրջանում դպրոցական գործի կազմակերպմամբ: 8-16 տարեկան երեխաների համար Ալեքսանդրապոլ քաղաքում եւ համանուն գաւառի գիւղերում, հասարակական կազմակերպութիւնների ջանքերով բացուեցին գաղթականական առաջին դպրոցները: Դրանցից առաջինը Ալեքսանդրապոլում բացուեց Եղբայրական Օգնութեան Կոմիտէի միջոցներով Յովսէփ Միրզոյեանի կողմից 1915 Յունիսի 22ին: Իբրեւ ամառային դպրոց այն իր 280 սաներով (200

հայ, 80 յոյն) մինչեւ Սեպտեմբերի 1ը գործեց Արդութեան եւ Սէյլանեան դպրոցների շէնքում[30]: Մէկուկէսամսեայ դադարից յետոյ Հոկտեմբերի 15ին դպրոցը վերաբացուեց ունենալով 11 բաժանմունք (9 հայկական եւ 2 յունական) եւ 419 սան: Աշակերտներից 316ը հայեր էին, 54ը յոյներ, իսկ մէկը ռուս: Սրանցից 276ը ռուսահպատակ փախստականներ էին, 138ը արեւմտահայ, 2ը պարսկահայ գաղթականներ: Ռուսահպատակներից 269ը Կարսից, Օլթիից, Արդահանից եւ Սարիղամիշից էին, 6ը Արդուինից եւ Տանձուտից, մէկը Մինսկի Նահանգից: 138 արեւմտահայերից 15ը Մանազկերտից էին, 11ը Էրզրումից, 20ը Բիթլիսից, 16ը Վանից, 43ը Բուլանըղից, 14ը Մուշից: Վերջապէս, դպրոցի ռուսահպատակ սաներից 12ը երկկողմանի ծնողազուրկ էին, 20ը՝ միակողմանի, իսկ արեւմտահայերից երկկողմանի ծնողազուրկ էին 29ը, միակողմանի 48ը[31]: Մինչեւ տարեվերջ գաղթական 296 երեխաների համար դպրոցներ բացուեցին նաեւ գաւառի Մեծ Ղարաքիլիսա, Համամլի, Ղշլաղ, Բոզիգիւղ եւ Բեքանտ գիւղերում[32]:

1915 Օգոստոսին ռուսական զօրամասերը վերագրաւեցին յուլիսեան նահանջով կորցրած տարածքները, ինչը հնարաւորութիւն տուեց տասնեակ հազարաւոր արեւմտահայերի կրկին վերադառնալու հայրենի օջախներ: Այս նոր տեղաշարժը, ըստ Արտակ Վարդապետի, պիտի հնարաւորութիւն տար ձմռան նախաշէմին զգալիօրէն բեռնաթափել գաւառը գաղթականներից: Եղբայրական Օգնութեան տեղի կոմիտէի անցկացրած նոր ցուցակագրման համաձայն Ալեքսանդրապոլում եւ գաւառի 139 գիւղերում 1915 Հոկտեմբերի 1ի դրութեամբ գաղթականների թիւը նուազել էր մինչեւ 22,815 մարդ[33] (տե՛ս աղիւսակ 3):

**Աղիւսակ 3**

**1915 Հոկտեմբերի 1ի դրութեամբ Ալեքսանդրապոլ Քաղաքում եւ համանուն գաւառում հաստատուած գաղթականների ցուցակ**

| N | Բնակավայր | արակ. | իգ. | երեխ. | Ընդ. | Աշխատունակ | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | ար. 1 % |
| | **ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼ ՔԱՂԱՔ** | | | | | | |
| 1. | Եղբայրական Օգնութեան 12 հանրակացարաններ | 435 | 968 | 1201 | 2604 | 280 | 10.7 |
| 2. | Քաղաքի մասնաւոր տներ | 701 | 1582 | 1957 | 4240 | 464 | 10.9 |
| **ԸՆԴԱՄԷՆԸ** | | **1136** | **2550** | **3158** | **6844** | **744** | **10.8** |
| | **ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԳԱՒԱՌԻ ԳԻՒՂԵՐ** | | | | | | |
| 1. | Ղափլի | 68 | 63 | 116 | 247 | 57 | 23 |
| 2. | Քեայայի | 23 | 30 | 32 | 85 | 20 | 23.5 |
| 3. | Ղողաչ | 17 | 12 | 22 | 51 | 9 | 17.6 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| **4.** | Չիրպիլի | 26 | 30 | 65 | 121 | 14 | 11.5 |
| **5.** | Դահարլի | 51 | 57 | 69 | 177 | 24 | 13.5 |
| **6.** | Աղին | 41 | 53 | 79 | 173 | 35 | 20.2 |
| **7.** | Տաւշանղշլաղ | 58 | 66 | 110 | 234 | 45 | 19.2 |
| **8.** | Ղազարապատ | 36 | 45 | 78 | 159 | 23 | 14.4 |
| **9.** | Բաբուռլի | 14 | 11 | 38 | 62 | 9 | 14.5 |
| **10.** | Սուանվերդի | 62 | 83 | 126 | 271 | 50 | 18.4 |
| **11.** | Բուղդաշէն | 23 | 27 | 49 | 99 | 22 | 22.2 |
| **12.** | Ալեքսանդրովկա | 15 | 22 | 22 | 59 | 12 | 20.3 |
| **13.** | Ղաշավանք | 46 | 42 | 60 | 148 | 30 | 20.2 |
| **14.** | Ենիքէոյ | 22 | 37 | 44 | 103 | 19 | 18.4 |
| **15.** | Ղըլիջ-Եաթաղ | 38 | 50 | 70 | 158 | 28 | 17.7 |
| **16.** | Բոզդողան | 49 | 49 | 91 | 189 | 35 | 18.5 |
| **17.** | Ղըրխ | 32 | 34 | 56 | 122 | 25 | 20.4 |
| **18.** | Զարինջա | 30 | 51 | 74 | 155 | 23 | 14.8 |
| **19.** | Բազարխանա | 57 | 62 | 92 | 211 | 47 | 22.2 |
| **20.** | Տաշղայա | 57 | 59 | 100 | 216 | 54 | 25 |
| **21.** | Մուսլուխլի | 45 | 47 | 70 | 162 | 38 | 23.4 |
| **22.** | Փիրթիքեան | 21 | 21 | 29 | 71 | 16 | 22.5 |
| **23.** | Աղիեաման | 41 | 46 | 61 | 148 | 32 | 21.6 |
| **24.** | Սոգյութլի | 80 | 102 | 124 | 306 | 46 | 15 |
| **25.** | Շիրվանջուղ | 30 | 47 | 73 | 150 | 23 | 15.3 |
| **26.** | Բողազքեսան | 29 | 35 | 56 | 120 | 26 | 21.6 |
| **27.** | Մոլլա Գէօկչա | 56 | 94 | 100 | 250 | 36 | 14.4 |
| **28.** | Արմութլի | 26 | 28 | 44 | 98 | 15 | 15.3 |
| **29.** | Սոնգուռլի | 36 | 48 | 66 | 150 | 17 | 11.3 |
| **30.** | Ճլովխանլի | 15 | 28 | 49 | 92 | 12 | 13 |
| **31.** | Ղփչաղ | 29 | 31 | 65 | 125 | 24 | 19.2 |
| **32.** | Խաչաքիյիսա | 4 | 10 | 16 | 30 | 4 | 13.3 |
| **33.** | Բաշգիւղ | 26 | 34 | 62 | 122 | 19 | 15.5 |
| **34.** | Մեծ Արըխուալի | 41 | 44 | 61 | 146 | 35 | 23.9 |
| **35.** | Փոքր Արըխուալի | 22 | 27 | 37 | 86 | 18 | 20.9 |
| **36.** | Նորաշէն | 32 | 35 | 51 | 118 | 23 | 19.4 |
| **37.** | Գէօզալդարա | 32 | 37 | 50 | 119 | 28 | 23.5 |
| **38.** | Արթիկ | 72 | 88 | 156 | 316 | 60 | 18.9 |
| **39.** | Փոքր Բեքանդ | 39 | 45 | 70 | 154 | 27 | 17.5 |
| **40.** | Մեջիթլի | 33 | 40 | 73 | 146 | 23 | 15.7 |
| **41.** | Թոմարտաշ | 24 | 27 | 80 | 131 | 20 | 15.2 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| **42.** | Մ ահմուդջուղ | 50 | 64 | 108 | 222 | 30 | 13.5 |
| **43.** | Թափադոլլակ | 21 | 40 | 74 | 135 | 13 | 9.6 |
| **44.** | Ղազանչի | 24 | 31 | 66 | 121 | 18 | 14.8 |
| **45.** | Քեաֆթառլի | 18 | 15 | 53 | 86 | 21 | 24.4 |
| **46.** | Ղասմալի | 10 | 22 | 35 | 67 | 6 | 8.9 |
| **47.** | Ղուլիջան | 24 | 46 | 31 | 101 | 12 | 11.8 |
| **48.** | Եզանլար | 40 | 70 | 44 | 154 | 26 | 16.8 |
| **49.** | Ղոլաթ | 14 | 17 | 16 | 47 | 5 | 10.6 |
| **50.** | Իլխիաբի | 34 | 44 | 46 | 124 | 18 | 14.5 |
| **51.** | Թալիբօղլի | 15 | 18 | 37 | 70 | 13 | 18.5 |
| **52.** | Իմիրխանլի | 20 | 22 | 38 | 80 | 13 | 16.2 |
| **53.** | Հոռոմ | 28 | 51 | 97 | 176 | 14 | 7.9 |
| **54.** | Սարիբաշ | 11 | 11 | 35 | 57 | 8 | 14 |
| **55.** | Ղութնիղշլաղ | 1 | 2 | 1 | 4 | ---- | ---- |
| **56.** | Դանագիրմազ | 47 | 48 | 53 | 148 | 33 | 22.2 |
| **57.** | Ղոնդաղսազ | 2 | 2 | 5 | 9 | 2 | 22.2 |
| **58.** | Միրաք | 1 | 2 | 3 | 6 | 1 | 16.6 |
| **59.** | Մելիքքենդ | 18 | 21 | 33 | 72 | 11 | 15.2 |
| **60.** | Ջառջառիս | 8 | 9 | 17 | 34 | 3 | 8.8 |
| **61.** | Ջանգիթափա | 8 | 11 | 14 | 33 | 4 | 12.1 |
| **62.** | Հաջիխալիլ | 33 | 34 | 42 | 109 | 17 | 15.5 |
| **63.** | Ղըրխդագիրման | 31 | 36 | 44 | 111 | 23 | 20.7 |
| **64.** | Ախղուլի | 24 | 24 | 44 | 92 | 9 | 9.7 |
| **65.** | Քեշիշքենդ | 5 | 9 | 23 | 37 | 5 | 13.5 |
| **66.** | Մունջուխլի | 16 | 18 | 28 | 62 | 10 | 16.1 |
| **67.** | Փամպ Հայկական | 9 | 21 | 28 | 58 | 6 | 10.3 |
| **68.** | Դիրաքլար | 23 | 33 | 50 | 106 | 12 | 11.3 |
| **69.** | Քեափանակ Փոքր | 8 | 11 | 27 | 46 | 5 | 10.8 |
| **70.** | Քեափանակ Մեծ | 39 | 41 | 73 | 153 | 25 | 16.3 |
| **71.** | Չրախլի | 52 | 63 | 90 | 205 | 35 | 17 |
| **72.** | Խանուալի | 6 | 9 | 13 | 28 | 5 | 17.8 |
| **73.** | Դուզքենդ | 88 | 120 | 90 | 298 | 38 | 12.7 |
| **74.** | Հաջինազար-Ղուլի | 59 | 60 | 81 | 200 | 44 | 22 |
| **75.** | Ջաջուռ | 98 | 95 | 91 | 284 | 39 | 13.7 |
| **76.** | Աղքիլիսա | 16 | 22 | 13 | 51 | 9 | 17.6 |
| **77.** | Սարիար Փոքր | 40 | 52 | 31 | 123 | 22 | 17.8 |
| **78.** | Արըխուալ ի Յրդ | 54 | 72 | 50 | 176 | 24 | 13.6 |
| **79.** | Դարբանդ | 25 | 25 | 24 | 74 | 7 | 9.4 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| **80.** | Թոփառլի | 53 | 55 | 57 | 165 | 21 | 12.7 |
| **81.** | Ղոնախղռան | 71 | 80 | 57 | 208 | 25 | 12 |
| **82.** | Սարիար Փոքր | 23 | 26 | 25 | 74 | 9 | 12.1 |
| **83.** | Ալիխան | 15 | 16 | 10 | 41 | 5 | 12.1 |
| **84.** | Սամոլի | 2 | 4 | 1 | 7 | 2 | 28.5 |
| **85.** | Ղարաքիլիսա Նոր | 5 | 4 | 6 | 15 | ---- | ---- |
| **86.** | Բաշգիւղ 2րդ | 4 | 18 | 17 | 49 | 3 | 6.1 |
| **87.** | Ղանլիջա Վերին | 29 | 40 | 57 | 126 | 17 | 13.4 |
| **88.** | Ղանլիջա Ներքին | 15 | 16 | 9 | 40 | 11 | 27.5 |
| **89.** | Կապս | 18 | 13 | 25 | 56 | 5 | 8.9 |
| **90.** | Ջելաբկեչուտ | 13 | 18 | 25 | 56 | 13 | 23.2 |
| **91.** | Ալահքիլիսա | 7 | 9 | 14 | 30 | 3 | 10 |
| **92.** | Բանդենան Նոր | 7 | 9 | 11 | 27 | 5 | 18.5 |
| **93.** | Բանդեւան Հին | 10 | 16 | 22 | 48 | 4 | 8.3 |
| **94.** | Ղարաքիլիսա Իլլի | 7 | 17 | 17 | 41 | 2 | 4.8 |
| **95.** | Թաքնալի | 12 | 21 | 27 | 60 | 11 | 18.3 |
| **96.** | Գիւրջի-Եոլ | 15 | 20 | 27 | 62 | 13 | 20.9 |
| **97.** | Փալութլի | 16 | 21 | 66 | 103 | 14 | 13.5 |
| **98.** | Քեթի Փոքր | 3 | 6 | 16 | 25 | 3 | 12 |
| **99.** | Քեթի Մեծ | 19 | 24 | 45 | 88 | 16 | 18.1 |
| **100.** | Օրթաքիլիսա | 14 | 16 | 24 | 54 | 9 | 16.6 |
| **101.** | Չոռլի | 2 | 3 | 4 | 9 | 1 | 11.1 |
| **102.** | Ճզխլար | 10 | 10 | 10 | 30 | 6 | 20 |
| **103.** | Գիւլլիբուլաղ | 10 | 16 | 13 | 39 | 7 | 17.9 |
| **104.** | Սալուտ | 5 | 6 | 9 | 20 | 3 | 15 |
| **105.** | Բոզեոխուշ | 11 | 20 | 18 | 49 | 7 | 14.2 |
| **106.** | Դուզ Խարաբա[34] | 21 | 25 | 31 | 77 | 15 | 19.4 |
| **107.** | Չիֆթալի | 19 | 26 | 30 | 75 | 18 | 24 |
| **108.** | Ղզըլքիլիսա Նոր | 6 | 13 | 10 | 29 | 3 | 10.3 |
| **109.** | Ղզըլղոչ | 26 | 29 | 35 | 90 | 14 | 15.5 |
| **110.** | Ղուրթնիբուլաղ | 17 | 15 | 18 | 50 | 11 | 22 |
| **111.** | Շիշթափա | 11 | 8 | 11 | 30 | 4 | 13.3 |
| **112.** | Ղազանչի | 13 | 17 | 29 | 59 | 6 | 10.1 |
| **113.** | Դարաքէոյ | 2 | 2 | 10 | 14 | 2 | 14.2 |
| **114.** | Քոռաղբիւր | 4 | 13 | 25 | 42 | 2 | 4.7 |
| **115.** | Ղարաքիլիսա Մեծ | 134 | 184 | 261 | 579 | 66 | 11.3 |
| **116.** | Եաղուբլի | 31 | 31 | 38 | 100 | 17 | 17 |
| **117.** | Ղշլաղ | 18 | 55 | 45 | 118 | 10 | 8.4 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| **118.** | Սարմուսախլի | 12 | 19 | 22 | 53 | 6 | 11.3 |
| **119.** | Հաջիղարա | 18 | 21 | 21 | 60 | 14 | 23.3 |
| **120.** | Դարբազ | 22 | 34 | 33 | 89 | 5 | 5.6 |
| **121.** | Բզովդալ | 11 | 18 | 24 | 53 | 4 | 7.5 |
| **122.** | Բոզիքենդ | 38 | 47 | 96 | 181 | 12 | 6.6 |
| **123.** | Համամլի | 91 | 131 | 171 | 393 | 30 | 7.6 |
| **124.** | Չոտուր | 16 | 20 | 18 | 54 | 6 | 11.1 |
| **125.** | Վարդնով | 48 | 59 | 59 | 166 | 17 | 10.2 |
| **126.** | Ղաչաղան | 23 | 21 | 23 | 67 | 8 | 11.9 |
| **127.** | Չիկդամալ | 7 | 7 | 16 | 30 | 3 | 10 |
| **128.** | Սպիտակ | 34 | 37 | 28 | 99 | 14 | 14.1 |
| **129.** | Նալբանդ | 29 | 42 | 53 | 124 | 12 | 9.6 |
| **130.** | Թափանլի | 33 | 33 | 56 | 122 | 13 | 10.6 |
| **131.** | Աղբուլաղ | 50 | 41 | 69 | 160 | 21 | 13.1 |
| **132.** | Ղալթախչի | 66 | 83 | 82 | 231 | 30 | 12.9. |
| **133.** | Աւդիբեկ | 57 | 77 | 84 | 218 | 24 | 11 |
| **134.** | Գիւղ եոխուշ | 17 | 17 | 39 | 73 | 7 | 9.5 |
| **135.** | Ղարաբոյա | 15 | 18 | 28 | 61 | 7 | 11.4 |
| **136.** | Ղարալ | 47 | 53 | 73 | 173 | 19 | 10.9 |
| **137.** | Բեքանդ Մեծ | 119 | 134 | 177 | 430 | 30 | 6.9 |
| **138.** | Գոգարան | 50 | 44 | 68 | 162 | 21 | 12.9 |
| **139.** | Գիւլլիջա | 40 | 49 | 68 | 157 | 17 | 10.8 |
| **ԸՆԴԱՄԷՆԸ** | | **4059** | **5015** | **6897** | **15,971** | **2412** | **15.1** |
| **ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐԸ** | | **5195** | **7565** | **10,055** | **22,815** | **3156** | **13.8** |

Սակայն, գաղթականական բեռնաթափումը կրեց միայն ժամանակաւոր բնոյթ: Երեւանում եւ Էջմիածնում տեղաւորուած արեւմտահայութեան շրջանում դեռեւս Յուլիսի վերջերից ծայր առած համաճարակային հիւանդութիւնների եւ դրանցով պայմանաւորուած մահացութեան ահռելի չափսերի դէմ պայքարելու համար տեղի Եղբայրական Օգնութեան Կոմիտէի առաջարկութեամբ որոշուեց գաղթականներին տեղափոխել նահանգի միւս գաւառներ: Արդիւնքում 1915 Հոկտեմբերի 20ին Ալեքսանդրապոլ քաղաքում եւ գաւառի 139 գիւղերում գաղթականների թիւը կրկին հասաւ 26,000ի[35]:

Յաջորդ երկու տասնօրեակների ընթացքում Երեւանից Ալեքսանդրապոլի Գաւառի Մահմուդջուղ, Տաշղալա, Մասլուխլի, Ղըրխ, Փոքր Ղարաքիլիսա, Արթիկ եւ Քեաֆթառլի գիւղեր տեղափոխուեցին նախկինում Բուլանըղից, Մանազկերտից, Ալաշկերտից եւ Բասէնից գաղթած եւս 1261 արեւմտահայեր[36]: Իսկ արդէն Դեկտեմբերին, ըստ իշխան Ալեքսանդր Միխայիլովիչ Արղութեան-Երկայ-

նաբազուկի Քաղաքների Միութեան Կովկասեան Բաժանմունք ներկայացրած զեկուցագրի գաղթականներով բնակեցուեցին Ալեքսանդրապոլի Գաւառի բոլոր 186 գիւղերը: Միայն Փամբակի 26 գիւղերում տեղաւորուել էր 4000 արեւմտահայ: Սրանցից 400ին Եղբայրական Օգնութեան Մեծ Ղարաքիլիսայի Կոմիտէն կարողացաւ ապահովել աշխատանքով. 100ն աշխատում էր տեղի պղնձի հանքերում, իսկ 300ը երկաթգծի շինարարութեան վրայ: Մնացած 3600ն իր գոյութիւնն էր պահպանում նպաստների շնորհիւ[37]:

Ցաւօք, գաղթականութեանը վերաբերող վիճակագրական նիւթի առատութիւնը յատուկ է միայն 1915ին: 1916ից սկսած Ալեքսանդրապոլի Գաւառում հաստատուածների վերաբերեալ վիճակագրական տեղեկութիւններն արխիւային վաւերագրերում եւ մամուլի էջերում տարէցտարի դառնում են կցկտուր, իսկ յաճախ նաեւ իրարամերժ, ինչն էլ աւելի է բարդացնում նորեկների թուաքանակի եւ յատկապէս տեղաշարժի ուսումնասիրութիւնը: Օրինակ, 1916 Փետրուարի 14ին Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութեան կողմից անցկացուեց գաղթականութեան նոր ցուցակագրում, ըստ որի, Ալեքսանդրապոլի Գաւառում կար 32,000 գաղթական[38]: Չորս ամիս անց Յունիսի 20ին, ըստ տեղի թեմական առաջնորդ Արտակ Վարդապետի կաթողիկոսին ներկայացրած հաշուետուութեան սրանցից մնացել էր 19.799ը (4739 տղամարդ, 6122 կին, 8938 երեխայ)[39]: Թէ ո՞րն էր գաղթականների թուի նուազման պատճառը, եւ ի՞նչ ուղղութեամբ նրանք հեռացան այսօր յայտնի չէ:

**ՈՐԲԱՆՈՑԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ:**

Աղբիւրներում համեմատաբար լաւ են լուսաբանուած 1916 ից գաւառում մեծ թափ ստացած որբախնամ աշխատանքները: Առաջին երեք որբանոցները բացուել էին դեռեւս 1915 Նոյեմբերին: Դրանք են Ալեքսանդրապոլի «Եղբայրական Օգնութեան Երիտասարդական Միութեան» որբանոցը, որ 1916 Փետրուարից վերանուանուեց «Միացեալ Ընկերութեան N 1 Որբանոց»[40], Մեծ Ղարաքիլիսայի «Պետրոգրադի Հայկական Կոմիտէի Որբանոց»ը եւ տիկին Իւետա Թայիրեանի որբանոցը[41]: 1916 Ապրիլի 1ին Ալեքսանդրապոլում բացուեց Պատերազմից Տուժուածներին Օգնող Հայկական Բարեգործական Ընկերութեան Կենտրոնական Կոմիտէի առաջին որբանոցը[42]: Նոյն կոմիտէի երկրորդ եւ երրորդ որբանոցները բացուեցին 1916 Յուլիսին եւ 1917 Փետրուարին[43]:

Ալեքսանդրապոլում եւս երկու որբանոցներ բասէնցի եւ սասունցի որբերի համար բացուեցին Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութեան Ալեքսանդրապոլի ճիւղի կողմից 1916 Յունիսի 7ին[44] եւ 27ին[45]: 1916ին քաղաքում գործում էր նաեւ «Քոսոտ-Քաչալ» երեխաների որբանոցը[46], իսկ 1917 Յունուարից Լոնդոնի Կարմիր Խաչի Կոմիտէի «Ռոբինզոն» որբանոցը սասունցիների համար[47]:

Ռուսական զօրքերի 1916 յուլիսեան-թուով չորրորդ-նահանջը պատճառ դարձաւ գաղթականութեան նոր ալիքի:

Դէպի Ալեքսանդրապոլի Գաւառ շարժուող արեւմտահայերի առաջին խմբերն այս անգամ հաստատուեցին Փամբակում: Եթէ 1916 Յունիսի դրութեամբ շրջանի 26 գիւղերում կար 3884 գաղթական (941 տղամարդ, 1133 կին եւ 1810 երեխայ)[48], ապա Օգոստոսին այդ թիւը հասաւ 4475ի (1060 տղամարդ, 1334 կին, 2081 երեխայ)[49]: Սրանցից 284ին Եղբայրական Օգնութեան տեղի Կոմիտէն ապահովեց աշխատանքով, իսկ 4191 ին նպաստով[50]: Օգոստոսին Ալեքսանդրապոլ եւ շրջակայ գիւղեր տեղափոխուեցին նաեւ 8000 կիսամերկ ու սոված սասունցիներ[51]: Սասունցիների ներգաղթը շարունակուեց մինչեւ տարեվերջ: Վերջին 1370 հոգին Արեւելեան Շիրակի գիւղերում հաստատուեցին Դեկտեմբերին[52]:

Թէ 1917ի ընթացքում եւ 1918ի առաջին երեք ամիսներին արեւմտահայութեան ներգաղթը դէպի Ալեքսանդրապոլի Գաւառ ի նչ ծաւալներ է ընդունել ո չ արխիւային վաւերագրերում, եւ ոչ էլ ժամանակի մամուլի էջերում մեզ գտնել չյաջողուեց: Ալեքսանդրապոլի գաղթականական գործերով զբաղուող հաստատութիւնների կողմից ընտրուած պատգամաւորներ Սմբատ Տէր-Գրիգորեանի եւ Սմբատ Բորոյեանի Գէորգ Ե. Կաթողիկոսին ներկայացրած հաշուետուութիւնից յայտնի է միայն, որ 1917 Սեպտեմբերի 20ի դրութեամբ գաւառում - բացի որբանոցների սաներից - կար 25,754 արեւմտահայ գաղթական (14,333 արական եւ 11,421 իգական սեռերից), այդ թւում 1-4 տարեկան 1358 երեխայ, 5-14 տարեկան 2873 անչափահաս եւ 963 ծեր: Նոյն հաշուետուութեան համաձայն 1915-1917ի ընթացում գաւառն ընդունել, նիւթական օժանդակութիւն յատկացրել ու ճանապարհել էր մօտ 85-95,000 գաղթականի[53]:

**ՆՈՐ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ:**

1918ի գարնանը տարածաշրջանում ռազմա-քաղաքական իրավիճակը կտրուկ փոխուեց ի վնաս հայ ժողովրդի: Բրեստ-Լիտովսկի Պայմանագրով Խորհրդային Ռուսաստանը դուրս եկաւ պատերազմից: Անդրկովկասեան Սէյմը չճանաչելով հաշտութեան պայմանները, փորձեց Թուրքիայի հետ Տրապիզոնում առանձին բանակցութիւններ վարել, սակայն յաջողութեան չհասաւ, իսկ Ապրիլի 1ին սկսուած թուրք-անդրկովկասեան պատերազմը հաշուած օրերի ընթացքում վերածուեց թուրքական զօրքերի յաղթարշաւի: Թուրքական յարձակումը հայութեան շրջանում կրկին խուճապ առաջացրեց առիթ տալով նոր քառասային տեղաշարժի:

Փախստականների առաջին խմբերն Ալեքսանդրապոլ հասան Մարտին[54], սակայն զանգուածային բնոյթ գաղթն ընդունեց Ապրիլի 12ից յետոյ, երբ Սէյմի ապաշնորհութեան պատճառով Կարսն առանց դիմադրութեան յանձնուեց թուր-

քերին: Ըստ Կարսի Շրջանային Կոմիսար Զամոյեանի Անդրկովկասեան Սէյմ ուղարկած կանխատեսումների մինչեւ 1918 Մայիսի 1ը Բասէնի եւ Կարսի շրջաններից Ալեքսանդրապոլի Գաւառի գիւղեր կարող էին անցնել 200.000 փախստականներ[55]: Սրանց մի մասը, ով կը փրկէր իր ունեցուածքն ու անասուններին կը փորձի Լոռիով ու Դիլիջանով հասնել Թիֆլիս, ապա նաեւ Հիւսիսային Կովկաս, իսկ միւս մասը, կը մնայ տեղում: Ուրեմն եւ անհրաժեշտ էր շտապ միջոցներ ձեռք առնել գաղթականների այդ հոսքն ընդունելու, սնունդով ապահովելու եւ տեղաւորելու համար, որովհետեւ հասարակական այն կազմակերպութիւնները, որոնք վերջին տարիներին զբաղուել էին նմանօրինակ խնդիրներով, գաղթականների այսպիսի քանակին օգնել ի զօրու չէին:

Թէ ապրիլեան այս օրերին փախստական քանի ընտանիք տեղափոխուեց Ալեքսանդրապոլի Գաւառ, եւ թէ քանի սը յետագայում այստեղ մնաց յայտնի չէ: 1918 Մայիսի 15ին գաւառի մեծ մասը զինակալուեց թուրքերի կողմից, եւ ալեքսանդրապոլցին ինքը դարձաւ փախստական:

**ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ:**

Ամփոփելով մեր խօսքը նշենք հետեւեալը. Առաջին Աշխարհամարտի տարիներին Ալեքսանդրապոլի Գաւառը ապաստան դարձաւ մոտ 95.000 գաղթականների: Նրանց առաջին խմբերն այստեղ հասան 1914ի վերջերին գերազանցապէս Կարսի, Կաղզուանի, Օլթիի, Արդահանի եւ Սարիղամիշի գաւառներից: Յաջորդ ամիսների ընթացքում ներգաղթն արդէն Պարսկաստանից եւ Արեւմտեան Հայաստանից ընդունեց զանգուածային բնոյթ: Եթէ 1915 Հոկտեմբերի 1ին գաւառում կար 22,815 գաղթական, ապա արդէն 1916 Յունուարի 3ին այդ թիւը հասաւ 32.000ի: Հաշուի առնելով 1918ի ապրիլեան դէպքերը, երբ Կարսը յանձնուեց թուրքերին, հակուած ենք ենթադրելու, որ հաշուած շաբաթների ընթացքում նորեկների թիւը գաւառում կը կրկնապատկուէր, սակայն ալեքսանդրապոլցին ինքը Մայիսին, փախստական դարձաւ:

## ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Հայաստանի Ազգային Արխիւ (ՀԱԱ), ֆոնդ 57, ցուցակ 2, գործ 1311, թթ. 23-24: Որպէս կանոն, իւրաքանչիւր ռուս-թուրքական պատերազմ ուղեկցւում էր հայերի գաղթով գոնէ սահմանամերձ շարջաններից: Այսինքն, պատերազմը սկսուելու պահին արդէն Երեւանի Նահանգում գիտէին, որ Կովկասեան Ճակատում առաջին կրակոցից յետոյ սկսուելու է հայերի տեղաշարժ: Դրա համար էլ նախապէս էին պատրաստւում:

2. Նոյն, գործ 1242, թ. 1:
3. Նոյն, թ. 3:
4. ՀԱԱ ֆոնդ 50, ցուցակ 1, գործ 20, թթ. 12, 139, գործ 21, թթ. 141-165:
5. Նոյն, գործ 20, թթ. 151-158:
6. Նոյն, թթ. 149-252:
7. Նոյն, թթ. 164-165:
8. Նոյն, թթ. 149-252:
9. Նոյն, թթ. 254-256:
10. Գաւառի Ձայն, Ալեքսանդրապոլ, 1915, N 1, 11 Յունուարի, էջ 3:
11. Հ.Սարգսեան,Արեւմտահայերի Գաղթը Արեւելեան Հայաստան 1915թ. Յեւոյ, Հայոց Ցեղասպանութեան Պատճառները Եւ Դասերը, Մաս 3, Երեւան, ԵՊՀ Հրատ., 1995, էջ 9:
12. Մշակ, Թիֆլիս, 1915, N 9, 16 Յունուարի, էջ 3-4:
13. Գաւառի Ձայն, 1915, N 1, 11 Յունուարի, էջ 3:
14. Մշակ, 1915, N 4, 9 Յունուարի, էջ 3:
15. Մշակ, 1915, N 54, 13 Մարտի, էջ 2:
16. ՀԱԱ ֆոնդ 50, ցուցակ 1, գործ 21, թթ. 11-140:
17. ՀԱԱ, ֆոնդ 57, ցուցակ 2, գործ 1242, թ. 2. նաեւ Արեւմտահայ Գաղթականութիւնը Ալեքսանդրապոլի Գաւառում 1914-1922թթ., Փաստաթղթերի Ժողովածու, խմբ. Կ. Ալեքսանեան, Երեւան, «Հայկարլի» Հրատ., 2012, փաստ. N4, էջ 48-54:
18. ՀԱԱ ֆոնդ 50, ցուցակ 1, գործ 21, թթ. 251-258:
19. Նոյն, թթ. 267-280:
20. Մանրամասն տե՛ս Ալեքսանդրապոլի Գաւառը Վիճակագրական Նիւթերում (XIXդ.-XXդ. սկիզբ), Փաստաթղթերի Եւ Նիւթերի Ժողովածու, աշխատասիրութեամբ Ա. Հայրապետեանի, Երեւան, ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» Հրատ., 2011, էջ 232-235:
21. Odnodevnaya Perepis Bejentsev Iz Turtsii, Persii I Iz Mest, Pogranichnikh S Turtsey (Armian, Aysorov, Grekov, I Pr.) 1914-1915gg, Perepis Proizvedena 30-ogo Yanvaria 1915g.(Գաղթականութեան միօրեայ ցուցակագրում Թուրքիայից, Պարսկաստանից եւ Թուրքիայի սահմանամերձ շրջաններից (հայեր, ասորիներ, յոյներ եւն.) 1914-1915թթ.: Ցուցակագրումը կատարուած է 30 Յունուար 1915ին), Երեւան, էջ 26-31:
22. ՀԱԱ, ֆոնդ 50, ցուցակ 1, գործ 20, թթ. 1-267, գործ 21, թթ. 1-282:
23. Մշակ, 1915, N 100, 13 Մայիսի, էջ 3:
24. Մշակ, 1915, N 204, 18 Սեպտեմբերի, էջ 2-3:

25. Մշակ, 1915, N 187, 26 Օգոստոսի, էջ 3. նաեւ Համբաւաբեր, Թիֆլիս, 1916, N 42, 16 Հոկտեմբերի, էջ 1328:
26. Kratskie Svedenia O Volne Bejentsev Iz Turetskoy Armenii V Yule 1915g. I O Merakh, Prinyatikh Kavkazskim Komitetom Soyuza Gorodov Dlya Borbi S Epidemiey Sredi Nikh (Համառոտ տեղեկութիւններ Թուրքահայաստանից 1915 Յուլիսին գաղթականութեան ալիքի եւ նրանց շրջանում համաճարակի դէմ պայքարելու համար Քաղաքների Միութեան Կովկասեան Կոմիտէի ձեռնարկած միջոցների մասին), Թիֆլիս, 1915, էջ 26:
27. Մշակ, 1915, N 249, 10 Նոյեմբերի, էջ 3:
28. ՀԱԱ, ֆոնդ 57, ցուցակ 2, գործ 1306, թ. 3-7:
29. Մշակ, 1915, N 203, 17 Սեպտեմբերի, էջ 2: Ի դէպ, 1915 Օգոստոսի վերջին տասնօրեակում էջմիածնում մահացածների թիւը հաշուելիս Ա-Դօն նշում է 2613 մարդ (Ա-Դօ, Մեծ Դէպքերը Վասպուրականում 1914-1915թթ., Երեւան, «Լոյս» Հրատ., 1917, էջ 485):
30. Գաւառի Ձայն, Ալեքսանդրապոլ, 1916, N 3, 23 Յունուարի, էջ 2. նաեւ Հորիզոն, Թիֆլիս, 1916, N 48, 2 Մարտի, էջ 3-4:
31. ՀԱԱ, ֆոնդ 57, ցուցակ 2, գործ 1306, թթ. 8-9. նաեւ Արեւմտահայ Գաղթականութիւնը Ալեքսանդրապոլի, փաստ. N 18, էջ 78-82:
32. Մշակ, 1916, N 210, 22 Սեպտեմբերի, էջ 3:
33. Ալեքսանդրապոլ քաղաքում եւ համանուն գաւառում հաստատուած արեւմտահայ գաղթականութեան ցուցակը կազմուել է Արտակ Վարդապետի կողմից ըստ Ամենայն Հայոց Հայրապետ Գէորգ Ե.ի 24.11.1915ի կարգադրութեան (ՀԱԱ, ֆոնդ 57, ցուցակ 2, գործ 1287, թթ. 3-5):
34. Արխիւային վաւերագրերում գիւղը մինչեւ Ի. դարասկիզբ յիշատակւում է Ղայդուլի Դուզքենդ անունով:
35. Kratkie Svedeniya O Polojenii Bejentsev Na Kavkaze I Okazannoy Im Soyuzom Gorodov Pomoshi Za Vremia S 20ogo Sentiabrya po 1oye Noyabrya 1915g. (Համառոտ տեղեկութիւններ Կովկասում գաղթականութեան վիճակի, եւ Սեպտեմբերի 20ից մինչեւ 1 Նոյեմբեր 1915 ժամանակամիջոցին Քաղաքների Միութեան նրանց ցուցաբերած օգնութեան մասին), Հրատ. 2, Թիֆլիս 1915, էջ 12. նաեւ Մշակ, 1915, N 229, 17 Հոկտեմբերի, էջ 3:
36. Մշակ, 1915, N 251, 12 Նոյեմբերի, էջ 3:
37. Մշակ, 1915, N 271, 8 Դեկտեմբերի, էջ 3:
38. ՀԱԱ, ֆոնդ. 28, ցուցակ 1, գործ 429, թ. 1-7:
39. ՀԱԱ ֆոնդ 57, ցուցակ 2, գործ 1306, թ. 10:
40. ՀԱԱ ֆոնդ 28, ցուցակ 1, գործ 506, թ.125:

41. Մշակ, 1915, N 271, 8 Դեկտեմբերի, էջ 3:
42. ՀԱԱ, ֆոնդ 28, ցուցակ 1, գործ 506, թ. 116:
43. Նույն, գործ 506, թ. 123:
44. Նույն, գործ 428, թ. 15:
45. Նույն, գործ 506, թ. 129:
46. Նույն, գործ 547, թ. 4-5:
47. Նույն, գործ 901, թ. 2:
48. Աշխատանք, Երեւան, 1916, N 17, 29 Յունիսի, էջ 4:
49. ՀԱԱ ֆոնդ 50, ցուցակ 1, գործ 28, թթ. 149:
50. ՀԱԱ ֆոնդ 50, ցուցակ 1, գործ 18, թթ. 148:
51. Մշակ, 1916, N 244, 1 Նոյեմբերի, էջ 3:
52. Մշակ, 1916, N 282, 18 Դեկտեմբերի, էջ 3:
53. ՀԱԱ ֆոնդ 57, ցուցակ 2, գործ 1311, թ. 23-24:
54. Մշակ, 1918, N 69, 1 Ապրիլի, էջ 2:
55. Մշակ, 1918, N 81, 17 Ապրիլի, էջ 2:

**Պէյրութի Հայկազեան համալսարանի հայագիտական ամբիոն,**
**«Հայկազեան հայագիտական Հանդէս», հ. ԼԵ (35), Պէյրութ, Լիբանան, 2015, էջ 249-271**

# ԱՐԵՎԵԼԱՀԱՅ ՄԱՄՈՒԼՆ ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԳԱՎԱՌՈՒՄ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Առաջին համաշխարհային պատերազմը դարձավ հայ ժողովրդի պատմության ամենահակասական էջերից մեկը: Կոչված լինելով իրագործելու վերջինիս ամենաբաղձալի երազանքները՝ այն իրականում մարդկային, նյութական ու տարածքային անդառնալի կորուստներ պատճառեց հայությանը. թուրքական յաթաղանին զոհ գնաց 1.5 միլիոն մարդ, մի ողջ ժողովուրդ հայրենազրկվեց: Փրկվածների մի մասը Մերձավոր Արևելքի, Եվրոպայի և Ամերիկայի երկրներում ձևավորեց հայկական սփյուռքը, ևս 300.000 մարդ անցավ Արևելյան Հայաստան և Անդրկովկասի տարբեր շրջաններ:

Հայոց Մեծ եղեռնի պատմությունը հայ պատմագիտության թերևս ամենաուսումնասիրված ոլորտներից մեկն է: Այդուհանդերձ որոշ հիմնահարցեր, ինչպես, օրինակ, Երևանի նահանգի տարբեր գավառներում հաստատված փախըստական-գաղթականների թիվը, էթնոկոնֆեսիոնալ կազմը, ըստ բնակության նոր վայրերի նորեկների տեղաբաշխումը, կամ թե տեղի բնակչության վիճակագրական պատկերի վրա ներգաղթի թողած ազդեցությունը, կարոտ են առավել հիմնավոր ուսումնասիրության[1]:

Այս հարցում մեծ դերակատարություն կարող են ունենալ պարբերական մամուլը և հատկապես թերթերը: «Գաւառի ձայն»-ը, «Աշխատանք»-ը, «Հորիզոն»-ը,«Համբաւաբեր»-ը կամ «Մշակ»-ը, ի տարբերություն արխիվային չոր փաստական նյութի, իրենց պաշտոնական տեղեկատվությամբ ու անհամեմատ կենդանի թղթակցություններով ուղղակի վերածվում են ժամանակի պատմաքաղաքական անցուդարձը լուսաբանող գրավոր սկզբնաղբյուրների՝ ուսումնասիրողին ընձեռելով համեմատություններ ու վերլուծություններ կատարելու լայն հնարավորություն:

Ռազմական գործողությունները Կովկասյան ճակատում սկսվեցին 1914թ. նոյեմբերի 2- ին: Հաշված օրերի ընթացքում ռուսական զորքերը գրավեցին Խոյը, Թավրիզը, Զևինը, Ղարաքիլիսան, Խորասանը, Բայազետը, Դիադին, Ալաշկերտը,

[1] Անցած հարյուրամյակի ընթացքում նույնիսկ փորձ չի արվել հստակ տարբերակել գաղթականությունն ըստ կատեգորիաների՝ արևմտահայ, արևելահայ և պարսկահայ, կամ թե՝ փախստականներ ու գաղթականներ: Մինչդեռ 1914-1915թթ. մենք գործ ունենք միանգամից երեք կատեգորիաների հետ, 1916-1917թթ.՝ միայն պարսկահայերի և արևմտահայերի հետ, իսկ 1918թ.՝ գերազանցապես արևելահայերի հետ:

սակայն նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին երկու անգամ նահանջեցին, ինչը մեծ խուճապ առաջացրեց տեղի քրիստոնյա ազգաբնակչության շրջանում ստիպելով տասնյակ հազարավոր մարդկանց շարժվել դեպի Արևելյան Հայաստան: Առաջինը գաղթի ճամփան բռնեցին պարսկահայերը նոյեմբերի կեսերին, ապա՝ սահմանամերձ շրջանների (Կարս, Սարիղամիշ, Օլթի, Արդահան) ռուսահպատակ քրիստոնյաները, իսկ այնուհետև արևմտահայերը:

Այս կապակցությամբ Ալեքսանդրապոլում հրապարակվող «Գաւառի ձայն»-ը գրում է. «Ռուս-թուրքական պատերազմը իւր սոսկալի հետևանքներով արդեն բացել է հայ ազգի մահացու վերքերից մեկը գաղթականութիւնը: Սարսափահար հայ ժողովուրդը ստիպված է այս ցուրտ եղանակին թողնել դառն ապրուստի միջոցները և աշխատում է որոնել մի անկյուն, իր ընտանիքն ազատելու սրից ու մահից»[1]:

Պատերազմի արհավիրքներից մազապուրծ գաղթականներին ընդունելու, տեղավորելու, սնունդով ու հագուստով ապահովելու նպատակով Գնորգ Ե կաթողիկոսի կարգադրությամբ Անդրկովկասի հայաշատ գավառներում ու բնակավայրերում ստեղծվեցին «Եղբայրական օգնության» կոմիտեներ: 1914թ. հոկտեմբերի 31-ին Ալեքսանդրապոլի թեմակալ առաջնորդ Արտակ վարդապետի գլխավորությամբ կոմիտե ստեղծվեց նաև այստեղ[2]: Նոյեմբերի 2-ից իր աշխատանքներն սկսեց նաև «Ազգային կենտրոնական հանձնաժողովը»[3], որի ծավալելիք գործունեության մասին «Գաւառի ձայն»-ի Քաղաքացի ստորագրությամբ թղթակիցը գրում է. «Աղէքսանդրապօլի հայ ժողովուրդը, որը իւր չքաւոր դրութեան մեջ էլ միշտ ջերմ կարեկից է եղել հայ ժողովրդի ցաւերին, այս անգամ էլ, անշուշտ, անտարբեր չէ մնալու: Քաղաքիս հայ հասարակութիւնը արդեն կազմել է մի պաշտոնական բիւրо, որը պարտաւոր է օգնել վիրաւոր և հիւանդ զինուորներին, հայ կամաւորներին ն խնամել հայ գաղթականներին»[4]: Եվ իրոք, հաշված օրերի ընթացքում հանձնաժողովը միայն Ալեքսանդրապոլ քաղաքում 100-250 հոգանոց 18 հանրակացարան կահավորեց փախստական-գաղթականների առաջին խմբերն ընդունելու համար: Ի դեպ, նորեկները տեղաբաշխվելու էին գյուղից գյուղ, քաղաքից քաղաք տարբերակով և առայժմ՝ միայն Ալեքսանդրապոլ քաղաքում ու Արևելյան Շիրակի գյուղերում[5]:

---

[1] Գաւառի ձայն, Ալեքսանդրապօլ, 1914, N109, 23 նոյեմբերի, էջ 3:
[2] Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆոնդ 57, ցուցակ 2, գործ 1311, թթ. 23-24:
[3] Նույն հեղում, գործ 1242, թ. 1-3:
[4] Գաւառի ձայն, Աղէքսանդրապօլ, 1914, N109, 23 նոյեմբերի, էջ 3:
[5] Գաղթականության զանգվածային ներհոսքը Ալեքսանդրապոլի գավառի Փամբակի գավառակ սկսվեց միայն ռուսական զորքերի երրորդ նահանջից հետո՝ 1915թ. հուլիսին (մանրամասն տե՛ս **Հայրապետյան Ա.**, Արևմտահայ գաղթականությունն Ալեքսանդրապոլի գավառում 1914-1918թթ.,//

Հետագայում, գաղթականների թվի աճին զուգահեռ, երևան եկան նաև հասարակական այլ կազմակերպություններ, որոնց ունեցած ներդրումը գաղթականների համար հիվանդանոցներ, դպրոցներ ու որբանոցներ բացելու ուղղությամբ մեծապես լուսաբանվել է արևելահայ մամուլի էջերում:

Ալեքսանդրապոլի գավառում հաստատված փախստական-գաղթականների թվաքանակի մասին առաջին վիճակագրական տեղեկությունները արևելահայ մամուլում հայտնվեցին 1914թ. դեկտեմբերին և վերաբերում էին ռուսահպատակ հույներին: Նկարագրելով իրադրությունը ռազմաճակատում և ռուսական զորքերի 1914թ. դեկտեմբերյան նահանջի արդյունքում սահմանամերձ գոտու քրիստոնյա ազգաբնակչության շրջանում առաջացած խուճապը՝ «Մշակ»-ի թղթակից Ադելբեգը գրում է. «Երբ թուրքերը մտան Սօղանլուի անտառը, նրանք հարձակուեցին մօտակա յոյն գիւղերի վրա: Այդ գիւղերից շատերը յանկարծակի եկան և իսպառ կործանվեցին, ոմանք կիսով չափ, իսկ շատերը փախան դեպի Կարս և Արևելյան Շիրակ: Նույն կերպ Ալէքսանդրապօլի գաւառում հաստատուեցին նաև Արդահան-Գէօլայից գաղթած յոյները»[1]: Ըստ հոդվածագրի նշված ժամանակահատվածում միայն Արդահանի գավառից Ալեքսանդրապոլի գավառ էին տեղափոխվել 1030 հույներ, որոնցից 186-ը հաստատվել էին գավառակենտրոնում, իսկ 48-ը Մեծ Ղարաքիլիսայում: Եվս 500 ընտանիք (մոտ 2500 մարդ) հույներ Ալեքսանդրապոլի գավառի Շորագյալի գավառակ էին տեղափոխվել Սարիղամիշի գավառից: «Սրանցից մօտաւորապես 200 տունը,-գրում է Ադելբեգը,-ապաստանել էր Բայինդուր հայախառն յոյն գիւղում, ուր յոյների հետ հայերը հաւասարապես հիւրընկալել և խնամում էին նրանց»[2]: Մինչև 1914թ. դեկտեմբերի վերջ 4000 հույներ էլ Արևելյան Շիրակ տեղափոխվեցին Օլթիի շրջանի գյուղերից: Սրանցից 234-ը «Մշակ»-ին թղթակցած Ատրպետի հավաստմամբ հաստատվեցին Ալեքսանդրապոլում[3]:

Այն հարցին, թե ինչու «Եղբայրական օգնության», «Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերության» կամ հասարակական այլ կազմակերպությունների Ալեքսանդրապոլի կոմիտեների ծավալած բուռն գործունեության պայմաններում (գաղթականների ընդունում, ցուցակագրում, տեղավորում, վիճակագրական տվյալների հրապարակում, սնունդով ու ապրուստի տարրական միջոցներով ապահովում) նույն ժամանակահատվածում այստեղ հայ և ասորի գաղթականների

«Առաջին աշխարհամարտը և հայ ժողովուրդը, պատմություն և արդիական խնդիրներ» միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածու, Եր, 2015):

[1] «Մշակ», Թիֆլիս, 1915, N 4, 9 յունուարի, էջ 3:

[2] «Մշակ», Թիֆլիս, 1915, N 4, 9 յունուարի, էջ 3:

[3] «Մշակ», Թիֆլիս, 1915, N 54, 13 մարտի, էջ 2:

հաստատվելու փաստին մամուլը չի անդրադարձել, մեզ պատասխան գտնել չհաջողվեց: Մինչդեռ Հայաստանի ազգային արխիվի թիվ 50 «Երևանի հայոց հոգևոր թեմական կառավարչությանը կից Եղբայրական օգնության կոմիտե» ֆոնդում պահվող փաստաթղթերի համաձայն՝ առաջին 868 հայերը գավառ էին հասել դեռևս 1914թ. նոյեմբերի կեսերին հույներից մեկ ամիս առաջ, Պարսկաստանից (281 մարդ[1]) և Կարսից (587 մարդ[2]): Հաջորդ երկու շաբաթների ընթացքում ևս 792 փախստականներ եկել էին Կաղզվանից և Կարսի Խոշգելդի ու Կալկոս գյուղերից[3], իսկ 603-ն էլ՝ Սարիղամիշից[4]:

Ասորիներն անհամեմատ ավելի փոքրաթիվ էին: «Եղբայրական օգնության» տեղի կոմիտեի հաշվումներով՝ մինչև 1914թ. դեկտեմբեր Ալեքսանդրապոլի գավառում հաստատվել էր 64 ասորի. մի մասը Սալմաստի գավառի Խոսրովա, Փաթավուր և ՈՒլա, մյուս մասը Վանի նահանգի Բաշկալեի գավառի Արջ և Սաբա գյուղերից[5]: Դեկտեմբերին Արդահանի գավառից Արևելյան Շիրակի և Ջավախքի գյուղեր էին տեղափոխվել ևս 360 ասորիներ[6]:

Ռազմական գործողությունների առաջին երկու ամիսների ընթացքում Երևանի նահանգի տարբեր գավառներ անցած փախստական-գաղթականների թվաքանակի և էթնոկոնֆեսիոնալ կազմի մասին առաջին ամփոփ տեղեկությունները մամուլի էջերում հայտնվեցին միայն 1915թ. հունվարի սկզբներին: Համաձայն Ալեքսանդրապոլի ազգային կենտրոնական հանձնաժողովի գաղթականական բաժնի՝ «Գաւառի ձայն» թերթի 1915թ. անդրանիկ համարում հրապարակած «Համառօտ տեղեկագրի»՝ Թուրքիայից, Պարսկաստանից, ինչպես նաև Սարիղամիշի,Արդահանի, Օլթիի և Արդվինի շրջաններից մինչև Ծննդյան տոնները միայն Ալեքսանդրապոլ էր անցել 3250 փախստական-գաղթական (2310 հայ, 900 հույն, 20 ասորի և 20 ռուս): Սրանցից 400-ն անմիջապես տեղավորվել էր քաղաքամերձ գյուղերում[7]: Ծննդյան տոներից հետո գավառ էին հասել ևս 1200 փափախըստական-գաղթականներ: Սրանցից 400-ը, ըստ տեղեկագրի,-Երևանից եկած պարսկահայեր էին, իսկ 800-ը՝ Օլթիից և Կարսի Թախտա գյուղից մազապուրծ եղած, կիսամերկ ու ոտաբոբիկ փախստականներ, որոնք,ըստ «Մշակ»-ի թղթակցի, հաստատվել էին Արևելյան Շիրակի գյուղերում[8]:

---

[1] ՀԱԱ ֆոնդ 50, ցուցակ 1, գործ 20, թթ. 12, 139, գործ 21, թթ. 141-165:
[2] Նույն տեղում, թթ. 151-158:
[3] ՀԱԱ ֆոնդ 50, ցուցակ 1, գործ 20, թթ. 149-252:
[4] Նույն տեղում, թթ. 164-165:
[5] Նույն տեղում, գործ 21, թթ. 251-258:
[6] Նույն տեղում, թթ. 267-280:
[7] «Գաւառի ձայն», Ալեքսանդրապոլ, 1915, N 1, 11 յունուարի, էջ 3:
[8] «Մշակ», Թիֆլիս, 1915, N 9, 16 յունուարի, էջ 3-4:

Մարտի առաջին տասնօրյակում մամուլում հայտնվեցին գաղթականների թվաքանակի մասին նոր ամփոփ տեղեկություններ:

«Եղբայրական օգնության» Էջմիածնի, Երևանի, Ալեքսանդրապոլի, Իգդիրի, Հին Նախիջևանի կոմիտեների, Թիֆլիսի «Հայկական Կենտրոնական Կոմիտեի», «Ծխական Միության», «Հայ Նպաստամատույց Ընկերության», Բաքվի «Հայկական Բյուրոյի», ինչպես նաև գաղթականների ընդունմամբ ու խնամքով զբաղվող այլ հասարակական կազմակերպությունների քառամսյա գործունեությունն ու գաղթականների շրջանում անցկացված մեկօրյա ցուցակագրման արդյունքներն ամփոփելու համար 1915թ. մարտի 1-ին իր աշխատանքներն սկսեց Էջմիածնի համագումարը: Արևելահայ մամուլն իր էջերում լայնորեն լուսաբանել է համագումարի աշխատանքերը, ներկայացրել ձեռքբերումները, մատնանշել բացթողումներն ու թերացումները:

Այսպես, մարտի 10-ի իր համարում «Մշակ»-ը հրապարակեց «Եղբայրական օգնության» Ալեքսանդրապոլի կոմիտեի զեկույցը: «Ալէքսանդրօպօլի Յանձնաժողովի կողմից զեկուցանող պ. Թաբախչեանը յայտնեց,-գրում է «Մշակ»-ի թղթակիցը,-որ գաւառում գաղթականների թիւը, չը հաշւած Ղարաքիլիսէն, 6500 է»: Ըստ հոդվածագրի՝ կոմիտեն հաշվել էր, որ յուրաքանչյուր գաղթական ընտանիքի իր բնակության նախկին վայրը վերադարձնելու և նրա կորցրած տնտեսությունը վերականգնելու համար պահանջվում է 500 ռուբլի[1]:

Իրականում, Էջմիածնի համագումարն ամփոփել էր մեկամսյա վաղեմության վիճակագրական տվյալներ, իսկ մամուլում գոնե Ալեքսանդրապոլի գավառի համար հրապարակվել էին, մեղմ ասած, թերի տվյալներ: Ցուցակագրումն անցկացվել էր Երևանի Վիճակագրական հանձնախմբի կողմից 1915թ. հունվարի 30-ին Երևանի նահանգի յոթ գավառներում, Կարսի մարզի չորս շրջաններում և Թիֆլիսի նահանգի Ախալքալաքի գավառում[2] ու նպատակ ուներ սպառիչ տեղեկություններ հավաքելու ռազմական գործողությունների առաջին եռամսյակում նշված շրջաններ գաղթածների թվաքանակի մասին:

Ալեքսանդրապոլի գավառում գաղթականության ցուցակագրումն անցկացրած «Եղբայրական օգնության» տեղի կոմիտեն[3] արձանագրել էր հետևյալ ցուցանիշները. ոչ լրիվ երեք ամիսների ընթացքում Ալեքսանդրապոլ քաղաքում և

---

[1] «Մշակ», Թիֆլիս, 1915, N 51, 10 մարտի, էջ 2-3:

[2] Փախստական-գաղթականների մեկօրյա ցուցակագրումը միակ հնարավոր միջոցն էր անընդհատ անընդհատ շարժման մեջ գտնվող բազմահազարանոց այս զանգվածի վերաբերյալ փոքրիշատե ստույգ վիճակագրական տվյալներ հավաքելու:

[3] Մանրամասն տե՛ս Ալեքսանդրապոլի գավառը վիճակագրական նյութերում (XIXդ.-XXդ. սկիզբ), Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, աշխատասիրությամբ **Ա. Հայրապետյանի**, Եր., 2011, էջ 232-235:

գավառի 63 գյուղերում հաստատվել էր 6909 մարդ, որից 4468-ը հայեր էին, 2270-ը հույներ, 109-ը ասորիներ, իսկ մնացած 62-ը ռուսներ, վրացիներ, լեհեր, հրեաներ ու օսեր: Նույն ցուցակագրման համաձայն Ալեքսանդրապոլ քաղաքում փախըստական-գաղթականների թիվը կազմում էր 3652 մարդ, իսկ գավառի 63 գյուղերում 3257 մարդ[1]:

Հաջորդ ամիսների ընթացքում նորեկների թիվը գավառում անշեղորեն աճեց և 1915թ. ապրիլի վերջերին հասավ 8000-ի (այդ թվում' 6000 հայ, 1400 հույն, 570 ասորի և 30 ռուս): «Մշակ»-ին թղթակցած Գևորգ ք. Մկրտումյանի հաշվումներով ապրիլի 24-ի դրությամբ սրանցից 3300-ը տեղավորվել էր Ալեքսանդրապոլի 15 հանրակացարաններում և 200 մասնավոր տներում, իսկ 4700-ը Արևելյան Շիրակի 80 գյուղերում[2]:

1915թ. հուլիսը նշանավորվեց գաղթականության նոր ալիքով: Թավրիզը, Ուրմիան, Ալաշկերտը, Բաշկալեն, Մանազկերտը, Շատախը, Արճեշն ու Վանը գրաված ռուսական զորքերը հուլիսի կեսերին երկու շաբաթով նորից նահանջեցին: Թվով երրորդ անբացատրելի նահանջը նոր խուճապ առաջացրեց տեղի քրիստոնյա ազգաբնակչության շրջանում առիթ տալով անկազմակերպ ու քաոսային գաղթի: Արևմտահայության այս տեղաշարժը հնարավորինս մանրամասն ներկայացվել է Բ. Իշխանյանի կողմից «Մշակ»-ում հրապարակված «Աղէտի և տառապանքի աշխարհից» խորագրով հոդվածաշարում: Ըստ հեղինակի Վանից, Մանազկերտից, Մուշից և Բուլանըղից միայն Ալեքսանդրապոլի գավառ հուլիսի 26-ից օգոստոսի վերջն ընկած ժամանակահատվածում գաղթել էր 20000 մարդ[3], որից 5653-ն այստեղ հաստատվել էր հուլիսի վերջին հնգօրյակում (1688-ը Ալեքսանդրապոլ քաղաքում, 993-ը Արևելյան Շիրակում, իսկ 2972-ն էլ Փամբակում)[4]:

Ռուսական զորքերի հուլիսյան նահանջի վերջնական արդյունքներն ամփոփվել են Ալ. Խատիսյանի կողմից Համառուսաստանյան քաղաքների միության (Քաղաքների միություն) կովկասյան բաժանմունք ներկայացրած զեկուցագրում, համաձայն որի՝ 1915թ. օգոստոսի վերջին գավառում գաղթականների թիվը կազմել է 31000 մարդ (7000-ը գավառակենտրոնում, իսկ 24000-ը գյուղերում)[5]:

Ի դեպ, 1915թ. հուլիսից գաղթականության առաջին մեծ խմբաքանակներն

---

[1] Однодневная перепись беженцев из Турции, Персии и из мест, пограничных с Турцией (армян, айсоров, греков и пр) 1914-1915гг, Перепись произведена 30-го января 1915г, Эривань, 1915, стр. 26-31.

[2] «Մշակ», Թիֆլիս, 1915, N 100, 13 մայիսի, էջ 3:

[3] «Մշակ», Թիֆլիս, 1915, N 203, 17 սեպտեմբերի, էջ 2:

[4] Նույն տեղում, N 204, 18 սեպտեմբերի, էջ 2-3:

[5] Краткие сведения о волне беженцев из Турецкой Армении в июле 1915г. и о мерах, принятых Кавказским Комитетом Союза городов для борьбы с эпидемией среди них, Тифлис, 1915, стр. 26.

սկսեցին հաստատվել նաև Ալեքսանդրապոլի գավառի Փամբակի գավառակում: Օգոստոսի 22-ին այստեղ այցելած «Մշակ»-ի «Մ.» ստորագրությամբ թղթակիցը գրում էր, թե շրջանի հազարավոր փախստականների անմիջական խնամքի ու հոգատարության ահագին ծանրությունը բացառապես ընկած է տեղի «Եղբայրական օգնության» կոմիտեի ուսերին: «Երկու շաբաթվայ ընթացքում,-գրում է հոդվածագիրը,-կօմիտէի լիազօրները, հազար ու մի նեղութիւններով, հազիւ կարողացան տեղաւորել գաղթականներին 18 (իրականում 17-Ա.Հ.) գիւղերում, ցուցակագրել և բաժանել առաջին նպաստը: ... Գաղթականները տեղաւորվել են գիւղերում մի տեղ շատ, միւս տեղը քիչ...:[1]»:

**1915թ. հուլիսին Փամբակում հաստատված գաղթականության ցուցակ[2]**

| N | գյուղը | ընտանիք | մարդ | N | գյաղը | ընտանիք | Մարդ |
|---|---|---|---|---|---|---|---|
| **1.** | Ղշլաղ | 31 | 135 | **10.** | Ղալթախչի | 39 | 234 |
| **2.** | Սարմուսախլի | 8 | 53 | **11.** | Ավդիբեկ | 36 | 217 |
| **3.** | Հաջիղարա | 6 | 56 | **12.** | Աղբուլաղ | 21 | 160 |
| **4.** | Դարբազ | 9 | 87 | **13.** | Ղարալ | 37 | 217 |
| **5.** | Բզովդալ | 6 | 52 | **14.** | Ղարաբոյա | 13 | 61 |
| **6.** | Յաղուբլի | 17 | 95 | **15.** | Գյուղյոխուշ | 7 | 63 |
| **7.** | Համամլու | 76 | 401 | **16.** | Մեծ Պարնի | 62 | 433 |
| **8.** | Նալբանդ | 19 | 129 | **17.** | Մեծ Ղարաքիլիսա | 104 | 597 |
| **9.** | Թափանլու | 15 | 122 | | | | |
| **ԸՆԴԱՄԵՆԸ** | | | **506** | **2972** | | | |

Մինչև օգոստոսի վերջ Բուլանըղից Փամբակ անցան ևս 858 գաղթականներ: Հոկտեմբերի 1-ին այստեղ այցելած «Համբաւաբեր»-ի «Գաղթական» ստորագրությամբ թղթակցի հաշվումներով սրանցից 370-ը հաստատվել էր Համամլուում, 180-ը Վարդնովում, 91-ը Ղաչաղանում, 98-ը Չոտուրում, 53-ը Սպիտակում, իսկ 62-ը՝ Չիկդամալում[3]:

1915թ. օգոստոսին ռուսական զորամասերը վերագրավեցին հուլիսյան նահանջի հետևանքով կորցրած տարածքները, ինչը հնարավորություն տվեց տասնյակ հազարավոր արևմտահայերի վերադառնալու հայրենի օջախներ: Այս նոր

[1] «Մշակ», Թիֆլիս, 1915, N 187, 26 օգոստոսի, էջ 3:

[2] «Մշակ»-ում հրապարակված այս աղյուսակը կազմվել է «Եղբայրական օգնության» Մեծ Ղարաքիլիսայի կոմիտեի տրամադրած վիճակագրական տվյալների հիման վրա (Տե՛ս «Մշակ», Թիֆլիս, 1915, N 187, 26 օգոստոսի, էջ 3:)

[3] Համբաւաբեր, Թիֆլիս, 1916, N 42, 16 հոկտեմբերի, էջ 1328:

տեղաշարժը, ըստ Ալեքսանդրապոլի փոխանորդ Արտակ վարդապետի, պիտի հնարավորություն տար ձմռան նախաշեմին զգալիորեն բեռնաթափելու գավառը գաղթականներից: Եվ իրոք, «Եղբայրական օգնության» տեղի կոմիտեի անցկացրած նոր ցուցակագրման համաձայն, Ալեքսանդրապոլում և գավառի 139 գյուղերում 1915թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ գաղթականների թիվը նվազել էր մինչն 22815 մարդ[1]:

Սակայն, բեռնաթափումը կրեց միայն ժամանակավոր բնույթ: Երևանում և Էջմիածնում տեղավորված արևմտահայության շրջանում դեռևս հուլիսի վերջերից ծայր առած համաճարակային հիվանդությունների և դրանցով պայմանավորված մահացության ահռելի մասշտաբների դեմ պայքարելու համար տեղի «Եղբայրական օգնության» կոմիտեի առաջարկությամբ որոշվեց գաղթականներին տեղափոխել նահանգի մյուս գավառներ: Որպես հետևանք 1915թ. հոկտեմբերի 11-ին Ալեքսանդրապոլ քաղաքում և գավառի 139 գյուղերում գաղթականների թիվը կրկին հասավ 26000-ի[2], ինչը, ըստ «Մշակ»-ի թղթակցի հաշվումների, կազմում էր Երևանի նահանգում հաստատվածների ընդհանուր թվի 28%-ը[3]: Համեմատության համար նշենք, որ նույն ժամանակահատվածում Երևան քաղաքում և համանուն գավառում գաղթականների թիվը կազմում էր 19800 մարդ, Էջմիածնի գավառում 16000 մարդ[4]:

Հաջորդ երկու տասնօրյակների ընթացքում Երևանից Ալեքսանդրապոլի գավառի Մահմուդջուղ, Տաշղալա, Մասլուխլի, Ղըրխ, Փոքր Ղարաքիլիսա, Արթիկ և Քյավթառի գյուղեր տեղափոխվեցին Բուլանըղից, Մանազկերտից, Ալաշկերտից և Բասենից գաղթած ևս 1261 արևմտահայեր[5]: Իսկ արդեն դեկտեմբերին, համաձայն իշխան Ա.Մ. Արղության-Երկայնաբազուկի, Քաղաքների միության կովկասյան բաժանմունք ներկայացրած զեկուցագրի, գաղթականներով բնակեցվեցին Ալեքսանդրապոլի գավառի բոլոր 186 գյուղերը: Միայն Փամբակի 26 գյուղերում,- ըստ «Մշակ»-ի թղթակցի,-տեղավորվել էր 4000 արևմտահայ[6]:

Ցավոք, Ալեքսանդրապոլի գավառում հաստատված գաղթականությանը վե-

---

[1] Ալեքսանդրապոլ քաղաքում և համանուն գավառում հաստատված արևմտահայ գաղթականության ցուցակը կազմվել է Ալեքսանդրապոլի փոխանորդ Արտակ վարդապետի կողմից՝ համաձայն Ամենայն Հայոց հայրապետ Գևորգ Ե-ի 24.11.1915թ. կարգադրության (տե՛ս ՀԱԱ, ֆոնդ 57, ցուցակ 2, գործ 1287, թթ. 3-5): Ալեքսանդրապոլի «Եղբայրական օգնության» կոմիտեի տարեկան զեկույցը հրապարակվել է նաև մամուլում (տե՛ս «Հորիզոն», Թիֆլիս, 1916, N 8, 14 յունուարի, էջ 5:)

[2] Краткие сведения о положении беженцев на Кавказе и оказанной им Союзом городов помощи за время с 20-го сентября по 1-ое ноября 1915г., вып. 2, Тифлис, 1915, стр. 12.

[3] «Մշակ», Թիֆլիս, 1915, N 229, 17 հոկտեմբերի, էջ 3:

[4] «Մշակ», Թիֆլիս, 1915, N 229, 17 հոկտեմբերի, էջ 3:

[5] Նույն տեղում, N 251, 12 նոյեմբերի, էջ 3:

[6] Նույն տեղում, N 271, 8 դեկտեմբերի, էջ 3:

բաբերող վիճակագրական նյութի առատությունն արևելահայ մամուլի էջերում առկա է միայն 1915թ.: 1916թ. սկսած՝ հաղորդումները դառնում են խիստ հազվադեպ ու կցկտուր, ինչն էլ ավելի է բարդացնում նորեկների թվաքանակի և տեղաշարժի ուսումնասիրությունը: Օրինակ, 1916թ. փետրվարի 14-ին «Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերության» կողմից անցկացվեց ցուցակագրում, որի համաձայն Ալեքսանդրապոլի գավառում կար 32000 գաղթական[1]: Չորս ամիս անց հունիսի 20-ին, ըստ տեղի թեմակալ առաջնորդ Արտակ վարդապետի՝ կաթողիկոսին ներկայացրած հաշվետվության, սրանցից մնացել էր 19799-ը[2]:Թե ո՞րն էր գաղթականների թվի նվազման պատճառը, և ի՞նչ ուղղությամբ էին նրանք հեռացել, այսօր հայտնի չէ: Ընդ որում այս անբացատրելի ու անտրամաբանական վիճակը հատուկ է միայն Ալեքսանդրապոլի գավառին[3]: Նույն «Մշակ»,«Հորիզոն», «Աշխատանք» կամ «Համբաւաբեր» պարբերականներում կարելի է հանդիպել 1916-1917թթ. թվագրված տասնյակ հաղորդումների Երևանի նահանգի և Կարսի մարզի գավառներում հաստատված փախստական-գաղթականների թվի, էթնոկոնֆեսիոնալ կազմի կամ սոցիալական դրության մասին: Ավելին, 1916թ.-ից 1917թ. ընկած շրջանում «Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերություն»-ը և «Եղբայրական օգնության» կոմիտեն մամուլում հրապարակեցին ամփոփ վիճակագրություն պատերազմի սկսվելուց ի վեր Հայաստանի Արևելյան ու Արևմտյան հատվածներում ըստ առանձին գավառների ժողովրդագրական գործընթացների մասին:

1916թ. հուլիսին ռուսական զորքերը չորրորդ անգամ նահանջեցին:

Դեպի Ալեքսանդրապոլի գավառ շարժվող արևմտահայերի առաջին խմբերն այս անգամ հաստատվեցին Փամբակում: Եթե 1916թ. հունիսի 25-ի դրությամբ շրջանի 26 գյուղերում կար 3884 արևմտահայ (1133 կին, 941 տղամարդ, 1810 երեխա), ապա օգոստոսի 9-ին, ըստ «Աշխատանք»-ի թղթակցի, այդ թիվը հասավ 4475-ի[4]: «Մշակ»-ի «Ականատես» ստորագրությամբ թղթակցի վկայությամբ «...եկողները Բուլանըկի Համզաշէխ, Կողակ, Փըկաշեն գիւղերից և Վան քաղաքից էին,... ամենքն էլ տանջված ու թալանված. գլխաւորապէս պառաւ կանայք, զառամեալ ծերեր և վտիտ մանուկներ, մինչդեռ տղամարդկանց թիւը հազիւ

[1] ՀԱԱ, ֆոնդ. 28, ցուցակ 1, գործ 429, թ. 1-7:
[2] ՀԱԱ ֆոնդ 57, ցուցակ 2, գործ 1306, թ. 10:
[3] Նույնն է իրավիճակը նաև Հայաստանի ազգային արխիվում:Որբանոցների, գաղթականական հիվանդանոցների ու դպրոցների մասին հարյուրավոր փաստաթղթերի կողքին մեկ-երկու կցկտուր հաղորդման կարելի է հանդիպել Ալեքսանդրապոլի գավառում 1916- 1917թթ. գաղթականության տեղաշարժի մասին:
[4] «Աշխատանք», Եր, 1916, N 17, 29 յունիսի, էջ 4:

հասնում էր 10 %-ի»[1]:

Օգոստոսին Ալեքսանդրապոլ և շրջակա գյուղեր հասան նաև 8000 սասունցիներ[2]: «Մշակ»-ն իր 1916թ. նոյեմբերի 1-ի համարում հրապարակել է տեղի թեմական առաջնորդ և «Եղբայրական օգնության» կոմիտեի նախագահ Արտակ վարդապետի կոչը ուղղված անհատ բարեգործներին ու հասարակական կազմակերպություններին. «Վկայում ենք,-նշված է ուղերձում,-որ օգոստոս ամսից Ալէքսանդրոպոլի գաւառը եկած փախստականները, գլխաւորապէս սասունցիներ... առանց չափազանցութեան բոլորովին մերկ են:... Կոչ ենք անում բոլոր հիմնարկութիւններին, որ վարում են փախստականական բարեգործական գործեր, բոլոր մասնաւոր բարեգործներին, աղերսելով օգնութեան հասնել պատերազմի խեղճ զոհերին և թոյլ չը տալ, որ գազանութիւններից ազատված նրանք մեռնեն մեր աչքերի առաջ»[3]:

Սասունցիների ներգաղթը շարունակվեց մինչև տարեվերջ: Վերջին 1370 սասունցիները, ըստ «Մշակ»-ի, Արևելյան Շիրակի գյուղերում հաստատվեցին դեկտեմբերին[4]:

Արևելահայ մամուլը որևէ կերպ չի անդրադարձել ժողովրդագրական այն գործընթացներին, որոնք տեղի են ունեցել Ալեքսանդրապոլի գավառում 1917թ. ընթացքում: Բացառություն կարելի է համարել թերևս Մոսկվայում հրապարակվող «Армянский вестник» պարբերականը, որն իր մարտի 12-ի համարում, հղելով Բաքվի «Արեւ» օրաթերթին, հաղորդում է այստեղ 30000 գաղթականների գոյության մասին[5]: Մեր խորին համոզմամբ՝ հաղորդումը թեև մոտ է իրականությանը[6], իրականությանը[6], սակայն վերաբերում է 1916թ.-ին: «Արեւ»-ի 1917թ. հունվարի 1-ից մարտի 12-ի համարներում մենք Ալեքսանդրապոլի գավառից որևէ վիճակագրական տեղեկության չհանդիպեցինք:

1918թ. գարնանը տարածաշրջանում ռազմաքաղաքական իրավիճակը կտրուկ փոխվեց ի վնաս հայ ժողովրդի: Բրեստ-Լիտովսկի ամոթալի պայմանագրով

---

[1] «Մշակ», Թիֆլիս, 1916, N 172, 7 օգոստոսի, էջ 2: Նույնը տե՛ս նաև «Մշակ», Թիֆլիս, 1916, N 177, 13 օգոստոսի, էջ 2:

[2] «Մշակ», Թիֆլիս, 1916, N 244, 1 նոյեմբերի, էջ 3:

[3] «Մշակ», Թիֆլիս, 1916, N 244, 1 նոյեմբերի, էջ 3:

[4] Նույն տեղում, N 282, 18 դեկտեմբերի, էջ 3:

[5] Армянский вестник, Москва, 1917, год изд. 2, N10-11,12 марта, стр. 27-28. Պարբերականը թեն հղում է «Արեւ» օրաթերթին, սակայն չի նշում, թե որ համարից է վերցվել վիճակագրական տվյալը:

[6] Հայաստանի ազգային արխիվի «Ամենայն հայոց կաթողիկոսի դիվան» ֆոնդում մեզ հաջողվեց գտնել Ալեքսանդրապոլի գաղթականական գործերով զբաղվող հաստատությունների կողմից ընտրված պատգամավորներ Ս. Տեր-Գրիգորյանի և Սմբատ Բորոյանի՝ Գևորգ Ե կաթողիկոսին ներկայացրած հաշվետվությունը, ըստ որի 1917թ. սեպտեմբերի 20-ի դրությամբ գավառում, բացի որբանոցների սաներից, կար 25754 արևմտահայ, այդ թվում՝ 1-14 տարեկան 4231 երեխա և 963 ծեր (տե՛ս ՀԱԱ ֆոնդ 57, ցուցակ 2, գործ 1311, թ. 23-24):

Խորհրդային Ռուսաստանը դուրս եկավ պատերազմից: Անդրկովկասյան Սեյմը, չճանաչելով հաշտության պայմանները, փորձեց Թուրքիայի հետ Տրապիզոնում առանձին բանակցություններ վարել, սակայն հաջողության չհասավ, իսկ ապրիլի 1-ին սկսված թուրք-անդրկովկասյան պատերազմը հաշված օրերի ընթացքում վերածվեց թուրքական զորքերի հաղթարշավի: Թուրքական հարձակումը հայության շրջանում կրկին խուճապ առաջացրեց առիթ տալով նոր տեղաշարժի:

Փախստականների առաջին խմբերը Կարսի և Բաթումի շրջաններից Ալեքսանդրապոլ հասան մարտին[1], սակայն զանգվածային բնույթ գաղթն ընդունեց ապրիլի 12-ից հետո, երբ Սեյմի ապաշնորհության պատճառով Կարսը հանձնվեց թուրքերին: Տեղի շրջանային կոմիսար Ջամոյանի՝ Անդրկովկասյան Սեյմ ուղարկած հեռագրի համաձայն մինչև 1918թ. մայիսի 1-ը Կարս քաղաքից և համանուն շրջանից Ալեքսանդրապոլի գավառ կարող էին անցնել մոտ 200000 փախստականներ[2]:

1918թ. ապրիլ-մայիս ամիսներին երկրամասում ստեղծված քաոսային իրավիճակը հնարավորինս մանրամասն նկարագրվել է «Մշակ»-ում շնորհիվ մշտական թղթակիցներ Շարաֆյանի, Պապիկյանի, Մանդինյանի, Ղազարյանի, Ատրպետի և այլոց քրտնաջան ու անձնուրաց աշխատանքի: «Փախստականների մի մասը, ով փրկել է իւր ունեցւածքն ու անասունները,-գրում էր թերթը,-շարունակում է ճանապարհը դէպի Ղարաքիլիսա, Լօռի և նոյն իսկ Հիւս. Կովկաս: Մյուս մասը ցրվել է Ալէքսանդրօպօլի գիւղերը»[3]: Անհատ բարեգործներին ու պետական հաստատություններին «Մշակ»-ը կոչ էր անում շտապ միջոցներ ձեռք առնելու գաղթականների այդ լավան ընդունելու, սնունդով ապահովելու և տեղավորելու համար, որովհետև հասարակական այն կազմակերպությունները, որոնք վերջին տարիներին զբաղվել էին նմանօրինակ խնդիրներով, գաղթականների այսպիսի քանակին օգնել ի զորու չէին[4]:

Թե ապրիլյան այս օրերին քանի՞ փախստական ընտանիք տեղափոխվեց Ալեքսանդրապոլի գավառ, և քանիսը հետագայում այստեղ մնաց, հայտնի չէ: 1918թ. մայիսի 15-ին գավառի մեծ մասը զինակալվեց թուրքերի կողմից, որից հետո արևելահայ մամուլի էջերից իսպառ վերացան տեղեկություններն այստեղ հաստատված գաղթականության տեղաշարժի մասին:

Ամփոփելով աշխարհամարտի տարիներին արևելահայ մամուլում գաղթականության տեղաշարժի խնդրի լուսաբանման համառոտ քննությունը նշենք

[1] «Մշակ», Թիֆլիս, 1918, N 69, 1 ապրիլի, էջ 2:
[2] Նույն տեղում, N 81, 17 ապրիլի, էջ 2:
[3] Նույն տեղում, N 82, 1 մայիսի, էջ 3:
[4] «Մշակ», Թիֆլիս, 1918, N 82, 1 մայիսի, էջ 3:

հետնյալը. Ալեքսանդրապոլի գավառի կտրվածքով վիճակագրական նյութի առատությունը հատուկ է 1915թ.: 1916թ. ընթացքում հաղորդումները դառնում են հազվադեպ, իսկ 1917թ՝ իսպառ վերանում: Կապված տարածաշրջանում ռազմաքաղաքական իրավիճակի կտրուկ փոփոխության հետ՝ վիճակագրական նյութի առատությամբ կարող էր աչքի ընկնել 1918թ., եթե մայիսին գավառի մեծ մասը չզինակալվեր թուրքերի կողմից:

*ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ»,*
*Գյումրի, 2015, h. 18, էջ 120-130*

# 1914-1918թթ. ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԳԱՒԱՌՈՒՄ ՀԱՍՏԱՏՈՒԱԾ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄՆ ԱՐԵՒԵԼԱՀԱՅ ՄԱՄՈՒԼՈՒՄ

Առաջին աշխարհամարտն անդառնալի կորուստներ պատճառեց հայութեանը՝ հայրենազրկելով նրա մի մեծ հատուածին: Թուրքական եաթաղանից փրկուածների մի մասը Մերձաւոր Արեւելքի, Եւրոպայի եւ Ամերիկայի երկրներում ձեւաւորեց հայկական սփիւռքը, եւս 300.000-ն անցաւ Արեւելյան Հայաստան եւ Կովկասի հայաշատ շրջաններ: Միայն Ալեքսանդրապոլի գաւառը 1914-1917թթ. ընթացքում ընդունեց աւելի քան 95.000 փախստական-գաղթականների, որոնց մի մասը հաստատուեց գավառի տարածքում, իսկ միւսներն անցան Ռուսական կայսրութեան այլ շրջաններ:

Արեւելահայ պարբերական մամուլն ուշի-ուշով հետեւեց այդ գործընթացին, լուսաբանեց գաղթականներին ընդունելու եւ ապրուստի տարրական միջոցներով ապահովելու աշխատանքները, ներկայացրեց հասարակական կազմակերպութիւնների ձեռքբերումները խնամատարութեան, հիւվանդախնամ ու որբախնամ գործունէութեան, կամ թէ կրթական գործի կազմակերպման ոլորտներում: Մամուլը զուգահեռ մատնանշեց նաեւ այդ աշխատանքներում թոյլ տրուած բացթողումներն ու թերացումները, առաջարկեց առկա խնդիրների լուծման ճանապարհներ:

Իր այս հետեւողական աշխատանքի շնորհիւ Ի. դարասկզբի արեւելահայ պարբերական մամուլն ուղղակի վերածուեց ժամանակի պատմաքաղաքական անցուդարձը լուսաբանող գրաւոր սկզբնաղբիւրի՝ մեր ժամանակների ուսումնասիրողին տալով համեմատութիւններ ու վերլուծութիւններ կատարելու բաւականին լայն հնարավորութիւններ:

Ստորեւ կը փորձենք Ալեքսանդրապոլի գաւառի օրինակով ցոյց տալ, թէ ինչ դերակատարութիւն ունեցաւ պարբերական մամուլը գաղթականութեան շրջանում առկա խնդիրների վերհանման եւ լուսաբանման գործում: Ի դեպ, այդ խնդիրները կարելի է պայմանականօրէն բաժանել երեք խմբերի՝ խնամատարութիւն, հիւանդանոցային եւ կրթական գործերի կազմակերպում:

***Խնամատարութիւն:***

Ռազմական գործողութիւնները Կովկասեան ճակատում սկսուեցին 1914թ. նոյեմբերի 2-ին: Գրեթէ միաժամանակ հայտնուեցին նաեւ առաջին փախստականները: «Պատերազմը,-գրում է Ալեքսանդրապոլում հրապարակուող «Գաւառի ձայն» օրաթերթը,-իւր սոսկալի հետեւանքներով արդեն բացել է հայ ազգի

մահացու վերքերից մեկը՝ գաղթականութիւնը: Սարսափահար ժողովուրդը ստիպված է թողնել ապրուստի միջոցները եւ որոնել մի անկյուն իր ընտանիքն ազատելու սրից ու մահից»[1]:

Գաղթականներին ընդունելու, տեղաւորելու, սնունդով ու հագուստով ապահովելու նպատակով Ամենայն Հայոց կաթողիկոս Գեւորգ Ե-ի կարգադրութեամբ Անդրկովկասի հայաշատ գաւառներում ու բնակավայրերում ստեղծուեցին «Եղբայրական օգնութեան» կոմիտէներ: 1914թ. հոկտեմբերի 31-ին Ալեքսանդրապոլի փոխանորդ Արտակ վարդապետի գլխաւորութեամբ կոմիտէ ստեղծուեց նաեւ այստեղ[2]: Կոմիտէի ծաւալելիք գործունէութեան մասին «Գաւառի ձայն»-ի Քաղաքացի ստորագրութեամբ թղթակիցը գրում է. «Աղէքսանդրապօլի հայ ժողովուրդը, որը իւր չքաւոր դրութեան մեջ էլ միշտ ջերմ կարեկից է եղել հայ ժողովրդի ցաւերին, արդեն կազմել է մի պաշտոնական բիւրօ, որը պարտաւոր է օգնել վիրաւոր եւ հիւանդ զինուորներին, հայ կամաւորներին եւ խնամել հայ գաղթականներին»[3]: Եվ իրօք, հաշուած օրերի ընթացքում կոմիտէն միայն Ալեքսանդրապոլ քաղաքում 100-250 հոգանոց 18 հանրակացարան կահաւորեց փախստականներին ընդունելու համար[4]:

Առաջին 3000 հայ եւ յույն փախստականները Ալեքսանդրապոլի գաւառ հասան 1914թ. նոյեմբերի կէսերին[5]: Սարիղամիշի գործողութեան օրերին ներհոսքն ընդունեց աւելի մեծ չափեր: 1915թ. յունուարի 30-ին անցկացուած մէկօրեայ ցուցակագրման տուեալների համաձայն՝ պատերազմի առաջին երեք ամիսների ընթացքում հիմնականում Կարսից, Կաղզուանից, Օլթիից, Արդահանից եւ Սարիղամիշից Ալեքսանդրապոլի գաւառ անցածների թիւը կազմեց 6909 մարդ[6]: Ի դէպ, եթէ յոյն փախստականները, վայելելով ռուսական հրամանատարութեան բացարձած համակրանքը, գաղթել էին իրենց սայլերով ու ունեցուած-

---

[1] «Գաւառի ձայն», Ալէքսանդրապօլ, 1914, N 109, 23 նոյեմբերի, էջ 3:

[2] ՀԱԱ, ֆոնդ 57, ցուցակ 2, գործ 1311, թթ. 23-24:

[3] «Գաւառի ձայն», Աղէքսանդրապօլ, 1914, N 109, 23 նոյեմբերի, էջ 3:

[4] Նորեկներն առայժմ տեղաւորվելու էին միայն Ալեքսանդրապոլ քաղաքում եւ Արեւելյան Շիրակի գիւղերում: Գաղթականութեան զանգուածային ներհոսքը դէպի Փամբակի գաւառակ սկսուեց 1915թ. յուլիսին (մանրամասն տե՛ս **Հայրապետեան Ա.**, Արեւմտահայ գաղթականութիւնն Ալեքսանդրապոլի գաւառում 1914-1918թթ.,//«Առաջին աշխարհամարտը եւ հայ ժողովուրդը. պատմութիւն եւ արդիական խնդիրներ», միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածու, Երեւան, 2015):

[5] ՀԱԱ ֆոնդ 50, ցուցակ 1, գործ 20, թթ. 12, 139, 151-158, 249-252, գործ 21, թթ. 141-165:

[6] Однодневная перепись беженцев из Турции, Персии и из мест, пограничных с Турцией (армян, айсоров, греков и пр.) 1914-1915гг, Перепись произведена 30-го января 1915г, Эривань, 1915, стр. 26-31. Ալեքսանդրապոլի գաւառը վիճակագրական նիւթերում (XIXդ.-XXդ. սկիզբ), Փաստաթղթերի եւ նիւթերի ժողովածու՝ աշխատասիրութեամբ **Ա. Հայրապետեանի**, Եր., 2011, էջ 232-235:

քով, հայերը որպէս կանոն, կիսամերկ էին ու ընչազուրկ[1]: «Գաւառի ձայն»-ի հաւաստմամբ՝ սրանք ալեքսանդրապոլցիների կամաւոր նուիրատուութիւնների շնորհիւ, ստացան անվճար բնակարան, վառելիք, հագուստ եւ մէկ անձի համար ամսական երկու փութ հաց (1 փութը կշռում է 16կգ 380գ)[2]: Աւելին, «Եղբայրական օգնութեան» տեղի կոմիտէն, «Մշակ»-ի հավաստմամբ, նոյնիսկ հաշուել էր, որ իւրաքանչիւր գաղթական ընտանիքի իր բնակութեան նախկին վայրը վերադարձնելու եւ կորցրած տնտեսութիւնը վերականգնելու համար պահանջւում է 500 ռուբլի[3]:

Խնամատարութեան գործում էական խնդիրներ չառաջացան նաեւ 1915թ. գարնանը, երբ սկսուեց արեւմտահայութեան ներգաղթը: «Մշակ»-ին թղթակցած Գեւորգ ք. Մկրտումեանը, ով բարեգործական առաքելութեամբ Աստրախանից գործուղուել էր նախ Թիֆլիս, ապա Ալեքսանդրապոլ, բարձր գնահատական է տուել գաղթականների վիճակի բարելաւման գործում հասարակական կազմակերպութիւնների եւ յատկապէս «Եղբայրական օգնութեան» տեղի կոմիտէի ծաւալած գործունէութեանը՝ շեշտելով, թէ վերջինս «պատուով է տանում իր առաջ դրված գործը»[4]:

Գաւառում գաղթականների տեղաւորման ու տարրական կենսապայմանների ապահովման գործում առաջին լուրջ թերացումներն արեւելահայ մամուլն արձանագրեց 1915թ. ամռանը, երբ ռուսական զորքերի երրորդ նահանջի հետեւանքով աւելի քան 200000 քրիստոնեաներ Վանի, Բիթլիսի եւ Էրզրումի վիլայեթներից հաշուած օրերի ընթացքում անցան Արեւելյան Հայաստան:

Ըստ Ալ. Խատիսեանի՝ Համառուսաստանեան քաղաքների միութեան (այսուհետեւ՝ «Քաղաքների միութիւն») կովկասեան բաժանմունք ներկայացրած զեկուցագրի՝ միայն Ալեքսանդրապոլի գաւառում հաստատուած արեւմտահայերի թիւը 1915թ. օգոստոսի վերջին կազմեց 31000 մարդ[5]:

Բազմահազար գաղթականներին ապաստան տալու եւ նրանց ֆիզիկական գոյութիւնն ապահովելու համար որոշուեց շուրջ 4000 մարդու տեղաւորել «պահուստային» ֆոնդում՝ Փամբակի գաւառակում: Սակայն դա, ըստ «Գաւառի ձայն»-ի թղթակցի, արուեց հակառակ տրամաբանութեանը. Փամբակի մեծ

---

[1] Մանրամասն տե՛ս **Հայրապետեան Ա.**, Առաջին աշխարհամարտը եւ Ալեքսանդրապոլի գաւառ հաստատուած գաղթականութեան թուաքանակը,//«Հայկազեան Հայագիտական Հանդէս», հատոր ԼԵ, Պէյրութ, 2015, էջ 252:

[2] «Գաւառի ձայն», Ալէքսանդրապոլ, 1915, N 1, 11 յունուարի, էջ 3:

[3] «Մշակ», Թիֆլիս, 1915, N 51, 10 մարտի, էջ 2-3:

[4] «Մշակ», Թիֆլիս, 1915, N 100, 13 մայիսի, էջ 3:

[5] Краткие сведения о волне беженцев из Турецкой Армении в июле 1915г. и о мерах, принятых Кавказским Комитетом Союза городов для борьбы с эпидемией среди них, Тифлис, 1915, стр. 26.

գիւղերում, ուր կար 300 եւ աւելի տուն (օրինակ՝ Մեծ Ղարաքիլիսայում), տեղաւորեցին 130 հոգանոց խմբեր, իսկ փոքր գիւղերում, օրինակ 80 տնից բաղկացած Դարբազում, ուր նորեկներին տեղաւորելու համար նոյնիսկ յարմար շինութիւն չկար՝ 100 գաղթական: Ըստ պարբերականի՝ բանը հասաւ նրան, որ դարբազցիները սպառնացին գաղթականներին վտարել իրենց գիւղից[1]: Հակամարտութիւնը արեւմտահայերի եւ դարբազցիների միջեւ շարունակուվեց կէս տարի: Դէպքերին հետեւող «Գաւառի ձայն»-ի թղթակիցը գրում է, թէ կրքերը հանդարտուեցին միայն 1916թ. մարտի սկզբներին, երբ տեղ հասաւ ԱՄՆ-ից ուղարկուած օգնութիւնը[2]:

1915թ. յուլիս-օգոստոս ամիսներին Փամբակում գաղթականների տեղաւորման ժամանակ թոյլ տրուած սխալներին անդրադարձել է նաեւ «Մշակ»-ը: Պարբերականի Ականատես ստորագրող թղթակցի վկայութեան համաձայն՝ գաղթականների յոյսերն ու սպասելիքները չարդարացան յատկապես Մեծ Ղարաքիլիսայում: Խուսափելով «չարաբաղդ աղետյալների» ընդունման ու խնամքի ծանր պարտականութիւնից՝ մօտ 10.000 բնակչութեամբ այս գիւղաքաղաքը, որ ունէր բազմաթիւ դատարկ ու լուսաւոր բնակարաններ, դեղատներ, մթերքի շուկա եւ այլ յարմարութիւններ «ուղղակի զլացաւ իր մէջ պատսպարել փախստականների՝ հիւանդների, տանջվածների եւ որբերի մի խոշոր կօնտինգենտ»[3]:

«Մշակ»-ն անդրադարձել է նաեւ Ալեքսանդրապոլի հանրակացարաններում առկայ խնդիրներին եւ բաւականին մռայլ գոյներով նկարագրել սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին այստեղ տիրող վիճակը: «Միայն քաղաքի մէջ,-գրում է պարբերականին թղթակցած Արշակ Սաֆրաստեանը,-6000 գաղթական կա, որոնցմէ՝ փոքր մաս մը քաղաքացոց տունը կապրի, իսկ մեծամասնութիւնը՝ հանրակացարաններու մէջ»: Ըստ յօդվածագրի, սրանք աննախանձելի դրութեան մէջ էին. գրեթէ զուրկ «կեանքի անհրաժեշտ պիտոյքներէն», կոտրուած պատուհաններով սենեակներում, ծղօտից ներքնակների վրա տեղաւորուած էին 8-15 ընտանիքներ՝ սոված, առանց անկողին ու հագուստ, իսկ ծուխն ու գարշահոտութիւնը «քեզ կը պարտաւորեցնէ դուրս փախչիլ՝ մաքուր օդի մէջ դիտելու գաղթականները»[4]: Ա. Սաֆրաստեանը նաեւ պատմում է, թէ հոկտեմբերի 30-ին ականատես է եղել տհաճ մի միջադէպի, երբ հաց բաժանելու ժամանակ «քիչ մը շատ պոռացող գաղթականի մը վրայ հսկիչ-վարժապետը գաւազանով յարձակեցաւ եւ

[1] «Գաւառի ձայն», Ալէքսանդրապոլ, 1916, N 7, 7 փետրվարի, էջ 4:
[2] «Գաւառի ձայն», Ալէքսանդրապոլ, 1916, N 19, 20 մարտի, էջ 4:
[3] «Մշակ», Թիֆլիս, 1915, N 177, 13 օգոստոսի, էջ 2:
[4] «Մշակ», Թիֆլիս, 1915, N 250, 11 նոյեմբերի, էջ 3:

պիտի ծեծէր զայն»[1]:

Այս միջադէպը տեղի է ունեցել «Կարանօվների» հանրակացարանում: Թէ ի՞նչ ընթացք է ստացել հսկիչի եւ գաղթականի միջեւ ծագած վէճը, յայտնի չէ: Բայց ընդունելի չէ նաեւ Ա. Սաֆրաստեանի կողմնակալ վերաբերմունքը քաղաքում գործող հանրակացարանների նկատմամբ: Մեր կարծիքով՝ արդարացի չէ այդ հաստատությունների մէկամեայ տաժանակիր աշխատանքը «սեւացնել» մէկ մասնավոր դէպքի պատճառով: Իսկ արեւմտահայության՝ «կեանքի անհրաժեշտ պիտոյքներէն» զուրկ լինելու պատճառը հետեւյալն էր. 1915թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին Ալեքսանդրապոլի գաւառում հաստատուած գաղթականների թիւը, որ մինչ այդ նուազել ու կազմում էր 22815 մարդ[2], նախ հասաւ 26000-ի[3], ապա 32000-ի[4] (Երեւանի նահանգում առկայ գաղթականութեան ընդհանուր թուի 30%-ը), այն դէպքում, երբ «Մշակ»-ի հաշվումներով Երեւան քաղաքում եւ համանուն գաւառում այդ թիւը կազմում էր 19800, իսկ Էջմիածնի գաւառում՝ ընդամէնը 16000 մարդ[5]:

Սնունդի մատակարարման հարցում առաջացած դժուարութիւնները հիմնականում մինչեւ տարեվերջ հարթուեցին: «Մշակ»-ին թղթակցած Ատրպետի հաւաստմամբ՝ այս գործում իր անգնահատելի ներդրումն ունեցաւ Ալեքսանդրապոլի գաւառի գիւղական հասարակութիւնը, որ «դարերից ի վեր գրեթէ անընդհատ իր վզին է վերցրել թշուառութեան ենթարկուածին»[6]: Բանն այն է, որ գաղթականների 95%-ը՝ որպէս նախկին գիւղաբնակներ, նախապատվութիւնը տուեցին «գօմի օդային», որովհետեւ աւվելի հաճելի էին համարում «ախոռների կողքին ապրելը՝ քան թէ քաղաքի խոնաւ բնակարանները»: Գաւառի գիւղական ազգաբնակչութիւնը սիրով ընդունեց բոլորին: Օրինակ, Մահմուդջուղ գիւղը, որ ունէր 250 ընտանիք, ընդունել էր 300 գաղթական, Մուսլուղլին՝ 120 ընտանիք ունէր եւ ընդունել էր 172 գաղթական, իսկ Ղըրխը, որ 75 ընտանիք ունէր, ընդունել էր 135 գաղթական: Ըստ յօդուածագրի՝ գիւղերում գաղթականները հաստատւում էին միտումնաւոր: Ալիւր ու անհրաժեշտ այլ պարագաներ ստանալով «Եղբայրական Օգնութեան» տեղի կոմիտէից, նրանք շարունակում էին «վառել գիւղացու

---

[1] Նոյն տեղում:

[2] Ցուցակագրումն անցկացուել է «Եղբայրական օգնութեան» Ալեքսանդրապոլի կոմիտէի կողմից (Տե՛ս ՀԱԱ, ֆոնդ 57, ցուցակ 2, գործ 1287, թթ. 3-5):

[3] Краткие сведения о положении беженцев на Кавказе и оказанной им Союзом городов помощи за время с 20-го сентября по 1-ое ноября 1915г., вып. 2, Тифлис, 1915, стр. 12.

[4] ՀԱԱ, ֆոնդ. 28, ցուցակ 1, գործ 429, թ. 1-7: «Համբաւաբեր», Թիֆլիս, 1916, N 2, 3 յունուարի, էջ 47-48:

[5] «Մշակ», Թիֆլիս, 1915, N 229, 17 հոկտեմբերի, էջ 3:

[6] «Մշակ», Թիֆլիս, 1915, N 251, 12 նոյեմբերի, էջ 3:

աթարը» եւ օգտուել նրա ունեցած սննդի պաշարներից[1]: Ընդ որում գաղթականների մէջ առաւել բարւոք վիճակում էին Փամբակի շրջանում հաստատուածները, որոնք ունէին շուրջ 1000 գլուխ խոշոր եղջերաւոր անասուն, փայտ հայթայթում էին անտառներից, իսկ «Եղբայրական օգնութեան» Մեծ Ղարաքիլիսայի կոմիտէից ստացել էին 200 վառարան, տաք վերմակներ եւ հագուստ: Հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին աշխատանքային առաքելութեամբ այստեղ այցելած իշխան Ա. Արղութեան-Երկայնաբազուկին յատկապես զարմացրել էր այն փաստը, որ կոմիտէն մեծ թուով գաղթականների ապահովել էր աշխատանքով: «Գրեթէ ճշմարտութիւն է դարձել,-«Մշակ»-ի էջերում գրում է նա,-որ փախստականները չեն ուզում աշխատել…, գերադասելով ապրել միայն փայաբաժնով եւ բարեգործութեամբ: Բայց ահա Մ.-Ղարաքիլիսայի կօմիտէտը կարողացել է հարցին մօտենալ հարկաւոր կողմից…»[2]: 100 գաղթականներ տեղաւորել էին տեղի պղնձի հանքերում, 300 հոգի էլ աշխատում էին Կարսի երկաթգծի եւ Սարիղամիշի խճուղու շինարարութեան վրա:

Ցաւօք, Ալեքսանդրապոլի գաւառում հաստատուած գաղթականութեան խընդիրների լուսաբանման գործում արեւելահայ մամուլի ակտիւութիւնը յատուկ է միայն 1915թ.: Սկսած 1916 թ. հաղորդումները տարէցտարի դառնում են հազվադէպ, կցկըտուր, իսկ յաճախ նաեւ՝ իրարամեժ:

1916թ. յուլիսին ռուսական զօրքը չորրորդ անգամ նահանջեց:

Դէպի Ալեքսանդրապոլի գաւառ շարժուող արեւմտահայերի առաջին խմբերն այս անգամ հաստատուեցին Փամբակում: «Մշակ»-ի Ականատես ստորագրող թղթակիցը վկայում է «…եկողները՝ …տանջուած ու թալանուած. գլխաւորապէս պառաւ կանայք, զառամեալ ծերեր եւ վտիտ մանուկներ էին»[3]:

Փամբակի շրջանի գիւղացիութիւնը, որ աչքի չէր ընկնում բարւոք վիճակով (հողն այստեղ արգասաբեր չէր, իսկ անասնապահութեան համար էլ մեծ արօտավայրեր չկային) իր յարկի տակ սիրով հիւրընկալեց գաղթականներին ու հնարաւոր բոլոր միջոցներով մեղմեց նրանց դրութիւնը, մինչեւ որ հասարակական կազմակերպութիւններն ու պետութիւնն օգնութեան կհասնեին: «Քանի մը գյուղերու մէջ տուներ եմ տեսած,- գրում է «Աշխատանք» թերթի Յ.Յ. ստորագրող թղթակիցը,-ուր փախստականները կապրին իբրեւ նոյն ընտանիքի անդամներ, միեւնոյն սենյակի մէջ, «մէկ հաց եւ մէկ ջուր»… եւ թուրքահայ գիւղացիութիւնը

[1] Նոյն տեղում:
[2] «Մշակ», Թիֆլիս, 1915, N 271, 8 դեկտեմբերի, էջ 3:
[3] «Մշակ», Թիֆլիս, 1916, N 172, 7 օգոստոսի, էջ 2: Նույնը տե՛ս նաեւ «Մշակ», Թիֆլիս, 1916, N 177, 13 օգոստոսի, էջ 2:

դժգոհ չէ իր ռուսահայ եղբայր-գիւղացիներէն»[1]:

Առաջին օրերի խուճապային տրամադրութիւնները երկար չտեւեցին: Արդէն 1916թ. հոկտեմբերի 1-ին «Համբաւաբեր»-ի՝ Փամբակ այցելած Գաղթական ստորագրութեամբ թղթակիցը գրում է, թէ Մեծ Ղարաքիլիսայում օգոստոսից բացուել էր նաեւ «Պարենաւորման խանութ, որից օգտւում են շրջանիս գաղթականները՝ ստացած նպաստի փողերովը գնելով իրենց անհրաժեշտ կենսամթերքները… ալյիւր՝ պուդը 2ռ.67կ., շաքար՝ 32.5կ, սապոն՝ 33կ.»[2]:

Անհամեմատ բարդ էր իրավիճակը Ալեքսանդրապոլում եւ շրջակայ գիւղերում: Օգոստոսին այստեղ հաստատվեցին 8000 կիսամերկ ու սոված սասունցիներ[3]: Նորեկներին տարրական կենսապայմաններով ապահովելու համար «Եղբայրական Օգնութեան» տեղի կոմիտէն փորձեց ալիւրի բաշխումը ժամանակաւորապէս փոխարինել դրամական նպաստով՝ մէկ փութը 3 ռուբլի հաշվով: Սակայն, այս նոր քաղաքականութիւնը ոչ միայն իրեն չարդարացրեց, այլեւ ըստ «Աշխատանք» պարբերականի՝ յանգեցրեց ալիւրի գնաճի[4]:

Մինչեւ տարեվերջ Արեւելյան Շիրակի գիւղերում հաստատուեցին եւս 1370 սասունցիներ[5]: Հակառակ գործադրած բոլոր ջանքերին, տեղի հասարակական կազմակերպութիւններին այս անգամ չյաջողուեց ձմռան նախաշեմին լուծել գաղթականների տեղաւորման ու տարրական կենսապայմանների ապահովման խնդիրները: Ստեղծուած իրավիճակում «Եղբայրական Օգնութեան» տեղի կոմիտէի նախագահ Արտակ վարդապետը, Ալեքսանդրապոլի գաւառապետ Կալանդարիշուիլին եւ քաղաքագլուխ Կամսարականը «Մշակ»-ում հրապարակեցին համատեղ կոչ՝ ուղղուած անհատ բարեգործներին ու հասարակական կազմակերպութիւններին.«Վկայում ենք,-նշուած է ուղերձում,-որ օգոստոս ամսից Ալէքսանդրոպոլի գաւառը եկած փախստականները, գլխաւորապէս սասունցիներ… առանց չափազանցութեան բոլորովին մերկ են:… Կոչ ենք անում բոլոր հիմնարկութիւններին, որ վարում են փախստականական բարեգործական գործեր, բոլոր մասնաւոր բարեգործներին, աղերսելով օգնութեան հասնել պատերազմի խեղճ զոհերին եւ թոյլ չը տալ, որ գազանութիւններից ազատված՝ նրանք մեռնեն մեր աչքերի առաջ»[6]:

Եվ օգնութիւնն իրեն երկար սպասել չտուեց: Գաղթականներին աշխատանքով, ուրեմն եւ ապրուստի միջոցներով ապահովելու, եւ տեղերում տնայնա-

---

[1] «Աշխատանք», Եր., 1916, N 44, 1 հոկտեմբերի, էջ 4:
[2] «Համբաւաբեր», Թիֆլիս, 1916, N 42, 16 հոկտեմբերի, էջ 1328:
[3] «Մշակ», Թիֆլիս, 1916, N 244, 1 նոյեմբերի, էջ 3:
[4] «Աշխատանք», Եր., 1916, N 20, 10 օգոստոսի, էջ 4:
[5] «Մշակ», Թիֆլիս, 1916, N 282, 18 դեկտեմբերի, էջ 3:
[6] «Մշակ», Թիֆլիս, 1916, N 244, 1 նոյեմբերի, էջ 3:

գործութեան զարգացման համար 1916թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին ամերիկեան բարեգործական ընկերությունները Երեւանի նահանգի տարբեր գաւառներում հիմնեցին փայտի, կաթի, բրդի եւ բամբակի մշակման արհետանոցներ: «Հայ գաղթականների ամերիկեյան օգնության կոմիտէի» ներկայացուցիչ մայոր Մեյնարդի եւ «Եղբայրական Օգնութեան» Ալեքսանդրապոլի կոմիտէի համատեղ ջանքերով 15-ական դազգահներով բրդի եւ բամբակի մշակման արհեստանոցներ բացուեցին նաեւ Ալեքսանդրապոլի գաւառում[1]: Ըստ «Աշխատանք» օրաթերթի՝ սա հնարաւորութիւն տվեց 1490 գաղթականների ապահովել աշխատանքով: Այսինքն՝ միջին հաշուով մօտ 6000 մարդ բարելաւեց իր կենսապայմանները: Սրանցից 40-ը տղամարդիկ էին (վարպետներ), իսկ 1450-ը՝ կանայք (800-ն աշխատում էր բրդի, իսկ 650-ը՝ բամբակի մանարաններում)[2]:

Փետրուարեան յեղաշրջումից յետոյ գաղթականութեան ընդունման, ցուցակագրման, տեղաւորման, կենսապայմանների ապահովման եւ այլ հիմնախնդիրների լուսաբանումն արեւելահայ մամուլի էջերում յետին պլան մղուեց. առաջնային քննարկման առարկայ դարձաւ բուռն զարգացում ապրող քաղաքական կեանքը:

Երկար որոնումներից յետոյ մեզ յաջողվեց գաղթականութեան խնդիրները լուսաբանող երկու կարճ հաղորդագրութիւն գտնել «Աշխատանք» օրաթերթում: Դրանցից առաջինը թուագրուած է փետրուար ամսով: Պարբերականի Երեւանցի ստորագրութեամբ թղթակիցը տեղեկացնում է, թէ իրենց ներկայով ու ապագայով մտահոգուած սասունցիները՝ մշեցի Սմբատի ու Նժդեհի գլխաւորութեամբ Ալեքսանդրապոլում հիմնել են «Տարօն-Տուրուբերան» անունով մի ընկերութիւն, որը նպատակ ունի գաղթականներին արհեստներ սովորեցնել ու նպաստել հայրենիքի վերականգնմանը: Ըստ թղթակցի՝ ընկերութիւնը քաղաքում բացել էր երկու արհեստանոց. «կանանց, ուր մեքենաներով պատրաստում են չուլկիներ, գործում կտորներ, մանում թել ու տղամարդկանց, որն ունի երկու մաս՝ ատաղձագործութիւն ու դարբնութիւն»[3]:

Երկրորդ հաղորդագրութիւնը թուագրուած է հոկտեմբեր ամսով, երբ ըստ արխիւային վաւերագրերի՝ Ալեքսանդրապոլի գաւառում, բացի որբանոցների սաներից, կար 25754 գաղթական[4]: Պարբերականի Աշուր ստորագրությամբ թղթակիցը, նկարագրելով գաղթականների օրհասական վիճակը, ընթերցողի դատին է ներկայացնում մի միջադէպ, որը տեղի էր ունեցել սեպտեմբերի 24-ին

[1] «Армянский вестник», Москва, 1917, год изд. 2, N 43, 23 ноября, стр. 18.
[2] «Աշխատանք», Եր., 1917, N 42, 30 սեպտեմբերի, էջ 1-2:
[3] «Աշխատանք», Եր., 1917, N 79, 8 փետրուարի, էջ 2-3:
[4] ՀԱԱ ֆոնդ 57, ցուցակ 2, գործ 1311, թ. 23-24:

Մոլլագեօկչա գիւղում հաստատուած գաղթականների եւ պահեստապետ Պ. Խաչիկի միջեւ: Չցանկանալով սպասարկել գաղթականներին, վերջինս լկտի հայհոյանքներ էր տեղացել, կանանց սպառնացել ատրճանակով, ապա պատռել էր պարենի գրքոյկները, փակել պահեստը ու գնացել քաղաք՝ մարդկանց թողնելով սովի ճիրաններում[1]: Թէ պահեստապետի ու գաղթականների միջեւ ծագած վէճն ի՞նչ ընթացք է ստացել, յայտնի չէ, որովհետեւ պարբերականն այլեւս չի անդրադարձել այս խնդրին:

1918թ. գարնանը տարածաշրջանում ռազմաքաղաքական իրավիճակը կտրուկ փոխուեց ի վնաս հայ ժողովրդի: Ապրիլի 1-ին սկսված թուրք-անդրկովկասեան պատերազմը եւ թուրքական զօրքի «յաղթարշաւը» կրկին խուճապ առաջացրեցին հայութեան շրջանում:

Փախստականների առաջին խմբերը Կարսի եւ Բաթումի շրջաններից Ալեքսանդրապոլ հասան մարտին[2], սակայն գաղթը զանգուածային բնոյթ ընդունեց ապրիլի 12-ից յետոյ, երբ Կարսը յանձնուեց թուրքերին: Տեղի շրջանային կոմիսար Զամոեանի Անդրկովկասեան Սեյմ ուղարկած հեռագրի համաձայն՝ մինչեւ 1918թ. մայիսի 1-ը Կարս քաղաքից եւ համանուն շրջանից Ալեքսանդրապոլի գաւառ կարող էին անցնել մօտ 200.000 փախստականներ[3]:

1918թ. ապրիլ-մայիս ամիսներին երկրամասում ստեղծուած քառսային իրավիճակը հնարաւորինս մանրամասն նկարագրուել է «Մշակ»-ում՝ մշտական թղթակիցներ Շարաֆեանի, Պապիկեանի, Մանդինեանի, Ղազարեանի, Ատրպետի եւ այլոց քրտնաջան ու անձնուրաց աշխատանքի շնորհիւ: «Փախստականների մի մասը, ով փրկել է իւր ունեցւածքն ու անասունները,- գրում էր թերթը,-շարունակում է ճանապարհը դէպի Ղարաքիլիսա, Լօռի եւ նոյն իսկ Հիւս. Կովկաս: Մյուս մասը ցրուել է Ալէքսանդրօպօլի գաւառի գիւղերը»[4]: Անհատ բարեգործներին ու պետական հաստատութիւններին պարբերականը կոչ էր անում շտապ միջոցներ ձեռք առնել գաղթականների այդ լաւան ընդունելու, սնունդով ապահովելու եւ տեղաւորելու համար, որովհետեւ հասարակական այն կազմակերպութիւնները, որոնք վերջին տարիներին զբաղուել էին նմանօրինակ խնդիրներով, այս քանակութեամբ գաղթականների օգնել ի զօրու չէին[5]:

Թէ գարնանային այս օրերին փախստական քանի՞ ընտանիք տեղափոխուեց Ալեքսանդրապոլի գաւառ, եւ թէ արդեո՞ք որեւէ մէկը զբաղուեց սրանց տեղա-

[1] «Աշխատանք», Եր., 1917, N 45, 11 հոկտեմբերի, էջ 3:
[2] «Մշակ», Թիֆլիս, 1918, N 69, 1 ապրիլի, էջ 2:
[3] «Մշակ», Թիֆլիս, 1918, N 81, 17 ապրիլի, էջ 2:
[4] «Մշակ», Թիֆլիս, 1918, N 82, 1 մայիսի, էջ 3:
[5] Նոյն տեղում:

վորմամբ ու տարրական կենսապայմանների ապահովմամբ, յայտնի չէ: 1918թ. մայիսի 15-ին գաւառի մեծ մասը զինակալուեց թուրքերի կողմից, որից յետոյ արեւելահայ մամուլի էջերից իսպառ վերացան տեղեկութիւններն այստեղ հաստատուած գաղթականության ինչպէս թուաքանակի, այնպես էլ վիճակի մասին:

***Հիւանդանոցային գործի կազմակերպում:***

Պատերազմը, գաղթականութեան օրըստօրէ աճող թիւը, սովն ու ցածր կենսամակարդակը էական նախապայմաններ հանդիսացան Ալեքսանդրապոլի գաւառում համաճարակային հիւանդութիւնների տարածման համար:

Մամուլում յայտնուած առաջին հաղորդումները տարափոխիկ հիւանդութիւններից տիֆի մասին էին: Ըստ «Մշակ»-ին թղթակցած Գեւորգ ք. Մկրտումեյանի՝ վարակն Ալեքսանդրապոլ էին բերել Երեւանից եկած փախստականները՝ 1915թ. ապրիլի սկզբներին: Սակայն հիւանդութիւնն առանձնապէս մեծ չափեր չէր ընդունել: Ապրիլի 24-ի դրությամբ հիւանդների ճնշող մեծամասնութիւնն արդեն ապաքինուել էր, մահացել էր 3-4 մարդ[1]:

Ալեքսանդրապոլի գաղթականների շրջանում տիֆը նորից յայտնուել էր 1915թ. սեպտեմբերի երրորդ տասնօրեակում, սակայն այս անգամ եւս զանգուածային բնոյթ չէր կրել: Ըստ Ատրպետի՝ սեպտեմբերի 19-ից 22-ն ընկած ժամանակահատուածում «Պօղոսեան» հանրակացարանից «Քաղաքների միութեան» հիւանդանոց էր տեղափոխուել 3 օլթեցի: Այն դէպքում, երբ խոլերայի ախորոշմամբ նույն օրերին հիւանդանոց էին դիմել 7 գաղթականներ[2]:

Առաւել զանգուածային ու կորստաբեր էր տիֆի երրորդ բռնկումը: «Գաւառի ձայն» օրաթերթի հաղորդած տուեալների համաձայն՝ համաճարակը սկսվել էր 1915թ. դեկտեմբերին, Փոքր Ղարաքիլիսա գիւղում, ապա անցել Արթիկ, Իլխիաբի եւ տարածուել գաւառի միւս բնակավայրերում[3]: Գաւվառում բժշկական շրջայց կատարած Ա. Տեր-Հովհաննիսեանի հավաստմամբ՝ համաճարակի տարածման հիմնական պատճառը կենցաղային անբարենպաստ պայմաններն էին, որոնցում յայտնուել էին գաղթականները: «Եթե բծաւոր տիֆով հիւանդներին ուղարկում ես հիւանդանոց, հարկ եղած դէպքում ոստիկանութեան միջոցով,-գրում է բժիշկը «Հորիզոն»-ի էջերում,-ապա ինչպէս ախտահարել այն ահագին օդաները իրենց ծակ ու ծուկերով, ուր փախստականներից զատ կան ձիեր, եզներ, կովեր, ընտանի աղաւնիներ, շատ անգամ եւ հաւեր»[4]:

Ընդհանուր առմամբ՝ 1915թ. դեկտեմբերին Կարսի մարզում ու Ալեքսանդ-

---

[1] «Մշակ», Թիֆլիս, 1915, N 100, 13 մայիսի, էջ 3:
[2] «Մշակ», Թիֆլիս, 1915, N 212, 27 սեպտեմբերի, էջ 3:
[3] «Գաւառի ձայն», Ալէքսանդրապոլ, 1916, N 1, 17 յունուարի, էջ 4:
[4] «Հորիզոն», Թիֆլիս, 1916, N 5, 10 յունուարի, էջ 5:

բապոլի գաւառում մոլեգնած բծաւոր ու աղիքային տիֆից օրական 3-5 մարդ էր մահացել, ինչն ըստ «Համբաւաբեր»-ի թղթակցի՝ բաւականին համեստ թիւ էր, որովհետեւ Էջմիածնի, Իգդիրի եւ Երեւանի գաւառներում նույն հիւանդութիւններին օրական զոհ էր գնում 30-300 գաղթական[1]:

Ալեքսանդրապոլի գաւառում տիֆի բռնկման վերջին դէպքը մամուլն արձանագրել էր 1916թ. աշնանը: «Համբաւաբեր»-ի թղթակից Տ. Շահբազեանի հաշուումներով՝ հոկտեմբերի 20-ից Աղքիլիսա եւ Սարիար գիւղերում մոլեգնած համաճարակին օրական զոհ էր գնում մինչեւ 5 մարդ[2]:

1915թ. ամռան վերջերին մամուլում տեղեկութիւններ յայտնուեցին գաւառում աղիքային սուր վարակիչ հիւանդութիւնների եւ յատկապէս դիզինտերիայի տարածման մասին: «Մշակ»-ին թղթակցած Սարգիս Բոյրազեանի հաշուումներով՝ օգոստոսի 1-8-ն ընկած ժամանակահատվածում միայն Նալբանդ գյուղում հիւանդութեանը զոհ էր գնացել 20 մարդ[3]: Եվս 20-ը՝ ըստ Ատրպետի, մահացել էր սեպտեմբերի 3-ին՝ քաղաքի հիւանդանոցում[4]: Իսկ ընդհանուր առմամբ 1915թ. օգոստոսի 27-ից մինչեւ նոյեմբերի 1-ը «Քաղաքների միութեան» Ալեքսանդրապոլի հիւվանդանոցներն ընդունել էին աղիքային հիւանդութիւններով ախտահարուած 518 գաղթականների: Հաջորդ երկու ամիսների ընթացքում սրանցից 397-ը ապաքինուել էին, իսկ 121-ը՝ մահացել (90-ը՝ սեպտեմբերին, 31-ը՝ հոկտեմբերին)[5]:

Գաղթականների շրջանում տարածուած տարափոխիկ հիւանդութիւններից մահացութեան բարձր ցուցանիշներով աչքի ընկաւ նաեւ «ծաղիկը»: «Համբաւաբեր»-ի պնդմամբ 1915թ. դեկտեմբերի կեսերին գաւառի մի քանի գիւղերում յայտնուած հիւանդութիւնը, չնայած իր տեղային (լոկալ) բնոյթին, 1-10 տարեկան երեխաների շրջանում օրական 7-8 կեանք խլեց[6]: Օրինակ, ըստ «Հորիզոն» օրաթերթի՝ միայն Սոնգիւռլի գիւղի եկեղեցում 1916թ. հունվարի 5-ի դրութեամբ երեխայի 7 դի կար[7]: Նոյն պարբերականի այլ հաղորդագրութիւնների համաձայն 1915թ. դեկտեմբերից մինչեւ 1916թ. յունուարի առաջին շաբաթն ընկած ժամանակահատուածում 35 երեխա ծաղկի համաճարակին զոհ էր դարձել Ջաջուռում[8], Ջաջուռում[8], 3-ն էլ Ձիթհանքովում[1]:

---

[1] «Համբաւաբեր», Թիֆլիս, 1916, N 4, 17 յունուարի, էջ 102:
[2] «Համբաւաբեր», Թիֆլիս, 1916, N 47, 20 նոյեմբերի, էջ 1487:
[3] «Մշակ», Թիֆլիս, 1915, N 177, 13 օգոստոսի, էջ 2:
[4] «Մշակ», Թիֆլիս, 1915, N 198, 8 սեպտեմբերի, էջ 2:
[5] «Մշակ», Թիֆլիս, 1915, N 249, 10 նոյեմբերի, էջ 3:
[6] «Համբաւաբեր», Թիֆլիս, 1916, N 3, 10 յունուարի, էջ 77:
[7] «Հորիզոն», Թիֆլիս, 1916, N 3, 6 յունուարի, էջ 2:
[8] «Հորիզոն», Թիֆլիս, 1916, N 4, 9 յունուարի, էջ 3:

Տարափոխիկ հիւանդութիւնների դեմ պայքարելու համար Ալեքսանդրապոլի գաւառում առաջին հիւանդանոցն ու դեղատունը «Հորիզոն» օրաթերթի հաւաստմամբ բացուեց 1914թ. դեկտեմբերի 27-ին՝ «Եղբայրական օգնութեան» տեղի կոնիտէի, «Երիտասարդական Միութեան» եւ «Ալագեազի Զաւակունք» ընկերութիւնների համատեղ ջանքերով[2]: Թիֆլիսի «Հայկական կենտրոնական Կոմիտէի» կողմից Ալեքսանդրապոլում բացուած երկրորդ հիւանդանոցի մասին ազդարարեց «Գաւառի ձայն»-ը[3]: «Քաղաքների Միութեան» կոմիտէի կողմից 1915թ. հոկտեմբերին Մեծ Ղարաքիլիսայում հիմնուած հիւանդանոցի մասին էլ յայտնեց «Մշակ»-ը[4]:

Սակայն համաճարակային հիւանդութիւններն այս փոքրաթիւ ուժերով արմատախիլ անելն անհնար էր, եւ 1915թ. յունուարին արեւելահայ մամուլն ահազանգեց գոյութիւն ունեցող հիւանդանոցային ցանցն անյապաղ ընդլայնելու անհրաժեշտութեան մասին: Օրինակ «Գաւառի ձայն»-ն այդ տարուայ իր անդրանիկ համարում գրում էր, թէ գաւառում «տարածուած են տիֆ, սկարլատինա, դիֆտերիդ… եւ գաղթականները ներկայումս ունին բացառապես բժշկի, ֆելտշերի (բուժակ) եւ դեղօրայքի կարիք»[5]:

Ցավոք, առաջին քայլերից յետոյ արեւելահայ մամուլը մեզ համար անյայտ պատճառներով այլեւս անհրաժեշտ հետեւողականութիւն չցուցաբերեց առողջապահութեան ոլորտի հիմնախնդիրների նկատմամբ: Մինչդեռ 1915թ. ամռանն այս բնագաւառում լրջագոյն տեղաշարժեր կատարուեցին. օգոստոսի 27-ին «Եղբայրական օգնութեան» կոմիտէի հիւանդանոցներն անցան «Քաղաքների Միութեան» ենթակայութեան տակ: Ողջ բժշկա-սանիտարական գործը իր հսկողութեան տակ վերցրած կոմիտէն մինչեւ տարեվերջ միայն Ալեքսանդրապոլի գաւառում 5 հիւանդանոց հիմնեց, այդ թւում՝ 200 մահճակալով մէկը՝ գավառակենտրոնում[6], ինչի շնորհիւ գաղթականների շրջանում համաճարակային բռնկումները նուազեցին, իսկ մահացութեան դէպքերը դարձան հազուադէպ[7]:

---

[1] «Հորիզոն», Թիֆլիս, 1916, N 5, 10 յունուարի, էջ 5:
[2] «Հորիզոն», Թիֆլիս, 1916, N 8, 14 յունուարի, էջ 5:
[3] «Գաւառի ձայն», Ալէքսանդրապոլ, 1915, N 4, 18 յունուարի, էջ 2:
[4] «Մշակ», Թիֆլիս, 1915, N 271, 8 դեկտեմբերի, էջ 3:
[5] «Գաւառի ձայն», Ալէքսանդրապոլ, 1915, N 1, 11 յունուարի, էջ 3:
[6] Ալեքսանդրապոլ քաղաքի եւ համանուն գաւառի տարածքում «Քաղաքների միութեան» կոմիտէի ծաւալած հիւանդախնամ գործունեութեան մասին մանրամասն տե՛ս Положение беженцев в Александропольском районе, Баку, 1915; Краткие сведения о волне беженцев из Турецкой Армении в июле 1915г. и о мерах, принятых Кавказским Комитетом Союза городов для борьбы с эпидемией среди них, Тифлис, 1915; Краткие сведения о положении беженцев на Кавказе и оказанной им Союзом городов помощи за время с 20-го сентября по 1-ое ноября 1915г., вып. 2, Тифлис, 1915.
[7] «Աշխատանք», Եր., 1916, N 44, 1 հոկտեմբերի, էջ 4:

Ընդհանուր առմամբ հարկ է նշել, որ Ալեքսանդրապոլի գաւառում, շնորհիւ հասարարական կազմակերպութիւնների եւ յատկապէս «Քաղաքների միութեան» կոմիտէի անձնուրաց աշխատանքի, մահացութեան մակարդակն ընդհանուրի համեմատ խիստ ցածր էր: Համաձայն Ալեքսանդրապոլի փոխանորդ Արտակ վարդապետի 1916թ. յունիսի 16-ին Ամենայն հայոց կաթողիկոս Գեւորգ Ե-ին ներկայացրած տեղեկագրի՝ ցրտից, սովից ու հիւանդութիւններից 1915թ. ընթացքում գաւառում մահացել էր ընդամէնը 1164 գաղթական (331-ը՝ Ալեքսանդրապոլում, 833-ը՝ գաւառի գիւղերում)[1]: Համեմատութեան համար նշենք, որ ըստ Բ.Իշխանեանի հաշւումների՝ Էջմիածնում միայն 1915թ. օգոստոսի վերջին տասնօրեակում սովի եւ համաճարակի զոհ էր դարձել 2135 մարդ, օրական միջին թուով՝ 236 մարդ[2]:

***Կրթական գործի կազմակերպում:***

Աշխարհամարտի տարիներին Արեւելյան Հայաստան անցած գաղթականութեան մի ստուար զանգւածը երեխաներ էին: Միայն Ալեքսանդրապոլի գաւառում 1915թ. հոկտեմբերի 1-ի դրութեամբ անչափահասները կազմում էին 44%[3]: Երբ առաջին ամիսների խուճապային տրամադրութիւնները հանդարտուեցին, եւ գաղթականութիւնն ապահովուեց ապրուստի տարրական միջոցներով «գլուխ բարձրացրեց երեխայոց կրթութեան խնդիրը»[4]:

Ալեքսանդրապոլում գաղթական երեխաների համար առաջին դպրոցը բացուեց 1915թ. ամռանը: Դեկտեմբերին՝ 296 երեխաների համար, դպրոցներ բացուեցին նաեւ Մեծ Ղարաքիլիսա, Համամլու, Ղշլաղ, Բոզգիւղ եւ Բեքանտ գիւղերում[5]: Հետագայում, պայմանաւորուած երեխաների թուի աճով, դպրոցներ բացուեցին նաեւ գաւառի միւս բնակավայրերում: Դրանց մի մասը լիովին անկախ էր, ապահուուած շէնքով, առանձին ուսուցչական անձնակազմով եւ աչքի էր ընկնում կանոնաւոր դասընթացով: Դպրոցների միւս մասը զուրկ էր սեփական շէնքից, ուսուցչական անձնակազմ չուներ, իսկ դասերն անցկացւում էին տեղի ծխական դպրոցների շէնքերում՝ օրուայ երկրորդ կեսին: Գիւղական բնակաւայրերում խնդրի լուծումն աւելի դիւրին էր: Օրինակ, ըստ «Հորիզոն» պարբերա-

---

[1] ՀԱԱ, ֆոնդ 57, ցուցակ 2, գործ 1306, թ. 3-7:

[2] «Մշակ», Թիֆլիս, 1915, N 203, 17 սեպտեմբերի, էջ 2: Ի դեպ, 1915թ. օգոստոսի վերջին տասնօրյակում Էջմիածնում մահացածների թիվը հաշվելիս Ա-Դոն նշում է 2613 մարդ (Տե՛ս Ա-Դո, Մեծ դեպքերը Վասպուրականում 1914-1915թթ., Եր., 1917, էջ 485):

[3] 1915թ. հոկտեմբերի 1-ին անցկացված մեկօրյա ցուցակագրման տվյալներով՝ Ալեքսանդրապոլ քաղաքում եւ համանուն գավառում կար 22815 գաղթական, որից 10055-ը երեխաներ էին (Տե՛ս ՀԱԱ, ֆոնդ 57, ցուցակ 2, գործ 1287, թթ. 3-5):

[4] «Գաւառի ձայն», Ալէքսանդրապոլ, 1916, N 3, 23 յունուարի, էջ 4:

[5] «Մշակ», Թիֆլիս,1916,N 210,22 սեպտեմբերի, էջ 3: «Աշխատանք», Եր.,1916,N 44, 1 հոկտեմբերի, էջ 4:

կանի՝ Բուլանըղի կենտրոն Կոփից գաղթած 64 երեխաները հաճախում էին Համամլուի ծխական դպրոցը[1]: «Համբաւաբեր»-ի հաւաստմամբ՝ Սոգյութլի ծխական դպրոցում էին սովորում դերիկցի 50 երեխաներ[2], իսկ Բաշգիւղում՝ 45 մշեցիներ եւ սասունցիներ[3]:

Տեղի դպրոցները գաղթական սաներին ընդունում էին սիրով, սակայն լուծել վերջիններիս խնդիրները յաջողւում էր ոչ միշտ: Օրինակ, կային գիւղեր, որոնցում աշակերտների թիւը մեծ էր, իսկ դպրոցի շէնքը՝ փոքր: Մյուս գիւղերում պահանջ կար ուսուցչի, գրենական պիտոյքների, հագուստի ու սնունդի: Մի ողջ սերունդ անգրագիտութեան չմատնելու համար հասարակական կազմակերպութիւնները ստիպուած եղան իրենց ուսերին վերցնելու նաեւ գաղթական երեխաների կրթութեան գործը:

Արեւելահայ մամուլն այս հարցում եւս բավարար շահագրգռուածութիւն չցուցաբերեց եւ միայն հազվադէպ փորձեց վեր հանել ոլորտում առկայ խնդիրներն ու դրանց լուծման հնարաւոր տարբերակներ մատնանշեց:

Օրինակ, «Մշակ» պարբերականը գաղթական երեխաների համար բացուած դպրոցների գոյութեանը սպառնացող վտանգներից առանձնացրել էր երկուսը: Առաջինը դասագրքերի պակասն էր, երբ 60 աշակերտին բաժին էր հասնում 30 գիրք, եւ «ուսուցիչը ստիպուած էր փոխն ի փոխ մէկէն առնելով միւսին տալ, որպէսզի գիրք չունեցողն ալ իր դասը սովորի»: Յաջորդն ու առաւել կարեւոր խնդիրը, որ պահանջում էր անյապաղ լուծում, ցածր վարձատրութեամբ պայմանաւորուած՝ ուսուցչական անձնակազմի սակաւութիւնն էր: «Այսպիսի շատ ամսականով մը ուսուցիչը, ներկայ թանկ ու կրակ ժամանակին,-գրում է պարբերականի Վտարանդի ստորագրությամբ թղթակիցը,-պիտի հոգայ իր բարոյական եւ ֆիզիքական պէտքերը եւ միեւնոյն ատեն պիտի ապրեցնէ իր ընտանիքի անդամները՝ եթէ վերջիններս ունենալու դժբաղտութիւնն ունի»[4]: Յօդուածագիրը գաղթականների խնամքով զբաղուող հասարակական կազմակերպութիւններին կոչ էր անում գիւղերում դպրոցների շէնքեր առանձնացնել՝ ապահովուած բարձր վարձատրուող ու աշակերտների թուին համապատասխան ուսուցչական անձնակազմով եւ գրենական պիտոյքներով:

Հասարակական կազմակերպութիւնների աջակցութիւնը դպրոցների անխափան գոյութեան գրավական էր համարում նաեւ «Գաւառի ձայն»-ը: Օրաթերթին թղթակցած Թ. Խզմալեանն առաջարկում էր «Եղբայրական օգնութեան»

---

[1] «Հորիզոն», Թիֆլիս, 1916, N 43, 25 փերվարի, էջ 3:
[2] «Համբաւաբեր», Թիֆլիս, 1916, N 24, 12 յունիսի, էջ 749:
[3] Նոյն տեղում:
[4] «Մշակ», Թիֆլիս, 1916, N 210, 22 սեպտեմբերի, էջ 3:

Ալեքսանդրապոլի կոմիտէի օրինակով դպրոցներին մեկ աշակերտի հաշվով 2-ական ռուբլի յատկացնել գրենական պիտոյքներ գնելու համար եւ նուազագոյնը 50 ռուբլով բարձրացնել ուսուցիչների աշխատավարձը[1]:

Գաղթական երեխաների համար երբեւէ բացուած դպրոցների շարքում արեւելահայ մամուլը գրեթէ միաբերան առաւել յաջողուած է համարել «Եղբայրական օգնութեան» կոմիտէի կողմից 1915թ. հունիսին Ալեքսանդրապոլում հիմնուածը՝ «Գաւառի ձայն» պարբերականի խմբագիր Յովսեփ Միրզոյեանի տնօրինութեամբ: Գաղթական սաների առջեւ դպրոցն իր հիւրընկալ դռները բացել էր հունիսի 22-ին: Իբրեւ ամառային՝ այն իր 280 սաներով (200 հայ, 80 հույն) մինչեւ սեպտեմբերի 1-ը գործել էր Արդութեան եւ Սեյլանեան դպրոցների շէնքում[2]: Երբ սեպտեմբերին տեղական դպրոցներում վերսկսուել էին պարապմունքները, Արդութեան եւ Սեյլանեան դպրոցների շէնքերը վերադարձուել էին իրենց տերերին: Իսկ գաղթականական դպրոցը, Բաքուի եւ տեղի Ազգային կոմիտէներից 10000 ռուբլի ստանալով, նորից վերաբացուել էր հոկտեմբերի 15-ին: Այժմ արդէն դպրոցն ուներ 11 բաժանմունք (9 հայկական եւ 2 յունական) եւ 419 սան: Աշակերտներից 316-ը հայեր էին, 54-ը՝ յոյներ, մեկը՝ ռուս: Սրանցից 276-ը ռուսահպատակ փախստականներ էին, 138-ը՝ արեւմտահայ, իսկ 2-ը՝ պարսկահայեր: «Հորիզոն» պարբերականի հավաստմամբ՝ դպրոցը աչքի էր ընկնում գերազանց մաքրութեամբ ու կարգապահութեամբ, իսկ «սաները ոչ միայն տաք էին հագնվուած, այլեւ ունին համազգեստ, որպիսին չունին միւս ծխական դպրոցներում սովորողները»[3]:

Ամփոփելով 1914-1918թթ. Ալեքսանդրապոլի գաւառում հաստատուած գաղթականութեան շրջանում առկա խնդիրների լուսաբանման գործում արեւելահայ մամուլի ունեցած դերակատարութեան համառօտ քննութիւնը՝ նշենք հետեւյալը. մամուլը հետեւեց գաղթականների տեղաւորման եւ տարրական կենսապայմանների ապահովման աշխատանքներին, ներկայացրել է խնամատարութեան ոլորտում հասարակական կազմակերպութիւնների ձեռքբերումները, մատնանշել է

---

[1] «Գաւառի ձայն», Ալէքսանդրապօլ, 1916, N 3, 23 յունուարի, էջ 4:

[2] Դպրոցի մասին մանրամասն տե՛ս նաեւ ՀԱԱ, ֆոնդ 57, ցուցակ 2, գործ 1306, թթ. 8-9: Արեւմտահայ գաղթականութիւնը Ալեքսանդրապոլի գաւառում 1914-1922թթ., Փաստաթղթերի ժողովածու, խմբ. **Կ. Ալեքսանեան**, Եր., 2012,փաստ. N 18, էջ 78-82: «Армянский вестник»,Москва, 1917,год изд. 2, N 8, 20 марта, стр. 11.

[3] Դպրոցի 276 ռուսահպատակ սաներից 269-ը գաղթել էին Կարսից, Օլթիից, Արդահանից եւ Սարիղամիշից, 6-ը՝ Արդուինից եւ Տանձուտից, մեկը՝ Մինսկի նահանգից: Ռուսահպատակ սաներից 12-ը երկկողմանի ծնողազուրկներ էին, 20-ը՝ միակողմանի: 138 արեւմտահայ սաներից 15-ը գաղթել էին Մանազկերտից, 11-ը՝ Էրզրումից, 20-ը՝ Բիթլիսից, 16-ը՝ Վանից, 43-ը՝ Բուլանըղից, 14-ը՝ Մուշից: Արեւմտահայերից երկկողմանի ծնողազուրկներ էին 29-ը, միակողմանի՝ 48-ը (Մանրամասն տե՛ս «Հորիզոն», Թիֆլիս, 1916, N 48, 2 մարտի, էջ 4):

առկայ խնդիրներն ու առաջարկել դրանց լուծման իր տարբերակները:

Աշխարհամարտի տարիներին «Մշակ», «Գաւառի ձայն», «Աշխատանք», «Հորիզոն», «Համբաւաբեր» պարբերականների էջերում առանձին քննարկման թեմաներ են դարձել այնպիսի հարցեր, ինչպիսիք էին, օրինակ, տարրական կենցաղային պայմանների կամ ձմռային հագուստի եւ տաք վերմակների բացակայութիւնը,գիւղական բնակաւայրերում գաղթականների անհամաչափ տեղաբաշխուածութիւնը, գաղթականներ-տեղաբնիկներ փոխհարաբերութիւնները եւ այլն:

Պարբերական մամուլն իր համեստ ներդրումն է ունեցել նաեւ հիւանդանոցային եւ դպրոցական գործի կազմակերպման ոլորտներում: Օրինակ գիւղական բնակաւայրեր գործուղուած թղթակիցների անձնուրաց աշխատանքի շնորհիւ հասարակութիւնը ժամանակին իրազեկուել է համաճարակային բռնկումների մասին, ուրեմն եւ հնարաւոր է եղել խուսափել մարդկային աւելի մեծ կորուստներից: Նույն թղթակիցների շնորհիւ հասարակական հնչեղութիւն են ստացել եւ մասամբ լուծուել նաեւ գաղթական երեխաների համար բացուած դպրոցների խնդիրները:

Ցաւօք, Ալեքսանդրապոլի գաւառում հաստատուած գաղթականութեան խնդիրների լուսաբանման գործում արեւելահայ մամուլի ակտիւութիւնը 1915-1916թթ. սահմանափակուեց: Փետրուարեան հեղաշրջումից յետոյ գաղթականութիւնն իր խնդիրներով մամուլի էջերից մղուեց յետին պլան, իսկ առաջնային քննարկման առարկայ դարձաւ բուռն զարգացում ապրող քաղաքական կեանքը:

*«Հանդէս ամսօրեայ», հայագիտական ուսումնաթերթ,*
*ՃԼԱ տարի, թիւ 1-12, յունուար-դեկտեմբեր,*
*Վիեննա-Երեւան, 2017, էջ 341-364*

# ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԳԱՎԱՌԻ ՎԱՐՉԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԸ 1918Թ. ՄԱՅԻՍ-ՆՈՅԵՄԲԵՐ ԱՄԻՍՆԵՐԻՆ (ՕՍՄԱՆՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՌԱԶՄԱԿԱԼՄԱՆ ՇՐՋԱՆ)

1918թ. մայիսի 15-ի առավոտյան կարճատև ռմբակոծումից հետո, թուրքական զորքերը գրավեցին Ալեքսանդրապոլ քաղաքն ու համանուն գավառի մեծագույն մասը, սակայն գիտակցելով իրենց հաջողության ժամանակավոր բնույթը օկուպացված գավառում կառավարման Օսմանյան համակարգ չմտցրին: Գավառը բաժանվեց գյուղախմբերի, իսկ գավառապետը դրվեց Կարսի ճակատի հրամանատարի ենթակայության տակ:

Ալեքսանդրապոլը գրավելուց անմիջապես հետո թուրքերն ստեղծեցին քաղաքային նոր ինքնավարության:Մայիսի 17-ին Օսմանյան զինվորական հրամանատարության կարգադրությամբ քաղաքացիների ընդհանուր ժողովը Առևտրական գիմնազիայի կառավարիչ Լևոն Սարգսյանի գլխավորությամբ ձևավորեց քաղաքային խորհուրդ, իսկ հաջորդ օրը քաղաքային վարչություն: Ալեքսանդրապոլի քաղաքային ինքնավարությունը, ազգային կուսակցությունների ու պետական այլ հաստատությունների բացակայության պայմաններում, դարձավ միակ մարմինը, որը կենտրոնացրեց քաղաքի և գավառի հասարակական-պետական բոլոր գործերը:

Թուրքական իշխանությունները խուսափեցին Ալեքսանդրապոլի գավառում դատական համակարգը վերկանգնելուց: Փոխարենը քաղաքի գրավման հինգերորդ օրը ստեղծեցին ոստիկանական մի մարմին, որը վեց ամիս շարունակ զբաղվեց օկուպացված շրջանը թալանելով, թուրքական վայրագությունների հետքերը թաքցնելով ու «մահմեդականների նկատմամբ հայերի վայրագությունները բացահայտելով»:

**ՆԱԽԱԲԱՆ.** 1918թ. մայիսյան հերոսամարտերի պատմությունը հայ պատմագիտության թերևս ամենաուսումնասիրված հարցերից է: Անցած հարյուրամյակի ընթացքում հայրենիքում և սփյուռքում հրատարակվել են տասնյակ հուշագրություններ ու գիտական մենագրություններ: Հրապարակի վրա առկա է փաստավավերագրական բնույթի հսկայական տպագիր նյութ: Այդուհանդերձ որոշ հիմնահարցեր, ինչպես, օրինակ, գրավված Ալեքսանդրապոլի գավառում Օսմանյան իշխանությունների կողմից վարչաքաղաքական նոր համակարգի ներդրում, տեղի ազգաբնակչության հանդեպ իրագործված ցեղասպանական քաղաքականություն, այժմյան Շիրակի և Լոռու մարզերի ազգաբնակչության էթնիկ դիմախե-

ղում, գավառի, ինչու չէ, նաև Հայաստանի նորանկախ Հանրապետության տնտեսությանը հասցված ահռելի վնասներ և այլն, առայսօր լուրջ ուսումնասիրության ենթարկված չեն:

Արխիվային նորահայտ վավերագրերի, գիտական գրականության և ժամանակի մամուլի հաղորդումների համադրմամբ հոդվածում առանձին ուսումնասիրության առարկա ենք դարձրել Ալեքսանդրապոլի գավառի վեցամսյա ռազմակալման ընթացքում Օսմանյան իշխանությունների որդեգրած վարչական քաղաքականությունը: Հուսով ենք այս կերպ հանրային սեփականություն դարձնել մեր հարևան պետության հանցավոր պատմության ևս մեկ էջ:

1918թ. գարնանն աշխարհամարտի Կովկասյան ճակատում ռազմաքաղաքական իրավիճակը կտրուկ փոխվեց ի վնաս հայ ժողովրդի: Բրեստ-Լիտովսկի պայմանագրով Խորհրդային Ռուսաստանի պատերազմից դուրս գալուց հետո Անդրկովկասյան սեյմը փորձեց Օսմանյան կայսրության հետ փոխհամաձայնության եզրեր գտնել, սակայն հաջողության չհասավ: Ապրիլի 1-ին վերսկսած թուրք-անդրկովկասյան պատերազմը երկրամասի վրացի և թաթար գործիչների հակահայ դիրքորոշման արդյունքում վերածվեց թուրքական զորքերի հաղթարշավի: Կարսի անկումից հետո անհագ դարձած թուրքական հրամանատարությունը մայիսի 14-ի գիշերը վերջնագրով պահանջեց իրեն հանձնել նաև Ալեքսանդրապոլը:

Կարսից հետո հայկական կողմի համար Ալեքսանդրապոլը թուրքական հաղթարշավը կանգնեցնելու վերջին պատվարն էր: Թողնել քաղաքը նշանակում էր թշնամուն հանձնել ոչ միայն Ալեքսանդրապոլ-Զուլֆա երկաթուղին, այլև ողջ Արևելյան Հայաստանը:

Չսպասելով վերջնագրի պատասխանին՝ մայիսի 15-ի առավոտյան թուրքերը կարճատև ռմբակոծումից հետո գրոհով տիրեցին քաղաքին, ապա նաև համանուն գավառի մեծագույն մասին [22, էջ 171]:

Հայաստանի առաջին Հանրապետության ապագա վարչապետ, ոչ վաղ անցյալում Ալեքսանդրապոլի քաղաքագլուխ Ալ. Խատիսյանը տարիներ անց իր «Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը» խորագրով աշխատության մեջ տեղի ունեցածը ներկայացրեց հետևյալ կերպ. «Այն ատեն, երբ մենք կը բանակցէինք Թուրքերու հետ Պաթումի մէջ հաշտութեան պայմաններու մասին, Թուրքերը... յանկարծ, յարձակում գործած էին Ալեքսանդրապոլի վրայ... եւ գրաւած էին քաղաքը» [10, էջ 73]:

Պաշտպանվածության առումով վերջնագրի նախօրեին Ալեքսանդրապոլը գրեթե անառիկ էր. միայն բերդապահ զորքի պաշտոնական թվաքանակը կազմում էր 506 սպա և 5576 զինվոր՝ 100 գնդացրով և 134 հրանոթով: Բացի այդ, քա-

ղաքում և շրջակա գյուղերում տեղակայված էին հայկական առաջին դիվիզիան, հայկական միացյալ զորամասը և Անդրանիկի զորամասը ընդհանուր առմամբ մոտ 16000 զինվոր և 1100 սպա [23, էջ 622]: Ալեքսանդրապոլում էին գեներալ Թ. Նազարբեկյանը, գնդապետներ Դ. Բեկ-Փիրումյանը, Ա. Հովսեփյանը, Կարաքեշիշյանը, Ս. Սամարցյանը և ուրիշներ: Նույնիսկ թուրքական հարձակման պահին քաղաքում կար 7000 հոգանոց զորամաս:

Այս դեպքում տրամաբանական հարց է առաջանում. ինչպե ս թշնամուն հաջողվեց առանց լուրջ դիմադրության հանդիպելու տիրանալ քաղաքին: Մանավանդ երբ Կարսից հետո արդեն պարզ էր, որ թուրքերն առաջ էին շարժվելու դեպի Ալեքսանդրապոլ, հետևապես ամեն ինչ պետք է արվեր վերջինիս պաշտպանությունն ապահովելու համար:

Վերլուծելով թուրքական հաղթանակների գաղտնիքը «Кавказское слово» պարբերականը գրել է. «Եթե ուշադիր նայենք, ապա պարզ կդառնա, որ թուրքերի բոլոր հաջողությունները սկսած Տրապիզոնից մինչև Ալեքսանդրապոլ, հանդիսանում են ոչ այնքան ռազմական գործողությունների հաջող իրականացման այդ բառի իրական առումով, որքան դիվանագիտական խարդավանքների ու միջազգային իրավունքի նորմերի խախտման արդյունք» [25, էջ 1]: Ըստ պարբերականի հայերի հաշվին վրացական գավառները պաշտպանելու իր մոլուցքի մեջ Անդրկովկասյան կառավարությունն, ի դեմս վրաց մենշևիկների, թշնամուն հակահարված տալու փոխարեն պարբերաբար զիջումներ անելով, ստիպեցին վերջինիս հավատալ սեփական անպարտելիության առասպելին:Ահավասիկ այդ վարքագծի մեկ օրինակ. Կարսի անկումից հետո Ալեքսանդրապոլ ժամանած գեներալ Դենի զորքերը տեղում պահելու և քաղաքի կայազորը համալրելու փոխարեն, իշխանությունները դրանք ուղարկեցին Թիֆլիս:

Ալեքսանդրապոլի անկման հարցում մասնաբաժին ունեցավ նաև հայկական զինվորական հրամանատարությունը, որ միամտաբար հավատում էր, թե թուրքն Ախուրյանը չի անցնի [9, էջ 2]: Անհիմն էր ու անտրամաբանական նաև ընդհանուր հրամանատարի պաշտոնում իր պարտվողական տրամադրություններով հայտնի գեներալ Մ. Արեշյանի նշանակումը:

Հենց պատահականությունների ու հանցավոր անհեթեթությունների այս շարքն էլ 1918թ. մայիսի 15-ին հանգեցրեց քաղաքի կորստին: Ականատեսների վկայությամբ գրոհի սկզբում բերդապահ կայազորը դիմադրություն ցույց տվեց, և միայն առաջին մեկ ժամում 180 թուրք զոհվեց (հայկական կողմից 9 զոհ): Թշնամին ստիպված եղավ գրոհը դադարեցնել և պատվիրակություն ուղարկելով հայտնեց, թե «քաղաքը (Ալեքսանդրապոլը-Ա.Հ.) գրաւելու կամ ժողովրդի… դէմ պատերազմելու նպատակ չունին, ինչու զուր տեղը դուք կը կռուիք: Բաթումի

հաշտարար պատգամաւորներու որոշման համաձայն արդէն երկաթուղագծերը տրուած են մեզի, որով մենք զօրքը պիտի փոխադրենք Ջուլֆա, և պիտի մնանք կայարանի մէջ, առանց քաղաքը մտնելու և զինուորութեան կամ բնակչութեան վնասելու» [24, էջ 1-2]:

Բերդապահ կայազորի դիմադրությունն շարունակվեց մոտ երեք ժամ: Այն բանից հետո, երբ հայկական զորքերը, նրանց հետ նաև քաղաքային բնակչության մեծ մասը լքեցին Ալեքսանդրապոլը, տեղում մնացածները բերդի պարետ Յանկովսկու առաջարկով,Մկրտիչ Ղազարյանի գլխավորությամբ պատվիրակություն ուղարկեցին թուրքերի մոտ և կյանքի, գույքի և պատվի անձեռնմխելիության երաշխիքներ ստանալով քաղաքը հանձնեցին [14, էջ 51]:

Հետաքրքիր է այն, որ Ալեքսանդրապոլի սակավաթիվ և որպես կանոն չեզոք մահմեդական ազգաբնակչությունը փորձել էր օգտվել իրավիճակից և մայիսի 15-ի վաղ առավոտյան երկու հույների և մեկ հայի ուղեկցությամբ ինքնագլուխ պատվիրակություն ուղարկելով թուրքական հրամանատարության մոտ առաջարկել էր քաղաքն առանց կռվի հանձնել [5, էջ 2]:

Ալեքսանդրապոլի համար օրհասական այդ պահին կործանվող քաղաքը խուճապահար լքեցին և Ղարաքիլիսայի ու Դիլիջանի ուղղությամբ փախան նաև քաղաքային խորհրդի և վարչության անդամները, հասարակական, տնտեսական ու գաղթականական կազմակերպությունների ղեկավարները, ինչպես նաև քաղաքային ոստիկանությունն իր ողջ կազմով [12, էջ 1-41]: Ալեքսանդրապոլից հեռացավ նույնիսկ տեղի հոգևոր առաջնորդ Արտակ վարդապետը (1918թ. հունիսի 3-ին Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Ե-ին գրած նամակում Արտակ վարդապետն իր փախուստը փորձել է արդարացնել ա.) գեներալ Նազարբեկյանի հեռանալուց հետո քաղաքում սկսված ընդհանուր խուճապով ու անիշխանությամբ և բ.) Հառիճի վանքի 30.000ռ. և Կարսի հոգևոր կառավարության ու Էջմիածնապատկան մոտ 10000ռ. գումարները փրկելու ցանկությամբ) [11,էջ 1013]: Գիտակցելով իր սխալը մի քանի օր անց վերջինս վերադարձավ և փորձեց բանակցությունների միջոցով թուրքական հրամանատարությունից փախստականների քաղաք վերադառնալու թույլտվություն ստանալ: Իսկ քաղաքային խորհրդի և վարչության անդամներն ընդհակառակը անցան Թիֆլիս, այնպես որ քաղաքային ինքնավարությունը դադարեց գոյություն ունենալուց [16, էջ 3]:

Ալեքսանդրապոլցիների վերաբերմունքը «հարազատ» իշխանությունների հանդեպ լավագույնս արտացոլվել է ժամանակի մամուլում: «Փախան քաղաքից մեր դաշնակցական հայրերը,-գրում է «Մշակ»-ին թղթակցած անհայտ նամակագիրը,-իրենց հետ վերցնելով նաև պարենաւորման ու այլ հիմնարկութեանց փոդերը, ստոր կերպով դաւաճանելով այն ժողովրդին, որի անունով այնքան կոկորդ

էին պատռում: Պէտք է տեսնէիք, թէ ինչ նզովք էր կարդում ժողովուրդը Դաշնակցութեան ետևից,ինչպիսի անէծքներ էին լսվում նրա գործիչների հասցէին»[4,էջ2]:

Գիտակցելով իրենց հաջողության ժամանակավոր բնույթը թուրքերը ռազմակալված Ալեքսանդրապոլի գավառում կառավարման Օսմանյան համակարգ չմտցրին: Գավառի ղեկավարությունը Օսմանյան քաղաքացիական իշխանությունների հետ որևէ կապ չուներ, իսկ գավառապետն (Ալեքսանդրապոլի գավառի վեցամսյա ռազմակալման շրջանում գավառապետի պաշտոնում միմյանց հաջորդեցին Հայդար բեկը, Ռաշիդ բեյը, Ռեջեբ բեյը, Ռահիմ (Ռոհեմ) բեյը) ուղղակի ենթարկվում էր Կարսի ճակատի հրամանատարին [13,էջ 105-109]: Գավառը բաժանվել էր գյուղախմբերի և գյուղերի բաշ-մուխտարների (ավագ գյուղապետ) ու մուխտարների (գյուղապետ) գլխավորությամբ: Եվս վեց մուխտարությունների բաժանվել էր գավառակենտրոնը:

Ալեքսանդրապոլը գրավելուց անմիջապես հետո թուրքերը վերականգնեցին քաղաքային ինքնավարության գործունեությունը: Քաղաքի ռազմակալման երկրորդ օրը մայիսի 17-ին,Օսմանյան զինվորական հրամանատարության կարգադրությամբ քաղաքացիների ընդհանուր ժողովը Առևտրական գիմնազիայի կառավարիչ Լևոն Սարգսյանի* գլխավորությամբ ձևավորեց 29 հոգուց բաղկացած քաղաքային խորհուրդ (16 հայ, 3 հույն, 3 մահմեդական, 3 ռուս, 2 վրացի, 2 հրեա) [3, էջ 24-40, 1, էջ 283-300]: Հաջորդ օրը քաղաքային խորհուրդն իր կազմից փակ-գաղտնի քվեարկությամբ ընտրեց 15 հոգանոց գործադիր իշխանություն' քաղաքային վարչություն, 16 հանձնաժողովներով (սանիտարական, պարենավորման, վերստուգիչ, ֆինանսական, ցուցակագրման, իշխանությունների հետ հարաբերությունները պահպանող և այլն) [19, էջ 8, 17, էջ 30]: Ալեքսանդրապոլի քաղաքագլուխ, քաղաքային խորհրդի և վարչության նախագահ ընտրվեց Լ. Սարգսյանը, օգնականներ Պ. Մերկուրովը և Հ. Յուսուֆ-Օղլի- Յուսուֆով, քարտուղար Ցիխիստովը, թարգմանիչ Մուբայաջյանը [16, էջ 5]: Քաղաքային ինքնավարության ենթակայության տակ դրվեցին նաև գավառի վարչական պաշտոնյաները բաշ-մուխտարներն ու մուխտարները,որովհետև սրանք նշանակվում էին վարչության կողմից թեև թուրքական հրամանատարության առաջարկությամբ:

Մայիսի 19-ին թուրքական հրամանատարությունը ճանաչեց քաղաքային իշխանությունների օրինականությունը, իսկ երեք օր անց Ալեքսանդրապոլ ժա-

* Սարգսյան Լևոն Դավիթի 1862-1927թթ, Ալեքսանդրապոլի Առևտրական գիմնազիայի վերատեսուչ, Ալեքսանդրապոլի քաղաքագլուխ՝ 1918թ. մայիս-1919թ. հունիս, 1919թ. հունիսի 3-ից՝ Ալեքսանդրապոլի պատվավոր քաղաքացի, Առևտրական գիմնազիայի վերատեսուչ՝ 1919թ. հունիս-1920թ. նոյեմբեր, Ալեքսանդրապոլի քաղաքագլուխ՝ 1920թ. նոյեմբեր 7-17, Ալեքսանդրապոլի Շրջանային հեղկոմի նախագահ՝ 1921թ. ապրիլի 23-ից մայիսի կեսերը, 1921-1922թթ.՝ ՀՍԽՀ ներկայացուցիչ Կարսում, ապա Թավրիզում:

մանած Վեհիբ փաշան Առևտրական գիմնազիայի շենքում (քաղաքային խորհրդի դահլիճում) հանդիպեց խորհրդի անդամներին: Խորհուրդը 9 հոդվածից բաղկացած խնդրագիր ներկայացրեց թուրք զորահրամանատարին պահանջելով հարգել անձի, գույքի ու պատվի անձեռնմխելիությունը, ազատել քաղաքացիներին թուրք պաշտոնյաների կամայականություններից, դադարեցնել թալանը, բռնություններն ու զեղծարարությունները, ինչպես նաև թույլ տալ Կարսի շրջանից գաղթած շուրջ 120000 հայերի իրենց բնակավայրերը վերադառնալ [5, էջ 3]:

Հունիսի 26-ին քաղաքային վարչությունը վերակազմավորվեց, իսկ բոլոր գործերը կենտրոնացվեցին մեկ ընդհանուր ղեկավարությամբ հինգ բաժիններում ֆինանսա-տնտեսական (Տեր-Մարտիրոսով), վարչական (Ս. Ղազարյան), սանիտարա-բժշկական (Ցիխիստով), տեխնիկական (Չախմասազով) և պարենավորման (Յուսուֆով) [15, էջ 5]:

Հարկային քաղաքականության հստակեցման նպատակով օգոստոսին Ալեքսանդրապոլի գավառապետի նախագահությամբ ստեղծվեց նոր մարմին Իդարե մեջլիս*, բաղկացած քաղաքային վարչության չորս անդամներից: Հաջորդ մեկ ամսվա ընթացքում սահմանվեցին հիմնական երեք հարկատեսակները ա. ընտանի կենդանիների, բ. հողի ու անշարժ գույքի և գ. առևտրի ու աշխատանքի դիմաց:

Վերջապես 1918թ. սեպտեմբերի 4-ից Ալեքսանդրապոլում իր աշխատանքն սկսեց նաև ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունը Գ. Խոյեցյանի գլխավորությամբ (վերջինիս զեկուցագրերը բացառիկ տեղեկություններ են հաղորդում թուրքական ռազմակալման շրջանում Ալեքսանդրապոլի գավառում տեղի ունեցած ոճրագործությունների այժմ արդեն արևելահայության հանդեպ կիրառված ցեղասպանական քաղաքականության մասին): Մինչև թուրքական զորքերի հեռանալը ներկայացուցչությունը միջնորդ դարձավ հայկական և օսմանյան իշխանությունների միջև: [2, էջ 112-149]:

Փաստորեն թուրքական տիրապետության շրջանում Ալեքսանդրապոլի քաղաքային ինքնավարությունը ազգային կուսակցությունների ու պետական այլ հաստատությունների բացակայության պայմաններում դարձավ միակ մարմինը, որը կենտրոնացրեց ոչ միայն քաղաքի, այլ նաև գավառի հասարակական-պետական բոլոր գործերը՝ միաժամանակ հանդիսանալով միջնորդ քաղաքի ու գավառի ազգաբնակչության և թուրքական հրամանատարության միջև, փորձեց

* Օսմանյան Թուրքիայում նահանգապետին կից գործող վարչական խորհուրդ, որտեղ բացի պաշտոնյաներից մտնում էին երկուական ներկայացուցիչներ մահմեդական և ոչ մահմեդական ազգաբնակչությունից: Խորհուրդը քննարկում էր վարչական, ֆինանսական, հասարակական, գյուղատնտեսական և այլ հարցեր:

հնարավորինս զսպել թուրքական բռնություններն ու պաշտպանել հայ բնակչության շահերը, ապահովել վերջինիս ֆիզիկական գոյությունը: «Քաղաքային ինքնավարությունը,-գրել է Ալեքսանդրապոլում ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչ Գ. Խոյեցյանն ԱԳՆ ներկայացրած իր զեկուցագրերից մեկում,-միջնորդություններ է յարուցում շատ անգամ բարեյաջող հետևանքով, այնպիսի խնդիրների վերաբերմամբ, որոնք ունենալով պետական լայն նշանակություն իր իրավասությանը ենթարկուել չեն կարող» [19, էջ 8]:

Քաղաքային նորաստեղծ իշխանությունների գործունեության առաջնահերթ խնդիրը դարձան փախստականների վերադարձն ու հարկային բեռի թեթևացումը:

Վարչությունը կազմակերպեց հացահատիկի գնումներ [17, էջ 8-9, 19, էջ 11]: Ազգաբնակչության կարիքների՝ մասնավորապես սպառվող հացի բավարարման համար 1918թ. հուլիսի 26-ին քաղաքային խորհուրդն ստեղծեց հացի առևտրի կազմակերպմամբ զբաղվող հանձնաժողով, ապա ձեռնամուխ եղավ նախկին վարչության անդամների կողմից Թիֆլիս տարված Ալեքսանդրապոլի բանկի գումարները՝ 1.200.052ռ. վերադարձնելու գործին [16, էջ 103]: Քաղաքային հին ու նոր իշխանությունների միջև ֆինանսական խնդիրները հարթվեցին միայն 1918թ. սեպտեմբերին այն բանից հետո, երբ Թիֆլիս ժամանած Լ. Սարգսյանի խնդրանքով գործին միջամտեց Վրաստանում Հայաստանի հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչ Ա. Ջամայյանը[16, էջ 103-104]:

Քաղաքային ինքնավարության մտահոգության առարկա դարձավ նաև պայքարը համաճարակային հիվանդությունների դեմ: Քայլեր ձեռնարկվեցին Երևանից և Թիֆլիսից բժիշկներ հրավիրելու, խոլերիայից մահացածների դիակները հատուկ վայրերում թաղելու, վեներական հիվանդությունների բուժման համար հիվանդանոցներ բացելու ուղղությամբ [15, էջ 62]: Փորձեր արվեցին նաև Թիֆլիս և Երևան փախած ալեքսանդրապոլցի ուսուցիչներին հետ բերելու միջոցով դպրոցական գործը վերակենդանացնելու ուղղությամբ [18, էջ 26]:

Տեղական իշխանությունների հետևողական քայլերի շնորհիվ արդեն հունիսից կյանքը քաղաքում կամաց-կամաց բնականոն հունի մեջ մտավ. վերաբացվեցին ճաշարանները, ռեստորանները, հյուրանոցները, հասարակական սննդի կենտրոններն ու խանութները:

Ժամանակակիցները բարձր են գնահատել Օսմանյան վեցամսյա ռազմակալման շրջանում Լ.Սարգսյանի ղեկավարած կառույցի գործունեությունը:Մասնավորապես, Ալեքսանդրապոլում ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչ Գ.Խոյեցյանը 1918թ. դեկտեմբերի 4-ին ԱԳՆ ուղարկած իր զեկուցագրում գրել է. «Երբ նախկին վարչությունը հեռացավ քաղաքից, ու մնացողներից ամէն մէկը ահով էր

դիտում մստիկ ապագային,... քաղաքագլուխ Լ. Սարգսեանը և Մ. Ղազարեանը*... միայն նահատակուող անգլուխ մնացած ժողովրդին իրենց ուժերի չափ օգնելու համար, մնում են քաղաքում: Այն, ինչ նրանք կրում են այս վեց ամսում…, նրանց տոկունությունը, նրանց յուժկու և համարձակ բողոքը այն բոլորի դէմ, ինչ նոյնիսկ նրանց իրավասությունից վեր էր և ավելի լայն բնոյթ էր կրում, այն անձնազոհ պաշտպանությունը ժողովրդի շահերի, որի պատճառով նրանք շարունակ հալածվել են և նոյնիսկ վտանգի ենթարկել իրենց կեանքը. նրանց անձնազոհությունը, ազնուությունը, կորովն ու համարձակությունը միայն խորին յարգանքի զգացմունք են զարթնեցնում իմ մէջ.» [13, էջ 90-96]:

Թուրքական իշխանությունները համառ հետևողականությամբ խուսափեցին ռազմակալած գավառում արդարադատության համակարգը վերականգնելուց: Թեև քաղաքային ինքնավարության դիմումներին ի պատասխան Վեհիբ փաշան խոստացավ դատարան հիմնել, և նույնիսկ պայմաններ մշակվեցին դրա համար (թուրքական կողմը նշանակում էր դատարանի նախագահին, դատախազին և քննիչին, քաղաքային ինքնավարությունը դատարանի մյուս անդամներին), այդուհանդերձ դատական համակարգն այդպես էլ չգործեց: Ամբողջ վեց ամիս շարունակ ծանր հանցագործությունների մեջ մեղադրվածներն ուղարկվում էին Կարս, իսկ թեթև հանցանքները քննվում էին Քաղաքային ինքնավարությանը կից «Քաղաքացիների միջև ծագած իրավաբանական բնույթ կրող վեճերի քննության» հանձնաժողովի կողմից [19, էջ 9-10]:

Փոխարենը թուրքերը մեծ եռանդով ձեռնամուխ եղան ոստիկանական նոր համակարգի ստեղծման գործին: Ժամանակակիցների վկայությամբ արդեն մայիսի 16-ի առավոտյան քաղաքի փողոցներում և թաղերում իբր թե կարգ ու կանոն պահպանելու, իսկ իրականում զանգվածային թալանին պաշտոնական բնույթ տալու համար թուրքական հրամանատարությունը նշանակեց պարեկային խմբեր [4, էջ 2]: Եվս չորս օր անց ստեղծվեց 50 հոգուց բաղկացած թուրք-հայկական խառը ոստիկանություն այսպես կոչված, «աւջի թաբուլի» (Որսորդական գումարտակ-Ա.Հ.) որի մահմեդական անդամներին զինեցին մոսիններով և փամփուշտներով, իսկ հայերին որպես դավաճանների, Շնքի փաշայի* հրամանով

* Ղազարյան Մկրտիչ Մինասի (1867-1919թթ.), սովորել է Ստրասբուրգի համալսարանի Արևելագիտության բաժնում: Տեղափոխվելով Արևելյան Հայաստան՝ հայոց լեզու է դասավանդել Շուշիի սեմինարիայում: Որոշ ժամանակ անց նշանակվել է Ալեքսանդրապոլ, Արղության դպրոցի կառավարիչ, ապա՝ վերատեսուչ, իսկ 1918թ. մայիս-դեկտեմբեր ամիսներին՝ Ալեքսանդրապոլի քաղաքային վարչության անդամ, քաղաքային ինքնավարության գաղթականական կոմիտեի նախագահ: Մահացել է տիֆից 1919թ. հունվարի 16-ին և թաղվել Պատվո Բլուր կոչվող գերեզմանատանը:

* Շնքի փաշա-Օսմանյան բանակի գեներալ-մայոր, ծնունդով Խարբերդից, 1918թ. գարնանից Կարսի ճակատի հրամանատար, Էնվեր փաշայի աջ ձեռքը: Աշխարհին հայտնի դարձավ 1916թ.: Գոլի-

միայն մոսիններով [24, էջ 2]:

Ալեքսանդրապոլի գավառական ժանդարմերիայի պետ նշանակվեց Շորագյալի նախկին բեկերից Խաթուն-օղլի Մահիր բեյը «արիւնարբու գազան,ով փաստով ապացուցեց, թէ ինքը Ղուրդ ժանիքաւոր գայլ է»: Ատրպետի վկայությամբ, քաղաքացիների հաշվին իր ռիմակով ամեն երեկո սանձարձակ կերուխումին և սեռական հաճույքներին տրվելուց զատ, սա թալանեց բոլոր անտեր մնացած տները: Այնպես որ, երբ 1918թ. մայիսի 22-ին Ալեքսանդրապոլ ժամանած Վեհիբ փաշան հանդիպեց քաղաքային խորհրդի անդամների հետ, վերջիններիս առաջին պահանջը եղավ ազատել իրենց Մահիր բեյից: Թուրք զորահրամանատարը թեև հայտարարեց, թե «օսմանեան զինուորական օֆիցէրները բոլորն էլ «Քիւլիչա» (զտված-Ա.Հ.) ոսկի են և ընդունակ չեն չարագործութիւններ կատարելու» [5, էջ 2-3], այնուամենայնիվ մի քանի օր անց Խաթուն-օղլի Մահիր բեյը պաշտոնանկ արվեց: Ժանդարմերիայի պետի պաշտոնում նրան փոխարինած քուրդ Թահիբ բեյն «իւր նենգամիտ խաղերով աւարտին հասցրեց հայ ազգաբնակչութեան թալանը» [6, էջ 2]:

Հարյուրավոր անմեղ մարդիկ կեղծ մատնությամբ ձերբակալվեցին ու դժոխային պայմաններում ամիսներ շարունակ սոսկալի տանջանքներ կրեցին Կարսի բանտերում: Շատ շատերն անհետ կորան, մյուսները գնդակահարվեցին այդպես էլ չիմանալով, թե որն է իրենց հանցանքը: Ալեքսանդրապոլի ժանդարմերիայի գործունեության մասին Գ. Խոյեցյանն իր հաղորդագրություններում գրել է. «Այստեղ կատարուել է մի անընդհատ խայտառակութիւն, որն անուն չունի: Կաշառք տալով կարելի է եղել ստիպել տանտիրոջը առանց վճարի ծախել տունը թաթարին, կարելի է եղել մարդ սպանել, վիրաւորել և ապա ձերբակալել տալ վիրաւորուածին: Հատկապես հեշտութեամբ են լուծուել փողային վեճերը: Ժանդարմերիայի պետը իր մօտ է կանչել պարտապանին, հրամայել է վճարել պարտքը ու ճանապարհել, ապա փողը դրել է իր գրպանը: Ու սա տևել է ամբողջ վեց ամիս» [20, էջ 94-95]:

Գյուղական գործերի քննությունը և գյուղացիների խնդիրների լուծումը քաղաքային վարչության կողմից հանձնարարված էր Տեր-Գրիգորյան քահանային: Մի մարդու, որ պատրաստ էր դիմելու ցանկացած միջոցի ժողովրդի խնդիրները լուծելու համար: Իր անձնվեր աշխատանքի համար Տեր-Գրիգորյանն արժանացավ թուրքական իշխանությունների և հատկապես ոստիկանության ատելությանը: Կեղծ ամբաստանությամբ նա ձերբակալվեց և ուղարկվեց Կարսի

---

ցիայում ռուսական զորքերի դեմ ցուցաբերած բացառիկ տոկունության ու խիզախության համար գերմանական իշխանությունների կողմից պարգևատրվել է Սև խաչ շքանշանով: Բանակում ստացել է «թուրք-Հինդենբուրգ» մականունը:

բանտ, ապա մի լքված խրամատում առանց դատ ու դատաստանի գլխատվեց: Նույն ճակատագրին արժանացավ նաև բանաստեղծ Նիկողայոս Ջիթողցյանը: Կարս տանելու պատրվակով նրան ձերբակալեցին, ապա վագոնում հրացանների խզակոթերի հարվածներով սպանեցին: Առանց լուրջ մեղադրանքների Կարսի բանտերում ամիսներով տաջվեցին Մութաֆյանը, Հեքիմյանը, Տիգրան Շեկոյանը և այլք [5, էջ 3]:

Ժամանակի պարբերական մամուլը լի է Ալեքսանդրապոլում թուրքական ոստիկանության կատարած սոսկալի հանցագործությունների մասին պատմություններով: Օրինակ «Ալէքսանդրօպօլի գաւառապետ Ռահիմ բէյը գրաւել էր Իւզբաշեանի տան կահկարասին և մագազինը, որտեղ միլիոնի երկաթեղէն, շինութեան, ներկուածքի, չուանի և պողպատի առարկաներ»,-գրում է Ատրպետը: Այն բանից հետո, երբ քաղաք վերադարձած Հարություն Յուզբաշյանը թուրքական իշխանություններից պահանջել էր վերադարձնել իր ունեցվածքը, կեղծ մատնությամբ անմիջապես ձերբակալվել էր, մեղադրվել լրտեսության մեջ, ապա արտաքսվել [8, էջ 4, 20, էջ 41-42]:

Քաղաքի ռազմակալման առաջին օրերին թուրքական հրամանատարությունը պահանջեց քաղաքացիներից հանձնել մարտական զենքերը, իսկ չինազանդվողներին սպառնաց գնդակահարությամբ:Գուշակելով այդ հրամանի իրական նպատակը ալեքսանդրապոլցիները քաղաքային խորհրդի միջոցով զենքի հիմնական մասն անմիջապես հանձնեցին: Հետագա խուզարկությունների արդյունքում բնակչության մոտ զենք չհայտնաբերվեց, ուստի թուրք ժանդարմներն անցան իրենց սիրելի զբաղմունքին գողությանը: Գյուղերում խուզարկություններն ընդհանրապես վերածվեցին անզուսպ թալանի [24, էջ 2]:

Նույն ժանդարմերիայի գործուն աջակցությամբ Օսմանյան բանակի Ալեքսանդրապոլ մտնելուց հետո քաղաք լցված թաթարները բացեցին հեռացած քաղաքացիների տներն ու խանութները և յուրացրին նրանց ունեցվածքը [7, էջ 2]:

Հաճախ ոստիկանության մեքենայությունների արդյունքում ամբողջական գյուղեր զբրկվում էին իրենց բնակավայրերից: Օրինակ Ադիյամանը բնակեցվել էր Երևանի գավառից գաղթած մահմեդականներով: Գյուղն իրենց օրինական տերերին վերադարձնելու դիմումներին ի պատասխան ժանդարմերիայի պետը հայտարարել էր, թե «ադեամանցիք խաբեբայ մարդիկ են, իսկ տաճիկ կառավարութիւնը միշտ արդար վերաբերմունք է ունեցել դէպի հայ հպատակ ժողովուրդը» [21, էջ 61]:

Մեկ այլ դեպքում, երբ Հոռոմի ճանապարհին հայտնաբերվել էր թուրք զինվորի դի, ոստիկանությունն առանց քննություն կազմակերպելու Հոռոմ էր ուղարկել հեծյալ վաշտ թնդանոթով, գյուղացիներին պատժելու համար [20, էջ 70]:

Ոստիկանությունն իր գոյության վեց ամիսների ընթացքում փորձեց նաև թաքցնել թուրքական վայրագությունների հետքերը: Ռազմակալված շրջանների ազգաբնակչությանը պարտադրվեց շնորհակալագրեր գրել ու կեղծ վկայություններ տալ, քահանաներին ստիպեցին զանգվածային սպանությունների զոհերին ներկայացնել իբրև բնական աղետներից տուժածների, իսկ խոշտանգումներից մեռածները ներկայացվեցին որպես ոջլոտությունից խեղդվածներ: Զուգահեռ ոստիկանությունը փաստաթղթեր հավաքեց, որոնք պատերազմից հետո աշխարհին պիտի ցույց տային հայերի «վայրագութիւնները խեղճ մահմեդականների նկատմամբ և պիտի արդարացնեին տաճկական կառավարութեան պատասխան խստութիւնները [21, էջ 60-61]:

**ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.** Ամփոփելով 1918թ. մայիս-նոյեմբեր ամիսներին Ալեքսանդրապոլի գավառում Օսմանյան իշխանությունների վարած վարչաքաղաքական քաղաքականության համառոտ քննությունը նշենք հետևյալը. Ռազմակալած շրջաններում թուրքերը կառավարման Օսմանյան համակարգ չմտցրին: Սեփական ապօրինություններին «օրինական» տեսք տալու համար քաղաքը գրավելուց անմիջապես հետո թուրքական հրամանատարությունը վերականգնեց քաղաքային ինքնավարության գործունեությունը: Նույն սկզբունքով արդարադատության համակարգը վերագործարկելու փոխարեն թուրքերն ստեղծեցին ոստիկանական մի կառույց, որը կոչված էր ոչ այնքան կարգ ու կանոն պահպանելուն, որքան սեփական հանցագործությունների հետքերը թաքցնելուն:

## Գ Ր Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

1. Ալեքսանեան Կ.Վ., Ալեքսանդրապոլի գաւառի տեղական իշխանութեան գործունէութիւնը թուրքական ռազմակալման շրջանում (մայիս-դեկտեմբեր 1918)// Հայկազեան հայագիտական հանդէս: Հ. ԼԴ.: 2014: էջ 282-300:
2. Ալեքսանյան Կ.Վ., Ալեքսանդրապոլի գավառում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչ Գ.Խոյեցյանի զեկուցագրերը Արտաքին գործերի նախարարին ներկայացուցչության գործունեության և Ալեքսանդրապոլի գավառի իրադրության վերաբերյալ (1918թ. սեպտեմբեր- դեկտեմբեր)// Բանբեր Հայաստանի արխիվների: 2014: էջ 112-149:
3. Ալեքսանյան Կ.Վ., Փաստաթղթեր 1918թ. մայիսին թուրքական բանակի կողմից Ալեքսանդրապոլի գրավման և քաղաքային ինքնավարության նոր մարմինների ձևավորման վերաբերյալ// Բանբեր Հայաստանի արխիվների: N 1: 2011: էջ 27-40:
4. Ալէքսանդրօպօլում:// «Մշակ» օրաթերթ: Թիֆլիս: N 116, 20 յունիսի, 1918:

5. Ատրպետ, Ալէքսանդրոպոլ քաղաքի 200 օրվայ գրաւումը Օսմանեան զօրքերից:// «Մշակ» օրաթերթ: Թիֆլիս: N 262, 21 դեկտեմբերի, 1918:
6. Ատրպետ, Ալէքսանդրոպոլ քաղաքի 200 օրվայ գրաւումը Օսմանեան զօրքերից: //«Մշակ» օրաթերթ: Թիֆլիս: N 265, 25 դեկտեմբերի, 1918:
7. Ատրպետ, Ալէքսանդրոպոլ քաղաքի 200 օրվայ գրաւումը Օսմանեան զօրքերից: //«Մշակ» օրաթերթ: Թիֆլիս: N 266, 26 դեկտեմբերի, 1918:
8. Ատրպետ, Շաւղի փաշա:// «Մշակ» օրաթերթ: Թիֆլիս: N 270, 31 դեկտեմբերի, 1918:
9. Դրութիւնը Ալէքսանդրոպոլի շրջանում:// «Մշակ» օրաթերթ: Թիֆլիս: N 87: 12 մայիսի (29 ապրիլի), 1918:
10. Խատիսեան Ալ. Հայաստանի հանրապետութեան ծագումն ու զարգացումը: Պէյրութ: «Համազգային» հրատ.: 1968: 487 էջ:
11. Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև ՀԱԱ), ֆոնդ 57, ցուցակ 5, գործ 178:
12. ՀԱԱ, ֆոնդ 57, ցուցակ 5, գործ 187:
13. ՀԱԱ, ֆոնդ 105, ցուցակ 1, գործ 126:
14. ՀԱԱ, ֆոնդ 105, ցուցակ 1, գործ 2768:
15. ՀԱԱ, ֆոնդ 105, ցուցակ 1, գործ 2710:
16. ՀԱԱ, ֆոնդ 105, ցուցակ 1, գործ 2711:
17. ՀԱԱ, ֆոնդ 105, ցուցակ 1, գործ 2713:
18. ՀԱԱ, ֆոնդ 200, ցուցակ 1, գործ 97:
19. ՀԱԱ, ֆոնդ 200, ցուցակ 1, գործ 125:
20. ՀԱԱ, ֆոնդ 200, ցուցակ 1, գործ 126:
21. ՀԱԱ, ֆոնդ 221, ցուցակ 1, գործ 89:
22. Հարությունյան Ա. Թուրքական ինտերվենցիան Անդրկովկաս 1918թ. և ինքնապաշտպանական կռիվները: Երևան: ՀՍՍՌ ԳԱ հրատ.: 1984: 355 էջ:
23. Մելիքյան Վ. Ռազմաքաղաքական իրադրությունը Հայաստանում և Անդրկովկասում (1918թ. հունվար-մայիս): Մայիսյան հերոսամարտերը: Հայոց պատմություն: Նոր ժամանակաշրջան (XVIIդ. երկրորդ կես-1918թ.): ՀՀ ԳԱԱ հրատ.: Հ. III: Գիրք II (1901-1918թթ., հայ գաղթավայրերը, պարբերական մամուլը և մշակույթը XIXդ. և XXդ. սկզբին): Երևան: «Զանգակ-97» հրատ.: 2015: էջ 615-654:
24. Յովսէփեան Մ. Ալէքսանդրապոլը գրաւումէն ետք (Ականատեսի պատմութիւնը): //«Աշխատանք» թերթ: Երևան: Գ տարի, N 6 (206): 8 (26) յունիսի 1918, շաբաթ:
25. “Кавказское слово”. Тифлис. N 97. 17-ое мая, 1918.

*«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան»*
*հիմնադրամի «Գիտական տեղեկագիր»,*
*Գյումրի, 2017, N 1, պրակ Բ, էջ 66-80*

# 1918 GHARAKILISA INCIDENTS AS CONTINUATION OF THE OTTOMAN GENOCIDAL POLICY

Gharakilisa incidents of 1918 have been referred to by the Armenian historiography from the perspective of May heroic battles. There have been various opinions and viewpoints on the general strategic situation existing in the region as well as individual figures; tens of memoirs, scientific monographs and documentary collections have been published. Meanwhile the study of many significant issues such as the research of the demographic and economic policy conducted here have been left out of historians' sight.

Hereby we would like to introduce the period and consequences of the Ottoman genocidal policy in the Pambak uyezd as the main subject of the research via combining newly found archival materials, scientific literature, eyewitness memoirs and periodical press releases.

The military-political situation in the Caucasian frontier of WWI changed drastically in the spring of 1918 to the detriment of the Armenian people. The Turk-Transcaucasian war which resumed on April 1 turned into the triumph of the Turkish troops.

After the fall of Kars, the Turks presented an ultimatum at the night of May 14 demanding to hand over Alexandrapol, and the next morning without waiting for the answer attacked the city and the villages in Eastern Shirak.

A few days later some Turkish troops fled from Alexandrapol to Yerevan, some of them entered Pambak and on May 28, after 4-day bloody fights occupied Gharakilisa[1].

What was carried out by Turkish troops and local Muslims was the direct continuation of the Armenian Genocide only in more cruel and uncompromising ways.

The sudden fall of Alexandrapol resulted in a tremendous panic, causing unorganized and chaotic migration. Tens of thousands refugees escaping from the Turkish sword fled to Echmiadzin and Pambak.

According to eyewitnesses, about 200,000 people (9,000 from Basen, 4.000 from Kaghzvan, more than 60,000 from Kars region and more than 70.000 from Alexandrapol and Eastern Shirak villages) had gathered in the region of Pambak on the eve of the

[1] For details of the heroic struggle in Gharakilisa see: Ղարաքիլիսայի 1918 թ. հերոսամարտը, Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, կազմ.՝ **Մարության Ա., Դալլաքյան Վ.,** Ե., 2008: Սարդարապատ, Բաշ-Լիլպարան, Ղարաքիլիսա, 1918 թ. Մայիսյան հերոսամարտերը, Ե., 1998:

Turkish invasion. This was a huge mass occupying the area of about 40 miles (42.5 km)[1] from Galtaghchi to Greater Gharakilisa.

The guard troops of the 11th Turkish division entered Gharakilisa in the evening of May 28. On the eve of Gharakilisa invasion, people of blockaded Gharakilisa sent a delegation of 6 people to Arjut asking the Turkish commander Jemal Javid bey "to accept Gahakilisa's subordination and protect people from being violated".

Reassuring the delegates, he stated that no Armenian would be injured and that special measures would be taken to restore the normal life in Gharakilisa and help the refugees[2].

At the same night the massacre of the peaceful Armenian population began. The Turkish soldiers accompanied by the local Muslims from Saral, Arjut and Ghanjughaz villages attacked Ghishlagh. The same occurred in Gharakilisa. The Turkish soldiers with the local Muslims from Vardanlu and Hallavar killed 156 Armenians in a village district called "Verin tagh" (upper district) in one night. A place called "Aslan beg's Hollow" became their tomb[3].

Generally, in 9 vilages of Pambak district at the night of May 28 besides the western Armenians, and Armenians from Shirak and Kars, Turks killed 1269 people from Pambak (156 in Gharakilisa, 250 in Ghishlagh, 43 in Darbaz, 200 Bzovdal, 65 in Hajighara, 15 in Efendi, 350 in Hamali, 40 in Yaghubli, 150 in Parni)[4].

In a few days Turks brought back the horrified survivors and killed them all in the possible worst ways[5]. According to the contemporaries, the cause of the mass slaughter of the peaceful population in the above-mentioned villages was their support to the Armenian troops fighting against the Turks in those areas. According to the eyewitness M. Ghazaryan, one of the canons of the Armenian troops shooting in the direction of the Turkish positions during the last days of the heroic battles was situated in Ghishlar[6].

We do not aim to explain the mass slaughter of the peaceful population of Pambak because of their participation in the fight against the Turkish troops and local Muslims. However, it should be mentioned that the population of Gharakilisa and the villages nearby refused to flee and become refugees, and this was devastating.

---

[1] **Էլչիբեկյան Հ.,** Ղարաքիլիսայի ճակատամարտը,//Տեղեկագիր հասարակական գիտությունների, Ե., 1947, N 8, էջ 57: **Ղազարեան Մ.,** Դէպքերը Ղարաքի[ի]սայի շրջանում, տպաւորութիւններ, // «Մշակ», Թիֆ|ի|ս, 1918, N 102, 2 յունիսի:

[2] Ղարաքիլիսայի 1918 թ. հերոսամարտը, էջ 112:

[3] **Խանզադյան Խ.,** Հուշեր և տպավորություններ 1919 թ., ծանոթագրությունները և առաջաբանն ըստ Մ. Սանթոսյանի, Ե., 1998, էջ 91-92:

[4] NAS RA, fund 227, list 1, work 4, p. 12. fund 240, list 1, work 240, pp. 36-37.

[5] **Խանզադյան Խ.,** op. cit., p. 95-96:

[6] Ղարաքիլիսայի 1918 թ. հերոսամարտը, էջ 115:

The homeowners forced the population not to move anywhere and not to even move the women from their villages. “No one has the right to leave the village, we will stay here and we will die here,” said Ghishlagh Village Head Avetik[1].

In their memoirs, contemporaries also touch upon the issue of Armenophobia in Pambak's Muslim population during the Ottoman domination and try to understand its reasons. The eyewitnesses Mushegh Ghazaryan and Khoren Khanzadyan, tend to explain it by punitive attack organized by the Dashnaks - Vagho, Arshak, Khzmal, Chopur Davit, Aso, Vaghinak and others on the Turkish-populated village of Vardanlu.

M. Ghazaryan writes that, “when the Turks were moving toward Pambak, the Turks from Vardanlu joined the Turkish regular troops becoming the guides of the conquerors”[2].

It is difficult to say to what extent the tactics of the Dashnak group could be justified. However, one thing is obvious: by intervening Vardanlu they prevented the attack of Greater Gharakilisa, prepared by the Pambak Muslims who had managed to accumulate large amounts of arms and were almost ready to start the attack. The actions of the Dashnak group distracted the attention of the Turks and saved the Armenian population in Gharakilisa. Nevertheless, this could not change the situation radically, for the extreme expression of Armenophobia was spread all over, particularly in the villages of Sarali, Arjut, Ghanjughas, Hallavar, etc.

Since May 29, the mass deportation and massacre of the civilian population have been officially recognized. The entire Armenian population of the region was declared a prisoner of war, and movable and immovable property was state property. After having searched the houses and hiding places, Turks gathered men, and after three days of keeping them hungry, took them out in groups of 400-500 people, tied and drove them in different directions.

The first group of the captives was shot dead at the “Badal-Oglu Source”, the second one was shot dead in the south of Gharakilisa in the place called “Takhaghbyur pits”, the third one - near the village of Vardanlu, near the carriers’ carriages, the fourth one - in the forest of “Vanants Dzor”, the fifth one - at the slopes of the Maimex, in Mets Dzor mines and in the village of Yaghubli, near Sargis Church, and the sixth one - in the barns of the village of Hajighara[3].

Javid Bey designed a genius program to exterminate the Armenians and get rid of their “criminal” label. The captives were shot dead at the heights where the attacking

---

[1] Ibid.
[2] Մանրամասն տե՛ս **Խանզադյան Խ.,** op. cit., p. 86: Ղարաքիլիսայի 1918 թ. հերոսամարտը, էջ 102:
[3] Ղարաքիլիսայի 1918 թ. հերոսամարտը, էջ 120:

Turks had positioned two days before. In other words, an attempt was made not to display the massacre of the peaceful population.

Moreover, the captives were executed by approximately the same number in each position. For example, the sixth group was driven towards Hajighara because there the number of dead Armenians was insignificant[1]. By slaughtering, the Turks were creating an illusion of equal fighting in each position[2].

According to H. Avetisyan, as a result of that massacre 4000 people from Shirak and Pambak, Armenian officers and soldiers who had been captured during the heroic battle of Gharakilisa or afterwards surrendered to the generosity of the winners; the defenseless Western Armenian refugees and others were shot dead[3].

On May 30, Javid fulfilled the next episode of his sinister plan. In Gharakilisa, it was announced that the railroad officials and workers were forced to register and pass the work within 24 hours. Approximately 500 people believed and got registered and did not return any more. The following morning, they were divided into groups of 40-50 people, were driven in the direction of the heights of Maimekh and Altuntakt, and were forced to dig tombs, and then shot dead in front of those tombs, so that they fell down and covered the first ones. According to contemporary eyewitnesses, many foreign workers went mad witnessing this scene[4].

On the seventh day of the Pambak occupation, the discipline was restored in the army, and the massacres, at least in the afternoons, ceased. Instead, night attacks were intensified. Farmers and village heads started to disappear in a “mysterious” way (the Turks demanded them to hand over the beautiful women and girls of the villages, and if they were denied they killed the locals)[5].

There were a lot of cases of kidnapping and raping women. According to Khoren Khanzadyan, Turks satisfied their sexual needs to the detriment of the Armenians, violating their honour[6]. Many villages, according to their own villagers' confession, were subjected to “total rape”. For example, Nalband. The men were expelled from the village and the women were raped. At the same time, not only young girls, aged 8-10,

---

[1] The Turkish military commander Kazim Karabekir referring to the failure of the Turkish troops in Hajighara in 1919 briefly stated: «...գյուղի մոտ կանայք և գյուղացիները կացիններով զինված կոտորում էին հետ քաշվող թուրք զինվորներին»: (See Копия доклада, представленного американской делегацией, возглавляемой генералом Харбордом, относительно боевых действий 15-ого Кавказского армейского корпуса в 1918 г., Эрзерум, 1919, с. 10-11).

[2] **Խանզադյան Խ.,** op. cit., p. 92-93:

[3] **Ավետիսյան Հ.,** Հայոց ազգային միության հաղթանակը, 1918 թվականի մայիս, Ե., 1998, էջ 115:

[4] NAS RA, f. 114, I. 2, w. 33, p. 52; f. 240, I. 1, w. 240, p. 44.

[5] NAS RA, f. 121, I. 2, w. 79, p. 15.

[6] **Իսանզադյան Խ.,** op. cit., p. 94.

were raped, but also elderly women. Following the Turks' departure, the Pambak commissions registered a number of homosexuality cases, with the participation of the Ottoman army command and medical staff (with the direct participation of the division's physician Kamil Bey)[1].

Today, when a century has passed, it is impossible to find out the exact figures to show the extent of this villainous phenomenon, and this can be accounted for by the fact that the population in the rural areas, as a rule, concealed the cases of dishonesty. The Armenian women responded to this dishonesty by self-defense in exclusive ways - through suicide and poisoning. According to M. Ghazaryan, this was done by the members of the Aghababyan family - Michael, his wife, Vardanush, his daughters, Zanazan and Horomzim (Khoren the senior priest called this daughter Hripsime)[2], his son Avetis with his wife and children, from the village of Ghishlagh the Mayliyans - Astghik, Lusik and Javahir[3]. Siranush and Arusyak with their mother from theTsaturyan family from Alexandropol living with the Mayilyans and Aghababyans in the same yard as well as others committed suicide in the same way taking poison[4].

After the May upheavals, the corpses of the dead soon began to rot and the stay in Gharakilisa, even for the Turks, became impossible. Only in the middle of June the Turks favored to bury them in the tombs dug by the streets[5], and another week later, the the whole region suffered from typhus and cholera. Besides, there was a widespread famine[6]. In the absence of hospitals, only in July-August, more than 1,000 people died of of epidemics and famine. According to contemporary witnesses, the epidemic took 378 lives in Ghishlagh, 127 in Darbaz, 286 in Hajighara, 35 in Bzoval and 48 in Yaghubli. The deaths from infectious illnesses in September reached a terrible scale. According to eyewitnesses, there were so many dead that their corpses remained in living houses and streets for many days, polluting air and water[7].

The Ottoman Empire, having been defeated in WWI, withdrew its troops from Pambak in October[8]. After the Turks had left the district (former area of Greater Gharakilisa) according to the RA Ministerial council decision, it was taken from the Alexandrapol uyezd and being unified with Dilijan and Karvansara districts became part

---

[1] NAS RA, f. 202, I. 1, w. 1271, p. 48.
[2] **Խանզադյան Խ.,** op. cit., p. 94-95.
[3] Ղարաքիլիսայի 1918 թ. հերոսամարտը, էջ 121-122:
[4] **Իրազեկ** 3.**,** Մօտիկ անցեալից, պատմական դէպքեր եւ ապրումներ, 1917-1922, Պէյրութ, 1956, էջ 31: 31:
[5] Ղարաքիլիսայի 1918 թ. հերոսամարտը, էջ 126:
[6] Ibidem, p. 134.
[7] Ibidem, p. 135.
[8] Ղարաքիլիսէի յանձնումը, //«Մշակ», Թիֆլիս, 1918, N 20, 18 հոկտեմբերի:

of the newly-formed Dilijan region[1]. A special commission was sent there in order to estimate the material and physical damage caused by Turks[2].

In the final report presented by the Commission to the Special bureau which had been formed in Tiflis headed by H. Tumanyan it was proved that the mass killings and exterminations carried out by regular Turkish troops and local Muslims were the result of the state-level Turkish genocidal physical extermination policy, designed and organized in advance, conducted against the Armenians (the population of Pambak district, 17 villages except for Hamzachiman which hadn't been captured were exterminated, and in 9 villages the slaughter was of large- scale dimensions).

In order to clarify the scale of the Turkish genocidal policy the committee members plied from place to place, compiled lists of the victims and captured but couldn't collect complete statistical data, that's to say they had to compile the lists having based on the memories of local population, they gathered the inhabitants of villages and compiled the lists according to the victims' names and surnames.

In this connection, a question arises: "How was the estimation process carried out in the villages of Ghishlagh, Darbaz, Bzovdal, Hajighara, Efendi, Hamali, Yaghubli, and Parni where 80% of the population was killed and whole families were extirpated?"

As a result, the lists missed out hundreds of surnames, the registration of the refugees and western Armenians (subjected to extermination in case of identification) were carried out with shortcomings, and in addition to the above- mentioned, there were no publicised information and data on a lot of villages. In the final report of the commission group it was mentioned that in general thousands of people were shot dead in the places near Gharakilisa but, unfortunately, no exact number of the victims could be presented. It should be assumed that the number varies from 3000 to 7000 apart from the killed 1470 locals. From the 886 captured and driven towards Erzrum only 95 managed to return[3].

No substantial success was achieved in the collection of accurate statistical information by the Akexandrapol municipal administration commission headed by Aram Virabyan that was sent to Great Gharakilisa in October - December in 1918.

In his memories, the first foreign minister and the Prime Minister of the first Armenian Republic Al. Khatisyan estimated about 7000 Armenian victims (including

---

[1] NAS RA, **f.** 203, I. 1, **W.** 4, p. 20.

[2] A. Ter-Harutyunyan and A. Shahbazyan as members of the commission were to estimate the scale of the caused material damage, and D. Gavrilov was to file the rape and murder cases (More dateiled in NAS RA, f. 202, I. 1, w. 1271, p. 45-49).

[3] NAS RA, f. 202, I. 1, w. 1271, p. 47.

those who were captured during the days of the heroic battles)[1]. In his telegram sent to the Council of Armenia on October 23, 1918, Dro too estimated about 7000 Armenian victims[2].

However, now, after a century, taking into consideration the above-presented facts it is impossible to agree with the accepted viewpoint existing in the Armenian historiography, according to which, as a result of those genocidal actions only 7000 people were killed.

Summing up the brief examination of the events taken place in Gharakilisa in 1918, we can conclude, that the Ottoman occupation hit hard the ethnic image of the population in 9 out of 28 villages of the district where mass slaughter and massacres were committed. Thousands of western Armenians, Armenians from Kars, Shirak, Alexandrapol were killed in Gharakilisa and nearby forests, the kidnapping, rape and forced Islamization of women reached an extremely large scale due to the genocidal scheme of the Turks.

*ՀՀ ԳԱԱ Հայագիտական միջազգային հանդես,*
*«Բանբեր հայագիտության», Երևան, 2018, N 2 (17), 41-49*

[1] **Խատիսեան Ալ.,** Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, Պէյրութ, 1968, էջ 80:
[2] NAS RA, f. 198, I. 1, w. 16, p. 1.

# ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՆ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԳԱՎԱՌՈՒՄ 1918թ. ՄԱՅԻՍ-ՆՈՅԵՄԲԵՐ ԱՄԻՍՆԵՐԻՆ

Թուրքական զորքերի կողմից Ալեքսանդրապոլի գավառի առաջին զինագրավմանը հայ պատմագիտությունն անդրադարձել է հիմնականում Մայիսյան հերոսամարտերի համատեքստում: Հնչել են տարբեր կարծիքներ ու տեսակետներ երկրամասի ընդհանուր ռազմաքաղաքական դրության ու առանձին գործիչների մասին, հրատարակվել են հուշագրություններ, գիտական մենագրություններ ու փաստաթղթերի ժողովածուներ: Մինչդեռ շատ կարևոր հիմնահարցեր ինչպես, օրինակ, զինագրավված գավառի ազգաբնակչության հանդեպ իրագործված ցեղասպանական քաղաքականության քննությունը դուրս է մնացել հայագետների ուշադրությունից:

Այս հոդվածի շրջանակներում արխիվային նորահայտ վավերագրերի, գիտական գրականության, դեպքերին ականատեսների հուշագրությունների և պարբերական մամուլի հաղորդումների համադրմամբ կկատարվի վերոհիշյալ խնդրի հանգամանայի քննություն, ինչը հնարավորություն կտա փակելու հայ պատմագիտության մեջ առկա բացը:

1918թ. գարնանն աշխարհամարտի Կովկասյան ճակատում ռազմաքաղաքական իրավիճակը կտրուկ փոխվեց: Ապրիլի 12-ին Կարսի խայտառակ հանձնմանը[1] մայիսի 15-ին հաջորդեց Ալեքսանդրապոլի անսպասելի անկումը:

Գիտակցելով իրենց հաջողության ժամանակավոր բնույթը թուրքերը, տեղական մահմեդական խուժանի գործուն աջակցությամբ զինագրավված գավառի տարածքում ձեռնամուխ եղան արևելահայության ֆիզիկական բնաջնջման քաղաքականությանը: Սոգյութլիում և հարակից գյուղերում կազմակերպված դիմադրության հանդիպելուց, ապա Սարդարապատում և Բաշ-Ապարանում խայտառակ պարտություն կրելուց հետո գազազած թուրքական հրամանատարությունն իր ուշադրությունը սևեռեց Արևելյան Շիրակի և Փամբակի գյուղերի վրա և ձեռնամուխ եղավ այստեղ կուտակված հայության բնաջնջմանը:

Ըստ պաշտոնական վիճակագրության մայիսի 15-ից մինչև դեկտեմբեր Ալեքսանդրապոլի գավառի 122 գյուղերում (առանց գավառակենտրոնի) թուրքական գազանություններին զոհ գնաց 10300 մարդ, այդ թվում կոտորվեց 5086-ը, գերվեց 4660-ը, գերությունից վերադարձավ 257-ը (չափազանց հյուծված լինելով սրանց մեծ մասը մի քանի օր անց մահացավ), անհետ կորավ 483-ը[2]:

---

[1] Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии, Тифлис, 1919, док. 103, с. 225:

[2] Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև ՀԱԱ), ֆոնդ 121, ցուցակ 1, գործ 91, թ. 179: ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, Լեոյի ֆոնդ, ցուցակ 1, գործ 253, թ. 1:

1919թ. հոկտեմբերին այս տվյալները Հայաստանի խորհրդարանի պատգամավոր Հակոբ Տեր-Հակոբյանի (Իրազեկ) խմբագրությամբ ու մեկնաբանություններով հրապարակվեցին «Յառաջ» օրաթերթում և հայ պատմագրության մեջ շուրջ մեկ հարյուրամյակ մնացին իբրև բացարձակ ճշմարտություն[1], այն դեպքում, երբ ժամանակակիցների կողմից դրանք չընդունվեցին: Ալեքսանդրապոլում ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչ Գ. Խոյեցյանի հավաստմամբ, այդ տվյալները նվազեցված էին գրեթե երեք անգամ: Դեռևս 1918թ. հոկտեմբերի սկզբներին ՀՀ ԱԳՆ ներկայացրած իր զեկուցագրերում Խոյեցյանը գրում էր, թե միայն Ալեքսանդրապոլ քաղաքում և Արևելյան Շիրակի գյուղերում թուրքերը կոտորել են մոտ 20000 մարդ և 10000-ին էլ գերի քշել)[2]:

Հայ պատմագիտությունն առաջին անգամ խնդրին անդրադարձավ միայն ինը տասնամյակ անց: Ալեքսանդրապոլի գավառում 1918թ. մայիս-նոյեմբեր ամիսներին օսմանյան իշխանությունների վարած վարչաժողովրդագրական քաղաքականության ուսումնասիրության նպատակով Ռ. Գրիգորյանը «Բանբեր Հայաստանի արխիվների» հանդեսի էջերում վերահրապարակեց Իրազեկի հոդվածը, վերահաշվեց ցուցակները և թվային մի քանի մանր անճշտություններ հայտնաբերելով դրանք որակեց իբրև լրագրային վրիպում:

Ցավոք, հարգարժան ուսումնասիրողը չփորձեց վերլուծել գավառ գործուղված հանձնաժողովների աշխատանքը, չնկատեց թույլ տրված բացթողումներն ու թերացումները, ուստի և թուրքական վայրագությունների մասշտաբների մասին պաշտոնական տվյալներն ընդունեց որպես բացարձակ ճշմարտություն:

**Վիճակագրական տեղեկություններ օսմանյան տիրապետության ամիսներին Ալեքսանդրապոլի գավառին հասցված մարդկային վնասների մասին[3]**

---

[1] **Իրազեկ**, Տաճկական վայրագությունները Ալեքսանդրապոլի գավառում,//«Յառաջ» օրաթերթ, Երեւան, 1919, N 22, 17 հոկտեմբերի, էջ 3:

[2] ՀԱԱ, ֆոնդ 221, ցուցակ 1, գործ 89, թթ. 60-61:

[3] Հայաստանի ազգային արխիվում պահվող փաստաթղթի, «Յառաջ» օրաթերթում Իրազեկի կողմից հրապարակված ցուցակների և «Բանբեր Հայաստանի արխիվների» հանդեսի էջերում վերահրատարակված ցուցակների համադրմամբ մենք ստացանք ստորև բերված վիճակագրական պատկերը: Մեզ համար անհասկանալի հաշվումների արդյունքում միևնույն ցուցակներն ուսումնասիրած Ռ. Գրիգորյանն ստացել է հետևյալ թվային պատկերը սպանված 4745, գերված 4596, վերադարձած 263 և անհետ կորած 370 հոգի (Տե՛ս **Գրիգորյան Ռ.**, Թուրք-մուսավաթական զորքերի ոճրագործությունները Անդրկովկասի հայաբնակ շրջաններում 1918-1920թթ.,//«Բանբեր Հայաստանի արխիվների», Եր., 1996, N1, էջ 111):

| N | բնակավայրի անունը | սպանված | գերված | վերադարձած | անհետ կորած | N | բնակավայրի անունը | սպանված | գերված | վերադարձած | անհետ կորած |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| ԱՌԱՋԻՆ ԳԱՎԱՌԱՄԱՍ | | | | | | | | | | | |
| 1. | Ալեքսանդրապոլ | 84 | 33 | 9 | --- | 15. | Ջաջուռ | 27 | 45 | --- | --- |
| 2. | Դահարլի | 130 | 36 | 8 | --- | 16. | Ադքիլիսա | --- | 24 | 2 | --- |
| 3. | Բայանդուր | 12 | 15 | 6 | --- | 17. | Արըխվալի 3-րդ | 1 | 35 | 1 | --- |
| 4. | Ճլովխան | 17 | 17 | 1 | --- | 18. | Ղոնախղռան | 20 | 88 | 8 | --- |
| 5. | Ղարաքիլիսա Խլի | 400 | 577 | 44 | --- | 19. | Սարյար | 5 | 47 | 5 | --- |
| 6. | Թափադոլլակ | 2 | 90 | 7 | 16 | 20. | Թոփարլի | 5 | 47 | 5 | 7 |
| 7. | Դուզքյանդ | 4 | 30 | 7 | --- | 21. | Օրթաքիլիսա | 9 | 27 | 4 | --- |
| 8. | Դիրաքլար | 17 | 48 | 6 | --- | 22. | Քեյթի Մեծ | 43 | 19 | --- | --- |
| 9. | Քյափանակ Մեծ | 5 | 166 | 13 | --- | 23. | Քեյթի Փոքր | 14 | 26 | --- | --- |
| 10. | Քյափանակ Փոքր | 5 | 10 | --- | --- | 24. | Դարբանդ | 27 | 14 | --- | --- |
| 11. | Չրախլի | 4 | 157 | 10 | --- | 25. | Ղանլիջա Ներքին | 22 | 1 | --- | --- |
| 12. | Բաղդատ-Դոլութ ախտ (եզդի) | 2 | 33 | 2 | --- | 26. | Ղանլիջա Վերին | 70 | 36 | --- | --- |
| 13. | Խանվալի | --- | 32 | 7 | --- | 27. | Կապս | 51 | 27 | 2 | --- |
| 14. | Հաջի Նազար | 3 | 53 | 8 | --- | | | | | | |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | | | | | | | 979 | 1733 | 155 | 23 |
| ԵՐԿՐՈՐԴ ԳԱՎԱՌԱՄԱՍ | | | | | | | | | | | |
| 1. | Իլխիաբի | 7 | 41 | 5 | --- | 19. | Ջանգիթափա | 3 | 18 | --- | --- |
| 2. | Քյավթառլի | 5 | 24 | 1 | --- | 20. | Մանջուխլի | 1 | 49 | 7 | --- |
| 3. | Ղազանչի | 4 | 10 | --- | --- | 21. | Քեշիշքենդ | 3 | 8 | --- | --- |
| 4. | Պարնի Փոքր | 1 | 12 | --- | --- | 22. | Մելիքքենդ | 10 | 5 | --- | --- |
| 5. | Ղասմալի | 2 | 29 | --- | --- | 23. | Ախղուլա | 2 | 42 | 5 | --- |
| 6. | Ղուլիջան | 1 | 4 | --- | --- | 24. | Ղըրխ-ղադ | 11 | 91 | 7 | --- |
| 7. | Ղոլղաթ | 2 | 9 | 1 | --- | 25. | Քոռբուլաղ | 13 | 66 | 8 | --- |
| 8. | Նորաշեն | 4 | 60 | -- | --- | 26. | Քիչիկ-Ջանգի | 21 | 67 | 7 | --- |
| 9. | Արըխվալի Մեծ | 5 | 53 | 6 | --- | 27. | Միրաք Մեծ | 8 | 140 | --- | --- |
| 10. | Արըխվալի Փոքր | 5 | 24 | 3 | --- | 28. | Միրաք Փոքր | չկա | չկա | --- | --- |
| 11. | Գյոզալդարա Հայկ. | 4 | 15 | --- | --- | 29. | Ղոնդաղսազ | 2 | 11 | --- | --- |
| 12. | Եզանլար | 7 | 72 | --- | --- | 30. | Ջոմուշլի Մեծ | 95 | 5 | --- | --- |
| 13. | Արթիկ | 30 | 80 | 7 | --- | 31. | Ջոմուշլի Փոքր | չկա | 16 | 1 | --- |
| 14. | Ղփչաղ | 38 | 5 | 1 | --- | 32. | Չոբանգերաքմազ | 15 | 35 | --- | --- |
| 15. | Ղարաքիլիսա | չկա | 3 | --- | --- | 33. | Փամպ Քրդական | 7 | 61 | 4 | --- |
| 16. | Բաշգյուղ | 15 | 25 | --- | --- | 34. | Ղուռիբողազ | 20 | չկա | --- | --- |
| 17. | Հաջի Խալիլ | 10 | 42 | 3 | --- | 35. | Ջարջառիս | 3 | 38 | --- | --- |
| 18. | Դանագիրմազ | 5 | 14 | --- | --- | 36. | Քարվանսարա | 35 | 18 | 6 | --- |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | | | | | | | 394 | 1192 | 72 | -- |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| ԵՐՐՈՐԴ ԳԱՎԱՌԱՄԱՍ | | | | | | | | | | | |
| 1. | Գյուրջիյոլ | 2 | 21 | 1 | --- | 14. | Ղայդուլի-Ղազա նչի | 8 | 48 | 1 | 22 |
| 2. | Ճզըխլար | 17 | 28 | --- | 15 | 15. | Քոռաղբյուր | 16 | 23 | 1 | --- |
| 3. | Փալութլի | 5 | 6 | --- | 3 | 16. | Դարաքյոյ | 10 | 6 | 3 | --- |
| 4. | Բանդևան Մեծ | 82 | 22 | --- | --- | 17. | Ղզըլդոչ | 14 | 14 | --- | 11 |
| 5. | Բանդևան Փոքր | 35 | 27 | 2 | --- | 18. | Գյուղխարաբա | 8 | 38 | --- | 2 |
| 6. | Չոռլի | 8 | 10 | --- | --- | 19. | Բոզյոխուշ | 8 | 12 | 1 | --- |
| 7. | Ալլաքիլիսա | 4 | 4 | --- | --- | 20. | Բաշգյուղ 2-րդ | 8 | 1 | 1 | --- |
| 8. | Թաքնալի | 7 | 35 | 3 | --- | 21. | Կեֆլի | չկա | 1 | --- | --- |
| 9. | Իլլի Ղարաքիլիսա | 40 | 18 | --- | --- | 22. | Սարյար Փոքր | 1 | 7 | --- | --- |
| 10. | Ղզըլքիլիսա 2-րդ | 5 | 35 | 4 | --- | 23. | Սամուրլի | չկա | չկա | --- | --- |
| 11. | Գյուլլիբուլաղ | 2 | 4 | --- | --- | 24. | Ալիխան | չկա | չկա | --- | --- |
| 12. | Չիֆթալի | 12 | 24 | --- | --- | 25. | Ղարաքիլիսա 3-րդ | 3 | չկա | --- | --- |
| 13. | Շիշթափա | 7 | 14 | 2 | 12 | | | | | | |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | | | | | | | 302 | 398 | 19 | 65 |
| ՉՈՐՐՈՐԴ ԳԱՎԱՌԱՄԱՍ | | | | | | | | | | | |
| 1. | Ղափլի | 60 | 47 | 1 | --- | 18. | Ղրբխ | — | 22 | --- | --- |
| 2. | Ղազարապատ | 17 | 5 | --- | --- | 19. | Սոգյութլի | 180 | 113 | --- | --- |
| 3. | Տավշանղշլաղ | 71 | 16 | --- | --- | 20. | Փիրթիքյան | 30 | 25 | --- | --- |
| 4. | Սվանվերդի | 202 | 128 | --- | --- | 21. | Ադիյաման | 148 | 79 | --- | --- |
| 5. | Քյալալի | 55 | 3 | --- | --- | 22. | Մոլլա Գյոկչա | 35 | 71 | --- | --- |
| 6. | Աղին | 465 | 30 | --- | --- | 23. | Բողազքյասան | 25 | 20 | --- | --- |
| 7. | Բաբըռլի | 34 | 5 | --- | --- | 24. | Շիրվանջուղ | 218 | 36 | --- | --- |
| 8. | Բոզդողան | 75 | 45 | --- | --- | 25. | Մահմուդջուղ | 177 | 14 | --- | --- |
| 9. | Ղեղաչ | 70 | 42 | --- | --- | 26. | Արմութլի | 156 | 86 | 6 | 50 |
| 10. | Չըրփլի | 66 | 25 | --- | --- | 27. | Սարիբաշ | 10 | 5 | --- | 25 |
| 11. | Ղզըլքիլիսա | 30 | 51 | --- | --- | 28. | Հոռոմ | 100 | 7 | --- | 120 |
| 12. | Ենիքյոյ (Խարկով) | 35 | 29 | --- | --- | 29. | Մեջիթլի | 78 | 41 | --- | --- |
| 13. | Բուղդաշեն | 15 | 38 | --- | --- | 30. | Թոմարդաշ | 30 | 20 | --- | --- |
| 14. | Զարնջի | 60 | 28 | --- | --- | 31. | Իմրխան | 60 | 11 | --- | 20 |
| 15. | Արթիկ Նոր | 60 | 85 | --- | --- | 32. | Սոնգյուրլի | 30 | 40 | --- | 18 |
| 16. | Ձիթիանքով | 455 | 51 | --- | --- | 33. | Թալիբօղլի | 4 | 4 | --- | --- |
| 17. | Տաշղալա | 21 | 48 | --- | --- | 34. | Ղութնիղշլաղ | չկա | 1 | --- | --- |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | | | | | | | 3072 | 1271 | 7 | 233 |
| ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐԸ | | | | | | | | 4747 | 4594 | 253 | 321 |

Մինչդեռ թերացումներ կային, և դրանք էական ազդեցություն ունեցան վիճակագրական ստույգ տեղեկությունների հայթայթման ու ճշգրտման վրա:

Դրանցից առաջինը վերաբերում է գավառի տարածքին «հին ու նոր գավառներ» հասկացությանը:

1918-1920թթ. իրադարձությունները լուսաբանող արխիվային վավերագրերում և գիտական գրականության մեջ հաճախ կարելի է հանդիպել «Ալեքսանդրապոլի գավառն իր ներկա փոքրացած սահմաններով» արտահայտությանը: Բացատրությունը մեկն է. Աշխարհամարտում պարտված Օսմանյան կայսրությունը 1918թ. աշնան վերջերից սկսեց դուրս բերել իր զորքերը զինագրավված տարածքներից: Թուրքերի հեռանալուց հետո ՀՀ-ին անցած շրջաններում ստեղծվեցին գավառային վարչության նոր մարմիններ: Օրինակ, Ալեքսանդրապոլի գավառի Մեծ Ղարաքիլիսայի տեղամասը (Փամբակ) իր 30 գյուղերով ՀՀ Մինիստրների խորհրդի հոկտեմբերի 7-ի որոշմամբ ժամանակավորապես (ընդգծումը մերն է Ա.Հ.) հանվեց գավառի կազմից և Դիլիջանի ու Քարվանսարայի տեղամասերի հետ միավորվելով դարձավ նոր ձևավորված Դիլիջանի գավառի մաս[1]: Դեկտեմբերի սկզբներին թուրքերից մաքրվեց նաև Արևելյան Շիրակի տարածքը, սակայն, Ալեքսանդրապոլի նախկին գավառի տարածքային ամբողջականությունն ինչ-ինչ պատճառներով այլևս չվերականգնվեց (նոր գավառն ուներ 4 տեղամաս և նախկին 160-ի փոխարեն 129 գյուղ)[2]: Սա առիթ տվեց Արևելյան Շիրակ և Փամբակ գործուղված հանձնաժողովների մի մասին, իսկ հետո նաև ուսումնասիրողներին թուրքական վայրագությունների մասին վիճակագրական տվյալները դիտարկել անջատ առանձին Արևելյան Շիրակի (նոր սահմաններով Ալեքսանդրապոլի գավառի) համար և առանձին Փամբակի համար, ինչը, մեր կարծիքով, սխալ է: Զինագրավման պահին և հաջորդ վեց ամիսների ընթացքում Ալեքսանդրապոլի գավառը Արևելյան Շիրակի և Փամբակի տեղամասերից կազմված մեկ վարչական ընդհանրություն էր, կառավարվում էր Ալեքսանդրապոլից, ուրեմն և վիճակագրական տվյալները ևս անհրաժեշտ է ներկայացնել մեկ ընդհանուր ձևաչափի մեջ:

Թուրքական տիրապետության ողբերգական հետևանքները բացահայտելու գործում թույլ տրված երկրորդ թերացումը մարդկային կորուստների հաշվառման եղանակի մեջ է:

«Յառաջ» պարբերականի էջերում Իրազեկը գրում է, թե մինչ հանձնաժողովները տեղ կհասնեին, գյուղերում արդեն պարզել էին իրենց կորուստների մասշտաբները: Ուստի հանձնաժողովականներն ուղղակի գյուղ առ գյուղ հավաքել են ազգաբնակչությունը, ապա գյուղի «գիտակից մարդիկ թվել են... զոհերի անունները. եթե իհարկե... քիչ են եղել այդ զոհերը» (ընդգծումը մերն է-Ա.Հ.)[3]:

---

[1] Ղարաքիլիսէի յանձնումը,//«Մշակ», Թիֆլիս, 1918, N 20, 18 հոկտեմբերի, էջ 4:
[2] ՀԱԱ, ֆոնդ 203, ցուցակ 1, գործ 4, թ. 20:
[3] **Իրազեկ**, Տաճկական վայրագությունները Ալեքսանդրապոլի գավառում,//«Յառաջ» օրաթերթ, Երեւան, 1919, N 227, 17 հոկտեմբերի, էջ 2-3:

Փաստորեն զոհերի ու գերիների թիվը ճշգրտվել է բացառապես «գյուղի գիտակից մարդկանց» հիշողությամբ, և հաշվառման այս եղանակը մեկ հարյուրամյակ համարվել է խիստ արդյունավետ:

Այդ դեպքում հարց է առաջանում. ի՞նչ եղանակով է կազմակերպվել հաշվառումը Արևելյան Շիրակի և Փամբակի այն վեց տասնյակ գյուղերում, որոնց ազգաբնակչությունը զինագրավման հենց առաջին օրերին գրեթե 80%-ով սրի էր քաշվել, բնաջնջվել էին ամբողջական գերդաստաններ[1], այն գյուղերում, որոնք ավելի քան երեք ամիս դատարկ էին և վերակենդանացան միայն սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին[2], երբեմնի 52000-ոց Ալեքսանդրապոլում, որի բնակչության մոտ 40%-ը թուրքերի հեռանալուց հետո այլևս նույնիսկ ալեքսանդրապոլցի չէր[3]: Մարդկային կորուստների հաշվառման այդ եղանակի պատճառով գյուղերում հարյուրավոր անուններ բաց թողնվեցին, գրեթե չհաշվառվեցին փախչողականները (մայիսի սկզբի դրությամբ մոտ 200.000 մարդ)[4] և արևմտահայերը (1918թ. սկզբի դրությամբ մոտ 26.000 մարդ, որբանոցների սաներին չհաշված)[5], իսկ Ալեքսանդրապոլ քաղաքի մասին ընդհանրապես տվյալներ չհրապարակվեցին:

Պաշտոնական վիճակագրության ճշմարտացիությունն առաջին անգամ կասկածի տակ դրվեց միայն 2000-ական թվականների սկզբներին: Շիրակի 1918թ. մայիսյան գոյամարտի պարագայում Լ. Մելիքյանը մերժեց հայագիտության մեջ ընդունված այն տեսակետը, թե այդ եղեռնագործությանը կարող էր զոհ գնալ ընդամենը 10.300 մարդ, իսկ «Յառաջ» պարբերականում հրապարակված վիճակագրական տվյալները թվագրեց 1918թ. հուլիս-նոյեմբեր ամիսներով[6]:

Ի դեպ, Լ. Մելիքյանի կողմից առաջ քաշված տեսակետը զուրկ չէ իրական հիմքերից: Հայաստանի ազգային արխիվում պահվող մեկ տասնյակից ավելի վավերագրեր գալիս են ապացուցելու, որ զանգվածային կոտորածները գավառում շարունակվել են թուրքական տիրապետության ողջ ընթացքում: Օրինակ՝ Արմութլիում կոտորածը տեղի ունեցավ սեպտեմբերի 25-ին: Արթիկից և Հոռոմից հանկարծակի գյուղ մտած թուրքական զորամասերը 95 հոգու սպանեցին, 85-ին գերեցին, իսկ մյուսներին փախուստի մատնեցին[7]: Նոյեմբերի սկզբներին մոտ

---

[1] ՀԱԱ ֆոնդ 200, ցուցակ 1, գործ 126, թ. 92:
[2] Նույն տեղում, թ. 105:
[3] Նույն տեղում, թ. 96:
[4] «Մշակ», Թիֆլիս, 1918, N 69, 1 ապրիլի, էջ 2: «Մշակ», Թիֆլիս, 1918, N 81, 17 ապրիլի, էջ 2:
[5] ՀԱԱ ֆոնդ 57, ցուցակ 2, գործ 1311, թ. 23-24:
[6] **Մելիքյան Հ.**, 1918թ. Շիրակի մայիսյան գոյամարտը, 1918թ. գոյապայքարի պատմության նոր էջ, Եր, 2005, էջ 73:
[7] ՀԱԱ ֆոնդ 240, ցուցակ 1, գործ 326, թթ. 63-64:

1000 հոռոմցի կոտորվեց այն բանից հետո, երբ գյուղի հարևանությամբ ասկյարի դի հայտնաբերվեց[1]:

Եվ ուրեմն ի՞նչ է իրականում տեղի ունեցել Ալեքսանդրապոլի գավառում 1918թ. մայիս-նոյեմբեր ամիսներին, որո՞նք են այն փաստերը, որ թույլ են տալիս մերժել պաշտոնական վիճակագրության արդյունքները, և որ ամենակարևորն է ի՞նչ մասշտաբներ ընդունեցին թուրքական վայրագությունները գավառում:

1918թ. մայիսի 14-ի գիշերը թուրքերը վերջնագրով պահանջեցին իրենց հանձնել Ալեքսանդրապոլը, ապա, չսպասելով պատասխանին, հաջորդ առավոտյան գրոհով տիրեցին քաղաքին և համանուն գավառի մեծ մասին[2]:

Զինագրավման առաջին օրերին թուրքական հրամանատարությունը զբաղված էր տեղական ինքնակառավարման նոր մարմինների ստեղծմամբ ու պետական շինությունների և պահեստների ցուցակագրմամբ[3]: Օգտվելով առիթից քաղաքային բնակչության մեծ մասը (այդ թվում նաև տասնյակ հազարավոր արևմտահայեր, կարսեցի ու սարիղամիշցի փախստականներ), զոհաբերելով իր ունեցվածքը, փախավ Էջմիածնի և Մեծ Ղարաքիլիսայի ուղղությամբ, այնպես որ երբեմնի 52000 բնակիչ ունեցող քաղաքում մնաց 5000 մարդ[4]:

Հետագայում քաղաքային բնակչության թիվը վերականգնվեց, սակայն թուրքական ներկայությունը ծանր հետք թողեց քաղաքի էթնիկ պատկերի վրա: Վերադարձածների մեջ ալեքսանդրապոլցիները կազմում էին միայն 60%-ը: Փոխարենը մեծ թիվ էին կազմում թաթարները[5]: Ըստ Գ. Խոյեցյանի սրանց էր անցել քաղաքի համարյա կեսը «ռուսական թաղամասը և բոլոր ամենայարմար գեղեցիկ շէնքերը, իսկ քաղաքը կորցրել էր իր զուտ հայկական բնոյթը»[6]:

Ըստ ականատեսների Ալեքսանդրապոլում զանգվածային կոտորածի դեպքեր տեղի չունեցան (սպանությունները հիմնականում կատարվում էին գիշերով

---

[1] ՀԱԱ, ֆոնդ 200, ցուցակ 1, գործ 126, թ. 70:

[2] Ալեքսանդրապոլի անկման ականատեսներից Հովակիմ Մելիքյանն իր հուշերում գրում է, թե բերդապահ կայազորում օսմաներենի իմացությամբ մարդ չգտնվեց, ուստի որոշվեց առավոտյան թուրքերի մոտ մարդ ուղարկել վերջնագիրը ֆրանսերեն կամ ռուսերեն թարգմանելու: Հ. Մելիքյանի այս խոսքերը մեզ համար խիստ կասկածելի են: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ալեքսանդրապոլցիների ճնշող մեծամասնության նախնիներն այստեղ են գաղթել Արևմտյան Հայաստանից, քաղաքային բնակչության համար թուրքերենի իմացությունը սովորական երևույթ էր: Նույնիսկ 1970-1980-ական թվականներին Լենինական քաղաքի բնակչության մի ստվար մասը բավականին լավ տիրապետում էր այդ լեզվին (Մանրամասն տե՛ս **Մելիքյան Հ.**, Արյան ճանապարհով, //«Հայրենիք» ամսագիր, Պոսթըն, 1925, թիւ 6, ապրիլ, էջ 134):

[3] Մանրամասն տե՛ս **Hayrapetyan A**. The Legal-administrative policy of the Ottoman authorities in the Alexandrapol uyezd in May-November 1918, //"Journal of Armenian studies", Yerevan, 2017, N 2, pp. 21-22.

[4] ՀԱԱ, ֆոնդ 200, ցուցակ 1, գործ 126, թ. 91:

[5] Նույն տեղում, թ. 96:

[6] Նույն տեղում, թթ. 12-13:

և անաղմուկ)[1]: Թուրքերն այստեղ որդեգրեցին հայաջնջման «անարյուն» քաղաքականություն: Զինագրավման երրորդ օրը թուրքական հրամանատարությունը հայկական բանակում ծառայած զինվորներից պահանջեց հանձնվել: Հաջորդ երկու շաբաթների ընթացքում քաղաքից և շրջակա գյուղերից բերման ենթարկված 4000 երիտասարդներն ուղարկվեցին Կարս, իսկ անհնազանդները կայարանում գնդակահարվեցին[2]: 101 տարվա ազատազրկման դատապարտվեցին և Կարս ուղարկվեցին նաև տանը զինվորական հագուստ ունեցողները[3]:

Մարդորսության երկրորդ փուլը սկսվեց մայիսի 20-ից: Հաց և անցագրեր բաժանելու պատրվակով թուրքերը ցուցակագրեցին գավառի բնակչությանը, իսկ մի քանի օր անց, տղամարդկանց խումբ-խումբ հավաքելով, ուղարկեցին Կարս, Սարիղամիշ և Էրզրում՝ իբր թե «վճարովի» աշխատանքի տեղավորելու[4]: Ատրպետի հաշվումներով այս կերպ քաղաքից և հարակից գյուղերից հավաքվեց ավելի քան 2500 սայլապան[5] (նոյեմբերին այդ թիվը հասավ 4000-ի[6]): Օսմանյան բանակի հեռանալուց հետո սրանք անհետ կորան: ՀՀ ԱԳՆ տվյալներով, թուրքական գերությունից վերադարձավ միայն հիսուն կիսամեռ սայլապան և 14 անտեր եզ[7]: Անհետ կորան նաև քաղաքում մնացած բժիշկները, բուժքույրերը և գթության 500 հայ քույրերը: Ցուցակագրվելուց հետո սրանց առաջարկվեց տեղափոխվել Մեծ Ղարաքիլիսա, սակայն վագոնները լցնելուց հետո քշեցին Կարսի ուղղությամբ[8]:

Գ. Խոյեցյանի հաշվումներով, թուրքական վեցամսյա տիրապետության ընթացքում այս եղանակով միայն Ալեքսանդրապոլ քաղաքից և Արևելյան Շիրակի գյուղերից Թուրքիայի ներքին նահանգներ քշվեց նվազագույնը 10000 մարդ, որոնցից 4000-ն ուղարկվեց Երզնկա «տեղական մահմեդականներին ... նրանց վրէժի զգացմունքներին յագուրդ տալու համար»[9]:

Այլ կերպ վարվեց թշնամին գավառի գյուղական ազգաբնակչության հանդեպ: Այն, ինչ ասկյարներն ու մահմեդական խուժանն արեցին Արևելյան Շիրակի

---

[1] **Յովսէփեան Մ.**, Ալեքսանդրապոլը գրաւումէն ետք. (Ականատեսի պատմութիւնը),// «Աշխատանք», թերթ, Երեւան, 1918, Գ տարի, 8 (26)յունիսի, շաբաթ, N6(206), էջ2:

[2] Նույնը**:**

[3] ՀԱԱ, ֆոնդ 200, ցուցակ 1, գործ 126, թ. 95:

[4] ՀԱԱ, ֆոնդ 121, ցուցակ 1, գործ 91, թ. 179:

[5] **Ատրպետ**, Ալէքսանդրօպոլ քաղաքի 200 օրվայ գրաւումը Օսմանեան զօրքերից,//«Մշակ» օրաթերթ, Թիֆլիս, 1918, N 265, 25 դեկտեմբերի, էջ 2:

[6] ՀԱԱ, ֆոնդ 200, ցուցակ 1, գործ 126, թթ. 92:

[7] Նույն տեղում, թթ. 135:

[8] **Յովսէփեան Մ.**, Ալեքսանդրապոլը գրաւումէն ետք. (Ականատեսի պատմութիւնը),// «Աշխատանք», թերթ, Երեւան, 1918, Գ տարի, 8 (26) յունիսի, շաբաթ, N 6 (206), էջ 2:

[9] ՀԱԱ, ֆոնդ 200, ցուցակ 1, գործ 126, թթ. 46-47:

և Փամբակի գյուղերում, հայոց ցեղասպանության ուղղակի շարունակությունն էր՝ առավել «կատարելագործված, անզիջում ու անթերի»: Սոգյութլիում և հարակից գյուղերում դիմադրության հանդիպելուց հետո թուրքերն իրենց ուշադրությունը սևեռեցին Արևելյան Շիրակի գյուղերի վրա: Ավելի քան 50 գյուղ հիմնահատակ ավերվեց, իսկ դրանց բնակչությունը սրի քաշվեց[1]:

Սոգյութլեցիներից վրեժ լուծելով թուրքերը Ադիյաման, Փիրթիքյան, Մաստարա, Մուսլուղլի և Սոգյութլի գյուղերից հավաքած մոտ 3000 հայերի մայիսի 25-ին կոտորեցին Ձիթհանքովում: Սրանցից 500-ին փակեցին Շահբազյան եղբայրների մարագներում, ապա պատուհաններից նռնակներ նետելով, գնդացիրներից ու հրացաններից կրակելով սպանեցին, իսկ հետքերը կորցնելու համար մարագներն այրեցին: Մյուսներին (մոտ 2500 հոգու) կոտորեցին գյուղի հյուսիսարևելյան կողմի սարերում (փրկվեցին սոգյութլեցի Նհոյ Գասպարն ու ադիյամանցի Գլոն): Շուրջ 200 հայ օրիորդներ փրկելով իրենց պատիվը, ինքնասպան եղան Ձիթհանքովի լճերում[2]: Թուրքական զորքերին դիմադրելուց հետո ամայի դարձան նաև Մահմուդջուղ և Ղըլիջ-Յաթաղ գյուղերը (1916 թ. դրությամբ միասին ունեին մոտ 2570 բնակիչ երկու սեռերից[3]): Այս շարքում համեմատաբար փոքրաթիվ կորուստներ ունեցավ միայն Մոլլա-Գյոկչան (160 զոհ, 40 գերի)[4]: Տանուտեր Իգնատոսյանի գլխավորությամբ գյուղացիների 50-60 հոգուց բաղկացած ջոկատը գյուղի «Գող մաղարա» հանդամասում հարձակվեց թուրքերի վրա ու ստիպեց հեռանալ[5]:

Ալեքսանդրապոլի զինագրավման օրերին գրեթե հիմնովին ավերվեց Իլլի Ղարաքիլիսա գյուղը: Շուրջ 1500 մարդ գերվեց կամ տեղում կոտորվեց (ողջ մնաց 200 մարդ)[6]: Նույնը տեղի ունեցավ նաև Փոքր Ղարաքիլիսայի հետ: 1916թ. դրությամբ 900 ընտանիք[7] ունեցող այս գյուղում թուրքական յաթաղանին զոհ գնաց մոտ 3000 մարդ[8]:

Ալեքսանդրապոլի և շրջանի հայրենակցական միության վարչության տվյալ-

---

[1] ՀԱԱ, ֆոնդ 200, ցուցակ 1, գործ 126, թ. 92:
[2] ՀԱԱ, ֆոնդ 121, ցուցակ 2, գործ 82, թ. 17:
[3] **Կորկոտյան Զ.**, Խորհրդային Հայաստանի բնակչությունը վերջին հարյուրամյակում (1831-1931), Եր., 1932, էջ 111, 119:
[4] **Մելիքյան Հ.**, 1918 թ. Շիրակի մայիսյան գոյամարտը, 1918 թ. Մայիսյան գոյապայքարի պատմության նոր էջ, Եր., 2005, էջ 56-58:
[5] **Դավթյան Ա.**, Ճանաչիր արմատները քո,//«Անի» շաբաթաթերթ, Մարալիկ, 1987, 22 օգոստոսի, էջ 2: 2:
[6] ՀԱԱ, ֆոնդ 227, ցուցակ 1, գործ 4, թթ. 1-12: Հմմտ. Геноцид армян в османской империи:// сборник документов и материалов. Под ред. М. Нерсисяна, 2-е, доп. изд. Ер, 1983, с. 536.
[7] ՀԱԱ, ֆոնդ 227, ցուցակ 1, գործ 4, թ. 7:
[8] ՀԱԱ, ֆոնդ 56, ցուցակ 16, գործ 475, թթ. 130-137, 206-212:

ների համաձայն մարդկային մեծ կորուստներ կրեցին նաև Գյուրջիյոլ (Թորոս-գյուղ), Օրթաքիլիսա, Սալուտ, Գյուլլիբուլաղ,Ղզըլքիլիսա, Դուզխարաբա, Չիֆ-թալի, Բոզյոխուշ, Ղզըլղոչ, Ղազանչի, Տիտոյխարաբա և Քոռաղբյուր գյուղերը: Դրանք թալանվեցին ու ավերվեցին, գերեվարվեց, բռնաբարվեց և բռնի մահմե-դականացվեց հազարից ավելի կին ու աղջիկ: Սարսափից խելակորույս բնակ-չությունը փախավ Լոռու ուղղությամբ, սակայն թուրքերը հետ բերեցին և կոտո-րեցին[1]: Օրինակ աղինցիները (1916թ. 1112 մարդ[2]) ամբողջ գյուղով փախան, սա-կայն հավատալով թշնամու կեղծ խոստումներին վերադարձան և գլխովին կո-տորվեցին (մոտ 1100 մարդ[3]): Հիմնահատակ ավերվեցին նաև Ալեքսանդրապոլի գավառի եզդիական գյուղերը: Հայրենակցական միության տվյալներով եզդիա-կան 15 գյուղերի բնակչությունն անհետ կորավ[4]:

Արևելյան Շիրակի գյուղական խաղաղ ազգաբնակչության հանդեպ կի-րառված ցեղասպանական քաղաքականության հետևանքով տղամարդկանցից գրեթե զրկվեցին Արթիկ, Կապս, Վերին Ղանլիջա, Ներքին Ղանլիջա, Չրախլի, Դուզքենդ, Մեծ Քյափանակ, Ղփչաղ, Արըխվալի, Բաշգյուղ, Ճլովխան, Իլխիաբի, Թոմարտաշ, Դահարլի, Մեջիտլի, Փոքր Քյափանակ, Հաջինազար, Ջաջուռ, Աղ-քիլիսա, Դարբանդ, Սամրլի, Արըխվալի Երրորդ գյուղերը: Միայն Արթիկում կո-տորվեց 1200 մարդ (տղամարդկանց 80%-ը), ևս 200-ը իբրև «զոհաբերման անա-սուն» մորթվեց Կապս, Վերին և Ներքին Ղանլիջա գյուղերում[5]: Մյուս գյուղերում տղամարդիկ խմբերով քշվեցին սարերն ու գնդակահարվեցին:

Հայաջնջման վերջին արարը տեղի ունեցավ Փամբակում, որտեղ, ըստ ա-կանատեսների վկայության, կուտակվել էր մոտ 200.000 մարդ (Բասենից 9.000, Կաղզվանից 4.000, Կարսի շրջանից 60.000-ից ավելի, և Ալեքսանդրապոլ քաղա-քից և Արևելյան Շիրակի գյուղերից 70.000-ից ավելի): Մի հսկայական զանգված, որը զբաղեցրել էր Ղալթաղչիից մինչև Մեծ Ղարաքիլիսա ընկած հատվածը՝ մոտ 40 վերստ (42.5 կմ)[6]:

Թուրքական 11-րդ դիվիզիայի առաջապահ զորամասերը Մեծ Ղարաքի-լիսա մտան մայիսի 28-ի երեկոյան:Ջեմալ Ջավիդ բեյը, դիմելով ժողովրդին, խոս-

---

[1] ՀԱԱ, ֆոնդ 240, ցուցակ 1, գործ 326, թթ. 58-61: Հմմտ. Սիմոնյան Ռ, Անդրանիկ. Սիբիրական վաշտի ոդիսականը, Եր., 2006, էջ 59:

[2] **Կորկոտյան Զ.**, նշվ աշխ., էջ 109:

[3] ՀԱԱ, ֆոնդ 56, ցուցակ 16, գործ 475, թթ. 130-137, 206-212:

[4] ՀԱԱ, ֆոնդ 240, ցուցակ 1, գործ 326, թթ. 61:

[5] Նույն տեղում, թթ. 58-59:

[6] **Էլչիբեկյան Հ.**, Ղարաքիլիսայի ճակատամարտը,//«Տեղեկագիր հասարակական գիտությունների», գիտությունների», Եր, 1947, N 8, էջ 57: **Ղազարեան Մ.**, Դեպքերը Ղարաքիլիսայի շրջանում, տպավորութիւններ, //«Մշակ», Թիֆլիս, 1918, N102, 2 յունիսի, էջ 3:

տացավ «բիր էրմանինընն բուռնի խալ օլմամիշ»[1]:

Նույն գիշերը սկսվեց խաղաղ հայ ազգաբնակչության կոտորածը: Ասկյարները, Սարալ, Արջուտ և Ղանջուղազ գյուղերի մահմեդական խուժանի ուղեկցությամբ, հարձակվեցին Ղըշլաղի վրա: Նույնը կրկնվեց նաև Մեծ Ղարաքիլիսայում: Վարդանլեցի ու հալլավարցի խուժանին միացած ասկյարները մեկ գիշերվա ընթացքում գյուղի «Վերին թաղ» կոչված թաղամասում կոտորեցին 156 հոգու: Սրանց համար գերեզման դարձավ «Ասլան բեգի փոս» կոչված վայրը[2]:

Ընդհանուր առմամբ, միայն մայիսի 28-ի գիշերը Փամբակի շրջանի 9-ը գյուղերում բացի արևմտահայերից, շիրակցիներից ու կարսեցիներից, թուրքական յաթաղանին զոհ գնաց 1269 փամբակցի (Ղարաքիլիսայում 156 մարդ, Ղըշլաղում 250, Դարբազում 43, Բզովդալում 200, Հաջիղարայում 65, Էֆենդիում 15, Համամլիում 350, Յաղուբլիում 40, Պարնիում 150)[3]:

Սարսափից խելակորույս փախչողներին մի քանի օր անց թուրքերը կեղծ խոստումներով հետ բերեցին և ամենաստոր եղանակներով կոտորեցին[4]:

Ժամանակակիցների հավաստմամբ, խաղաղ ազգաբնակչության զանգվածային կոտորածի պատճառը եղավ այն, որ մարտական գործողությունների թատերաբեմ դարձած գյուղերի ազգաբնակչությունը մասնակցել էր հերոսամարտին: «Ղշլաղը գտնուում էր կռի դաշտում,-գրում է դեպքերին ականատես Մ. Ղազարյանը,-ժողովուրդը մասնակցում էր հերոսամարտին, իսկ վերջին օրը ծանր թնդանօթներից մեկը դրուած էր գիւղի ծայրին, «Մայիլանց կալում» և այնտեղից էր ժարիտ անում դուշմնին»[5]:

Մեծ կարծիքով, Փամբակի հայ ազգաբնակչության կոտորածը բացառապես տեղացիների կռվին մասնակցելով բացատրելը սխալ է: Առավել կործանարար եղավ այն, որ Ղարաքիլիսայի և հարակից գյուղերի բնակիչները չցանկացան գաղթել: Փախուստը համարելով «վախկոտութեան նշան» տանուտերերը ստիպեցին ժողովրդին տեղից չշարժվել և նույնիսկ կանանց ու աղջիկներին գյուղերից չհեռացնել: «Ոչով իրաւունք չունի գեղից դուրս գալ, պտի էստի մնանք, էստի էլ մեռնենք, ով էլ որ հակառակը վարվի, նրա տունը կրակ կտանք, իրան էլ գիւլախորով կանենք»,-սպառնացել էր ղըշլաղցի քյոխվա Ծոքթանց Ավետիքը[6]:

Իրենց հուշերում ժամանակակիցներն անդրադարձել են նաև օսմանյան տի-

---

[1] «Ոչ մի հայի քիթ չի արյունոտվի» (Մանրամասն տե՛ս Ղարաքիլիսայի 1918թ. հերոսամարտը, Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, կազմ. **Ա. Մարուքյան, Վ. Դալլաքյան**, Եր., 2008, էջ 112):
[2] **Խանզադյան Խ.**, նշվ աշխ., էջ 91-92:
[3] ՀԱԱ, ֆոնդ 227, ցուցակ 1, գործ 4, թ. 12: ֆոնդ 240, ցուցակ 1, գործ 240, թթ. 36-37:
[4] **Խանզադյան Խ.**, նշվ. աշխ, էջ 95-96:
[5] Ղարաքիլիսայի 1918թ. հերոսամարտը, Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, էջ 115:
[6] Նույնը:

բապետության ընթացքում Փամբակի մահմեդական ազգաբնակչության շրջանում դրսևորված հայատյացության խնդրին, փորձել են հասկանալ դրա պատճառները: Դեպքերին ականատես Մուշեղ Ղազարյանի և Խորեն ավագ քահանա Խանզադյանի կարծիքով պատճառը Վարդանլու թուրքաբնակ գյուղի վրա դաշնակցականներ Վաղոյի, Արշակի, Խզմալի, Չոպուռ-Դավթի, Ասոյի, Վաղինակի և այլոց կազմակերպած «պատժիչ» արշավանքն էր: Բանն այն է, որ ապրիլի վերջերին դաշնակցական «թռուցիկ խմբերը» դաժան կոտորած էին սարքել Ղարաքիլիսայից ոչ հեռու գտնվող այդ գյուղում: Սրանք շեն գյուղը վերածել էին սպանդանոցի. վառել էին տները, կոտորել անմեղ տղամարդկանց ու երեխաներին, բռնաբարել կանանց: Կոտորածին մասնակցել էին նույնիսկ խմբապետերի կանայք ու սիրուհիները, որոնք առանց ամաչելու ֆայտոններով գառներ էին կրել Ղարաքիլիսա՝ յուղալի խորտիկներ պատրաստելու համար: «Երբ պարզ դարձավ, որ թուրքերը շարժվում են դեպի Փամբակ, ազգի այդ «առաջնորդները» փախան Դսեղի ուղղությամբ,-գրում է Մ. Ղազարյանը,-իսկ ողջ մնացած վարդանլեցիները, միանալով տաճկական կանոնավոր զորքերին, վրեժխնդիր եղան հայերից դառնալով նվաճողների ուղեցույցներն ու հավատարիմ դահիճները»[1]:

Արդարացնելով թուրքաբնակ գյուղերի դեմ «պատժիչ» արշավանքներ կազմակերպելու գաղափարը 1998թ. Խորեն ավագ քահանայի հուշերը վերահրատարակած պրոֆեսոր Մ. Սանթրոսյանը գրում է, թե դաշնակցական «թռուցիկ խմբերը» Հայաստանի տարբեր բնակավայրերում այդ կերպ փորձում էին թուրքական հարձակումով ոգևորված մահմեդական ազգաբնակչությանը հետ պահել անհեռատես քայլերից[2]:

Թե ինչքանով այդ մարտավարությունն իրեն արդարացրեց, այսօր դժվար է ասել: Ինչ վերաբերում է Փամբակի մահմեդականներին, ապա «պատժվեցին» միայն վարդանլեցիները, որովհետև, ըստ հավաստի տեղեկությունների, մեծաքանակ զենք էին կուտակել ու պատրաստվում էին հարձակվելու Մեծ Ղարաքիլիսայի վրա (փաստորեն «թռուցիկ խմբերի» հարձակումը կանխեց նրանց փրկելով ղարաքիլիսեցիներին աղետից), սակայն ծայրահեղ հայատյացությամբ աչքի ընկան շրջանի բոլոր թուրքաբնակ գյուղերը Սարալը, Արջուտը, Ղանջուղազը, Հալլավարը և այլն:

Մայիսի 29-ից խաղաղ ազգաբնակչության զանգվածային տեղահանությունն ու կոտորածը ստացան պաշտոնական բնույթ: Շրջանի ողջ հայ ազգա-

---

[1] Մանրամասն տե՛ս **Խանզադյան Խ.**, Հուշեր և տպավորություններ 1919թ, ծանոթագրությունները և առաջաբանն ըստ Մ Սանթոսյանի, Եր, 1998, էջ 86: Ղարաքիլիսայի 1918թ. հերոսամարտը, Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, էջ 102:

[2] **Խանզադյան Խ.**, նշվ աշխ, էջ 147-148:

բնակչությունը հայտարարվեց ռազմագերի, իսկ շարժական ու անշարժ գույքը պետական սեփականություն: Ասկյարները խուզարկեցին տներն ու թաքստոցները, հավաքեցին տղամարդկանց, ապա երեք օր սոված պահելուց հետո 400-500 հոգանոց խմբերով դուրս բերեցին, կապկպեցին և քշեցին տարբեր ուղղություններով: Գերիների առաջին խումբը գնդակահարվեց «Բաղալ-օղլու աղբիւր»-ի մոտ, երկրորդը՝ Ղարաքիլիսայից հարավ «Տաք-աղբրի փոսեր» կոչված վայրում, երրորդը՝ Վարդանլու գյուղից ոչ հեռու, «քարպիչի զաւօդ»-ի մոտ, չորրորդը՝ «Վանանց Ձորի» անտառում, հինգերորդը՝ Մայմեխի փեշերին, Մեծ ձոր կոչված հանքերում և Յաղուբլի գյուղի Սբ Սարգիս եկեղեցու հարևանությամբ, իսկ վեցերորդը՝ Հաջիղարա գյուղի անասնագոմերում[1]:

Ջավիդ բեյը ծրագրել էր հայերին բնաջնջելու և հանցագործի պիտակից ազատվելու «հանճարեղ» ծրագիր. գերիները գնդակահարվում էին այն բարձունքներում, որտեղ երկու օր առաջ դիրքավորված էին հարձակվող թուրքերը: Այսինքն փորձ էր արվում ցույց տալու, որ խաղաղ ազգաբնակչության կոտորած չի եղել, իսկ անթաղ դիակները թողել են նահանջող հայկական զորքերը: Ընդ որում, գերիները գնդակահարվում էին այն հաշվով, որ դիրքերում երկուստեք զոհերի թիվը հավասար ստացվի: Օրինակ, վեցերորդ խումբը քշվեց Հաջիղարա, որովհետև զոհված «գեավուր-էրմանի»-ների թիվն այստեղ աննշան էր[2]: Կոտորելով հաջիղարացիներին թուրքերը ստեղծում էին հավասար կողմերի միջև ընթացած թեժ մարտի պատրանք[3]:

Ըստ Հ. Ավետիսյանի այդ նախճիրի արդյունքում անտառներում գնդակահարվեց մոտ 4000 մարդ՝ փամբակցիներ, շիրակցիներ, Ղարաքիլիսայի հերոսամարտի օրերին գերի ընկած կամ դրանից հետո կամովին հաղթողի մեծահոգությանը հանձնված հայ սպաներ ու զինվորներ, անպաշտպան մնացած արևմտահայ գաղթականներ և այլք[4]:

Բեմական այս ներկայացումը կարող է և արդյունք տար, եթե դահիճները չզլանային արձակել դիակների մետաղալարերով միմյանց կապկպված ցուցամատները կամ գնդակահարեին գերիներին խրամատներում և ոչ թե արգելափակեին Պապոյի անասնագոմերում և վայրագորեն ողջակիզեին:

---

[1] Ղարաքիլիսայի 1918թ. հերոսամարտը, Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, էջ 120:

[2] Թուրք զորահրամանատար Քյազըմ Կարաբեքիրը, Հաջիղարայում թուրքական զորքերի ձախողմանն անդրադառնալով, 1919թ. հակիրճ գրել է. «...գյուղի մոտ կանայք և գյուղացիները, կացիններով զինված, կոտորում էին հետ քաշվող թուրք զինվորներին»: (Տե՛ս Копия доклада, представленного американской делегацией, возглавляемой генералом Харбордом, относительно боевых действий 15-ого Кавказского армейского корпуса в 1918 г, Эрзерум, 1919, с. 10-11.)

[3] **Խանզադյան Խ.**, նշվ աշխ, էջ 92-93:

[4] **Ավետիսյան Հ.**, Հայոց ազգային միության հաղթանակը 1918 թվականի մայիս, Եր, 1998, էջ 115:

Մայիսի 30-ին Ջավիդն իրագործեց իր դիվային ծրագրի հաջորդ կետը. Ղարաքիլիսայում հայտարարվեց, թե երկաթուղու ծառայողները պարտավոր են 24 ժամվա ընթացքում ցուցակագրվել և անցնել աշխատանքի: Մոտ 500 հոգի հավատալով ցուցակագրվեց ու այլևս չվերադարձավ: Հաջորդ առավոտյան սրանց 40-50-հոգանոց խմբերով, մետաղալարերով ցուցամատներից իրար կապկպված, քշեցին Մայմեխի և Ալթուն-թախտի բարձունքները, ստիպեցին գերեզմանափոսեր փորել, ապա դրանց առջև գնդակահարեցին, այնպես որ հետին շարքերն ընկնելով ծածկեցին առաջիններին: Ժամանակակիցների վկայությամբ, այս տեսարանին ականատես օտարազգի բանվորներից շատերը խելագարվեցին[1]:

Փամբակի շրջանի զինագրավման յոթերորդ օրը կարգապահությունը բանակում վերականգնվեց, իսկ զանգվածային կոտորածները գոնե ցերեկային ժամերին դադարեցին: Փոխարենը մեծ մասշտաբներ ընդունեցին գիշերային հարձակումները: «Առեղծվածայնորեն սկսեցին անհետանալ դաշտերից վերադարձող մշակներն ու գյուղական գյուղապետերը (թուրքերը սրանցից պահանջում էին իրենց հանձնել գյուղի գեղեցկադեմ կանանց ու աղջիկներին, իսկ մերժվելու դեպքում սպանում էին)[2]:

Հատկապես ահռելի մասշտաբներ ընդունեցին կանանց ու աղջիկների առևանգման ու բռնաբարության դեպքերը: «Վավաշոտ, լպիրշ տաճիկը,-հիշում է Խորեն Խանզադյանը,-իր անասնական կրքերն էր հագեցնում հայ ընտանիքի պատիվը ոտի տակ տրորելով»[3]: Շատ գյուղեր, իրենց իսկ գյուղացիների խոստովանությամբ, ենթարկվեցին «լիակատար բռնաբարության»: Օրինակ Նալբանդը. տղամարդիկ գյուղից հեռացվեցին,իսկ կանայք բռնաբարվեցին:Ընդ որում, բռնաբարվեցին ոչ միայն ջահել աղջիկները սկսած 8-10 տարեկանից, այլ նաև տարեց կանայք: Թուրքերի հեռանալուց հետո Փամբակ գործուղված հանձնաժողովների կողմից արձանագրվեցին նաև արվամոլության բազմաթիվ դեպքեր օսմանյան բանակի հրամանատարական կազմի ու բուժանձնակազմի մասնակցությամբ (դիվիզիայի բժիշկ Քյամիլ-բեյ)[4]:

Այսօր, ինչպես և մեկ դար առաջ պարզել, թե ինչ մասշտաբներ ընդունեց այս զազրելի երևույթը, անհնար է, որովհետև հատկապես գյուղական բնակավայրերում ազգաբնակչությունը, որպես կանոն, թաքցնում էր իր կրած անպատվության դեպքերը: Հայ կինն իրեն սպառնացող պատվազրկությանը պատասխանեց ինքնապաշտպանության բացառիկ ձևով՝ ինքնասպանություն թունավորմամբ: Ըստ

[1] ՀԱԱ, ֆոնդ 114, ցուցակ 2, գործ 33, թ. 52, ֆոնդ 240, ցուցակ 1, գործ 240, թ. 44:
[2] ՀԱԱ, ֆոնդ 121, ցուցակ 2, գործ 79, թ. 15:
[3] **Խանզադյան Խ.**, նշվ աշխ, էջ 94:
[4] ՀԱԱ, ֆոնդ 202, ցուցակ 1, գործ 1271, թթ. 48:

Մ.Ղազարյանի այս կերպ վարվեցին օրինակ հայտնի ղարաքիլիսեցի Աղաբաբյանների ընտանիքի անդամները Միքայելը, նրա կինը Վարդանուշը, դուստրերը Զանազանն ու Հռոմսիմը (Խորեն ավագ քահանան Միքայելի այս դստերն անվանում է Հռիփսիմե)[1], որդին Ավետիսն իր կնոջ ու երեխաների հետ, ղշլաղցի Մայիլյանցներից Աստղիկը, Լուսիկը և Ջավահիրը[2]: Թունավորմամբ ինքնասպանություն գործեցին նաև Աղաբաբյանների ու Մայիլյանցների հետ միևնույն բակում ապրող ալեքսանդրապոլցի Ծատուրյաններից Սիրանուշն ու Արուսյակն իրենց մոր հետ, և այլք[3]:

Մայիսյան վայրագություններից հետո անթաղ մնացած դիակները շուտով սկսեցին նեխվել, և Ղարաքիլիսայում մնալը, նույնիսկ թուրքի համար, դարձավ անհնար: Միայն հունիսի կեսերին թուրքերը բարեհաճեցին դրանք թաղել փողոցների եզրերին փորված գերեզմանափոսերում[4], ևս մեկ շաբաթ անց ողջ շրջանը հայտնվեց տիֆի և խոլերայի ճիրաններում: Դրան գումարվեց նաև համատարած սովը[5]: Հիվանդանոցների բացակայության պայմաններում միայն հուլիս-օգոստոս ամիսներին համաճարակին ու սովին զոհ գնաց ավելի քան 1000 մարդ: Մ. Ղազարյանի հաշվումներով, միայն Ղըշլաղում համաճարակը խլեց 378 կյանք, Դարբազում 125, Հաջիղարայում 286, Բզովդալում 35, Յաղուբլիում 48: Սեպտեմբերին տարափոխիկ հիվանդություններից մահացության դեպքերն ընդունեցին սարսափելի մասշտաբներ: Ականատեսների վկայությամբ, մեռնողներն այնքան շատ էին, որ դիակները, օրերով մնալով տներում ու փողոցներում, նեխվում էին թունավորելով օդն ու ջուրը[6]:

1918թ. հոկտեմբերի 30-ին Մուդրոսում կնքված զինադադարով Օսմանյան կայսրությունը ճանաչվեց աշխարհամարտում պարտված: Զինագրավված շրջանները վերադարձվեցին ՀՀ-ին, իսկ դեկտեմբերին այստեղ գործուղվեցին հատուկ հանձնախմբեր՝ թուրքերի հասցրած մարդկային և նյութական վնասների մասշտաբները ճշգրտելու համար:

Այս գործում հատկապես լուրջ աշխատանք ծավալեց Ալեքսանդրապոլի հայրենակցական միությունը: Համագործակցելով Ալեքսանդրապոլում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչության և Ալեքսանդրապոլի քաղաքային վարչության հետ այն Շիրակի և Փամբակի իր կառույցների միջոցով հավաքեց գավառին հասցված մարդկային ու նյութական վնասների մասշտաբները լուսաբանող մե-

---

[1] **Խանզադյան Խ.**, նշվ. աշխ, էջ 94-95:
[2] Ղարաքիլիսայի 1918թ. հերոսամարտը, Փաստաթղթերի և նյութերի ժողովածու,էջ 121-122:
[3] **Իրազեկ Ց.**, Մօտիկ անցեալից, պատմական դէպքեր և ապրումներ, 1917-1922, Պէյրութ, 1956, էջ 31:
[4] Ղարաքիլիսայի 1918թ. հերոսամարտը, Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, էջ 126:
[5] Նույն տեղում, էջ 134:
[6] Նույն տեղում, էջ 135:

ծաքանակ նյութ: Դրանք ամփոփվեցին և 1918թ. դեկտեմբերի 16-ին ներկայացվեցին «Հայկական հայրենակցական միությունների կենտրոնական խորհրդի» ու «Կովկասում դաշնակից պետությունների ներկայացուցչության» ուշադրությանը: Այդ ամփոփիչ զեկուցագրում լիովին ապացուցված համարվեց այն, որ թուրքական կանոնավոր զորքերի և տեղի մահմեդականների կողմից գավառում կազմակերպված զանգվածային ջարդն ու բռնություններն արդյունք են պետական մակարդակով հայ ժողովրդի հանդեպ իրագործված ֆիզիկական բնաջնջման վաղօրոք ծրագրված քաղաքականության: Զինագրավման վեց ամիսների ընթացքում Ալեքսանդրապոլ քաղաքում, Արևելյան Շիրակի և Փամբակի գյուղերում կոտորվել էր մոտ 20.000 մարդ, ևս 6.000-ը զոհ էր գնացել սովին ու համաճարակային հիվանդություններին:Տարբեր պատրվակներով գերվել և Օսմանյան կայսրության խորքերն էր քշվել 15.000 մարդ, որից վերադարձել էր մոտ 3-400-ը, առևանգվել ու բռնաբարվել էր ավելի քան 5.000 կին և օրիորդ: Մոտ 1.000 կին բռնի մահմեդականացվել էր: Շատերը, չհամակերպվելով անպատվությանը, ինքնասպանությամբ վերջ էին տվել իրենց կյանքին[1]:

Ահավասիկ բոլոր այն փաստերը, որոնց առկայությունն այսօր թույլ է տալիս մեզ մերժել Ալեքսանդրապոլի գավառում թուրքական ոճրագործության արդյունքներն ամփոփող պաշտոնական վիճակագրության արդյունքները:

*ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ»,*
*Գյումրի, 2018, հ. 21, էջ 113-127*

[1] ՀԱԱ ֆոնդ 227, ցուցակ 1, գործ 4, թթ. 1-12: ֆոնդ 240, ց. 1, գ. 240, թթ. 36-39, 44, 48-49:

# THE SOCIAL SITUATION OF MIGRANTS IN THE PROVINCE OF ALEXANDRAPOL IN 1914-1920

The history of the First World War and its subsequent two years is perhaps one of the most thoroughly explored issues of the Armenian historiography. Throughout the past century, dozens of memoirs and scholarly works have been published in the homeland and the Diaspora. There is a substantial amount of published material of documentary origin. Nevertheless, some issues, such as the number of refugees settled in the territory of Eastern Armenia, the issue of newcomers' settlement, the social situation of the migrant population, orphanage and so on, have never been seriously investigated.

The results of our recent studies published in Armenian and foreign scholarly journals shed light on the above-mentioned issues. Carrying out our research in conjunction with the following archival data and time frame we make a study of the social conditions in Alexandropol province in the period of 1914-1920.

Military operations on the Caucasus front started in 1914, at the beginning of November. Almost at the same time the first refugees appeared. The difficult task of accepting, listing and settling them down, was on the shoulders of social organizations acting in the Armenian-populated areas of Transcaucasia. For instance, the branch office of the "Brotherly Aid Committee" hosted 18 hostels for 100-250 people in the town[1].

The first 3,000 refugees got to the province in 1914, in the middle of November and by the end of January, 1915, their number reached 6909[2]. Due to the residents' voluntary donations, those people were provided with lodging, fuel and food free of charge[3].

No significant problems were carefully dealt with in spring, 1915 either, when the immigration of the Western Armenians began.

Gevorg Mkrtumyan, who was sent on a business trip from Astrakhan to Alexandrapol, gave a high appreciation of the activities of local public organizations in the field of care for migrants[4].

On the pages of the periodical "Mshak", he wrote about the problems of

---

[1] ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1311, թթ. 23-24:

[2] Однодневная перепись беженцев из Турции, Персии и из мест, пограничных с Турцией (армян, айсоров, греков и пр.) 1914-1915 гг. Перепись произведена 30-го января 1915 г., Эривань, 1915, с. 26-31. Ալեքսանդրապոլի գավառը վիճակագրական նյութերում (XIXդ.-XXդ. սկիզբ), փաստաթղթերի և նյութերի ժողովածու, աշխատասիրությամբ Ա. Հայրապետյանի, Ե., 2011, էջ 232-235:

[3] One person was given two pounds per month or 2 kg 720 g of bread (See: Համառօտ տեղեկագիր Աղէքսանդրապօլի ազգային կենտ. Յանձնաժողովի գաղթականական սեկցիայի,//«Գաւառի ձայն», Ալէքսանդրապօլ, 1915, 11 յունուարի, էջ 3):

[4] **Մկրտումեան Գ.**, Փախստականների մօտ,//«Մշակ», 1915, 13 մայիսի, էջ 3:

migration: “In order to improve the situation of more than 8,000 refugees in the country and around 80 villages, local organizations were able to join the province's territory to the region, and then appoint the “personnel”, trying to find the solution to the distribution of food and clothing. And all this was just done with 64,000 rubles[1].

The first serious problems in the affairs of the refugees’ placement in the province and providing them with basic living conditions emerged in summer 1915 when about 200,000 Christians from the Vilayets of Van, Bitlis and Erzurum passed to Eastern Armenia due to the withdrawal of the Russian troops. According to Al. Khatisyan, the number of Western Armenians established in the province of Alexandrapol in those days was around 31.000. On the same days in Yerevan there were only 19800 and in the province of Etchmiadzin 16000 migrants[2].

It was decided to accommodate 4,000 people in Pambak villages. 130 people were accommodated in large villages and 100, in small ones. For example, Mets Gharakilisa, though with a population of more than 10000 people, had a large number of empty and light premises, pharmacies, food markets and other facilities to offer to 130 refugees only[3].

The situation was tough in the Alexandrapol hostels. “There were 6000 migrants in the town,”–wrote A. Safrastyan, a reporter from “Mshak”; a small number of those had been settled in private homes and provided with basic living conditions, and most lived in dormitories in favourable conditions.” According to the author of the article, there were up to 15 families who lived in the rooms with broken windows–hungry, without bed and clothing[4].

The issues related to the food supply were solved by the end of the year. The overwhelming majority of the migrants preferred to be accommodated with former villagers instead of the humid basements of the city. According to Atrpet, this part of the migrants were well provided for, they received flour and other essential supplies from non-governmental organizations. They continued to benefit from the peasant’s stocks[5].

Unfortunately, in those hard days for the Armenian people, the social organizations that were to heal the wounds of the people, began to criticise each other in the Eastern-Armenian periodicals, thus using the national tragedy for their benefit.

For example, in December 1915 in № 278 issue of the “Horizon” Karapetyan’s

---

[1] Ibid.
[2] **Աթանէսեան Ա.**, «Մշակ», 1915, 17 հոկտեմբերի, էջ 3:
[3] **Ականատես**, Փախստականների վիճակը, //«Մշակ», 1915, 13 օգոստոսի:
[4] **Շալճեան Ս.**, Տպաւորութիւներ հայ գաղթականների վիճակից, //«Մշակ», 1915, 11 նոյեմբերի:
[5] **Ատրպետ**, Փախստականները Ալէքսանդրօպոլի գաւառում,// «Մշակ», 1915, 12 նոյեմբերի

editorial came out entitled “Complaints” where the author, based on unverified facts, accused the Alexandrapol Committee of “Fraternal Aid” of complete inaction.

According to the reporter, at the end of October, 12000 of the 14500 inhabitants of Alexandrapol province were in a less favorable condition than in the villages. The remaining 2500 settled in the hostels of the city were in constrained conditions[1].

The article, which was more like a verdict, was promptly redefined in the Official Bulletin of the Armenian Caucasus Cooperative, "Hambavaber"[2], which allowed supposing that the author was the real client of the editorial.

According to the official statistics, in the given period there were 22815 migrants (instead of Karapetyan's 14500), 15971 of whom were settled down in villages, 4240 in the city's private homes and 2604 in the hostels[3].

The refugees were provided with fuel; they were given 15 kopecks (Russian coins), as well as soap, warm water and clothing. With the guidance and support of “Youth Unity” and “Alagyaz Children” companies a hospital was opened for them.

It should be noted that thanks to the collaboration between “Fraternal Aid” and “Union of Cities”, the death rate in the province of Alexandrapol was very low. According to the clergyman Artak’s reference presented to the Armenian Patriarchate in June 16, 1916 only 1164 migrants died from cold and starvation[4], whereas according to B. Ishkhan Khanian accounts, only at the end of August, 1915 2135 people became victims of hunger and epidemics[5].

Ishkhan A. Arghutyan the Yerkaynabazuk, who was sent there in November 1915, described the state of immigration in the province of Alexandrapol as quite satisfactory. According to him, there were newcomers in all 189 villages of the province: they had free lodging and received cash allowances. Those who were in Pambak were well-off. They had about 1000 heads of large cattle and picked up firewood from forests, got 200 stoves, warm blankets and clothes. The issue of employment was also settled to some extent. 100 people were employed in the local copper mine, while 300 people were working on the construction of the Kars railway and the Sarighamish highway[6].

July, 1916 was marked by the new withdrawal of the Russian troops. The first

---

[1] Խմբագրական, Բողոքներ,//«Հորիզոն», Թիֆլիս, 1915, 12 դեկտեմբերի:
[2] Քրոնիկոն, «Համբաւաբեր»,//Թիֆլիս, 1916, 3 յունուարի:
[3] Ալեքսանդրապոլի «Եղբայրական օգնութեան» կոմիտե, Նամակներ խմբագրութեան,//«Հորիզոն», 1916, № 8, 14 յունուարի:
[4] ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1306, թ. 3-7:
[5] **Իշխանեան Բ.**, Աղէտի եւ տառապանքի աշխարհից,//«Մշակ», 1915, 17 սեպտեմբերի:
[6] **Իշխան Ա.Մ.,** Արդութեան-Երկայնաբազուկի զեկուցումը փախստականների մասին,//«Մշակ», 1915, 8 դեկտեմբերի:

groups of Western Armenians moving to Alexandrapol province were settled in Pambak. American aid organizations distributed clothes and blankets[1]. In Mets Gharakiliss, a well-stocked grocery store also opened in August for caring to the needs of the migrants[2].

The situation was much more complicated in Alexandrapol and the surrounding villages. In August 8000 semi-hungry Sassounians settled there: "To meet the newcomers' basic needs, the distribution of flour was temporarily replaced by monetary handouts, but this policy led to flour inflation"[3].

By the end of the year 1370 other Sassounians settled in the villages of Eastern Shirak[4]. In spite of all the efforts, local public organizations did not manage to solve the problems of refugees' everyday life on the threshold of winter. In this situation, Archbishop of the "Fraternal Aid",the Governor of Alexandropol Kalandadakishvili and Mayor Kamsarakan appealed for help: save the poor war veterans from the grips of hunger[5]. hunger[5].

By the end of the year, by the joint efforts of the Alexandrapol Police Committee of the "Fraternal Aid" and the representative of the Armenian Migrant Assistance Coordinator Major Maynard, 15 walnut and cotton processing workshops were established in the province. According to the newspaper "Ashkhatanq", this provided 40 men and 1505 women with work. That is, on average, about 6000 people improved their living conditions[6]. Another two workshops were set up in Alexandrapol by the Sassoun residents in February, 1917[7].

In spring, 1918 the military-political situation in the region dramatically changed. The Turkish-Transcaucasian war, which began on April 1, spread a new panic among the Armenians. After the conspiracies of Kars more than 100000 people moved to the province of Alexandrapol[8]. A year after the fall of Kars, the Turks occupied Alexandrapol Alexandrapol and the villages of Eastern Shirak, and on May 28 they entered Mets Gharakilisa. Moreover, ten thousand survivors escaped from the Turkish yoke to Etchmiadzin and Pambak. According to the report, approximately 200000 people were

---

[1] **Յ.Յ**. Մեծ-Ղարաքիլիսէի շրջան,//«Աշխատանք», Երեւան, 1916, 1 հոկտեմբերի:
[2] **Գաղթական**, Գաղթականների վիճակը Համամլուի շրջանում,//«Համբաւաբեր»,1916, 16 հոկտեմբերի:
[3] **Աշոտ**, Ալէքսանդրապոլի փախստականներ,//«Աշխատանք», 1916, 10 օգոստոսի:
[4] Սասունցիների ներկայացուցիչները Թիֆլիսում,//«Մշակ», 1916, 18 դեկտեմբերի:
[5] Փախստականների վիճակը,//«Մշակ», 1916, 1 նոյեմբերի:
[6] **Ատրպետ**, Ամերիկացիները մեր մէջ,//«Աշխատանք», 1917, 30 սեպտեմբերի:
[7] **Երեւանցի**, Փախստականները Ալէքսանդրապոլում,//«Աշխատանք», 1917, 8 փետրուարի:
[8] Նոր փախստականութիւն,//«Մշակ», 1918, 17 ապրիլի:

in Pambak on the eve of the Turkish invasion[1].

In the occupied regions, the Turks set about the physical extermination of Armenians, as a result of which the ethnic background of the Armenian population was affected. According to official statistics, about 18000 people (12000 killed, 6000 captives) were killed in that genocide[2]. Meanwhile, according to our recent studies, about 20000 people have been slaughtered in Alexandrapol, Eastern Shirak and Pambak villages, and 6000 have fallen victim to the famine and epidemic diseases, and more than 15000 were captured and abandoned in the depths of the Empire[3]. The Ottoman domination also struck a heavy blow to the economy of the province. According to G. Khoyetsyan's calculations, the Turks took about 50000 large and 100000 small cattle, more than 5000 horses, 2.5 million pounds of wheat and 1 million pounds of barley[4].

In autumn 1918 the defeated Ottoman Empire began to withdraw its troops from the occupied territories. After the Turks' withdrawal, the administrative image of the province of Alexandrapol changed. By the decision of the Council of Ministers of the Republic of Armenia, the region of Pambak (Mets Gharakilisa District) became part of the newly formed Dilijan province, and in eastern Shirak province the new province of Alexandrapol was formed, with 4 settlements and 129 villages[5].

In the hope of moving to Kars, the migrants' caravans moved to Alexandrapol from different provinces of Transcaucasia. According to the data of the Central Statistical Bureau of Armenia, in January 1919 in the province of Alexandrapol, the number of the population reached 152414, of which 118053 were natives, 31989 were Western Armenians, and 2,372 were Russian-Armenian refugees[6] (for comparison, in 1915 the province had 226740 inhabitants)[7]. During the next month, 25,000 other

---

[1] **Էլչիբեկյան Հ.**, Ղարաքիլիսայի ճակատամարտը //(Տեղեկագիր հասարակական գիտությունների, 1947, էջ 57):

[2] ՀԱԱ, ֆ. 121, ց. 1, գ. 91, թ. 179: ՀԱԱ, ֆ. 202, ց. 1, գ. 1271, թ. 47: ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, Լեոյի ֆոնդ, ց. 1, գ. 253, թ. 1:

[3] See: **Հայրապետյան Ա.**, ժողովրդագրական գործընթացներն Ալեքսանդրապոլի գավառում 1918 թ. մայիս-նոյեմբեր ամիսներին,//ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 21, Գյումրի, 2018, էջ 113-127: Նույնի՝ Օսմանյան ցեղասպանական քաղաքականության շարունակությունը Ղարաքիլիսայի շրջանում (1918թ. մայիս-հոկտեմբեր),//Հովհաննես Թումանյանի ծննդյան 150-ամյակին և Վանաձորի պետական համալսարանի հիմնադրման 50-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Վանաձոր, 2019, էջ 254-262:

[4] **Բաղալյան Խ.**, Գերմանա-թուրքական օկուպանտները Հայաստանում 1918 թ., Ե., 1962, էջ 19:

[5] ՀԱԱ, ֆ. 203, ց. 1, գ. 4, թ. 20:

[6] ՀԱԱ, ֆ. 127, ց. 1, գ. 2976, թ. 20:

[7] Данные о пространстве и населении Закавказья («Кавказский календарь на 1916 год», отд. III, Тифлис, 1915, с. 37).

refugees from Georgia moved to Alexandrapol for passing to Kars[1].

Unfortunately, peace did not last long. The emerging Turks provoked the Armenian-Georgian war, which became evil for the population of the economically depressed province. The urban authorities of Alexandrapol, with the hope of saving the hungry population, on December 30, appealed to the Armenian government to keep away from the extreme unwanted war, to seize the last stocks of bread and to end the conscription [2] but there was no result. In February, 1919 when the railway communication between Kars and Jajur stopped due to winter snowstorms, the issue of the food supply came to a dead end, and the province appeared in the clutches of hunger.

The Migration Committee of urban force on Alexandrapol which was called to provide refugees with food, failed on the way of its mission. The main reason for the failure of the supply of provision was the wrong management of the work. The caregiving activities aimed at helping the migrants were on the shoulders of two diverse structures: Ministry of Supply of Provision of RA and AmerCom of the Middle East (hereinafter: Amercom). Their uncertified actions led to the starvation and death of thousands of people[3]. The spread of hunger was also stimulated by the fabulous loyalty of of the local officials, "when the bread was consumed by 100,000 people, while 30,000 refugees were still hungry"[4].

The city turned into a dwelling place of beggars and ill people, and the colony was so depressed that "the mother threw her half-alive child into the streets to take the rationed food."[5] The situation was worse in the villages. The hunger and epidemic diseases reached an unprecedented scale. According to the eyewitnesses, there was no dog or cat left in the yards, and people like animals were eating greens for days long in mountains and fields[6].

Orphans were relatively in good condition. On April 12, 1919 the Minister of Defense of the Republic of Armenia, Sahak Torosyan, and the representative of the AmerCom in Armenia, Captain Elder, gave care and attention to the orphanages, separate stations, as well as wandering orphans in Armenia. The ministry would only have supervision of the educationnal-cultural and moral-political environment. Since May 1, 1919 the acting orphanages and the hospital of orphans were passed under the

---

[1] Գաղթականութեան մէջ,//«Զանգ», Երեւան, 1919, 12 յունուարի, էջ 5:
[2] ՀԱԱ, ֆ. 105, ց. 1, գ. 3003, թ. 3:
[3] ՀԱԱ, ֆ. 205, ց. 1, գ. 689, թթ. 45–49:
[4] **Ատրպետ**, Պոլիգօնների գիշատիչները, //«Յառաջ», Երեւան, 1920, 25 յունուարի:
[5] Պոլիգոնում տեղաւորուած գաղթականութեան ծանր վիճակը, //«Մարդկայնութիւն», Ալեքսանդրապոլ, 1919, 28 մարտի, էջ 2:
[6] Սովը գաւառում,//«Ժողովուրդ», Երեւան, 1919, 18 մայիսի:

control of AmerCom factual caretaking[1].

The inability of the urban authorities to improve the situation of immigration had led to extreme escalation of relations between the parties, transforming Alexandrapol into a stage of military actions. After two dead bodies were found in one of the districts of the town, the two sides fought against each other with two hostile armies and pistols. "Urban authorities resorted to extraordinary measures to suppress the internal war, suspended military operations, but could not blame their motives,"–the periodical writes[2].

Extreme immigration tried to solve the issue of paramilitary actions by force. Illegal acts and looting were widely spread in the province. Attacks by militant armed groups on the villages, cattle theft and looting continued until the end of the year. The situation did not change even after 1919 when martial law was declared in Alexandropol[3]. On September 4, 1919 the Governor of Kars, S. Ghorghanyan wrote in his report about the state of Alexandrapol expressing his Concern: "Such a collapse of the government in the district infects the environment. Take a lot of tough measures and tackle the anarchy, unless it's too late and as long as it's within our power"[4].

For the sake of justice, let's mention that the bulk of immigration was not out of ordinary steps, despite the extreme material situation.

In August 1919, the supply of food in the province finally came to a dead end. Desiring to provide shelter for refugees living in the city and to clarify their food supply, the local American Committee refused to provide food to the hostels, demanding that they be resettled in the 59 former hostels of the "Polygon" military base. This led to new challenges. Indeed, after the ten-day collapse, people had to accept the terms of the committee.

The periodical "Haraj" has frequently commented on the issues of refugee empowerment in the "Polygon", highlighting the steps of the American Councils to help them, and presenting the entire chain of events that led to migration[5]. The only way out was to provide the villages of Eastern Shirak and Kars with agricultural produce after the Turkish invasion[6]. The periodical has considered the AmerCom's program for picking up up more than 24000 migrants in "Polygon" dangerous environment because:

---

[1] ՀԱԱ, ֆ. 105, ց. 1, գ. 2853, թ. 153:
[2] Հին ցաւը,//«Հայաստանի ձայն», Երեւան, 1919, 20 նոյեմբերի:
[3] ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 138, թ. 35:
[4] Ibid., թ. 66:
[5] **Դրսեցի**, Ամերիկեան նպաստամատոյցը Ալէքսանդրապօլում,//«Յառաջ», 1919, 3 դեկտեմբերի: **Դրսեցի**, Խորթ զաւակները,//«Յառաջ», 1919, 9 դեկտեմբերի: **Դրսեցի,** Պօլիգօնների գիշատիչները, //«Յառաջ», 1920, 23 յունուարի: **Դրսեցի,** Պօլիգօնների գիշատիչները,//«Յառաջ», 1920, 25 յունուարի:
[6] **Ալէք**, Ալէքսանդրապօլի գաղթականների վիճակը,//«Յառաջ», 1919, 13 նոյեմբերի:

1. the concentration of emigration in one place would lead to the increase of crimes,
2. accumulating masses of people in buildings where rooms were not separated from each other would not bring down the morbidity and would surely contribute to the outbreaks of illnesses (including the sexually transmitted diseases).
3. The buildings of the barracks provided to the migrants would be transformed into ruins within a short period of time.

Unfortunately, the newspaper's predictions soon became reality. The AmerCom failed to chieve tangible results in food supply. By limiting the amount of unnecessary expenditure, the Committee began to use the free labour of the migrants. “It was possible to see how the doors were opened nightly and the food and clothes disappeared on the way to Polygon, how some people got some clothes”, - wrote Dr. S. Pirumov in his report presented to the Minister of Care of RA[1].

Other predictions also became reality. In the course of several weeks, barracks were converted into ruins, windows and doors were removed, broken glass was replaced with plates dropped out of the roofs, and the heating system and toilet were dismantled. The community life led to the spread of morbidity and venereal diseases among the population. Significant distinctions were made in cases of inflammation. According to S. Pirumov, dormitories had amassed up to 25 people, but the bodies were not handed over for weeks, because the hostages used the food of the dead[2].

The only way was to quickly dismantle the hostels. It was necessary to deport immigrants early in the villages of Kars and Alexandrapol, to provide them with shelter and labor, and in this way saving the lives of tens of thousands of innocent people.

The first attempt to relieve the “Polygon” was made in December 1919, but it did not yield significant results. From the 2,200 migrants, only 300 were moved. Without trusting the authorities, the refugees rebelled and refused to leave the hosts. On January 9, 1920 Robinson, the Amercom representative, presented the following lines in his report: “... no one wants to leave Polygon, many lie down on the ground and do not want to board the train. I threatened to withdraw food of the obstinates”[3].

At the end of January, 1920, the attempt of emptying “Polygon” was repeated: 500 Kars dwellers, 300 Knusciner and 347 Sasounners were sent to Kars. Another 500 Kaghzvanciner were sent to their former residences[4]. Over the next two weeks, most of them did not survive the difficulties of the winter road and were deprived of their living

---

[1] ՀԱԱ, ֆ. 205, ց. 1, գ. 801, մաս 2, թ. 206:

[2] Ibid.

[3] Պոլիգոնի գաղթականները,//«Յառաջ», 1920, № 9, 13 յունուարի:

[4] ՀԱԱ, ֆ. 205, ց. 1, գ. 801, մաս 1, թթ. 41, 54:

conditions in new places of residence, and moved to Alexandrapol[1].

The third and the last phase of emptying the hostels began in February, 1920. This crucial and seemingly hopeless mission was made possible only thanks to the activities of Smbat Boroyan and Onik Mkhitaryan, special representatives of the Ministry of Care of the Republic of Armenia in the Kars-Alexandrapol region.

To avoid possible shocks, 3–5 groups of refugees were sent to study the abandoned villages of Kars and Alexandrapol. At the same time, 500 militaries of militia (300 horsemen, 200 infantrymen) were formed from the emigrants of "Polygon" to protect those villages from the Turkish-Tatar assaults.

The great shift of immigration, as a result of which whole Alexandrapol got emptied, began on of February 24, 1920. Within a month 25–26000 western Armenians and 9 to 10000 Caucasian Armenians left the city-of the 5000 Bassen dwellers, 4000 were settled in the district of Selim, and 1000 in the empty villages of Alexandrapol. The remaining 29400 were located in the province of Alexandrapol and 15 villages of Kars region[2]. In the new settlements, the migrants were supplied with houses, arable lands, grasslands, forage and other necessities.

To conclude this brief study of the social situation of the migrants in Alexandropol province in 1914–1920, the following is to be noted:

- between 1914 and 1917 the province received about 95000 immigrants. Some of them stayed in the same place while the others left. The public organizations carried out their mission, i.e. they received thousands of people suffering from the Genocide and the war;
- in 1914–1917 the province received about 95000 immigrants. Some of them stayed there, the others left. The commitment of thousands of young people to the genocide and the hard work of ensuring the living conditions of the victims of the war and the genocide have been supported by the public organizations.
- unfortunately, in spring, 1918, at the Caucasian front of World War II the military situation changed. The disgraceful investiture of Kars followed the fall of Alexandrapol. The Ottoman domination struck a heavy blow to the economy of the province. After the Turks left, the administrative reformed state appeared in an endangered state both socially and economically. This immediately affected the situation of about 50,000 immigrants. The misery led to the barriers and the spread of the illnesses. There were significant proportions of death cases. The situation was

[1] ՀԱԱ, ֆ. 205, ց. 1, գ. 830, թ. 5:
[2] ՀԱԱ, ֆ. 205, ց. 1, գ. 830, թթ. 9–10:

corrected only in spring, 1920 when the Ministry of Care of the Republic of Armenia succeeded in rescuing 36000 migrants from the province of Alexandropol.

*ՀՀ ԳԱԱ Հայագիտական միջազգային հանդես,*
*«Բանբեր հայագիտության», Երևան, 2019, N 2 (19), էջ 17-29*

## ԴՐՎԱԳՆԵՐ 1918թ. ՄԱՅԻՍՅԱՆ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ. ՇԻՐԱԿԻ ԳՈՅԱՄԱՐՏԸ

***Նախաբան.*** Մայիսյան հերոսամարտերը բախտորոշ նշանակություն ունեցան հայ ժողովրդի կյանքում: Հայկական զորամասերի և աշխարհազորայինների հերոսական պայքարի շնորհիվ ոչ միայն կանխվեց թուրքական սրընթաց գրոհը դեպի Անդրկովկաս, այլև հաստատվեց հայ ժողովրդի գոյատևելու պատմական իրավունքը, նախադրյալներ ստեղծվեցին պետականությունից զուրկ հայությանը վերակերտելու իր պետությունը: Այդ հաղթանակներն արդյունք էին ոչ միայն հայ ժողովրդի արիության և ինքնազոհության, այլև այն ներդաշնակ միաբանության, որ օրհասական պահին հաստատվեց հայության տարբեր հատվածների միջև:

Անցած հարյուրամյակի ընթացքում հայ պատմագիտությունը բազմիցս անդրադարձել է 1918թ. մայիսյան հերոսամարտերի պատմությանը: Հայրենիքում և սփյուռքում հրատարակված տասնյակ հուշագրություններում ու գիտական մենագրություններում լուսաբանվել են ռազմական գործողությունները,ներկայացվել են հերոսամարտերի արդյունքներն ու հետևանքները: Հրապարակի վրա առկա է նաև փաստավավերագրական բնույթի հսկայական տպագիր նյութ: Այդուհանդերձ որոշ հիմնահարցեր՝ ինչպես օրինակ թուրք զավթիչների դեմ Շիրակի գյուղերում ծավալված դիմադրական պայքարի պատմությունն առայսօր լուրջ ուսումնասիրության ենթարկված չէ: Մինչդեռ Արևելյան Շիրակի և Արագածոտնի միաձուլման հատվածում ձևավորված ճակատը կարևոր իրադարձություն էր Մայիսյան հերոսամարտերի պատմության մեջ:

Դեպքերին հաջորդած ժամանակահատվածում և հատկապես խորհրդային տարիներին Շիրակի գոյամարտի ուսումնասիրությունը դուրս մնաց պատմաբանների ուշադրությունից:Կռիվների անմիջական մասնակիցների վկայությունները գրի չառնվեցին, չուսումնասիրվեցին ու չհրատարակվեցին: Մեկ դար առաջ թույլ տրված սխալն այսօր լրջագույն խնդիրների առաջ է կանգնեցնում ժամանակակից հետազոտողին:

Նպատակ ունենալով էական քայլ կատարելու այս ուղղությամբ՝ արխիվային նորահայտ վավերագրերի, գիտական գրականության և ժամանակակիցների հուշերի համադրմամբ ստորև առանձին ուսումնասիրության առարկա կդարձնենք Շիրակի 1918թ. գոյապայքարի պատմությունը, դրանով իսկ կփոր-

ձենք ամբողջացնել Մայիսյան հերոսամարտերի պատմության փառապանծ էջը:

### *Շիրակի 1918թ. մայիսյան գոյամարտը*

1918թ. գարնանն աշխարհամարտի Կովկասյան ճակատում ռազմա-քաղաքական իրավիճակը կտրուկ փոխվեց ի վնաս հայ ժողովրդի: Խորհրդային Ռուսաստանի՝ պատերազմից դուրս գալուց հետո Անդրկովկասյան սեյմը փորձեց Օսմանյան կայսրության հետ փոխհամաձայնության եզրեր գտնել, սակայն հաջողության չհասավ: Ապրիլի 1-ին վերսկսված թուրք-անդրկովկասյան պատերազմը շուտով վերածվեց թուրքական զորքերի հաղթարշավի: Կարսի ուխտադրուժ հանձնմանը[1] մայիսի 15-ին հաջորդեց Ալեքսանդրապոլի անակնկալ անկումը[2]: Թուրքական հարձակումն ուղղակիորեն կազմալուծեց հայկական զորամասերի շարքերը: Ալեքսանդրապոլի ջոկատի հրամանատարի հավաստմամբ՝ քաղաքը հանձնելուց հետո սկսված զանգվածային դասալքության պատճառով ճակատը մնաց բաց[3]:

Գիտակցելով իրենց հաջողության ժամանակավոր բնույթը թուրքերը ձեռնամուխ եղան զինագրավված գավառի հայ ազգաբնակչության ֆիզիկական բնաջնջմանը: Սակայն, արևելահայությունից «ազատվելու» թշնամու մոլուցքը մի շարք բնակավայրերում դիմադրության տարերային պոռթկումներ առաջ բերեց: Ալեքսանդրապոլում ՀՀ ԱԳՆ ներկայացուցիչ Գ. Խոյեցյանի հավաստմամբ Սոգյութլի, Մահմուդջուղ, Շիրվանջուղ և Արթիկ գյուղերում զինված երիտասարդությունն ամրացավ սարերում և դիմադրություն կազմակերպեց[4]: Արևելյան Շիրակի տարբեր գյուղերում կազմակերպած դիմադրության հանդիպելու փաստը վկայում է նաև Կարաբեքիր փաշան: «Ալեքսանդրոպոլից դեպի հարավ՝ Շիրվանջուղի ու Մահմուդջուղի շրջաններում,-գրում է նա,-գյուղական բնակչությունը, ոչնչացնելով մեր (թուրքական-Ա.Հ.) պահեստները և սպանելով դրանք հսկող զինվորներին, զենքը ձեռքին անցավ սարերը»[5]:

Ըստ Ալեքսանդրապոլի շրջանի պարետ Մեհմեդ Թեջիրի՝ «թուրքական կանոնավոր զորքերին դիմադրություն ցույց տված գյուղերը պատժվեցին զինվորական օրենքների ամենայն խստությամբ»[6]: Իրականում՝ ավելի քան 50 գյուղեր

---

[1] Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии, Тифлис, 1919, док. 103, с. 225:

[2] **Հարությունյան Ա.**, Թուրքական ինտերվենցիան Անդրկովկաս 1918թ. և ինքնապաշտպանական կռիվները, Եր., 1984, էջ 171:

[3] Հայաստանի ազգային արխիվ /այսուհետև՝ ՀԱԱ/, ֆոնդ 200, ցուցակ 1, գործ 19, թ. 19, 44-48:

[4] ՀԱԱ, ֆոնդ 200, ցուցակ 1, գործ 38, թ. 85-95:

[5] **Karabekir Paşa**, Birinci Kafkas kolordusunun 334 senesinde ki harekâti ve meşhudatı hakkında general Harbord riyasetindeki Amerika heyetine takdim edilen rapor süreti, Erzurum, 1335 (1919), s. 9.

[6] **Սարգսյան Ե.,**Թուրքիան և նրա նվաճողական քաղաքականությունը Անդրկովկասում 1914-1918 թթ.,

թալանվեցին ու հիմնահատակ ավերվեցին, դրանց բնակչությունը գերվեց, բռնաբարվեց ու հոշոտվեց[1]: Այդուհանդերձ, դիմադրական մարտերն իրենց հիմնական առաքելությունը կատարեցին. տարբեր հաշվումներով մոտ 100.000 փախստական-գաղթական հնարավորություն ստացավ անվնաս հեռանալու:

Շիրակում դիմադրություն կազմակերպելու նախերգանքը տրվեց Ներքին Թալինում (Դաշտադեմ)՝ մայիսի 5-ին: 1918թ. փետրվար-ապրիլյան թուրքական հարձակումից հետո մոտ 70.000 տարոնցիներ միանալով Անդրանիկի Ալեքսանդրապոլ նահանջող ջոկատին՝ շարժվեցին դեպի Սարդարապատ[2]: Երևանի ազգային խորհուրդը որոշեց գաղթականությանը տեղավորել Արագածից Երևան ընկած հատվածում[3]: Սակայն Ներքին Թալինի և շրջակա գյուղերի մահմեդական բնակչությունը խոչընդոտեց դրան: Ներքին Թալինի բերդի գրավումն իրագործվեց Փեթարա Մանուկի, Սասունցի Մուշեղի, Մորուք Կարոյի և Չոլոյի գլխավորած սասունցի կամավորականների կողմից: Եռօրյա մարտերում Արագածի փեշերից մինչև Ուջան՝ մոտ 70 կմ, մաքրվեց մահմեդականներից[4]: Դրանով ոչ միայն լուծվեց տարոնցիների տեղավորման խնդիրը, այլև վերացվեց Երևանի վրա կախված վտանգը, որն ավելի ակնառու էր դարձել Սարդարապատի ու Բաշ-Ապարանի կռիվների ժամանակ:

Հաջորդ քայլը լինելու էր Արևելյան Շիրակում կուտակված գաղթականության տարհանումը: Նախապատրաստական աշխատանքներն այս ուղղությամբ սկսվեցին մայիսի 14-ին՝ այն բանից հետո, երբ պարզ դարձավ, որ հայկական «Ալագյազ» զորաջոկատը Ալեքսանդրապոլ-Երևան ճանապարհի Արփաչայի հատվածի պաշտպանությունն ապահովելու փոխարեն թուրքերի գերակշռող ուժերի ճնշման տակ նահանջել է Ղարաբուռուն[5]:

Ականատեսների վկայությամբ այդ օրերին Արևմտյան Հայաստանի տարբեր գավառներից ու Արևելյան Շիրակի գյուղերից մոտ 100.000 գաղթականներ՝ իրենց սայլերով, ունեցվածքով ու անասուններով կուտակվել էին Սոգյութլիում (Սառնաղբյուր): Անհրաժեշտ էր կոնկրետ քայլեր ձեռնարկել մարդկանց այդ հսկայական բազմությունը փրկելու համար:

---

Եր., 1964, էջ 445:

[1] Մանրամասն տե՛ս **Հայրապետյան Ա.,** Ժողովրդագրական գործընթացներն Ալեքսանդրապոլի գավառում 1918թ. մայիս-նոյեմբեր ամիսներին,//ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», Գյումրի, 2018, հ. 21, էջ 113-127:

[2] **Մինասեան Է.**, Մայիսեան հերոսամարտեր. հայերի Հայրենականը,//«Ալիք» օրաթերթ, Թեհրան, 2019, 2 յունուարի, թիւ 1 (23198), էջ 5:

[3] **Ռուբէն**, Հայ յեղափոխականի մը յիշատակարանները, հ. Է: Թեհրան, 1983, էջ 106:

[4] **Ներսիսյան Ա.**, Ռուբեն, Եր., 2007, էջ 275:

[5] ՀԱԱ, ֆոնդ 121, ցուցակ 2, գործ 82, թ. 2:

Ինքնապաշտպանության կազմակերպման և գաղթականության տարհանման աշխատանքները գլխավորեցին Առաջին աշխարհամարտի Կովկասյան ճակատում մարտնչած սառնաղբյուրցի սպաներ Նհոյի Սարգիսը (Գեորգիևյան Խաչի կրկնակի շքանշանակիր), Աթաշի Եղիշը, Խչոյի Սերոբը, շարքայիններ՝ Մնեյի Սմբատը, Հարութի Մարալովը, Կարոյի Տոնոն, Կարոյի Հարութը, Նհոյի Նահապետը, Քոչոյի Թորոսը Բոչոյի Հարութը, գյուղացիներ՝ Խաչոյի Քերոբը, Շարաֆի Բարսեղը, Նիկոյի Հովսեփը, Տեր-Գևորգը (քահանա), Քոչոյի Հարութը և Դիլանի Հարութը:

Խորհրդակցությունը կայացավ գյուղի «Հովեյ օդա» կոչված վայրում: Հաշվի առնելով գյուղի աշխարհագրական դիրքը,որ վերին աստիճանի հարմար էր ինքնապաշտպանության համար, որոշվեց Սոգյութլի (Սառնաղբյուր)-Մաստարա-Մուսլուխլի (Լանջիկ)-Բողազքեսան (Ձորակապ)-Տաշղալա (Քարաբերդ)- Մոլլա Գյոկչա (Մարալիկ)-Շիրվանուղ (Լեռնակերտ) գյուղերի շրջանում ստեղծել երեք տեղամասերից բաղկացած 14կմ երկարությամբ պաշտպանական գիծ և ճակատը պահել այնքան ժամանակ, մինչև գաղթականներն ապահով կհեռանային:

Պաշտպանական առաջին տեղամասը ձգվելու էր Գունի բարձունքներից մինչև Շիշթեփե: Այս հատվածի հրամանատարությունը հանձնվեց Նհոյ Սարգսին: Նրան օգնականներ նշանակվեցին Մնեյի Սմբատը, Հարութի Մարալովը, Նհոյի Նահապետը, Սրքեյի Մուկուչը, Նաջրի Սիմիգը, Հենցու Տիգրանը և Ասլանի Քերոբը:

Պաշտպանական երկրորդ տեղամասն ընդգրկում էր Վանքի ձորի երկու բարձրադիր մասերը և ապահովում էր Մոլլա Գյոկչա-Սոգյութլի ճանապարհի հսկողությունը: Այս հատվածի ղեկավարությունը հանձնվեց Աթաշի Եղիշին: Նրա օգնականներն էին Խաչոյի Քերոբը, Կարոյի Տոնոն, Քոչոյի Թորոսը, Ղուրշուդի Արմենակը, Քոչոյի Հարութը և Սեփանի Շաբոն:

Պաշտպանական երրորդ տեղամասն ընդգրկում էր լեռանցքից մինչև Տաշղալա ընկած հատվածը: Այս տեղամասի հրամանատարն էր Շարաֆի Բարսեղը, իսկ օգնականներն էին՝ Կարոյի Հարութը,Բղդոյի Հարութը և Դիլանի Մարալովը[1]:

Մշակվեց նաև մարտական գործողությունների ծրագիր. ավելորդ զոհերից խուսափելու համար սոգյութլեցիները տարհանվեցին, փոխարենը՝ թշնամուն ապակողմնորոշելու՝ աշխատանքային առօրյայի պատրանք ստեղծելու, նպատակով առավել քաջերի մի խումբ (այդ թվում՝ նաև կանայք) մնաց գյուղում: Երբ մայիսի 16-ին թուրքական 13-հոգանոց ջոկատն Ալլա փաշայի գլխավորությամբ

[1] **Սարգսյան Խ., Սարգսյան Ա.**, Սոգյութլուի գոյամարտը 1918թ. մայիսի 14-22-ին, 1918թ. Մայիսյան գոյապայքարի պատմության նոր էջ, Եր., 2005, էջ 49-51:

մտավ Սոգյութլի՝ Հենցու Տիգրանը, Բղդոյի Հարութը և Ասլանի Քերոբը աղ ու հացով դիմավորեցին նրանց և տեղավորեցին՝ հրամանատարին «Հովեյ օթախում», իսկ զինվորներին՝ «Հովեյ օդայում»: Գիշերը սարերից իջած Հարութի Մարալովը, Նհոյի Սարգիսը և Մնեյի Սմբատը թուրքերին կոտորեցին: Նույն ճակատագրին արժանացավ նաև հաջորդ առավոտյան գյուղ մտած թուրքական 40-հոգանոց ջոկատը: Զորահրամանատարի կտրված գլուխը սոգյութլեցիները կապեցին ձիու թամբին և ձին քշեցին Մոլլա Գյոկչայի ուղղությամբ[1]:

Սոգյութլեցիների «հանդգնության» մասին լուրը կայծակնային արագությամբ հասավ Ալեքսանդրապոլ: Մայիսի 18-ին թուրքական կանոնավոր զորքը Շիրվանջուղի ուղղությամբ ձեռնարկեց նոր՝ առավել մեծամասշտաբ գրոհ: Այն, ինչ տեղի ունեցավ հաջորդ 4-5 օրերին, վեր է ամեն տեսակի երևակայությունից: Թուրքի նկատմամբ խոր ատելությունը, վրեժխնդրության մոլուցքն ու թշնամուն նսեմացնելու վճռականությունը տվեցին իրենց արդյունքները: Ամայի սարերում հանդիպելով դիմային հզոր կրակահերթի և կրելով մարդկային մեծ կորուստներ թշնամին խուճապահար փախավ՝ մարտի դաշտում թողնելով մեծ քանակությամբ ռազմավար (նաև թնդանոթ):

«Սոգյութլվա պատերազմի» օրերին իրենց եղբայրների ու ամուսինների հետ կողք կողքի կռվեցին նաև գյուղի կանայք՝ Ղուրշուդյան Ջեյրանը (Ջեյրո), Սարգսյան Թարգյուլը, Ենոյի Վարսիկը, Հովեյի Նոյեմը, Մալխասի Շուշիկը, Գրիգորյան Նուբարը և այլք: Սառնաղբյուրում հատկապես հպարտությամբ են հիշում վանեցի Նուբարին: Ծնունդով նա Արճեշից էր (1883թ.): Վանի ջարդերի ժամանակ թուրքերը տղամարդկանց լցրել էին մարագներն ու այրել: Հորն ու չորս եղբայրներին կորցրած Նուբարը դիակների տակից գտել էր ծանր վիրավոր ամուսնուն (առաջին ամուսնուն) և կանացի շորեր հագցրած տարել տուն: Մի քանի օր անց թուրքերը հայտնաբերել էին վիրավորին և տան շեմին կտրել գլուխը: Անկոտրում կնոջն այդքանից հետո հաջողվել էր զենք գողանալ ու կռվելով հասնել Կարս, որտեղ էլ երկրորդ անգամ ամուսնացել էր Շաբո Եկմալյանի հետ և հաստատվել Սոգյութլիում[2]:

Դիմադրական մարտերը Սոգյութլիում դադարեցին միայն այն բանից հետո, երբ կապավորները զեկուցեցին գաղթականների բարեհաջող էջմիածին հասնելու մասին: Իրենց պարտքը համարելով կատարած՝ ինքնապաշտպանության մասնակիցները մայիսի 22-ի գիշերը թողեցին դիրքերն ու կազմակերպված

---

[1] **Գևորգյան Ռ.**, 1918 թ. մայիսյան հերոսամարտերի մի նոր էջ,//«Հայկական բանակ», Եր., 2003, N 2, էջ 32-33:

[2] **Գևորգյան Ռ.**, 1918 թվականի Մայիսյան հերոսամարտերի պատմության մի նոր էջ՝ Սոգյութլուի գոյամարտը, 1918թ. Մայիսյան գոյապայքարի պատմության նոր էջ, Եր., 2005, էջ 37:

նահանջեցին: Սրանցից մոտ 1000 հոգի, ըստ Երևանյան ջոկատի շտաբի պետի տեղակալ Ալեքսանդր Շնեուրի, հետո միացավ Պանդուխտի (Միքայել Սեֆերյան) հեծյալ մշեցիների ջոկատին և շարունակեց հետապնդել թշնամուն[1] (Այդ մասին իր զեկուցագրերում խոսում է նաև գեներալ Մ. Սիլիկյանը)[2]:

Սոգյութլիից չհեռացան միայն Ավոյի Նիկոլը (12տ.), Պողոսի Վարազը (10 տ.), Սարգսյան Բաբկենը (10տ.), Պողոսի Նախշունը, Հարեյի Ալեքը և Դիլանի Հարութը: Սրանց պատմելով՝ սարսափած թշնամին գյուղ մտավ միայն երեք օր անց՝ Ադիյամանի (Գառնահովիտ) կողմից:

Ինքնապաշտպանության հաջորդ օջախը Շիրվանջուղն էր (Լեռնակերտ): Դիմադրական մարտերն այստեղ սկսվեցին այն բանից հետո, երբ գյուղ մտած թուրքերը պահանջեցին իրենց հանձնել գեղեցիկ կանանց ու աղջիկներին: Շիրվանջուղցիները հրաժարվեցին հրամանը կատարելուց, իսկ զինված ընդհարման ժամանակ 6 թուրք սպանեցին: Ըմբոստներին պատժելու համար թուրքական հրամանատարությունը պատժիչ զորաջոկատ ուղարկեց, որը սակայն կազմակերպված հակահարված ստանալով դիմեց փախուստի[3]: Այս դեպքերից անմիջապես հետո շիրվանջուղցի 26 երիտասարդներ՝ զինված «Մոսի» և «Բերդանկա» տեսակի հրացաններով,19-ամյա Ալեքսանդր Այվազյանի գլխավորությամբ միացան Սոգյութլիի դիմադրության մասնակիցներին: Խրամատներ փորելով Ջոջկող բլուրի երկարությամբ՝ նրանք ուժեղ դիմադրություն կազմակերպեցին, թշնամուն պատճառելով մարդկային մեծ կորուստներ, ապա սոգյութլեցիների հետ միասին նահանջեցին: Չկարողանալով ճնշել մի խումբ երիտասարդների դիմադրությունը՝ թուրքերը հավաքեցին գյուղում մնացած բնակիչներին (հիմնականում ծերեր, կանայք և երեխաներ)՝ թվով 302 հոգի, և լցնելով մարագը ողջակիզեցին: Այդ ոճրագործությունից փրկվեց միայն 11-ամյա մի երեխա[4]:

Կազմակերպված ինքնապաշտպանության վերջին օջախը չորրորդ գավառամասի կենտրոն Մոլլա Գյոկչան էր: Ըստ ժամանակակիցների՝ գյուղ մտած թուրքերն անխնա թալանեցին բոլորին՝ մոտ 40 մարդ քշեցին Էրզրումի ուղղությամբ, տարան անասունների մեծ մասը, խոտի դեզերը, սայլերը, գյուղատնտեսական գործիքներն ու մեղվափեթակները: Այստեղ ևս ընդհարումները սկսվեցին այն բանից հետո, երբ ***թշնամին պահանջեց իրեն հանձնել գեղեցիկ կանանց ու աղջիկներին:*** Տանուտեր Ալեք Գևորգյանը (Տերտերանց գերդաստանից) մերժեց

---

[1] ՀԱԱ, ֆոնդ 121, ցուցակ 2, գործ 84, թ. 28, գ. 82, թ. 15-17: **Մանասերյան Մ.**, Հիշողություններ Սարդարապատի հերոսամարտից (1918թ. մայիսի 22-29),//«Հայկական բանակ», Եր., 1998, N 2 (16) էջ 91, 95:

[2] ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 18, թ. 11-12: **Ավետիսյան Հ.**, Հայոց ազգային միասնության հաղթանակը: 1918 թվականի մայիս, Եր., 1998, էջ 105-106:

[3] ՀԱԱ, ֆոնդ 200, ցուցակ 1, գործ 95, թ. 104:

[4] **Գևորգյան Ռ.,** Ակունք, Եր., 2008, էջ 446-447:

այդ պահանջը[1]: Թուրքերը պաշտոնանկ արեցին նրան և տանուտեր նշանակեցին Կարո Իգնատոսյանին: Ոգևորված սոգյութլեցիների հաջողված ինքնապաշտպանությամբ՝ վերջինս ոչ միայն մերժեց թուրքերին, այլև վճռեց դիմադրություն կազմակերպել: Դաշնակցականներ Առաքել Սիմոնյանի և Աղանիկ Աղբալյանի գլխավորությամբ մոլլագոկչեցիներից ու փախստական-կամավորականներից կազմված 50-60 հոգանոց ջոկատը գյուղի հյուսիսարևելյան կողմում՝ «Գող մաղարա» կոչված հանդամասում, հարձակվեց թշնամու վրա[2]: Չկարողանալով ծնկի բերել գյուղացիներին՝ թուրքերը հրաժարվեցին հետագա գործողություններից:

Դիմադրական այդ մարտերում աչքի ընկան Բոզոյենց Մելիքը, Մեսրոպը, Սերգոն, Աբաջոնց Տիգրանը, Տերտերանց Ալեքը, Վահանը, Չարչոոլոնց Սերգոն ու Հովհաննեսը, Իգնատոսյան Կարոն, Բոզիկյան Սիրեկանը, Ավդալյան Մկրտիչը և ուրիշներ: Տղամարդկանց հետ ուս ուսի տված թշնամու դեմ կռվեցին նաև գյուղի կանայք: Մարալիկում այժմ էլ հպարտությամբ են պատմում, թե ինչպես Բոզիկյան Այվազի կինը՝ Պետոենց Սիրունը, խեղդեց տունը թալանել ցանկացող թուրք զինվորին[3]:

Սոգյութլիում, Շիրվանջուղում, Մոլլա Գյոկչայում և այլուր կազմակերպված դիմադրության հանդիպելուց, ապա Սարդարապատում և Բաշ Ապարանում խայտառակ պարտություն կրելուց հետո, թուրքական հրամանատարությունն իր ուշադրությունը սևեռեց Ալեքսանդրապոլի շրջակա գյուղերի վրա և թիկունքն ապահովելու նպատակով ձեռնամուխ եղավ Շիրակի դաշտի հայության բնաջնջմանը:

Թուրքական «որսորդ» կոչված զորաջոկատը՝ կազմված գերազանցապես տեղի քրդերից ու թաթարներից, հավաքեց Թալին-Մաստարա-Ադիյաման-Փիրթիքյան-Մուսլուղլի-Սոգյութլի ճանապարհներին պատահած մոտ 3000 տեղացի ու գաղթական հայերի՝ տեղափոխեց գլխավոր ճանապարհներից հեռու ընկած Ձիթհանքով (Բազիրխանա) և ամենաբարբարոս եղանակներով մայիսի 25-ին կոտորեց: Այդ եղեռնագործությունից փրկվեցին միայն սոգյութլեցի Նհոյ Գասպարն ու ադիյամանցի Գլոն: Թուրքերի հեռանալուց հետո պատմաբան Հովհաննես Տեր-Մարտիրոսյանի (Ա.-Դո) և ՀՀ խորհրդարանի անդամ Հակոբ Տեր-Հակոբյանի (Իրազեկ) կողմից նրանց հիշողությունները գրի առնվեցին և 1919թ. հրատարակվեցին «Յառաջ» օրաթերթում՝ «Տաճկական վայրագութիւնը Ալէքսանդրապոլի գաւառում» խորագրով հոդվածաշարում:

---

[1] **Մելիքյան Հ.**, Մարալիկի հնագույն գերդաստաններից մեկի պատմությունը, Եր., 2006, էջ 115:
[2] **Մելիքյան Հ.**, 1918 թ. Շիրակի մայիսյան գոյամարտը, 1918 թ. Մայիսյան գոյապայքարի պատմության նոր էջ, Եր., 2005, էջ 56:
[3] **Դավթյան Ա.**, Ճանաչիր արմատները քո,//«Անի» շաբաթաթերթ, Մարալիկ, 1987, 22 օգոստոս, էջ 2:

Գերիներից 500-ին թուրքերը փակեցին Շահբազյան եղբայրների մարագներում, ապա պատուհաններից նռնակներ նետելով, գնդացիրներից ու հրացաններից կրակելով՝ սպանեցին, իսկ հետքերը վերացնելու համար մարագներն այրեցին: Մյուսներին (մոտ 2500 մարդ) կոտորեցին գյուղի հյուսիսարևելյան կողմի սարերում: Շուրջ 200 հայ օրիորդներ փրկելով իրենց պատիվը՝ խեղդվելով ինքնասպան եղան Զիթհանքովի լճերում[1]: Ականատեսների վկայությամբ՝ «մի քանի օր յետոյ, երբ խեղդուածների դիակները ջրի երես բարձրացան, լճի բովանդակ մակերևույթը պատուեց գոյնզգոյն հագուստներով»[2]:

Թուրքական զորքերին դիմադրություն ցույց տալուց հետո անմարդաբնակ դարձան նաև Ալեքսանդրապոլի գավառի Մահմուդջուղ և Ղըլիջ-Յաթաղ գյուղերը (1916 թ. դրությամբ միասին ունեին մոտ 2570 բնակիչ երկու սեռերից[3]):

Իրազեկի պնդմամբ՝ տեղի ունեցած ոճրագործության իրական մեղավորները տեղի քրդերն ու թաթարներն էին, որ ղեկավարվելով զանազան բեկերից ու աղաներից, ամենագործուն մասնակցությունն ունեցան Արևելյան Շիրակի հայ ազգաբնակչության կոտորածին, իսկ հետո անցան Կարս: «Աւելորդ չենք համարում,-գրում է նա,-հրապարակել զոնե ամենագլխավորների անունները. Բուղութլեցի Քոռ Նամէի տղա Զոռբէն, Սույսըզցի Շամիլ Մամէ օղլին, նոյնտեղացի Խուդո Բշար օղլին, Քրդի Ղլիջյաթաղցի Զալալ Սուեի Ամարը և Այիբ Քյալալ օղլին, Հըկօցի Սայեադ Բրո օղլին, Ղարաղուլեցի Դաւրէժ օղլին, Ալտջեցի երկու եղբայրները՝ Տայո և Հասան բէկերը և Ղըզըլմաղարեցի Ամար Հասան Աղա օղլին»[4]:

***ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ.*** Ամփոփելով 1918թ. մայիսին Արևելյան Շիրակի գյուղերում ծավալված դիմադրական պայքարի պատմության համառոտ քննությունը՝ նշենք հետևյալը. Շիրակի գոյամարտը կամ ինչպես սիրում են տեղացիներն այն կոչել՝ «Սոգյութլվա պատերազմը», առանձնահատուկ տեղ ունի հայ ժողովրդի մայիսյան հերոսամարտերի պատմության մեջ: Արևելյան Շիրակն ու Արագածոտնը միաձուլող հատվածում՝ տեղացիներից, արևմտահայ կամավորներից, փախստականներից ու նահանջող հայկական զորամասերից հետ մնացած զինվորներից ձևավորված ճակատը թուլացրեց դեպի Սարդարապատ շարժվող թուրքական «անպարտելի» թվացող զորքերի թիկունքը: Սոգյութլիում և հարակից գյուղերում թուրքական կանոնավոր զորքերին ու տեղական զինված մահմեդական խուժանին հասցված հարվածը եղավ թշնամու դեմ հայ ժողովրդի երկու

---

[1] ՀԱԱ, ֆոնդ 121, ցուցակ 2, գործ 82, թ. 17:

[2] **Իրազեկ,** Տաճկական վայրագութիւնը Ալէքսանդրապօլի գաւառում,//«Յառաջ» օրաթերթ, Եր., 1919, N 24, 19 հոկտեմբերի, էջ 2:

[3] **Կորկոտյան Զ.,** Խորհրդային Հայաստանի բնակչությունը վերջին հարյուրամյակում (1831-1931), Եր., 1932, էջ 111, 119:

[4] **Իրազեկ**, Նույնը:

հատվածների առաջին համատեղ հաղթանակը Սարդարապատի ու Բաշ Ապարանի նախօրեին: Այստեղ ձևավորված ջոկատները Պանդուխտի հետ հետապնդեցին ու Ախուրյանից արևմուտք քշեցին թշնամուն: Շիրակի գոյամարտը անխուսափելի կոտորածից փրկեց նաև տասնյակ հազարավոր փախստական-գաղթականների՝ հնարավորություն տալով վերջիններիս անարգել հասնելու Էջմիածին և Երևան:

## References

1. **Avetisyan H.**, Hayots azgayin miasnuthyan haghtanaky: 1918 tvakani mayis, Yerevan, HH GAA «Gitutyun» hrat. 1998 **(In Armenian).**
2. **Davtyan A.,** Chanachir armatnery qo, «Ani» shabatatert, Maralik, 1987, 22 ogostos, ej 2: **(In Armenian).**
3. Dokumenty i materialy po vneshney politike Zakavkaz'ya i Gruzii, Tiflis, Tipografiya Pravitelstva Gruzinskoy Respubliki, 1919 **(In Russian).**
4. **Gevorgyan R.**, Akunk', Yerevan, «Areg» hrat., 2008 **(In Armenian).**
5. **Gevorgyan R.**, 1918 t. mayisyan herosamarteri mi nor ej, «Haykakan banak», Yerevan, 2003, N 2, ej 31-35 **(In Armenian).**
6. **Gevorgyan R.**, 1918 tvakani Mayisyan herosamarteri patmutyan mi nor ej. Sogyutlui goyamarty, Mayisyan goyapaykari patmutyan nor ej, Yerevan, Rus-haykakan Slavonakan hamalsaran, 2005, ej 30-41 **(In Armenian).**
7. **Harutyunyan A.,** Turkakan interventsian Andrkovkas 1918t. yev inknapashtpanakan krrivnery, Yerevan, HSSH GA hratarakchutyun, 1984 **(In Armenian).**
8. Hayastani azgayin arkhiv, fond 45, tsutsak 1, gorts 18 **(In Armenian).**
9. Hayastani azgayin arkhiv, fond 121, tsutsak 2, gorts 82, 84 **(In Armenian).**
10. Hayastani azgayin arkhiv, fond 200, tsutsak 1, gorts 19, 38, 95 **(In Armenian).**
11. **Hayrapetyan A.**, Zhoghovrdagrakan gortsyntatsnern Aleksandrapoli gavarrum 1918t. mayis-noyember amisnerin, HH GAA SHHH kentroni «Gitakan ashkhatutyunner», Gyumri, 2018, h. 21, ej 113-127 **(In Armenian).**
12. **Irazek**, Tachkakan vayragutivny Aleksandrapoli gavarrum, «Yaraj» oratert, Yerevan, 1919, N 26, 22 hoktemberi, ej 2 **(In Armenian).**
13. **Irazek**, Tachkakan vayragutivny Aleksandrapoli gavarrum, «Yaraj» oratert, Yerevan, 1919, N 24, 19 hoktemberi, ej 2 **(In Armenian).**

14. **Karabekir-pasha**, doklad Pervogo kavkazskogo korpusa, predstavlennyy amerikanskoy delegatsii v tsitadeli generala Kharborda ob operatsii i legitimnosti Erzuruma, 1335 (1919) **(in Turkish).**
15. **Korkotyan Z.**, Khorhrdayin Hayastani bnakchutyuny verjin haryuramyakum (1831-1931), Yerevan, HSKHH Luszhoghkomat, 1932 **(In Armenian).**
16. **Manaseryan M.**, Hishoghut'yunner Sardarapati herosamartits' (1918t'. mayisi 22-29), Haykakan banak, Yerevan, 1998, N 2 (16) ej 78-103 **(In Armenian).**
17. **Melikyan H.**, Maraliki hnaguyn gerdastannerits meki patmutyuny, Yerevan, «Areg» hrat., 2006 **(In Armenian).**
18. **Melikyan H.**, 1918 t. Shiraki mayisyan goyamarty, Mayisyan goyapaykari patmutyan nor ej, Yerevan, Rus-haykakan Slavonakan hamalsaran, 2005, ej 54-85 **(In Armenian).**
19. **Minasean E.**, Mayisean herosamarter. hayeri Hayrenakany, «Alik» oratert, Tehran, 2019, 2 yunwari, tiv 1 (23198), ej 5 **(In Armenian).**
20. **Nersisyan A.**, Rruben, Yerevan, Edit Print, 2007 **(In Armenian).**
21. **Rruben**, Hay yeghapvokhakani my yishatakanery, h.e, Tehran, 1983 **(In Armenian).**
22. **Sargsyan Kh., Sargsyan A.**, Sogyutlui goyamarty 1918t. mayisi 14-22-in, 1918t. Mayisyan goyapaykari patmutyan nor ej, Yerevan, Rus-haykakan Slavonakan hamalsaran, 2005, ej 42-53 **(In Armenian).**
23. **Sargsyan Ye.,** Turkian yev nra nvachoghakan kaghakakanutyuny Andrkovkasum 1914-1918 tt., Yerevan, «Hayastan» hrat. 1964 **(In Armenian).**

*ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ»,*
*Գյումրի, 2020, հ. 23, պրակ 1, էջ 71-82*

# ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

## N 1

## Թուրքիայից, Պարսկաստանից և այլ սահմանամերձ վայրերից Ալեքսանդրապոլ քաղաքում և համանուն գավառում հաստատված գաղթականության մեկօրյա ցուցակագրում[1]:

### Ալեքսանդրապոլ քաղաք

աղյուսակ 1

| նահանգ, մարզ | գավառ | նախկին բնակավայրը | ընտ. | արտ. | իգ. | ընդ. | բացակա | ազգ. | դավանանք |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Կարսի մարզ | Կարս | Կարս քաղաք | 870 | 245 | 226 | 471 | 60 | հայ | առաքելական |
| | | Սարիղամիշ քաղաք | 83 | 228 | 247 | 475 | 89 | --//-- | --//-- |
| | | Ղարաղալա | 4 | 9 | 12 | 21 | 3 | --//-- | --//-- |
| | | Զարիշատ | 1 | 4 | 4 | 8 | ---- | --//-- | --//-- |
| | Օլթի | Թամրութ | 7 | 19 | 19 | 38 | 1 | հայ | առաքելական |
| | | Կուբաթ-Էրիվկ | 2 | 10 | 8 | 18 | ---- | --//-- | --//-- |
| | | Ագրակ | 2 | 7 | 7 | 14 | ---- | --//-- | --//-- |
| | | Զարդանես | 2 | 4 | 4 | 8 | ---- | --//-- | --//-- |
| | | Ղարաուրղան | 1 | 6 | 4 | 10 | ---- | --//-- | --//-- |
| | | Փանակաձոր | 1 | 5 | 5 | 10 | ---- | --//-- | --//-- |
| | | Զեոհրապ | 1 | 3 | 4 | 7 | ---- | --//-- | --//-- |
| | | Դևիկ | 1 | 5 | 10 | 15 | 1 | --//-- | --//-- |
| | | Բանջուրատ | 1 | 2 | 2 | 4 | ---- | --//-- | --//-- |
| | | Մեթինես | 7 | 28 | 37 | 65 | 1 | հույն | ուղղափառ |
| | | Բարդուս | 1 | 1 | 1 | 2 | 1 | --//-- | --//-- |
| | | Նարիման | 23 | 87 | 80 | 167 | 15 | --//-- | --//-- |
| | Արդահան | Արդահան քաղաք | 58 | 158 | 164 | 322 | 26 | հայ | առաքելական |
| | | --//-- | 2 | 1 | 9 | 10 | ---- | հայ | կաթոլիկ |
| | | --//-- | 3 | 14 | 4 | 18 | 2 | ռուս | ուղղափառ |
| | | --//-- | 1 | 2 | 1 | 3 | ---- | ou | Ուղղափառ |
| | | --//-- | 1 | 3 | 3 | 6 | ---- | հրեա | մովսիսական |
| | | --//-- | 24 | 81 | 80 | 161 | 12 | հույն | ուղղափառ |
| | | Միրդինեկ | 3 | 8 | 11 | 19 | 1 | հայ | առաքելական |
| | | --//-- | 1 | 4 | 4 | 8 | 1 | ռուս | ուղղափառ |
| | | --//-- | 1 | 3 | 3 | 6 | ---- | հույն | ուղղափառ |

[1] Թուրքիայից, Պարսկաստանից և սահմանամերձ շրջաններից գաղթածների թվաքանակը պարզելու նպատակով Երևանի Վիճակագրական հանձնախումբը 1915թ. հունվարի 30-ին Երևանի նահանգի յոթ գավառներում, Կարսի մարզի չորս շրջաններում և Թիֆլիսի նահանգի Ախալքալաքի գավառում անցկացրեց գաղթականության մեկօրյա ցուցակագրում: Վիճակագրական հանձնախմբի առաջարկով Ալեքսանդրապոլի գավառում ցուցակագրումն անցկացվեց «Եղբայրական օգնության» Ալեքսանդրապոլի կոմիտեի կողմից:

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Բիգթախաթուն | 1 | 2 | 2 | 4 | ---- | հայ | առաքելական |
| | | Ֆախրիզ | 5 | 16 | 14 | 30 | ---- | հույն | ուղղափառ |
| | | Խանախ Ներքին | 14 | 54 | 53 | 107 | 10 | --//-- | --//-- |
| | | Սինդիսգոմ | 37 | 115 | 104 | 219 | 6 | --//-- | --//-- |
| | | Գյուլաբերդ | 7 | 24 | 25 | 49 | ---- | --//-- | --//-- |
| | | Թորասխան | 2 | 13 | 9 | 22 | 1 | --//-- | --//-- |
| | | Բեբեթիկ | 55 | 202 | 212 | 414 | 1 | --//-- | --//-- |
| | | Բիգրախաթուն | 2 | 2 | 3 | 5 | ---- | ասորի | կաթոլիկ |
| | | Պարկաու | 4 | 12 | 14 | 26 | 3 | ասորի | կաթոլիկ |
| | Կաղզվան | Կաղզվան քաղաք | 11 | 30 | 35 | 65 | 7 | հայ | առաքելական |
| Բաթումի մարզ | Արդվին | Արտանուջ | 6 | 13 | 17 | 30 | 7 | հայ | առաքելական |
| | | Տանձուտ | 4 | 11 | 13 | 24 | ---- | --//-- | --//-- |
| | | Ենիթաբատ | 3 | 12 | 11 | 23 | 2 | --//-- | --//-- |
| | | Սաթիլ | 1 | 2 | 1 | 3 | ---- | --//-- | --//-- |
| | | Սաբաթ | 4 | 9 | 11 | 20 | ---- | --//-- | --//-- |
| | Արդանուշ | Նորաշեն | 1 | 4 | 5 | 9 | ---- | հայ | առաքելական |
| | | Շավշեթ | 1 | 4 | 6 | 10 | 1 | --//-- | --//-- |
| Ռուսաստանի ներքին նահանգներ | | | 4 | 12 | 15 | 27 | 4 | հայ | առաքելական |
| | | | 2 | 4 | 6 | 10 | ---- | ռուս | ուղղափառ |
| Վան | Բաշկալե | Արջի | 8 | 27 | 27 | 54 | 8 | ասորի | նեստորական |
| Պարսկաստան | | Թավրիզ քաղաք | 1 | 1 | ---- | 1 | ---- | հայ | առաքելական |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | | 559 | 1736 | 1747 | 3483 | 295 | | |

## Ալեքսանդրապոլի գավառի գյուղական բնակավայրեր

աղյուսակ 2

| նահանգ, մարզ | գավառ | նախկին բնակավայրը | ընտ. | ար. | իգ. | ընդ. | բաց ակա | ազգ. | դավանանք |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| ՄԵԾ ՂԱՐԱՔԻԼԻՍԱ | | | | | | | | | |
| Կարս | Արդահան | Արդահան քաղաք | 1 | 4 | 1 | 5 | ---- | հույն | ուղղափառ |
| Բաթում | Արդվին | Ենգիքյոյ | 1 | 3 | 2 | 5 | ---- | --//-- | --//-- |
| Պարսկաստան | | Թավրիզ քաղաք | 6 | 24 | 28 | 52 | 1 | հայ | առաքելական |
| ՓՈՔՐ ՂԱՐԱՔԻԼԻՍԱ | | | | | | | | | |
| Կարս | Արդահան | Սասադի | 4 | 17 | 14 | 31 | 2 | հայ | կաթոլիկ |
| | Օլթի | Օլթի քաղաք | 2 | 3 | 6 | 9 | ---- | հայ | առաքելական |
| | Կարս | Սարիղամիշ քաղաք | 2 | 12 | 4 | 16 | 1 | --//-- | --//-- |
| ԲՈՂԱԶՔԵՍԱՆ | | | | | | | | | |
| Կարս | Կարս | Կարս քաղաք | 1 | 2 | 6 | 8 | 1 | հայ | առաքելական |
| | --//-- | Սարիղամիշ քաղաք | 2 | 5 | 7 | 12 | 2 | --//-- | --//-- |
| | Օլթի | Օլթի քաղաք | 1 | 3 | 3 | 6 | ---- | --//-- | --//-- |
| | --//-- | Զարդանես | 1 | 3 | 2 | 5 | ---- | --//-- | --//-- |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| ՄԵԾ ՍԱՐԻԱՐ | | | | | | | | | |
| Կարս | Կարս | Կարս քաղաք | 1 | 2 | 1 | 3 | 1 | հայ | առաքելական |
| | Օլթի | Օլթի քաղաք | 3 | 11 | 13 | 24 | 3 | --//-- | --//-- |
| ՔՅԱՖԹԱՌԼԻ | | | | | | | | | |
| Կարս | Կարս | Կարս քաղաք | 3 | 6 | 5 | 11 | ---- | հայ | կաթոլիկ |
| | Արդահան | Սասադի | 4 | 13 | 8 | 21 | ---- | --//-- | --//-- |
| ՂԶԸԼՔԻԼԻՍԱ | | | | | | | | | |
| Կարս | Կարս | Կարս քաղաք | 2 | 7 | 5 | 12 | 1 | հայ | առաքելական |
| ՉԻՐՊԻԼԻ | | | | | | | | | |
| Կարս | Կարս | Կարս քաղաք | 4 | 10 | 14 | 24 | 2 | հայ | առաքելական |
| | Արդահան | Արդահան քաղաք | 3 | 17 | 6 | 23 | ---- | հայ | առաքելական |
| ՂԱԼԹԱԽՉԻ | | | | | | | | | |
| Կարս | Կարս | Կարս քաղաք | 1 | 5 | 5 | 10 | ---- | հայ | առաքելական |
| ՄԵԾ ԲԵՔԱՆԴ | | | | | | | | | |
| Կարս | Կարս | Կարս քաղաք | 1 | 5 | 6 | 11 | ---- | հայ | առաքելական |
| ՓՈՔՐ ԲԵՔԱՆԴ | | | | | | | | | |
| Կարս | Օլթի | Ճուճուրիս | 1 | 2 | 5 | 7 | ---- | հայ | առաքելական |
| ԳՅՈՒՂՅՈԽՈՒՇ | | | | | | | | | |
| Կարս | Կարս | Կարս քաղաք | 7 | 14 | 23 | 37 | 1 | հայ | առաքելական |
| ԻԼԽԻԱԲԻ | | | | | | | | | |
| Կարս | Կարս | Սարիղամիշ քաղաք | 2 | 6 | 7 | 13 | ---- | հայ | առաքելական |
| ՂՓՉԱՂ | | | | | | | | | |
| Կարս | Կարս | Սարիղամիշ քաղաք | 3 | 10 | 8 | 18 | 6 | հայ | առաքելական |
| ՂԱՄՄԱԼԻ | | | | | | | | | |
| Կարս | Կարս | Սարիղամիշ քաղաք | 1 | 6 | 3 | 9 | ---- | հայ | առաքելական |
| ԱՐԹԻԿ | | | | | | | | | |
| Կարս | Կարս | Սարիղամիշ քաղաք | 3 | 8 | 6 | 14 | ---- | հայ | առաքելական |
| | Օլթի | Թամրութ | 1 | 9 | 9 | 18 | ---- | --//-- | --//-- |
| ՂՈՆԱԽՂԱՆ | | | | | | | | | |
| Կարս | Կարս | Սարիղամիշ քաղաք | 2 | 8 | 7 | 15 | ---- | հայ | առաքելական |
| ԱՂԲՈՒԼԱՂ | | | | | | | | | |
| Կարս | Կարս | Սարիղամիշ քաղաք | 2 | 7 | 8 | 15 | 1 | հայ | առաքելական |
| ՄՈԼԼԱ ԳՅՈԿՉԱ | | | | | | | | | |
| Կարս | Կարս | Սարիղամիշ քաղաք | 1 | 4 | 4 | 8 | ---- | հայ | առաքելական |
| | Օլթի | Օլթի քաղաք | 1 | 4 | 2 | 6 | 2 | --//-- | --//-- |
| | | Թամրութ | 1 | 6 | 3 | 9 | ---- | --//-- | --//-- |
| Պարսկաստան | Սալմաստ | Խոսրովա | 1 | 3 | ---- | 3 | 1 | ասորի | կաթոլիկ |
| | ՈՒրմիա | Մավանա | 2 | 9 | 7 | 16 | ---- | --//-- | --//-- |
| ԴԱՀԱՐԼԻ | | | | | | | | | |
| Կարս | Արդահան | Արդահան քաղաք | 3 | 9 | 11 | 20 | ---- | հայ | առաքելական |
| | | ՈՒչքիլիսա | 10 | 39 | 32 | 71 | ---- | հույն | ուղղափառ |
| | | Կոնկ | 12 | 53 | 42 | 95 | ---- | --//-- | --//-- |
| | | Վարգենիս | 9 | 34 | 34 | 68 | ---- | --//-- | --//-- |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Բաթում | Արդանուշ | Շավշեթ | 1 | 2 | 2 | 4 | ---- | հայ | առաքելական |
| **ԹԱԼԻԲՕՂԼԻ** | | | | | | | | | |
| Կարս | Արդահան | Արդահան քաղաք | 1 | 7 | 1 | 8 | ---- | հայ | առաքելական |
| | | Սասադի | 1 | 7 | 5 | 12 | ---- | հայ | կաթոլիկ |
| | Օլթի | Օլոր | 1 | 4 | 2 | 6 | ---- | հայ | առաքելական |
| **ՄԵԾ ԴՈՒԶՔԵՆԴ** | | | | | | | | | |
| Կարս | Արդահան | Արդահան քաղաք | 7 | 26 | 19 | 45 | 3 | հայ | առաքելական |
| | Օլթի | Օլթի քաղաք | 1 | 2 | 1 | 3 | ---- | --//-- | --//-- |
| | | Թամրութ | 6 | 26 | 33 | 59 | ---- | --//-- | --//-- |
| | | Զարդանես | 3 | 8 | 14 | 22 | 1 | --//-- | --//-- |
| **ԴԻՐԱՔԼԱՐ** | | | | | | | | | |
| Կարս | Արդահան | Արդահան քաղաք | 1 | 2 | 1 | 3 | ---- | հայ | առաքելական |
| | Օլթի | Օլթի քաղաք | 3 | 5 | 7 | 12 | ---- | --//-- | --//-- |
| **ՂՈՒԼԻՋԱՆ** | | | | | | | | | |
| Կարս | Արդահան | Արդահան քաղաք | 2 | 3 | 3 | 6 | ---- | հայ | առաքելական |
| **ՆԱԼԲԱՆԴ** | | | | | | | | | |
| Կարս | Արդահան | Արդահան քաղաք | 4 | 17 | 19 | 36 | 1 | հայ | առաքելական |
| **ՂՈԼՂԱԹ** | | | | | | | | | |
| Կարս | Արդահան | Բիգթախաթուն | 4 | 13 | 17 | 30 | ---- | հայ | առաքելական |
| **ՂԱՐԱՔԻԼԻՍԱ 2-ՐԴ** | | | | | | | | | |
| Կարս | Օլթի | Օլթի քաղաք | 2 | 3 | 6 | 9 | ---- | հայ | առաքելական |
| | Արդահան | Սասադի | 1 | 2 | 5 | 7 | 1 | հայ | կաթոլիկ |
| **ՆՈՐԱՇԵՆ** | | | | | | | | | |
| Կարս | Օլթի | Օլթի քաղաք | 2 | 4 | 3 | 7 | ---- | հայ | առաքելական |
| | | Օլոր | 3 | 11 | 9 | 20 | ---- | --//-- | --//-- |
| **ՔՑԱՓԱՆԱԿ ՓՈՔՐ** | | | | | | | | | |
| Կարս | Կարս | Կալեքյոյ | 3 | 8 | 11 | 19 | 1 | հայ | առաքելական |
| Բաթում | Արդվին | Ենիթաբատ | 2 | 8 | 5 | 13 | ---- | --//-- | --//-- |
| **ՔՑԱՓԱՆԱԿ ՄԵԾ** | | | | | | | | | |
| Կարս | Օլթի | Օլթի քաղաք | 5 | 17 | 12 | 29 | ---- | հայ | առաքելական |
| Բաթում | Արդվին | Սաբաթ | 3 | 9 | 9 | 18 | ---- | --//-- | --//-- |
| **ՀՈՌՈՄ** | | | | | | | | | |
| Կարս | Արդահան | Արդահան քաղաք | 2 | 9 | 13 | 22 | 1 | հայ | առաքելական |
| | | Սասադի | 3 | 9 | 11 | 20 | ---- | հայ | կաթոլիկ |
| | | Բեբեթիկ | 9 | 27 | 30 | 57 | 3 | հույն | ուղղափառ |
| **ԲԱՑԱՆԴՈՒՐ** | | | | | | | | | |
| Կարս | Արդահան | ՈՒռուտ | 1 | 2 | 1 | 3 | ---- | հայ | առաքելական |
| | | Արդահան քաղաք | 1 | 1 | 2 | 3 | ---- | հույն | ուղղափառ |
| | | Ֆախրիլ | 1 | 1 | 1 | 2 | ---- | --//-- | --//-- |
| | | Թուրքաշեն | 41 | 177 | 165 | 342 | ---- | --//-- | --//-- |
| | | Միրդինեկ | 1 | 2 | 3 | 5 | ---- | --//-- | --//-- |
| | | Դեմուրկապի | 1 | 5 | 3 | 8 | ---- | --//-- | --//-- |
| | | ՈՒչքիլիսա | 28 | 122 | 107 | 229 | ---- | --//-- | --//-- |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Թախտա | 1 | 1 | 3 | 4 | ---- | --//-- | --//-- |
| | | Կոնկ | 1 | 9 | 7 | 16 | ---- | --//-- | --//-- |
| | | Վարգենիս | 9 | 34 | 34 | 68 | ---- | --//-- | --//-- |
| | Օլթի | Նարման | 5 | 17 | 20 | 37 | ---- | --//-- | --//-- |
| **ՃԼՈՎԽԱՆԼԻ** | | | | | | | | | |
| Կարս | Արդահան | Սասադի | 3 | 17 | 19 | 36 | ---- | հայ | կաթոլիկ |
| | Օլթի | Օլոր | 1 | 1 | 1 | 2 | ---- | հայ | առաքելական |
| **ԻՄԻՐԽԱՆԼԻ** | | | | | | | | | |
| Կարս | Արդահան | Սասադի | 4 | 15 | 16 | 31 | ---- | հայ | կաթոլիկ |
| Բաթում | Արդվին | Ենիթաբատ | 1 | 5 | 4 | 9 | ---- | հայ | առաքելական |
| **ՂՈՒԹՆԻՂՇԼԱՂ** | | | | | | | | | |
| Կարս | Արդահան | Սասադի | 2 | 10 | 11 | 21 | ---- | հայ | կաթոլիկ |
| **ՍՈՆԳՈՒՌԼԻ** | | | | | | | | | |
| Կարս | Արդահան | Սասադի | 2 | 8 | 6 | 14 | ---- | հայ | կաթոլիկ |
| **ԹԱՓԱԴՈԼԼԱԿ** | | | | | | | | | |
| Կարս | Արդահան | Սասադի | 2 | 15 | 11 | 26 | ---- | հայ | կաթոլիկ |
| | Օլթի | Թամբուլ | 1 | 5 | 11 | 16 | ---- | հայ | առաքելական |
| **ՂԱՅՂՈՒԼԻ–ՂԱԶԱՆՉԻ** | | | | | | | | | |
| Կարս | Արդահան | Սասադի | 1 | 5 | 3 | 8 | ---- | հայ | կաթոլիկ |
| | Օլթի | Օլթի քաղաք | 1 | 2 | 4 | 6 | ---- | --//-- | --//-- |
| **ՏԻՏՈՅ ԽԱՐԱԲԱ** | | | | | | | | | |
| Կարս | Արդահան | Սասադի | 1 | 4 | 3 | 7 | ---- | հայ | կաթոլիկ |
| **ՔՈՌԱՂԲՅՈՒՐ** | | | | | | | | | |
| Կարս | Արդահան | Սասադի | 1 | 4 | 3 | 7 | ---- | հայ | կաթոլիկ |
| **ԵԳԱՆԼԱՐ** | | | | | | | | | |
| Կարս | Օլթի | Օլթի քաղաք | 1 | 2 | 1 | 3 | ---- | հայ | առաքելական |
| **ԱՐԸԽՎԱԼԻ ՄԵԾ** | | | | | | | | | |
| Կարս | Օլթի | Օլթի քաղաք | 1 | 3 | 4 | 7 | ---- | հայ | առաքելական |
| | | Ճուճուրիս | 1 | 7 | 3 | 10 | ---- | --//-- | --//-- |
| **ԱՐԸԽՎԱԼԻ ՓՈՔՐ** | | | | | | | | | |
| Բաթում | Արդանուշ | Նորաշեն | 2 | 3 | 5 | 8 | ---- | հայ | առաքելական |
| **ՋԱՋՈՒՌ** | | | | | | | | | |
| Կարս | Օլթի | Օլթի քաղաք | 2 | 5 | 10 | 15 | ---- | հայ | առաքելական |
| | | Զարդանես | 2 | 5 | 5 | 10 | ---- | --//-- | --//-- |
| Բաթում | Արդվին | Արտանուջ | 2 | 2 | 3 | 5 | ---- | --//-- | --//-- |
| | | Սաբաթ | 1 | 2 | 2 | 4 | ---- | --//-- | --//-- |
| **ՀԱՋԻՆԱՋԱՐ–ՂՈՒԼԻ** | | | | | | | | | |
| Կարս | Օլթի | Օլթի քաղաք | 2 | 4 | 6 | 10 | ---- | հայ | առաքելական |
| **ՀԱՄԱՄԼՈՒ** | | | | | | | | | |
| Կարս | Արդահան | Միրդինեկ | 1 | 3 | 3 | 6 | ---- | հայ | առաքելական |
| | | | 1 | 2 | 1 | 3 | ---- | հույն | ուղղափառ |
| **ՂԱԶԱՆՉԻ** | | | | | | | | | |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Կարս | Օլթի | Օլթի քաղաք | 2 | 9 | 7 | 16 | ---- | հայ | առաքելական |
| ՉՐԱԽԼԻ | | | | | | | | | |
| Կարս | Օլթի | Թամրութ | 2 | 7 | 9 | 16 | ---- | հայ | առաքելական |
| | | Ճուճուրիս | 1 | 4 | 6 | 10 | ---- | --//-- | --//-- |
| ՏԱՎՇԱՆՂՇԼԱՂ | | | | | | | | | |
| Կարս | Օլթի | Ագրակ | 1 | 3 | 1 | 4 | ---- | հայ | առաքելական |
| | Արդահան | Դեմուրկապի | 2 | 8 | 13 | 21 | ---- | հույն | ուղղափառ |
| | | Կոնկ | 3 | 5 | 8 | 13 | ---- | --//-- | --//-- |
| | | Բեբեթիկ | 1 | 1 | 2 | 3 | ---- | --//-- | --//-- |
| ԹՈՄԱՐՏԱՇ | | | | | | | | | |
| Կարս | Օլթի | Փանակ | 1 | 6 | 2 | 8 | 1 | հայ | առաքելական |
| ՉՈՏՈՒՐ | | | | | | | | | |
| Կարս | Արդահան | Միրդինեկ | 1 | 2 | 1 | 3 | ---- | հույն | ուղղափառ |
| Բաթում | Արդվին | Սաբաթ | 1 | 4 | 6 | 10 | 1 | հայ | առաքելական |
| ՂԱՓԸԼԻ | | | | | | | | | |
| Կարս | Օլթի | Նարիման | 2 | 6 | 7 | 13 | ---- | հույն | ուղղափառ |
| ՀԱՑԿԱԿԱՆ ԳՅՈՒՂԱԼԴԱՐԱ | | | | | | | | | |
| Կարս | Արդահան | Բիզրախաթուն | 1 | 1 | 5 | 6 | ---- | ասորի | կաթոլիկ |
| **ԸՆԴԱՄԵՆԸ** | | | **319** | **1168** | **1133** | **2301** | **38** | | |

**Однодневная перепись беженцев из Турции, Персии и из мест, пограничных с Турцией (армян, айсоров, греков и пр.) 1914-1915гг, Перепись произведена 30-го января 1915г, Эривань, Эриванская стат. Коммисия, Тип. “Луйс”, 1915, стр. 26-31**

# N 2

## Տեղեկություններ 1915թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ Ալեքսանդրապոլ քաղաքում և համանուն գավառում հաստատված արևմտահայ գաղթականության թվի մասին[1]

Կոմիտեի նախագահ՝ Արտակ Վարդապետ
Վիճակագրական բաժնմունքի նախագահ՝ Պ. Մ. Գյոնջիյան
Անդամ-քարտուղար՝ Ալ. Համբարձումյան

աղյուսակ 1

| N | բնակավայր | արակ. | իգակ. | երեխա | ընդամենը | աշխատունակ | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | ար. | % |
| Ա Լ Ե Ք Ս Ա Ն Դ Ր Ա Պ Ո Լ Ք Ա Ղ Ա Ք Ո Ւ Մ | | | | | | | |
| 1. | Եղբայրական օգնության 12 հանրակացարաններում | 435 | 968 | 1201 | 2604 | 280 | 10.7 |
| 2. | Քաղաքի մասնավոր տներում | 701 | 1582 | 1957 | 4240 | 464 | 10.9 |
| **ԸՆԴԱՄԵՆԸ** | | **1136** | **2550** | **3158** | **6844** | **744** | **10.8** |
| Ա Լ Ե Ք Ս Ա Ն Դ Ր Ա Պ Ո Լ Ի Գ Ա Վ Ա Ռ Ի Գ Յ Ո Ւ Ղ Ե Ր Ո Ւ Մ | | | | | | | |
| 1. | Ղափլի | 68 | 63 | 116 | 247 | 57 | 23 |
| 2. | Քյալալի | 23 | 30 | 32 | 85 | 20 | 23.5 |
| 3. | Ղողաչ | 17 | 12 | 22 | 51 | 9 | 17.6 |
| 4. | Չիրպիլի | 26 | 30 | 65 | 121 | 14 | 11.5 |
| 5. | Դահարլի | 51 | 57 | 69 | 177 | 24 | 13.5 |
| 6. | Աղին | 41 | 53 | 79 | 173 | 35 | 20.2 |
| 7. | Տավշանղշլաղ | 58 | 66 | 110 | 234 | 45 | 19.2 |
| 8. | Ղազարապատ | 36 | 45 | 78 | 159 | 23 | 14.4 |
| 9. | Բաբուռլի | 14 | 11 | 38 | 62 | 9 | 14.5 |
| 10. | Սվանվերդի | 62 | 83 | 126 | 271 | 50 | 18.4 |
| 11. | Բուղդաշեն | 23 | 27 | 49 | 99 | 22 | 22.2 |
| 12. | Ալեքսանդրովկա | 15 | 22 | 22 | 59 | 12 | 20.3 |
| 13. | Ղաշավանք | 46 | 42 | 60 | 148 | 30 | 20.2 |
| 14. | Ենիքյոյ | 22 | 37 | 44 | 103 | 19 | 18.4 |
| 15. | Ղըլիջ-Յաթաղ | 38 | 50 | 70 | 158 | 28 | 17.7 |
| 16. | Բոզդողան | 49 | 49 | 91 | 189 | 35 | 18.5 |
| 17. | Ղըրխ | 32 | 34 | 56 | 122 | 25 | 20.4 |
| 18. | Զարինջա | 30 | 51 | 74 | 155 | 23 | 14.8 |

[1] Ալեքսանդրապոլ քաղաքում և համանուն գավառում հաստատված արևմտահայ գաղթականության ցուցակը կազմվել է Ալեքսանդրապոլի փոխանորդ Արտակ վարդապետի կողմից՝ համաձայն Ամենայն Հայոց հայրապետ Գևորգ Ե-ի 24.11.1915թ. կարգադրության (ՀԱԱ ֆոնդ 57, ցուցակ 2, գործ 1287, թ.3-5):

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 19. | Բազարխանա | 57 | 62 | 92 | 211 | 47 | 22.2 |
| 20. | Տաշղալա | 57 | 59 | 100 | 216 | 54 | 25 |
| 21. | Մուսլուխլի | 45 | 47 | 70 | 162 | 38 | 23.4 |
| 22. | Փիրթիքյան | 21 | 21 | 29 | 71 | 16 | 22.5 |
| 23. | Ադիյաման | 41 | 46 | 61 | 148 | 32 | 21.6 |
| 24. | Սոգութլի | 80 | 102 | 124 | 306 | 46 | 15 |
| 25. | Շիրվանջուղ | 30 | 47 | 73 | 150 | 23 | 15.3 |
| 26. | Բողազքեսան | 29 | 35 | 56 | 120 | 26 | 21.6 |
| 27. | Մոլլա Գյոկչա | 56 | 94 | 100 | 250 | 36 | 14.4 |
| 28. | Արմութլի | 26 | 28 | 44 | 98 | 15 | 15.3 |
| 29. | Սոնգուռլի | 36 | 48 | 66 | 150 | 17 | 11.3 |
| 30. | Ճլովխանլի | 15 | 28 | 49 | 92 | 12 | 13 |
| 31. | Ղփչաղ | 29 | 31 | 65 | 125 | 24 | 19.2 |
| 32. | Խաչաքիլիսա | 4 | 10 | 16 | 30 | 4 | 13.3 |
| 33. | Բաշգյուղ | 26 | 34 | 62 | 122 | 19 | 15.5 |
| 34. | Մեծ Արըխվալի | 41 | 44 | 61 | 146 | 35 | 23.9 |
| 35. | Փոքր Արըխվալի | 22 | 27 | 37 | 86 | 18 | 20.9 |
| 36. | Նորաշեն | 32 | 35 | 51 | 118 | 23 | 19.4 |
| 37. | Գյոզալդարա | 32 | 37 | 50 | 119 | 28 | 23.5 |
| 38. | Արթիկ | 72 | 88 | 156 | 316 | 60 | 18.9 |
| 39. | Փոքր Բեքանդ | 39 | 45 | 70 | 154 | 27 | 17.5 |
| 40. | Մեջիթլի | 33 | 40 | 73 | 146 | 23 | 15.7 |
| 41. | Թոմարտաշ | 24 | 27 | 80 | 131 | 20 | 15.2 |
| 42. | Մահմուդջուղ | 50 | 64 | 108 | 222 | 30 | 13.5 |
| 43. | Թափաղոլլակ | 21 | 40 | 74 | 135 | 13 | 9.6 |
| 44. | Ղազանչի | 24 | 31 | 66 | 121 | 18 | 14.8 |
| 45. | Քյավթառի | 18 | 15 | 53 | 86 | 21 | 24.4 |
| 46. | Ղասմալի | 10 | 22 | 35 | 67 | 6 | 8.9 |
| 47. | Ղուլիջան | 24 | 46 | 31 | 101 | 12 | 11.8 |
| 48. | Եգանլար | 40 | 70 | 44 | 154 | 26 | 16.8 |
| 49. | Ղոլղաթ | 14 | 17 | 16 | 47 | 5 | 10.6 |
| 50. | Իլխիաբի | 34 | 44 | 46 | 124 | 18 | 14.5 |
| 51. | Թալիբօղլի | 15 | 18 | 37 | 70 | 13 | 18.5 |
| 52. | Իմիրխանլի | 20 | 22 | 38 | 80 | 13 | 16.2 |
| 53. | Հոռոմ | 28 | 51 | 97 | 176 | 14 | 7.9 |
| 54. | Սարիբաշ | 11 | 11 | 35 | 57 | 8 | 14 |
| 55. | Ղութնիղշլաղ | 1 | 2 | 1 | 4 | ---- | ---- |
| 56. | Դանագիրմազ | 47 | 48 | 53 | 148 | 33 | 22.2 |
| 57. | Ղոնդաղսազ | 2 | 2 | 5 | 9 | 2 | 22.2 |
| 58. | Միրաք | 1 | 2 | 3 | 6 | 1 | 16.6 |
| 59. | Մելիքքենդ | 18 | 21 | 33 | 72 | 11 | 15.2 |
| 60. | Ջառջառիս | 8 | 9 | 17 | 34 | 3 | 8.8 |
| 61. | Ջանգիթափա | 8 | 11 | 14 | 33 | 4 | 12.1 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 62. | Հաջիխալիլ | 33 | 34 | 42 | 109 | 17 | 15.5 |
| 63. | Ղըրխդագիրման | 31 | 36 | 44 | 111 | 23 | 20.7 |
| 64. | Ախղուլի | 24 | 24 | 44 | 92 | 9 | 9.7 |
| 65. | Քեշիշքենդ | 5 | 9 | 23 | 37 | 5 | 13.5 |
| 66. | Մունջուխլի | 16 | 18 | 28 | 62 | 10 | 16.1 |
| 67. | Փամպ Հայկական | 9 | 21 | 28 | 58 | 6 | 10.3 |
| 68. | Դիրաքլար | 23 | 33 | 50 | 106 | 12 | 11.3 |
| 69. | Քյափանակ Փոքր | 8 | 11 | 27 | 46 | 5 | 10.8 |
| 70. | Քյափանակ Մեծ | 39 | 41 | 73 | 153 | 25 | 16.3 |
| 71. | Չրախլի | 52 | 63 | 90 | 205 | 35 | 17 |
| 72. | Խանվալի | 6 | 9 | 13 | 28 | 5 | 17.8 |
| 73. | Դուզքենդ | 88 | 120 | 90 | 298 | 38 | 12.7 |
| 74. | Հաջինազար-Ղուլի | 59 | 60 | 81 | 200 | 44 | 22 |
| 75. | Ջաջուռ | 98 | 95 | 91 | 284 | 39 | 13.7 |
| 76. | Աղքիլիսա | 16 | 22 | 13 | 51 | 9 | 17.6 |
| 77. | Սարիար Փոքր | 40 | 52 | 31 | 123 | 22 | 17.8 |
| 78. | Արըխվալի 3-րդ | 54 | 72 | 50 | 176 | 24 | 13.6 |
| 79. | Դարբանդ | 25 | 25 | 24 | 74 | 7 | 9.4 |
| 80. | Թոփառլի | 53 | 55 | 57 | 165 | 21 | 12.7 |
| 81. | Ղոնախղռան | 71 | 80 | 57 | 208 | 25 | 12 |
| 82. | Սարիար Փոքր | 23 | 26 | 25 | 74 | 9 | 12.1 |
| 83. | Ալիխան | 15 | 16 | 10 | 41 | 5 | 12.1 |
| 84. | Սամռլի | 2 | 4 | 1 | 7 | 2 | 28.5 |
| 85. | Ղարաքիլիսա Նոր | 5 | 4 | 6 | 15 | ---- | ---- |
| 86. | Բաշգյուղ 2-րդ | 4 | 18 | 17 | 49 | 3 | 6.1 |
| 87. | Ղանլիջա Վերին | 29 | 40 | 57 | 126 | 17 | 13.4 |
| 88. | Ղանլիջա Ներքին | 15 | 16 | 9 | 40 | 11 | 27.5 |
| 89. | Կապս | 18 | 13 | 25 | 56 | 5 | 8.9 |
| 90. | Ջելաբկեչուտ | 13 | 18 | 25 | 56 | 13 | 23.2 |
| 91. | Ալահքիլիսա | 7 | 9 | 14 | 30 | 3 | 10 |
| 92. | Բանդևան Նոր | 7 | 9 | 11 | 27 | 5 | 18.5 |
| 93. | Բանդևան Հին | 10 | 16 | 22 | 48 | 4 | 8.3 |
| 94. | Ղարաքիլիսա Իլլի | 7 | 17 | 17 | 41 | 2 | 4.8 |
| 95. | Թաքնալի | 12 | 21 | 27 | 60 | 11 | 18.3 |
| 96. | Գյուրջի-Յոլ | 15 | 20 | 27 | 62 | 13 | 20.9 |
| 97. | Փալութլի | 16 | 21 | 66 | 103 | 14 | 13.5 |
| 98. | Քեթի Փոքր | 3 | 6 | 16 | 25 | 3 | 12 |
| 99. | Քեթի Մեծ | 19 | 24 | 45 | 88 | 16 | 18.1 |
| 100. | Օրթաքիլիսա | 14 | 16 | 24 | 54 | 9 | 16.6 |
| 101. | Չոռլի | 2 | 3 | 4 | 9 | 1 | 11.1 |
| 102. | Ճզխլար | 10 | 10 | 10 | 30 | 6 | 20 |
| 103. | Գյուլլիբուլաղ | 10 | 16 | 13 | 39 | 7 | 17.9 |
| 104. | Սալուտ | 5 | 6 | 9 | 20 | 3 | 15 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 105. | Բոզյոխուշ | 11 | 20 | 18 | 49 | 7 | 14.2 |
| 106. | Դուզ Խարաբա[1] | 21 | 25 | 31 | 77 | 15 | 19.4 |
| 107. | Չիֆթալի | 19 | 26 | 30 | 75 | 18 | 24 |
| 108. | Ղզըլքիլիսա Նոր | 6 | 13 | 10 | 29 | 3 | 10.3 |
| 109. | Ղզըլղոչ | 26 | 29 | 35 | 90 | 14 | 15.5 |
| 110. | Ղուրթնիբուլաղ | 17 | 15 | 18 | 50 | 11 | 22 |
| 111. | Շիշթափա | 11 | 8 | 11 | 30 | 4 | 13.3 |
| 112. | Ղազանչի | 13 | 17 | 29 | 59 | 6 | 10.1 |
| 113. | Դարաքյոյ | 2 | 2 | 10 | 14 | 2 | 14.2 |
| 114. | Քոռաղբյուր | 4 | 13 | 25 | 42 | 2 | 4.7 |
| 115. | Ղարաքիլիսա Մեծ | 134 | 184 | 261 | 579 | 66 | 11.3 |
| 116. | Յաղուբլի | 31 | 31 | 38 | 100 | 17 | 17 |
| 117. | Ղշլաղ | 18 | 55 | 45 | 118 | 10 | 8.4 |
| 118. | Սարմուսախլի | 12 | 19 | 22 | 53 | 6 | 11.3 |
| 119. | Հաջիղարա | 18 | 21 | 21 | 60 | 14 | 23.3 |
| 120. | Դարբազ | 22 | 34 | 33 | 89 | 5 | 5.6 |
| 121. | Բզովդալ | 11 | 18 | 24 | 53 | 4 | 7.5 |
| 122. | Բոզիքենդ | 38 | 47 | 96 | 181 | 12 | 6.6 |
| 123. | Համամլի | 91 | 131 | 171 | 393 | 30 | 7.6 |
| 124. | Չոտուր | 16 | 20 | 18 | 54 | 6 | 11.1 |
| 125. | Վարդնով | 48 | 59 | 59 | 166 | 17 | 10.2 |
| 126. | Ղաչաղան | 23 | 21 | 23 | 67 | 8 | 11.9 |
| 127. | Չիկդամալ | 7 | 7 | 16 | 30 | 3 | 10 |
| 128. | Սպիտակ | 34 | 37 | 28 | 99 | 14 | 14.1 |
| 129. | Նալբանդ | 29 | 42 | 53 | 124 | 12 | 9.6 |
| 130. | Թափանլի | 33 | 33 | 56 | 122 | 13 | 10.6 |
| 131. | Աղբուլաղ | 50 | 41 | 69 | 160 | 21 | 13.1 |
| 132. | Ղալթախչի | 66 | 83 | 82 | 231 | 30 | 12.9. |
| 133. | Ավդիբեկ | 57 | 77 | 84 | 218 | 24 | 11 |
| 134. | Գյուղյոխուշ | 17 | 17 | 39 | 73 | 7 | 9.5 |
| 135. | Ղարաբոյա | 15 | 18 | 28 | 61 | 7 | 11.4 |
| 136. | Ղարալ | 47 | 53 | 73 | 173 | 19 | 10.9 |
| 137. | Բեքանդ Մեծ | 119 | 134 | 177 | 430 | 30 | 6.9 |
| 138. | Գոգարան | 50 | 44 | 68 | 162 | 21 | 12.9 |
| 139. | Գյուլլիջա | 40 | 49 | 68 | 157 | 17 | 10.8 |
| **ԸՆԴԱՄԵՆԸ** | | **4059** | **5015** | **6897** | **15971** | **2412** | **15.1** |
| **ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐԸ** | | **5195** | **7565** | **10055** | **22815** | **3156** | **13.8** |

**ՀԱԱ ֆոնդ 57, ցուցակ 2, գործ 1287, թթ. 3-5: Բնագիր ձեռագիր**

[1] Արխիվային վավերագրերում գյուղը մինչև XX դարասկիզբ հիշատակվում է Ղայդուլի Դուզքենդ անունով:

## N 3

## Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերություն: Ալեքսանդրապոլի գավառում հաստատված արեվմտահայ գաղթականության մեկօրյա ցուցակագրում 1916թ.[1]

## Ցուցակ Ալեքսանդրապոլի գավառի գյուղերում հաստատված արևմտահայ որբերի

աղյուսակ 1

| 1915թ. նոյեմբեր-դեկտեմբեր | | | | | |
|---|---|---|---|---|---|
| N | Գյուղը | երկու սեռից | N | գյուղը | երկու սեռից |
| 1. | Սոնգուռլի | 50 | 4. | Մոլլա Գյոկչա | 17 |
| 2. | Արմութլի | 15 | 5. | Շիրվանջուղ | 25 |
| 3. | Բողազքեսան | 14 | 6. | Սոգութլի | 43 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | | | | 164 երկու սեռից |

**ՀԱԱ ֆոնդ 28, ցուցակ 1, գործ 429, թթ. 1-4: Բնագիր ձեռագիր:**

## Ալեքսանդրապոլի գավառում հաստատված արևմտահայ գաղթականությանը ցուցակագրելու և դրա համար դրամավարձ ստանալու ստացականներ: Մաս Ա

աղյուսակ 2

| I շրջանի լիազոր Հ. Տեր-Մկրտչյան | | | | II շրջանի լիազոր Գ. Մարիքյան | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| գյուղը | ընտ. | մարդ | Վճարը | գյուղը | ընտ. | մարդ | վճարը |
| 1.Ղափլի | 35 | 197 | 2 ռ. | 1.Քյավթառի | 22 | ---- | 1 ռ. |
| 2. Տավշանղշլաղ | 37 | 199 | --//-- | 2.Չրախլի | 25 | ---- | --//-- |
| 3.Աղին | 25 | 167 | --//-- | 3.Եգանլար | 30 | ---- | --//-- |
| 4.Բոզդողան | 36 | 186 | --//-- | 4.Ղուլիջան | 24 | ---- | --//-- |
| 5.Արթիկ Նոր | 33 | 170 | --//-- | 5.Թոփառլի | 25 | ---- | --//-- |
| 6. Բուղդաշեն | 21 | 121 | --//-- | 6. Հաջինազար-Ղուլի | 45 | ---- | --//-- |
| 7.Ղեղաչ | 46 | 235 | --//-- | 7.Ջաջուռ | 53 | ---- | --//-- |
| 8.Չիրպիլի | 26 | 133 | --//-- | 8.Հոռոմ | 34 | ---- | --//-- |
| 9.Սվանվերդի | 43 | 242 | --//-- | 9.Ղանախղռան | 53 | ---- | --//-- |
| 10.Արբխվալի 3-րդ | 21 | 134 | --//-- | 10.Թափադոլլակ | 25 | ---- | --//-- |
| 11.Ղազարապատ | 24 | 155 | --//-- | 11.Ղազանչի | 23 | ---- | --//-- |

[1] Արևմտահայ գաղթականության ցուցակագրումն անցկացվել է 1916թ. փետրվարի 14-ին՝ Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերության կարգադրությամբ: Արդյունքները մշակվել ու ընկերությանն են հանձնվել մարտի 9-ին ԿՀԲԸ Ալեքսանդրապոլի մասնաճյուղի նախագահ Հակոբ քահանա Խաչվանքյանի միջոցով (Մանրամասն տե՛ս ՀԱԱ, ֆոնդ. 28, ցուցակ 1, գործ 429, թթ. 1-7): Աղյուսակները կազմվել են գաղթականությանը ցուցակագրելու համար դրամավարձ ստանալու ստացականների հաղորդած վիճակագրական տեղեկությունների հիման վրա:

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 12.Քեթի Մեծ | 21 | 134 | --//-- | 12.Դիրաքլար | 23 | ---- | --//-- |
| 13.Աղքիլիսա | 22 | 103 | --//-- | 13.Իլխիաբի | 30 | ---- | --//-- |
| 14.Քյալալի | 15 | 76 | 1 ռ. | 14.Քյափանակ Մեծ | 45 | ---- | --//-- |
| 15.Բաշգյուղ | 17 | 71 | --//-- | 15.Խանվալի | 6 | ---- | --//-- |
| 16.Ենիքյոյ | 17 | 85 | --//-- | 16.Ղութնիղշլաղ | 6 | ---- | --//-- |
| 17.Ղշլաղ | 8 | 70 | --//-- | 17.Ղոլղաթ | 12 | ---- | --//-- |
| 18.Ալեքսանդրովկա | 5 | 29 | --//-- | 18.Ղասմալի | 12 | ---- | --//-- |
| 19.Ղարաքիլիսա Փոքր | 4 | 18 | --//-- | 19.Իմիրխանլի | 14 | ---- | --//-- |
| 20.Սարիար Մեծ | 18 | 102 | --//-- | 20.Թալիբօղլի | 18 | ---- | --//-- |
| ԸՆԴԱՄԵՆԸ | 474 | 2627 | 33 ռ. | 21.Քյափանակ Փոքր | 15 | ---- | --//-- |
| | | | | **ԸՆԴԱՄԵՆԸ** | **540** | **----** | **21 ռ.** |

**ՀԱԱ ֆոնդ 28, ցուցակ 1, գործ 429, թթ. 4-5: Բնագիր ձեռագիր:**

## Ալեքսանդրապոլի գավառում հաստատված արևմտահայ գաղթականությանը ցուցակագրելու և դրա համար դրամավարձ ստանալու ստացականներ. Մաս Բ

աղյուսակ 3

| **III շրջանի լիազոր Հովհաննիսյան** | | | | **IV շրջանի լիազոր Գրիգորյան** | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| գյուղը | ընտ. | մարդ | Վճարը | գյուղը | ընտ. | մարդ | վճարը |
| 1.Արթիկ | 56 | ---- | 1 ռ. | 1.Սոգութլի | 78 | 420 | 1 ռ. |
| 2.Սարիբաշ | 9 | ---- | --//-- | 2.Ճլովխան(լի) | 23 | 121 | --//-- |
| 3.Մահմուդջուղ | 46 | ---- | --//-- | 3.Արմութլի | 20 | 101 | --//-- |
| 4.Մեջիթլի | 20 | ---- | --//-- | 4.Շիրվանջուղ | 31 | 208 | --//-- |
| 5.Թոմարտաշ | 9 | ---- | --//-- | 5.Մոլլա Գյոկչա | 42 | 285 | --//-- |
| 6.Բեքանդ Մեծ | 33 | ---- | --//-- | 6.Բողազքեսան | 25 | 116 | --//-- |
| 7.Ղփչաղ | 18 | ---- | --//-- | 7.Ադիյաման | 27 | 142 | --//-- |
| 8.Ղզըլքիլիսա | 6 | ---- | --//-- | 8.Մուսլուխլի | 28 | 140 | --//-- |
| 9.Բաշգյուղ Մեծ | 17 | ---- | --//-- | 9.Ղըրխ | 23 | 123 | --//-- |
| 10.Արըխվալի Փոքր | 12 | ---- | --//-- | 10.Ջիթհանքով | 38 | 228 | --//-- |
| 11.Արըխվալի Մեծ | 28 | ---- | --//-- | 11.Տաշղալա | 40 | 216 | --//-- |
| 12.Նորաշեն | 26 | ---- | --//-- | 12.Փիրթիքյան | 15 | 90 | --//-- |
| 13.Գյոզալդարա Հայկ. | 24 | ---- | --//-- | 13.Զարինջա | 27 | 172 | --//-- |
| 14.Ղըրխդագիրման | 25 | ---- | --//-- | 14.Ղանլիջա Վերին | 21 | 150 | --//-- |
| 15.Հաջիխալիլ | 28 | ---- | --//-- | 15. Ղանլիջա Ներքին | 21 | 150 | --//-- |
| 16.Դանագիրմազ | 25 | ---- | --//-- | 16.Ջելաբկեչուտ | 10 | 55 | --//-- |
| 17.Միրաք | 5 | ---- | --//-- | 17.Ղարաքիլիսա Իլլի | 11 | 57 | --//-- |
| 18.Մելիքքենդ | 17 | ---- | --//-- | 18.Կապս | 144 | 621 | --//-- |
| 19.Ջարջառիս | 10 | ---- | --//-- | **ԸՆԴԱՄԵՆԸ** | **459** | **3395** | **18 ռ.** |
| 20.Ջանգիթափա | 7 | ---- | --//-- | | | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 21.Քեշիշքենդ | 5 | ---- | --//-- | | | | |
| 22.Մունջուխլի | 13 | ---- | --//-- | | | | |
| 23.Փամպ Հայկական | 15 | ---- | --//-- | | | | |
| 24.Ախղուլի | 15 | ---- | --//-- | | | | |
| **ԸՆԴԱՄԵՆԸ** | **469** | **----** | **24 n.** | | | | |

**ՀԱԱ ֆոնդ 28, ցուցակ 1, գործ 429, թթ. 6-7: Բնագիր ձեռագիր:**

## N 4
## Վիճակագրական տեղեկություններ գաղթականների և նրանց կարիքների մասին 8 հոկտեմբերի 1916թ.-1 դեկտեմբերի 1916թ.

Ալեքսանդրապոլ քաղաքում և համանուն գավառում՝ բացառությամբ Մեծ Ղարաքիլիսայի տեղամասի, 1916թ. դեկտեմբերի 1-ի դրությամբ ապրում է 23.000 գաղթական, որից 3.500-ը՝ Ալեքսանդրապոլի մասնավոր տներում, 8.000-ը քաղաքում գործող 12 հանրակացարաններում, իսկ 11.500-ը գավառի գյուղերում: 1916թ. դեկտեմբերի 1-ի դրությամբ գաղթականների ընդհանուր թվից քաղաքի սննդի պահեստներից օգտվել է ընդամենը 5.000 գաղթական՝ այսինքն, մասնավոր տներում հաստատվածները և մոտ 1.500 մարդ հարևան գյուղերից: Գավառի գյուղական բնակավայրերում հաստատված գաղթականության ճնշող մեծամասնությունը հեռավորության պատճառով չի կարողացել ճիշտ ժամանակին ներկայանալ պահեստ՝ սնունդ ստանալու համար: Գաղթականներով բնակեցված որոշ գյուղեր պահեստից հեռու են մինչև 50 վերստ:

Այսուհետև Ալեքսանդրապոլ քաղաքում և Շիրակի գյուղերում հաստատված գաղթականների պահանջները բավարարելու համար անհրաժեշտ է 17 վագոն ալյուր, 350 փութ *(իմա՝ 5.705կգ-Ա.Հ.)* շաքար, 200 փութ *(իմա՝ 3.260կգ-Ա.Հ.)* օճառ և 1 փութ *(իմա՝ 16.3կգ-Ա.Հ.)* թեյ: Պահեստներն իսպառ դատարկվել են նաև նավթի, լուցկու, բրնձի և փայտի պաշարներից:

Մեծ Ղարաքիլիսայի կամ Փամբակի շրջանի սննդի պահեստներից օգտվում են 6.000 գաղթականներ: Այս գաղթականները տեղաբաշխված են հետևյալ գյուղերում՝ Մեծ Ղարաքիլիսա, Ղշլաղ, Հաջիղարա, Բզովդալ, Դարբազ, Յաղուբլի, Չոտուր, Վարդանլի, Սարմուսախլի, Բոզիքենդ, Սիսիմադան, Համամլի, Սպիտակ, Մեծ Բեքանդ, Ղալթախչի, Ավդիբեկ, Ղարաբոյա, Աղբուլաղ, Գյուղյոխուշ,

Թափանլի, Գյուլլիջա, Գոգարան, Ղարալ, Ղաչաղան, Չիգդամալ, Վարդնով և Նալբանդ:

Այսուհետև Փամբակի շրջանի 6.000 գաղթականների պահանջները բավարարելու համար անհրաժեշտ է 4-5 վագոն ալյուր, 160 փութ *(իմա՝ 2.008կգ-Ա.Հ.)* շաքար, 80 փութ *(իմա՝ 1.304կգ-Ա.Հ.)* օճառ, 8 փութ *(իմա՝ 130.4կգ-Ա.Հ.)* թեյ և 100 փութ *(իմա՝ 1.630կգ-Ա.Հ.)* աղ:

**Ալեքսանդրապոլի սննդի պահեստ՝ (ստորագրություն)**
**ՀԱԱ ֆոնդ 28, ցուցակ 1, գործ 553, թթ. 1-15: Բնագիր ձեռագիր:**
**Թարգմանություն ռուսերենից:**

## N 5
## Ալեքսանդրապոլի գավառում ՀՀ ներկայացուցիչ Գ.Խոյեցյանի զեկուցագիրը ԱԳ նախարարին Ալեքսանդրապոլում տիրող իրավիճակի մասին 17 հոկտեմբերի 1918թ.

Աւելորդ չեմ համարում իրազեկ կացուցանել քաղաքի կեանքի ներկայ պայմաններին: Բազմաթիւ թաթար գաղթականութիւնը գրաւել է քաղաքի համարեայ կէսը և քաղաքը կորցրել է իր հայկական բնոյթը: Թաթարները գրաւել են ռուսական թաղամասը և ամենայարմար գեղեցիկ շէնքերը, որոնց տէրերը՝ քաղաքի երևելի հարուստ դասը փախել է քաղաքից: Վաճառականութիւնը նոյնպէս անցնում է եկւոր թաթարների ձեռքը: Մինչ հայ վաճառականը իր ունեցած հին ապրանքներն ու գաղթողների իրերն է աշխատում ծախել, նորը հնարաւորութիւն չունենալով ստանալ, թաթարը որոշ չափով կարողանում է այդ, քանի որ ապահով է ճանապարհին, աւելի ազատ երթեւեկութեան հնարաւորութիւն ունի, Թիֆլիսից, Թաւրիզից, Ղարսի, Երևանի, Կաղզւանի շրջաններից կարողանում է ազատ բերել մթերքներ, ապրանքներ:

Բացի վերև յիշուած յանգամանքներից կայ և մի ուրիշը՝ հայ գիւղացին ոչինչ կամ համարեայ ոչինչ չունի ծախելու: Մինչդեռ թաթար գիւղացու մօտ են նրա անասունների մի մասը,նրա արտերի, այգիների բերքը, նրա անտէր թողած տների կահ-կարասին ու իրերը: Ու էս բոլորը թաթարը ծախում է քաղաքում: Թաթար ինտելիգենցիան է գրաւում և մեր պաշտօնները պետական և մասամբ հասարա-

կական հիմնարկութիւններում: Երկու ժողովուրդների հարաբերութիւնները շնորհիւ Օսմանեան իշխանութեան խստութիւնների արտաքուստ բարեկամական են, որքանով այդ հնարաւոր է տիրող ու նվաճւած ժողովուրդների մէջ: Հայը խեղճ է, ոգին ընկած է ու համակերպւող, միշտ թաթարն իրեն աւելի հզոր է զգում, թէև նրանց էլ տաճիկ իշխանութիւնը շատ երես չի տալիս: Սրանով է բացատրւում, որ անկարգութիւնների ու նման յանցանքների մէջ համարեայ միշտ մեղադրւում ու պատժւում են թաթարները:

Զօրքն ընդհանրապէս իրեն լաւ է պահում և ավելի մարդավայել վերաբերմունք է ցոյց տալիս դէպի հայը: Նոյնը չի կարելի ասել տաճիկ պաշտօնէութեան մասին: Ինչ որ կատարւում է քաղաքում, չի կարելի արդարացնել ոչ դաշնագրով, ոչ միջազգային օրենքով: Թէև ըստ Բաթումի դաշնագրի ոչ ոք չի զրկւում իր սեփականութեան իրաւունքից, բայց օսմանեան իշխանութիւնը քաղաքի գրաւման հէնց առաջին օրերից յայտարարում է, որ օսմանեան զորքերի կողմից քաղաքի գրաւման օրը քաղաքից բացակայողների գոյքը գրաւում է յօգուտ պետութեան: Սեփականատէր ճանաչւում է միայն այն մարդը, որի անունը նշանակւած է քաղաքի ստացւածոց մատեանում՝ իբրեւ այդպիսին, նոյնիսկ ծնողների, որդոց կամ ընտանիքի այլ անդամների ներկայութիւնը կամ քաղաքի գրաւումից շատ առաջ քաղաքից հեռանալու պարագան չեն փրկում գոյքը գրաւումից: Տանում են ամբողջ շարժական գոյքը, իսկ շէնքը տալիս են վարձով կամ կապալով: Այս բանը նրանք բացատրում են հետեւեալ կերպով, ռուսները հեռացել են Անդրկովկասից մօտաւորապէս 1918թ. սկզբին: Այդ ժամանակամիջոցից յետոյ քաղաքից հեռանալը չպէտք է դիտել իբրեւ տաճիկների գալուց երկիւղի հետեւանք, ուստի և յունւարից այս կողմ հեռացողների գոյքը իբրեւ պատիժ պիտի գրաււի, իսկ յունւարից առաջ հեռացողներինը՝ ոչ: Տեղի իշխանութեան նախագահի կարգադրութեամբ անշարժ կայքերից վերցւող հարկը տալու համար ամեն մի ստացւածատէր Քաղաքային վարչութիւնից պիտի ստանայ վկայագիր, որ ինքը նշանակւած գոյքի տէրն է, իսկ եթէ հաւատարմատարն է՝ հաւատարմաթուղթը տրւած է 1918թ. յունւարից առաջ: Ով բացակայում է քաղաքից, կամ նոր է վերադարձել, այդպիսիններին կալւածքից հարկ չի տրւում: Այդպիսիների գոյքը կառավարութիւնը տալու է վարձով կամ կապալով՝ յօգուտ իրեն: Քաղաքային վարչութիւնը ներկայացրել էր քաղաքի գրաւումից առաջ հեռացողների ցուցակը, բայց այդ ցուցակը չէր ընդունւել իբր «ղաչաղների»: Այս առթիւ պաշտօնական դիմում ու հարցապնդում է արւած իմ կողմից՝ Խալիլ փաշային և Տեղական իշխանութեան նախագահին: Վերջինս բացատրում է, որ այդ Շէֆքի փաշայի կարգադրութեամբ է արւում: Պոլսի կոնֆերէնցիայից յետոյ, եթէ քաղաքը վերադարձւի ՀՀ-ին՝ կւերադարձնեն և հարկերը, ստացւած կապալագինը և վարկը:

Կարգ ու կանոն չկայ նաև գնացքների երթևեկութեան ու ճանապարհների յարմարութիւններ տալու գործում: Մեծ դժուարութեամբ վերցնում են անցագրեր, օրերով սպասում են կայարանում, գիշերում այստեղ ու երբ գալիս է ցանկալի գնացքը՝ հսկայական ջանքերով ու նեղութիւններով հազիւ մի քանիսը նրանցից կարողանում են տեղ գտնել գնացքում: Ապրանքատար վագոնների դռները չեն փակւում ու ճանապարհին իրերից շատերը կորչում են: Վերջին օրերս սկսել են խուզարկել իրերը, գրաւում են այն ամենը, ինչ համարում են պետական կամ կենսամթերքը: Վերցնում են նաև տաճկական ու ռուսական հին թղթադրամը: Իսկ այժմ տեղի է ունենում մի այլ երևոյթ. քաղաք չեն թողնում Թիֆլիսից եկողներին, եթէ նոյնիսկ նրանք ունեն անցագրեր՝ Օսմանեան կառավարութեան ներկայացուցիչներից: Ճանապարհորդները ձերբակալւում են, օրերով քաղցած ու ծարաւ պահւում ցուրտ սենեակում: Իմ բոլոր դիմումներն այդ մասին մնացին անհետևանք, պատճառաբանւում են, որ կարգադրութիւն է եղել Շէֆքի փաշայից ոչ ոքի չթողնել Ալէքսանդրապոլ: Այդ կարգադրութեան առթիւ այսօր եէթ դիմեցի Խալիլ փաշային, որից այսօր հեռագրով ստացած կարգադրութեամբ բոլոր ձերբակալւածները ազատ արձակւեցին և վերացւում են բոլոր սահմանափակումները և արգելքները օրինաւոր անցագրեր ունեցողների վերաբերեալ: Իսկ ձերբակալւածներին ցոյց տրւեց իմ կողմից հնարաւոր օգնութիւն հացով և այլն:

Պարենաւորման գործը կաղում է: Կենսամթերքները թանկանում են օր աւուր: Քաղաքի պահեստները դատարկւում են, իսկ ստանալ նորը հնարաւորութիւն չկայ: Քաղաքային վարչութեան գործակալները գնել են Շարուրում մօտ 12 վագոն ալիւր, որը մինչև օրս բերելու հնարաւորութիւն չկայ, որովհետև վագոն չեն տալիս: Գանձակ ուղարկւած գործակալները դէռ չեն վերադարձել, հաց գնելու փորձեր են անում նաև Ախալքալաքի շրջանում: Գործը դժուարացնում է նաև այն յանգամանքը, որ ալիւր և կենսամթերքներ վաճառողները պահանջում են տաճկական և առաւելապէս ռուսական դրամ, կովկասեան բոները համարեայ բոլորովին չեն ընդունում: Իւղ, պանիր, ձու բոլորովին չկայ, կայ միայն թաթարական գիւղերում, գնալ գիւղ սիրտ չեն անում, իսկ իրենք գիւղացիներն էլ չեն բերում, որովհետև քաղաքում հաստատված սակագնով ծախել չեն ուզում: Մինչ այդ սակագնի յայտարարելը դեռ կարելի էր որոշ կենսամթերքներ ճարել և բաւականին էժան, իսկ այժմ ամեն ինչ թաքցնում են, իսկ ծածուկ ծախում եմ շատ թանկ: Փայտ նոյնպէս չկայ, միայն թաթարները սայլերով բերում են տան ծածկի գերաններ գիւղերից ու ծախում բաւականին թանկ գներով: Հայ ազգաբնակչութիւնը տնտեսապէս բոլորովին քայքայւած է: Գաղթը… ու թալանը չքավորութեան են մատնել ազգաբնակչութեան մեծ մասին: Աղքատութիւնը, գաղթականութիւնը, կեանքի թանգութիւնը և սանիտարական առողջապահական պայմանների բացակայու-

թիւնը մեծապէս նպաստում են տարափոխիկ հիւանդութիւնների տարածմանը և մահացմանը սոսկալի տոկոսով: Սոսկալի չափերի է հասնում նաև պոռնկութիւնը: Բացի քաղաքում մնացած բազմաթիւ ռուս պոռնիկներից, տեղական ու գաղթական հայութիւնը նոյնպէս այդպիսիների մեծ տոկոս է տալիս: Վերջերս նկատւում է ներգաղթի ուժեղացում շնորհիւ քաղաքական դրութեան փոփոխման: Խանութների ու բնակարանների վարձը նկատելի բարձրանում է:

**Ներկայացուցիչ՝ Գ. Խոյեցեան**
**ՀԱԱ ֆոնդ 200, ցուցակ 1, գործ 126, թթ. 12-13: Բնագիր: Ձեռագիր:**

## N 6
## Ալեքսանդրապոլի գավառում ՀՀ ներկայացուցիչ Գ. Խոյեցյանի զեկուցագիրը ԱԳ նախարարին՝ Ալեքսանդրապոլում տիրող իրավիճակի վերաբերյալ
## 31 հոկտեմբերի 1918թ. Ալեքսանդրապոլ

Այն, ինչ արւած է տաճիկների Ալէքսանդրապոլի շրջանում վեցամսեայ տիրապետության միջոցում և, առանձնապէս այն ինչ կատարւում է վերջին օրերս նրանց այստեղից հնարաւոր հեռացման զուգընթաց, ուրիշ անուն կրել չի կարող, քան հայ ժողովրդի սիստէմատիկ տնտեսական քայքայում և նրա ֆիզիկական բնաջնջում:

Օսմանեան կառավարութիւնը անում է ամենը այդ նպատակին հասնելու համար, անում է անշեղ, յամառ: Գիւղից տարւած է ամեն ինչ՝ և անասուն, և բերք, տնային իրեր: Հայ գիւղացին այժմ ոչինչ չունի: Կերակրւում է միայն կանաչով, արմտիքներով ու այդ հողի վրա զարգանում է մահացութիւնը, որը սոսկալի չափերի է հասնում: Պէտք է տեսնել Շիրակի գիւղացուն, պատկերացնելու այն սոսկալի հեռանկարը, որ սպասում է նրան: Բայց չնայած այդ դրութեանը տաճիկ իշխանութիւնը զանազան անուններով խլում է նրանից և այն, ինչ մնացել է նրա մօտ ձմռան համար. հարիւր հազարաւոր փթերով տանում են ցորենը,գարին, ալիւրը,կարտոֆիլը,տասնեակ հազարներով քշում անասունները այն ժամանակ, երբ ժողովուրդը՝ այդ բոլորի տէրը, կամաց-կամաց մեռնում է քաղցից: Գիւղերից շատերը թալանւել են տաճիկների գրաւման առաջին օրերին տեղական մահմեդականների կողմից, իսկ որտեղից հեռացած է եղել բնակչութիւնը մի շիւղ չի

մնացել: Աշխատող ձեռքեր էլ չկան, մօտ 10.000 երիտասարդ հաւաքել են շրջանից և ուղարկել Էրզրում, որ գերեզման է դարձել նրանց համար, շատ քչերն են վերադարձել այնտեղից, վերադարձողներն էլ այնպիսի դրութեան են հասցուած, որ չեն կարող ապրել: Տանում են նաև աշխատանքների իրենց սայլերով, մինչև վերջերս տանում էին քչերին, չարչարում ամիսներով, քաղցած ու ծարաւ, առանց վարձատրութեան, մեռնում էին մարդիկ, կոտորւում անասունները, իսկ այժմ էլ էւակուացիայի համար Շէֆքի փաշայի կարգադրութեամբ հաւաքում են 85-100% եղած սայլերի: Տանում են բոլորին ու գնացողները գիտեն, որ շատ քչերը պիտի վերադառնան: Շատերին կոտորել են Էրզրումում ու ճանապարհին: Շատերն էլ մեռնում են ճանապարհին՝ չկարողանալով դիմանալ սոսկալի պայմաններին:

Գիւղերում հաճախացել են բռնաբարութիւնների, թալանի դէպքերը, շատացել են քիւրդերի աւազակային հարձակումները, իսկ քաղաքում կատարւում է թալան, աւելի «օրինական»: Տանում են ամեն ինչ առանձին իրեր, հասարակական ու պետական գոյք: Կայարանից ու դեպոյից տանում են, ծախում ու փչացնում ամեն ինչ ու վաղը հաղորդակցութեան միջոցներից զուրկ պիտի դադարի երթևեկութիւնը, իր հետ բերելով սոսկալի հետևանքներ:

Գերիների համար իմ բոլոր դիմումներին ստացայ մի պատասխան, որ աւելի շատ ծաղր է այդ հազարաւոր թշվառների ու հայ կառավարութեան հասցէին. ***ստուգութիւն ձերբակալուածների չի կատարուել, սակայն Հայաստանի ներկայացուցիչը թող հանգիստ լինի ձերբակալուածների վերաբերեալ արդարութիւն պիտի գործադրի***: Արդարութիւն, որը շատ նշանակութիւններ կարող է ունենալ իրեն իսկական նշանակութիւնից տարբեր, առանձնապէս տաճիկի բերանում հայի վերաբերմամբ:

Անհրաժեշտ եմ համարում ուղարկել հայ կառավարութեան ներկայացուցիչներին հայ գերիների լագերները, տեղում ստուգելու նրանց դրութիւնը և հնարաւորութիւն տալ նրանց օգնութեան գործը կարգաւորելու: Լոռիից բերել են իրենց սայլերով հարիւրաւոր լոռեցիների աշխատեցնելու: Բողոքում եմ այդ իրաւախախտումի դէմ: Խոստանում են արձակել, իսկ միւս կողմից ասկեարները նրանց քշում են դէպի Ախալքալաք ու Օրթաքիլիսա: Միւս օրը նրանցից շատերը թողնում են սայլերը, փախչում գալիս ինձ մօտ, ծեծում են նրանց ասկեարները, մէկին սպանում: Բողոքում եմ, պահանջում պատասխանատուութեան ենթարկել յանցաւորներին, բայց ինձ ներկայացնում են հայ քահանայից վերցրած վկայական, որ հայ գիւղացին մեռել է իր բնական մահով: 36-րդ զօրաբաժնի հրամանատարը իր քննութիւնից այն եզրակացութեան է գալիս, որ ավելի շուտ ոջիլով խեղդուած է, իսկ քաղաքային բժիշկը գտնում է, որ մեռել է հիւծելուց: Սայլերը թոյլ տուին վերդարձնել, բայց լոռեցիներին վերդարձնելուց յետոյ հաւաքում են տեղա-

ցիներից, որոնց համար արդէն բողոքելու իրաւունք չունեմ:

Ադեաման գիւղը գրաւել են գաղթական մահմեդականները: Իրենք ադեամանցիք զրկւած ամեն ինչից, մեռնում են հարևան գիւղերում, դիմում եմ նահանգապետին, բայց ստանում եմ պատասխան, ***որ ադեամանցիք խաբեբայ մարդիկ են և իզուր ես կարծում, որ ինձ անհանգստացնելով բան պիտի անեն՝ տաճիկ կառավարութիւնը միշտ արդար վերաբերմունք է ունեցել դէպի հայ հպատակ ժողովուրդները***:

Գոյքերի գրաւումն էլ կատարւում է իբրև պատիժ: Պատժում են նրանց, ովքեր հեռացել են ռուսների գնալուց յետոյ, զգալով, որ տաճիկները պիտի գան. ***Իսկ ինչու՞ էք փախչում, մենք վայրենիներ ենք, ի՞նչ է***: Պատժում են նրա համար, որ իրենցից վախեցել են: Դիմում եմ, ցոյց տալիս դաշնագիրը, բայց իրենց համար դաշնագիրը Շէֆքի փաշան է: Գործադրւում են այնպիսի խստութիւններ, որոնք ոչ մի բացատրութիւն չունեն: Գալիս են հայկական գնացքները և օրերով կանգնում Ջաջուռում: Գնացքը պէտք է սպասի մինչ ամեն անգամ Շէֆքի փաշայից թույլտուութիւն ստանայ, իսկ այն հետևում է միայն մէկ, երկու, և նոյնիսկ երեք օր յետոյ: Ինչու է արւում այդ, այստեղ միայն նրա կամայականութիւնն է, հայատեացութիւնը, ոչ մի ուրիշ բացատրութիւն չի կարող լինել: Միւս կողմից նրանք հաւաքում են այն բոլոր փաստաթղթերը, որոնք վաղը Եվրոպայի առաջ պիտի ցոյց տան հայերի գազանութիւնները և վայրագութիւնները խեղճ մահմեդականների վերաբերեալ և պիտի արդարացնեն իրենց պատասխան խստութիւնները: Բերդի հիվանդանոցում բժշկւում էր մի մահմեդական կին, որին վիրաւորել էին հայերը: Նա օգտւում է առանձին հոգատարութեամբ: Նրա առողջական վիճակի մասին ամեն օր տեղեկութիւն է ուղարկւում Շէֆքի փաշային: Իսկ մենք մեր ունեցած հսկայական կորուստների վերաբերեալ կատարած սոսկումներն արձանագրելու ոչ մի քայլ չենք անում:

Կանեմ ամենը, ինչ հնարաւոր է, ինչ թոյլ կտան այստեղ: Բայց քանի Շէֆքի փաշան տեղում է, այստէղ ոչինչ անել չի կարելի: Կարծում եմ, որ հայ կառավարութիւնը պիտի շտապի դիմել Կ. Պոլսին և դաշնակից պետութիւններին ամենից առաջ թոյլ չտալու, որ այստեղից արտահանւի ժողովրդի պետական ու հասարակական գոյքը ու առանձնապէս հացը, կենսամթերքը, վերդարձնելու գերիներին և դադարեցնել սայլերի բէգէառը, հեռացնել տալ իր պաշտօնից Շէֆքի փաշային, որը մասամբ հեղինակն է ու ուղղութիւն տւողը բոլոր այս խժդժութիւնների և սրա հետ միջոցներ ձեռք առնել, որ տաճիկների հեռանալուց անմիջապէս յետոյ ժողովուրդը սովից չմեռնի: Հաց, ահա հրամայական ու անհետաձգելի պահանջը մոմենտի: Հաց ձեռք բերելու համար պիտի արւի կարելին ու նոյնիսկ անկարելին, այլապես Ալէքսանդրապոլի շրջանի ժողովուրդը անպայման մահուան է դատա-

պարտուում: Կարծում եմ, որ կանոնաւոր ստատիստիկան և ամբողջ եղելութիւնների արձանագրութիւններն ունենալով միայն կարելի կլինի դիմել Ամերիկային և դաշնակիցներին մեր տուած հսկայական կորուստների ու երկրի վերաշինութեանը աջակցելու համար:

Այս ամենը շատ անգամ գրել եմ Ձեզ, սա կրկնութիւն է արուած հաղորդագրութիւնների: Բայց ամեն օր աղաղակող փաստերը ստիպում են ինձ նորից Ձեր ուշադրութիւնը գրաւել այս բոլորի վրայ: Աւելորդ չեմ համարում իմ կարծիքն էլ այստեղ ներկայացնել: Հարկավոր է դիմել Կ.Պոլիս և միայն Պոլսի իշխանութիւններին: Տեղական ներկայացուցիչներին դիմելով կարծում եմ աւելի բացասական հետևանքների կհասնեք, աւելորդ գրգռելով նրանց, պէտք է նկատել, որ տեղական իշխանութիւնները շատ նրբազգաց են, երբ իրենց մասին զանգատ են լսում:

**ՀՀ ներկայացուցիչ՝ Գ.Խոյեցեան**
**ՀԱԱ, ֆոնդ 221, ցուցակ 1, գործ 89, թթ. 60-61: Բնագիր: Ձեռագիր:**

## N 7

## Հատված Ալեքսանդրապոլի «Հայրենակցական Միության» վարչության հայտարարությունից 25 նոյեմբերի 1918թ. թիւ 39

Սույն թուի մայիսի 15-ին տաճիկների կողմից Ալեքսանդրապոլի ապօրինի և միջազգային ամենատարրական օրենքներով միանգամայն անթույլատրելի ռմբակոծումը, որ խախտումն էր հենց յուր՝ Օսմանյան կառավարութեան Բրեստում ստորագրած պայմաններին, սկիզբն եղավ Ալեքսանդրապոլ քաղաքի և նորա հայաշատ գաւառի ավերածութիւնների, կողոպուտի և մինչև իսկ պատերազմական խիստ բարքերին աններելի գազանութիւնների:

Այդ յանկարծակի ու դաւադիր ռմբակոծութեան պատճառով քաղաքի խաղաղ ազգաբնակչութիւնը սարսափահար տաճկական զորքի հայաբնակ մյուս վայրերում կատարած բռնութիւններից, թողած ամեն ինչ, կարողութիւն, ստացուածք, երկար տարիների աշխատանքի արդյունք, գանձ ու հարստութիւն, մթերք ու պաշար փախավ դեպի Փամբակի շրջան: Սակայն, անագորույն թշնամին, որի վաղեմի նպատակն ու ծրագիրն է եղել բնաջինջ անել հայ ազգաբնակչութեանը, ամեն տեղ հետևում և հալածում էր փախստականներին, որոնցից շատերը քա-

ղաքի վաղ առավոտեան ռմբակոծութեան պատճառով մերկ ու բոբիկ էին փախել:

Վերջին ապաստանը, որտեղ տեղավորվել էր հայ փախստական ժողովուրդը՝ Մեծ Ղարաքիլիսայի ձորերն էին: Այստեղ տներից հանելով երիտասարդութեանը և առհասարակ արական սեռը, չխնայելով նոյնիսկ մանկահասակներին, տաճկական հրամանատարութիւնը կարծես վրեժխնդիր էր լինում այն հերոսական ու քաջարի դիմադրութեան համար, որ Ղարաքիլիսայի կռվի ժամանակ ցոյց տվեց հայկական սակաւաթիվ, բայց քաջարի գունդը: Ղարաքիլիսայի ջարդը կրում էր միանգամայն կազմակերպւած և նախապես ծրագրւած բնավորութիւն: Այստեղ զոհվեցին պատերազմական գործողութիւնների հետ ոչ մի առնչութիւն չունեցող թէ տեղական և թէ Ալեքսանդրապոլից ու նրա շրջակայ գիւղերից այստեղ ապաստանած խաղաղ ազգաբնակչութիւնը:

Տաճկական իշխանութիւնների կարգադրութեամբ տղամարդիկ 40-50 հոգանոց խմբերով իրար կապկպւած պարաններով կամ երկաթալարերով ցուցամատներից, հերթով դուրս էին տարվում քաղաքից և գնդակահարվում՝ այնպես, որ հետին շարքերը խիտ-խիտ ընկնում ու ծածկում էին առաջին շարքերը: Այս տեսարանին ականատես շատ ռուս և լեհ քաղաքացիներ խելագարւեցին:

Չբավարարւելով սրանով, տաճկական հրամանատարութիւնը Ալեքսանդրապոլի շրջանի գրաված վայրերից աշխատելու պատրւակով հավաքեց և Կարսի ուղղութեամբ դեպի յուր երկրի խորքերը տարավ աւելի քան 15-20.000 երիտասարդ: Սրանցից վերադարձան միայն 200 հոգին՝ կիսամեռ ստւերներ և կմախքներ, այն էլ ոչ թէ ապրելու, այլ իրենց հարազատների գրկում վերջին շունչը փչելու: Ալեքսանդրապոլի արվարձաններից մեկում՝ Իլլի-Ղարաքիլիսայում որն ուներ միայն 1.500 երիտասարդ, այսօր ապրում է հազիվ 150-200 մարդ:

Տաճկական զորքերի կողմից արտահանւցին միլիոնների արժողութեան ապրանքներ՝ մանուֆակտուրա, անասուններ, հացահատիկ, շաքար և այլն: Կոտորածից ու թալանից զատ գաւառի ազգաբնակութեան մի մեծ հատւած առայսօր ապրում է գաղթականի կարգավիճակով, սրանցից շատերը գտնվում են Ռուսաստանում: Ալեքսանդրապոլցիները մեծ թիւ են կազմում նաև Թիֆլիսում:

Որպես ամփոփում մեր շարադրանքին՝ նշենք Ալեքսանդրապոլի գաւառի կրաձ կոնկրետ վնասները.

Միայն Ալեքսանդրապոլի շրջանից (ներառյալ գիւղերը) Տաճկաստանի խորքերն է տարւել աւելի քան 15-20.000 տղամարդ, որից կենդանի վերադարձել է 3-400-ը: Առևանգւել ու բռնաբարւել են 5.000-ից ոչ պակաս կանայք և օրիորդներ, որոնցից շատերը հետագայում թունավորւել են կամ այլ ձևով ինքնասպան եղել, շատերն էլ տարւել են Տաճկաստան և մահմեդականութիւն ընդունել:

Գիւղերում և Ղարաքիլիսայում ամենասոսկալի տանջանքներով սպանւել

են ևս 15.000-20.000 մարդ:

Ալեքսանդրապոլի շրջանից և քաղաքի աղքատ ազգաբնակչութիւնից գաղթականութեան մեջ Ռուսաստանում և Վրաստանում մեռել կամ անհետացել են 5.000-6.000 մարդ:

Ալեքսանդրապոլի շրջանից խլուել և տարուել է խոշոր եղջերավոր 50.000 և մանր եղջերավոր 100.000 անասուն, ինչպես նաև 5.000 ձի:

Տարուել է 2.5 մլն. փութ ցորեն (40750 տոննա-Ա.Հ.) և 1 մլն. փութ գարի (16300 տոննա-Ա.Հ.) և այլն: Թալանուել ու տարուել են գրեթե ամբողջ շարժական գույքը՝ այդ թվում դռներ, պատուհաններ, ապակիներ, գյուղատնտեսական գործիքներ, մանկական հագուստ, կոշկեղեն և վառելափայտ:

**Ալեքսանդրապոլի և շրջանի հայրենակցական միության վարչության նախագահ՝ Ա. Խանպապեանքարտուղար՝ Չիլինգարեան**
**ՀԱԱ ֆոնդ 240, ցուցակ 1, գործ 240, թթ. 44-51: Բնագիր ձեռագիր:**

## N 8
## Հատված Փամբակցիների «Հայրենակցական Միության» վարչության հայտարարությունից 27 նոյեբերի 1918թ.

Մայիսի վերջին տաճկական կանոնաւոր զորքը մտնելով Փամբակի շրջան կատարել է հետևյալ հանցագործութիւնները.

Մեծ Ղարաքիլիսայում սպանուել է աւելի քան 3500 մարդ՝ հիմնականում տեղացիներ և ալեքսանդրապոլցի փախստականներ: Դրանց անթաղ ոսկորները 1918թ. նոյեմբերի վերջի դրութեամբ ցրուած են ձորերում և անտառներում: Սպանութիւնները իրականացուել են հիմնականում միևնույն եղանակով. 40-ական հոգի՝ կապկպված պարաններով ու երկաթալարերով տարել են անտառ, ծեծել ապա ստիպել իրենց համար գերեզմանափոսեր փորել, որից յետոյ գնդակահարել են (ոճրագործութեան նմուշները՝ երկաթալարով միմյանց կապվապ մարդկային ձեռքերի մնացորդներ հայտնաբերուել և պահւում էին Ղըշլաղ գիւղի ուսուցիչ Մ. Ղազարեանի մոտ): Հսկայական մասշտաբներ է ընդունել երիտասարդ աղջիկների առևանգումը:

Ղըշլաղում սպանուել է 200 մարդ, Համամլիում՝ 350 մարդ, Բզովդալում՝

ավելի քան 200 մարդ, Մեծ Պարնիում՝ 150 մարդ: Մեծամասշտաբ սպանութիւններ են կատարուել նաև Դարբազ, Հաջիղարա, Ավդիբեկ, Նալբանդ, Վարդնով և Թափանլու գիւղերում: Փամբակի գաւառի 28 գիւղեր թալանուել են: Քշուել է մանր ու խոշոր եղջերավոր անասունների գրեթե ողջ գլխաքանակը: Օրինակ, եթե Ղըշլաղում յուրաքանչիւր ընտանիք ուներ 4-5 կով, ապա տաճիկներից յետոյ ամբողջ գիւղում մնացել էր 5 կով և մի քանի եզ: Թալանուել են բոլոր տներն ու գոմերը, տարուել են պատուհանները, դռներն ու կահկարասին, իսկ Պարնիում և Համամլիում ասկյարները տարել են նոյնիսկ կանացի գլխաշորերն ու մանկական հագուստը:

**քարտուղար՝ Ստ. Զորյան**
**ՀԱԱ ֆոնդ 240, ցուցակ 1, գործ 240, թթ. 36-39: Բնագիր ձեռագիր:**

## N 9
## Հայրենակցական Միութեանց Կենտրոնական խորհրդին Ալեքսանդրապօլի «Հայրենակցական Միութեան» կենտրոնական վարչութիւնից 1 դեկտեմբերի 1918թ. թիւ 46

### Զ Ե Կ Ո Ւ Յ Ց Ա Գ Ի Ր

Ի պատասխան նոյեմբերի 30-ի Ձեր N 50 գրութեան, սրանով պարտքս եմ համարում ներկայացնել Ձեզ Ալեքսանդրապօլի և շրջանի գիւղերի ծանր վնասների մասին մի համառոտ ցուցակ:

Տաճիկներն իրենց հարձակման և տիրապետութեան շրջանում գործել են զազանութիւններ և կատարել սպանութիւններ հետևյալ գիւղերում.

**Արթիկ, Ղփչաղ, Արբխվալի, Բաշգյուղ**-Այս գիւղերն ամբողջութեամբ թալանուել են: Արթիկ գիւղում, որ ուներ 400-500 ընտանիք՝ կոտորուել է տղամարդկանց 80%-ը: Կանայք՝ սկսած 8-10 տարեկանից գերուել և բռնաբարուել են:

**Ճլովխան, Իլխիաբի, Թոմարտաշ, Հոռոմ, Մեջիտլի**-Արժանացել են նույն ճակատագրին:

**Իլլի Ղարաքիլիսա**-Ալեքսանդրապօլի վրա հարձակուելիս դարձել է կիսաւեր: Տաճիկները գիւղից տարել, իսկ հետո սպանել են 1.500 տղամարդ:

**Փոքր Ղարաքիլիսա**-Արժանացել է նույն ճակատագրին: 900 ընտանիք ունեցող

գիւղից մնացել են ավերակները, կանայք և մի քանի ծերունի: Նոյնիսկ Հասան խանի օրոք (1826թ.) գիւղն այսքան անմխիթար վիճակում չի եղել:

**Դահարլի**-Գիւղը թալանուել է, իսկ բնակչութիւնը՝ սրի քաշուել:

**Աղին**-Տաճկական հարձակման ժամանակ գիւղացիները ողջ կազմով փախել են, սակայն տաճիկները նրանց խաբեութեամբ յետ են բերել և բոլորին սպանել: Այժմ աղինցիներին կարելի է հաշվել մատների վրա:

**Չիթանքով**-Տեղի են ունեցել սարսափելի իրադարձութիւններ: Տաճիկները գիւղի տղամարդկանց՝ 4-500 մարդ, լցրել են մարագները և վառել:

**Սոգութլի, Մահմուդջուղ, Ղըլիջ-Յաթաղ (Նոր Արթիկ)**-Երեք գիւղերն էլ ամբողջութեամբ ավերուել են: Ազգաբնակչութիւնը այս գիւղերում կոտորուել է մինչև վերջին մարդը: Չկա գոնե մեկ բնակիչ ի յիշատակ այդ գիւղերի վաղեմի գոյութեան:

**Կապս, Վերին Ղանլիջա, Ներքին Ղանլիջա**-Գիւղերն ավերվել են, իսկ բնակչութիւնը՝ կոտորուել: Երեք գիւղերից միայն 200 տղամարդ մորթուել է իբրև անասուն:

**Գյուրջիյոլ, Օրթաքիլիսա, Սալուտ, Գյուլլիբուլաղ, Ղզըլքիլիսա, Դուզխարաբա, Չիֆթալի, Բոգյոխուշ, Ղզըլղոչ, Շիշթափա, Ղազանչի, Տիտոյխարաբա, Քոռաղբյուր և այլն**-Գիւղերը մինչև վերջին թելը թալանուել են, ապա ավերուել: Բնակչութիւնը սկզբում փախել է Լոռուա ուղղությամբ, սակայն տաճիկները խաբեութեամբ յետ են բերել ու կոտորել: Երիտասարդութիւնը ամբողջութեամբ քշուել է Կարս, իսկ այստեղից էլ երկրի խորքերը:

**Չրախլի, Դուզքենդ, Մեծ Քյափանակ, Փոքր Քյափանակ, Հաջինազար, մասամբ նաև Ջաջուռ, Աղքիլիսա, Դարբանդ, Սամրլի, Երրորդ Արխվալի**-բոլորն ավերուել և թալանուել են: Ի տարբերութիւն նախորդ գիւղերի, այստեղ երիտասարդներին չեն գերել, այլ խումբ-խումբ բարձրացրել են դիմացի սարերը և գնդակահարել:

**Ղարաբոյա, Ղալթախչի, Ավդիբեկ, Աղբուլաղ, Գյուղյոխուշ, Համամլի, Վարդնով, Գյորան, Ղըշլաղ, Վարդանլու, Դարբազ, Բզովդալ, Նալբանդ**-Վրեժխնդրության պատրուակով թալանուել են ու հիմնահատակ ավերուել:

**Մեծ Ղարաքիլիսա**-Ենթարկուել է սարսափելի ավերածութեան ու կողոպուտի: Միայն Ղարաքիլիսայի ձորերում հաշվվել է 20.000 տղամարդու դիակ:

**Արմութլի**-1918թ. սեպտեմբերի 25-ին տաճիկները Արթիկից և Հոռոմից հանկարծակի հարձակուել են գիւղի վրա: 700 բնակիչներից 95-ը սպանուել է, իսկ 85-ը գերուել: Մնացածները փախել են:

**Եզդիական գիւղեր**-Գաւառի եզդիական բոլոր 15 գիւերը հիմնահատակ ավերուել են, իսկ եզդի բնակչութիւնը անհետ կորել է:

Ընդհանուր առմամբ Ալեքսանդրապոլի գաւառի շուրջ 120 հայաբնակ գիւղերից և ոչ մեկը չի փրկւել թալանից ու կողոպուտից: Միևնույն ժամանակ շատ գիւղերից և Ալեքսանդրապոլ քաղաքից վիճակագրական հստակ տեղեկութիւններ չկան, որովհետև դրանք կտրուած են արտաքին աշխարհից:

**Ալեքսանդրապոլի և շրջանի Հայրենակցական Միության**
**վարչության նախագահ՝ Ա. Խանզադյան**
**ՀԱԱ ֆոնդ 240, ցուցակ 1, գործ 326, թթ. 58-61: Բնագիր ձեռագիր**

## N 10
## Ալեքսանդրապոլի գավառում ՀՀ ներկայացուցիչ Գ. Խոյեցյանի զեկուցագիրը ԱԳ նախարարին՝ Ալեքսանդրապոլում տիրող իրավիճակի վերաբերյալ
## 4 դեկտեմբերի 1918թ. Ալեքսանդրապոլ

Ի նկատի ունենալով, որ ամսոյս 4-ին տաճիկները հեռանում են շրջանիցս և այսպիսով վերջանում է նաև իմ միսիան ես կարևոր եմ համարում ի մի բերել բոլոր այն կարևոր,սկզբունքային բնոյթ կրող խնդիրները,որոնց լուծմանը նպաստելու համար հրահանգ ունէի ՀՀ կառավարութիւնից ու սրանց շուրջը տեղի ունեցած դիմումները՝ ներկայացուցչութեան գործնէութեան ամբողջական պատկերը և ՀՀ կառավարութեանն ամփոփումն տալու փաստերի, որոնք կարող են պիտանի լինել համաշխարհային պատերազմի հաշուեյարդարին:

**ԳՈՅՔԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ:** Օսմանեան զօրքի քաղաք մտնելու առաջին օրերում մութ կերպով, իսկ յետոյ արդէն պաշտօնապէս տաճիկ կառավարութեան կողմից յայտարաւում է, որ սեփականատիրութեան իրաւունքը ճանաչւում է միայն այն մարդկանց, որոնք քաղաքումն են, իսկ Օսմանեան զօրքերի քաղաք մտնելու ժամանակ քաղաքից բացակայողները զրկւում են անշարժ և շարժական գոյքերի սեփականատիրութեան իրաւունքից, նրանց գոյքից պետական հարկ չի վերցւում, եթէ նոյնիսկ նրանք ունեն այստէղ իրենց կառավարիչներն ու հաւատարմատարերը օրինական փաստաթղթերով: Այս վերջին կէտը մասամբ ուղղւում էր այն իմաստով, որ վավերական են համարում 1918թ. յունւարից առաջ (ռուսական զօրքի հեռանալուց յառաջ) տրուած հաւատարմագրերը, թէև այն էլ խստիւ չի կիրառւում, իսկ սեփականատէրերի վերադարձի համար շարունակ արգելքներ էին յարուցանում, իսկ օգոստոսին իսպառ արգելւեց քրիս-

տոնեաների մուտքը քաղաք և գաւառ: Եւ այդ օրից քաղաքում սկսւում է կազմակերպւած թալան: Տեղացի հայերից և թաթարներից մի քանիսի առաջնորդութեամբ բաց են անում խանութներն ու տները, որոնց տէրերը բացակայ էին և բոլորովին անտէր էին մնացել, կամ գրաււել էին իրենց հարազատների կողմից: Օրը ցերեկով դուրս են բերում ապրանքը և սայլերով ու ֆուրգոններով կրում: Անմասն չեն մնում նաև այդ տներն ու խանութները մատնացոյց անողները: Այսպիսով թալանում են քաղաքի համարեայ բոլոր աչքի ընկնող տները: Երկրորդ օրը յայտարարւում է, որ 14 օրւայ ընթացքում բոլոր զէնքերն ու պետական ստացուածք համարւող իրերը՝ շինել, զինւորական կօշիկներ և այլն, պէտք է յանձնւեն տաճիկ կառավարութեանը: Քչերն են կատարում այս կարգադրութիւնը:

Սկսւում է ընդհանուր խուզարկութիւն: Քաղաքային վարչութեան պահանջմամբ խուզարկու խմբերի մէջ նշանակւում են վարչութեան կողմից էլ մարդիկ ու խուզարկութիւնը կատարւում է միայն ցերեկները: Չնայած սրան տներից վերցնում են այն ամէնը ինչ ցանկալի է լինում խուզարկուներին: Քիչ չեն լինում և գողութիւնների դէպքեր խուզարկութեանը մասնակցող տաճիկների կողմից: Ժողովրդի ահաբեկւած դրութիւնից օգտւում են տեղական հայ ու թաթար ազգաբնակչութեան տականքը, կազմւում են ինքնակոչ խուզարկու խմբեր, մէկ երկու ասկեարի մասնակցութամբ շրջում տները վերցնում ամեն ինչ: Այդ խմբերը ցրւում են, երբ քաղաքացիները զգալով կեղծիքը իմաց են տալիս կառավարութեանը և երբ թուրք օֆիցերները մօտենում են խուզարկավայրին:

Մեծապէս կիրառւել է թալանի մի իւրատեսակ ձևը: Յայտարարւում է, որ գալիս է տաճիկ կամ հայ զօրահրամանատարներից աչքի ընկնող մէկը և կարգադրում են քաղաքային վարչութեանը ամենակարճ միջոցում իրենց զապութների[1] հետ շրջել տները հարուստների և հաւաքել քսան, երեսուն և աւել անձի համար անկողին, մահճակալ, լուացարաններ, գորգեր, բաժակներ, ափսէներ և այլն: Այս բանը կրկնւում է մէկից աւելի անգամ: Իրերի մեծագոյն մասը տարւում է Ղարս, ծախւել է տեղական թաթարներին: Տարւած հազարաւոր իրերից վերադարձրել են 5-6-ը միայն: Տարւած իրերի համար տրւած են տաճիկների կողմից ստացագրեր:

Մասսայական թալանի փորձ անում են առաջին օրերը և շրջանից ու Աղբաբայից եկած թաթարները: Մի քանի հազար հոգի փայտերով ու խանչալներով զինւած սայլերով մտնում են քաղաքի հիւսիս-արևմտեան մասը, թալանում մի քանի տուն, սպանում մէկին: Սակայն շուտով վրայ են հասնում Իզզէթ բէյը՝ միլիցիայով, շրջապատում մեծ մասին ու սոսկալի ծեծի ենթարկելուց յետոյ լցնում

[1] Զապիաթ-ոստիկան:

բանտը: Դրանից յետոյ այդ տեսակ դէպքեր էլ չեն կրկնւում:

Գիւղերը, որոշ բացառութեամբ, առանձնապէս սահմանին մօտ գտնւածները, որոնց բնակիչները փախած են եղել, թալանւում են մինչև վերջին շիւղը խուժանի և զօրքի ձեռքով:

Մօտ յիսուն գիւղ ենթարկւել են կոտարածի, իսկ մի քանի գիւղ (մօտ 7-8), որոնց շրջակայքում մի խումբ տեղացի երիտասարդներ, իմանալով Մաստարայի կողմից հայ զօրքի մօտենալը, զինւած դիմադրութիւն են ցոյց տալիս իրենց նկատած ու իրենց վրայ դիմող տաճիկ զօրամասին, ենթարկւում են տաճիկ զօրամասերի յարձակման ու կոտորածին: Այդ գիւղերը բնաջինջ են եղած, բնակիչների մեծ մասը կոտորւել ու ամբողջ ստացւածքը թալանւել է: Թալանից, առևանգումից ու սպանութիւններից անմասն չի մնացել ոչ մի գիւղ: Քաղաքի հետ համեմատած գիւղերը տուժել են սոսկալի կերպով: Գիւղացիներից աւելի ունևորները տեղափոխւել են քաղաք, իբրև աւելի ապահով վայր, իսկ միւսները, որոնք ճանապարհների վտանգի և առաջին ամիսները գիւղերի և քաղաքի մէջ հաղորդակցութեան բոլորվին ընդհատւելու պատճառով ստիպւած են եղել մնալ, տուժել են անչափ: Գիւղեր կան, որ բոլոր կանայք բռնաբարւել են, որ թալանւել են շարունակ սիստէմատիկ կերպով և ուր այժմ գիւղացիք մեռնում են քաղցից, կանայք շրջում են համարեայ մերկ, կամ սոսկալի ցնցոտիներով: Գիւղերից տարւած են բազմաթիւ կանայք և աղջիկներ, և մինչև օրս բացի երկուսից չեն վերադարձել: Թալանը գիւղերում շարունակւում է և այժմ: Ապացուցւած է, որ թալանը մեծ մասամբ կատարւել է զօրքի ձեռքով և սեփականացրած է զօրքի պէտքերի համար: Իւրաքանչիւր բողոքից և դիմումից յետոյ ուղարկել են մարդիկ թալանողներին ձերբակալելու և թալանը վերադարձնելու, սակայն ուղարկւածները իրենք են մասնակցել և բռնութիւններ գործ դրել: Չի եղել դէպք, որ քշւած տաւարը դարձնեն, տարածը ետ տան ու թալանը շարունակւում է անվերջ ու անպատիժ:

Քաղաքից բացակայ հայերի տներից ու խանութներից շատերին տէր են դարձել եկւոր ու տեղացի թաթարները, իւրացնելով և շարժական գոյքը, չեն վերադարձրել և այն գոյքը, որը քաղաքից հեռացած հայերը, իբրև հարևանների թողել են նրանց մօտ՝ ի պահպանութիւն: Այդ ձևերով իւրացրած գոյքը այժմ կրում են Ղարս կամ ծախում են հրապարակով: Հրապարակով և անպատիժ ծախում են թալանւած գոյքը: Քաղաքում տարւած է քաղաքին պատկանող չորս վագօն ցեմենտ, վագօնների համարները յայտնի են քաղաքին. մեկ վագօն փայտ Կազաչի պօստում քանդւած և տարւած է Ղարս ջրաղացը: Քաղաքների միութեան հիւանդանոցները, զօրանոցները, բերդի առանձին հաստատութիւնները, ռուսաց եկեղեցիները, ապա գոյքը ծախւած է աճուրդով, երկաթուղու բարձր տարրական, Առևտրական դպրոցի, վերջինիս շէնքում տեղաւորւել էր Խալիլ փաշայի շտաբը,

իգական գիմնազիայի, հեռախօսային կայանի, բոլոր պետական նաև հանրային հիմնարկութիւնների ամբարները, որոնք յայտնի չէին քաղաքային նոր Վարչութեանը ամբողջ գոյքը գրաւուած է և ուղարկուած Ղարս: Քաղաքում գտնուած հիւրանոցները, քաղաքի գրաւման առաջին երկու օրը բռնուած են և գոյքը տարուել է Ղարս: Պետական գոյքը համարեայ ամբողջովին տարուած է, տարուել է ի միջ այլոց փոստ-հեռագրատան,գանձարանի, երկաթուղու կայարանի, դեպօյի գոյքը, տարուած են նոյնիսկ հեռագրաթելերը: Քաղաքի և մօտ գտնուած գիւղերի ցանքսերի զգալի մասը զօրքի անասունների կեր է դարձել:

Շրջանի գիւղերից հանուած է բոլոր սայլերի 80% աւելին: Շատ անգամ պատահել է, որ չեն վերադարձրել, թէ՛ սայլերը, և թէ՛ սայլապանները, որոնց ճանապարհին սպանել են: Պատահել են դէպքեր, երբ սայլապանի հարազատները ճանաչել են իրենց եզներն ու սայլը թուրքերի ձեռքին: Միայն էրզրումում կայ մօտ 600 հայի սայլ, իսկ ընդհանուր թիւը 4.000-ից աւելի է հաշուում: Լոռի և Փամբակ շրջանների դատարկելուց յետոյ մի քանի հարիւր գիւղացիներ, իրենց սայլերով, բերել էին աշխատանքների: Իմ բողոքներից յետոյ նրանք բոլորն էլ ազատ արձակուեցին ու վերադարձուեցին իրենց տեղերը:

Ընդհանրապէս կարելի է ասել, որ օրէնք և իրաւունք գոյութիւն չի ունեցել տաճիկների տիրապետութեան շրջանում,կամայականութիւններն են եղել միայն իշխողը և եթէ երբեմն գործադրուել է արդարութիւնն ու իրաւունքը, այդ է իբրև անձնական բարեացկամ վերաբերմունքի հետևանք, կապուած միայն որոշ անձնաւորութեան կուլտուրական հայացքների և բարեմասնութիւնների հետ: Այս բոլոր իրաւախախտումների, բռնութիւնների դէմ խստիւ բողոքել, դիմումներ են արել ուր հարկն է Քաղաքային վարչութիւնը և մասնաւորապէս քաղաքագլուխ Լ. Սարգսեանը, որի ժողովրդի շահերի վստահ պաշտպան հանդիսանալը միայն յարգանք և հիացմունք կարող է առաջ բերել: Սակայն այդ դիմումների պատասխանները եղել են կամ սին խոստումներ, կամ պարզ հեգնանք: Երբ քաղաքագլուխը խնդրում է միջոցներ ձեռք առնել թալանը դադարեցնելու, պատժելու յանցաւորներին, Վեհիբ փաշան պատասխանում է. «Որ զինուորական մասի ձեռքով կատարուած է, կատարողին բռնեցէք, բերէք կպատժենք»: Քաղաքագլուխը հարցնում է նրան. «Ինչպէս անզէն մարդը պիտի բռնի զինուածին»: Եւ քանի որ այդ անհնարին էր, թալանը շարունակւում է անուերջ: Տեղումս ՀՀ ներկայացուցիչ նշանակուելուց յետոյ, այդ բռնութիւնների դէմ բազմիցս բողոքել եմ և ես: Եւ չնայած, որ բոլորովին վերջացնել տալ ինձ չի յաջողուել և չէր էլ կարող յաջողուել, սակայն իմ բողոքների և առանձնապէս քաղաքական դրութիւնը փոխուելու հետևանքը այն եղաւ, որ մասամբ դրանց առաջն առնուեց: Նախ՝ ճանաչուեց քաղաքից բացակայողների շարժական գոյքերի սեփականատիրութեան իրաւունքը և գրաւումները

դադարեցին: Դադարեցուեց այդ քաղաքացիների շարժական գոյքի աճուրդով վաճառումը և վերադարձուեց տէրերին: Մի շարք գիւղեր, որոնք շարունակ թալանի ու յարձակման էին ենթարկւում ուղարկուեցին ժանդարմներ, գիւղացիներին պաշտպանելու: Մասամբ ազատւում են հեռագրաթելերը, երկաթուղին, որի պահեստի սլաքները հանելու պատրաստութիւն էին տեսնում: Պետական գանձարանից և խնայողական գանձարկղից առանձին անձերին պատկանող գումարի մի մասը վերադարձրել է Օսմանեան կառավարութիւնը և բաժանելու համար տուել է 7 օր ժամանակ: Չբաժանուած գումարը մնալու էր Օսմանեան պետական գանձարանի տրամադրութեան տակ: Իմ դիմումների համաձայն այդ գումարը յանձնուեց ինձ ի պահպանութիւն և տէրերին վերադարձնելու:

**ԳԵՐԻՆԵՐ:** Շրջանիս գրաւումից յետոյ, հէնց առաջին օրերին, զանազան խարդախ ու խորամանկ միջոցներով՝ հաց բաժանելու, ցուցակագրելու և այլ պատրւակներով, հաւաքում են եկեղեցիներում ու հրապարակներում զինուորական հասակ ունեցող տղամարդկանց և աշխատանքների ուղարկելու պատրւակով, ուղարկում էրզրում և ուրիշ վայրեր: Քաղաքում այդ ձևի հաւաքում չի եղել, սակայն ձերբակալել են առանձին անհատների՝ մօտ 200 հոգի (քաղաքի բնակչութիւնը այդ ժամանակ 5.000 հոգի էր միայն): Ուղարկւածների ընդհանուր թիւը քաղաքագլխի հաշւով մօտ 12.000 հոգի է: Տարել են տեղական բնակիչներին և Ղարսի, Սարիղամիշի և ուրիշ շրջանների փախստականներից: Քաղաքային վարչութեան կազմած ցուցակում կայ դրանցից միայն 3000-ի անունը: Այդ ցուցակի թերի լինելը բացատրւում է նրանով, որ Փամբակից ցուցակ չի տարուել: Ցուցակները գիւղերում կազմւել են յետոյ, յիշողութեամբ ու առանձնապէս մեծ գիւղերում շատերի անունը բաց են թողել: Փախստականներից 1/10-ը չի արձանագրուել, շատերի ընտանիքների միւս անդամները, որոնք կկարողանային տեղեկութիւն տալ, գաղթել են Թիֆլիս կամ նոյնպէս գերուել: Բացի սրանից Օսմանեան կառավարութիւնը յայտարարել է քաղաքում որ բոլոր զինուորականները ներկայանան, խոստանալով բոլորին ուղարկել Թիֆլիս: Ներկայանում են մօտ 800 հոգի: Սրանց տանում են Ջաջուռ, երբ սկսւում են Ղարաքիլիսայի կռիւները ուղարկում են Ղարս ու էրզրում: Գերիների մի մասը կոտորուել է ճանապարհին: Շատերին գազանային, սոսկալի տանջանքներով սպանել են գերութեան վայրերում ու աշխատանքների ժամանակ: Գերութիւնից վերադարձած Յովհաննէս Գրիգորեանը, զինուոր Խնուսի գնդի, որ գերի էր ընկել Ալէքսանդրապոլի կռւին, Կազաչի պօստում և տարուել էրզրում ու ծառայել տաճկական ծառայութեան մի հայազգի բժշկի մօտ, վկայում է, որ հայ գերիներից շատերին քար են կրել տալիս եղել ու հէնց իրենց կրած քարերով սպանելիս են եղել նրանց: Եզիդի գերիներին կենդանի թաղել են իրենց իսկ փորած գերեզմաններում:

Գերիներին պահել են քաղցած, ծարաւ ու մերկ: Թէյ, տաք կերակուր, փող նրանք բոլորովին չեն ստացել: Ապրել են իրենց շորերը ծախելով ձեռք բերած չնչին գումարով: Նրանց ծեծել են անխնայ կերպով, այպանել ու երբէք չեն խնայել նրանց մարդկային արժանապատուութիւնը: Նրանցից շատերին, որ երբէք զինուոր չեն եղել կամ չեն եղել էրզրումում, մեղադրելով մահմեդականների կոտորածնե-րի մասնակցելուն, բանտարկել են տանջել: Շատերին 101 տարուայ բանտարկու-թեան դատապարտել: Քնել են խոնավ գետիններին, անասունների հետ: Ու այս-պէս վարվել են ոչ միայն զինուորների այլև սպաների հետ: Վերադարձած սպանե-րի ու զինուորների դրութիւնը միայն սոսկում է առաջ բերում: Նոյնիսկ այստեղ հայ ազգաբնակչութեան և իմ աչքի առաջ վերադարձած գերիներին ու զինուորներին տեղաւորում էին խոնաւ գոմում, զուրկ սնունդից ու ամեն հարմարութիւնից և իմ բազմակի դիմումներից յետոյ միայն նրանց տեղափոխեցին աւելի յարմար բնա-կարան, թոյլ տուեցին բաղնիս տանել, որոշ օգնութիւն ցոյց տալ դրամով, հագուս-տով և այլն: Իմ դիմումը՝ թոյլ տալ հիւանդներին մի քանի օր մնալ իրենց ծնողների մօտ, մերժուեց: Խնդրեցի թոյլ տալ հայկական գնացքով ճանապարհել նրանց Երևան ու երևակայեցէք, որ այդ ասպետները վիրաւորական համարեցին այդ իրենց համար: «Մեր սրբազան պարտքն է նրանց տեղ հասցնել, մեզ այդ հաճոյքից մի զրկի»: Աւելի սոսկալի հեգնանք չի կարող լինել քան, «սրբազան պարտքը» մարդ բորենիների բերանում: Իմ բազմակի դիմումներին, վերադարձնել հայ գե-րիներին, ուղարկել նրանց, նաև գերության մէջ մեռածների ցուցակները, բարե-լաւել այն գերիների դրութիւնը, որոնք զանազան յանցանքների մէջ մեղադրուելով, անհնարին են համարում ազատել այժմ, ստանում եմ պատասխան, որ ցուցակ-ները կազմած և ստուգած չեն, սակայն թող Հայաստանի ներկայացուցիչը հան-գիստ մնայ, ձերբակալուածների վերաբերմամբ կգործադրուի արդարութիւն:

Արդարութիւն գործադրել խոստանում է Շէֆքի փաշան, որը անմիջական հեղինակն է Արևելեան ու Արևմտեան Շիրակի հայ ազգաբնակչութեան վերա-բերմամբ գործադրուած բոլոր գազանութիւնների ու բռնութիւնների, որի կարգա-դրութեամբ, ըստ որոշ տեղեկութիւնների, մօտ 4.000 հայ գերիներ ուղարկուած են Երզնկայ այստեղի մահմէդականների վրեժի զգացմունքին յագուրդ տալու համար:

Գերիներին վերադարձնելու համար ինձանից առաջ դիմել է քաղաքագլուխ Լ. Սարգսեանը, անթիւ անգամ անձամբ, բանաւոր, առանձին գրութիւններով դի-մել եմ Խալիլ ու Շէֆքի փաշաներին, սակայն այդ դիմումները հետևանք չեն ու-նեցել: Միայն քաղաքական դրութեան փոխուելուց յետոյ սկսել են ազատել գերի-ներին: Վերջին իմ դիմումին՝ ազատել հայ գերիներին, 9-րդ բանակի հրամանա-տար Շէֆքի փաշան, պատասխանեց, որ իր զօրքերի տեղաւորութեան ռայօնում

այլևս ոչ մի գերի հայ չի մնացել և դրա մասին կրկնակի դիմումները այլևս աւելորդ են: Պէտք է ասեմ, որ առանձին գումար չլինելու պատճառով ես զրկւած էի վերադարձող հայ գերիներին հարկաւոր օգնութիւնը ցոյց տալու հնարաւորութիւնից:

**ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐ:** Մինչև Ղարաքիլիսայի Օսմանեան զօրքերի կողմից գրաւելը քաղաքում մնացել էին մօտ 5.000 հայեր: Այդ թիւը կամաց-կանաց մեծանալով այժմ հասաւ 45.000-ի: Վերադարձել են մօտիկ տեղեր փախածները, մօտ 10-15.000 Ղարաքիլիսայից, իսկ յետոյ տաճիկներից ծածուկ Թիֆլիսից, Երևանից և այլ վայրերից: Քաղաքում եղած հայերը միայն տեղացիներ չեն, կան բազմաթիւ փախստականներ Ղարսի, Սարիղամիշի և Տաճկահայաստանի շրջաններից: Կան նաև գաւառից, որոնք եկել են քաղաք՝ իբրև աւելի ապահով վայր: Քաղաքից փախել են հայերը ոչ միայն կռւի օրը, այլև յետոյ, մինչև վերջին օրերս, երբ քաղաքական դրութիւնը աւելի պարզւեց և ակնյայտ դարձաւ, որ տաճիկները հեռանալու են շրջանից, շարունակւում էր գաղթը դէպի Թիֆլիս: Գնում էին բոլորը, առանձնապէս ինտելիգենցիան, վերադառնում էին չքաւորները, որոնք Թիֆլիսում ու Երևանում ապրելու հանրաւորութիւն չունէին: Վերադարձը կապւած էր անօրինակ դժւարութիւնների հետ, անցնում էին սահմանը գաղտնի վտանգի ենթարկելով կեանքը,ստացւածքն ու պատիւը, երկաթուղով եկողները թոչում էին գնացքից քաղաքից հեռու, շատ անգամ ձերբակալւում էին: Ձերբակալւում էին նաև կայարանում կանայք, երեխաներ, շատ անգամ բռնաբարւում, տանջւում ապա կրկին վերադարձւում Թիֆլիս կամ Երևան: Հայկական գնացքները շղթայւում էին զօրքով, դուրս չէին թողնում ոչ ոքի, դէպքեր են պատահել, երբ չեն թողել քաղաք նոյնիսկ Օսմանեան ներկայացուցիչներից ստացած վավերական անցագրերով: Այդ եղել է կրկին Շէֆքի փաշայի կարգադրութեամբ: Կռիւների ժամանակ բնակիչներից դատարկւել են մօտ 30 գիւղ: Բնակիչների մի մասը տեղաւորվել է քաղաքում, իսկ միւսները՝ շրջակայ գիւղերում: Շնորհիւ քաղաքային վարչութեան դիմումների, նրանց մի մասը տեղաւորւել են գիւղերում, մինչև վերջին օրերս մնում էին դեռևս 4-5 գիւղ, որոնց բնակիչները չէին կարող վերադառնալ, որովհետև այդ գիւղերում հաստատւել էին Երևանի և էջմիածնի շրջաններից եկած քիւրդերը եւ թաթարները, որոնք տիրացան ոչ միայն գիւղերին այլև շարժական գոյքերին ու ցանքսերին:

Փախստականների վերադարձի թոյլտւութիւն ստանալու իմ ջանքերը մնացին անհետևանք: Յաջողութիւն ունեցել են միայն իմ մասնակի դիմումները, երբ թողել են քաղաք կայարանում առանց անցագրի կամ անցագրով ձերբակալւածներին, երբեմն հարիւրներով, յաջողւել է երբեմն փոքրիկ խմբերի կամ անհատների մուտքը թոյլատրել: Վերոյիշեալ 4-5 գիւղի մասին իմ միջնորդութիւնները

մնացին անհետևանք և ինձ շատ քաղաքավարի, սակայն պարզ հասկացնել տին, որ ես իրենց «ներքին գործերին» չխառնուեմ քանի որ Օսմանեան կառավարութիւնը անաչառ և արդար վերաբերմունք է ցոյց տալիս դէպի բոլոր հպատակները: Իմ դիմումներին՝ թոյլ տալ հայրենիք վերադառնալու Ալէքսանդրապօլի և Ախալքալաքի հայ գաղթականութեանը, Շէֆքի փաշան նախ պատասխանեց, որ կխորհի, իսկ մի քանի օրից յետոյ թոյլ տուեց վերադառնալ, խոստանալով այդ առանձնապէս Ախալքալաքի շրջանի գաղթականներին մարդասիրաբար կարելի օգնութիւնը ցոյց տալ: Մի երկու օրից յետոյ, Ախալքալաքից բժ. Բաղդասարեանից հեռագիր ստացանք, որ գաղթականութիւնն արդէն վերադառնում է, 11.000-ից աւել արդէն եկել են, մնացածները գալիս են հարկավոր են օգնութեան միջոցներ: Միջոցներ չունենալու պատճառով չկարողացանք այդ անել:

**ՀԱՐԿԵՐ:** Ինչպէս բոլոր գրաւած վայրերում, այսպէս էլ մեր շրջանում Օսմանեան կառավարութիւնը յայտարարել էր, որ գիւղացիները իրենց բերքի 3/8-ը պիտի յանձնեն կառավարութեանը 1/8-ը իբրև աշար (հարկ) ձրի, իսկ 2/8-ը զօրքի պէտքերի համար (մուբայա) վճարով կառավարութեանը որոշած գնով ցորենը՝ 33ռ., իսկ գարին՝ 16ռ.՝ փութը: Բերքն այս տարի եղել է ամենուրեք աներևակայելի առատ, այսպիսի բերք Շիրակում ոչ ոք չի յիշում: Սակայն ցանքսերի մի մասը ոտքի տակ փչանում է գաղթի ժամանակ, այդ տեղերում տաճիկ ասկեարներն ուտեցնում են իրենց անասուններին, քուրդ գաղթականները տիրանում են մի շարք գիւղերի ցանքսերին, մասամբ էլ փչացրել է կարկուտը: Ու մնացածից էլ սկսում են հաւաքել մուբայան ու աշարը: Սկզբում հաւաքում են միայն իրենք, յետոյ քաղաքային վարչութեան դիմումի համաձայն կազմւում են կոմիսիաներ, որոնց մէջ մտնում են և վարչութեան մարդիկ: Քաղաքային վարչութեան բոլոր դիմումները, որոշ գիւղերից չվերցնել մուբայան ու աշարը, կամ գոնէ մուբայան մնում են անհետևանք: Ղարսի շրջանում, որի ցանքսերը շատ քիչ են տուժել մերի վերաբերմամբ, ներւում է մուբայան, իսկ մեր շրջանի համար Շէֆքի փաշան կտրուկ և որոշ հրաման է տալիս հաւաքել անպայման: Սկզբում կարգադրւում է հաւաքել բացի այդ 3/8-ից 1/8-ն էլ հաւաքել հասարակական ամբարների համար, միայն քաղաքային վարչութեան դիմումի համաձայն ներւում է այդ: 3/8-ը որոշում են աչքի չափով, շատ տեղերում վերցնում են աւելին, քան նշանակւած է:Սկզբում, երբ գիւղացիներից մի քանիսը փորձում են թագցնել բերքի մի մասը, սոսկալի ծեծի են ենթարկւում և գրաւում ամբողջ բերքը: Կարկուտի խփած տեղերում հարկի երեք ութերորդը որոշւում է ծղոտի չափով: Բոլորովին բերք չունեցողից վերցրել են կանխիկ դրամով, նոյնիսկ մուբայան: Աշարի և մուբայայի հաւաքումը ամեն տեղ կատարւել է ծեծով ու բռնութիւններով, կատարւել են բազմաթիւ բռնաբարութիւններ: Այդ հաւաքման մէջ զզւելի դեր են խաղացել հայ մուխտար-

ներից ու բաշմուխտարներից շատերը, որոնք պայմանաւորուած ասկեարների հետ. շատ դէպքերում վերցրել են գիւղացիներից ամբողջ բերքը և այժմ լցրել իրենց ամբարները կամ ծախել: Բացի սրանից գիւղացիները ստիպւած են եղել սոսկալի կաշառքներ տալ այդ մուխթարներին, ասկեարներին և զապութներին, շաբաթներով կերակրել իրենց հաշւին նրանց ու նրանց անասուններին: Կան տեղեր, որոնց տւած կաշառքը տասնեակ հազարների է հասնում: Հաւաքած բերքը կրել են ու յանձնել կառավարութեանը գիւղացիք իրենց սայլերով, իսկ վերջերս՝ ասկեարները՝ ջորիներով:

Այս բոլորի դէմ բազմիցս բողոքել է քաղաքային վարչութիւնը, իսկ ներկայացուցչութիւն հաստատւելուց յետոյ դիմել եմ և ես, սակայն անհետևանք: Միայն վերջերս քաղաքական դրութեան փոփոխմամբ ներւեց մուբայան և յետոյ էլ աշարը այն գիւղերի, որոնք դեռ չեն տուել: Աշարը համարեայ բոլորը տուել էին, իսկ դեռ չյանձնած մուբայան բաւական մեծ քանակութեամբ էր: Այդ կարգադրութիւնից յետոյ շատ տեղերում զապութներն ու ժանդարմները փորձում են հաւաքել մուբայան, սակայն ամեն անգամ դիմել եմ Տեղական իշխանութեան նախագահին, նրա համապատասխան կարգադրութիւն ուղարկել տուել այդ գիւղերը և ազատել մուբայան, որը տանելուց յետոյ վերադարձնել չէր լինի: Այսպիսով ազատւել է միայն Մաստարա գիւղում ամբարած 30.000 փութ հացահատիկը: Անգնահատելի է այս խնդրում քաղաքային վարչութեան և մասնաւորապէս Մկրտիչ Ղազարեանի դերը: Նա շարունակ դիմել է, խնդրել, շրջել գիւղերը, քննել ապօրինութիւնները, հեռացնել տւել ապիկար պաշտօնեաներին: Այս բոլորին պէտք է աւելացնել նաև այն, որ այս հսկայական քանակութեամբ հաւաքած հացահատիկը, դարմանը, կարտոֆիլը և այլն մեծ մասամբ գողացւել է և ծախւել առաւելապէս թաթարներին, որոնք այժմ հեղեղել են շուկան ալիւրով, որը ծախւում է սոսկալի գներով…:

**ԴԱՏ ԵՎ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹԻՒՆ:** Ինչպէս գրել եմ իմ զեկուցումների մէջ տեղումս պետական դատարան չի եղել: Քաղաքային Վարչութեան կից կազմակերպուած է միայն դատաստանական ատեան, որը քննում է իրաւաբանական բնոյթ կրող թեթև վէճերն ու յանցանքները: Վեհիբ ու Շէֆքի փաշաները քաղաքային վարչութեան շրջանի դիմումներին խոստացել են հիմնել դատարան, մշակել են նոյնիսկ պայմանները (իրենք նշանակում են նախագահ, դատախազ և քննիչ, անդամներն ընտրւում են քաղաքացիներից) սակայն մինչև օրս քաղաքն ու գաւառը առանց դատարանի է մնացել: Դատարան գոյութիւն ունի միայն Ղարսում: Սակայն այդ արդարադատութիւնը թէ այստեղ ժանդարմեայի պետի ու տեղական իշխանութեան նախագահի և գուցէ աւելի Ղարսում, մի արդարադատութիւն է, որ իբրև ծաղր է հնչում, նոյնիսկ այդ օրինակ արդարադատութեան սովոր տաճիկի բե-

բանում: Դա անարդարութեան, կաշառակերութեան և անզուսպ բռնակալութեան ու կամայականութեան վակխանալիա է: Տասնեակներով անմեղ մարդիկ կասկածով կամ մատնութեամբ ձերբակալուել են, ուղարկուել Ղարս սոսկալի տանջանքների ենթարկուել ու գնդակահարուել ամիսներով պահուել են դժոխային պայմաններում, առանց իմանալու, թէ ինչումն են մեղադրուում: Իսկ այստեղ կատարուել է մի անընդհատ խայտառակութիւն, որը անուն չունի: Կաշառք տալով կարելի է եղել ստիպել տանտիրոջը առանց վճարի ծախել տունը թաթարին, կարելի է եղել մարդ սպանել, վիրաւորել և ապա ձերբակալել տալ վիրաւորուածին, փողային վեճերը շատ հեշտութեամբ են վճռուում՝ կանչում է ժանդարմերիայի պետը իր մօտ պարտապանին հրամայում է վճարել պարտքը, փողը վերցնում է ու ճանապարհ դնում, իսկ փողը դնում է իր գրպանը: Վիճող կողմերը մնում են զարմացած այս կարգի անարդարութիւնից: Ու այս տեսել է ամբողջ 6 ամիս, էս արդէն նրանց «ներքին գործն է» և ես իրաւունք չունէի բողոքելու: Միայն շնորհիւ լաւ յարաբերութիւնների, որ անհրաժեշտ էր հաստատել տեղական պաշտօնէութեան հետ այս կամայականութեան ու քմահաճոյքի երկրում, ամեն անգամ կարողացել եմ անմեղներին բանտից ազատել, թոյլ չտալ Ղարս ուղարկել, իսկ իմ դիմումներով Շէֆքի փաշային, Ղարսի բանտից ազատել եմ տուել մի քանի տասնեակ բանտարկեալների:

**ԴԵՄԱՐԿԱՑԻԱ (ՍԱՀՄԱՆԱԶԱՏՈՒՄ)**: Սահմանների խնդիրը ընդհանուր է և այս խնդրում Օսմանեան կառավարութեան կամայականութիւնները ՀՀ համար չափազանց ստորացուցիչ և արժանապատուութիւնն ու իրաւունքերը չյարգող գործելակերպը աւելի ծանօթ է ձեզ, քան ինձ: Իմ կառավարութեան յանձնարարութեամբ դիմել եմ Խալիլ փաշային՝ խնդրելով ըստ Բաթումի դաշնագրի անվիճելիօրէն ՀՀ անցնող Ուջան, Ներքին-Այլանլու, Զէյվա, Արևելեան Քելանի և Արալըղ գիւղերից հեռացնել օսմանեան զօրքը և յանձնել հայերին, Խալիլ փաշայից ստացել եմ միայն խուսափողական պատասխան, որ հաշտութեան պայմանագրի պատճէնն իր մօտ չունի, կդիմի այդ մասին և ստուգելուն ու մեր պահանջի իրաւացի լինելուն հաւաստիանալուն պէս կհրամայի անմիջապէս դատարկել և յանձնել հայերին, իսկ հաւաքած հարկը վերադարձնել գիւղացիներին: Ախալքալաքի հայ և թաթար ազգաբնակչութեան մէջ որոշ համաձայնութիւն կայացնելու և Ախալքալաքի շրջանը Հայաստանին յանձնելու համար բանակցութիւններ եմ վարել Ախալքալաքի և Ախալցխայի թաթար ժողովրդի ներկայացուցիչների հետ: Օսմանեան պաշտօնէութեան սանձարձակութեան, մասամբ էլ նպաստել է այն, որ երկար ժամանակ տեղումս չի եղել ՀՀ ներկայացուցիչ, որի ներկայութիւնը կարող կլինէր զսպել նրանց կամայականութիւներն ու բռնութիւնները:

**ՔԱՂԱՔԱՅԻՆ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹԻՒՆ:** Ի վերջոյ չեմ կարող մի երկու խօսք չասել

Ալէքսանդրապոլի քաղաքային վարչութեան և մասնաւորապէս քաղաքագլուխ Լ. Սարգսեանի մասին: Երբ նախկին քաղաքային վարչութիւնը հեռացաւ քաղաքից ու մնացողներից ամեն մէկը ահով էր դիտում մօտիկ ապագային, սպասելով անխուսափելի կոտորածի ու կորուստը մնացածների, քաղաքագլուխ Լևոն Սարգսեանը և Մկրտիչ Ղազարեանը, որոնց անձնական շատ քիչ բան էր կապում քաղաքի հետ միայն նահատակւող անգլուխ մնացած ժողովրդին իրենց ուժերի չափ օգնելու համար, մնում են քաղաքում: Այն ինչ նրանք կրում են այս վեց ամսում, այս կամայականութեան և բռնութեան շրջանում, նրանց տոկունութիւնը, նրանց հուժկու և յամարձակ բողոքը այն բոլորի դէմ ինչ նոյնիսկ նրանց իրաւասութիւնից վեր էր և աւելի լայն բնոյթ էր կրում, այն անձնազոհ պաշտպանութիւնը ժողովրդի շահերի, որի պատճառով նրանք շարունակ հալածւել են և վտանգի ենթարկել իրենց կեանքը ու միայն հրաշքով կարողացել են այսօր խաւարի իշխանութիւնից դուրս գալ ու դուրս բերել իրենց խնամքին յանձնւած ժողովուրդը և հանգիստ սրտով դիմաւորել հայ զինուորներին և ՀՀ կառավարութեանը, այս բոլորը՝ նրանց անձնազոհութիւնը, ազնուութիւնը, կորովն ու համարձակութիւնը միայն խորին յարգանքի զգացմունք է զարթեցնում իմ մէջ ու այս բոլորի վրայ դարձնում եմ կառավարութեան ուշադրութիւնը: Քաղաքային ինքնավարութիւնը խոշոր օգնութիւն է ցոյց տւել նաև զանազան շրջաններից փախած գաղթականներին, որոնք ապաստանել են քաղաքումս բանալով նրանց համար որբանոց, հանրակացարան և այլն: Այս ձեռնարկութիւններին աջակցելու համար նա արել է դիմումներ՝ բոլոր քաղաքացիներին և հասարակական հիմնարկութիւններին: Ներկայացուցչութիւնս միջոցներ չունենալու պատճառով չի կարողացել արձագանք տալ այդ կոչերին:

Ներկայացուցչական կազմը սկզբից մինչև օրս
Ներկայացուցիչ՝ Գէորգ Խոյեցեան
Օգնական՝ Բէզզատեան Սարգիս, որ եկաւ մինչև մի ամիս յետոյ և
դեռ չստացած իր պաշտօնը՝ ետ կանչւեց իր զորամասը:
Գրագիր և հաշւապահ՝ Աւետիք Աբաջեան
Առանձին յանձնարարութիւններ կատարող՝ Յովհաննէս Տայեան
Սուրհանդակ և գրագիր՝ Վահան Բեբուրեան
Գրագիր՝ Վարոս Տէր Յարութիւնեան
Ծառայ՝ Սամսոն Յովսէփեան
Քարտուղար՝ Սարգիս Խաչատրեան
Ներկայացուցիչ Գ. Խոյեցեան
ՀԱԱ ֆոնդ 200, ցուցակ 1, գործ 126, թ. 90-96: Ինքնագիր:

## N 11
## Հատված թուրքական զորքերի հեռանալուց հետո Ալեքսանդրապոլի ռազմական և հասարակական նշանակության հաստատությունների վիճակի մասին Դիլիջան-Ղարաքիլիսայի զինվորական շրջանի պետի զեկույցից[1]

1918թ. դեկտեմբերի 7-10-ն ընկած ժամանակահատվածում հատուկ հանձնաժողովը (կազմ՝ քաղաքային վարչության անդամ Ա.Չախմախսզյան, քաղաքային ինժեներ՝ Լ.Ջիթողցյան, հայկական հյուպատոսության ներկայացուցիչ Վ.Բեբուրով և բանակի ներկայացուցիչ Գորբաչև) ուսումնասիրելով թուրքական զորքերի հեռանալուց հետո Ալեքսանդրապոլ քաղաքի ռազմական և հասարակական նշանակության հաստատությունների վիճակը եկավ հետևյալ եզրակացության.

**Ամրոցի հիվանդանոցը և դեղատունը-** դեղորայքը, բժշկական սարքավորումները, գրքերը և կահույքի մեծ մասը, ինչպես նաև դռներն ու պատուհանները տարվել են: Դեղատանը մնացած 2 պահարանները կոտրվել են: Հատակը ծածկված է աղբի հաստ շերտով:

**Հիվանդասենյակները-**մահճակալները, պահարանները և ողջ սպիտակեղենը թալանված են: Ասկյարները տարել են նույնիսկ միջանցքի պատերին կախված սրբապատկերները:

**Գրասենյակը-**թալանված է ամբողջությամբ:

**Հրետանային վարչությունը-**ողջ կահույքը, դռներն ու պատուհանները թալանված են:

**Եկեղեցին-**խաչերը, զանգերը, ինչպես նաև ներքին հարդարման պարագաները թալանված են:

**Ինժեներական վարչությունը-**ողջ կահույքը, գրքերը և նույնիսկ նախորդ տարիների գործերը թալանվել են: Թուրքերը տարել են նաև դռներն ու պատուհանները՝ ապակիներով:

**Զորանոցները-**թուրքերը տարել են ողջ կահույքը, դռներն ու պատուհանները:

**Երկաթուղային կայարանը-**ողջ կահավորանքն ու սարքավորումները թալանված են: Շարժական անձնակազմից մնացել է 12 անսարք շոգեքարշ (կարելի է 4-ը վերականգնել),97 վագոն-ցիստեռն և 27 վագոն-հարթակ, որոնցից շահագործ-

[1] Ալեքսանդրապոլի ռազմական և հասարակական նշանակության հաստատությունների վիճակի նախնական քննությունը կատարվել է 1918թ. դեկտեմբերի 7-10-ն ընկած ժամանակահատվածում: Դրա արդյունքները արձանագրվել և փոխանցվել են ՀՀ ՆԳՆ դեկտեմբերի 31-ին: Փաստաթղթի պատճենը 1919թ. հունվարի 14-ին ուղարկվել է ՀՀ ԱԳՆ (Մանրամասն տե՛ս ՀԱԱ ֆոնդ 201, ցուցակ 1, գործ 59, թ. 1-168):

ման ենթակա են միայն 5-ը:

**Դեպո**-ողջ գույքը թալանվել է: Մնացել է մեկ նավթային շարժիչ:

**Փոստ-հեռագրատունը**-բոլոր սարքավորումները, կահույքը, ինչպես նաև հեռագրալարերը թալանված են: Թուրքերը տարել են նաև դռներն ու պատուհանները՝ ապակիներով: Ողջ գույքից մնացել է միայն 500 բացիկ:

**Հաշվապահությունը**-թալանվել է ողջ գույքը՝ այդ թվում նաև վառարանները: Թուրքերը տարել են նաև նախորդ տարիների ֆինանսական գործերը:

**Գավառային կոմիսարիատ, քաղաքային զինկոմիսարիատ, քաղաքային հեռախոսակայանը, իգական գիմնազիան, բանկերը, բանտը**-ամբողջովին թալանվել են:

**Իսկականի հետ ճիշտ է**
**քաղաքային վարչության անդամ Ա. Չախմախսզյան,**
**քաղաքային ինժեներ՝ Լ. Զիթողցյան,**
**հայկական հյուպատոսության ներկայացուցիչ Վ. Բեբուրով**
**բանակի ներկայացուցիչ Գորբաչև**
**ՀԱԱ ֆոնդ 201, ցուցակ 1, գործ 59, թ. 2-3: Թարգմանություն ռուսերենից:**

## N 12
## Հատված Հայկական «Հայրենակցական Միությունների» կենտրոնական խորհուրդի Կովկասում Դաշնակից պետությունների ներկայացուցիչներին ներկայացրած զեկուցագրից
## Դեկտեմբերի 16

Կարսի հանձնումից հետո տեղի բնակչությունը՝ հիմնականում Կարսի և Կաղզվանի հայեր, ինչպես նաև այնտեղ մնացած արևմտահայությունը, մինչև վերջին թելը թալանված տեղի մահմեդական ավազակախմբերի կողմից, խուճապահար փախավ դեպի Ալեքսանդրապոլ: Վերջինիս զինագրավումից հետո փախստական այս զանգվածը փորձեց անցնել Փամբակ, սակայն ճանապարհին, ապա նաև Մեծ Ղարաքիլիսայում կոտորվեց թուրքական կանոնավոր զորքերի կողմից: Նույն ճակատագրին արժանացավ նաև Ալեքսանդրապոլ քաղաքի և Արևելյան Շիրակի ազգաբնակչությունը, որ հանկարծակի գալով թուրքական ռմբակոծությունից փորձել էր փրկություն գտնել Փամբակի գյուղերում:

Այստեղ թուրքական կանոնավոր զորամասերը կատարեցին աննկարա-

գրելի արաքներ. կանանց ու աղջիկների բռնաբարություն, երեխաների պղծում, նախապես առանձին խմբերի բաժանելուց հետո տղամարդկանց զանգվածային և մեթոդական ոչնչացում: Հարյուրավոր վկաներ խելագարվեցին, չկարողանալով հանդուրժել այդ վայրագությունները: Ջրհորները, հորերը, ձորերն ու գետերը առայսօր լի են զոհերի նեխած դիակներով:

Տեղական բնակչության այն մասից, որը չէր հասցրել փախչել, ավելի քան 10.000 երիտասարդներ քշվեցին Էրզրում և Կարս, որտեղ զոհվեցին թուրք ասկյարների գնդակներից, հարվածներից, սովից, ցրտից և հիվանդություններից: Այդ դժբախտներից միայն մի քանի հարյուրը կարողացավ վերադառնալ: Թե ինչ մասշտաբներ ընդունեցին թուրքական վայրագություններն Ալեքսանդրապոլ քաղաքում և գավառի գյուղերում կարելի է պատկերացնել հետևյալ վիճակագրական տվյալներից. Օրինակ՝ Իլլի Ղարաքիլիսա գյուղի 1500 բնակիչներից ողջ մնաց միայն 200-ը: Առևանգվեցին ու բռնաբարվեցին առնվազն 5000 կանայք ու աղջիկներ: Սրանց մի մասը չդիմանալով թուրքական վայրագություններին ու անպատվությանը՝ թույն խմելով վերջ տվեց իր կյանքին, շատերը վախենալով հետ վերադառնալ՝ ընդունեցին Իսլամ:

Նույնը տեղի ունեցավ նաև Ալեքսանդրապոլի գավառի Փամբակի գավառակում: 28 հայկական գյուղերից չավերվեց ու չթալանվեց միայն Համզաչիմանը (թուրքական զորքը հասավ մինչև Համզաչիման ու կանգ առավ): Միայն Ղըշլաղում թուրքերը սպանեցին 250 մարդ, Պարնիում՝ 150 մարդ, Բզովդալում՝ 200 և այդպես շարունակ:

Հայ ազգաբնակչության զանգվածային ու մեթոդական բնաջնջումը, թալանը, բռնաբարությունը, գերեվարությունը, անվարձահատույց հարկադիր աշխատանքը շարունակվեց երկար ու ձիգ վեց ամիս՝ Ալեքսանդրապոլի գավառի օսմանյան զինագրավման ողջ ընթացքում:

**Ստորագրություն՝**

**ՀԱԱ ֆոնդ 227, ցուցակ 1, գործ 4, թ. 1-12: Թարգմանություն ռուսերենից:**

## N 13
## Ալեքսանդրապոլի գավառում ՀՀ ներկայացուցիչ Գ. Խոյեցյանի ամփոփիչ զեկուցագիրն ԱԳ Նախարարին՝ ներկայացուցչության գործունեության մասին
## 30 հունվարի 1919թ. Ալեքսանդրապոլ

**ԳԵՐԻՆԵՐ:** Դեռ անցեալ թւի սեպտեմբերի սկզբներին, երբ առաջին անգամ ներկայացայ Խալիլ փաշային, իմ առաջին խնդիրս եղաւ ազատել հայ գերիներին, որոնք ըստ Ալէքսանդրապոլում գեներալ Տէր-Յակոբեանի նախագահութեամբ գործող մեր պատգամաւորութեան և Օսմանեան զօրահրամանատարութեան ներկայացուցիչների միջև դեռ յունիս ամսին կայացած համաձայնութեան զօրութեամբ արդէն արձակւած պիտի լինէին: Խալիլ փաշան խոստացաւ անմիջապէս արձակել: Սակայն հինգ ամիս է անցել այդ օրից և մեր գերիները մնում են Տաճկաստանում՝ Ղարսից մինչև Բայբուրդ, իսկ ռուս-տաճկական պատերազմից հայ գերիներ կան նոյնպէս Դիարբէքիրում և այլուր: Մինչ մեր բազմակի դիմումներին ի պատասխան Շէֆքի փաշան խնդրում է իրեն չանհանգստացնել, քանի որ հայ գերի չի մնացել 9-րդ զօրաբանակի շրջանում, գերութիւնից տասնեակներով փախած հայերի ցուցմունքով,այստեղ հայ գերիների թիւը հարիւրների, նոյնիսկ հազարների է հասնում: Նրանց պահում են մերկ, քաղցած. ***«Առաջ խնձորի մեծութեամբ հաց էին տալիս, հիմա այդ էլ չեն տալիս, մի քիչ շորւայ ենք ստանում, գերիներին անասունների նման լծում են, ապրանք տեղափոխում, ծեծում»***: Վերջին եկած գերիների պատմելով իրենց ահագին խմբերով բերել են Սարիղամիշ և բաց թողել: Աւելի ուժեղները եկել հասել են, իսկ մեծ մասը ուժից ընկած, սոված ու մերկ չեն կարողացել գալ, սառչում են ցրտից, մեռնում քաղցից:

**ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐ:** Առաջին խնդիրը տաճիկների հեռանալուց յետոյ, որն իր անմիջական վճիռն էր պահանջում՝ իշխանութեան կազմակերպումն էր: Տեղական ինքնապաշտպանութեան համար կազմւած խմբերը հէնց դեկտեմբերի 4-ին, տաճիկների հեռանալու օրը, իմ կողմից նշանակւած սպաների ղեկավարութեամբ քաղաքի հանգստութեան, կարգ ու կանոնի պահպանութեան և մասնաւորապէս տեղումս մնացած մահմեդականների վերաբերմամբ հնարաւոր էքսցեզների դէմն առնելու գործը ստանձնեցին, մինչև միլիցիայի կազմակերպումը:

Շրջանում անմիջապէս նոր մարմիններ ստեղծելը հնարաւոր չէր, ուստի առաջին ժամանակները շրջանն առանց իշխանութեան չթողնելու և անարխիայ չստեղծելու համար, թողնւեցին իրենց պաշտօններում մուխտարներն ու բաշ-մուխտարները: Այդ կարելի էր անել առաջին օրերը միայն, մինչև նոր պաշտօնեաների ընտրւելը, քանի որ այդ բաշ-մուխտարներից և մուխտարներից շատերի

տաճիկների օրոք կատարած զեղծումները միլիոնների են հասնում, շատերի խղճին շատ հայի արիւն է ծանրացած, շատերն անձամբ առաջնորդել են տաճիկ ասկեարներին ու օֆիցերներին իրենց գիւղացիների տները և աղջիկներին ու կանանց բռնաբարել տուել, մատնութիւններ կատարել և այլն: Այդ մարդկանց իրենց վարած պաշտօններում թողնելը, տեղիք կտար անցանկալի էքսցեզների, կստեղծէր անարխիայ շրջանում, հնարաւորութիւն կտար նրանց իրենց սխրագործութիւնների հետքերը թաքցնել և որ գլխաւորն է ազգաբնակչութիւնը այն համոզմանը կգար, որ ուժեղ և արդար իշխանութիւն չկայ, որ յանցաւորներն անպատիժ են մնում և որ աւելի լաւ է նորից խեղճանալ այդ սրիկաների առաջ, սիրաշահել, քան կռուել նրանց դէմ: Այդ առթիւ ես դիմեցի ներքին գործոց մինիստրին, խնդրելով լիազոր վերահսկիչ նշանակել այդ մարդկանց ապօրինութիւններն ու զեղծումները քննելու, որն անձամբ խոստացաւ քննիչներ ուղարկել:

Յանձնարարուեց գաւառական և քաղաքային ադմինիստարցիային գաղտնի քննութիւն կատարել այն անձանց գործունէութիւնը, որոնք մեղադրւում էին յօգուտ տաճիկների և ի վնաս մեր գործի, դաւաճանութեամբ, մատնիչութեամբ կամ այլ կերպ վարկաբեկւել էին և որոնց ցուցակները կազմած ունէինք դէռ տաճիկների օրով: Երբ այդ քննութիւնից ձեռք բերուեցին հանցանքները հաստատող տուեալներ և փաստեր, այդպիսինները պիտի ձերբակալւէին և ենթարկւէին օրինական պատասխանատուութեան և նրանց վերաբերեալ գործերը պիտի յանձնւէին դատախազին: Հսկողութիւն հաստատելու հրահանգ էր տրուած միլիցիային նաև գողերի և այլ քրէական յանցաւորների վերաբերմամբ:

Սակայն այս միջոցներով միայն չէր կարելի բաւականանալ, քանի դէռ քաղաքում չկային դատաստանական մարմիններ, որոնք կարողանային քննել տաճիկների տիրապետութեան ժամանակ կատարած օրինազանցութիւնները, թալանները և այլն, որոնք իրենց անմիջական օրինական լուծումն էին պահանջում, որպէսզի հնարաւորութիւն չստանային ինքնադատաստանի բնոյթ ստանալ: Այս նկատառումներով քաղաքում հիմնւեց ժամանակաւոր դատաստանական մի մարմին իմ նախագահութեամբ՝ առանց սահմանափակման, տաճիկների տիրապետութեան հետ կապւած քաղաքացիական ու թեթև քրէական յանցանքների քննութեան համար: Վերջին կարգի յանցանքները դատապարտւում են հասարակական պարտադիր աշխատանքի: Տեղումս հաշտարար դատարան հիմնելուն պէս, սոյն դատաստանական մարմինը վերջացրեց իր գործունէութիւնը:

**ՀՀ ներկայացուցիչ՝ Գ.Խոյեցեան**

**ՀԱԱ, ֆոնդ 200, ցուցակ 1, գործ 126, թթ. 134-136: Բնագիր: Ձեռագիր:**

## N 14

## Զ Ե Կ Ո Ւ Յ Ց Ի Մ

## Փամբակի և Լոռու շրջանների լիազոր Մ. Խանզադյանի

Անցյալ 1918 թ. դեկտեմբերի 7-ին, համաշխարհային պատերազմից հայ ժողովրդի կրած վնասների քննիչ հանձնաժողովի հանձնարարությամբ, Թիֆլիսից դեպի Փամբակ և Լոռվա հայկական մասը ճանապարհվեց մի կոմիսիա՝ բաղկացած հինգ անդամից, որ հրահանգ ուներ որոշելու շրջանների վնասները և քննելու ու պարզաբանելու, այն ոճիրները, որոնք կատարվել էին թուրքական զորքերի արշավանքի ժամանակ 1918թ. մայիս-հոկտեմբեր ամիսներին:

Կոմիսիայի անդամներից՝ Ա. Տեր-Հարությունյանին հանձնված էր որոշելու և ցուցակագրելու Արևելյան Փամբակի, այսինքն՝ Ղարաքիլիսայի շրջանի ինը գյուղերի, Ա. Շահբազյանին՝ Արևմտյան Փամբակի տասնութ գյուղերի և Ռ. Ենգիբարյանին՝ Լոռվա տասնհինգ գյուղերի ազգաբնակչության կրած վնասները: Կոմիսիայի չորրորդ անդամ Դ. Գավրիլովը պարտականություն ուներ քննելու և արձանագրելու ամբողջ Փամբակի քսանյոթ հայ գյուղերում կատարված սպանությունների, բռնությունների և բռնաբարությունների դեպքերը: Կոմիսիայի հինգերորդ անդամ Մ. Խանզադյանը բյուրոյից լիազորություն ուներ հսկելու աշխատանքների վրա և ուղղություն տալու կոմիսիայի գործունեությանը:

Կոմիսիան հասավ Մեծ Ղարաքիլիսա դեկտեմբերի 8-ին, հայ-վրացական պատերազմի նախօրյակին: Այս հանգամանքը ունեցավ բացասական հետևանքներ կոմիսիայի գործունեության համար: Պատերազմի հետևանքով երթևեկությունը երկաթուղու գծի վրա դադարեց մոտ երեք ամիս, և կոմիսիան ժամանակին չստացավ ո՛չ դրամ, ո՛չ լուսանկարչական թուղթ, որը չափազանց անհրաժեշտ էր Ղարաքիլիսայի շրջակայքում ցրված դիակույտերի լուսանկարները ունենալու համար: Այս բոլորի վրա եթե ավելացնենք փոխադրության միջոցների կատարյալ բացակայությունը շրջանում, հասկանալի կդառնա, թե ինչու դանդաղեց կոմիսիայի գործունեությունը, և նա նախորոշված ժամանակին չկարողացավ վերադառնալ Թիֆլիս:

Չնայած ծանր պայմաններին՝ թվել նրանց անտեղի եմ համարում, կոմիսիան ջանք չխնայեց բարեխղճությամբ կատարել իր վրա դրված պարտականությունը: Բյուրոյի հայեցողությանն եմ թողնում մեր ներկայացրած գործերի գնահատությունը:

Բյուրոյին ներկայացված են՝ անկետային տետրակներ Փամբակի շրջանից քսանյոթ հատ, Լոռվա շրջանից տասնհինգ հատ, անկետային անհատական թերթեր, արձանագրություններ և երկու կոմպլեկտ դիակույտերի լուսանկարներ, ա-

մեն մի կոմպլեկտը բաղկացած տասնչորս նկարից: Լոռվա և Փամբակի շրջանի լիազորները և քննիչ Գավրիլովը արդեն ներկայացրել են իրենց զեկուցումները և կատարած գործերը: Ա. Շահբազյանի բացակայության պատճառով տասնութ գյուղերի ստուգումը կատարել և ներկայացրել եմ ես: Պիտի ասեմ, որ այս շրջանում վնասների որոշման գործը կատարվել է շատ բարեխիղճ և մանրակրկիտ կերպով, որովհետև Շահբազյանը շնորհիվ այդ շրջանի փոխադրության միջոցների համեմատաբար լավ դրության հնարավորություն ուներ անձամբ լինելու բոլոր գյուղերում և տեղն ու տեղը ցուցակագրելու վնասները:

Տեղին եմ համարում ավելացնել, որ Ալեքսանդրապոլի քաղաքային վարչության կողմից նշանակված Արամ Վիրաբյանը նախքան մեր գնալը բավականաչափ գործ էր կատարել նույն ուղղությամբ, թեև մի քիչ տարբեր ծրագրով, և մեր կոմիսիան բավականաչափ օգտվել է Վիրաբյանի՝ իր տրամադրության տակ դրած նյութերից:

Թուրքական զորքը ներս է խուժել Փամբակի շրջանը 1918թ. մայիսի 20-ին: Այդ զորքը Ջավիդ բեյի 2-րդ դիվիզիան էր, որի շարքերում մեծ թիվ էին կազմում քուրդ զինվորները, որոնք իրենց թալանի և արյունաբորբոք հակումներով ծանր հարված են հասցրել Փամբակի ազգաբնակչությանը: Որ թե՛ այս և թե՛ հետո եկած զորամասերի կատարած սպանությունները, բռնությունները և բռնաբարությունները չեն կրել տարերային բնույթ, չեն եղել զինվորների սանձարձակության հետևանք, այլ նրանք արդյունք են թուրք վարիչների կանխորոշած ծրագրի,-սա կասկածից դուրս է: Պարզ է միանգամայն, որ հրահանգված թուրք հրամանատարությունը նպատակ է ունեցել ուժասպառ անել իրենց բարեկամ չհամարող հայ ազգաբնակչությանը թե՛ ֆիզիկապես, թե՛ տնտեսապես: Որ տարերային բնույթ չեն կրել զորքերի արարքները, դա պարզ է այն հանգամանքից, որ թուրքական զորքերի շարքերում բոլորի վկայությամբ տիրում էր դաժանության հասնող դիսցիպլինա, և այդ զորքերը ամեն տեղ, նույնիսկ Ղարաքիլիսա, կռվից հետո մտել են հանգիստ և կարգ ու կանոնով:Կոտորածները բնավ անկարգ,պատահական բնույթ չեն կրել, այլ եղել են ծրագրված և կազմակերպված և տևել են երեք օր:

Ղարաքիլիսայում բռնությամբ և զանազան խորամանկ միջոցներով հարյուրավոր մարդկանցից բաղկացած խմբեր են հավաքել և գյուղից դուրս հանելով՝ գնդակահարել կամ սվինահարել են: Ղարաքիլիսայում սպանել են բոլոր հայ տղաներին ու զինվորներին, որոնք պարտությունից հետո կամ գերի են ընկել, կամ կամովին ապավինել են հաղթողի մեծահոգությանը: Այս վերջինները միամտություն են ունեցել կարծելու, որ իրենք կհամարվեն զինվորական գերիներ և դուրս են եկել իրենց թաքստի տեղերից և ներկայացել թուրք կոմենդանտին: Նույն տեղում կոտորված են բացի տեղացիներից, բազմաթիվ գաղթածներ Ղարսի և

Ալեքսանդրապոլի շրջաններից: Ընդհանուր առմամբ Ղարաքիլիսայի շրջակայքում գնդակահարված են մի քանի հազար մարդ. Քանի՝ ճիշտ թիվը պարզելու հնարավորություն չկա: Պետք է կարծել, որ այդ թիվը 3000-ից պակաս էր, թեև ոմանք հասցնում են մինչև 7000-ի (Այս թվի մեջ չեն մտնում սպանված տեղացիները, թվով 1470 հոգի):

Բյուրոյին ներկայացրած լուսանկարները միանգամայն պարզում են, թե ինչ ձևով են կատարվել սպանությունները. բոլոր զոհերը կապկպված են միմյանց թոկերով:

Այս ձևի կոտորածներ տեղի են ունեցել նաև Համամլուում, Հաջիղարայում, Դարբասում, Ղըշլաղում և Յաղուբլիում:

Մյուս գյուղերում սպանությունները մասսայական բնույթ չեն կրել: Սակայն մարդկային զոհերը պակաս չեն եղել և այստեղ գյուղերում. այստեղ թուրքերը իրենց ծրագիրը իրագործել են «մեղմ» ձևով: Արևմտյան Փամբակի գյուղերից գերի են վերցրել հարյուրավոր երիտասարդների, որոնք ոչնչացել են քաղցից, ծեծից և ուժից վեր աշխատանքներից Էրզրումի շրջանում:Սակավաթիվ վերադարձողներ պատմում են, որ նրանց բացի այլ տաժանելի աշխատանքներից, լծում էին սայլերին և քշում երկաթե ճիպոտներով: Էրզրում քշված 8000 գերուց Շիրակից և Փամբակից, վերադարձել են միայն մոտ 600 հոգի: Այս թվերը շատ պարզ են խոսում:

Թե՛ մեր շրջանում և թե՛ ամենուրեք առանձնապես հետամտել են տաճկահայերին, և ճանկ ընկածներից ոչ մեկը չի խուսափել մահից:

Բռնաբարությունները կրել են բառի ամենալայն իմաստով մասսայական բնույթ. Կան գյուղեր, որոնք հենց իրենց գյուղացիների խոստովանությամբ, ենթարկվել են լիակատար բռնաբարության (Նալբանդ գյուղը): Եղել ենմ դեպքեր, երբ բոլոր տղամարդկանց դուրս են քշել գյուղից և կանանց բռնաբարել: Ինչ ասել կուզի, որ բռնաբարության ենթարկվել են և ջահել աղջիկները, սկսած 8-10 տարեկանից և նորատի հարսները, սակայն սակավ չեն դեպքերը, երբ բռնաբարել են և պառավ կանանց: Հաստատվել են նաև արվամոլության բազմաթիվ դեպքեր: Բռնաբարություններին մասնակցել է նաև հրամանատարությունը:

Թալանի ենթարկվել է ամենայն ինչ, որ կարելի է թալանել՝ դրամ, թանկարժեք իրեր, կահ-կարասի, հագուստեղեն, մթերքներ և այլն:

Որովհետև Փամբակի ազգաբնակչությունը հանկարծակի եկավ, նա գրեթե ոչինչ չէր թաքցրել, և ամեն ինչ կորցրեց: Դրամը և թանկարժեք իրերը անցել են ասկյարների ձեռքը՝ շատ դեպքերում որպես փրկանք կամ մահից ու բռնաբարությունից ազատվելու և կամ «օրենքի» խստությունից խուսափելու համար: Դրամ կորզելու համար ասկյարները դիմել են բազմատեսակ խորամանկ միջոցների, և շատ քչերին է հաջողվել ազատել իր դրամը:

Թալանի են ենթարկված շրջանի անասունները: Այս թալանը կատարվել է ընտրությամբ. տարել են ջահել և առույգ անասունները, թողնելով վտիտներին: Տարել են գրեթե բոլոր ձիերն ու էշերը: Ասպիսով, Փամբակը, որ հարուստ անասնապահական շրջան էր համարվում, զրկվել է իր անասունների մեծագույն մասից: Պարենավորման ճգնաժամի և մթերքների կատարյալ բացակայության պատճառով մնացած անասունները մորթվում են: Կան գյուղեր, որոնք կերակրվում են բացառապես մսով (Էֆենդի): Այսպիսով, թուրքերի հեռանալուց հետո էլ անասունների ոչնչացումը գնում է սպառնական արագությամբ, և մինչ այժմ շարունակվող դրությունը սպառնում է իսպառ անասնազուրկ անել այդ շրջանը:

Փամբակը ինչ չափով անասնապահական, նույն չափով և երկրագործական շրջան է: Անցյալ 1918թ. առանձնապես մեծ տարածություններ էին ցանված, որովհետև գյուղացին միանգամայն հիմնավոր կերպով հաշվի էր առել թե ինչ վտանգ է սպառնում իրեն պարենավորման գործում՝ պատերազմի հետևանքով: Սակայն նրան վիճակված չէր իր ցանածը հնձելու. ցանքսերի մեծ մասը տրորվեց ձիերի ոտքերի տակ, մի մասն արածեցրին, իսկ ինչ որ փրկվեց, սրա 3/8 մասն էլ, իբրև բահրա, թուրք իշխանությունը դուրս տարավ երկրից: Փամբակի լեռնաշղթայի փոխ խոտհարքերը հնձել տվին հենց գյուղացիներին, նրանց սայլերով կրել տվին կայարանները և բառնալով վագոնները՝ դուրս տարան: Նույն վիճակին ենթարկվեց կարտոֆիլը, որը թե՛ որպես արդյունաբերություն, և թե՛ որպես սննդի առարկա կարևոր տեղ էր բռնում այդ շրջանում: Գաղափար տալու համար կարտոֆիլի արդյունաբերության չափի մասին, կասեմ, որ սովորական տարիներին միմիայն Համամլուի շրջանից արտահանվում էր մոտ 200 վագոն կարտոֆիլ: Իսկ այժմ ամբողջ շրջանը զուրկ է այդ նյութից, բացառությամբ Համզաչիմանի և երկու մոլոկան գյուղերի, որոնց դռների մոտ կանգ առավ թալանի ալիքը:

Գյուղատնտեսության երրորդ կարևոր ճյուղը, որ Փամբակում զարգացած էր և դրված ռացիոնալ հիմքերի վրա այնպես, ինչպես ոչ մի տեղ Կովկասում, մեղվապահությունն էր, որ վերջնականապես ոչնչացած պիտի համարել, եթե հաշվի չառնենք հատ ու կենտ փեթակները, մնացած այս կամ այն մեղվապահի մոտ: Շրջանում ոչնչացված է մոտ 6.500 մեղվի ընտանիք: Կոնկրետ գաղափար տալու համար այս կորստի չափի մասին կասեմ, որ այս տարվա բերքը ներկա գներով կարժենար ավելի քան 15.000.000 ռուբ.: Գյուղատնտեսության այս ճյուղը ամենից դժվար և ամենից ուշ վերականգնելին է:

Հիմնավորապես ոչնչացված են բոլոր դպրոցական գույքերը, գրադարանները, կոոպերատիվները: Քիչ բացառությամբ թալանված են և վատթար ձևերով սրբապղծված բոլոր եկեղեցիները:

Ներկայումս Փամբակում չի գործում ո՛չ մի դպրոց, ո՛չ մի կոոպերատիվ:

Շրջանի կուլտուրական կյանքին հասցրած հարվածը անչափ է:

Հանձնախմբի ներկայացրած վնասների գումարը իմ կարծիքով կրած վնասների մասին իսկական պատկերացում տալ չի կարող: Այդ վնասները շատ ավելի մեծ են, քան կարելի է տեսնել մեր ներկայացրած բլանկներում: Մեր ցույց տվածը անմիջական վնասներն են՝ 30.446.391 ռուբլ., հաշվի չեն առնված և ցույց չեն տրված այն մեծաքանակ վնասները, որ եղել են հետևանք թուրքերի ներկայության: Ամբողջ հինգ ամիս կյանքը իսպառ կանգ է առել, և զորքերով գրավված շրջանները նմանվել են բանտի, ուր ազգաբնակչությունը ենթարկվել է կատարյալ անգործության կամ կատարել է բռնի անվարձ աշխատանք թուրքերի համար: Այնինր տարվա 5-6 ամիսը աշխատավոր ձեռքերը միշտ կատարել են հազար ու մի տեսակ վարձու աշխատանքներ, գլխավորապես երկաթուղու գծի ու շոսեի վրա: Կանգ էր առել և առևտուրը, որ համեմատաբար խոշոր շրջանառություն ուներ: Այսպիսի վնասներ, որոնք ի նկատի չեն առնվել՝ կարելի է շատ թվել:

Պատկերը լրացնելու համար պիտի ավելացնել, որ ասկյարները ամբողջ հինգ ամիս ապրել են գյուղերի հաշվին և, բառի իսկական իմաստով, ոչնչացրել են ոչխար, հավ, ձու, յուղ, պանիր, կաթ և այլ մթերքները: Եվ այսօր հայ շինականի շեն օջախը կատարյալ ամայություն է ներկայացնում:

Ինչ որ ասվեց Փամբակի մասին, նույնը կարելի է կրկնել Լոռվա մասին՝ փոքրացված մասշտաբով: Այս շրջանում առանձնապես տուժել է Ջալալօղլին: Սպանված են բավականաչափ մարդիկ, քանդված ու այրված են շատ տներ, ոչնչացված են այդ շրջանում գործող բազմաթիվ կաթնատնտեսական գործարաններ: Քշել տարել են ընտիր տեսակի ցեղական բազմաթիվ կովեր, որով ուղղակի սպանվել է շրջանում տարածված և լավ հիմքերի վրա դրված այդ գեղեցիկ տնտեսությունը:

Մնացած գյուղերում թե՛ սպանություններ, և թե՛ բռնաբարություններ անհամեմատ քիչ են կատարվել: Այս շրջանում նույնպես իսպառ ոչնչացված է մեղվապահությունը, որը այստեղ հետին տեղը չէր բռնում գյուղացու տնտեսության մեջ և իր արդյունաբերությամբ արհամահելի չէր:

**ՀԱԱ ֆոնդ 202, ցուցակ 1, գործ 1271, թթ. 45-49: Պատճեն: Մեքենագիր**
**ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի արխիվ, Լեոյի ֆոնդ, ցուցակ 1, գործ 262, թթ. 1-4:**

# N 15

## Վիճակագրական տեղեկություններ Օսմանյան տիրապետության ամիսներին Ալեքսանդրապոլի գավառին հասցված մարդկային վնասների մասին[1]

| N | բնակավայրի անունը | սպանված | գերված | վերադարձած | կորած | N | բնակավայրի անունը | սպանված | գերված | վերադարձած | կորած |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| ԱՌԱՋԻՆ ԳԱՎԱՌԱՄԱՍ | | | | | | | | | | | |
| 1. | Ալեքսանդրապոլ | 84 | 33 | 9 | --- | 15. | Ջաջուռ | 27 | 45 | --- | --- |
| 2. | Դահարլի | 130 | 36 | 8 | --- | 16. | Աղքիլիսա | --- | 24 | 2 | --- |
| 3. | Բայանդուր | 12 | 15 | 6 | --- | 17. | Արըխվալի 3-րդ | 1 | 35 | 1 | --- |
| 4. | Ճլովխան | 17 | 17 | 1 | --- | 18. | Ղոնախղռան | 20 | 88 | 8 | --- |
| 5. | Ղարաքիլիսա Խլի | 400 | 577 | 44 | --- | 19. | Սարյար | 5 | 47 | 5 | --- |
| 6. | Թափադոլլակ | 2 | 90 | 7 | 16 | 20. | Թոփարլի | 5 | 47 | 5 | 7 |
| 7. | Դուզքյանդ | 4 | 30 | 7 | --- | 21. | Օրթաքիլիսա | 9 | 27 | 4 | --- |
| 8. | Դիրաքլար | 17 | 48 | 6 | --- | 22. | Քեյթի Մեծ | 43 | 19 | --- | --- |
| 9. | Քյափանակ Մեծ | 5 | 166 | 13 | --- | 23. | Քեյթի Փոքր | 14 | 26 | --- | --- |
| 10. | Քյափանակ Փոքր | 5 | 10 | ---- | --- | 24. | Դարբանդ | 27 | 14 | --- | --- |
| 11. | Չրախլի | 4 | 157 | 10 | --- | 25. | Ղանլիջա Ներքին | 22 | 1 | --- | --- |
| 12. | Բաղդատ-Դոլութ ախտ (եզդի) | 2 | 33 | 2 | --- | 26. | Ղանլիջա Վերին | 70 | 36 | --- | --- |
| 13. | Խանվալի | --- | 32 | 7 | --- | 27. | Կապս | 51 | 27 | 2 | --- |
| 14. | Հաջի Նազար | 3 | 53 | 8 | --- | | | | | | |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | | | | | | | 979 | 1733 | 155 | 23 |

[1] 1919թ. հոկտեմբերին պաշտոնական վիճակագրության այս տվյալները ՀՀ խորհրդարանի պատգամավոր Հակոբ Տեր-Հակոբյանի (Իրազեկ) խմբագրությամբ ու մեկնաբանություններով հրապարակվեցին «Յառաջ» օրաթերթում և հայ պատմագրության մեջ շուրջ մեկ հարյուրամյակ մնացին իբրև բացարձակ ճշմարտություն (Տե՛ս Իրազեկ, Տաճկական վայրագութիւնները Ալէքսանդրապօլի գաւառում, «Յառաջ» օրաթերթ, Երեւան, 1919, N 22, 17 հոկտեմբերի, էջ 1-2 ): Սակայն, արխիվային վավերագրերի, ժամանակակիցների հուշերի և պարբերական մամուլի հաղորդումների մեր կատարած համադրումը ցույց է տալիս, որ թուրքական վեցամսյա տիրապետության ընթացքում Ալեքսանդրապոլում, Արևելյան Շիրակի և Փամբակի գյուղերում կոտորվել է մոտ 20000 մարդ, ևս 6000-ը զոհ է գնացել սովին ու համաճարակային հիվանդություններին: Տարբեր պատրվակներով գերվել և կայսրության խորքերն է քշվել 15000 մարդ, որից վերադարձել է մոտ 3-400-ը, առևանգվել ու բռնաբարվել է ավելի քան 5000 կին և աղջիկ: Մոտ 1000 կին բռնի մահմեդականացվել է: Շատերը, չհամակերպվելով անպատվության հետ, ինքնասպանությամբ վերջ են տվել իրենց կյանքին:

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **ԵՐԿՐՈՐԴ ԳԱՎԱՌԱՄԱՍ** | | | | | | | | | | | |
| 1. | Իլխիաբի | 7 | 41 | 5 | --- | 19. | Ջանգիթափա | 3 | 18 | --- | --- |
| 2. | Քյավթառլի | 5 | 24 | 1 | --- | 20. | Մանջուխլի | 1 | 49 | 7 | --- |
| 3. | Ղազանչի | 4 | 10 | --- | --- | 21. | Քեշիշքենդ | 3 | 8 | --- | --- |
| 4. | Պարնի Փոքր | 1 | 12 | --- | --- | 22. | Մելիքքենդ | 10 | 5 | --- | --- |
| 5. | Ղասմալի | 2 | 29 | --- | --- | 23. | Ախղուլա | 2 | 42 | 5 | --- |
| 6. | Ղուլիջան | 1 | 4 | --- | --- | 24. | Ղըրխ-ղադ | 11 | 91 | 7 | --- |
| 7. | Ղոլղաթ | 2 | 9 | 1 | --- | 25. | Քոռբուլաղ | 13 | 66 | 8 | --- |
| 8. | Նորաշեն | 4 | 60 | --- | --- | 26. | Քիչիկ-Ջանգի | 21 | 67 | 7 | --- |
| 9. | Արըխվալի Մեծ | 5 | 53 | 6 | --- | 27. | Միրաք Մեծ | 8 | 140 | --- | --- |
| 10. | Արըխվալի Փոքր | 5 | 24 | 3 | --- | 28. | Միրաք Փոքր | **չկա** | **չկա** | --- | --- |
| 11. | Գյոզալդարա Հայկ. | 4 | 15 | --- | --- | 29. | Ղոնդաղսազ | 2 | 11 | --- | --- |
| 12. | Եգանլար | 7 | 72 | --- | --- | 30. | Ջոմուշլի Մեծ | 95 | 5 | --- | --- |
| 13. | Արթիկ | 30 | 80 | 7 | --- | 31. | Ջոմուշլի Փոքր | չկա | 16 | 1 | --- |
| 14. | Ղփչաղ | 38 | 5 | 1 | --- | 32. | Չոբանգերաքմազ | 15 | 35 | --- | --- |
| 15. | Ղարաքիլիսա | **չկա** | 3 | --- | --- | 33. | Փամպ Քրդական | 7 | 61 | 4 | --- |
| 16. | Բաշգյուղ | 15 | 25 | --- | --- | 34. | Ղուռիբողազ | 20 | **չկա** | --- | --- |
| 17. | Հաջի Խալիլ | 10 | 42 | 3 | --- | 35. | Ջարջառիս | 3 | 38 | --- | --- |
| 18. | Դանագիրմազ | 5 | 14 | --- | --- | 36. | Քարվանսարա | 35 | 18 | 6 | --- |
| **ԸՆԴԱՄԵՆԸ** | | | | | | | | **394** | **1192** | **72** | --- |
| **ԵՐՐՈՐԴ ԳԱՎԱՌԱՄԱՍ** | | | | | | | | | | | |
| 1. | Գյուրջիյոլ | 2 | 21 | 1 | --- | 14. | Ղայղուլի-Ղազանչի | 8 | 48 | 1 | 22 |
| 2. | Ճզրխլար | 17 | 28 | --- | 15 | 15. | Քոռաղբյուր | 16 | 23 | 1 | --- |
| 3. | Փալութլի | 5 | 6 | --- | 3 | 16. | Դարաքյոյ | 10 | 6 | 3 | --- |
| 4. | Բանդևան Մեծ | 82 | 22 | --- | --- | 17. | Ղզըլղոչ | 14 | 14 | --- | 11 |
| 5. | Բանդևան Փոքր | 35 | 27 | 2 | --- | 18. | Գյուղխարաբա | 8 | 38 | --- | 2 |
| 6. | Չոռլի | 8 | 10 | --- | --- | 19. | Բոզյոխուշ | 8 | 12 | 1 | --- |
| 7. | Ալլաքիլիսա | 4 | 4 | --- | --- | 20. | Բաշգյուղ 2-րդ | 8 | 1 | 1 | --- |
| 8. | Թաքնալի | 7 | 35 | 3 | --- | 21. | Կեֆլի | չկա | 1 | --- | --- |
| 9. | Իլլի Ղարաքիլիսա | 40 | 18 | --- | --- | 22. | Սարյար Փոքր | 1 | 7 | --- | --- |
| 10. | Ղզըլքիլիսա 2-րդ | 5 | 35 | 4 | --- | 23. | Սամուրլի | **չկա** | **Չկա** | --- | --- |
| 11. | Գյուլլիբուլաղ | 2 | 4 | --- | --- | 24. | Ալիխան | **չկա** | **Չկա** | --- | --- |
| 12. | Չիֆթալի | 12 | 24 | --- | --- | 25. | Ղարաքիլիսա 3-րդ | 3 | **Չկա** | --- | --- |
| 13. | Շիշթափա | 7 | 14 | 2 | 12 | | | | | | |
| **ԸՆԴԱՄԵՆԸ** | | | | | | | | **302** | **398** | **19** | **65** |
| **ՉՈՐՐՈՐԴ ԳԱՎԱՌԱՄԱՍ** | | | | | | | | | | | |
| 1. | Ղափլի | 60 | 47 | 1 | --- | 18. | Ղրըխ | --- | 22 | --- | --- |
| 2. | Ղազարապատ | 17 | 5 | --- | --- | 19. | Սոգյութլի | 180 | 113 | --- | --- |
| 3. | Տավշանղշլաղ | 71 | 16 | --- | --- | 20. | Փիրթիքյան | 30 | 25 | --- | --- |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 4. | Սվանվերդի | 202 | 128 | --- | --- | 21. | Ադիյաման | 148 | 79 | --- | --- |
| 5. | Քյալալի | 55 | 3 | --- | --- | 22. | Մոլլա Գյոկչա | 35 | 71 | --- | --- |
| 6. | Աղին | 465 | 30 | --- | --- | 23. | Բողազքյասան | 25 | 20 | --- | --- |
| 7. | Բաբըռլի | 34 | 5 | --- | --- | 24. | Շիրվանջուղ | 218 | 36 | --- | --- |
| 8. | Բոզդողան | 75 | 45 | --- | --- | 25. | Մահմուդջուղ | 177 | 14 | --- | --- |
| 9. | Ղեղաչ | 70 | 42 | --- | --- | 26. | Արմութլի | 156 | 86 | 6 | 50 |
| 10. | Չըրփլի | 66 | 25 | --- | --- | 27. | Սարիբաշ | 10 | 5 | --- | 25 |
| 11. | Ղզըլքիլիսա | 30 | 51 | --- | --- | 28. | Հոռոմ | 100 | 7 | --- | 120 |
| 12. | Ենիքյոյ (Խարկով) | 35 | 29 | --- | --- | 29. | Մեջիթլի | 78 | 41 | --- | --- |
| 13. | Բուդդաշեն | 15 | 38 | --- | --- | 30. | Թոմարդաշ | 30 | 20 | --- | --- |
| 14. | Զարնջի | 60 | 28 | --- | --- | 31. | Իմրխան | 60 | 11 | --- | 20 |
| 15. | Արթիկ Նոր | 60 | 85 | --- | --- | 32. | Սոնգյուրլի | 30 | 40 | --- | 18 |
| 16. | Ձիթիանքով | 455 | 51 | --- | --- | 33. | Թալիբօղլի | 4 | 4 | --- | --- |
| 17. | Տաշղալա | 21 | 48 | --- | --- | 34. | Ղութնիղշլաղ | **չկա** | 1 | --- | --- |
| **ԸՆԴԱՄԵՆԸ** | | | | | | | | **3072** | **1271** | **7** | **233** |
| **ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐԸ** | | | | | | | | **4747** | **4594** | **253** | **321** |

**Իրազեկ, Տաճկական վայրագութիւնները Ալէքսանդրապոլի գաւառում, «Յառաջ» օրաթերթ, Երևան, 1919, N 22, 17 հոկտեմբերի, էջ 1-2:**

## N 16

## Նորին ողորմածութեանց պ. Մինիստիր Խատիսեանին և իւր ընկերներին Աղեքսանդրապոլու գաւառի Սեօգթլի գիւղի հաւատարմատար Սայաթ Ենկօեանից, Մկրտիչ Մխիթարեանից և Պողոս Աբրօեանից

## Խնդիր

Այսու խոնարհ խնդրագրաւս աղիողորմ աղերսանօք խնդրում ենք որպեսզի աչի առաջ ունենաք մեր գիւղի կրած անտանելի զրկանքը և ներկայիս սովամահ դրութիւնը, որովյետեւ երբ թուրքը անցավ ջուրը (իմա՝ Ախուրյան գետը-Ա.Հ.) և մտաւ Աղեքսանդրապոլ քաղաքը, այդ ժամանակ զետեղված էին մեր գիւղումը եօթանասուն հազար ջանից յաւելի հայ գաղթականներ, որոնք եկել էին Կարսից, Կաղզվանից և այլ գաւառներիցը: Այնպես որ, երբ թուրքը մտաւ մեր գիւղը, փաշէն զարմանալով այդ բազմութեան վերայ ասաց. «Սայ մի հասարակ գիւղ է, ոչ բերթ ունի, ոչ էլ պարիսպ, պատճառն ինչ է, որ այսքան բազմութիւն է հաւաքվել այս տեղը»: Այդ պատճառաւ նկատողութեան տակը մնաց մեր գիւղը, մինչեւ որ գաղտնի կերպով յիմացանք թուրքի անխիղճ վճիռը և չար նպատակը: Այն է, որ

ութը տարէկանից մինչև վաթսուն տարէկանը կտրել արական սեռից, իսկ իգական սեռը նոյն չափով բռնաբարել:

Այդ սարսափելի գոյժը մենք ծածուկ յայտնեցինք մեր հայոց գնդապետներին, որոնք խոստացան ժամադրեալ օրը մեզ օգնութիւն հասցնել թնդանօթներով: Երբ ժամադրեալ օրը հասաւ բոլոր երիտասարդութիւնը զինված դիրքերը բռնեցին և սկսվեց սարսափելի կռիվը, այնպես որ մերը զմանուկն ուրացաւ: Եւ երբ որ մեր տղէրքանց փամփուշտը սկսեց պարպել և թնդանօթի էլ օգնութիւնը չը հասաւ ատեն կըռվով ետ նահանձեցինք և հարիւրաւոր երիտասարդնէր զոհ գնացին,նոր սեօկթլեցին փախուստի դիմեց ձեռնունայն և դատարկ՝ առանց մի մազի փաթութ վերցնելու իւր կայքից, իսկ մեր կռուող երիտասարդներից մի մասն էլ Մաստարայ գիւղում ձերբակալված մառանների մեջը վառան և էրեցան, և նրանից ետ մի մասն էլ Ղարաբուռուն ճանապարհի վերայ զոհ գնացին,իսկ մնացածներս փախչէլով մեզ հասցուցինք Երեւանեան գիւղերը և այնտեղ աստանտական կեանք վարելով մի քանի ամսից ետոյ վերադարձանք գիւղը մեր աւերակ տների վերայ: Իսկ անիրաւ թուրքը, որ ճրաքով էր մանգալում սեօգթլեցուն արեւով ձեռքը ընկաւ: Ինչեր ասես որ չխաղաց խեղճ սեօկթլեցոց գլխին և վերջապես կրկին զրկանքի ենթարկեց բոլորին: Այս չար նպատակներու պատճառաւ զրկվանք մեր ցանքի արդիւնքից,որովյետեւ մեր ցանքի մի մասը փչացաւ ասկեարներու ձիանքի ոտների տակ, միւս մասն էլ որ անարատ բերան եկաւ, նա էլ ուժ և երկրագործական գործիքներ չունենալու պատճառառ օտարները կիսովի քաղեցին տարան: Այժմ, երբ բոլորիս սնունդն էլ պարպել է, մնացել ենք հացի կարօտ և իսկապէս սովամահ կոտորվում ենք, ոչ ուտելիք կայ, ոչ ցանելիք, ոչ լծկան, ոչ էլ կթան կայ: Մնացել ենք տխուր ձեռքներս ծոցներիս դրած, շրջում ենք թշվառ ու անմխիթար դրութեան մեջ, վասն որոյ խնդրում ենք որպեսզի աչքի առաջ ունենաք մեր անտանելի դրութիւնը և բարեշնորհ կարգադրութեամբ ձերով առնեք տնօրէնութեան սոյն խնդիրս և ազատ անէք բազմաթիւ գերդաստանքն մեր այս սարսափելի սովից, որով կստանաք մեր գերդաստանի անվերջ օրհնութիւնը ի կենաց ձերոց. Ամէն:

**1919 թիւ, 11 ապրիլի ի գիւղն Սեօգթլի**

**ՀԱԱ ֆոնդ 201, ցուցակ 1, գործ 148, մաս 1, թթ. 37-38: Բնագիր ձեռագիր:**

## N 17

## ՀՀ Գյուղատնտեսության նախարարության կենտրոնական վիճակագրական կոմիտե: Տեղեկություններ բնակչության թվի մասին՝ ըստ գավառների, քաղաքների, նահանգների և շրջանների, 1919թ. դրությամբ: Ըստ գյուղական հասարակությունների՝ նահանգներից հավաքված տեղեկություններ գյուղատնտեսության վիճակի մասին 1917թ. և մշակված 1919թ. [1]

| գավառամաս | տների թիվը | | | | բնակչության թիվը 1914-1919թթ. | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | հայերի թիվը | | | | | այլ ազգեր, ոչ մահմեդականներ | | | | | | |
| | | | | | 1919թ. | | | | | 1919թ. | | | | | | |
| | | | | | հայերի թիվը | | | | | | | | | | | |
| | | | | | | գաղթական | | | | | գաղթական | | | | | |
| | հայեր | մահմեդական | ոչ մահմեդական | խառը | բնիկներ | ռուսահայ | թուրքահայ | ընդամենը 1919թ. | 1914թ. դրությամբ | բնիկներ | եզդի | մոլոկան | ընդամենը 1919թ. | 1914թ. դրությամբ | Ընդհանուր բնակիչների թիվը 1919թ. | Ընդհանուր բնակիչների թիվը 1914թ. |
| I | 4946 | --- | 85 | -- | 29314 | 1792 | 11755 | 42861 | 37118 | 2273 | --- | --- | 2273 | 900 | 45134 | 39018 |

[1] Մեր կարծիքով՝ աղյուսակում բերված վիճակագրական տեղեկությունները, որ փաստաթղթի հեղինակների հավաստմամբ վերաբերում են Ալեքսանդրապոլի գավառին և թվագրված են 1919թ-ով, չեն համապատասխանում իրականությանը և չեն արտացոլում գավառի տվյալ ժամանակահատվածի իրական ժողովրդագրական պատկերը: Այն, որ ՀՀ կառավարությանն առնթեր Վիճակագրական վարչությունը փորձել է 1919թ. հաշվառել երկրում բնակվող ռուսահպատակ փախստականներին և արևմտահայ գաղթականներին՝ փաստ է: Սակայն, իրականում այդ փորձը ՀՀ մի շարք գավառներում և հատկապես Ալեքսանդրապոլի գավառում ամբողջությամբ ձախողվել է: Անձամբ Վիճակագրական բաժնի կառավարիչ Մ. Մկրյանն Ալեքսանդրապոլի գավառում 15 վիճակագրական գրքույկներից համեմատաբար անթերի է համարել միայն 4-ը (Մանրամասն տե՛ս փաստաթուղթ N 5 և N 6): Այսինքն՝ զոնե Ալեքսանդրապոլի գավառի կտրվածքով 1919թ-ով թվագրված վիճակագրական տեղեկություններ չպիտի լինեին: Կասկածելի է նաև այն, որ մարդահամարի 1914թ. և 1919թ. բաժիններում մահմեդական և խառը ազգաբնակչությամբ գյուղեր չկան: Ավելին, Մ. Մկրյանի առաջարկով 1919թ. անհաջողությունից հետո որոշվել էր 1920թ. անցկացնել նոր ցուցակագրում: Այն, որ աղյուսակում բերված վիճակագրական տեղեկությունները, մեղմ ասած, չեն համապատասխանում իրական պատկերին, ցույց է տալիս մեկ այլ փաստ ևս. Փաստաթղթի առաջին՝ ռուսերեն վերնագրում (Сведения о населении по уездам, городам, губерниям и областям за 1919г.. Сведения о сельском хозяйстве по сельсим обществам губернии за 1917г. Обработанные в 1919г.) հատուկ նշում կա, որ ցուցակագրումն անցկացվել է 1917թ., իսկ 1919թ. միայն լրամշակվել է ՀՀ կառավարության վիճակագրական բաժանմունքի կողմից՝ Բ. Իշխանյանի գլխավորությամբ: Ի դեպ, փաստաթղթի պատճենը՝ հայերեն վերնագրով պահվում է Հայաստանի ազգային արխիվի թիվ 163 ֆոնդում (ՀԽՍՀ վիճակագրական վարչության պետական կոմիտե) «Հայկական ՍՍՀ Ժողովրդական տնտեսության հաշվառման վարչություն: Վիճակագրական տեղեկագիր Հայաստանի գավառների ազգաբնակչության թվի մասին ըստ 1914-1919թթ. տվյալների» վերնագրով (Մանրամասն տե՛ս ՀԱԱ, ֆոնդ 163, ցուցակ 2, գործ 1, թ. 1-53):

| | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| II | 4831 | --- | -- | -- | 33417 | 131 | 4619 | 38167 | 42590 | --- | --- | --- | --- | --- | 38167 | 42590 |
| III | 2699 | --- | -- | -- | 20351 | 228 | 2739 | 23318 | 25834 | --- | --- | --- | --- | --- | 23318 | 25834 |
| IV | 5559 | --- | -- | -- | 32698 | 191 | 12816 | 45705 | 47516 | --- | --- | --- | --- | --- | 45705 | 47516 |
| **Ընդ.** | **8035** | **---** | **85** | **--** | **115780** | **2342** | **31929** | **150051** | **153058** | **2273** | **---** | **---** | **2273** | **1900** | **152324** | **154958** |

ՀԱԱ ֆոնդ 203, ցուցակ 4, գործ 13, թթ. 1-15: Բնագիր ձեռագիր:

## N 18

## ՀՀ Ներքին Գործոց Նախարարությանը կից «Ներգաղթի և վերաշինության» բաժանմունք: Վիճակագրական մատյան արևմտահայ փախստականների 15 հուլիսի 1919թ., Երևան[1]

| | | | | | | աշխատունակ | | | Անաշխատունակ | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **Շրջան** | **Գյուղ** | **ընտ.** | **ար.** | **իգ.** | **ընդ.** | **ար.** | **իգ.** | **ընդ.** | **ար.** | **իգ.** | **ընդ.** |
| **Ճ Ի Ո Վ Խ Ա Ն (Ի Ի)** | | | | | | | | | | | |
| Մուշ | Քրտագոմ | 30 | 95 | 156 | 251 | 23 | 73 | 96 | 72 | 83 | 155 |
| --//-- | Խարթ | 3 | 9 | 15 | 24 | 1 | 5 | 6 | 8 | 10 | 18 |
| --//-- | Երիզակ | 21 | 59 | 106 | 165 | 12 | 31 | 43 | 47 | 75 | 122 |
| --//-- | Առաղ | 5 | 19 | 32 | 51 | 2 | 10 | 12 | 17 | 22 | 39 |
| --//-- | Թալաբաշ | 17 | 62 | 106 | 168 | 9 | 32 | 41 | 53 | 74 | 127 |
| --//-- | Հավատորիկ | 43 | 132 | 240 | 372 | 17 | 71 | 88 | 115 | 169 | 284 |
| --//-- | Սինամերիկ | 8 | 23 | 42 | 65 | 3 | 13 | 16 | 20 | 29 | 49 |
| --//-- | Մուշ քաղաք | 18 | 59 | 98 | 157 | 13 | 30 | 43 | 46 | 68 | 114 |
| Խութ | Ընկուզեք | 6 | 8 | 18 | 26 | 3 | 3 | 6 | 5 | 15 | 20 |
| ***Ընդամենը*** | | ***151*** | ***466*** | ***813*** | ***1279*** | ***83*** | ***268*** | ***351*** | ***383*** | ***545*** | ***928*** |
| **Դ Ա Հ Ա Ր Լ Ի** | | | | | | | | | | | |
| Մուշ | Վարդինիս | 49 | 161 | 369 | 530 | 26 | 36 | 62 | 135 | 333 | 468 |
| --//-- | Կոշտյան | 27 | 76 | 182 | 258 | 16 | 25 | 41 | 61 | 156 | 217 |
| --//-- | Դաղվան | 42 | 71 | 119 | 190 | 23 | 25 | 48 | 48 | 94 | 142 |

[1] Ինչպես նշեցինք նախորդ տողատակում, ՀՀ կառավարությանն առընթեր Վիճակագրական վարչությունը 1919թ. անցկացրել է ՀՀ տարածքում բնակվող ռուսահպատակ փախստականների և արևմտահայ գաղթականների հաշվառում: Սակայն այդ գործընթացն Ալեքսանդրապոլի գավառում ձախողվել է: Ըստ Վիճակագրական բաժնի կառավարիչ Մ. Մկրյանի՝ գավառում կազմված 15 վիճակագրական գրքույկներից համեմատաբար անթերի են միայն 4-ը, որոնք ներկայացնում ենք ընթերցողի դատին: Քանի որ մնացած 11 գրքույկները համարվել են խոտան և չեն կցվել ընդհանուր գործին, ուստի որոշվել է 1920թ. անցկացնել նոր ցուցակագրում՝ պարզելու համար գավառում հաստատված արևմտահայ գաղթականների, կովկասահայ փախստականների, ինչպես նաև տեղական ազգաբնակչության (հայ և այլազգի) և նույնիսկ չքավորների հստակ թվաքանակը (Մանրամասն տե՛ս ՀԱԱ ֆոնդ 201, ցուցակ 1, գործ 156, թթ. 218-219):

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| --//-- | Առնիստ | 54 | 88 | 250 | 338 | 57 | 62 | 119 | 31 | 188 | 219 |
| Սասուն | Նոր Գեղ | 17 | 50 | 108 | 158 | 9 | 11 | 20 | 41 | 97 | 138 |
| ***Ընդամենը*** | | ***189*** | ***446*** | ***1028*** | ***1474*** | ***131*** | ***159*** | ***290*** | ***315*** | ***869*** | ***1184*** |
| **ԲԱՑԱՆԴՈՒՐ** | | | | | | | | | | | |
| Մուշ | Սուսբերդ | 28 | 104 | 133 | 237 | 18 | 28 | 46 | 86 | 105 | 191 |
| --//-- | Արտոնք | 68 | 139 | 479 | 618 | 45 | 81 | 126 | 94 | 398 | 492 |
| Խլաթ | Տափավանք | 6 | 24 | 39 | 63 | 6 | 6 | 12 | 18 | 33 | 51 |
| Մուշ | Անձավ | 18 | 72 | 111 | 183 | 19 | 26 | 45 | 53 | 85 | 138 |
| Խլաթ | Չխուր | 12 | 44 | 63 | 107 | 13 | 16 | 29 | 31 | 47 | 78 |
| Մուշ | Վարդո | 13 | 40 | 62 | 102 | 12 | 15 | 27 | 28 | 47 | 75 |
| Բիթլիսի[1] | Վանըկ | 77 | 334 | 419 | 753 | 48 | 76 | 124 | 286 | 343 | 629 |
| ***Ընդամենը*** | | ***222*** | ***757*** | ***1306*** | ***2063*** | ***161*** | ***248*** | ***409*** | ***596*** | ***1058*** | ***1654*** |
| **ԽԼԻ ՂԱՐԱՔԻԼԻՍԱ** | | | | | | | | | | | |
| Մուշ | Բերդակ | 22 | 87 | 93 | 180 | 22 | 9 | 31 | 65 | 84 | 149 |
| --//-- | Մառնիկ Վերին | 15 | 25 | 81 | 106 | 17 | 13 | 30 | 8 | 68 | 76 |
| --//-- | Քրտագոմ | 33 | 78 | 250 | 328 | 23 | 16 | 39 | 55 | 234 | 289 |
| --//-- | Տափե | 20 | 61 | 89 | 150 | 13 | 9 | 22 | 48 | 80 | 128 |
| --//-- | Մառնիկ Ներքին | 20 | 46 | 77 | 123 | 14 | 5 | 19 | 32 | 72 | 104 |
| --//-- | Տալասն | 11 | 19 | 48 | 67 | 8 | 2 | 10 | 11 | 46 | 57 |
| --//-- | Խըսըլնոց | 9 | 15 | 45 | 60 | 7 | 4 | 11 | 8 | 41 | 49 |
| --//-- | Աթ | 20 | 31 | 101 | 132 | 15 | 5 | 20 | 16 | 96 | 112 |
| --//-- | Շվլակ | 5 | 7 | 41 | 48 | 3 | 2 | 5 | 4 | 39 | 43 |
| --//-- | Մուշ քաղաք | 6 | 9 | 47 | 56 | 5 | 2 | 7 | 4 | 45 | 49 |
| Խնուս | Հարամիկ | 3 | 2 | 18 | 20 | 2 | --- | 2 | --- | 18 | 18 |
| Մուշ | Գցոնք[2] | 22 | 22 | 85 | 107 | 7 | 4 | 11 | 15 | 81 | 96 |
| --//-- | Գնոտ[3] | 6 | 9 | 42 | 51 | 6 | 3 | 9 | 3 | 39 | 42 |
| --//-- | Խասգեղ | 1 | 2 | 7 | 9 | --- | 2 | 2 | 2 | 5 | 7 |
| Բուլանըղ | Բոսթաքյան | 2 | 4 | 15 | 19 | 1 | 3 | 4 | 3 | 12 | 15 |
| Մուշ | Առվառինջ | 16 | 29 | 91 | 120 | 17 | 6 | 23 | 12 | 85 | 97 |
| --//-- | Մազրեսա | 5 | 9 | 40 | 49 | 4 | 4 | 8 | 5 | 36 | 41 |
| --//-- | Տերիկ | 7 | 9 | 50 | 59 | 4 | 10 | 14 | 5 | 40 | 45 |
| Բուլանըղ | Համզաշեխ | 1 | 2 | 8 | 10 | --- | 2 | 2 | 2 | 6 | 8 |
| --//-- | Շեխաղուբ | 1 | 2 | 6 | 8 | --- | 2 | 2 | 2 | 4 | 6 |

[1] Փաստաթղթում նշված է Մուշի շրջան, մինչդեռ իրականում Վանըկ գյուղը գտնվում էր Բիթլիսի գավառի կազմում (Մանրամասն տե՛ս Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, Թ. Հակոբյան, Ստ. Մելիք-Բախշյան, Հ. Բարսեղյան, հ. 4, Եր., Երևանի Համալսարանի Հրատ., 1998, էջ 756 (այսուհետև՝ Տեղանունների բառարան)։

[2] Իրականում Գցոնք գյուղը մտնում էր Սասունի Խութ-Բռնաշեն գավառակի մեջ (Մանրամասն տե՛ս Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, Թ. Հակոբյան, Ստ. Մելիք-Բախշյան, Հ. Բարսեղյան, հ. 1, Եր., Երևանի Համալսարանի Հրատ., 1986, էջ 966։

[3] Այս գյուղը ևս կազմում էր Սասունի Խութ-Բռնաշեն գավառակի մաս (Տե՛ս Տեղանունների բառարան, հ. 1, էջ 927)։

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| --//-- | Շիրվանշեխ | 1 | 2 | 8 | 10 | --- | --- | --- | 2 | 8 | 10 |
| Մուշ | Ազրակ | 1 | 3 | 8 | 11 | 1 | 1 | 2 | 2 | 7 | 9 |
| Խութ | Թաղավան | 1 | 1 | 11 | 12 | 1 | 2 | 3 | --- | 9 | 9 |
| Խնուս | Եղուրդլու | 1 | 1 | 6 | 7 | 1 | 1 | 2 | --- | 5 | 5 |
| ***Ընդամենը*** | | ***229*** | ***475*** | ***1267*** | ***1742*** | ***171*** | ***107*** | ***278*** | ***304*** | ***1160*** | ***1464*** |
| **ԹԱՓԱԴՈԼԼԱԿ** | | | | | | | | | | | |
| Ղարաքիլիսա[1] | Իրիցուգեղ | 23 | 53 | 191 | 244 | 27 | 29 | 56 | 26 | 162 | 188 |
| Ալաշկերտ | Խաստուր | 10 | 18 | 106 | 124 | 10 | 5 | 15 | 8 | 101 | 109 |
| Բուլանըղ | Մեճիթլու | 1 | 1 | 2 | 3 | --- | 1 | 1 | 1 | 1 | 2 |
| Խութ-Բոնաշեն | Դաշտադեմ | 8 | 15 | 77 | 92 | 9 | 10 | 19 | 6 | 67 | 73 |
| ***Ընդամենը*** | | ***42*** | ***87*** | ***376*** | ***463*** | ***46*** | ***45*** | ***91*** | ***41*** | ***331*** | ***372*** |
| **ԱԼԵՔՍԱՆԴՐՈՎԿԱ** | | | | | | | | | | | |
| Ալաշկերտ | Խաստուր | 3 | 6 | 20 | 26 | 2 | 1 | 3 | 4 | 19 | 23 |
| Մուշ | Վարդինիս | 45 | 105 | 484 | 589 | 24 | 46 | 70 | 81 | 438 | 519 |
| --//-- | Սարեոկլե | 16 | 36 | 184 | 220 | 5 | 14 | 19 | 31 | 170 | 201 |
| Մոտկան | Բաբշեն | 3 | 8 | 27 | 35 | 1 | 4 | 5 | 7 | 23 | 30 |
| --//-- | Տորխ | 4 | 10 | 50 | 60 | 3 | 4 | 7 | 7 | 46 | 53 |
| ***Ընդամենը*** | | ***71*** | ***165*** | ***765*** | ***930*** | ***35*** | ***69*** | ***104*** | ***130*** | ***696*** | ***826*** |
| **ԹՈՓԱՌԼԻ** | | | | | | | | | | | |
| Մուշ | Արտոնք | 63 | 265 | 230 | 495 | 70 | 47 | 117 | 195 | 183 | 378 |
| Բուլանըղ | Թիղուտ | 38 | 113 | 210 | 323 | 35 | 61 | 96 | 78 | 149 | 227 |
| Մուշ | Առինջ[2] | 6 | 18 | 35 | 53 | 6 | 7 | 13 | 12 | 28 | 40 |
| Բուլանըղ | Համզաշեխ | 7 | 23 | 35 | 58 | 7 | 9 | 16 | 16 | 26 | 42 |
| ***Ընդամենը*** | | ***114*** | ***419*** | ***510*** | ***929*** | ***118*** | ***124*** | ***242*** | ***301*** | ***386*** | ***687*** |
| **ԴԱՐԲԱՆԴ** | | | | | | | | | | | |
| Խութ-Բոնաշեն | Օշակ | 1 | 2 | 6 | 8 | 1 | 2 | 3 | 1 | 4 | 5 |
| Սասուն | Գզեխ | 2 | 2 | 3 | 5 | 1 | 2 | 3 | 1 | 1 | 2 |
| Ալաշկերտ | Խաստուր | 1 | 3 | 3 | 6 | --- | --- | --- | 3 | 3 | 6 |
| ***Ընդամենը*** | | ***4*** | ***7*** | ***12*** | ***19*** | ***2*** | ***4*** | ***6*** | ***5*** | ***8*** | ***13*** |
| **ՔԵԹԻ ՓՈՔՐ** | | | | | | | | | | | |
| Բուլանըղ | Լիս | 1 | 1 | 4 | 5 | --- | --- | --- | 1 | 4 | 5 |
| ***Ընդամենը*** | | ***1*** | ***1*** | ***4*** | ***5*** | ***---*** | ***---*** | ***---*** | ***1*** | ***4*** | ***5*** |
| **ՕՐԹԱՔԻԼԻՍԱ** | | | | | | | | | | | |
| Մուշ | Վարդինիս | 2 | 4 | 6 | 10 | 2 | 2 | 4 | 2 | 4 | 6 |
| Բիթլիս | Բիթլիս քաղաք | 3 | 5 | 6 | 11 | 2 | 3 | 5 | 3 | 3 | 6 |
| Խլաթ | Խուլիկ | 3 | 7 | 11 | 18 | 3 | 2 | 5 | 4 | 9 | 13 |
| Բուլանըղ | Լիս | 2 | 2 | 2 | 4 | --- | --- | --- | 2 | 2 | 4 |
| Մանազկերտ | Եկմալ | 1 | 4 | 5 | 9 | 1 | 2 | 3 | 3 | 3 | 6 |
| Բասեն | Բասեն քաղաք | 4 | 4 | 10 | 14 | 1 | 4 | 5 | 3 | 6 | 9 |

[1] Խոսքը վերաբերում է Էրզրումի նահանգի Բայազետի գավառի Ղարաքիլիսայի գավառակին:

[2] Փաստաթղթում նշված է Բուլանըղի շրջան, մինչդեռ Առինջ գյուղը գտնվում էր Մուշի գավառի կազմում (Տե՛ս Տեղանունների բառարան, հ. 1, էջ 327:

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| ***Ընդամենը*** | | ***15*** | ***26*** | ***40*** | ***66*** | ***9*** | ***13*** | ***22*** | ***17*** | ***27*** | ***44*** |
| **ԿԱՊՍ** | | | | | | | | | | | |
| Մուշ | Ագրակ | 2 | 6 | 6 | 12 | 2 | 2 | 4 | 4 | 4 | 8 |
| ***Ընդամենը*** | | ***2*** | ***6*** | ***6*** | ***12*** | ***2*** | ***2*** | ***4*** | ***4*** | ***4*** | ***8*** |
| **ՂԱՆԼԻՋԱ ՎԵՐԻՆ** | | | | | | | | | | | |
| Գավաշ | Ոստան | 15 | 24 | 54 | 78 | 15 | 17 | 32 | 9 | 37 | 46 |
| Սղերդ | Շիրվան | 1 | 1 | 5 | 6 | 1 | 2 | 3 | ---- | 3 | 3 |
| ***Ընդամենը*** | | ***16*** | ***25*** | ***59*** | ***84*** | ***16*** | ***19*** | ***35*** | ***9*** | ***40*** | ***49*** |
| **ՔԵԹԻ ՄԵԾ** | | | | | | | | | | | |
| Բուլանըղ | Կոփ | 4 | 10 | 14 | 24 | 1 | 6 | 7 | 9 | 8 | 17 |
| Մուշ | Զիարաթ | 1 | 1 | 2 | 3 | 1 | 1 | 2 | --- | 1 | 1 |
| ***Ընդամենը*** | | ***5*** | ***11*** | ***16*** | ***27*** | ***2*** | ***7*** | ***9*** | ***9*** | ***9*** | ***18*** |
| **ԹԱՓԱՆԼԻ** | | | | | | | | | | | |
| Մուշ | Արտոնք | 42 | 115 | 277 | 392 | 59 | 102 | 161 | 56 | 175 | 231 |
| ***Ընդամենը*** | | ***42*** | ***115*** | ***277*** | ***392*** | ***59*** | ***102*** | ***161*** | ***56*** | ***175*** | ***231*** |
| **ՀԱՋԻԽԱԼԻԼ** | | | | | | | | | | | |
| Բուլանըղ | Քեքառլու | 11 | 18 | 29 | 47 | 11 | 14 | 25 | 7 | 15 | 22 |
| --//-- | Յոնճալու | 4 | 7 | 5 | 12 | 3 | 4 | 7 | 4 | 1 | 5 |
| --//-- | Ղարաբաշխեր | 2 | 3 | 3 | 6 | 2 | 2 | 4 | 1 | 1 | 2 |
| --//-- | Մեճիթլու | 1 | 1 | 5 | 6 | 1 | --- | 1 | --- | 5 | 5 |
| Մանազկերտ | Ակներ | 1 | 1 | 1 | 2 | 1 | 1 | 2 | --- | --- | --- |
| Վան | Վան քաղաք | 1 | 1 | 1 | 2 | 1 | 1 | 2 | --- | --- | --- |
| Մանազկերտ | Մանազկերտ քաղ. | 1 | 1 | 1 | 2 | 1 | 1 | 2 | --- | --- | --- |
| Բիթլիս | Բիթլիս քաղաք | 2 | 2 | 4 | 6 | 2 | 1 | 3 | --- | 3 | 3 |
| Արճեշ | Խարգին | 7 | 14 | 16 | 30 | 6 | 5 | 11 | 8 | 11 | 19 |
| ***Ընդամենը*** | | ***30*** | ***48*** | ***75*** | ***123*** | ***28*** | ***39*** | ***67*** | ***20*** | ***36*** | ***56*** |
| **ԴԱՆԱԳԻՐՄԱՋ** | | | | | | | | | | | |
| Բուլանըղ | Ղարաբաշխեր | 4 | 8 | 11 | 19 | 4 | 6 | 10 | 4 | 5 | 9 |
| --//-- | Քեքառլու | 2 | 3 | 5 | 8 | 1 | 2 | 3 | 2 | 3 | 5 |
| --//-- | Մեճիթլու | 9 | 18 | 30 | 48 | 12 | 9 | 21 | 6 | 21 | 27 |
| Դերջան | Աբաղնոր | 3 | 7 | 6 | 13 | 4 | 3 | 7 | 3 | 3 | 6 |
| Քղի | Մելիքան | 1 | 1 | 2 | 3 | --- | 1 | 1 | 1 | 1 | 2 |
| Բիթլիս | Բիթլիս քաղաք | 1 | 2 | 2 | 4 | --- | 1 | 1 | 2 | 1 | 3 |
| Ալաշկերտ | Յամար | 1 | 1 | 4 | 5 | --- | 1 | 1 | 1 | 3 | 4 |
| Սոբաստիա | Սոբաստիա քաղ. | 1 | 1 | 1 | 2 | 1 | 1 | 2 | --- | --- | --- |
| Ալաշկերտ | Համատ | 1 | 1 | 1 | 2 | 1 | 1 | 2 | --- | --- | --- |
| ***Ընդամենը*** | | ***23*** | ***42*** | ***62*** | ***104*** | ***23*** | ***25*** | ***48*** | ***19*** | ***37*** | ***56*** |
| **ՔՈՌԲՈՒԼԱՂ** | | | | | | | | | | | |
| Բերկրի | Չիբուխլու | 15 | 37 | 82 | 119 | 20 | 31 | 51 | 17 | 51 | 68 |
| --//-- | Չրաղ | 2 | 4 | 13 | 17 | 3 | 4 | 7 | 1 | 9 | 10 |
| --//-- | Շանգլավա | 8 | 14 | 36 | 50 | 8 | 15 | 23 | 6 | 21 | 27 |
| Ալաշկերտ | Կանիսպի | 8 | 28 | 50 | 78 | 12 | 14 | 26 | 16 | 36 | 52 |
| Բայազետ | Կարաքենդ | 3 | 4 | 15 | 19 | 2 | 6 | 8 | 2 | 9 | 11 |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Ալաշկերտ | Շակո | 8 | 18 | 40 | 58 | 10 | 14 | 24 | 8 | 26 | 34 |
| Բայազետ | Գոկսի Կեզել | 6 | 13 | 31 | 44 | 4 | 9 | 13 | 9 | 22 | 31 |
| --//-- | Բազրգյան | 11 | 26 | 50 | 76 | 11 | 16 | 27 | 15 | 34 | 49 |
| ***Ընդամենը*** | | ***61*** | ***144*** | ***317*** | ***461*** | ***70*** | ***109*** | ***179*** | ***74*** | ***208*** | ***282*** |
| **Մ Ե Լ Ի Ք Ք Ե Ն Դ** | | | | | | | | | | | |
| Խոշաբ | Հյուրթուկ | 15 | 46 | 56 | 102 | 11 | 25 | 36 | 35 | 31 | 66 |
| Բուլանըղ | Մեճիթլու | 1 | 1 | 2 | 3 | --- | 1 | 1 | 1 | 1 | 2 |
| Մուշ | Կոտ[1] | 6 | 7 | 15 | 22 | 4 | 6 | 10 | 3 | 9 | 12 |
| Բիթլիս | Բիթլիս քաղաք | 1 | 2 | 1 | 3 | 1 | 1 | 2 | 1 | --- | 1 |
| Մոկս | Մոկս գյուղաքաղ. | 1 | 5 | 4 | 9 | 2 | 2 | 4 | 3 | 2 | 5 |
| Բուլանըղ | Թիղուտ | 6 | 9 | 11 | 20 | 4 | 7 | 11 | 5 | 4 | 9 |
| ***Ընդամենը*** | | ***30*** | ***70*** | ***89*** | ***159*** | ***22*** | ***42*** | ***64*** | ***48*** | ***47*** | ***95*** |
| **Ջ Ա Ն Գ Ի Թ Ա Փ Ա** | | | | | | | | | | | |
| Բուլանըղ | Թիղուտ | 3 | 5 | 3 | 8 | 1 | 1 | 2 | 4 | 2 | 6 |
| --//-- | Մեճիթլու | 1 | 1 | 1 | 2 | --- | 1 | 1 | 1 | --- | 1 |
| Այնթափ /Բայազետ/ | Այնթափ ավան | 1 | 2 | 4 | 6 | 1 | 1 | 2 | 1 | 3 | 4 |
| Մանազկերտ | Խոթանլու | 1 | 3 | 4 | 7 | 1 | 1 | 2 | 2 | 3 | 5 |
| Բաբերդ | Բաբերդ քաղաք | 1 | 1 | 1 | 2 | --- | 1 | 1 | 1 | --- | 1 |
| Կարս /Շորագյալ/ | Ալաջա | 1 | 1 | 1 | 2 | 1 | 1 | 2 | --- | --- | --- |
| Վան | Վան քաղաք | 1 | 1 | 1 | 2 | 1 | 1 | 2 | --- | --- | --- |
| Սեբաստիա | Սեբաստիա քաղ. | 1 | 1 | 1 | 2 | 1 | 1 | 2 | --- | --- | --- |
| Բաբերդ | Կան | 1 | 1 | 2 | 3 | 1 | 1 | 2 | --- | 1 | 1 |
| ***Ընդամենը*** | | ***11*** | ***16*** | ***18*** | ***34*** | ***7*** | ***9*** | ***16*** | ***9*** | ***9*** | ***18*** |
| **Ք Ե Շ Ի Շ Ք Ե Ն Դ** | | | | | | | | | | | |
| Բուլանըղ | Քեքառլու | **2** | **5** | **9** | **14** | **1** | **4** | **5** | **4** | **5** | **9** |
| Մուշ | Ոտնչոր | **1** | **1** | **2** | **3** | **---** | **1** | **1** | **1** | **1** | **2** |
| Բուլանըղ | Փիրան | **1** | **2** | **1** | **3** | **2** | **1** | **3** | **---** | **---** | **---** |
| ***Ընդամենը*** | | ***4*** | ***8*** | ***12*** | ***20*** | ***3*** | ***6*** | ***9*** | ***5*** | ***6*** | ***11*** |
| **Մ Ո Ի Ն Ջ Ո Ի Խ Լ Ի** | | | | | | | | | | | |
| Մանազկերտ | Խարախայե | **10** | **22** | **36** | **58** | **6** | **4** | **10** | **16** | **32** | **48** |
| Խնուս | Գոբալ | **1** | **2** | **3** | **5** | **1** | **1** | **2** | **1** | **2** | **3** |
| Մանազկերտ | Մոլաբաբա | **3** | **9** | **19** | **28** | **5** | **7** | **12** | **4** | **12** | **16** |
| Բուլանըղ | Թիղուտ | **4** | **4** | **11** | **15** | **1** | **6** | **7** | **3** | **5** | **8** |
| Փսանք | Զանդուս | **6** | **9** | **10** | **19** | **6** | **4** | **10** | **3** | **6** | **9** |
| Ալաշկերտ | Չլկահանի | **1** | **1** | **3** | **4** | **---** | **---** | **---** | **1** | **3** | **4** |
| Բուլանըղ | Կոփ | **3** | **6** | **8** | **14** | **1** | **3** | **4** | **5** | **5** | **10** |

[1] Փաստաթղթում նշված է Բուլանըղի շրջան, իրականում Կոտ գյուղը գտնվում էր Մուշի գավառի կազմում (Տե՛ս Տեղանունների բառարան, հ. 3, Եր., Երևանի Համալսարանի Հրատ., 1991, էջ 224:

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Արճեշ | Արճեշ քաղաք | 1 | 1 | 1 | 2 | --- | --- | --- | 1 | 1 | 2 |
| Մանազկերտ | Թոնդրակ | 1 | 2 | 4 | 6 | --- | 1 | 1 | 2 | 3 | 5 |
| Բուլանըղ | Քեքառլու | 1 | 2 | 3 | 5 | 2 | 1 | 3 | --- | 2 | 2 |
| Մանազկերտ | Նորատի | 1 | 5 | 3 | 8 | 1 | 1 | 2 | 4 | 2 | 6 |
| Բուլանըղ | Լաթար | 1 | 1 | 3 | 4 | --- | --- | --- | 1 | 3 | 4 |
| Խլաթ | Խլաթ քաղաք | 1 | 3 | 1 | 4 | --- | --- | --- | 3 | 1 | 4 |
| *Ընդամենը* | | *34* | *67* | *105* | *172* | *23* | *28* | *51* | *44* | *77* | *121* |
| ՓԱՄՊ ՀԱՑԿԱԿԱԿԱՆ | | | | | | | | | | | |
| Բուլանըղ | Լիս | 4 | 4 | 5 | 9 | 2 | 5 | 7 | 2 | --- | 2 |
| --//-- | Համզաշեխ | 4 | 7 | 8 | 15 | 4 | 4 | 8 | 3 | 4 | 7 |
| --//-- | Թիղուտ | 11 | 27 | 33 | 60 | 10 | 20 | 30 | 17 | 13 | 30 |
| --//-- | Քեքառլու | 1 | 1 | 2 | 3 | --- | --- | --- | 1 | 2 | 3 |
| Խնուս | Գովանդուկ | 4 | 6 | 11 | 17 | 5 | 5 | 10 | 1 | 6 | 7 |
| Ալաշկերտ | Ղայաբեկ | 1 | 2 | 4 | 6 | 1 | 1 | 2 | 1 | 3 | 4 |
| Մանազկերտ | Նորատի | 1 | 2 | 2 | 4 | 1 | 1 | 2 | 1 | 1 | 2 |
| *Ընդամենը* | | *26* | *49* | *65* | *114* | *23* | *36* | *59* | *26* | *29* | *55* |
| ԱՂԲՈՒԼԱՂ | | | | | | | | | | | |
| Բուլանըղ | Քեքառլու | 1 | 2 | 2 | 4 | 1 | 1 | 2 | 1 | 1 | 2 |
| Մանազկերտ | Ակներ | 1 | 2 | 4 | 6 | 1 | 3 | 4 | 1 | 1 | 2 |
| --//-- | Իկնախոջեն | 1 | 3 | 2 | 5 | --- | 1 | 1 | 3 | 1 | 4 |
| Բուլանըղ | Փիրան | 2 | 3 | 3 | 6 | 1 | 2 | 3 | 2 | 1 | 3 |
| *Ընդամենը* | | *5* | *10* | *11* | *21* | *3* | *7* | *10* | *7* | *4* | *11* |
| ԴՈՒԶՔԵՆԴ ԹՈՒՐՔԱԿԱՆ | | | | | | | | | | | |
| Բուլանըղ | Թիղուտ | 7 | 26 | 34 | 60 | 11 | 12 | 23 | 15 | 22 | 37 |
| *Ընդամենը* | | *7* | *26* | *34* | *60* | *11* | *12* | *23* | *15* | *22* | *37* |
| ՂԸՐԽԴԱԳԻՐՄԱՆ | | | | | | | | | | | |
| Մանազկերտ | Նորատի | 5 | 7 | 9 | 16 | 5 | 5 | 10 | 2 | 4 | 6 |
| Արճեշ | Առեն | 2 | 2 | 5 | 7 | --- | 2 | 2 | 2 | 3 | 5 |
| Մանազկերտ | Դերըք | 1 | 3 | 1 | 4 | 1 | 1 | 2 | 2 | --- | 2 |
| --//-- | Բերդ | 1 | 2 | 2 | 4 | 1 | 1 | 2 | 1 | 1 | 2 |
| Արծկե | Էզեձոր | 2 | 7 | 6 | 13 | 4 | 4 | 8 | 3 | 2 | 5 |
| Բուլանըղ | Կոփ | 1 | 6 | 4 | 10 | 2 | 1 | 3 | 4 | 3 | 7 |
| Բուլանըղ | Խոշգելտի | 1 | 2 | 5 | 7 | 1 | 3 | 4 | 1 | 2 | 3 |
| --//-- | Մեճիթլու | 8 | 23 | 30 | 53 | 6 | 8 | 14 | 17 | 22 | 39 |
| --//-- | Լիս | 3 | 10 | 9 | 19 | 5 | 6 | 11 | 5 | 3 | 8 |
| --//-- | Միրիպար | 2 | 3 | 10 | 13 | 1 | 3 | 4 | 2 | 7 | 9 |
| Մուշ | Առինջ | 1 | 2 | 1 | 3 | 1 | 1 | 2 | 1 | --- | 1 |
| --//-- | Երիզակ | 5 | 9 | 1 | 10 | 4 | 4 | 8 | 5 | 7 | 12 |
| *Ընդամենը* | | *32* | *76* | *93* | *169* | *31* | *39* | *70* | *45* | *54* | *99* |
| *ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐ* | | *1366* | *3562* | *7360* | *10922* | *1079* | *1519* | *2598* | *2483* | *5841* | *8324* |

ՀԱԱ ֆոնդ 201, ցուցակ 1, գործ 156, թթ. 1-219: Բնագիր ձեռագիր:

## N 19

## Զեկուցագիր Ղարաքիլիսայից Երևան Զորահրամանատարին 17 նոյեմբերի, 1920թ., Երևան

Ղալթախչիից փախած, Ղարաքիյիսայից եկած 65-ամյա Վարդան Աֆրիկյանը հետևյալ տեղեկությունը հայտնեց. «Նոյեմբերի 14-ին, հետ ճաշու թուրքերը մտան Ղալթախչի գյուղը մեկ թնդանոթով, մեծ թվով գնդացիրներով: Սպանվածներ և վիրավորներ նրանց հետ չկային: Մենք նրանց դիմավորեցինք հաց ու աղով: Նրանք հայտարարեցին, որ մենք չվախենանք և չփախչենք, քանի որ նրանք գործ ունեն թուրքահայերի հետ: Մեր առաջարկությունը՝ զորքի համար ճաշ պատրաստելու, նրանք մերժեցին, ասելով, որ կճաշեն վաղը: Մինչև մութն ընկնելը, նրանք շրջապատեցին գյուղը և հետո պահանջեցին գյուղի քահանային և երեք ազդեցիկ գյուղացիների ու նրանց վերցնելով իրենց հետ, իրենց զորքով հեռացան Փոքր Քյափանակի ուղղությամբ: Նոյեմբերի 15-ին՝ ճաշի ժամին, թուրքերը մեծ ուժերով և երեք զորայունով նորից եկան: Մեկ զորայունը մտավ Ղալթախչի, մյուսը գնաց Ղարաբոյա, իսկ երրորդը՝ Աղբուլաղ: Մինչ մութն ընկնելը, նրանք գյուղը պահեցին պաշարված վիճակում, իսկ երեկոյան գյուղի ավագից պահանջեցին հավաքել բոլոր գյուղացիներին և նույնիսկ երեխաներին, ծերերին ու կանանց, իբր ցուցակագրման, սպառնալով, որ ով չներկայանա, կամ թաքնվի, կախաղան կբարձրացվի, իսկ նրանց տները հրի կմատնվեն: Բոլորին հավաքելով՝ նրանք առանձնացրին տղամարդկանց և 20 հոգանոց խմբերով, յոթ ասկյարների ուղեկցությամբ տարան: Այդ խմբերը նրանք խցկում էին տները և կոտորում. վերցնում էին դանակներն ու փողերը, որից հետո 4-ական մարդ մտցնում էին տները և սվիններով խողխողում: Սվինի առաջին հարվածից հետո ես ճչալով ընկա գետին: Մյուսները սկսեցին ընկնել ինձ վրա, և այսպիսով ասկյարները չիմացան, որ ես կենդանի եմ: Դիակների տակից ես լսում էի սպանվող կանանց և երեխաների ճիչերն ու հեծկլտանքները: Արդեն մութն էր: Թուրքերը լույս վառեցին և հայհոյելով սկսեցին վիրավորներին սպանել սվիններով: Նրանք կոտորեցին ողջ գյուղը: Գիշերը ինձ հաջողվեց դուրս գալ դիակների տակից և տների միջով, որոնք նույնպես լցված էին դիակներով, հասնել գյուղի ծայրը: Թուրքերը խարույկներ էին վառել և ցնծում էին: Ես աննկատ փախա Փոքր Քյափանակի կողմը ու, անցնելով երեք վերստ, շրջվեցի Ավդիբեկ գյուղի կողմը և նոյեմբերի 16-ի լուսաբացին եկա Համամլու:

Հակառակորդի մասին նա չկարողացավ ոչ մի տեղեկություն տալ:

**ՍԵՊՈՒՀ**

**ՀԱԱ ֆոնդ 200, ցուցակ 1, գործ 602, թ. 322: Հեռագրի պատճեն:**
**Թարգմանություն ռուսերենից:**

## N 20
## Զեկուցագիր Ղարաքիլիսայից զորահրամանատարին
## 17 նոյեմբերի, 1920թ.

Նոյեմբերի 16, ժամը 20-ի ռազմական գործողությունների ամփոփագիր.

Մեր հետախուզությունը պարզել է, որ Ղալթախչի և Աղբուլաղ գյուղերը գտնվում են հակառակորդի ձեռքում: Հակառակորդի հետախույզները հասել են Նալբանդ գյուղ և պահանջել 800 մարդու համար տեղ պատրաստել: Հակառակորդը Գյուլլիջան և Թափանլի գյուղերից պահանջել է 15 մարդ: Ղալթախչիից փախած մի կնոջ ասածով, հակառակորդը երկու անգամ գրավել է այդ գյուղը, կոտորել է ողջ բնակչությանը՝ չխնայելով նույնիսկ կանանց, երեխաներին և ծերերին: Պարզվում է, որ նոյեմբերի 16-ի մարտերում հակառակորդը տվել է մեծ թվով սպանվածներ և վիրավորներ: Նոյեմբերի 10-ին Մեյմեխ ուղարկած հետախույզները մառախուղի պատճառով ոչինչ չեն նկատել: Նոյեմբերի 17-ին Նոր-Միխայիլովկայի ուղղությամբ ուղարկում եմ հետախույզներ:

**ՍԵՊՈՒՀ**
**ճիշտ է՝ փոխտեղակալ,**
**հետևազորի գեներալ Նազարբեկով**
**ՀԱԱ ֆոնդ 200, ցուցակ 1. գործ 602, թ. 307:**
**Հեռագրի պատճեն: Թարգմանություն ռուսերենից:**

## N 21
## Ալեքսանդրապոլի գավառի առաջին գավառամասի կոմիսարի օգնականի զեկուցումը գավառային կոմիսարին՝ գավառամասի իրավիճակի մասին
## 27 նոյեմբերի 1920թ., Ալեքսանդրապոլ

25/11 սոյն թւին 20 միլիցիօներներով և երեք ասկարով դուրս եկայ առաջին գաւառամասը, երեկոյեան ժամը 8-ին հասայ Դուսկեանդ գիւղը, որը լցած էր տաճկաց զօրքերով: Ժողովուրդը նորանց յանձնել էր մարագների բալանիքները, որպէսզի բռնաբարութիւններ չլինի: 27-ին դուրս եկայ Դուսկեանդից, գնացի Հաջինազար: Աչքովս տեսայ սոսկալի մի պատկեր: Կոմիսար Արշակին սպանել էին: Նորանց պատմելով, մի հատ դաշնակցական ագենտ կար, անունը Սումբատ: Մի տան մեջ հաւաքւած էին հասակաւոր կնիկմարդիկ: Մի ուրիշ տան մեջ հաւաքել

էին երիտասարդ հարսներու, մի ուրիշ տան մէջ էլ օրիորդներուն: Իսկ մի ուրիշ տան մէջ հաւաքել էին տղայքին 8 տարեկանից մինչև 15 տարեկանը: Դրանց պատմելով 10 տարեկանից բռնաբարւում են օրիորդները: Իսկ հասակաւոր կնանիքն ու տղայքը սովից մեռնում էին: Տեսնելով այս սոսկալի պատկերը, ես դիմեցի թուրք օֆիցերին, որ թոյլ տա այդ հասակաւոր կնիկմարդկանց և տղայքին, որ գան քաղաք իրանց բարեկամներու տները և թոյլ տա ձերբակալել յայտնի դաշնակցական ագենտ Սումբատին: Նա պատասխանեց. «Ես Ձեզ չեմ ենթարկւում, որ Ձեր խնդիրքը կատարեմ»: Մի 20 րոպէից մեզ շրջապատեցին տաճկաց զինուորներով և ճանապարհեցին Ջաջուռ՝ Ալայ կոմանդատին:

Գնացինք Ջաջուռ գիւղը: Գիւղում ոչ մի հայի չտեսանք: Մեզի ներս արին մի տուն, վերցրին մանդատը, ներկայացրին Ալլայ կոմանդատին: Մի քանի րոպէ յետոյ մի տաճիկ օֆիցեր եկաւ և ասաւ, մեզի պրիկազ չկայ, որ մենք հայերուն թոյլ տանք զէնքով պաշտպանելու գիւղերը: Ես Ձեզ հրամայում եմ անմիջապես վերադառնաք: Նա անքաղաքաւարի պատասխանեց, որ եթէ մէկ էլ կրկնէք այդ խօսքը, զինաթափ կանեմ և կգնդակահարեմ: Հեռացաւ գիւղից և վերջին խօսքը ասեց. «Ձեր թոզը չը տեսնեմ այս տեղանք»: Ես հեռացայ Դուսկեանդ: Այդ օրը սկսեցին թալանել հացահատիկները: Գիւղերը շատ սոսկալի դրութեան մէջ են:

**Առաջին գաւառամասի կոմիսարի օգնական**
**ՀԱԱ, ֆոնդ 144, ցուցակ 1, գործ 27, թ. 3: Ինքնագիր:**

## N 22
## Ալեքսանդրապոլի գավառի կոմիսարի զեկուցումը ներքին գործոց կոմիսարին՝ երրորդ գավառամասի դրության վերաբերյալ
## 2 դեկտեմբերի 1920թ., Ալեքսանդրապոլ

Ինչպէս ես տեղեկացել եմ հարուստ աղբիւրներից, երրորդ գաւառամասի գիւղերը տաճիկ զօրաց վերցնելուց յետոյ, գտնւում են անմխիթար դրութեան մեջ: Զօրօրինակ, գաւառամասում տիրում է անարխիա, թուրք խուժանը անսանձ լինելով, թոյլ է տալիս իրեն կատարել կողոպուտներ, սպանութիւններ և այլ բռնութիւններ: Գիւղերի տաւարը տարւում է գաւառից, իսկ ազգաբնակչութիւնը ենթարկւում է սպանութեան և զրկանքի ու նեղութեան: Չիֆթալի գիւղից տարւած է

տաւարը և 40 հոգի ազգաբնակչութիւնը, որոնցից 10 հոգի սպանուած են, իսկ մնացածները ենթարկւում են սովի: Կիզիլկոչ և Բոզեղուշ և այլ գիւղացիք դուրս են վռնդուած ուրիշ գիւղեր և գտնւում են աննկարագրելի խեղճ դրութեան մեջ: Մնացած տեղերում գիւղացիք ենթարկւում են պարբերաբար ոչնչացման:

Զեկուցելով Ձեզ վերոյիշեալի մասին խնդրում ենք շուտափոյտ կարգադրութիւն ուղարկելու իմ տրամադրութեան ներքոյ ասկէարներ յիշեալ գաւառամասի գիւղերը կարգը վերականգնելու և ապահովելու ժողովրդի դրութիւնը: Ընդսմին ներկայացնում եմ սպանուածների և գերուածների ցուցակը:

**Ալէքսանդրապօլի գաւառի կոմիսար**
**Քարտուղար՝ Ա.Ալէքսանդրեան**
**ՀԱԱ, ֆոնդ 144, ցուցակ 1, գործ 27, թ. 9: Բնագիր: Ձեռագիր:**

## N 23
## Ալեքսանդրապոլի գավառի կոմիսարի զեկուցումը ներքին գործոց կոմիսարին՝ գավառի դրության մասին
## 9 դեկտեմբերի 1920թ., Ալեքսանդրապոլ

Այսօրւայ իմ ստացած տեղեկութիւնների համաձայն գաւառում կատարւում է հետևեալը: Գաւառամասի կօմիսարների և գաւառի միլիցիայի կոմիսարի օգնական Գ. Աղէկեանի զեկոյցից պարզւում է, որ գաւառի գիւղերը՝ Հոռոմ, Մոլլա Գեոկչայ, Թոմարտաշ,Ղափլի,Տավշանղշլաղ,Մուսլուխլի,Թալիբօղլի և միւս մնացածները ենթարկւում են անխնայ աւերումների, բառիս բուն նշանակութեամբ, վառում են տները, խօտերը, մարաքները, մնացած մարդկանց կին թէ տղամարդ մերկացնում են ու ինչպես ասում են «վեր են վարում»: Քիւրտերի ու ասկէարների քէֆը ուզած ժամանակ նորից հաւաքում են, այս անգամ ևս երեխաներին էլ են քշում ցուրտ մարաքները: Սարսափելի տեսարան է ստացւել գաւառում: Չնայած որ ուղարկւած են գաւառ մօտ 160 միլիցիօներներ, նշանակւած են պօստեր, այնուամենայնիւ գաւառային միլիցիայի օգնականը և գաւառամասի կոմիսարը անկարող են ոչ մի բան անելու: Քիւրտերը նոյնիսկ ձերբալալել են չորրորդ գաւառամասի կոմիսարի, միլիցիօներների, թալանել են, տարել են սրանց Հոռոմից մինչև Արփաչայ, ու այնտեղից տկլոր վերադարձրել են էլի Հոռոմ գիւղը: Այսպէս է դրութիւնը գաւառի, մեր ուղարկած միլիցիան ոչինչ չի կարողանում անել: Գիւ-

ղացիք դիմում են ինձ, օգնութիւն են խնդրում, մէկի երեխան է սրախօղխօղ արուած, միւսի կինը բռնաբարուած ու անհետացած, մէկը երեխաներին թողել և փախել է այստէղ և միւսի երեխան է մի կերպ հասել և նոյնպէս օգնութիւն խնդրում: Այսպիսի դէպքերը անհամար են գաւառում, մանաւանդ վերջին երկու օրերը: Բայրահաւաքելու մասին չեմ խօսում: Փոքր Քեթիում (առաջին գաւառամասի գիւղերից) հաւաքւած են մի ցուրտ տեղ բոլոր այս շրջանի գիւղերի կանայք ու տղամարդիկ, չեն խնայել նոյնիսկ երեխաներին: Սրանց բոլորին տարել են և ոչ ոք չգիտէ, թէ ուր են տարել: Յայտնելով այսպիսի դրութեան մասին, խնդրում եմ դիմէք ուր որ հարկն է ընդհանուր կարգադրութիւն անելու վերջ տալու զոնէ սպանութիւններին և տրամադրել մի քանի ասկէարներ միլիցիայի հետ գաւառ ուղարկելու:

Առանց ասկէարների մեր միլիցիան իրենց կոմիսարներով հանդերձ ոչինչ չեն կարող դրական մի բան անել, գիւղացիութիւնը կոտորւում է, թալանւում, սովի է մատնւում:

**Գավառի կոմիսար**
**ՀԱԱ, ֆոնդ 144, ցուցակ 1, գործ 27, թ. 20: Ինքնագիր:**

## N 24

## Ալեքսանդրապոլի առաջին գավառամասի կոմիսարի տեղեկությունը գավառային կոմիսարին թուրքերի կողմից տարած կանանց եվ աղջիկների մասին
## 24 դեկտեմբերի 1920թ., Ալեքսանդրապոլ

Համաձայն Դուզքանդի համայնքի կոմիսարի զեկուցման, Խանալի գիւղից բերել են Չրախլի գիւղը թուրքերը 40-ի չափ հարս և աղջիկ, որոնցից երեքը գտնւում են Դուզքանդում, այնտեղից մնացածները կորել են, յայտնի չէ, թէ որտեղ են: Խնդրում եմ այս մասին կարգադրէք ուր հարկն է իմանալու, թէ որտեղ են:

**Կոմիսար**
**ՀԱԱ, ֆոնդ 144, ցուցակ 1, գործ 37, թ. 15: Բնագիր: Ձեռագիր:**

## N 25
## Հատված Ալեքսանդրապոլի Հեղկոմի զեկույցից Հայաստանի Հեղկոմին
## 25 դեկտեմբերի, 1920թ., Ալեքսանդրապոլ

Քաղաքում տրամադրությունը տագնապալի է, ահա արդեն երկու շաբաթից ավելի է, որ քաղաքից տարվում է բացարձակապես ամեն ինչ՝ գյուղատնտեսական գործիքներ, շոգեքարշներ, հեռագրային և հեռախոսային ապարատներ, ավտոմեքենաների մասեր, մեքենաներ, կահկարասի և այլն: Մի խոսքով, տարվել է բնակիչների ողջ ունեցվածքը: Գավառն ամբողջովին ամայացված է, բոլոր անասունները քշվել են: Բնակիչների մի մասը սպանված է, մյուսները փախել են: Իսկ այժմ, երբ իրենց կողմից թալանված է ամբողջ ունեցվածքը և ժողովրդական տնտեսությունը հիմնովին քայքայված է, նրանք մեզ անվերջ այս կամ այն պահանջներն են ներկայացնում, ոչ թե ինչ-որ բան մեզնից վերցնելու նպատակով, այլ որպեսզի սրեն մեր փոխհարաբերությունները և առիթ ստեղծեն ընդհարման համար:

**Հեղկոմի անդամ՝ Մ. Զավարյան**
**ՀԱԱ ֆոնդ 114, ցուցակ 2, գ 43. թ. 11, գործ 33. թ. 1:**
**Թարգմանություն ռուսերենից:**

## N 26
## Հատված Հայկական ԽՍՀ Հեղկոմին ներկայացված զեկուցագրից
## 28 դեկտեմբերի, 1920թ., Երևան

Ալեքսանդրապոլի գավառում և Ախալքալաքի շրջանում սրի են քաշվել մոտ 30 գյուղ, մի մասը, որ հասցրել է փրկվել, գտնվում է ամենաթշվառ վիճակում: Քաղաքում ամբողջ պարենը թաքցված է՝ թուրքերի բռնագրավումից վախենալու պատճառով: Բռնագրավելու գործում թուրքերը իրենք իրենց գերազանցեցին: Տարվում է ամենայն ինչ, նույնիսկ կրոնական բովանդակության նկարները:Չբավականալով իրենց զգեստով, նրանք փողոցներում նույնիսկ օրը ցերեկով, կողոպտում են քիչ թե շատ լավ կոշիկներ կամ վերարկու ունեցող քաղաքացիներին:

Նրանց կառավարման սկզբնական շրջանում էրզրում են ուղարկվել 14-28 տարեկան բազմաթիվ երիտասարդներ, Կարսից եկածների տեղեկություններով, սրանց, մերկացրել են, հագուստի փոխարեն տվել են պարկեր և ստիպել են

աշխատել: Իհարկե, նրանցից շատերը մահացել են քաղցից ու ցրտից: Կարմիր բանակի նկատմամբ թուրքերի վերաբերմունքը թշնամական է, թեև նրանք փորձում են դա թաքցնել: Մի սպա ինձ բացարձակ ձևով հայտնեց, որ ռուս բոլշևիկներին պետք է կոտորել:

**Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան և Սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում (փաստաթղթերի ժողովածու), Երևան, 1960, էջ 438-439:**

## N 27

## ՀԽՍՀ Ալեքսանդրապոլի գավառի 2-րդ գավառամասի կոմիսարը Երևանի Հեղկոմին 1 հունվարի, 1921թ., Քյավթառլի

Անցյալ 1920 թվականի դեկտեմբերի 26-ին Քյավթառլու ժամանեց թուրքական մի ջոկատ, բաղկացած 36-րդ թուրքական եգերական գնդից:

Քեմալական շարժումը, որպես ազգային շարժում, սկզբից իսկ մեր առջև բացեց իր քաղաքական նպատակը՝ Հայաստանն ամայացնել, իսկ հայերին ոչնչացնել՝ լինի դաշնակցական, թե սովետական, անկախ կուսակցություններից:

Պարենամթերքները ամբողջովին տարված են, բոլոր անասունները՝ հափշտակված, մարդիկ սարսափահար փախել են անտառները, գյուղերը վերջնականապես ավերված են, սև ամպեր են կուտակվել, հայկական տխրալի իրականության վրա, ոչնչանում է ժողովուրդը, ոչնչանում է հարստությունը, մոտենում է սովամահության դաժան ուրվականը, մանավանդ, որ առջևում ոչ մի լավ բան չի նախատեսվում:

**Կոմիսար**
**իսկականի հետ ճիշտ է՝**
**ՀՍՍՌ պատգամավորության քարտուղար**
**ՀԱԱ ֆոնդ 114, ցուցակ 2, գործ 43, թ. 21:**
**Թարգմանություն ռուսերենից:**

## N 28

## Չեզոք գոտու Ադմինիստրացիայի կոմիսարի օգնականը Կենտրոնական Հեղկոմի նախագահ ընկ. Կասյանին 2 հունվարի, 1921թ., Չեզոք գոտի

Տաճիկների վերաբերմունքը դեպի ժողովուրդը վերջին ժամանակ փոխվել է, նրանք ոչ մի միջոց չեն խնայում ժողովրդի քայքայման և ճնշման համար: Ամեն օր տաճիկների կողմից գրավված գյուղերից գալիս են Չեզոք գոտի՝ մեզ մոտ, և գանգատվում նրանց ավարառության, բռնաբարության և սպանությունների համար: Բացի դրանից ամսի 1-ին եկան գյուղացիները և հայտնեցին, որ առաջինը տաճկական հրամանատարությունը հավաքեց ամեն մի նյութական բանից «բայրա», որի մասին ունենք ստացականներ և փաստաթղթեր: Ներկայումս ղեկավարությունը փոխվել է, հների տեղը եկել են նորերը և կրկին պահանջում են բայրա, չնայած որ ունենք համապատասխան ստացական:

Այս գիշեր ստացա 4-րդ գավառամասի կոմիսարից գրություն, որով նկարագրվում է ժողովրդի խուճապի մեջ լինելը: Տաճիկները գալիս են գյուղերը և անպաշտպան գյուղացիությանը թալանելուց հետո,կատարում են անխնա սպանություններ: Մի քանի օրվա ընթացքում միայն 4-րդ գավառամասում սպանված են 200-ից ավելի հայ գյուղացիներ: Մենք մեր միջոցներով անզոր ենք այդ բաների առաջն առնելու, ուստի դիմում ենք ձեր կարգագրությանը, հայտնելով ձեզ ի գիտություն, միևնույն ժամանակ խնդրում ենք դիմել կտրուկ միջոցների, ուր հարկն է և ազատել խեղճ գյուղացիությանը այդ դրությունից:

**Կոմիսարի օգնական՝ Գալոյան**
**ՀԱԱ ֆոնդ 114, ցուցակ 2, գործ 43, թ. 30:**
**Թարգմանություն ռուսերենից:**

## N 29
## Մարիամ Զավարյանի հայտարարությունը Զաջուռի մոտ հայ գաղթականներին կողոպտելու մասին
## 10 հունվարի, 1921թ., Երևան

Սանահինում և շրջակայքում թափված է անպատսպար 6000 հայ գաղթականություն: Վրաց կառավարությունը կատեգորիկ կերպով մերժում է նրանց թույլատրել շարունակել իրենց ճանապարհը Վրաստանի միջով: Սանահինի Վրաց իշխանությունը հայտնել է, որ եթե Հայաստանի կառավարությունը շուտով այդ գաղթականության մասին որոշ կարգադրություն չանի, ինքը ստիպված կլինի գաղթականներին դուրս հանել Վրաստանի տերիտորիայից:

Ես, որ եկել էի ամսի 21-ին Թիֆլիսից, գաղթականների գործերով դիմել եմ՝ Ղարաքիլիսայի Հեղկոմին, որպեսզի նա միջոցներ ձեռք առնե այդ խեղճ գաղթականներին փոխադրելու Հայաստան: Հեղկոմը հայտնում է, որ ինքը լիազորված չէ այդ հարցում և ավելի լավ է դիմել Երևան ընկ. Կասյանին: Մինչ այդ մի գնացք, բաղկացած հինգ վագոններից լեցուն գաղթականներով, Ղարաքիլիսայի Հեղկոմը ուղարկել է Ալեքսանդրապոլ: Գնացքում էր նաև Ղարաքիլիսայից մի թուրք սպա՝ իր հետևորդներով: Գնացքը Զաջուռի մոտ թունելի մուտքի առջև կանգ է առնում՝ մեքենան ձյունի մեջ խրվելու պատճառով և մնում է երկու օր. Զաջուռի թուրք զինվորները և խուժանը, տեղեկանալով այդ մասին, գիշերով հարձակվում են գնացքի վրա և թալանում են գաղթականներին, շատերին թողնելով միայն ներքին շորերով: Սարսափահար գաղթականությունը ուղարկում է իրենցից մեկը Ղարաքիլիսե՝ Հեղկոմին խնդրելով նոր մեքենա հետ գնալու դեպի Ղարաքիլիսե, որովհետև այդ տեղը մնալը իրենց սպառնում է թուրքերի կողմից կոտորած: Հեղկոմը ուղարկում է խնդրված մեքենան, որը բերում է գնացքը Ղարաքիլիսա՝ ահաբեկված գաղթականներով:

**Մարիամ Զավարյան**
**ՀԱԱ ֆոնդ 114, ցուցակ 2, գործ 43, թ. 39:**
**Բնագիր: Ձեռագիր:**

## N 30
## Ալեքսանդրապոլի Հեղկոմի անդամ Նահապետի վկայությունը
## 14 հունվարի, 1921թ., Ալեքսանդրապոլ

Ամբողջ գավառը բաժանված է 8 գավառամասերի, որոնցից 4-ը Արփաչայի մյուս կողմն են գտնվում և բոլորովին դատարկ են: 1-ին գավառամասը ունի 34 գյուղ, այս գյուղերից մնացել են կիսաավերված դրության մեջ 4-ը միայն՝ Ղարաքիլիսա, Դուզքենդ, Թափադոլլակ և Դահարլի: Մյուս գյուղերում ոչ մարդ կա և ոչ էլ անասուն: Այս շրջանից տարած գերիների թիվը հասնում է մոտ 8000-ի, բռնաբարված են բոլոր կանայք, չխնայելով նույնիսկ 12 տարեկան աղջիկներին: Պատահել էր որ աչքովս տեսա, որ սայլերով գյուղերից բերում էին խոտ, իսկ տակին թաքցրել էին կանանց, 2-3 անձ: Ահա դրությունը:

II գավառամասից գրավել են միայն 6 գյուղ: Ղոլղաթ և Ղուլիջան գյուղերը բոլորովին քանդել են: Այս շրջանում սպանել են 150 մարդ, գերիների թիվը 200 է, բռնաբարված են կանանց 90%-ը, բացի թալանից վերցրել են նաև ամբողջ տավարի և հարստության 1/8 մասը: Վերջերս էլ Քյավթառլի գյուղում խոտերի դեզի մեջ սպանել են մեր կուսակցական 10-ը ընկերների:

III գավառամասը բոլորովին թույլ չտվին մեզնից մարդ գնալու: Այս շրջանի 15 գյուղերի բնակիչներին գաղթեցրել են Չիվթալի գյուղը, նրանց ամբողջ հարստությունը թալանի մատնելով: Տարել են գերիներ, բայց անհայտ է թե ուր:

IV գավառամասի 39 գյուղից մնացել են Մոլլա Գյոկչա, Հոռոմ և Մեջիթլու գյուղերը: Միայն կանայք: Մյուս գյուղերում ոչ ոք չկա: Գյուղերը թալանելուց հետո կրակ են տվել: Բացի մի քանի գյուղերերից, մնացածը քանդված են բոլորովին:

Ամբողջ գավառից տարել են 300.000 տավար, որից 200.000-ը տարված է Ղարսի շրջանի Բաշքյադիկլարի շրջանը, իսկ մնացածը այս կողմումն են ծախել:

Քաղաքից և գավառից տարած գերիների թիվն է 14.140 անձ, սպանել են 4845-ը, բռնաբարված կանանց և աղջիկների թիվը 25.000-ից անց է: Թալանած ցորենի և ալյուրի թիվը 1.500.000 փթից անց է: Կարող եմ ասել, որ չունենք գավառ: Ամբողջ գավառի 75.000 բնակչությունից 15.000-ը հազիվ է մնացել, ոչ մի հարստություն չկա, ամենուրեք ամայություն է. մեր միլիցիոներներից ոչ ոք չի կարող գավառ դուրս գալ:Դրանց կամ սպանում են և կամ անհետ կորցնում: Սպանված են մինչև այժմ մեզնից 22 միլիցիոներ, որից 13-ը կուսակցական: Սպանել են նաև մեր 2 կոմիսարներին: Գերի տանելիս նույնիսկ չէին խնայում մեր կուսակցական ընկերներին: Տարված են 30-ից ավելի կուսակցականներ: Գիշերները մտնում են տները թալանում, կանանց բռնաբարում, իսկ տղամարդկանց տանում են ու սպանում: Դրությունը սարսափելի է:

**Հեղկոմի անդամ՝ Նահապետ**
**ՀԱԱ ֆոնդ 114, ցուցակ 2, գործ 43, թթ. 5-7:**
**Բնագիր: Ձեռագիր:**

## N 31

## Ալեքսանդրապոլի գավառի առաջին գավառամասի կոմիսարի զեկուցումը գավառային միլիցիայի կոմիսարին՝ գավառամասի գյուղերում տիրող իրավիճակի մասին

## 16 հունվար 1921թ., Ալեքսանդրապոլ

Համաձայն Ձեր գրութեան N 383 յունվարի 14-ին տալիս եմ հետևեալ զեկուցումը: Այն օրւանից, երբ իշխանութիւնը վերցրինք մեր ձեռքը և կազմակերպեցինք միլիցիայի կազմը, իմ օգնական Արշակ Սարգիսեանը գնաց գաւառի զանազան գիւղերը, որտեղից բերեց հետևեալ տեղեկութիւնները: «Դուրս եկայ քաղաքից գնացի Հաճինազար գիւղը: Գիւղում կար ասքէարներ և մի հարիւրապէտ, գնացի նրա մօտ խնդրեցի, որ թոյլ տայ իմանալ ժողովրդի դրութիւնը, նա չը մերժեց իմ խնդիրս տւեց երկու ասքէար, գնացի գիւղի մէջ, որտեղ հաւաքւած էին մի տան մէջ օրիօրդներ, մի տան մէջ հարսներ, մի տան մէջ հասակաւոր կանայք և մի տան մէջ էլ երեխաներ 8-13 տարեկան: Այդտէղ հաւաքւած էին Ճաճուռի, Աղքիլիսայի, Արխուալիի կանայք և աղջիկները: Նրանք բոլորն էլ բռնաբարւած էին: Իսկ կանայք և երեխաները իրենց պատմելով սովամահ էին լինում: Գիւղում սպանւած էր 50-ի չափ տղամարդիկ: Մալ, ոչխար և հացահատիկները թալանել էին: Թաքնւած, գետնի տակ պահւած հացահատիկները, շնորհիվ դաշնակցական Սմբատ Հարոյեանի քանդել տարել էին: Բացի այդ մարդուց գիւղում ուրիշ տղամարդ չը կար: Ուզեցի ձերբակալել բերել քաղաք Սմբատին, բայց հարիւրապէտը թոյլ չը տվեց: Ես միևնոյն ժամանակ դիմեցի նրան, որպէսզի թոյլ տա քաղաք բերելու բանտարկւած կանանց, նա պատասխանեց. «Ինձ այդպէս իրաւունք չէ տրւած, գնացեք Ճաճուռ գիւղ դիմէ Ֆրդա կոմանդանին (Խալիլ փաշային), եթե նա հրամայէ, ես պատրաստ եմ թոյլ տալու: Գնացի Ճաճուռ Խալիլ փաշայի մօտ, նա պահանջեց դոկումենտ: Ես ցոյց տվի իմ մանդատը: Նա իմ մանդատը ձեռքիցս առաւ և արհամարհանքով նետեց մի ախոռ, միլիցիաներն էլ հետս: Մեզ վրայ կանգնեցրին պահակ, մնացինք բանտարկւած մօտ կես ժամ. եկավ մի օֆիցեր, հանեց բանտից շարքով կանգնեցրեց և այսպէս պատւիրեց. «Եթէ միւս անգամ այս գիւղերում երևաք կը գնդակահարւեք»: Ես պահանջեցի իմ մանդատս և իրանց հասցեն: Նա պատասխանեց.«եթէ կրկնես այս խօսքերը կը հրամայեմ ձեզ այստէղ ջարդ ու փշուր կանեն: Հեռացեք այստէղից»: Մեզ գիւղից դուրս արին: Գիւղում ոչ մի մարդ չկար, ամբողջովին մատնւած էր թալանի:

Գիւղից դուրս եկանք, քիչ հեռու ճանապարհի վրայ ընկած էր 5 կանանց և 12 հատ տղամարդկանց դիակներ: Չնայած, որ Ճաճուռում ինձ 15 միլիցիօներներով բանտարկեցին, Ճաճուռից դուրս եկայ ու գնացի Ղոնախռան գիւղ, այնտեղ բնակ-

չութիւն չկար: Գիւղի բոլոր կար թափթփած 20-ի չափ կանանց ու տղամարդկանց դիակներ: Գիւղում կար 2 հատ ասքէար: Հարցուցի նրանց, պատասխանեցին, որ չգիտեն: Այստեղից վերադարձայ Թոփառլի գիւղը: Գիշերեցի այնտէղ, առաւօտեան վեր կացայ ման եկայ գիւղի մէջ: Թոփառլեցի 6 հոգի սպանուած ձգուած էր փողոցը: Գիւղում ասքէար չկար և թալանի էր ենթարկուած: Գիւղից 250 հոգի տղամարդկանց գերի էին տարել: Մօտ հարիւր հոգի կանայք կային: Նրանց մէջ կար մի ղոնախռանցի հարս, որ հետևեալը պատմեց իրանց գիւղի մասին. «Ղոնախռան գիւղում տղամարդկանց ինչ որ կոտորեցին կոտորեցին, մնացածներին էլ գերի տարան, հարս ու աղջիկներին տարան Աղ-Բուլաղ գիւղը, ես հազիւ հազ փախա եկա այստեղ»: Այդ օրը գնացի Դարբանդ, տղամարդ չկար: Կանայք գիւղն էին, մալ ոչխար թալանուած էր: 70 տղա մարդ գերի էին տարուած: Նմանապէս Արըխալի գիւղը: Այդ օրը վերադարձայ Թոփառլի: Գիւղ էին եկել 40 ասքէարներ: Դարբանդից կանայք բերին Թոփառլի գիւղը, ուզեցի դուրս գալ իմանալ դրանց դրութեան մասին, բայց վտանգաւոր էր, չկարողացայ:

Առաւօտեան ժամը 7-ին գնացի իրենց չաուշի մօտը խնդրելով և վախեցնելով հազիւհազ կարողացայ ազատել ասքէարների ճանկերից այդ կանանց:Բռնաբարել էին 12 տարեկան աղջիկներին, որոնցից 4-ը մեռել էին,իսկ մնացած 100-ի չափ կանանց և աղջիկներին միլիցիաների հետ ուղարկեցի Ալէքսանդրապոլ: Այդ օրը սպանել էին Դարբանդի գիւղացի Մուքոյին և իրա կնոջը: Թոփառլիից գնացի Օրթաքիլիսա, այնտէղ էր նոյն պատկերն էր ինչ որ Թոփառլի գիւղը: Կանանց ասքէարները սեփականացրել էին և ստիպում էին նրանց ծածուկ հորեր գտնում, հանում էին հացահատիկներ:Փոքր Քէթի գիւղի մարդկանց տարել էին գերի, գիւղում սպանուած էր 10 մարդ: Նմանապէս Մեծ Քէթի գիւղը: Կապս և Ղանլիճաներից տեղեկութիւն չունեմ, քանի որ հնարավորութիւն չունինք գնալու այդ գիւղերը:

Վերջի օրերս Թոփառլի գիւղում սպանել են երկու կանանց, պատճառը, որ ստիպել են, թէ պահած հորերի տեղ ասեն, նրանք էլ չեն ասել և սպանել են: Թոփառլի գիւղից 5 տղամարդ գնացել են գիւղից դարման բերելու: Նրանց էլ այնտէղ են սպանել: Սոյն թւի յունվարի 13-ին 2 հոգի՝ Բաշ-Շորագեալ գիւղացի գնացել են Թոփառլի դարման բերելու, վերադարձին քաղաքից 2 վերստի վրա սպանուել են, որոնց մասին զեկուցել եմ Ներքին գործոց բաժնի վարիչին՝ N 22 գրութեամբ 15 յունվարի: Առաջին գաւառամասիս մէջը կայ չորս գիւղ, որոնք մասնաւորապէս թալանուած են. Դյուզքանդ, Թափադոլլակ, Խլի Ղարաքիլիսա և Դիրաքլար: Ամսոյս 13-ին Դիրաքլար գիւղից տարել էն 80 եզ և կով, 150 ոչխար և պահանջում են գիւղից 500 փութ ցորեն և 1000 փութ գարի, որի համար դիմել ենք գաւառային միլիցիայի կոմիսարին և Ռեկոմին:

**Կոմիսար առաջին գաւմասի գործավար**

**ՀԱԱ, ֆոնդ 3, ցուցակ 1, գործ 21, թթ. 4-5: Բնագիր: Ձեռագիր:**

## N 32

## Հայաստանի Հեղկոմին, պատճենը՝ Անդրհեղկոմին, ՌՍԴԽՀ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդին, III Կոմունիստական Ինտերնացիոնալի Գործադիր Կոմիտեին, բոլորին, բոլորին, բոլորին 25 հունվարի, 1921թ., Ալեքսանդրապոլ

Երկարատև ռազմական տիրապետության անտանելի ծանր մամլիչը, քաղաքացիական իրավունքների կատարյալ ոչնչացումն և քաղաքում ու գավառում ստեղծված սարսափելի պայմանների պատճառով մեր հետագա աշխատանքների անհնար լինելը, ստիպում են մեզ դիմել ձեզ ներկա հայտարարությամբ...:

1. Մինչև հունվարի մեկն ընկած ժամանակահատվածում Ալեքսանդրապոլ քաղաքից և համանուն գավառից հավաքվել և Էրզրում է ուղարկվել 15.000 բանվոր և գյուղացի՝ այդ թվում բազմաթիվ կոմունիստներ: Անհայտ կորել են և սպանվել 5.000 մարդ:
2. 1-ին գավառամասում 34 գյուղից ողջ է մնացել միայն 4-ը, այն էլ առանց տղամարդկանց, բացառապես կանացի մեռնող ազգաբնակչությամբ, որոնց հանդեպ բռնությունները չեն դադարում:
3. 4-րդ գավառամասում ողջ է մնացել միայն 3 գյուղ: Ալեքսանդրապոլի գավառի գյուղացիների ողջ ինչքը տարված է: Գրեթե ողջ գավառում սերմացուի համար հատիկ չի մնացել: Տարված են պարենավորման բոլոր պաշարները, նույնիսկ քաղաքի պահեստներից: Քշված է 300.000 գլուխ մանր ու խոշոր անասուններ:
4. Հանված են և տարված Ղարս ու Տաճկաստանի խորքերը դեպօի մեքենաները, երկաթուղային գույքը, տպարանական և այլ մեքենաներ...:
5. Անվերջ են պրովակացիոն սպանությունները, կամ մեղադրանքները սպանությունների մեջ: Օրինակ, անհայատ մարդկանց ձեռքով սպանված ասկյարի համար մինչև օրս ձերբակալված է տասը միլիցիոներ: Սրանցից մեկը արդեն մեռել է: Սկզբում միլիցիոներներին ցանկանում էին գնդակահարել, սակայն այժմ ազատելու համար պահանջում են 500 ոսկի լիրա գլխագին:Այս գլխագիները ինչպես մասնավոր,այնպես և պետական բնույթ կրող,սիստեմա են դարձել և այդպիսով քամում են առանց այն էլ քայքայված երկրի վերջին հյութերը:

Ասկյարները կատարում են ձերբակալություններ, դուրս են հանում տներից, մերկացնում, թալանում, բռնաբարում: Ներքնահարկերում կատարում են անմեղ բանվորների և գյուղացիների գնդակահարություններ: Մասնագետ բանվորներին և արհեստավորներին հավաքում են և բռնի ուղարկում Էրզրում:

**Հեղկոմի նախագահ՝ Մ. Գրիգորյան և ուրիշ**
**ՀԱԱ ֆոնդ 114, ցուցակ 2, գ. 33, թթ. 33-35:**
**Թարգմանություն ռուսերենից:**

## N 33

## Հատվածներ ռումին քաղաքացի Վասիլ Իոնեսկոյի վկայություններից՝ Վրաստանում Հայկական ԽՍՀ լիազոր ներկայացուցչությանը 27 հունվարի, 1921թ., Թիֆլիս

Անցյալ տարվա հոկտեմբերի 30-ին Կարսում գերի ընկնելով թուրքերին ես տեսա հետևյալը.

Քաղաքի բնակիչները, խուճապի ժամանակ վերցնելով իրենց ամեն արժեքավոր բան, փրկելու համար իրենց կյանքն ու ապրանքները, լցվեցին Մելիք-քյոյ կայարանի ճանապարհին ընկած կիրճը: Առավոտյան ժամը մոտ 11-ն էր, երբ թուրքական հեծելախումբը գրավեց ճանապարհի բարձունքները, և միաժամանակ ամրոցի պարետի կողմից բարձրացվեց սպիտակ դրոշ, ապա պատվիրակություն ուղարկվեց թուրքական փաշային հայտնելու, որ հայկական բանակը հանձնվում է: Երբ թուրքերը գրավեցին… բարձունքները, նրանք բարձրացրին կարմիր և սպիտակ դրոշներ: Ժողովուրդը, տեսնելով այդ, հանդարտվեց: Օգտվելով առիթից՝ թուրքերը գնդացրային կրակ բացեցին ժողովրդի վրա, որը տևեց մեկ ժամից ավելի:

Մեզ տեղավորեցին քաղաքում, 42 մարդ մի փոքրիկ սենյակում և 4 օր թողեցին առանց հացի, այնուհետև տեղափոխեցին բանտ:

5-րդ օրը 700-800 մարդ տեղափոխեցին ամերիկյան թեյի գործարան, որտեղ թուրք զինվորները մեզ ամբողջովին մերկացրին: Մեկ օր անց մեզ գնացքով ուղարկեցին Սարիղամիշ, իսկ այնտեղից էրզրում: Եղան տղամարդկանց բռնաբարության դեպքեր: Ես որպես ռումին մեկ ամիս հետո ազատվեցի և եկա Կարս, որտեղ ապրեցի մոտ 3 շաբաթ: Կարսում ես իմացա, որ քաղաքում սպանվել է 8.000 հայ, բայց իմ դիտարկումներով սպանվածների թիվը պիտի լիներ 10-12.000, քանի որ մի ամիս անց քաղաքի շրջակայքում դեռևս կարելի էր տեսնել բազմաթիվ դիակներ: Բոլոր կանայք, բացառությամբ 2-3 ընտանիքների, որոնց պաշտպանել են օսեթները, բռնաբարված ու վարակված: Քաղաքում կա մոտ 15-20 տղամարդ: Սրանք աշխատում են թուրքերի մոտ: Ես՝ որպես ռումինացի, իշխանություններից թույլտվություն ստացա և, հավաքելով փողոցի որբերից 50 երեխա (իսկ դրանք շատ են և ամեն գիշեր տասնյակներով սառչում են), բերեցի Ալեքսանդրապոլ ու հանձնեցի Հեղկոմին: Հունվարի 18-ին Ալեքսանդրապոլի աղբանոցներում հայտնաբերվեց 100 դիակ: Դրանց մեջ էր նաև Տեր Խորեն քահանան: Պարզվում է, որ այստեղ, յուրաքանչյուր երեկո բանվորներից 2-3 հոգու հափշտակում են և քաղաքից դուրս սպանում: Ալեքսանդրապոլից մինչև Նալբանդ կայարանը գտնվում է թուրքերի ձեռքին: Ըստ տվյալների ոչնչացված է 140 գյուղ, գլխովին կոտորել են 18-45 տարեկան բոլոր տղամարդիկ: Այս շրջանում մնացած հայերի և գերիների վիճակը հուսահատական է: Նրանք սառչում են կամ մեռնում սովից:

**Վ. Իոնեսկո**

**ՀԱԱ ֆոնդ 114, ցուցակ 2, գործ 33, թթ. 72-73:**

**Թարգմանություն ռուսերենից:**

## N 34

## ՀԽՍՀ Ալեքսանդրապոլի նոր գավառամասի Հեղկոմից Հայաստանի Խորհրդային Հանրապետության Նախագահ ընկեր Կասյանին 4 փետրվարի, 1921թ., Արըխվալի

36-րդ գնդի 3-րդ գումարտակի գումարտակապետ Թայմատ Ֆաիկը, որի գումարտակը կանգնած է Ալեքսանդրապոլի գավառի Քյավթառլի գյուղում, ճնշման տակ պահանջում է, որ Քյավթառլիի, Պարնիի, Ղասմալիի և այլ գյուղերի բնակիչները իրեն ներկայացնեն շնորհակալության թերթեր, այն մտքով, որ տեղիս թուրք հրամանատարությունը լավ պաշտպան է հանդիսացել խաղաղ ժողովրդին, տեղի չտալով ոչ տնտեսական քայքայման, որ թալանի և ոչ էլ սպանության: Մի պահանջ, որը խստիվ հակասում է այդ ժողովրդի արդի կացությանը, ժողովուրդ, որն անասելի սոսկումների ու զուլումների տակ մահվան է դատապարտված:

Երկյուղի տակ վերը հիշատակված պահանջը կատարվեց: Ես հասկանում եմ, որ խորամանկ և արևելյան քաղաքականությունը յուրացնող իմպերիալիստ թուրք հրամանատարությունն այդ ստոր միջոցով ցանկանում է ազդել տեղի ունեցող կոնֆերանսի որոշումների վրա:

**Հեղկոմի նախագահ (ստորագրություն)**
**ՀԱԱ ֆոնդ 114. ցուցակ 2, գործ 43, թ. 23:**
**Թարգմանություն ռուսերենից:**

## N 35

## Համառոտ տեղեկություններ թուրքերի գործողությունների մասին իրենց կողմից օկուպացված շրջաններում և Չեզոք գոտում (ՌՍԴԽՀ-ի կառավարությանը ներկայացված Հայկական ԽՍՀ Հեղկոմի զեկուցագրից) 7 մարտի, 1921թ., Մոսկվա

Չընդհատվող բռնություններ, թալան, խաղաղ բնակչության սպանություններ, բռնաբարություններ: Ամեն տեղից Թուրքիա է տարվում Հայաստանի ԽՍՀ պետական գույքը՝ մասնավոր կայքի և տնտեսության թալան, գյուղացիների անասունների հափշտակում, բնակչության պարենի վերջին պաշարների բռնագրավում:

**Կարսում:** Քաղաքը գրավելուց հետո առաջին երեք օրերի ընթացքում խաղաղ

բնակչության սպանությունները, թալանը և կանանց նկատմամբ թուրքական զորքերի կողմից բռնությունները ստացել են զանգվածային բնույթ: Այնուհետև սպանությունների և բռնությունների թիվը պակասեց, սակայն շարունակվում է և հիմա: Բնակչությունից պարենի ողջ պաշարը խլված է, վառելիքը ամբողջովին գրավված է: Պարեն ու վառելիք չունեն նույնիսկ որբանոցները: 18-50 տարեկան տղամարդիկ հավաքվել են, մերկացվել,փոխարենը ալյուրի պարկերից զգեստանման մի բան հագցվել և ուղարկվել Սարիղամիշ և ավելի հեռու վայրեր: Տեղավորվելով ամենածանր պայմաններում, սննդից համարյա զրկված, նրանք դատապարտվում են դաժան հարկադիր աշխատանքի:

**Ալեքսանդրապոլում:** Թալանի, սպանությունների, բռնությունների վատթար պատկեր, որ մանրամասն հաղորդվել է ՀԽՍՀ Զինկոմի կողմից Բաքու XI բանակի զորահրամանատարին:

**Աղբուլարոի և Համամլուի շրջաններում:** Թուրք զինվորների զինված առանձին զորախմբեր ներխուժում են գյուղերը իրագործելով թալան, սպանություններ, բռնություններ կանանց նկատմամբ: Դեկտեմբերի 13-ին ժամը 2-ին նման դեպք տեղի ունեցավ Գյուլլիջան գյուղում: Դեկտեմբերի 26-ին թուրքական ջոկատի կողմից Քյավթառլի գյուղը գրավելուց հետո, նրա տեղաբաշխման համար առանձնացված բանվորների թվից ինը երիտասարդ կոմունիստներ, նույն գյուղի բնակիչներ, աշխատանքների ավարտին գազանաբար սպանվեցին գյուղի մարագներից մեկում: Նրանց դիակները տարան Քյավթառլիի բնակիչ Ստեփանոս Բայաջյանի սայլով, որից հետո հանցանքը ծածկելու համար վերջինս նույնպես սպանեցին:

**Չեզոք գոտում:** Կարծեցյալ խառնաշփոթ վիճակը վերացնելու պատրվակով թուրքական զորքերի կողմից հաճախակի փորձեր են արվում Չեզոք գոտին գրավելու համար: Գոտուն սահմանակից շրջանների բնակչության նկատմամբ թուրքերի վերաբերմունքը զգալիորեն վատացել է: Բնակչության վերջնական տնտեսական քայքայման և նրա ստրկացման համար գործադրվում է ցանկացած միջոց: Հարկահավաքման պատրվակով գյուղացիներից խլվում է նրանց ունեցվածքը, հափշտակվում է վերջին անասունը: Մի հարկահավաքից հետո անմիջապես նշանակվում է նորը, որ ուղեկցվում է թալանով և բռնություններով: Այնուհետև դրանք ընդունում են զանգվածային բնույթ: Ընդամենը մի քանի օրերի ընթացքում միայն 4-րդ գավառային տեղամասային կոմիսարիատում գրանցվել է 200 սպանություն:

**Ճիշտ է. Հայկական ՍՍՀ պատվիրակության քարտուղար (ստորագրություն)**
**ՀԱԱ ֆոնդ 114, ցուցակ 2, գործ 43, թ. 17:**
**Թարգմանություն ռուսերենից:**

## N 36
## Ընկ. ՀԽՍՀ Արտգործժողկոմին.
## Քաղվածք Հայաստանի Հատուկ հանձնաժողովի նախագահի տեղակալի Դիլիջանի, Ղարաքիլիսայի և Ալեքսանդրապոլի գավառներ 1920թ. դեկտեմբերի 20-ից մինչև 1921թ. հունվարի 10-ը կատարած ծառայողական ուղևորությունից
## 14 մարտի, 1921թ., Մոսկվա

Ղարաքիլիսայի գավառում բնակչությունը ամեն ժամ սարսափի մեջ է Նալբանդ և այլ գյուղերում տեղակայված թուրքական զորքերի վայրագությունների պատճառով: Ասկյարների առանձին խմբեր ամեն օր շրջում են գյուղերով և վերցնում մթերք ու թանկարժեք առարկաներ: Հանրահայտ պատճառներով ինձ չհաջողվեց բացահայտել առանձին փաստեր, սակայն. այնուամենայնիվ կարողացա արձանագրել հետևյալ.

1. Ձեռք բերեցի երկու փաստաթուղթ՝ Գյուլլիջա և Փամպ գյուղերի մյուդիրների հրամանները, որտեղ հանձնարարվում էր գյուղական համայնքներին յուրաքանչյուր գյուղից անմիջապես հանձնել 1 ոչխար, յուղ, 1 արծաթե ժամացույց և 1 ոսկե մատանի՝ փաշային նվիրելու համար: Փաստաթղթերը հանձնված են Մուստաֆա Սուբխիին:
2. Համամլու գյուղում տեղակայված էր Ղարաքիլիսայի կայազորից կարմիրբանակայինների բաժանմունքը: Կայազորի պետը իր նկատառումներով հետ էր կանչել բաժանմունքը: Այդ նույն օրը բազմաթիվ տեղեկություններ ստացվեցին թուրքական ասկյարների վայրագությունների մասին ոչ միայն Չեզոք գոտում, այլև նրանից այն կողմ (անասունների հափշտակում, թալան, կանանց առևանգում և այլն): Հաջորդ օրը Համամլու ուղարկվեց կարմիրբանակայինների մի փոքր ջոկատ, որը Վարդնով գյուղում՝ հանցանքի վայրում, ձերբակալեց 5 զինված ասկյարների՝ թալանած ապրանքի հետ: Այդ ասկյարները հանձնվեցին Ղարաքիլիսայում թուրքական ներկայացուցչին: Այդ կապակցությամբ ես անձամբ խոսակցություն ունեցա թուրք ներկայացուցիչի հետ, որը նման երևույթը բացատրեց որպես թյուրիմացություն:
3. Ականատեսների պատմածներով Ղարալ, Ղարաբոյա, Ղաչաղան, Գյուլլիջա, Սպիտակ, Փամպ գյուղերը սարսափի մեջ են: Թուրքական զորքերը իրենց պահում են, ինչպես թշնամու դեմ հաղթանակածներ և տանում են այն ամենը, ինչ կարելի է տեղաշարժել:
4. Ալեքսանդրապոլի գավառը իրենից ներկայացնում է ավելի սարսափելի տեսարան, ըստ 2-րդ և 4-րդ գավառամասերի ստուգված գյուղերի հաղորդա-

գրության՝ այդ շրջաններում ոչնչացված են 54 գյուղեր: Գյուղեր կան, որտեղ նույնիսկ շուն չկա: Բնակիչները մասամբ կոտորված են, մի մասը դես-դեն են փախել, իսկ մեծ մասին ուղարկել են Կարս, Թուրքիայի խորքերը: Ես հավաքել էի փաստացի տվյալներ, սակայն թուրքերի կողմից ինձ սպառնացող վտանգի պատճառով ստիպված եղա դրանց մեծ մասը ոչնչացնել Ալեքսանդրապոլի կայարանում:

5. Ս.թ. հունվարի 2-ին Հաջինազար ու Ղոնախղռան գյուղերի 2 տարիքավոր գեղջկուհիներից դիմում ստացա այն մասին, որ իրենց գյուղերից թուրք ասկյարները առևանգել են 4 անչափահաս աղջիկների, որոնք այժմ գտնվում են Ալեքսանդրապոլում: Ձեռք առած միջոցառումների շնորհիվ հաջողվեց պարզել, որ աղջիկները գտնվում են Արշակունի գյուղում՝ Ղարախաչի փողոցում: Չնայած տեղի Հեղկոմի միջամտությանը՝ աղջիկները ոչ միայն չազատվեցին, այլև բոլորովին անհայտացան:
6. Հունվարի 3-4-ին լուր ստացա, որ գյուղերից բերվել են 20 հայ օրիորդներ: Թուրք սպաները, նրանց զինվորների շորեր հագցնելով, պատրաստվում են Կարս ուղարկել: Հեղկոմի եռանդուն բողոքները ոչնչի չհասցրին: Մեզ հայտնի էր, որ աղջիկները գտնվում են վագոններում, սակյան թուրքերը թույլ չտվեցին խուզարկել դրանք: Թուրք պարետը մենակ մտավ վագոն և հայտնեց, որ այնտեղ ոչ մի կին չկա:
7. Համարյա ամեն օր թուրքական հրամանատարությունը պահանջում էր 100 բանվոր: Մեկ-երկու օր աշխատելուց հետո սրանք անհայտանում են: Ըստ լուրերի բանվորներին ուղարկում են Կարս:
8. Իմ ներկայությամբ թուրքական հրամանատարությունը որոշակի հայտարարությամբ Հեղկոմից պահանջեց մեկ օրվա ընթացքում 10.000 հրացան տրամադրել, իսկ չկատարելու դեպքում սպառնաց համընդհանուր խուզարկություններ սկսել: Այդ սպառնալիքը չիրագործվեց լոկ շնորհիվ Մդիվանիի և Մուստաֆա Սուբխիի միջամտության:
9. Ալեքսանդրապոլի Հեղկոմը պաշտոնապես հայտարարեց, որ կարծեցյալ դաշնակների ձերբակալությունները և Ալեքսանդրապոլի Չեկայի (Արտակարգ հանձնաժողովի) գնդակահարությունները կատարվել են թուրքական հրամանատարության ճնշման ներքո:
10. Իմ Ալեքսանդրապոլում եղած ժամանակ, ամեն օր, թուրքերը գիշերով ներխուժում էին քաղաքի ծայրում գտնվող տները, վայրագություններ էին կատարում, հափշտակում էին այն ամենը, ինչ ցանկանում էին: Գանգատներն ու բողոքները Ռուշտի փաշայի կողմից չէին ընդունվում:

Առհասարակ Ալեքսանդրապոլի և գավառի բնակչության վիճակը տագնապալից

է: Նա նվազում է ամեն օր, նվազում է և ֆիզիկական և բարոյական իմաստով. Հեղկոմն ու կոմունիստական կազմակերպությունները խաղալիք են թուրքական հրամանատարության ձեռքին, իսկ հաճախ էլ գործիք Անկարայի կամ Ալեքսանդրապոլի կայազորի քմահաճույքները կատարելու համար:

**Հայաստանի Չեկայի նախագահի տեղակալ Ամատունի**
**Իսկականի հետ ճիշտ է**
**ՀԽՍՀ պատգամավորության քարտուղար (ստորագրություն)**
**ՀԱԱ ֆոնդ 114, ցուցակ 2, գործ 43, թ. 15: Թարգմանություն ռուսերենից:**

## N 37

## Տախտակ Լենինականի գավառի (Ալեքսանդրապոլի գավառի) 1920թ. թուրքերի արշավանքից կրած վնասների[1]

**Աղյուսակ N 1**

| N | Գավ. մաս | Որքա՞ն մարդ է սպանվել | | | | Որքա՞ն մարդ է անվերադարձ գերվել | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Արական | Իգական | երեխա | ընդամենը | Արական | Իգական | երեխա | ընդամենը |
| 1. | I | 2835 | 2520 | 2780 | 8135 | 556 | 170 | 240 | 966 |
| 2. | II | 228 | 28 | 35 | 291 | 265 | 36 | 5 | 306 |
| 3. | III | 3373 | 2274 | 2024 | 7671 | 191 | 257 | 18 | 466 |
| 4. | IV | 2038 | 770 | 414 | 3222 | 440 | 91 | 66 | 597 |
| 5. | V | 14 | ---- | ---- | 14 | 698 | 667 | 700 | 2065 |
| 6. | VI | 335 | 78 | 41 | 454 | 142 | 15 | 10 | 167 |
| Ընդամենը | | **8823** | **5670** | **5294** | **19787** | **2292** | **1236** | **1039** | **4567** |

### Առաջին գավառամաս*

[1] Փաստաթուղթը հստակ թվագրում չունի: Ներկայացված վիճակագրական տվյալները խիստ թերի են ու չեն արտացոլում Ալեքսանդրապոլի գավառի վեցամսյա զինագրավման ընթացքում թուրքական վայրագությունների ամբողջական պատկերը: Սա հաշվի առնելով՝ ենթադրում ենք, որ աղյուսակները կազմվել են 1921թ. ապրիլ-մայիս ամիսների, այսինքն՝ թուրքական զորքերի հեռանալուց անմիջապես հետո, երբ հաշվիչ հանձնախմբերը նոր էին սկսել իրենց աշխատանքը:

* Ծանոթագրություն-Աղյուսակն ունի մի շարք թերություններ. ա/ Օջախղուլի, Օրթաքիլիսա, Դուզքենդ գյուղերի տվյալները ներկայացված են թերի և բ/ Բաջողլի, Մոլլամուսա, Արալըղ և Թաթարական Ղարաքիլիսա գյուղերում թուրքական զորքերը կատարել են մեծամասշտաբ վայրագություններ, սակայն այդ մասին աղյուսակում վիճակագրական տվյալներ չկան: Խիստ կասկածելի են նաև գավառի V և VI գավառամասերից ստացված վիճակագրական տվյալները: Դրանք ընդհանրական են, իրականությունից շատ հեռու և առանձին աղյուսակներով ներկայացված չեն: Մինչդեռ, հայտնի է, որ այս շրջաններում ևս թուրքական զորքերի կողմից կազմակերպվել են զանգվածային վայրագություններ:

**Աղյուսակ N 2**

| N | Գյուղը | Որքա՞ն մարդ է սպանվել | | | | Որքա՞ն մարդ է անվերադարձ գերվել | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Ար. | Իգ. | Երեխա | Ընդ. | Ար. | Իգ. | Երեխա | Ընդ. |
| 1. | Աղքիլիսա | 190 | 200 | 340 | 730 | Անհայտ է | | | |
| 2. | Դարբանդ | 70 | 80 | 150 | 300 | 7 | 8 | 150 | 165 |
| 3. | Սարյար Մեծ | 260 | 25 | 15 | 300 | ---- | ---- | ---- | ---- |
| 4. | Քեթի Փոքր | 75 | 20 | 21 | 116 | 40 | 19 | 1 | 60 |
| 5. | Քեթի Մեծ | 68 | 51 | 127 | 246 | 16 | ---- | ---- | 16 |
| 6. | Ղանլիջա Ներքին | 14 | 15 | 7 | 36 | 21 | 1 | ---- | 22 |
| 7. | Ղանլիջա Վերին | 80 | 30 | 20 | 130 | 6 | 4 | ---- | 10 |
| 8. | Հաջինազար | 230 | 300 | 370 | 900 | 7 | 2 | ---- | 9 |
| 9. | Ջաջուռ | 160 | 145 | 338 | 643 | ---- | 8 | ---- | 8 |
| 10. | Արըխվալի 3-րդ | 200 | 80 | 40 | 320 | 15 | 3 | 2 | 20 |
| 11. | Ղոնախղռան | 150 | 130 | 50 | 330 | 65 | 35 | 10 | 110 |
| 12. | Թոփառլի | 35 | 30 | 15 | 80 | 120 | 40 | 60 | 220 |
| 13. | Թափադոլլակ | 1 | ---- | ---- | 1 | 7 | ---- | ---- | 7 |
| 14. | Ղարաքիլիսա Փոքր | 125 | 335 | 135 | 595 | 65 | 25 | ---- | 90 |
| 15. | Ալեքսանդրովկա | 2 | ---- | ---- | 2 | 2 | ---- | ---- | 2 |
| 16. | Դահարլի | 8 | 4 | 1 | 13 | 9 | 2 | ---- | 11 |
| 17. | Ճլովխան | 25 | 30 | 15 | 70 | 15 | ---- | ---- | 15 |
| 18. | Բայանդուր | 95 | 40 | 65 | 200 | 30 | 7 | 3 | 40 |
| 19. | Բաղդատ-Դոլութախտ | 30 | 15 | 35 | 80 | 10 | 5 | 10 | 25 |
| 20. | Խանվալի | 13 | 36 | 63 | 112 | ---- | ---- | ---- | ---- |
| 21. | Չրախլի | 378 | 234 | 285 | 897 | 10 | ---- | ---- | 10 |
| 22. | Քյափանակ Մեծ | 150 | 430 | 220 | 800 | ---- | ---- | ---- | ---- |
| 23. | Քյափանակ Փոքր | 100 | 150 | 250 | 500 | ---- | ---- | ---- | ---- |
| 24. | Դիրաքլար | 200 | 100 | 200 | 500 | 15 | 5 | ---- | 20 |
| 25. | Դուզքենդ | 7 | 1 | ---- | 8 | 7 | ---- | ---- | 7 |
| 26. | Օրթաքիլիսա | 56 | 4 | 6 | 66 | 37 | 3 | 1 | 41 |
| 27. | Կապս | 106 | 34 | 12 | 152 | 36 | 2 | 1 | 39 |
| 28. | Օշախղուլի | 7 | 1 | ---- | 8 | 16 | 1 | 2 | 19 |
| 29. | Բաջողլի | ---- | ---- | ---- | ---- | ---- | ---- | ---- | ---- |
| 30. | Արալըղ | ---- | ---- | ---- | ---- | ---- | ---- | ---- | ---- |
| 31. | Մոլլամուսա | ---- | ---- | ---- | ---- | ---- | ---- | ---- | ---- |
| 32. | Ղարաքիլիսա Թաթարական | ---- | ---- | ---- | ---- | ---- | ---- | ---- | ---- |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | 2835 | 2520 | 2780 | 8135 | 556 | 170 | 240 | 966 |

## Երկրորդ գավառամաս

**Աղյուսակ N 3**

| N | Գյուղը | Որքա՞ն մարդ է սպանվել | | | | Որքա՞ն մարդ է անվերադարձ գերվել | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Ար. | Իգ. | Երեխա | Ընդ. | Ար. | Իգ. | Երեխա | Ընդ. |
| 1. | Իլխիաբի | 3 | 1 | 1 | 5 | 30 | 1 | ---- | 31 |
| 2. | Ղազանչի | 14 | 2 | 5 | 21 | 18 | 1 | ---- | 19 |
| 3. | Քյավթառլի | 4 | ---- | ---- | 4 | 17 | 24 | ---- | 41 |
| 4. | Ղասմալի | 35 | 4 | 1 | 40 | 22 | ---- | ---- | 22 |
| 5. | Ղուլիջան | 17 | 1 | ---- | 18 | 20 | ---- | 3 | 23 |
| 6. | Ղոլղաթ | 135 | 18 | 27 | 180 | 34 | 3 | ---- | 37 |
| 7. | Եզանլար | ---- | ---- | ---- | ---- | 14 | 1 | ---- | 15 |
| 8. | Նորաշեն | 4 | ---- | ---- | 4 | ---- | ---- | ---- | ---- |
| 9. | Գյոզալդարա Հայկական | ---- | ---- | ---- | ---- | 1 | ---- | 1 | 2 |
| 10. | Արըխվալի Մեծ | ---- | ---- | ---- | ---- | ---- | ---- | ---- | ---- |
| 11. | Արըխվալի Փոքր | ---- | ---- | ---- | ---- | ---- | ---- | 1 | 1 |
| 12. | Բաշգյուղ | ---- | ---- | ---- | ---- | 9 | 1 | ---- | 10 |
| 13. | Խաչաքիլիսա | 2 | ---- | ---- | 2 | 14 | 1 | ---- | 15 |
| 14. | Ղփչաղ | ---- | ---- | ---- | ---- | 6 | ---- | ---- | 6 |
| 15. | Արթիկ Մեծ | ---- | ---- | ---- | ---- | 35 | 2 | ---- | 37 |
| 16. | Պարնի Փոքր | 14 | 2 | 1 | 17 | 45 | 2 | ---- | 47 |
| **ԸՆԴԱՄԵՆԸ** | | **228** | **28** | **35** | **291** | **265** | **36** | **5** | **306** |

## Երրորդ գավառամաս

**Աղյուսակ N 4**

| N | Գյուղը | Որքա՞ն մարդ է սպանվել | | | | Որքա՞ն մարդ է անվերադարձ գերվել | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Ար. | Իգ. | Երեխա | Ընդ. | Ար. | Իգ. | Երեխա | Ընդ. |
| 1. | Դարաքյոյ | 25 | 10 | 15 | 50 | 8 | ---- | ---- | 8 |
| 2. | Սամուրլի | 60 | 40 | 25 | 125 | ---- | ---- | ---- | ---- |
| 3. | Շիշթափա | 98 | 2 | ---- | 100 | 4 | ---- | ---- | 4 |
| 4. | Չոռլի | 70 | 100 | 130 | 300 | 3 | 12 | ---- | 15 |
| 5. | Ղայդուլի-Ղազանչի | 5 | ---- | ---- | 5 | ---- | ---- | ---- | ---- |
| 6. | Քոռաղբյուր (Քոռբուլաղ) | 150 | 50 | ---- | 200 | 30 | ---- | ---- | 30 |
| 7. | Տիտոյխարաբա (Բավրա) | 3 | ---- | ---- | 3 | 4 | ---- | ---- | 4 |
| 8. | Ղարաքիլիսա 3-րդ | 100 | 50 | 50 | 200 | ---- | 10 | ---- | 10 |
| 9. | Ալիխան | 150 | 100 | 82 | 332 | ---- | ---- | ---- | ---- |
| 10. | Կեֆլի | 80 | 70 | 50 | 200 | 34 | 1 | ---- | 35 |
| 11. | Սարյար Փոքր | 170 | 100 | 20 | 290 | 20 | 1 | ---- | 21 |
| 12. | Բաշգյուղ | 70 | 46 | 10 | 126 | 1 | 2 | ---- | 3 |
| 13. | Փալութլի | 250 | 200 | 200 | 650 | ---- | ---- | ---- | ---- |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **14.** | Թաքնալի | 100 | 30 | 20 | 150 | ---- | ---- | ---- | ---- |
| **15.** | Ղարաքիլիսա-Իլլի | 150 | 60 | 90 | 300 | 25 | 25 | ---- | 50 |
| **16.** | Ջելաբկեչուտ | 50 | 30 | 20 | 100 | 5 | ---- | ---- | 5 |
| **17.** | Գյուրջիյոլ (Թորոս գյուղ) | 100 | 60 | 30 | 190 | 13 | 5 | 2 | 20 |
| **18.** | Բանդիվան Մեծ | 100 | 70 | 80 | 250 | 2 | 10 | ---- | 12 |
| **19.** | Բանդիվան Փոքր | 40 | 60 | 100 | 200 | 3 | ---- | ---- | 3 |
| **20.** | Ալլաքիլիսա (Բայթար) | 77 | 81 | 122 | 280 | ---- | ---- | ---- | ---- |
| **21.** | Ղուրդբուլաղ | 300 | 150 | 50 | 500 | 15 | 35 | ---- | 50 |
| **22.** | Ղզըլղոչ | 150 | 100 | 250 | 500 | ---- | 15 | ---- | 15 |
| **23.** | Չիֆթալի | 200 | 80 | 70 | 350 | ---- | 10 | 4 | 14 |
| **24.** | Դուզխարաբա | 200 | 150 | 100 | 450 | ---- | 60 | ---- | 60 |
| **25.** | Ճզըխլար | 200 | 250 | 300 | 750 | 10 | 14 | ---- | 24 |
| **26.** | Գյուլլիբուլաղ | 60 | 70 | 40 | 170 | 2 | 6 | 2 | 10 |
| **27.** | Բոզյոխուշ | 100 | 120 | 80 | 300 | 10 | 30 | 10 | 50 |
| **28.** | Ղզըլքիլիսա | 300 | 150 | 50 | 500 | ---- | 16 | ---- | 16 |
| **29.** | Սալուտ | 15 | 45 | 40 | 100 | 2 | 5 | ---- | 7 |
| **ԸՆԴԱՄԵՆԸ** | | **3373** | **2274** | **2024** | **7671** | **191** | **257** | **18** | **466** |

## Չորրորդ գավառամաս[1]

**Աղյուսակ N 5**

| **N** | **Գյուղը** | **Որքա՞ն մարդ է սպանվել** | | | | **Որքա՞ն մարդ է անվերադարձ գերվել** | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | **Ար.** | **Իգ.** | **Երեխա** | **Ընդ.** | **Ար.** | **Իգ.** | **Երեխա** | **Ընդ.** |
| **1.** | Թոմարտաշ | 8 | 3 | 2 | 13 | 26 | ---- | ---- | 26 |
| **2.** | Մոլլա Գյոկչա | 26 | 12 | 10 | 48 | 6 | ---- | ---- | 6 |
| **3.** | Սարիբաշ | 6 | 4 | 5 | 15 | 1 | ---- | ---- | 1 |
| **4.** | Մեջիթլի | 50 | 10 | 5 | 65 | 2 | ---- | ---- | 2 |
| **5.** | Սոնգյուրլի | 16 | 22 | 25 | 63 | 12 | 4 | 2 | 18 |
| **6.** | Ղափլի | 150 | 135 | 95 | 380 | 25 | ---- | 25 | 50 |
| **7.** | Սվանվերդի | 30 | 80 | 50 | 160 | 20 | 12 | 8 | 40 |
| **8.** | Թալիբօղլի | 8 | 4 | 6 | 18 | 2 | ---- | ---- | 2 |
| **9.** | Արմութլի | 20 | ---- | ---- | 20 | 3 | ---- | ---- | 3 |
| **10.** | Ադիյաման | 3 | 1 | 1 | 5 | 5 | 1 | ---- | 6 |
| **11.** | Ղութնիղշլաղ | 6 | 2 | 2 | 10 | 2 | ---- | ---- | 2 |
| **12.** | Իմրխան | 128 | 1 | 1 | 130 | 8 | 1 | ---- | 9 |
| **13.** | Աղին | 500 | 250 | 100 | 850 | 60 | 25 | 15 | 100 |
| **14.** | Բուղդաշեն | 1 | ---- | ---- | 1 | 7 | ---- | ---- | 7 |

[1] Համաձայն 1920թ. հունիսի 22-ով թվագրված «Ալեքսանդրապոլի գավառի բնակավայրերի ցուցակ» փաստաթղթի՝ Ալեքսանդրապոլի գավառի IV գավառամասը բաղկացած է 5 գյուղական հասարակություններից և 33 գյուղերից (Տե՛ս ՀԱԱ, ֆոնդ 201, ցուցակ 1, գործ 482): Մինչդեռ այս փաստաթղթում, որ կազմվել է ավելի ուշ, գավառամասն ունի 38 գյուղ:

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **15.** | Չիրպիլի | 2 | ---- | ---- | 2 | 3 | 2 | 3 | 8 |
| **16.** | Բոզդողան | 5 | ---- | ---- | 5 | 25 | ---- | ---- | 25 |
| **17.** | Տավշանղշլաղ | 40 | 5 | 5 | 50 | 10 | 5 | ---- | 15 |
| **18.** | Ղեղաչ | 15 | 10 | 5 | 30 | 2 | ---- | ---- | 2 |
| **19.** | Սոգյութլի | 10 | 3 | 2 | 15 | 8 | 2 | 2 | 12 |
| **20.** | Ենիքյոյ (Խարկով) | ---- | ---- | ---- | ---- | 5 | ---- | ---- | 5 |
| **21.** | Տաշղալա | 20 | 10 | 5 | 35 | 5 | ---- | ---- | 5 |
| **22.** | Ղըրխ | 13 | 15 | 5 | 33 | ---- | ---- | ---- | ---- |
| **23.** | Արթիկ Նոր | ---- | 2 | ---- | 2 | ---- | ---- | ---- | ---- |
| **24.** | Ձիթհանքով | 7 | 2 | ---- | 9 | 13 | ---- | ---- | 13 |
| **25.** | Զարնջի | 3 | 2 | ---- | 5 | 3 | ---- | ---- | 3 |
| **26.** | Հոռոմ | 86 | 32 | 22 | 140 | 61 | 11 | 3 | 75 |
| **27.** | Փիրթիքյան | 50 | 60 | 40 | 150 | 12 | ---- | ---- | 12 |
| **28.** | Շիրվանջուղ | 548 | 20 | 3 | 571 | 16 | ---- | ---- | 16 |
| **29.** | Բողազքյասան | 75 | 1 | 4 | 80 | 20 | 2 | 3 | 25 |
| **30.** | Ղոշավանք | 50 | 65 | 10 | 125 | 15 | 10 | ---- | 25 |
| **31.** | Բաբըռլի | 18 | 1 | ---- | 19 | 22 | 3 | ---- | 25 |
| **32.** | Ղազարապատ | 44 | 5 | 2 | 51 | 17 | 1 | 1 | 19 |
| **33.** | Քյալալի | 21 | 2 | ---- | 23 | 6 | 3 | 1 | 10 |
| **34.** | Սուսուզ Նոր (Ղարա Աղիլ) | 4 | ---- | ---- | 4 | 2 | 1 | ---- | 3 |
| **35.** | Ղլիջ-Յաթաղ Թաթարական | ---- | ---- | ---- | ---- | ---- | ---- | ---- | ---- |
| **36.** | Մուսլուղլի | 10 | ---- | 1 | 11 | 4 | 5 | 2 | 11 |
| **37.** | Մահմուդջուղ | 65 | 11 | 8 | 84 | 12 | 3 | 1 | 16 |
| **38.** | Ջանգիթափա | ---- | ---- | ---- | ---- | ---- | ---- | ---- | ---- |
| **ԸՆԴԱՄԵՆԸ** | | **2038** | **770** | **414** | **3222** | **440** | **91** | **66** | **597** |

**ՀԱԱ, ֆոնդ 240, ցուցակ 1, գործ 240, թթ. 23-30:**
**Բնագիր: Ձեռագիր:**

## N 38
## Զեկուցագիր
## Ալեքսանդրապոլի Հեղկոմը Հայկական ԽՍՀ Հեղկոմին[1]

Հնարավոր չէ ներկայացնել գազանությունների և ավերածությունների լրիվ պատկերը, որ իրագործվել է Ալեքսանդրապոլում և նրա գավառներում թուրքական կարճատև տիրապետության ժամանակ, նախ այն պատճառով, որ դեռևս շարունակվում են ստացվել սպանվածների, գերի քշվածների, վիրավորների, բռնաբարվածների, թալանվածների, ինչպես նաև ավերված գյուղերի, գողացված անասունների, կողոպտած ունեցվածքի և այլ ցուցակները: Ստացված նյութը տալիս է մարդկային և նյութական կորստի հետևյալ մոտավոր պատկերը.

### ՄԱՐԴԿԱՅԻՆ ԶՈՀԵՐ

| N | | արական սեռի | իգական սեռի | երեխաներ | Ընդհանուր |
|---|---|---|---|---|---|
| 1. | սպանվածներ | 30.000 | 25.000 | 5.000 | 60.000 |
| 2. | Կախաղան հանված | 25 | ---- | ---- | 25 |
| 3. | սովից մահացածներ | 10.000 | 12.000 | 3.000 | 25.000 |
| 4. | Վիրավորներ | 20.000 | 15.000 | ---- | 35.000 |
| 5. | բռնաբարվածներ | ---- | 30.000 | 20.000 (աղջիկ) | 50.000 |
| 6. | գերի տարվածներ | ---- | 5.000 | 3.000 (աղջիկ) | 8.000 |

Վիճակագրական տվյալները հավաքվել են Ալեքսանդրապոլի Հեղկոմի նախաձեռնությամբ ստեղծված հատուկ հանձնաժողովի կողմից: Հանձնաժողովը շրջաբերական նամակով դիմել է տեղամասային հեղկոմներին հետաքրքրող հարցի կապակցությամբ ստույգ տվյալներ հավաքելու համար և մշակված ձևով ստացել է տվյալներ, որոնք ի մի են բերված այստեղ:

**(ստորագրություն)**
**ՀԱԱ ֆոնդ 114, ցուցակ 1, գործ 46, թ. 4:**
**Թարգմանություն ռուսերենից:**

[1] Փաստաթուղթը հստակ թվագրում չունի: Մեր կարծիքով՝ այն կազմվել է 1921թ. մայիսի երկրորդ կեսին՝ Ալեքսանդրապոլի գավառից թուրքերի հեռանալուց մոտ մեկ ամիս անց:

## N 39

## Քաղվածք
## Կապի աշխատակից Կոստանոշվիլու հայտագրից՝ ուղղված Վրացական ԽՍՀ Արտգործժողկոմին
## 13 մայիսի, 1921թ., Թիֆլիս

Ահա ինչպես է նկարագրում թուրքական զորքերի գործողությունները Ալեքսանդրապոլի Հեղկոմի նախագահ ընկ. Սարգսյանը.

Նոյեմբերի 7-ին, երեկոյան ժամը 10-ին Ալեքսանդրապոլ քաղաքի կայարանն ու բերդը գրավվեցին թուրքերի կողմից: Նրանք բոկոտն էին, համարյա մերկ:Նույն գիշեր թուրքերը հարձակվեցին կայարանամերձ հատվածի և բերդին մոտ գտնվող թաղամասերի խաղաղ բնակչության վրա: Առաջին իսկ վայրկյանից խախտվեցին հաշտության պայմանները և անարգվեցին պատվի և ունեցվածքի անձեռնմխելիության տարրական իրավունքները: Առաջին իսկ քայլերից պարզվեց, որ քաղաքը տրվել է հրոսակախմբերի քմահաճույքին: Թալանը շարունակվեց նաև ցերեկը: Ի դեպ քաղաքի կենտրոնում թալանը չընթացավ այնպիսի արագությամբ և չընդունեց այնպիսի մասշտաբներ՝ ինչպես ծայրամասերում:

Վաղ առավոտից Քաղաքային ինքնավարությունը հեղեղվեց թուրքական զանազան զորամասերի՝ մթերքի պահանջներով, մինչդեռ կառավարության պահեստները համարյա թե դատարկ էին:

Թուրքերը հանեցին բոլոր հեռագրային սարքերը, քաղաքը անջատեցին ողջ աշխարհից և ձեռնամուխ եղան իրենց հրեշավոր ծրագրի իրագործմանը՝ մի ողջ ժողովրդի ոչնչացման ծրագրին: Բոլոր ճանապարհները քաղաքից գյուղ և հակառակը փակված էին: Ոչինչ չէր թույլատրվում անցկացնել: Քաղաքում պարեն չկար: Այստեղից մեկ եզրակացություն՝ թուրքերը պատրաստվում էին քաղաքային բնակչությանը սպանել սովահարությամբ: Արդյունքը թուրքերի համար փայլուն եղավ: Աղքատագույն բնակչությունը և փախստականները մահանում էին հարյուրներով: Դիակները հավաքելու համար միջոցները չէին բավարարում: Այդ միջոցառումը ուժեղ կերպով անդրադարձավ երեխաների վրա, որոնք մահանում էին փողոցներում: Դրան պետք է ավելացնել նաև մեր խստաշունչ ձմեռն ու վառելիքի բացակայությունը:

Եթե մենք խոսում ենք ծրագրված գործողությունների մասին, որոնց նպատակն է մի ողջ ժողովրդի ոչնչացումը,ապա նկատի ունենք,բացի բացահայտորեն իրագործվող գազանություններից, նաև գաղտնի կարգադրությունների ու խորամանկ գործելաձևերի մասին, որոնք բերում են նույն նպատակին: Դրանցից է օրինակ, ամեն օր՝ իբր աշխատանքի համար հարյուրավոր մարդիկ պահանջելը: Հավաքում էին անհաշիվ քանակի, մեծ մասամբ երիտասարդների և ուղարկում

Կարս, Սարիղամիշ կամ Էրզրում: Սրանց մենք համարում էինք անդարձ զոհ-վածներ: Միայն առանձին անհատներ դուրս էին պրծնում և այն էլ՝ մահվանը դիմադրելու ամենայն ունակությունը կորցրած: Փողոցներում հափշտակված տղամարդկիկ անհետ կորչում էին: Նրանց դիակները հայտնաբերվում են հիմա՝ ջրհորներում, փոսերում, ձորակներում, տների ավերակներում, գետերում և դաշտերում:

Ես ականատես եղա մի սարսափելի տեսարանի. Ալեքսանդրապոլից դեպի Ղարաքիլիսայի կայարան, 20 վերստի վրա, թունելի մոտ մի ձարակ կա, որը լցված է բացառապես կանանց ու երեխաների դիակներով: 1/2 վերստ հեռավո-ության վրա նրանք ցրված են բաց տեղանքում, և հոսող առվակը ամեն ժամ ի հայտ է բերում ավելի ու ավելի դիակներ: Մոտավոր հաշվումներով այնտեղ կա ոչ պակաս 1200 դիակ, չհաշված նրանց, որ դեռ չեն հայտնաբերվել ջրի տակից, բայց որոնց ձեռքերն ու ոտքերը երևում են հողի տակից: Վերքերը մեծ մասամբ գնդակի են կամ սվինի: Մարմնի դիրքից և շորերից կարելի է վստահորեն ասել, որ սպանված կանայք չեն խուսափել բռնությունից:

Տեղական իշխանությունների կողմից կազմված հանձնաժողովի մոտավոր հաշվումներով քեմալականների կողմից Ալեքսանդրապոլ քաղաքի և գավառի ռազմական օկուպացիայի ժամանակ մարդկային կորուստները հետևյալ պատ-կերն ունեն.

| N | | տղամարդ | Կին | դեռատի աղջիկ | երեխաներ | ընդհանուր |
|---|---|---|---|---|---|---|
| 1. | սպանվածներ | 30.000 | 15.000 | 10.000 | 5.000 | 60.000 |
| 2. | կախաղան հանված | 25 | --- | --- | --- | 25 |
| 3. | սովից մահացածներ | 10.000 | 5.000 | 1.000 | 10.000 | 26.000 |
| 4. | գերի տարվածներ | 18.000 | 2.000 | 3.000 | --- | 23.000 |
| 5. | վիրավորներ | 20.000 | 10.000 | 5.000 | 3.000 | 38.000 |
| 6. | բռնաբարվածներ | --- | 25.000 | 10.000 | --- | 35.000 |

Քեմալիստների վերաբերմունքը քաղաքացիների ունեցվածքի նկատմամբ հաշվիչ հանձնաժողովի կողմից բնութագրված է հետևյալ կերպ. «Բայց առավել նողկալին այն էր, որ օրը ցերեկով, նախօրոք կազմված ծրագրով սպաները, սայլերով ու ֆուրգոններով, թուրք զինվորների հետ, ներխուժում էին բնակիչների տները և վերցնում էին իրենցից ինչ-որ արժեք ներկայացնող ամեն ինչ: Ըստ թուրքերի՝ դա վերցվում էր իբրև «փեշքեշ»:

Գլխովին հափշտակվեց նաև գավառից փախած բնակիչների անասունը:

**(ստորագրություն)**
**ՀԱԱ ֆոնդ 114, ցուցակ 2, գործ 169, թ. 10-12:**
**Թարգմանություն ռուսերենից:**

## N 40

## Սերմկոմի բաժնի երրորդ գավառամասի հսկիչ Սուքիաս Մխիթարյան Արձանագրություն

## 17 մայիսի 1921թ., Ալեքսանդրապոլ[1]

Ես՝ Սերմկոմի բաժնի երրորդ գավառամասի հսկիչ Սուքիաս Մխիթարյանս, համաձայն Սերմկոմի բաժնի վարիչի N 207 հրամանագրի, սույն թվի մայիսի 11-ին դուրս եկա Ալեքսանդրապոլի շրջանի երրորդ գավառամասի գյուղերը սերմագնման գործով: Գավառամասն ունի 29 գյուղ և իրավիճակը դրանցում հետևյալն է.

1. ***Գյուլլիբուլաղ***-Մինչ թուրքերի հայտնվելը գյուղն ունեցել է 340 բնակիչ: Ներկայումս գյուղում կա 65 նակիչ: Թուրքական վեցամսյա տիրապետության ընթացքում գյուղում կատարվել են զանգվածային կոտորածներ, թալան և ավերածություններ: Թուրքերի հեռանալուց հետո գյուղում այլևս չան մանր ու խոշոր եղջերավոր անասուններ, ինչպես նաև ցորեն ու գարի:
2. ***Սալուտ***-Մինչ թուրքական հարձակումը գյուղն ունեցել է 150 բնակիչ: Թուրքական վայրագություններից հետո ողջ է մնացել ընդամենը 70-ը: Գյուղում թուրքերը կազմակերպել են խաղաղ ազգաբնակչության և անասունների զանգվածային ջարդ: Թուրքերի հեռանալուց հետո գյուղում ցորեն այլևս չկա:
3. ***Բոզոխուշ***-Մինչ թուրքերի գալը գյուղն ուներ 580 բնակիչ: Թուրքական վեցամսյա տիրապետության ավարտին գյուղում մնացել է 300 բնակիչ: Այս գյուղում ևս կազմակերպվել է բնակչության մասսայական ջարդ:
4. ***Դուզխարաբա***-Մինչ թուրքերի հայտնվելը գյուղն ունեցել է 800 բնակիչ: Կազմակերպված մասսայական ջարդից ողջ է նմացել միայն 430 մարդ: Սեփական ուժերով գյուղն ի վիճակի է մշակել իր ցանքատարածությունների միայն 5-10%-ը:
5. ***Չիֆթալի***-850 բակիչներից ողջ են մնացել 450-ը: Կազմակերպված մասսայական ջարդից հետո գյուղացիները ի վիճակի են մշակելու իրենց ցանքատարածությունների միայն 10%-ը:
6. ***Ղզըլքիլիսա***-Թուրքական տիրապետության արդյունքում գյուղի 635 բնակիչներից ողջ են մնացել միայն 330-ը:

---

[1] Մեր կարծիքով՝ փաստաթղթում նշված վիճակագրական տվյալները խիստ թերի են և չեն արտացոլում գավառամասում թուրքական զորքերի կողմից իրագործված վայրագությունների իրական պատկերը:

7. ***Ղզբլղոչ***-Մինչ պատերազմն ունեցել է 1160 բնակիչ: Թուրքերից հետո գյուղում մնացել է 600 մարդ: Տղամարդկանց թուրքերը կոտորել են գյուղից հեռու, ապա հենց գյուղում կոտորել են կանանց:
8. ***Ղայդուլի-Ղազանչի***-Այս պահին գյուղն ունի 1200 բնակիչ: Թուրքական տիրապետության ընթացքում զոհվել է 5-6 մարդ: Գյուղն ապահովված է ցորենով և իր կարիքներից զատ կարող է սերմացու տրամադրել ևս 6-7 գյուղերի:
9. ***Քոռաղբյուր (Քոռբուլաղ)***-Նախորդ գյուղի նման այս գյուղում ևս՝ բացառությամբ մի քանի դեպքերի, կոտորած չի կազմակերպվել: Գյուղը գտնվում է բարվոք տնտեսական վիճակում:
10. ***Դարաքյոյ***-Գյուղն ունի 350 բնակիչ և խուսափել է զանգվածային կոտորածներից: Իրենց ուժերով գյուղացիները կարող են մշակել վարելահողերի 70-80%-ը:
11. ***Տիտոյխարաբա (Բավրա)***-Թուրքական տիրապետության ընթացքում զոհվել է 3-4 մարդ: Գյուղն այժմ ունի 400 բնակիչ:
12. ***Շիշթափա***-Թուրքական ներխուժման նախօրեին գյուղն ունեցել է 862 բնակիչ: Հաջորդ վեց ամիսների ընթացքում 20 մարդ զոհվել է: Թուրքերի հեռանալուց հետո այստեղ հաստատվել են 162 գաղթականներ: Չնայած թուրքական թալանին գյուղացիներն իրենց վարելահողերը կմշակեն և հարակից գյուղերին էլ օգնություն ցույց կտան:
13. ***Ղուրդբուլաղ***-Գյուղն ունեցել է 550 բնակիչներ, որոնցից ողջ են մնացել միայն 220-ը: Գյուղացիների հավաստմամբ տեղի է ունեցել զանգվածային կոտորած ու թալան:
14. ***Ալլաքիլիսա (Բայթար)***-Հունաբնակ այս գյուղը թուրքական հարձակման նախօրեին ուներ 250 բնակիչ: Զանգվածային կոտորածից հետո ողջ է մնացել միայն 95 մարդ՝ այդ թվում 6 տղամարդ:
15. ***Բանդիվան Փոքր***-Նախկինում գյուղն ունեցել է 360 բնակիչ: Թուրքերի հեռանալուց հետո գյուղում հաշվվում է միայն 160 մարդ: Գյուղի շրջակայքը լցված է դիակներով:
16. ***Բանդիվան Մեծ***-Նախկինում գյուղն ունեցել է 500 բնակիչ: Զանգվածային ջարդերից հետո ողջ է մնացել 346 մարդ:
17. ***Ջելաբկեչուտ***-Գյուղն ունի 500 բնակիչ: Թուրքական տիրապետության ընթացքում զանգվածային կոտորած չի կազմակերպվել:
18. ***Իլլի Ղարաքիլիսա***-Թուրքական արշավանքի նախօրեին գյուղն ուներ 780 բնակիչ: Թուրքական տիրապետության ընթացքում զոհվել է ընդամենը 40 մարդ: Թալանվել են գյուղի բոլոր անասուններն ու սերմնացուի 50%-ը:

19. ***Թաքնալի***-Գյուղն ունի 457 բնակիչ: Թուրքական տիրապետության ընթացքում զանգվածային կոտորած չի կազմակերպվել, փոխարենը թալանվել սերմնացուի 35%-ը: Քշվել են նաև գյուղի անասունները:
20. ***Ճզրխլար***-Թուրքական արշավանքի նախօրեին գյուղն ունեցել է 1400 բնակիչ, որից ողջ է մնացել միայն 450-ը: Քշվել է նաև գյուղի ողջ անասունը:
21. ***Գյուրջիյոլ (Թորոս գյուղ)***-Գյուղն ունեցել է 775 բնակիչ, որից ողջ է մնացել 530-ը: Թուրքերը տարել են նաև հացահատիկի ողջ պաշարն ու անասունները:
22. ***Փալութլի***-Նախկինում գյուղն ունեցել է 1000 բնակիչ: Թուրքերի հեռանալուց հետո հաշվվում է միայն 550 մարդ: Թուրքերը տարել են անասունն ու հացահատիկի ողջ պաշարը:
23. ***Չոռլի***-Մինչ թուրքական հարձակումն ունեցել է 748 բնակիչ: Թուրքերի հեռանալուց հետո գյուղում մնացել էր 500 մարդ: Թուրքերը տարել են նաև հացահատիկի ողջ պաշարն ու անասունները:
24. ***Բաշգյուղ***-Նախկինում գյուղն ունեցել է 480 բնակիչ, սակայն թուրքերի հեռանալուց հետո հաշվվում է միայն 305 մարդ: Այստեղ են կոտորվել նաև շրջակա գյուղերի տղամարդիկ:
25. ***Սարյար Փոքր***-Նախկինում գյուղն ունեցել է 500 բնակիչ: Այժմ մնացել է միայն 230 մարդ: Թուրքերը տարել են նաև անասունն ու հացահատիկը:
26. ***Կեֆլի***-Կոտորածից ու թալանից հետո գյուղի 540 բնակիչներից ողջ է մնացել միայն 310-ը:
27. ***Սամուրլի***- Գյուղի 405 բնակիչներից ողջ է մնացել միայն 300-ը: Թուրքերը տարել են նաև հացահատիկի մի մասն ու անասունների ողջ գլխաքանակը:
28. ***Ալիխան***-Գյուղի 530 բնակիչներից ողջ է մնացել միայն 222-ը:
29. ***Ղարաքիլիսա 3-րդ***-Գյուղի 675 բնակիչներից կոտորվել է 50-ը: Թուրքերը տարել են նաև հացահատիկի մի մասն ու անասունների ողջ գլխաքանակը:

**ԱՄՓՈՓՈՒՄ**-Ինչպես երևում է արձանագրությունից, հիշատակված 29 գյուղերից երեքը՝ Ղայդուլի-Ղազանչին, Քոռաղբյուրը և Շիշթափան կարող են սերմնացուով օգնել հարևան ավերված ու թալանված գյուղերին: Եվս չորս գյուղեր՝ Դարաքյոյը, Բավրան, Սամուրլին և 3-րդ Ղարաքիլիսան թեև թալանված են, սակայն կարող են իրենց ուժերով մշակել իրենց վարելահողերը: Գավառամասի մնացած 22 գյուղերը թալանված ու ավերված են գրեթե 100 %-ով:

Իր աշխարհագրական դիրքով Ալեքսանդրապոլի գավառի երրորդ գավառամասը առավել հարմար է անասնապահության համար: Երկրագործությունն այստեղ պիտի կրի երկրորդական բնույթ:

Թուրքերի հեռանալուց մեկ ամիս անց գավառամասի ավերակ ու կիսավեր

գյուղերի գրեթե բոլոր շինություններում կան մարդկանց անթաղ դիակներ, ինչն ապականում է օդը: Գավառամասի Հեղկոմը կարգադրել է թաղել այդ դիակները, սակայն շատ գյուղեր դրա հնարավորությունը չունեն: Դիակների կարելի է հանդիպել նաև ճանապարհների եզրերին:

**Սերմնագնման կոմիտեի 3-րդ գավառամասի հսկիչ՝ Սուքիաս Մխիթարյան**
**ՀԱԱ, ֆոնդ 240, ցուցակ 1, գործ 240, թթ. 123-129: Բնագիր: Ձեռագիր:**
**Ռուսերեն թարգմանություն:**

## N 41
## Հայերի կոտորածը Զաջուռի շրջանում
## (ամերիկացի Չարլզ Ֆ. Գրանտի վկայությունները)
## 20 մայիսի, 1921թ.

Ես՝ ներքոստորագրյալս Չարլզ Ֆ. Գրանտ, Ղարաքիլիսայի Ամերիկյան կոմիտեի ներկայացուցիչը, այն բանից հետո, երբ ինձ հասան լուրեր, որ վերջերս թուրքերի կողմից էվակուացված Աղբուլաղի շրջանում հայտնաբերվել են հսկայական քանակությամբ հայերի դիակներ, Ամերիկյան կոմիտեի անդամներ Ռեյ Լ. Օգդենի և Ջորջ Ա. Բեյ-Մամիկոնյանի ուղեկցությամբ մեկնեցի այնտեղ 1921թ. ապրիլի 28-ին:

Մենք հասանք Աղբուլաղ, ապա այնտեղից ուղեկցի հետ խճուղով ճամփա ընկանք դեպի Զաջուռի լեռնաշղթա:

Զաջուռի լեռնանցքի համարյա կատարին ուղեկցողը կանգնեցրեց ավտոմեքենան և մեզ հրավիրեց հետևել իրեն ճանապարհի հյուսիսային կողմում ընկած նեղ ու խորը հեղեղատի հատակով հոսող գետի հունով: Մոտ երկու հարյուր ոտնաչափ հեռավորության վրա մենք հանդիպեցինք զգալի թվով դիակներ՝ մեծ մասամբ երեխաների: Այդտեղից մոտ երկու հարյուր հիսուն ոտնաչափ տարածության վրա թափված էին մարմինների կույտեր, որ ընկած էին կիրճի երկու կողմերում՝ մասամբ ավազով ծածկված: Որոշ մարմիններ ընկած էին հունի հատակի խորքում՝ ըստ երևույթին գագաթների ձնահալքի պատճառով ավելացած ջրի ճնշման միջոցով քշված իրենց նախնական գտնված վայրից:

Դատելով վերքերի բնույթից և մարմինների դիրքից և շատ այլ նշաններից՝ մենք եկանք միաձայն եզրակացության, որ զոհվածները հարևան գյուղերի բնակիչներն են: Մեր եզրակացությունը հաստատվում է այն փաստով, որ կենդանի մնացած գյուղացիները հասցրել են ճանաչել և թաղել զգալի թվով տուժածների,

կոտորվել են երեք կամ չորս ամիս դրանից առաջ, ինչի մասին բավական պարզ խոսում էր մարմինների վիճակը:

Զոհերի թիվը տատանվում է մոտավորապես 1.200-1.500-ի միջև: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ մենք հայտնաբերել ենք ընդամենը 200 պարկուճ, կարելի է հստակ ասել,որ մեծ մասամբ մարդիկ սպանվել են սվիններով կամ որևէ այլ սառը զենքով: Դա հաստատվում է նաև բազմաթիվ բնորոշ վերքերով, օրինակ կտրված կուրծքեր, հղի կանանց պատռված որովայններ և այլն: Տեղի ունեցած վայրագության ևս մեկ առանձնահատկություն կարելի է համարել տղամարդկանց դիակների բացակայությունը: Զոհված տղամարդկանց մեջ ամենաավագը հազիվ 14 տարեկան է:

Պարկուճների վրա թուրքական գրերը և կիսալուսնով ու աստղով մի քանի փամփուշտների պատյանները կասկած չթողեցին, թե ովքեր են մարդասպանները:

Զոհերը գնդակահարվել են շատ մոտ տարածությունից՝ կանգնեցված լինելով զառիթափի ամենածայրում: Զառիթափից հինգ կամ վեց քայլի վրա եղած մի շարք փամփուշտներ կասկած չեն թողնում այդ մասին: Դրանից հետո մարմինները նետվել են գետահունի կողքերն ու ծածկվել հողով՝ հետքերը վերացնելու համար:

Ես լրիվ համոզված եմ, որ կիրճից քիչ վեր գտնվող կանացի սպիտակեղենի ծվեններով ծածկված ոչ մեծ հարթ սարահարթը վկան է եղել ոչ քիչ բռնության:

Մեզ հայտնեցին, որ այդ նույն կիրճից մոտ հինգ վերստ դեպի վեր մեծ քանակությամբ դիակներ կան, սակայն անբարենպաստ եղանակի պատճառով մեզ չհաջողվեց այդտեղ հասնել և լուսանկարել տեսածը:

Կոտորածի տեղում թափված փամփուշտների ուղիղ հավասար շարքը, պարզ կերպով ցույց էր տալիս, որ տեղի ունեցածը իրագործվել էր ուսուցված և դիպուկ ղեկավարված զորքի կողմից: Մենք բոլորս ցանկացած ժամանակ պատրաստ ենք հաստատել վերը ասվածը:

**Չարլզ Ֆ. Գրանտ**
**Ղարաքիլիսայի Ամերիկյան կոմիտեի նախագահ**
**ՀԱԱ ֆոնդ 114, ցուցակ 1, գործ 124, թ. 13, գործ 134, թ. 1:**
**Թարգմանություն ռուսերենից:**

## N 42
## Հատված ՀԽՍՀ Արտգործժողկոմ Մռավյանից Բաքվում Հայաստանի ներկայացուցիչ Դովլաթովին ուղարկած նամակից 2 հունիսի, 1921թ.

Հանձնենք ընկեր Մյասնիկովին Ղալթախչի, Աղբուլաղ և Ղարաբոյա գյուղերի շրջանում հայերի դիակների թաղման վերաբերյալ արձանագրության քաղվածքը. «ընդամենը թաղված են 11.886 դիակներ, որոնցից 90% գերազանցապես կանայք ու երեխաներ են, իսկ 10%-ը տղամարդիկ: Դիակների վրա եղած վերքերից երևում է, որ կոտորածը կատարվել է գազանաբար, օրինակ դիակների վրա կարելի է տեսնել սվիններից և դաշույններից ստացված 10-15 վերքեր, մեծ քանակությամբ դիակներ առանց գլխի էին՝ ամենադաժան ձևով այլանդակված: Կոտորվածների մի մասին այրել են շենքերում: Աղբուլաղ գյուղում տեղի բնակիչներից սպանվել են 1.186 հոգի, Ղալթախչի գյուղում 2.100 հոգի, Ղարաբոյա գյուղում 1.100 հոգի: Փաստորեն դիակներից միայն 4.386-ն է պատկանում տեղացիներին: Մնացած 7.500-ը այս գյուղերում Կարսի շրջանից ու Ալեքսանդրապոլի գավառից պատսպարված փախստականներն էին, որ կոտորվեցին թուրքերի կողմից»:

**Արտգործժողկոմ՝ Մռավյան**
**ՀԱԱ ֆոնդ 114, ցուցակ 2, գործ 27, թ. 86:**
**Թարգմանություն ռուսերենից:**

## N 43
## Հատված 3-րդ գավառամասի Հեղկոմի նախագահ Գրիգորյանի զեկուցագրից 9 հունիսի 1921թ., Ղայդուլի-Ղազանչի

Տաճիկները ներս լցվելով 3-րդ գավառամաս բացի 5 գյուղերից՝ Ղայդուլի-Ղազանչի, Քոռաղբյուր, Դարաքյոյ, Տիտոյխարաբա (Բավրա) և Շիշթափա, սկսեցին տեղական ժողովրդին թալանել ու կոտորել: Նրանց միացավ նաև Աղբաբայի շրջանի տեղական ժողովուրդը: Սրի քաշեցին մոտավորապես 15.000-ի չափ երեխա, կին ու տղամարդ: Բացի նշված հինգ գյուղերից, մնացած 24-ն ունեն

սնունդի սուր կարիք, կերակրվում են կանաչեղենով, հիվանդանում, իսկ մի քանի օր անց սկսում են ուռել ու մեռնել:

Հեղկոմը բաղկացած է երեք անդամներից՝ նախագահը և երկու անդամները: Ընդ որում անդամներից մեկը՝ Արշակ Սարգսյանը, նշանակված է նաև Զինկոմ:

Գավառամասն անկազմակերպ է, չկան կազմակերպիչ մարմիններ: Վերջերս ուղարկվել էր մի ռուս ագիտատոր, որը ոչնինչ անել չկարողացավ, որովհետև ժողովուրդը ռուսերեն չգիտի: Գավառամասի գյուղերի մեծ մասը՝ բացառությամբ նշված հինգ գյուղերի, կիսաբնակ է: Կա 1.000-ից ավելի կիսաքանդ խրճիթ ու տուն: Գավառամասի գյուղերում մեծ թիվ են կազմում տաճկահայերն ու ալեքսանդրապոլցիները: Մարդիկ դժվարությամբ են հող մշակում, որովհետև լծկան անասուններ կան միայն նշված հինգ գյուղերում: Կա նաև արտագաղթի մեծ վտանգ: Գավառամասի հայ-կաթոլիկները որոշել են գաղթել Ռուսաստան, որովհետև տեղի կուլակները նրանց համոզել են, թե թուրքերը մի քանի տարուց կրկին կգան ու մնացածներին էլ սրի կքաշեն:

Գավառամասի միլիցիան ունի 30 աշխատակից, որից 10-ը ձի չունի, այստեղ չկան Կարմիր բանակայիններ, տեղեկություններ չունենք նաև մեր գերեվարվածներից ու հարևան գավառամասերից:

**3-րդ գավառամասի Հեղկոմի նախագահ Գրիգորյան**
**ՀԱԱ, ֆոնդ 240, ցուցակ 1, գործ 240, թթ. 21-22:**
**Բնագիր: Ձեռագիր: Ռուսերեն թարգմանություն:**

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

**Հեղինակի կողմից** 3

## ՀՈԴՎԱԾՆԵՐ

**1.** Արևմտահայության տեղաշարժի հարցը XIXդ. երկրորդ կեսի և XXդ. սկզբի Արևելյան Հայաստանում ցարիզմի վարած գաղութային քաղաքականության համատեքստում (Ալեքսանդրապոլի գավառի օրինակով) 6
**2.** Russian immigrants in the province of Alexandrapol: episodes from the policy of russianization of the Eastern Armenia / from the second half of the XIX century to the XX centuries/ 20
**3.** Դրվագներ XXդ. սկզբին Ալեքսանդրապոլի գավառում մոլեգնած տարափոխիկ հիվանդությունների պատմությունից 29
**4.** Առաջին աշխարհամարտը և Ալեքսանդրապոլի գաւառում հաստատուած գաղթականութեան թուաքանակը 43
**5.** Արևելահայ մամուլն Առաջին աշխարհամարտի տարիներին Ալեքսանդրապոլի գավառում հաստատված գաղթականության մասին 67
**6.** 1914-1918թթ. Ալեքսանդրապոլի գաւառում հաստատուած գաղթականութեան խնդիրների լուսաբանումն արեւելահայ մամուլում 79
**7.** Ալեքսանդրապոլի գավառի վարչաքաղաքական պատկերը 1918թ. մայիս-նոյեմբեր ամիսներին (Օսմանյան առաջին ռազմակալման շրջան) 95
**8.** 1918 Gharakilisa incidents as continuation of the Ottoman genocidal policy 107
**9.** Ժողովրդագրական գործընթացներն Ալեքսանդրապոլի գավառում 1918թ. մայիս-նոյեմբեր ամիսներին: 114
**10.** The social situation of migrants in the province of Alexandrapol in 1914-1920 130
**11.** Դրվագներ 1918թ. մայիսյան հերոսամարտերի պատմությունից. Շիրակի գոյամարտը 139

## ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

1. Թուրքիայից, Պարսկաստանից և այլ սահմանամերձ վայրերից Ալեքսանդրապոլ քաղաքում և համանուն գավառում հաստատված գաղթականության մեկօրյա ցուցակագրում 150
2. Տեղեկություններ 1915թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ Ալեքսանդրապոլ քաղաքում և համանուն գավառում հաստատված արևմտահայ գաղթականության թվի մասին 156

3. Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերություն: Ալեքսանդրապոլի գավառում հաստատված արևմտահայ գաղթականության մեկօրյա ցուցակագրում 1916թ._____160
4. Վիճակագրական տեղեկություններ գաղթականների և նրանց կարիքների մասին_____162
5. Ալեքսանդրապոլի գավառում ՀՀ ներկայացուցիչ Գ.Խոյեցյանի զեկուցագիրը ԱԳ նախարարին Ալեքսանդրապոլում տիրող իրավիճակի մասին_____163
6. Ալեքսանդրապոլի գավառում ՀՀ ներկայացուցիչ Գ. Խոյեցյանի զեկուցագիրը ԱԳ նախարարին՝ Ալեքսանդրապոլում տիրող իրավիճակի վերաբերյալ_____166
7. Հատված Ալեքսանդրապոլի «Հայրենակցական Միության» վարչության հայտարարությունից_____169
8. Հատված փամբակցիների «Հայրենակցական Միության» վարչության հայտարարությունից_____171
9. Հայրենակցական Միութեանց Կենտրոնական խորհրդին Ալեքսանդրապոլի «Հայրենակցական Միութեան» կենտրոնական վարչութիւնից_____ 172
10. Ալեքսանդրապոլի գավառում ՀՀ ներկայացուցիչ Գ. Խոյեցյանի զեկուցագիրը ԱԳ նախարարին՝ Ալեքսանդրապոլում տիրող իրավիճակի վերաբերյալ_____174
11. Հատված թուրքական զորքերի հեռանալուց հետո Ալեքսանդրապոլի ռազմական և հասարակական նշանակության հաստատությունների վիճակի մասին Դիլիջան-Ղարաքիլիսայի զինվորական շրջանի պետի զեկույցից_____185
12. Հատված Հայկական «Հայրենակցական Միությունների» կենտրոնական խորհուրդի Կովկասում Դաշնակից պետությունների ներկայացուցիչներին ներկայացրած զեկուցագրից_____186
13. Ալեքսանդրապոլի գավառում ՀՀ ներկայացուցիչ Գ. Խոյեցյանի ամփոփիչ զեկուցագիրն ԱԳ Նախարարին՝ ներկայացուցչության գործունեության մասին____188
14. Զեկուցում Փամբակի և Լոռու շրջանների լիազոր Մ. Խանզադյանի_____190
15. Վիճակագրական տեղեկություններ Օսմանյան տիրապետության ամիսներին Ալեքսանդրապոլի գավառին հասցված մարդկային վնասների մասին_____195
16. Նորին ողորմածութեանց պ. Մինիստիր Խատիսեանին և իւր ընկերներին Աղեքսանդրապօլու գաւառի Սեօգթլի գիւղի հաւատարմատար Սայաթ Ենկօեանից, Մկրտիչ Մխիթարեանից և Պողոս Աբրօեանից Խնդիր_____197
17. ՀՀ Գյուղատնտեսության նախարարության կենտրոնական վիճակագրական կոմիտե: Տեղեկություններ բնակչության թվի մասին՝ ըստ գավառների, քաղաքների, նահանգների և շրջանների, 1919թ. դրությամբ: Ըստ գյուղական հասարակությունների նահանգներից հավաքված տեղեկություններ գյուղատնտեսության վիճակի մասին 1917թ. և մշակված 1919թ _____199
18. ՀՀ Ներքին Գործոց Նախարարությանը կից «Ներգաղթի և վերաշինության» բաժանմունք: Վիճակագրական մատյան արևմտահայ փախստականների _____200
19. Զեկուցագիր Ղարաքիլիսայից Երևան Զորահրամանատարին_____206

20. Զեկուցագիր Ղարաքիլիսայից զորահրամանատարին 207
21. Ալեքսանդրապոլի գավառի առաջին գավառամասի կոմիսարի օգնականի զեկուցումը գավառային կոմիսարին՝ գավառամասի իրավիճակի մասին 207
22. Ալեքսանդրապոլի գավառի կոմիսարի զեկուցումը Ներքին գործոց կոմիսարին՝ երրորդ գավառամասի դրության վերաբերյալ 208
23. Ալեքսանդրապոլի գավառի կոմիսարի զեկուցումը Ներքին գործոց կոմիսարին՝ գավառի դրության մասին 209
24. Ալեքսանդրապոլի առաջին գավառամասի կոմիսարի տեղեկությունը գավառային կոմիսարին թուրքերի կողմից տարած կանանց և աղջիկների մասին 210
25. Հատված Ալեքսանդրապոլի Հեղկոմի զեկույցից Հայաստանի Հեղկոմին 211
26. Հատված Հայկական ԽՍՀ Հեղկոմին ներկայացված զեկուցագրից 211
27. ՀԽՍՀ Ալեքսանդրապոլի գավառի 2-րդ գավառամասի կոմիսարը Երևանի Հեղկոմին 212
28. Չեզոք գոտու Ադմինիստրացիայի կոմիսարի օգնականը Կենտրոնական Հեղկոմի նախագահ ընկ. Կասյանին 213
29. Մարիամ Զավարյանի հայտարարությունը Ջաջուռի մոտ հայ գաղթականներին կողոպտելու մասին 214
30. Ալեքսանդրապոլի Հեղկոմի անդամ Նահապետի վկայությունը 215
31. Ալեքսանդրապոլի գավառի առաջին գավառամասի կոմիսարի զեկուցումը գավառային միլիցիայի կոմիսարին՝ գավառամասի գյուղերում տիրող իրավիճակի մասին 216
32. Հայաստանի Հեղկոմին, պատճենը՝ Անդրհեղկոմին, ՌՍԴԽՀ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդին, III Կոմունիստական Ինտերնացիոնալի Գործադիր Կոմիտեին, բոլորին, բոլորին, բոլորին 218
33. Հատվածներ ռումին քաղաքացի Վասիլ Իոնեսկոյի վկայություններից՝ Վրաստանում Հայկական ԽՍՀ լիազոր ներկայացուցչությանը 219
34. ՀԽՍՀ Ալեքսանդրապոլի նոր գավառամասի Հեղկոմից Հայաստանի Խորհրդային Հանրապետության Նախագահ ընկեր Կասյանին 220
35. Համառոտ տեղեկություններ թուրքերի գործողությունների մասին իրենց կողմից օկուպացված շրջաններում և Չեզոք գոտում (ՌՍԴԽՀ-ի կառավարությանը ներկայացված Հայկական ԽՍՀ Հեղկոմի զեկուցագրից) 220
36. Ընկ. ՀԽՍՀ Արտգործժողկոմին. Քաղվածք Հայաստանի Հատուկ հանձնաժողովի նախագահի տեղակալի Դիլիջանի, Ղարաքիլիսայի և Ալեքսանդրապոլի գավառներ 1920թ. դեկտեմբերի 20-ից մինչև 1921թ. հունվարի 10-ը կատարած ծառայողական ուղևորությունից 222
37. Տախտակ Լենինականի գավառի (Ալեքսանդրապոլի գավառի) 1920թ. թուրքերի արշավանքից կրած վնասների 224
38. Զեկուցագիր: Ալեքսանդրապոլի Հեղկոմը Հայկական ԽՍՀ Հեղկոմին 229

39. Քաղվածք Կապի աշխատակից Կոստանոշվիլու հայտագրից՝ ուղղված Վրացական ԽՍՀ Արտգործժողկոմին 230
40. Սերմկոմի բաժնի երրորդ գավառամասի հսկիչ Սուքիաս Մխիթարյան: Արձանագրություն 232
41. Հայերի կոտորածը Ջաջուռի շրջանում (ամերիկացի Չարլզ Ֆ. Գրանտի վկայությունները) 235
42. Հատված ՀԽՍՀ Արտգործժողկոմ Մռավյանից Բաքվում Հայաստանի ներկայացուցիչ Դովլաթովին ուղարկած նամակից 237
43. Հատված 3-րդ գավառամասի Հեղկոմի նախագահ Գրիգորյանի զեկուցագրից 237

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԳԱԱ ՇԻՐԱԿԻ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

Հրատարակության է երաշխավորվել
ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի
գիտական խորհրդի 2020թ. մայիսի 5-ի նիստի որոշմամբ

Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՄՍՆ գիտության կոմիտեի տրամադրած
ֆինանսավորմամբ՝ 18SH-6A007 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:

Գիտական խմբագիր՝ պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր,
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս **Ա.Ա. Մելքոնյան**.

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՄԵՆ ՍԵՐԳՈՅԻ

# ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՆ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԳԱՎԱՌՈՒՄ

**(XX դ. առաջին քսանամյակ)**

**Հոդվածների և նյութերի ժողովածու**

*Սրբագրիչ՝* ***Ռ. Հովհաննիսյան***
*Համակարգչային և գեղարվեստական ձևավորումը՝* ***Լ. Կոստանյանի***

Պատվեր՝ N 28, տպաքանակ՝ 100,
Հանձնված է շարվածքի 12. 11. 2019, ստորագրված է տպագրության 15. 12. 2019
Շարվածքը՝ համակարգչային, 15.2 հրատ. մամուլ:
Տպագրությունը՝ Ա/Ձ Ռուբեն Ավետիսյան
Հասցեն՝ ՀՀ, 3110, ք. Գյումրի, Գորկու 67/62